

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լ Ա Տ Ի Ն Ա Բ Ա Ն Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Национальная Академия наук РА
Институт языка имени Р.Ачаряна

Вазген Амбарцумян

ИСТОРИЯ
ЛАТИНИЗИРОВАННОГО АРМЯНСКОГО
ЯЗЫКА
(XIV - XVIII вв.)

ЕРЕВАН
<<НАИРИ>>
2010



Armenian National Academy of Sciences
H. Adjarian Institute of Linguistics

Vazguen Hambardzumyan

HISTORY OF
ARMENIAN LATINIZED
(XIV - XVIII cc.)

YEREVAN
<<NAIRI>>
2010

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Լ Ա Տ Ի Ն Ա Բ Ա Ն Հ Ա Յ Ե Ր Ե Ն Ի

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(14 - 18 - րդ դդ.)

ԵՐԵՎԱՆ
<<ՆԱԻՐԻ>>
2010

ՀՏԴ 809.198. 1(091):941(479.25)
ԳՄԴ 81.2Հ+63.3(2Հ)

Հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ
Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի կողմից

Պատասխանատու խմբագիր՝
Բանասիրական գիտությունների թեկնածու
Ն.Գ.Հովհաննիսյան

Համբարձույան Վազգեն

Հ 205 Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.) /Պատ. խմբագիր՝ Ն.Գ.Հովհաննիսյան – Եր.: Նաիրի, 2010, 378 էջ:

Գիրքը նվիրված է 14-18-րդ դդ. իբրև գրական լեզու գործառած լատինաբան հայերենի համեմատաբար ամբողջական ուսումնասիրությանը: Ուշադրության առարկա են լեզվական այդ տարբերակի առաջացման, արհեստականորեն արմատավորման և բնականորեն վերացման առանցքային խնդիրները, որոնք իրենց լուծումն են գտնում ոչ միայն այդ բնագավառում եղած տարբեր կարգի ուսումնասիրությունների տվյալների օգտագործմամբ, այլև առավելապես լեզվական փաստերի լայն ընդգրկմամբ ու քննությամբ:

Գիրքը կարող է օգտակար լինել հայոց լեզվի պատմության, առհասարակ հայ գրավոր մշակույթի հարցերով զբաղվող մասնագետներին, ինչպես նաև ընթերցող լայն հասարակությանը:

ՀՏԴ 809.198. 1(091):941(479.25)
ԳՄԴ 81.2Հ+63.3(2Հ)

ISBN 978-5-550-01597-1

© Վազգեն Համբարձույան, 2010

«Եթէ նոր ժամանակներու առաջին հայերէնագէտն՝
մեծանուն Հ. Արսէն Բագրատունի,
իւր եօթանասնամեայ հասակին մէջ կը խոստովանէր,
թէ՝ «Ամէն օր հայերէն լեզուի մէջ նոր բան մը կ'ուսանիմ»,
ես ի՞նչ պէտք է ըսիմ»:
**(Նորայր Բիզանդացի,
«Հայկական բառաքննութիւն», էջ 103)**

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց լեզվի պատմության հարցերը գրեթե միշտ եղել են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, որովհետև դրանք այս կամ այն չափով վերաբերում են տվյալ լեզուն կրող ժողովրդի տարբեր կարգի առնչություններին, ընդ որում ոչ միայն ներքին առաջընթացի, այլև ուրիշ ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, տնտեսական և այլ բնույթի շփումների պայմաններում:

Այդ հարցերի գիտական ուսումնասիրությունը տեղի է ունենում համեմատաբար ուշ, երբ լեզվաբանությունն առանձնանում է իբրև ինքնուրույն բնագավառ: Իսկ մինչ այդ դրանց պարզաբանումն ուներ մեկնողական-քերականական բնույթ, հանդես էր գալիս իբրև համապատասխան գիտելիքների կրթական-ուսումնական նպատակների իրագործում:

Այնինչ հայոց լեզվի տեսական, առավելապես այլ լեզուների հետ ունեցած ցեղակցության բազահայտման նպատակով կատարվող աշխատանքները սկիզբ են դնում այդ հարցերի պարզաբանմանը գիտական չափանիշներով: Հայոց լեզվի պատմությունը հետաքրքիր է ոչ միայն ինքնին, այլև լեզուների ընդհանուր պատմության, մանավանդ նրանց ցեղակցային և տիպաբանական փոխհարաբերության հարցերի տեսակետից: Ուստի այդ պատմությունն այսօր լայն ուշադրության առարկա է ինչպես գրավոր շրջանի, այնպես նաև նախագրային ժամանակների մեջ գոյություն ունեցող կամ վերականգնելի տվյալների տեսակետից:

Գրավոր շրջանն առավել մատչելի է ուսումնասիրության համար, որովհետև այդ տվյալներն ավանդված են համապատասխան գրական հուշարձանների միջոցով: Դրանք ժամանակի տեսակետից միանգամայն հավաստի են, իսկ գրչագրական առումով փոքրիշատե անխափան: Եվ նման պարագայում ուսումնասիրողի ջանքերն ուղղած են լինելու ավելի շատ լեզվական փաստերի վերհանմանն ու գիտական վերլուծությանը:

Հայերենագիտությունն այդ բնագավառում հասել է որոշակի ձեռքբերումների, ընդ որում ոչ այնքան լեզվական փաստերի բնագրային ուսումնասիրման և վերլուծության, որքան ընդհանուր քննարկումների, բանասիրական դիտարկումների տվյալների հիման վրա կատարված մեկնաբանումների ձևով: Ըստ այդմ գրվել են լեզվի տարբեր փուլերի գրական և բարբառային տարբերակների փոխհարաբերության, գրական լեզուների կառուցվածքի, քերականական մտքի պատմության, առանձին գրական

հուշարձանների լեզվի, բառարանների և այլն հարցերին նվիրված աշխատանքներ: Քիչ չեն նաև հայերենի և այլ լեզուների շփումների ուսումնասիրմանը վերաբերող աշխատանքները, որոնցում առավել ուշադրություն է դարձվել հայերենի՝ այլ լեզուներից կրած ազդեցությունը, սակայն ոչ այնքան հակառակը:

Սույն աշխատանքը նվիրված է 14-18-րդ դարերում որպես գրական-գրավոր լեզու գործառող լատինաբան հայերենի առանձին, կարելի է ասել՝ ամբողջական ուսումնասիրությանը, որովհետև մինչև այժմ չունենք լեզվական այն տարբերակին նվիրված մասն ծավալի որևէ աշխատանք, որպեսզի ընդգրկեր հարցերի այնպիսի լայն շրջանակ, որ առկա է ներկա ուսումնասիրության մեջ: Այստեղ ուշադրության բուն առարկա են լատինաբան հայերենի առաջացման, արհեստականորեն արմատավորման և բնականորեն վերացման առանցքային խնդիրները, ինչպես նաև վերջիններիս այս կամ այն չափով վերաբերող այն ուսումնասիրությունները, որոնք հիմնականում կրելով ակնարկային բնույթ՝ փորձեր են եղել վերհանելու այդ խնդիրների ինչ-ինչ կողմեր, նշելու դրանց լուծման ուղիները:

Այստեղ առաջ քաշված հարցերի քննությունը կատարվում է ամենից առաջ գրավոր՝ հին տպագրություն ունեցող և ձեռագիր վիճակով հայտնի հուշարձանների ընձեռած փաստական նյութի, երկրորդաբար՝ հայ բանասիրության, ինչպես նաև լեզվաբանության ունեցած ձեռքբերումների որոշակի տվյալների հիման վրա: Ինչպես միշտ, այս դեպքում ևս կարելի է նկատել, որ գրավոր աղբյուրները քանակով բավականին շատ են, իսկ բովանդակությամբ՝ ոչ այնքան բազմազան: Վերջինս հիմնականում պայմանավորված է լեզվական այդ տարբերակի գործառական առանձնահատկությամբ, այն է՝ գրավոր աղբյուրները մեծ մասամբ եկեղեցական-դավանաբանական և մեկնողական բովանդակություն ունեն, մասամբ՝ քերականական, հրապարակախոսական, հիշատակարանային բնույթի են և այլն: Իսկ գրավոր լեզվի հաղորդակցական մյուս բնագավառներին վերաբերող աղբյուրներ կա՛մ գոյություն չունեն, կա՛մ աննշան են:

Եվ գրված լինելով մի քանի հարյուրամյակի ընթացքում, հանդես գալով գրավոր հաղորդակցման տարբեր միջավայրում՝ գրական այդ հուշարձանները բնորոշվում են ակնհայտ տարբերություններով՝ թե՛ գործածության ծավալի, թե՛ տարածված լինելու հատկանիշներով: Ոչ պակաս կարևորություն ունի այն, թե տվյալ գրական հուշարձանն ինչ բնույթի է, ինքնուրու՞յն շարադրանք է, թե՞ թարգմանություն, հեղինակն ինչքանո՞վ է

տիրապետում հայերենին կամ լատիներենին՝ իբրև մեռած լեզուներ. հիշենք, որ լատինաբան հայերենը ձևակերպվում էր առավելապես գրաբարի հիմքի վրա, բուն իմաստով գործ ունենք լատինաբան գրաբարի հետ: Նշենք նաև, որ 14-18-րդ դդ. գրաբարը կենդանի լեզու չէր: Եվ ստացվում է այնպես, որ հռոմեական եկեղեցու ոչ միայն այլ կարգի, այլև լեզվական պարտադրանքն իրագործվում էր թե՛ մեռած լատիներենի և թե՛ մեռած գրաբարի վերաբերմամբ, իրագործվում էր ոչ թե բնականորեն, այլ արհեստական մոտեցման պայմաններում, ուստի բնական է, որ չէր ունենալու իր վերջնական հաջողությունը՝ հաղորդակցական նպատակների իրականացման տեսակետից:

Այնուհետև, գրավոր աղբյուրները քանակապես տարբեր են, երբ նկատի ենք ունենում այն, թե որ ժամանակում և ինչ չափով են դրանք գրվել կամ թարգմանվել: Հայտնի է, որ սկզբնավորման շրջանում՝ 14-րդ դ. առաջին երեք քառորդում գրվում և թարգմանվում են տարբեր բնույթի՝ եկեղեցական, իմաստասիրական, քերականական և այլն ավելի մեծ թվով աշխատաքներ, քան անմիջական հաջորդ տասնամյակներում, նույնիսկ հարյուրամյակում: Իսկ ավելի ուշ, հատկապես 17-րդ դ. նոր թափով է աշխուժանում նման գործունեությունը՝ հիմնված ոչ միայն միարարական նոր տիպի ուժերի կամ «դպրոցների» ծավալած գործունեության, այլև սրանց գրական պրոպագանդային վերաբերող մարտունակության վրա: Նման վայրիվերումների համար հիմք էին հանդիսանում հայության տնտեսական, մանավանդ քաղաքական անմխիթար և կախյալ վիճակը, առաքելական եկեղեցու ինչ-որ չափով թուլացած լինելը և այլն: Նույնիսկ լինում է ժամանակ, որ հայ ողջ մտավոր կյանքը հայտնվում է անասելի ծանր կացության մեջ՝ երևան եկած օտար նվաճումների և անցանկալի բեկումների տեսքով: Սկզբնավորման շրջանին հաջորդած շուրջ մեկուկես դարի ընթացքում ոչ միայն լատինաբան հայերենով, այլև առհասարակ շատ քիչ են ստեղծվում գրավոր հուշարձաններ, ուստի լեզվական այդ տարբերակի ուսումնասիրումն առաջին հերթին կատարվում է առանձին ժամանակներում երևան եկած գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա: Լատինաբան հայերենի պատմության ավելի լայն ուսումնասիրումն, անշուշտ, ապագային է պատկանում:

Սույն աշխատանքն այդ բնագավառում առաջին փորձն է:

Աշխատանքում ելնում ենք այն սկզբունքներից, որոնք առաջ են քաշվել մեր «Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.» գրքում և տպագրված մյուս ուսումնասիրություններում, հատկապես այն նկատառումով, որ սույն աշխատանքն ինչ-որ իմաստով լրացնում է մեր նախորդ

աշխատանքները՝ կապված առաջին հերթին հայերենի պատմության մեջ լատինաբանության երևույթի հետ:

Այստեղ առանձին գլուխներով անդրադառնում ենք լատինաբանության ուսումնասիրության պատմությանը, գրական հայերենի ընդհանուր պատմության մեջ նրա ունեցած տեղին, լատինաբան հայերենի բնութագրին և լատինաբանության հաղթահարմանը: Հարցերի այս ընդհանուր շրջանակում քննության են առնվում երևույթի արտալեզվական կողմը, ինչպես նաև վերջինս երևան հանող չափանիշները: Բուն լեզվական կողմին անդրադառնում ենք ավելի մանրամասն և լեզվական փաստերով հիմնավորվող վերլուծությամբ:

Քննության ենք առնում այն, թե լատինաբան հայերենի հարցն ինչպես է արժարժվել ժամանակի գրավոր աղբյուրներում, այնուհետև հայագիտական և հայերենին նվիրված այլ կարգի աշխատություններում այդ հարցն ինչ չափով է եղել ուշադրության առարկա և ըստ այդմ ինչպիսի գնահատության է արժանացել հայոց լեզվի մյուս՝ ժամանակային, տարածքային և գործառական տարբերակների համեմատությամբ:

Բուն լեզվական երևույթների քննության համար կարևոր նախադրյալ են եղել համապատասխան գրավոր աղբյուրներին անդրադառնալը՝ իբրև բնագրեր, լատինաբան հայերենի պատմության փուլերի առանձնացումը, գործառական ոլորտների բաժանումը, լեզվական տարբերակիչ հատկանիշների սահմանագատումը, ինչպես նաև հունաբան հայերենի հետ համեմատությունը և այլն:

Այնուհետև, լատինաբան հայերենը բնութագրվում է իր բոլոր կողմերով՝ հնչյունական փոփոխություններ, բառապաշարի տեղաշարժեր, ինչպես նաև ձևաբանական և շարահյուսական երևույթներ: Սրանք իրողություններ են, որոնք այս կամ այն չափով տեղ են գտել համապատասխան գրավոր աղբյուրներում և ի հայտ են բերում վերջիններիս հեղինակների լեզվական հնարավորություններն ու գրավոր խոսքի կառուցման առանձնահատկությունները: Ընդ որում նկատելի է, որ նման տարբերությունները հիմնականում արդյունք են լատիներենի ընդօրինակման, ինչպես նաև այն բանի, թե հեղինակներն ինչքանով են հետամուտ իրենց իսկ առաջադրած լեզվական արհեստականությանը, ընդօրինակման նպատակով ինչպիսի խորթությունների են դիմել, հայերենի որ տարբերակից ինչ չափով են օգտվել, ինչքանով են հմուտ եղել նման գործածությունների մեջ և այլն:

Այս դեպքում ևս լեզվական նյութի քննությունն իրականացվում է հայոց լեզվի ընդհանուր պատմության հայեցակետից՝ առնված ոչ միայն նախորդ

փուլերից հատկապես հին գրական հայերենի (գրաբարի), մասամբ միջին գրական (կիլիկյան) հայերենի, այլև նոր շրջանի հայերենի (վաղ աշխարհաբարի) մեջ տեղի ունեցած փոփոխությունների հարաբերությամբ: Լեզվական այս կամ այն իրողությունը քննվում է արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության, ինչպես նաև գործառական արժեքի նկատառումով, ընդ որում գրեթե միշտ ներքին համեմատության և առանձնակի նկարագրության ձևով:

Լեզվական երևույթների քննության մեջ որոշակի ուշադրություն է դարձվում նաև ընդօրինակվող և ընդօրինակող լեզուների տիպաբանական ընդհանրություններին և առանձնահատկություններին: Վերջիններս նկատի ենք ունենում ոչ այնքան ցեղակցության, որքան կառուցվածքային տարբերակվածության չափանիշով, այսինքն՝ գրական լեզուների ինքնուրույն զարգացման, ինչպես նաև այլ լեզուների հետ ունեցած տարբեր կարգի շփումների հետևանքով ձեռք բերված տարբերությունների հատկանիշով:

Հայոց լեզվի պատմության լայն ուսումնասիրության տեսակետից կարևոր նշանակություն ունի լատինաբան հայերենին անդրադառնալը ոչ միայն ինքնին, այլև հայերենի մյուս տարբերակների հարստացման՝ բառային և տերմինային համալրման, ինչպես նաև գրական լեզվի մշակման օրինակ ծառայելու տեսակետից: Նկատենք, որ լինում են ժամանակներ, երբ լատինաբան հեղինակները հասնում են իրենց իսկ հորինած տարբերակի, այսպես կոչված, կանոնարկմանն ու միօրինականացմանը, հունաբան հայերենի հետ իրական հարաբերակցմանը, իսկ լատինաբանության հաղթահարումից հետո որոշ ժամանակ շարունակվում է նման իրողություններին՝ իբրև գրական-գրքային ձևերի տեղ տալը:

Գրաբարը նոր գրական լեզու դարձնելու փորձերի ճանապարհին լատինաբան հայերենը, որպես հայոց գրավոր լեզվի մի տարբերակ, հաղթահարվում է և մեկընդմիշտ դադարում է գոյություն ունենալուց:

Վերջին տարիներին գիտական հանդեսներում լույս են տեսել տողերիս հեղինակի «Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները» («Պատմա-բանասիրական հանդես», 2008, 1, էջ 159-179), «Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների փոխհարաբերության հարցի շուրջ» («Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, 2, էջ 136-149), «Նկատառումներ լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների վերաբերյալ» («Ջահուկյանական ընթերցումներ» -2008, Երևան, 2008, էջ 98-106) աշխատանքները, որոնք ուղղակիորեն առնչվում են սույն աշխատանքին:

Գլուխ առաջին
ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական դիտողություններ

Հայ-հռոմեական (լատինական) հարաբերությունները սկիզբ են առնում հնագույն ժամանակներից (մ.թ.ա. 60-ական թթ.), լեզվաբանական և գուտ լեզվական շփումների ձևով տևում են մինչև 18-րդ դ. 80-ական թթ., երբ լատինաբանությունը փաստորեն դադարում է գոյություն ունենալուց: Այդ հարաբերությունների պատմությունը, որոշակի ընդհատումներով հանդերձ, անպայմանորեն ենթադրում է պատմամշակութային, ընդ սահման լեզվական առնչությունների երկու փուլ՝ ա) հայ-հռոմեական (կամ հին, մ.թ.ա. 66 - մ.թ. 429 թթ.) և բ) հայ-լատինական (կամ նոր, 13-18-րդ դդ.):¹

Հայ - լատինական հարաբերություններն ըստ էության երևան են գալիս 13-րդ դ., իբրև հայ-եվրոպական ընդհանուր մշակութային առնչությունների մի դրսևորումը, երբ Կիլիկյան հայկական իշխանությունը քաղաքական և տնտեսական նկատառումներով շփվում է Արևելքում հաստատված (1098 թ.) խաչակիր իշխանությունների հետ²: Դժվար չէ նկատել, որ հայ-լատինական հարաբերություններն առաջանում են այնպիսի ժամանակներում, երբ եվրոպական երկրներն ապրում են զարգացած ֆեոդալիզմի (11-15-րդ դդ.) և վաղ վերածննդի ու բուրժուական հեղափոխությունների (16-18-րդ դդ.) դարաշրջանները: Իսկ Հայաստանում ֆեոդալիզմն ուներ տեղական որոշ առանձնահատկություններ ոչ միայն բովանդակային, այլև ժամանակային առումով³: Արդի հայ պատմագիտության մեջ ընդունված է այն դասակարգումը, որի համաձայն Հայաստանը 9-րդ դ. կեսերից մինչև 14-րդ դ. կեսերը գտնվելիս է եղել զարգացած ֆեոդալիզմի, իսկ 14-18-րդ դդ.՝ ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում⁴:

¹ Հմմտ. *Ա.Սեյե*, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978, էջ 130–133: *Հ.Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 324–325: *Գ.Ջահուկյան*, Լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1960, էջ 103–262: *Վ. Համբարձումյան*, Հայերը և հռոմեացիները. լեզվական շփումներ, «Երկիր» (օրաթերթ), 13-ը նոյեմբերի, 1991:

² Հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, հ.3, Երևան, 1976, էջ 677–686: *Լ.Խաչիկյան*, Քոնստանդուպոլիսի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնստանդուպոլիսի գիտական գործունեությունը. – *Յովհաննես Քոնստանդուպոլիսի*, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Լ.Խաչիկյանը, ներածությունը Լ.Ս.Խաչիկյանի և Ս.Ա.Ավագյանի, Երևան, 1977, էջ 5–51:

³ Տե՛ս *Հ.Մանանդյան*, Երկեր, հ.Դ, Երևան, 1981, էջ 192–193:

⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, հ. 4, Երևան, 1972: Գրքի 4-րդ հատորի «Առաջաբանում» գրված է. «Այս հատորի ժամանակագրական ճշգրիտ սահմանն սկսվում է XIV դարի 30-ական թվականներով, որ բնորոշվում է մոնղոլական իշխանության հոգեվարքով և ավարտվում 1801 թվականով, երբ հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք շրջաններ մտան Ռուսաստանի կայսրության հովանու տակ» (էջ 7):

Փաստորեն ստացվում է, որ հայ-լատինական հարաբերությունները գոյություն են ունեցել ավելի վաղ, քան լատինաբան հայերենի առաջացումը (14-րդ դ. 20-ական թթ. կեսեր), և վերջինս լիովին համընկնում է հայ իրականության մեջ ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանի սկզբնավորման հետ:

Հայ-լատինական հարաբերություններն իրենց արտացոլումն են գտել ժամանակի հայերեն գրավոր աղբյուրներում, հետագա ուսումնասիրություններում: Արտացոլումը հիմնականում տեղի է ունեցել ուղղակիորեն, մասամբ նաև անուղղակի ձևով: Գրավոր աղբյուրների հեղինակները և ուսումնասիրողներն այդ հարաբերություններին անդրադառնում են տարբեր չափերով, որոշակի առիթներով, իրենց զանազան բնույթի և տարբեր ծավալի աշխատություններում: Դրանք մատենագրական երկեր են, հայագիտական և հայերենագիտական հետազոտություններ, որոնք ավանդվել են ձեռագիր վիճակով, տպագրվել են բազմաթիվ պարբերականներում և ժողովածուներում, լույս են տեսել առանձին գրքերում:

Այստեղ քննարկում ենք այդ աշխատություններից, մեր կարծիքով, ամենակարևորները, ըստ որում ուշադրության կենտրոնում ենք պահում այն հանգամանքը, թե այս կամ այն հարցի լուծումը տվյալ աշխատության մեջ ինչպիսի դրվածք ունի և ինչ արժեք է ներկայացնում: Այս դեպքում անհրաժեշտաբար նկատի ենք առնում ուսումնասիրողի աշխարհայացքը, գիտական հակումները, ինչպես նաև նրա այս կամ այն երկի բովանդակային կողմնորոշվածությունը:

Հարցի պատմությունը ներկայացնում ենք սույն աշխատանքի հետևյալ մասերում. ա) հարցի արծարծումը ժամանակի հայերեն գրավոր աղբյուրներում, բ) հարցի մեկնաբանությունը հայագիտական աշխատություններում և գ) հարցի զնահատությունը հայերենագիտական ուսումնասիրություններում: Հասկանալի պատճառներով հայերենագիտական ուսումնասիրություններին անդրադառնում ենք հայագիտական աշխատություններից առանձին:

Ժամանակի գրավոր աղբյուրներում լատինաբանության խնդիրները հիմնականում արծարծվում են միակողմանիորեն: Շատ քիչ դեպքերում է, որ դրանք քննարկվում են ժամանակի իրականության ընդհանուր շահագրգռությունների տեսանկյունից:

Նույն խնդիրները հայագիտական աշխատություններում մեկնաբանվում են հիմնականում երկու, իրարից միանգամայն տարբեր ուղղվածությամբ: Եթե անցյալ դարի վերջերից մինչև մեր դարի առաջին տասնամյակներն ընկած շրջանում գրված աշխատություններում հիշյալ խնդիրները մեկնաբանվում և

գնահատվում են գաղափարական, գիտական ոչ միասնական ուղղվածությամբ, տարբեր կարգի հետաքրքրությունների շրջանակներում, ապա հետագայում ի հայտ են բերվում ամբողջապես այլ մոտեցում, գիտական հետազոտության նոր, հստակ չափանիշներ:

Գրեթե նույնը կարելի է ասել հայրենագիտական աշխատությունների վերաբերյալ: Լատինաբանության հարցերը գնահատվում են գերազանցապես հայ լեզվաբանության և հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում: Դրանցում հարցերի գնահատությունը տրվում է մասնակիորեն, ոչ որպես առանձին ուսումնասիրության առարկայի գնահատություն: Առ այսօր չունենք լատինաբան հայերենի պատմությանը նվիրված առանձին ուսումնասիրություն:

Մինչև այժմ այս ուղղությամբ կատարված աշխատանքը, բնականաբար, լիովին արժանի է ամենայն ուշադրության:

2. Հարցի արժարժույթը ժամանակի հայերեն գրավոր աղբյուրներում

Ինչպես վերը նշեցինք, լատինաբան հայերենի պատմությունը սկիզբ է առնում 14-րդ դ. 20-ական թթ. կեսերից, թեև հայ-լատինական հարաբերությունները նկատելի են ավելի վաղ ժամանակների: «Հայ-եվրոպական մշակութային առնչությունները դարերի խորքից են գալիս, սակայն շոշափելի կերպարանք են ստանում սկսած 12-րդ դ. կեսերից, երբ Կիլիկյան հայկական իշխանության սահմաններում ու Մերձավոր Արևելքի հարակից շրջաններում քաղաքական ու տնտեսական սերտ կապեր են ստեղծվում մի կողմից հայերի, մյուս կողմից խաչակիր իշխանությունների միջև»¹: Վերջին ժամանակներս, նոր փաստերի օգտագործմամբ փորձեր են արվում այդ հարաբերությունները, թեկուզ մասնավոր բնույթ կրող, տեսնել 11-րդ դ. կեսերին, նույնիսկ 10-րդ դ. վերջերին²:

Հարցի պատմությունն ավելի լայն և համեմատաբար ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ ենք համարում սեղմ անդրադառնալ նախ 11-13-րդ դդ., այնուհետև մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի կարևորագույն աղբյուրների համապատասխան տվյալների քննարկմանը:

¹ *Լ.Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 16:

² Հմմտ. *Շ.Դեղեյան*, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում IX դարի վերջում և X դարի սկզբում. «Պատմա-բանասիրական հանդես», 1984, էջ 21-36: Տես նաև. *Լ. Տեր-Պետրոսյան*, Խաչակիրները և հայերը, հ. 1 (Ուսումնասիրություն և թարգմանություններ), Երևան, 2005:

Հայ-լատինական հարաբերությունները, որոնք ուշադրության են արժանի 11-րդ դ. 50-ական թթ., ունեն կրոնական-դավանաբանական, այլև քաղաքական-մշակութային ուղղվածություն: Այդ ժամանակ է, որ Եվրոպայում քրիստոնեական եկեղեցին տրոհվում է երկուսի՝ արևմտյանի (հռոմեական-կաթոլիկական) և արևելյանի (հունական-կաթոլիկական, հետագայում՝ «ուղղափառ» հարջորջումով)¹: Հայ իրականությանը սպառնում է դավանանքի նույնպիսի երկվություն՝ կապված հիշյալ ուղղությունների արևելյան լայն էքսպանսիոնիստական ձգտումների հետ: Հայ հասարակական կազմակերպությունները, հատկապես եկեղեցին պիտի հանդես բերեին որոշակի շրջահայացություն այդ ազդեցություններից մեկին կամ մյուսին հարելու խնդրում: Այսպիսով, հայ-լատինական հարաբերությունների գոյացման արտաքին նախապայման են այդ շրջանում ոչ միայն բյուզանդական կայսրության վարած առավել ջլատող քաղաքականությունը, արևելյան անապատաբնակ ցեղախմբերի՝ դեպի արևմուտք հրոսակաբար ներթափանցելը (1035-1040 թթ.), այլև Եվրոպայի խաչակիրների բախտախնդիր արշավանքները դեպի արևելք (1096-1270 թթ.):

Այդ հարաբերությունների գոյացմանը որոշակիորեն նպաստում են հատկապես խաչակիրների արշավանքները, որոնք գերազանցապես խրախուսվում և հովանավորվում են Հռոմի պապականության կողմից: Վերջինս ուներ էքսպանսիոնիստական նպատակ՝ հասնելու ոչ միայն հոգևոր ընդհանրականության, քաղաքական գերիշխանության, այլև տնտեսական («նյութական») հզորացման: Այդ նպատակով նա արտաքուստ թարմացնում է իր «քրիստոնեական սոցիալական սկզբունքները», որոնք էությանը գրեթե ոչնչով չեն տարբերվում նախկինում մշակված ու ձևակերպված դոգմաներից:

Այդ դոգմաներին հայ քրիստոնեական եկեղեցին ծանոթ էր վաղուց: Հայ իրականությունը պետական անհիմքնությունության պայմաններում որոշակիորեն ապավինում էր եկեղեցական-դավանաբանական այդ հնարավորությանը՝ իր գոյությունը հոգալու և մշակութային առաջխաղացումն այդ միջոցներով ապահովելու օրինական մղումներով: Եվ, ահա, նոր ժամանակներում՝ Բագրատունիների անկումից հետո մանր իշխանությունների հակառակ ու հակոտնյա հարաբերությունների, ներքին զրկանքների և օտար, հանկարծահաս սպառնալիքների պայմաններում հայ քրիստոնեական եկեղեցին ինքնըստինքյան կանգնում է դավանաբանական ներքին երկվության առաջ: Սպառնացող

¹ Տե՛ս Միջին դարերի պատմություն, հ. 1, Երևան, 1975, էջ 684:

արտաքին վտանգը, սոցիալական պայմանների վատթարացումը, նկատվող կենտրոնախույս ձգտումները, Կիլիկյան հայկական իշխանության մեկուսի ինքնատիրապետումը 11-13-րդ դդ. առիթ և պատեհություն են հանդիսանում Հռոմի պապականությանը փորձելու իրականացնել նաև այդ տարածքում իր արևելյան ընդհանրականության հասնելու ձգտումը: Հիշյալ դարերում կաթոլիկական էքսպանսիան չի հասնում որևէ հաջողության բուն Հայաստանում, իսկ Կիլիկյան հայկական իշխանության հետ ձևակերպվում են որոշակի հարաբերություններ: Մայր հայրենիքում ստեղծված մանր իշխանությունները («թագավորությունները»), զինակից լինելով վրաց թագավորությանը, այնուամենայնիվ քաղաքական առումով միառժամանակ կարողանում են նվազեցնել օտար ճնշումները, երբեմն կասեցնել նման չարաշահումները:

Հայ եկեղեցին անկոտրում դիմադրություն է հանդես բերում իր կրոնական ավանդական դավանանքի պահպանման ուղղությամբ՝ դիմելով գրեթե ամեն կարգի միջոցի: Հայտնի են մշակութային այս կամ այն գործչին անլուր բանադրանքի ենթարկելու փաստերը, որոնք երևան են գալիս դեռ 11-րդ դ. առաջ¹:

11-րդ դ. երկրորդ և 12-րդ դ. առաջին կեսերի դեպքերի իրական շարադրանքը գտնում ենք Մատթեոս Ուռհայեցու (11-րդ դ. 2-րդ կես – 1138 - 1144 թթ.) «Ժամանակագրության» մեջ²: «Նա ապրել և ստեղծագործել է դեպքերով ու դեմքերով հարուստ, պետությունների և ժողովուրդների կյանքում ճակատագրական նշանակություն ունեցած իրադարձությունների ժամանակաշրջանում», - գրում է Հր. Բարթիկյանը³: Տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող հարցերի տեսակետից առավել արժեքավոր են Ուռհայեցու երկի II (1051-1101 թթ.) և III (1101-1136 կամ 1137 թթ.) մասերը՝ շարադրված ականատեսի և իրագեկի մանրամասնությամբ ու հավաստիությամբ: Պատմիչը մեծ ուշադրություն է դարձնում հետևյալ հանգամանքներին. ա) Բյուզանդիայի երկդիմի և եսակենտրոն քաղաքականությունը, բ) թուրք-սելջուկների ներթափանցումները և գ) խաչակիրների սքողյալ մտադրությունները: Դրանք

¹ Այսպես, օրինակ, 10-րդ դ. Անանիա Նարեկացին հարկադրված է լինում գրելու իր «Խոստովանությունը» առ փարատումն այն հերյուրանքի, որ ինքը աղանդավոր չէ, այնուհետև՝ հայկական մանր իշխանությունների ղեկավարները դիմում են Բյուզանդիային հովանավորության ակնկալիքով և իբրև միջոց ու պատվար նորից ու նորից առաջ են քաշում դավանանքի հավատարմությունը և այլն: Տե՛ս *Անանիա Նարեկացի*, Գիրք խոստովանութեան, Վաղարշապատ, 1892: *Նույնը*՝ «Արարատ», 1892, էջ 6–18, այլև՝ Թուրք Գազկայ Վասպուրականի հայոց թագաւորի առ կայսրն Յունաց Ռոմանոս Վասն հաւատոյ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 295–301:

² *Մատթեոս Ուռհայեցի*, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898: Այլև՝ *Մատթեոս Ուռհայեցի*, Ժամանակագրություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973:

³ Տե՛ս Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V–XVIII դդ.), Երևան, 1976, էջ 246:

երևան են գալիս իրենց մանրամասնություններով և ողջ էությամբ, ժամանակագրի կողմից արժանանում են իրական գնահատության: Ըստ Ուռահայեցու ճիշտ մեկնաբանման հույները (իմա՝ բյուզանդացիները) պատճառ են դառնում հայոց պետականության վերացման, օտար ներխուժումների, որովհետև նրանք վաղուց ևեթ վարում էին հայերի ներքին ուժերը պառակտելու քաղաքականություն:

Այնուհետև, հեղինակը իբրև ապավեն դիտում է հայ իշխանություններին, որոնց նկատմամբ արվում են զանազան անօրենություններ: «Ուռհայեցին ազգային ավանդույթների կրքոտ պաշտպանն է: Նա զգում է, որ պետականության կորստյան պայմաններում ազգային ավանդույթները հայ ժողովրդի գոյատևման գործոններից մեկն են: Այդ իսկ պատճառով նա պայքարում է ոչ միայն նրանց դեմ, ովքեր ձգտում են քաղկեդոնականությունը տարածել Հայաստան, այլև քաղկեդոնականություն ընդունող հայերի դեմ»¹:

Ուռհայեցու երկը շարունակել է Գրիգոր Երեցը (այն հասցնելով մինչև 1162 կամ 1163 թ.), սակայն այդ մասը² պատմագիտական առումով զգալապես զիջում է նախորդին:

Ուշագրավ է Սմբատ Սպարապետի (1208-1276 թթ.) «Տարեգիրքը» (հայտնի է նաև «Հայոց պատմություն» վերնագրով)³, որն ինչպես ընդունված է հայ բանասիրության մեջ, կազմված է Ուռհայեցու և Գրիգոր Երեցի ստեղծածի հիման վրա, ընդգրկում է 955-1275 թթ. դեպքերը:

12-րդ դ. քաղաքական անցքերի և հատկապես հոգևոր մշակույթի վերելքի առումով ակնառու է Ներսես Լամբրոնացու (1153-1198 թթ.) գիտական և կազմակերպչական ողջ գործունեությունը: Լամբրոնացու երկերը հիմնականում ոչ ուղղակիորեն են շոշափում ժամանակի հայ-լատինական հարաբերությունները¹: Դրանք անդրադարձն են այն միջոցառումների, որոնք ձեռնարկվում էին հանուն հայկական մշակույթի առաջընթացի, հայ իրականության գոյատևման: Այդ երկերով հեղինակը հետապնդում է հոգևոր-դավանաբանական հարցերում ինքնուրույնության պահպանման և օտար ազդեցությունից, այլադավան անհաճո գայթակղությունից զերծ մնալու նպատակ: Լամբրոնացու Թղթերի և Նամակների որոշ մասն անմիջականորեն առնչվում է այդ հարաբերություններին:

¹ Նույն տեղում, էջ 252:

² Տե՛ս Գրիգորի Երեցի Շարայարութին ժամանակագրութեան Մատթեսի Ուռհայեցոյ.– *Մատթեսու Ուռհայեցի, Ժամանակագրութին, Վաղարշապատ, 1989, էջ 369–429: Այլև՝ Մատթեսու Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 248–293:*

³ Սմբատայ Սպարապետի Հայոց պատմութիւն, Մոսկվա, 1856: Այլև՝ Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, Փարիզ, 1859:

Եվ 12-րդ դ. շարունակվում են գրվել մեկնողական բնույթի երկեր, որոնցում բացատրվում են Ավետարանի և հարակից գրքերի հետ կապված բազմազան կնճռոտ հարցեր²: Կազմվում կամ թարգմանվում են զանազան վարքեր, ներբողներ՝ նվիրված եկեղեցու հայրերին³: Այդօրինակ երկերը երևան են գալիս ժամանակի կրոնական-դավանաբանական երկվության պայմաններում նախկինը, ավանդականը շարունակելու, նրանում առավել տոկուն, անասան մնալու և ըստ այդմ նոր ժամանակներին լիովին դիմագրավելու, նոր պահանջներին ամբողջովին բավարարելու նպատակով:

Այդ դարի դեպքերին ականատես է Մխիթար Անեցին (ծն. և մահ. թթ. անհայտ), որի «Մատեան»-ի⁴ 2-րդ և 3-րդ պրակներում տեղ է հատկացվելիս եղել մեզ հետաքրքրող իրադարձություններին, որոնք, սակայն, մեզ չեն հասել: Այդ մասերում, ինչպես նկատելի է երկի գլխակարգությունից, հեղինակը անդրադառնալիս է եղել ֆրանկների արևելյան ներթափանցումների նկարագրությանը¹:

Հայ-լատինական հարաբերություններն ավելի շոշափելի են դառնում 13-րդ դ., հատկապես Կիլիկյան հայոց շրջանում՝ դրսևորվելով սոցիալ-քաղաքական ոլորտներում, այլև հոգևորական միջավայրում: Դավանաբանական խնդիրներն այդ դարում ավելի են սրվում: Հայ եկեղեցու սպասավորները, պետական գործիչները հանդես են բերում եվրոպական համապատասխան ազդեցությանը որոշակիորեն, հիմնականում դրականապես արձագանքելու միտում: Դարավերջին ավելի ցցուն են դառնում հռոմեադավան կողմի նկրտումները՝ ի դեմս, օրինակ, կիլիկյան կաթողիկոս Գրիգոր Անավարզեցու (1293-1307 թթ.) կողմորոշման (տես ստորև):

Կրոնական ավանդական ուղղության ներկայացուցիչները շարունակաբար գրում են հայ լուսավորչական եկեղեցու բուն սկզբունքներից բխող մեկնություններ, աղոթագրքեր, եկեղեցու հայրերի վարքեր, ճառեր,

¹ Տե՛ս, օրինակ, Հարցումն պատրիարքին և պատասխանի Ներսիսի.– Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր (այսուհետև՝ ՄՄՁ), 9622, էջ 16–28:

² Տե՛ս Մեկնութիւն Ս.Աւետարանին Դուկասու, արարեալ Իգնատիոսի վարդապետի, Կ.Պոլիս, 1824: Մեկնութիւն Ս.Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արարեալ ի Ներսիսե Շնորհալոյ, Կ.Պոլիս, 1825: Մեկնութիւն Եօթանց թղթոց կաթողիկեայց, արարեալ Սարգսի շնորհալից վարդապետի, Կ.Պոլիս, 1826-1828:

³ Պատմութիւն վարուց Ս.Յովհան Ոսկեբերան հայրապետին, թարգմ. ի Գրիգոր վկայասէր կոչեցելոյ, Վենետիկ, 1751: Յովհաննու սարկաւագ վարդապետի Ներբողեան ի Ս.Գրիգոր Լուսատրիչն.– «Մովսէրք հայկականք», հ. Ե, Վենետիկ, 1853, էջ 5–36: Գրիգորի սարկաւագապետի Խօսք ի Ս.Գրիգոր Լուսատրիչ.– «Մովսէրք հայկականք», հ. Դ, Վենետիկ, 1853, էջ 129–157: Գրիգոր Սկևռացոյ Ներբողեան ի Ս.Ներսէս Լամբրոնացի.– «Մովսէրք հայկականք» հ. ԺԵ, Վենետիկ, 1854 և այլն:

⁴ *Մխիթար Անեցի*, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությանը Հ.Գ.Մարգարյանի, Երևան, 1983:

պատասխանիներ և այլն²: Քաղաքական-իրավական տեսակետից եվրոպական նոր ազդեցության հետևանք պետք է դիտել այն, որ Կիլիկյան Հայաստանում միտում է նկատվում դիմելու դատաստանական-դատավարական նոր ձևերի ու եղանակների³:

13-րդ դ. երևան եկած մի քանի երկերից իսկ կարելի է գրեթե ամբողջական պատկերացում կազմել, թե ինչպիսի պայմաններ էին ստեղծվել դեպի հռոմեադավանությունը, և թե հայոց շրջանում դրանք որքանով էին արժանանում ջատագովության: Այս առումով խիստ հետաքրքիր է Գրիգոր Անավարզեցու մի դրվատական երկը⁴, Մարտինոս Օպավիացու (Ֆրա Մարտինոս, այլև՝ Մարտինոս Լեհացի. 13-րդ դ. սկիզբ - 1279 թ.) «Գիրք պատմութեանց»-ը⁵, նաև Ներսես Պալիանենցի (13-րդ դ. վերջ - 1363 թ.) մեկ-երկու երկը⁶:

Գաղափարական այդ միտումը սկզբից ևեթ բացահայտ ձևով արժանանում է ամենայն պարսավանքի, լուրջ ընդդիմության՝ ի պաշտպանություն քրիստոնեական ավանդական ուղղության սկզբունքների և հիմնադրույթների: Այս առումով բավականին նշանակալից է, օրինակ, Եսայի Նչեցու (1260/65-1338 թթ.) երկու աշխատությունը⁷:

Կարևոր աղբյուր է նաև 13-րդ դ. նշանավոր մատենագիր Մխիթար Այրիվանեցու (ծն. և մահ. թթ. անհայտ) Պատմությունը¹: «Խիստ խտացված շարադրանքով ստեղծված այդ աշխատությունն ունի բավական լայն ընդգրկում ինչպես ժամանակի (արարչագործությունից մինչև 13-րդ դ. վերջերը), այնպես և բովանդակության առումով: Այն պարունակելով նոր և կարևոր տեղեկություններ պատմական Հայաստանի, Կիլիկյան Հայկական պետության, Հայոց Աղվանքի,

¹ Նույն տեղում, էջ 11:

² Նշենք մի քանիսը. Մեկնոթին ժամանակագրութեան, արարեալ Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի, Կ.Պոլիս, 1840: Յօհաննու Արճիշեցոյ Մեկնոթին ահաւոր խորհրդոյ, Էջմիածին, 1860: Պատմութիւն վարուց Ներսիսի Լամբրոնացոյ.– *Մամուէլ Անեցի*, էջ 224–243, այլև՝ «Արարատ», 1878, էջ 895: Սրբոյն Ներսիսի Շնորհալոյն Պատմութիւն վարուց.– «Սովետրք հայկականք», հ. ԺԳ, 1854, էջ 1–87: Պատասխանիք Մխիթարայ Սկևացոյ Յաղագս համապատուութեան, Երուսաղէմ, 1965: Ճառք և Խոստովանութիւնք հաւատոյ Գրիգորի Նարեկացոյ և Վահրամայ վարդապետի, Երուսաղէմ, 1856, էջ 115–175 և 176–216:

³ Տե՛ս, օրինակ, *Assies d' Antioche, reproduits en français et publiées ... de Sempad Le Connétable*, Venis, 1876 (գուգադիր՝ ֆրանս.– հայ.): Այլև՝ Սմբատ Գունդատապի Գատաստանագիրք, Սորաքուրգ, 1905, այլև՝ Էջմիածին, 1918:

⁴ *Գրիգոր Անավարզեցի*, Դրուատ գովեստի ամենայն սրբոց տօնի.– ՄՄՁ 9622:

⁵ Ֆրա Մարտինոսի Գիրք պատմութեանց.– ՄՄՁ 2037, 2038 և այլն:

⁶ Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հ. II, կազմեց Վ.Ա.Հակոբյան, Երևան, 1956, էջ 173–208: *Յ.Հ.Վարդանյան*, Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին.– «Պատմա-բանասիրական հանդես», 1980, 3, էջ 189–202:

⁷ Թուրք Եսայեայ վարդապետի Պատասխանի ընդդէմ պարոն Հեթում Կիրիկեցոյն.– ՄՄՁ 9622, էջ 716–734: Նորին Եսայեայ Նչեցոյ Պատասխանի թրթոյն կաթողիկոսին և քազաւորին.– ՄՄՁ 9622, էջ 734–753:

Վրաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի վերաբերյալ, ներկայացնում է աղբյուրագիտական և մատենագիտական որոշակի արժեք»²: Այրիվանեցին հետաքրքիր տեղեկություններով իր ժամանակագրական պատմությունը հասցնում է մինչև 1289 թ.՝ կողմնակիորեն իրազեկ դարձնելով մեզ հետաքրքրող շրջանին նախորդող 2-3 դարերի հայոց և նրանց հարևան ժողովուրդների տարբեր կարգի առնչությունների և սոցիալ-քաղաքական կացության վերաբերյալ: Նման տեղեկությունները կողմնակիորեն օժանդակում են հայ-լատինական հարաբերությունների ճիշտ պատկերացմանը:

Վարդան Բարձրաբերդցու (Արևելցի. 1197-1200 թթ. միջև - 1271 թ.) «Տիեզերական պատմութիւն» (այլ անվանումով՝ «Հաւաքումն պատմութեան») երկում³ առանձին ուշադրության առարկա է Փրկչի գերեզմանի ազատագրմանն աճապարող խաչակիրների արշավանքների նկարագրությունը: Երկի որոշակի էջերից (էջ 166, 194, 195 և այլն) տեղեկանում ենք Հռոմի պապի արևելյան ձգտումների մասին թե՛ հոգևոր-դավանաբանական հարցերում գերակայության հասնելու, թե՛ քաղաքական-տարածքային գերիշխանություն ձեռք բերելու տեսակետից: «Հաւաքումն պատմութեան» աշխատությունը աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունի: Հարուստ, բազմազան և ճշգրիտ տեղեկություններ է հաղորդում հայ և անդրկովկասյան ժողովուրդների, Կիլիկիայի հայկական պետության, պարսիկների, բյուզանդացիների, արաբների, սելջուկների, խաչակիրների, եգիպտական մամլուկների, մոնղոլների և բուքմենական ցեղերի պատմական անցյալի մասին»⁴:

Կիրակոս Գանձակեցին (1202 կամ 1203-1271 թթ.) իր »Պատմութիւն Հայոց« երկում⁵ բավականին մանրամասն և լայնորեն նկարագրում է 12-րդ դ. վերջերից մինչև 1265-1266 թթ. ընկած պատմական անցքերը հայ և նրան հարևան ժողովուրդների կյանքի և առնչությունների, հատկապես մոնղոլ-թաթարների արշավանքների մասին: Մեզ հետաքրքրող հարցերն այս գրքում չունեն իրենց ուղղակի արտացոլումը, սակայն հեղինակի սովորություններն և տվյալներն այս

¹ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեց Սկրտիչ Էմին, Մոսկուայ, 1860: Տե՛ս նաև՝ *Է.Հարությունյան*, Մխիթար Այրիվանեցի (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1985:

² *Է.Հարությունյան*, նշվ. աշխ., էջ 46:

³ Մեծին Վարդանայ Բարձրաբերդցույ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեց Սկրտիչ Էմին, Մոսկուայ, 1861:

⁴ *Փ.Անթարյան*, Վարդան Արևելցի, «Հայ մշակույթի նշանավոր գործիչները .V–XVIII դդ.», էջ 323–324:

⁵ *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961: Այլև՝ *Կիրակոս Գանձակեցի*, Հայոց Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Առաքելյանի, Երևան, 1982:

դեպքում ևս կարևոր են այդ հարցերն ավելի ճշգրիտ ու հստակ պատկերացնելու և ուշադրության առնելու համար:

13-րդ դ. հեղինակ Վահրամ Բաբունին (ծն. և մահ. թթ. անհայտ) գրել է մի չափածո երկ¹, որտեղ ի թիվս այլ իրադարձությունների տեղ է տրվում ֆրանկների արևելյան ներթափանցումների պատկերմանը:

Այս դարի խոշորագույն մատենագիրը թերևս Ստեփանոս Օրբելյանն է (1250-1260 թթ. միջև - 1303 թ.), որի բեղմնավոր գործունեության ուղղություններից մեկը դավանաբանությունն է: «Դավանաբանական հարցերում Ստեփանոս Օրբելյանի գործունեությունը դուրս է գալիս Սյունիքի շրջանակներից ու ընդգրկում ավելի լայն ոլորտներ: Որպես նախաթոռ և եպիսկոպոսապետ նա ամբողջ խորությամբ պատասխանատվություն է զգացել ընդհանրապես իր ժողովրդի դավանանքի անշեղ պահպանման գործում: Նա քաջ գիտակցել է հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության, գոյատևման համար նաև կրոնական-մշակութային պայքարի նշանակությունը: Այդ պայքարը չափազանց կարևոր էր և իր ապրած դարաշրջանում, որը բնորոշ էր ինչպես քաղաքական արհավիրքներով, նույնպես դավանանքային վտանգներով»²: Այդպիսի վտանգ էր սպառնում Հռոմի պապականությունը: Այս հարցում օտարամոլությունն էր հանդես բերում Կիլիկյան Հայաստանը, որտեղ «ձգտում էին «նորույթներ» մտցնել հայ եկեղեցում ու դրանք տարածել ամբողջ երկրում՝ ներառյալ Արևելյան Հայաստանը»³: Ուստի այս և նման խնդիրների տեսակետից խիստ ուշագրավ են Օրբելյանի ոչ միայն «Պատմութիւն նահանգին Սիսական» երկը, այլև բուն դավանաբանական խնդիրներին վերաբերող աշխատությունները¹, որոնք թվով երեքն են: Դրանցից «Թուրք վասն հաւատոյ»-ն գրված է դավանանքի ներքին երկպառակության պատճառով՝ կապած Հռոմի նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևակերպման հետ: Ըստ այսմ որոշակիորեն պարզ է դառնում 13-րդ դ. հայ-լատինական հարաբերությունների միջև հայ ժողովրդի կրոնական և աշխարհիկ ներկայացուցիչների ունեցած կողմնորոշումը:

14-րդ դ. ավելի է խորանում երկվությունը հունադավան և հռոմեադավան կրոնական հոսանքների միջև: Այն լիովին դառնում է ոչ միայն հոգևոր դասի, այլև հասարակական մյուս կազմակերպությունների մտահոգության առարկան իր

¹ Վահրամայ Բաբունոյ Ռտանատր պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1859, էջ 181–248 (տպակից է Սմբատ Սպարապետի «Տարեգիրք»-ին):

² Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 11:

³ Նույն տեղում:

տարբեր կողմերով, հետզհետե թափանցում է լայն զանգվածների մեջ: Մշակութային առումով այն ներկայացնում է իբրև ավանդականորեն հնի և իր ժամանակի պահանջները բավարարելու միտում հանդես բերող նորի հակադրություն: Ավանդականը զինված էր փորձով, իսկ նորը՝ թարմությամբ և կարծեցյալ հեռանկարով: Ի տարբերություն նախորդ դարում նկատված ձգտումների, այս դարում հայ-լատինական հարաբերությունները դառնում են առավել բացահայտ և անսքող (explicite): Երևան են գալիս թե՛ մեկ և թե՛ մյուս գաղափարական, մշակութային հոսանքի դրույթները մեկնաբանող և վերլուծության առնող երկեր:

Ավանդական դավանանքի հետևորդներն այս դարում ևս շարունակում են գրել և մեկնաբանել բազմաթիվ երկեր, որոնցում խնդիրը նույն է՝ հայոց հին հավատքին և մշակութային ավանդույթին հետևելը, նոր պայմաններում զարգացնելը: Այդպիսին է, օրինակ, Բարսեղ (Ճոն) վարդապետի (ծն. և մահ. թթ. անհայտ) մի մեկնությունը², որը, ինչպես տեղեկանում ենք նաև գրքի Առաջաբանից և «Յիշատակարան»-ից, հեղինակը գրել է հակամիարարական պայքարին զարկ տալու նպատակով (էջ 460): Դա բնական էր, քանի որ այդ ժամանակ (գրել է 1325 թ.) ավելի բացահայտ էր դառնում հարցի դրվածքը: Ուշագրավ է նաև Սկրտիչ Նաղաշի (մոտ. 1394 – մոտ. 1470 թթ.) «Պատասխանի» երկը³: Նույնպիսի ուղղվածություն ունեցող մեկնողական երկեր են ստեղծում նաև ուրիշները⁴: Այդ առումով ուշագրավ է հատկապես Հովհան Որոտնեցու (1315-1386 թթ.) մի աշխատությունը⁵:

Հայոց ուղղափառ եկեղեցու դավանանքին հավատարիմ մնալու կոչով բազմիցս հանդես է գալիս դարի լավագույն մտածողներից մեկը՝ Գրիգոր Տաթևացին (1346-1410 թթ.)՝ գրելով լայն բնույթի աշխատություններ⁶, որոնցում հիշյալ հարցն անց է կացվում արմատական դրվածքով: Տաթևացին իր երկերում ուղղակիորեն և անուղղակի ձևով դիմադիր է կանգնում ժամանակի լատինամետ

¹ Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, հհ. Ա-Բ, Փարիզ, 1859, այլև՝ *նույնը*, Թիֆլիս, 1910: Տեսուն Ստեփաննոսի Սիսեանց նախագահ արհիեպիսկոպոսի Հակաճառություն ընդդեմ երկաբնակաց, Կ.Պոլիս, 1756:

² Մեկնություն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարսղի շնորհալի վարդապետի Ճոն կոչեցեալ, հ. II, Կ.Պոլիս, 182655

³ Պատասխանի լատինացոց թխտոյն ի Սկրտիչ Նկարագրե, հրամանաւ կաթողիկոսին հայոց և մեծ րարունապատին Թումայի.– ՄՄՁ 5657, էջ 143ա–151ա:

⁴ Նշենք, օրինակ, Մովսիսի Երզնկացոյ Ընդդիմադրութիւն սակս ջրոյ խառնման.– ՄՄՁ 6302: Վկայութիւն Աթանասի ընդդեմ երկաբնակացն.– ՄՄՁ 1838:

⁵ Գրիգորի աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ Լուծումն պարապմանց Սրբոյն Կիրոլի. Տե՛ս «Գիրք պարապմանց», Կ.Պոլիս, 1717, էջ 529–800:

⁶ Դրանք ամբողջովին և մանրամասն տե՛ս *С.С.Аревшатын*, *Философские взгляды Григора Татеваци*, Ереван, 1957, с. 33–34.

ձգտումներին: Տաթևացու առաջին երկու գրքում¹ «գլխավորապես քննարկվում են աստվածաբանական հարցեր, միաժամանակ դրանք հանդիսանում են անփոխարինելի աղբյուր ոչ միայն Տաթևացու փիլիսոփայական կոնցեպցիայի, մասնավորապես նրա սոցիալ-քաղաքական և գեղագիտական հայացքների, այլև կարևոր աղբյուր են Հայաստանի համար ողբերգական շրջանում հայ ժողովրդի տարբեր խավերի սոցիալական, տնտեսական և քաղաքական դրության լուսաբանման համար»²:

Հայ-լատինական հարաբերությունների արմատավորման գործում, ինչպես վերն ակնարկեցինք, զգալի ջերմեռանդություն է հանդես բերում Գրիգոր Անավարզեցին (13-14-րդ դդ.): Ավելացնենք, որ նա փաստորեն ոչ միայն կազմակերպում է կիլիկյան հայոց դավանանքը պատվաստելու հռոմեականի վրա, այլև այդ նպատակով գրում է համապատասխան բնույթի գործեր: Վերն արդեն նշեցինք նրա «Դրախտ գովեստի» երկը: Անավարզեցին հեղինակ է նաև նույն ոգով գրված Թղթերի (ՄՄՁ 2037), վիճաբանական մեկնության (ՄՄՁ 2268) և այլն: Անավարզեցու նման գործունեությունը ժամանակին, հետագայում ևս արժանացել է ոչ դրվատական վերաբերմունքի՝ իբրև անհարկավորության:

Նույն դարում երևան եկած հռոմեադավան երկերի հեղինակները սովորաբար ձգտում են «ճշգրտումներ» մտցնել քրիստոնեական հավատքի հարցերում: Ըստ այդմ գրվում են և թարգմանվում բազմաթիվ աշխատություններ, կատարվում տարբեր նպատակների ծառայող մեկնություններ³:

Այսպիսով, 14-րդ դ. սրված կրոնական-դավանաբանական և մշակութային հակամարտությունը մեզանում աստիճանաբար դրվում է կոնկրետ հիմքերի վրա՝ կապված հատկապես բուն Հայաստանում (Նոր Նախիջևան, Արտագ, Ջահուկ և այլն) լատին և լատինամետ (ֆրա) կրոնավորների արմատավորման և հայ որոշ զանգվածների դարձի հետ: Մեզանում ձեռնարկվում է մի նոր շարժում, որն այսօր խիստ հետաքրքրական երևույթ է հատկապես մշակույթի, ընդ սմին լեզվի տեսակետից:

Հայ-լատինական (միարարական) շարժման պարագլուխը, ինչպես գիտենք, հանդիսանում է Բարդուղիմեոս Մարաղացին (այլև՝ Բոնոնիացի,

¹ Մենք ևս, ինչպես Ս.Արեշատյանը, նկատի ունենք հեղինակի «Գիրք հարցմանց» (Կ.Պոլիս, 1729) և «Գիրք քարոզութեան» (մաս 1. «Ձմերան հատոր», Կ.Պոլիս, 1740, մաս 2. «Ամարան հատոր», ն.տ., 1741) աշխատությունները:

² *C.C.Аревшатян*, նշվ. աշխ., էջ 33:

³ Նշենք դրանցից մի քանիսը. Թուրթ Յովհաննու Օրբելոյ առ Ջաքարիա Ծործորեցի,– ՄՄՁ, 2080, 8245 և այլն: Մաշտոց լատինացուց, թարգմանեալ յՌոմիթոռաց Ջահկեցույ, այլև Գիրք առաքինութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ.– ՄՄՁ 46, 164 և այլն (տպ.՝ Վենետիկ, 1721): Գիրք մոլութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ.– ՄՄՁ 66 (տպ.՝ Վենետիկ, 1720):

Բողոնիացի. ծն. թ. անհայտ. - 1330 թ.): Նրան Հայաստան, մինչ այդ Ատրպատականի Մարաղա է գործուղել Հռոմի Հովհան XXII պապը (1316 թ.): Բարդուղիմեոս Մարաղացին ծավալում է եռանդուն գիտական և մանկավարժական գործունեություն և անկախ զանազան կարգի հակազդեցական ձեռնարկումներից, հանդիպող խոչընդոտներից՝ որոշակի դեր է խաղում հայ գիտական մտքի «եվրոպականացման» ուղղությամբ¹: Միարարական շարժումն առհասարակ կարևոր նշանակություն ունի հայ մշակույթի զարգացման գործում:

Այս առումով բավականին հատկանշական է Ս.Արևշատյանի հետևյալ ճիշտ դիտողությունը. «Ինչ վերաբերում է արևմտյան աշխարհի հետ գիտական, փիլիսոփայական և ընդհանրապես գաղափարական շփումներին, ապա դրանք մեծ մասամբ ունեցան դրական նշանակություն: Գաղափարական աշխատանքով զբաղվող հայ միարարների համար Եվրոպայի կաթոլիկական գիտությանը դիմելը յուրատեսակ ելք էր ազգային սահմանափակությունից, որը կարելի է անվանել երկրորդ խոշոր քայլը, որը տվել էր փայլուն արդյունք, իրականացվել էր մաշտոցյան և հունաբան դպրոցների գործիչների կողմից 5-7-րդ դդ.: Ճիշտ է, լատիներենից կատարվող թարգմանությունների նշանակությունը 5-7-րդ դդ. թարգմանությունների համեմատությամբ շատ սահմանափակ է հայ մշակույթի զարգացման համար, սակայն այն միանգամայն էական է ֆեոդալիզմի անկման շրջանում հայ գիտական մտքի մշակութային կողմնորոշման և աշխուժացման իմաստով»²:

Բարդուղիմեոս Մարաղացին հեղինակ է ոչ միայն փիլիսոփայական և տրամաբանական մի շարք աշխատությունների, առակաց գրքերի, այլև աստվածաբանական երկերի, որոնք գրված են որոշակի կողմնորոշվածությամբ՝ կաթոլիկական-միարարական սահմանադրական սկզբունքների և հիմնադրույթների առաջադրմամբ և օգտագործմամբ: Ըստ այդմ էլ հեղինակի այդօրինակ երկերը լավագույն և ամբողջական վկայություն են ժամանակի հայ-լատինական մշակութային հարաբերությունների: Մարաղացին իր աշխատություններով ներկայացնում էր ժամանակի եվրոպական միտքը, որը նոր հայեցակետ էր իմացության և գիտելիքի կուտակման ճանապարհին: Հայ մշակույթը նոր ուղղվածություն էր ձեռք բերում, որը, սակայն, չի դառնում միակը, այլ զուգակցվում է հնին՝ ավանդականին:

¹ Տե՛ս *Լ.Խաչիկյան*, Քոնստանդուպոլիսի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը, էջ 22–52: *Ս.Ս.Արևշատյան*, К истории философских школ средневековой Армении (XIV в.), Ереван, 1980.

² *Ս.Ս.Արևշատյան*, նշվ. աշխ., էջ 29:

Բարդ. Մարադացու աշխատություններում¹ դավանաբանական խնդիրները առաջադրվում են որոշակի հաշվենկատությամբ, վերլուծվում են մեծ զգուշավորությամբ և սքոլյալ միտումնավորությամբ: Դա արվում է հատուկ հրահանգի համաձայն՝ չստեղծել բացահայտ հակառակության վիճակ, այլ առաջ բերել գայթակղություն դեպի կաթոլիկական հավատքն ու նվիրաբերումը: Այդպիսով Մարադացին, իբրև Հռոմի ընդհանրական եկեղեցու հաճկատար նվիրակ, ըստ էության իրագործում է իր առաքելությունը, սկիզբ է դնում հայ-լատինական նոր առնչություններին:

Հովհաննես Քոնեցին (1290//92-1347 թթ.) Բարդուղիմեոս Մարադացու հայագգի անմիջական աշակերտն է, նրա գործի ջերմեռանդ պաշտպանն ու հետագա շարունակողը: Նա առաջինն է գայթակղվածներից և առաջնեկը մոլորեցուցիչներից:

Այդուհանդերձ մեծ է Քոնեցու դերը մեզանում միարարական շարժմանը զարկ տալու, հայ գիտական միտքը զարգացնելու տեսակետից: Նա հանդես է գալիս ոչ միայն գործնական քայլերով, այսինքն՝ կազմակերպում հայոց մեջ կաթոլիկական գաղափարաբանությունը տարածելու և արմատավորելու գործը, ձեռնարկում հռոմեադավան թեմի ստեղծմանը, Քոնայի և մերձակա վայրերի հայությանը կաթոլիկական հավատքին դարձնելուն, այլև ծավալում է գիտական լայն գործունեություն, այն է՝ գրում ինքնուրույն երկեր և թարգմանում լատիներեն համապատասխան միտվածություն ունեցող գանազան բնույթի աշխատություններ:

Միանգամայն իրավացի է Լ.Խաչիկյանը, երբ գրում է, որ «...մերժելով Հովհաննես Քոնեցու և նրա կուսակիցների գործունեության շարժառիթներն ու բուն նպատակը (որն իրոք կործանարար էր լինելու հայ ժողովրդի համար), հայ բանասիրական միտքը բավարար ուշադրություն չի դարձրել մշակույթի մարզում նրանց կատարած աշխատանքների վրա, մինչդեռ հայտնի իրողություն է, որ Եվրոպայից Հայաստան առաքված կաթոլիկ քարոզիչներն ու նրանց հայ հետևորդները, գաղափարական իրենց դիրքերի ամրապնդման շահերից ելնելով, ծավալել են նաև գիտական ու գրական աշխույժ գործունեություն, ստեղծել թարգմանական և ինքնուրույն գրականություն, որի մեջ, ծիսական բազմաթիվ գրքերից բացի, կան նաև իմաստասիրական, բնագիտական ու պատմագրական

¹ Նշենք դրանցից մի քանիսը. Յաղագս հնգից ընդհանրից.–ՄՄՁ 2276: Գիրք դժոխաց.–ՄՄՁ 5097, էջ 196ա–213բ, Համառօտ հաւաքումն ի դիալեթիկէն, որ է Տրամաբանութիւն.–ՄՄՁ 69, էջ 266ա–346բ, այլև՝ ՄՄՁ 3902, էջ 190բ–247ա, Յաղագս վեցօրէից գործող արարչութեան.–ՄՄՁ 1656: Գիրք ի վերայ երկուց բնութեանց.– ՄՄՁ 3640, էջ 121–150ա, այլև՝ ՄՄՁ 842, էջ 1ա–142ա,

երկեր: ... Այժմ, սակայն, հասունացել է ժամանակն ըստ արժանվույն գնահատելու այն դերը, որ միջնադարյան Հայաստանի գիտության զարգացման գործում կատարեցին եվրոպական սխոլաստիցիզմի խոշոր ներկայացուցիչների առանձին երկերի 14-րդ դ. թարգմանությունները, ինչպես նաև Հայաստան առաքված լատին քարոզիչների ու հայ գիտնականների համագործակցությամբ, հենց հայերեն լեզվով ստեղծված իմաստասիրական աշխատությունները»¹:

Տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող հարցի առումով խիստ ուշագրավ է Հովհ. Քոնեցու մի շրջաբերական թուղթը՝ «Առ միաբանեալ եղբարսն հայոց»-ը², որտեղ հեղինակն անսքող կերպով առաջ է քաշում Երնջակի միաբարական եկեղեցու ստեղծման «անհրաժեշտությունը», հիմնավորում է իր մոտեցումը «միաբանելու» հարցում, այլև մեղադրում է լուսավորչականներին կոնկրետ «մոլորությունների» մեջ³:

14-րդ դ. երկրորդ կեսին Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած անցքերին ժամանակագրորեն անդրադառնում է Հովհաննես Դարդեղը (ծն. և մահ. թթ. անհայտ)⁴: Նրա աշխատության մեջ բուն ուշադրության առարկան են կիլիկյան թագավորների քաղաքական պատկերացումների և առհասարակ վերնախավի հասարակական-կրոնական կողմնորոշվածության հարցերը: Այդուհանդերձ, նրանում որոշ չափով տեղ է հատկացված հայ-եվրոպական հարաբերություններին: Վերջիններս տեղ-տեղ լույս են սփռում մեզ հետաքրքրող հարցերի վրա: Այս առումով հիշյալ ժամանակագրական երկը բավականին ուշագրավ է:

14-րդ դ. երրորդ քառորդին և 15-րդ դ. առաջին կեսին մեզանում տեղի ունեցած քաղաքական, դավանաբանական անցքերի և միջոցառումների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Թովմա Մեծոփեցին (1378-1446 թթ.): Մեծոփեցու հասարակական և գիտական գործունեությունը մեզանում բավականին ուսումնասիրված է և գրեթե ըստ արժանվույն գնահատված⁵: Նրա կարևորագույն աշխատություններում¹ կա ուղղակիորեն և

Գիրք յաղագս ծննդեան Տեառն մերոյ.– ՄՄՁ 2184, էջ 255ա–267ա, այլև՝ ՄՄՁ 3654, էջ 268ա–278բ և այլն:

¹ Տե՛ս *Լ.Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 8–9:

² Տե՛ս Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, շարադրեալ ի Կղեմէս վարդապետէ, հ. 1, Հռոմ, 1650, էջ 513–521:

³ Հմմտ. *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, էջ 40:

⁴ Յովհաննոս Դարդեղի Ժամանակագրութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1891: Հ.Մանանդյանը, օրինակ, ևս գտնում է, որ սույն երկը կարևոր է հիշյալ շրջանի պատմական անցքերի ճշգրտման առումով: – *Հ.Մանանդյան*, Երկեր., հ. Գ, էջ 431:

⁵ Տե՛ս, օրինակ, *Գ.Յովսէփեան*, Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով), Վաղարշապատ, 1814, *Ա.Ս.Մաթևոսյան*, Գրիգոր Տաթևացին և Մեծոփավանքի դպրոցի հիմնադրումը.– «Պատմա–բանասիրական հանդես», 1969, էջ 146–154:

մեծ մասամբ անուղղակի արձագանքն այդ շրջանի այն ձգտումների ու մղումների, որոնք նպատակ ունեին նպաստելու հայ իրականության նոր խնդիրների հուսալի լուծմանն ու հետագա ինքնապահովմանը, լայն իմաստով՝ առաջընթացին: Այս տեսակետից համեմատաբար ուշագրավ է Մեծոփեցու աշխատություններից առաջինը, որում անմիջական արտացոլումն ենք գտնում ժամանակի հայ-լատինական առնչությունների՝ կապված լատին միարարների ծավալած գործունեության, ինչպես նաև այլևայլ վայրեր հաստատվելու հետ: Այստեղ նկատի է առնվում հատկապես Քոնստանտինոպոլի միարարների գործունեությունը²:

Իսկ բուն Հայաստանի և կիլիկյան հայոց միջև այդ շրջանում ծագած անհաշտության, կաթողիկոսական առաջնորդության, ինչպես նաև կաթողիկոսության տեղաշարժի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ ենք գտնում Մեծոփեցու երկերից երկրորդում: Այդտեղ անուղղակիորեն ակնարկվում է ժամանակի տիրող միջավայրի և ընդհանուր կացության մասին: Հետաքրքիր է, որ այդ երկում բերվում են լայն առումով հասարակական-քաղաքական, բուն իմաստով կրոնական-եկեղեցական բարեկեցությանը խոչընդոտող 12 պատճառներ, որոնք էլ ստիպում են կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սսից Էջմիածին տեղափոխելու³: Դրանք դավանաբանական և առհասարակ ներքին անհամերաշխությունից ծագած պատճառներ են, որոնք որոշակիորեն առնչվում են հայ-լատինական հարաբերություններին, նույն կերպ պայմանավորված են այդ հարաբերություններով:

Մեզ հետաքրքրող հարցի առումով ուշագրավ է Մխիթար Ապարաներցու (մոտ. 1360-1410 թթ.) «Գիրք ուղղափառաց» աշխատությունը⁴: Մինչև այժմ այդ երկը մեզանում բացակայում էր, և բանասերները նրա մասին գաղափար էին կազմում առանձին հատվածների հիման վրա⁵: Այնինչ երկն այսօր ձեռագիր-ժապավեն վիճակով առկա է մեզանում: Ապարաներցու սույն աշխատությունը բավականին ծավալուն է, գրված է կաթողիկական դավանաբանության ջատագովության ոգով, ընդգրկում է համապատասխան հարցերի և դրանց լուծմանը օժանդակող ժամանակի սխոլաստիկական գիտելիքների լայն

¹ Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա վարդապետի Մեծոփեցոյ, ի լոյս ընծայեաց Կարապետ Շահնազարեանց, Փարիզ, 1860, Մեծոփեցու Յիշատակարանը, հրատ. Կարապետ Կոստանեանց, Թիֆլիզ, 1892: Այլ՝ Յաղագս իմաստափրութեան անվարժ տղայոց ուսման, արարեալ Թովմա վարժապետի.– ՄՄՁ 7117, էջ 106ա–152ա:

² Տե՛ս Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, էջ 37–40:

³ Տե՛ս Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 55–61:

⁴ Գիրք ուղղափառաց ըստ կաթօլիկէ սուրբ եկեղեցոյ, եւ ընդդէմ հերձուածողաց.– ՎՄՁ 1663 նույնը՝ ՄՄՁ, ԴԺ 1132, էջ 1ա–368բ:

⁵ Տե՛ս Գ.Այիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 550–553: *M.A. v.d. Oudenrijn*, *Linguae haicanae scriptores*, Bern, 1960, էջ 215–228: Հմմտ. *Լ.Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 22:

շրջանակ, որտեղ այս կամ այն խնդրի քննությունը հաճախ տրվում է ոչ թե ինքնուրույնաբար, այլ բանաքաղության սկզբունքով:

Այսպես, օրինակ, քերականական գիտելիքների մեկնաբանությանը նվիրված հատվածից (էջ 47-53) պարզորոշ երևում է, որ հեղինակը խստորեն հետևում է Քոնեցու քերականական սկզբունքներին և հաճախ բանաքաղումներ անում նրանից: Այս աշխատության մեջ բավականին մեծ տեղ է հատկացված դավանաբանական հարցերին, և դա բնական է, որովհետև գրված է հենց այդ հարցերին ինչ-որ չափով լուծում տալու նպատակով: Հիշյալ հարցերի վերլուծությանը վերաբերող շարադրանքի մանրամասն ուսումնասիրությունից պարզվում է, թե որքան մեծ չափերի է հասել կրոնական երկվությունը հայոց մեջ, և թե որքան կարևոր էր կողմերից որոշակիորեն մեկին կամ մյուսին հարելը: Մխիթար Ապարանեցու սույն աշխատությունը մեզ է հասել հեղինակային գրչագրությամբ, ուստի միանգամայն վստահելի և գրեթե անփոխարինելի աղբյուր է (ի թիվս այլ հարցերի) հայ-լատինական հարաբերությունների՝ ըստ ամենայնի պարզաբանման ու գնահատության տեսակետից:

Այնուհետև, հետագայում արտաքին աննպաստ պայմանների հետևանքով ոչ միայն լատինաբանությանը, այլև առհասարակ հայ մտավոր կյանքին վերաբերող գրական հուշարձանների ստեղծումը դառնում է գրեթե անհնարին: Աշխարհիկ և հոգևոր կյանքն աննախադեպ անկում է ապրում, որը ոչ դրական ձևով անդրադառնում է նաև այս բնագավառի վրա:

Այդուհանդերձ, ինչ-որ կերպ շարունակվում են գրվել տարբեր կարգի ձեռագիր աշխատանքներ, որոնցում այս կամ այն չափով կա նաև լատինաբանությանը վերաբերող հարցերի քննարկում, հատկապես եկեղեցական-դավանաբանական խնդիրների, վերջիններիս մեկնաբանումների կամ լուծումների տեսակետից: Իսկ ինչ վերաբերում է տպագիր աշխատանքներին, ապա մեկընդմիջտ կարելի է հավաստել, որ այդ կարգի աշխատանքներ հետագայում, մինչև 17-րդ դ. սկիզբը կամ չեն գրվում, կամ կարող են գրված լինել հազվադեպ, առայժմ ոչ հայտնի :

Այսպես, 16-րդ դ. 10-ական թթ. մինչև դարի վերջն ընկած ժամանակում լույս է տեսել 17 անուն գիրք, որոնցից 5-ը՝ Հակոբ Մեղապարտի, մնացած մեծ մասը՝ Աբգար Գպրի և Հովհ. Տերզնցու տպարաններում, ուստի մնում է մեկերկուսը, որ այս կամ այն չափով կարող է առնչվել միարարական շարժման գործիչների անվանը, այսինքն՝ տեղիք տրված լինի լատինաբանությանը՝ ոչ միայն ինքնին, այլև հատկապես լատինաբան հայերենի առումով: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից ինչ-որ չափով ուշադրության կարող են

առնվել «Տօմար Գրիգորեան» (Հռով, 1584), «Դաւանութիւն ուղղափառութեան» (ն.տ., 1584) և «Դաւանութիւն հաւատոյ» (ն.տ., 1596) գրքերը, որոնք թարգմանություն կամ երկու լեզվով տպագրված աշխատանքներ են: Սրանցից վերջին երկուսն առարկայական պատճառով անմատչելի է եղել մեզ համար, իսկ առաջինը ծառայել է նաև իբրև լեզվական տվյալներ պարունակող հուշարձան:

Ուստի այն տեսակետը, թե բուն լատինաբանությունը երևան է գալիս 17-րդ դ., ճիշտ է միայն այն նկատառումով, որ 14-րդ դ. սկիզբ առած երևույթը թուլանում և գրեթե դադարում է գոյություն ունենալուց՝ ընդհանուր մտավոր կյանքի անբարենպաստ պայմանների հետևանքով, վերելք է ապրում հետագայում՝ համեմատաբար տանելի կամ նպաստավոր պայմաններում: Արտաքին հանգամանքներով պայմանավորված՝ մտավոր կյանքում տեղի ունեցած վայրիվերումներն անդրադառնում են նաև լատինաբանության վրա, լատինաբան հայերենի դեպքում ևս դրանք նկատելի են:

17-րդ դ. իրավամբ համարվում է հայ մշակույթի նոր վերելքի սկզբնական շրջանը: Դա լիովին վերաբերում է նաև մեզանում կաթոլիկական գիտական և մշակույթային շարժմանը: Այս դարում փոխվում և վերանորոգվում են ոչ միայն շարժման ձևերն ու եղանակները, գործունեության վայրերն ու հաստատությունները, այլև սրվում են նրանց դեմ ծավալվող պայքարի ամեն կարգի դրսևորումները: Առաջ են գալիս հակամիարարական շարժման բազմաթիվ կենտրոններ, որոնցից առավել աչքի է ընկնում Նոր Ջուղան: «Պատահական չէ... որ 17-րդ դ. հենց Նոր Ջուղան է դառնում հակամիարարական պայքարի գաղափարական դրոշակակիրը, տալով այնպիսի պարագլուխներ, ինչպիսիք են Սիմեոն Ջուղայեցին, Ալեքսանդր Ջուղայեցին, Հովհաննես Ջուղայեցին և ուրիշներ»¹:

Սիմեոն Ջուղայեցին (16-րդ դ. վերջ – 1657 թ.) հակառակորդ է լատին միարարական շարժմանը, վերջինիս կրոնական-դավանաբանական գործելակերպին: Դա նկատելի է մեծանուն գործչի տարբեր կարգի աշխատություններից առհասարակ, սակայն ցայտուն կերպով արտահայտվում է մի նամակում², որն ինչպես գիտենք, ուղղված է օտար միջավայրում և խորթ դավանանքով մոլորաբար գործող Ոսկան Երևանցուն:

¹ Հ.Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 46:

² Տե՛ս Ոսկան վարդապետի Նամականին, հրատարակեց Պօղոս Անանեան. «Բազմավեպ», 1967, էջ 131-132:

17-րդ դ. վերջին և 18-րդ դ. սկզբներին ծավալված հակակաթոլիկական պայքարի ջերմ մարտիկներից է Ադեքսանդր Ջուդայեցին (ծն. թ. անհայտ -1714 թ.): Նա հեղինակ է բազում աշխատությունների, որոնցից հատկապես երկուսը¹, տվյալ դեպքում, մեր ուշադրության առարկան է: Գրանցից առաջինը նվիրված է հայ-լատինական կրոնական հարաբերությունների յուրովի մեկնաբանմանը: Գրքի 1-ին տպագրության Առաջաբանում հեղինակը նշում է, որ այն գրված է «ըստ կերպի հակաճառութեան ընդդէմ ազգին ֆռանկաց»²: Այստեղ խիստ ուշագրավ է վերջին գլուխը (2-րդ տպ., էջ 81-97), որտեղ փաստորեն մերժվում է հռոմեադավանության գրեթե ամեն մի դրույթ, և կրոնական ամեն կարգի խնդիր բացատրվում է ուղղափառության դիրքերից: Ջուդայեցու Թուղթը ուղղված է Հռոմի պապին՝ «Հայաստանում լատին միսիոներների գործունեությունը գապելու խնդրանքով»³: Այստղ ևս մեղմորեն հիշեցվում և խոհեմաբար արծարծվում են հայ լուսավորչադավան եկեղեցու հիմնադրությունները, դրանք պաշտպանվում ըստ էության, այնուհետև ըստ այդմ ակնկալվում է արդարամիտ վերաբերմունք: Թղթի վերջում հայց կա Վենետիկի միջավայրում հայոց եկեղեցի շնորհելու վերաբերյալ (ինչ խոսք՝ լուսավորչական ուղղվածությամբ)⁴:

Հովհաննես (Մրբուզ) Ջուդայեցին (1643-1715 թթ.) ևս հանդես է գալիս իբրև ժամանակի ջերմեռանդ հակակաթոլիկ գործիչ: Իր աշխատություններից մեկում⁵ անդրադառնում է դավանաբանական խնդիրներին՝ ելնելով իր ժամանակի կրոնական-սոցիալական պահանջներից: Այդ աշխատությունը գրվել է ի պաշտպանություն ուղղափառ դավանության, ընդդէմ հռոմեադավան ընդհանրական ձգտումների: Հետաքրքիր է այն փաստը, որ հեղինակը առաջաբանում նշում է, որ նման կարգի գրքերը մեզանում ձեռագիր էին մնացել տպարանի չգոյության պայմաններում, ուզեցել են «յղել տալ տպել յերկիրն ֆռանկաց» (էջ Ե): Աշխատությունը գրված է հարց ու պատասխանի

¹ Գիրք որ կոչի ատենական վեճաբանութիւն, արարեալ Ալեքսանդրու Ջուդայեցույ, Կ.Պոլիս, 1783 (1-ին տպ.՝ 1687. մեզանում՝ չիք). Թուղթ առ Կղեմենտ ԺԱ պապ. «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 539–552:

² Տե՛ս Ա.Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն, հ. Ա, էջ 107: 1-ին և 2-րդ տպագրությունները, ինչպես երևում է Ղազիկյանի նշած հատվածից, ունեն լեզվական ակնհայտ տարբերություններ. 1-ին տպ. մի շարք լատին ձևեր 2-րդ տպ. մեջ հաղթահարված են:

³ Հ.Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 1, Երևան, 1959, էջ 588:

⁴ Ավելորդ չէ նշել, որ Կղեմենտ ԺԱ պապն իր պատասխան քղթում հետևյալ բավարարումն է տալիս. «...անոնք (միսիոներները.– Վ.Հ.) լաւ գիտեն, թէ մեր իղձն է, որ կաթողիկէ կրօնի պաշտամունքն այն տեղերու մէջ աճի առանց քո արժանատրութեան վնասելու» («Հանդէս ամսօրեայ», էջ 555):

⁵ Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան, Նոր Ջուդա, 1688 (հեղինակի անունը էջ Ժ-ում՝ «արարեալ ի Մրբուզէ. Յոհաննէս վարդապետէ Ջուդայեցույ»): Կարծում ենք, որ այս երկի 2-րդ (Կ.Պոլիս, 1713, Աստվածատուր Գպրի տպարան) և 3-րդ (Կ.Պոլիս, 1713, Գրիգոր Մարգվանեցու տպարան) տպագրությունները պիտի մեկը լինի, քանի որ այդ

(կատեխիզիսի) ձևով, ունի նորմատիվ բնույթ, հետապնդում է լատինամետ տարրերին մոլորությունից զերծ պահելու, այլև հետ՝ դեպի առաքելական եկեղեցի բերելու նպատակ:

17-րդ դ. միարարական շարժման նվիրյալ գործիչներից է Պողոս Պիրոմալին (Ծն. և մահ. թթ. անհայտ): Նա եղել է ժամանակի ուսյալ դոմինիկյան վանականներից, գործել է նաև Էջմիածնում, որտեղ հրավիրված էր ձեռնամուխ լինելու Աստվածաշնչի վերակազման գործին՝ ըստ լատինական վուլգատայի: Պիրոմալին կրթել է հայ մտավորականների, որոնք հետագայում ուրույն դեր են խաղում հայ մշակույթի առաջընթացի մեջ: Նա իրավամբ համարվում է կաթոլիկ չափավոր նվիրյալների հոսանքի ներկայացուցիչ: Հեղինակ է դավանաբանական մի աշխատության¹, որում մեղմ ու հետևողական վերլուծությամբ մեկնաբանում է քրիստոնեական դոգմատիկայի էությունը՝ ելնելով նոր ժամանակների և հատկապես Հռոմի եկեղեցուն դուր եկող միտումնավորությունից: Մեղմությունն այն աստիճանի է հասնում, որ թվում է, թե աշխատությունը գրված է հայոց կրոնական բուն դավանանքի ջատագովումով, սակայն նրանում գրեթե աննկատ շրջահայեցությամբ, ինքնակա կերպով անցկացվում է հայերին կաթոլիկ դավանանքի հոսանուտը մղելու գիծը: Կարելի է կարծել, որ սա է եղել հեղինակի բուն նպատակը:

Ոսկան Երևանցին (1614-1674 թթ.) հարել է միարարական շարժմանը, եղել է Հռոմի պապականությանն անդամագրվածներից, ապրել է բուռն և հակառակյալ կյանք: Այդ իմանում ենք նրա մի քանի նամակներից և համառոտ կենսագրականից²: Նամակներից երևում է, որ Ոսկանը ձգտում է Հռոմի օժանդակականությանը և դրան իբրև հատուցում պատրաստ է նվիրաբերելու իր հավատարմությունը նրան: Ըստ որում նկատելի է նեղացածություն մայր եկեղեցուց: Այս ամենը ներքին և արտաքին գործոններ են, որոնք այս կամ այն չափով նպաստել, և ընդհակառակն՝ հակոտնյա են եղել մշակութային, ավելի կոնկրետ՝ գրադարասրակչական գործունեություն ծավալելու ճանապարհին: Ոսկանն ապրել և գործել է համոզմունքների ու հնարավորությունների հարափոփոխ պայմաններում:

Ժամանակ այդ երկու տպագրիչները գործակցում էին միմյանց (ՀՀԳՄՑ-ում՝ էջ 42, 74, դիտվում է տարբեր տպագրություն):

¹ Պողոսի վարդապետի և արքեպիսկոպոսի Նախիջևանցոյ առ Շահաբաս պարսից քազաուրն Պատասխանի յաղագս հաւատոյ.– ՄՄՁ 672, էջ 5ա–92ա:

² Ոսկան վարդապետի նամականին, հրատարակեց Պողոս Անանեան.– «Բազմավէպ», 1966, 1-3, էջ 293-308: Գիրք պատմութեանց, շարադրեալ Առաքելոյ Դավիթժացոյ, Ամստերդամ, 1669, էջ 344 – 345: Տե՛ս նաև Հ. Ն. Տէր-Ներսիսեան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռնումները, «Բազմավէպ», 1966, 1-3, էջ 310-321: :

Ոսկանի նամակներում (թվով՝ ինը, որից հինգը գրված է հայերենով՝ գրաբարով) նկատելի են հետևյալ լատիներենի օրինակով կազմված ձևերը¹. *պարփակեալ* (էջ 293), *ներտրամադրութիւն* (էջ 293, 296), *նարդեանս* (էջ 297), *ներ պանդխտութիւն* (էջ 297), ինչպես նաև մի շարք օտարաբան՝ լատիներեն և իտալերեն ձևերի գործածություն. *պատրի* (սեռ. հոլով լատ. pater «հայր» բառի. էջ 298), այլև *սուփլիքայ*, *փալթ*, *կրացի փալթին* («վարձի շնորհում»), *փալթաթօր* («վարձակալ»), *իլլութրիճայ* («խորհրդատեր. պատարագամատույց», էջ 300) և այլն: Այս կարգի բազմաթիվ ձևեր կարելի է հանդիպել ոչ միայն Ոսկանի, այլև այդ շրջանի հեղինակների գրեթե բոլոր երկերում:

Հայազգի մոլեռանդ կաթոլիկ գործիչներից է Վարդան Հունանյանը (1634-1715 թթ.), հեղինակ միարարական ոգով ու նպատակով գրված աշխատությունների², գործնականում հայերի մի զգալի զանգվածին կաթոլիկ հռչակող:

Հատկանշական է նրա «Յաղագս կարգաց»-ը: Հունանյանը գտնում է, որ դավանանքի դոգմաները խստորեն յուրացնելն ու դրանց հետևելը յուրաքանչյուր հոգևորականի պարտքն է (էջ 35բ): Ելնելով ընդհանրական եկեղեցու վաղնջական և նոր պայմաններին հարմարեցված դոգմաներից՝ Հունանյանն իր հիշյալ երկում հանդես է գալիս որպես Հռոմի պապականության գաղափարաբանության պաշտպան, ըստ այդմ քննության առնում մարդու գոյության և կենսագործունեության, կազմաբանության հետ կապված բազում խնդիրներ: Նման վերլուծությունն, անշուշտ, դիտումնավոր է, կիրառված հայության նկատմամբ, ի սպաս ընդհանրական եկեղեցու գաղափարների արմատավորման: Դա նորություն չէ, և մեզանում մման հարցեր միշտ էլ արժարժվել են, եթե ոչ նույնպիսի հայցակետից: Այդ բանում Հունանյանն անգիտություն է հանդես բերում և տեղին է համարում դրանց անդրադառնալ կրկին՝ հայ-լատինական նոր հարաբերությունների մեջ:

Հովհաննես (Հոլով) Կոստանդուպոլսեցին (1635-1691 թթ.) մեզ հետաքրքրող հարցերը շոշափում է իր գրքերից երկուսում³:

«Հայելի ճշմարտութեան» գիրքը, լինելով բավականին ծավալուն և ազգի շահերին ծառայելու նպատակով գրված, հետապնդում է ուղղափառ եկեղեցու

¹ Տե՛ս, «Բազմավեպ» 1966, էջ 293-302:

² Դաստիարակութիւն եկեղեցականաց.– ՄՄՁ 6562: Կերպ խոստովանութեան.– ՄՄՁ 5808, էջ 62բ–73բ. Յաղագս կարգաց և աստիճանաց եկեղեցոյ և եկեղեցականաց.– ՄՄՁ 6562, էջ 35ա–41ա, այլև՝ ՄՄՁ 5808, էջ 1ա–13բ. Վասն պէս պէս իրաց և գիտութեան.– ՄՄՁ 5808, էջ 14ա–61բ:

³ Տե՛ս Հայելի ճշմարտութեան, Վենետիկ, 1680. Պատասխանութիւնք թղթոց, Վենետիկ, 1687: Հմմտ. ՄՄՁ 6562, էջ 41ա–42բ: Այլև՝ Բարոզ.– ՄՄՁ 6562, էջ 42բ–45բ, 49ա–50բ, 60ա–62բ:

նկատմամբ հայության հավատակից լինելու նպատակ: Գրքի քսանութ գլուխներում առանձին-առանձին հեղինակն անդրադառնում է հայոց և հռոմեական եկեղեցիների էական տարբերություններին, ընդ որում որոշակի գերապատվություն կա հռոմեական եկեղեցու «կանոնակարգության» նկատմամբ, և դա ժամանակի տեսանկյունից թերևս բնական էր, մանավանդ որ հեղինակն իր հավատքով հեռացած է եղել էջմիածնական եկեղեցուց: Անկախ դավանաբանական տարբերությունից և միտումնավորությունից՝ Հովհաննես Հովվի սույն գիրքը նմուշ է ժամանակի լատինաբան հայերենի. նրանում տեղ են գտել թե՛ բառապաշարի և թե՛ ձևաբանական մակարդակի որոշակի փաստեր (օրինակ՝ *գիրգ* «գիրք», *ուշիմագունեղ*, *գրգոյս* «այս գրքի» և այլն):

Հեղինակի մյուս՝ «Պատասխանատրութիւնք» երկն ունի համեմատաբար փոքր ծավալ, սակայն շեշտված բովանդակություն: Այն դավանաբանական ընդդիմախոսություն է՝ գրված ի հակառակություն «թղթոյ ուրումն ընդիմադրականի գրեցելոյ յեղբարց ոմանց հայկագունեաց»: Նրանում Ս. Գրքից քաղված «վկայությունների» հիման վրա խոսվում է դավանանքի առումով Քրիստոսի մեջ տեսանելի երկու կամքի և երկու տեսակ ներգործության վերաբերյալ, բերվում է մշտական հավաստություն՝ դավանանքի միակողմանիության տեսանկյունից:

Հովհաննես Հովվի աշխատանքները ժամանակի հոգևոր կողմնորոշումների, եկեղեցական տարածությունների պատմության վերաբերյալ պատկերացումների առումով կարևոր են: Հայ գրահրատարակչական գործին սատարող, հայտնի ճարտասան և քերական կաթոլիկ հայ գիտնականն այդ աշխատանքներում հանդես է գալիս որպես քրիստոնեական աստվածաբանության ներհուն գիտակ, իսկ նրա տարատեսակների հարցում՝ Հռոմի եկեղեցուն նվիրյալ:

Կաթոլիկական պրոպագանդայի քննադատության առումով հիշարժան է նաև Սիմեոն Լեհացու (1584-1637 թթ.) մի երկը (Ղ.Ալիշանի հորջորջումով)՝ «Վիպասանութիւն Նիկոլական» պոեմը¹: Այն աչքի է ընկնում գաղափարական սուր ուղղվածությամբ: Հեղինակը ծաղրում և պարսավում է լեհահայ գաղութում կաթոլիկական այն ձեռնարկումները, որոնք ուղղված էին բռնի հավատափոխմանը, և որն իրականացվում էր հայազգի ընչաքաղց և փառատենչ եկեղեցականների (հատկապես մոլեռանդ գործիչ, ստահող առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի) կողմից: Սույն չափածո երկը որոշակի պատկերացում է տալիս բուն

¹ Տե՛ս Ղ.Ալիշան, Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետիկ, 1896, էջ 202–214:

կրոնից բռնի հեռացված հայաշատ գաղթօջախի ներքին կացության մասին: Նման վիճակը, ինչպես գիտենք, հանգեցնում է զանգվածային ուժացման: Պոենում արտահայտված է հեղինակի հակակրանքը միարարական շարժման հետևանքով առաջացած բռնությունների և անլուր բանադրանքի հանդեպ: Այսպիսով՝ Ս.Լեհացու երկը յուրովսանն նպաստում է մեկ առանձին տարածքում երևան եկած հայ-լատինական կոնկրետ առնչությունների մեկնաբանմանը:

Լեհահայոց բռնի միությանն անդրադառնում է նաև Առաքել Գավրիժեցին (ծն. թ. անհայտ - 1670 թ.) իր «Գիրք պատմութեանց»-ի ԻԸ գլխում («Պատմութիւն նեղութեանց եւ վշտաց, գոր կրեցին հայ ազգաւ քրիստոնէայքն, որք բնակեալք են ի քաղաքն Իլով»)՝ Գավրիժեցին հաղորդում է անփոխարինելի տեղեկություններ, կատարում տվյալ երևույթի սթափ վերլուծություն: Ելնելով հայոց լուսավորչական եկեղեցու և հայ միասնության ջատագովության դիրքերից՝ Գավրիժեցին միանգամայն դեմ է կանգնում միարարական շարժմանն առհասարակ և բռնի կաթողիկացմանը՝ մասնավորապես: Գավրիժեցու հաղորդածը հետագա հայ բանասիրության կողմից բազմիցս արժանացել է լուրջ ուշադրության, օգտագործվել այս կամ այն առիթով:

Հայ-լատինական հարաբերությունների արժարժման տեսակետից բավականին հետաքրքիր է Կղեմես Գալանոսի (1610 – 1666 թթ.) ընդարձակ աշխատությունը²: Այն գրված է լատիներեն և հայերեն, տպագրված՝ զուգադիր: Հեղինակը փաստերի հայեցողական քննությամբ փորձում է վերանայել հայոց դավանաբանական ուղղվածությունն այն հաշվով, որ հնարավոր լինի արդարացնել միարարական շարժումը հայերի շրջանում: Այդ նպատակով նա հայոց եկեղեցուն վերագրում է ոչ ճիշտ ուղղվածություն: Միսալ մոտեցումը դառնում է միտումնավորություն: Այդ նպատակին հասնելու համար Գալանոսը օգտագործում է թե՛ հայ, թե՛ օտար բազմաթիվ աղբյուրների տարաբնույթ տվյալները: Դրանք շատ կարևոր են համարվում հատկապես այն դեպքերում, երբ արտահայտվում է ներքին տարաձայնությունը տարբեր ժամանակներում ներկայացնելու մղում :

Գալանոսը մեծ ուշադրություն է դարձնում միարարական շարժմանը, որը և լուսաբանվում ու գնահատվում է ըստ ամենայնի: Այսպես, գրքի հ. II-ում (էջ 24ա-26ա, այլև՝ 171-174) մանրամասն խոսում է Հովհ.Քոնեցու առաքելության մասին,

¹ Գիրք պատմութեանց Առաքելի Գավրիժեցույ, աշխատասիրությամբ Լ.Ա.Խանլարյանի, Երևան, 1990, էջ 293–311:

² Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, շարադրեալ ի Կղեմէս վարդապետէ, հ. 1, Հոռմ, 1650, հ. 2, մաս 1, Հոռմ, 1658, հ. 2, մաս 2, Հոռմ, 1661:

մեծ դրվատանքով է մոտենում նրա անձին, գործունեությանը: Այդ նույնը վերաբերում է Բարդ. Մարադացու պարագային: Միարարական շարժման նկատմամբ բացահայտ համակրանքի պայմաններում Գալանոսն անդրադառնում է նաև հայ մշակույթի և եկեղեցու ուղղադավան գործիչներին, գաղափարական տարբեր, այլ կերպ ասած՝ հակադիր հոսանքների տրամադրություններին:

Կղ.Գալանոսի աշխատությունը կարևոր աղբյուր է եղել հետագա հեղինակների համար: Նրանից բավականաչափ նյութեր ու փաստեր են քաղել ոչ միայն միարարաները, այլև ուղղափառ հայ եկեղեցական գործիչները, առհասարակ հայագիտության տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ: Այդ աշխատությունն այսօր ունի սուկ պատմական կարևորություն:

Մեզ հատաքրքրող հարցերին մասնակիորեն անդրադառնում է նաև Հակոբ Վիլյոտն (ծն. և մահ. թթ. անհայտ) իր աշխատություններից երեքում¹: Գրանք ըստ էության գրված են դարձյալ դավանաբանական ուղղվածությամբ: Հեղինակն ամենայն ջանասիրությամբ գործադրում է համոզման ու «շտկման» սկզբունքը: Այսպես, առաջին գրքում Վիլյոտն ընթերցողին հորդորում է իր գրածը միանգամից չանտեսել, այլ ջերմեռանդաբար ընթերցել և վերլուծել, իսկ ընթերցածի շուրջը խորհել, որով միայն, ըստ նրա, կարող է ընթանալ ընթերցողի մտավոր ուղին դեպի դավանանքի ճշմարտությունը: Երկրորդ աշխատության մեջ հեղինակը յուրովի, միտումնավոր մեկնաբանությամբ ներկայացնում է հայոց հոգևոր և քաղաքական գործիչների ցանկերը սկզբից մինչև իր ժամանակը: Այստեղ նա նպատակ ունի անփոփ ներկայացնելու հայոց մեջ առաջատար դասի ներկայացուցիչների խաղացած դերն ու այդ դերի կարևորությունը ընթացիկ ժամանակի համար: Նույնպիսի տրամադրվածությամբ է ստեղծված նաև երրորդ աշխատությունը:

Թերևս կարելի է ի մի բերել, որ 17-րդ դ. նոր վերելքով առաջ տարվող միարարական շարժումն ուներ խիստ կարիք այսպիսի ամփոփիչ աշխատությունների՝ այդ ուղղությամբ ծրագրային նոր գործունեություն ծավալելու համար:

Թե՛ Կղ.Գալանոսի, թե՛ Հակ.Վիլյոտի այդօրինակ աշխատություններն տվյալ շրջանում խաղացել են պառակտողական դեր, իսկ մշակութային առումով ունեցել են միակողմանի նշանակություն: Այսօր դրանք չեն կորցրել իրենց արժեքը

¹ Մեկնություն դաւանութեան ուղղափառի հաւատոյ, շարադրեալ ի Յակոբ վարդապետէ, Վենետիկ, 1711, Պատմագրութիւն կաթողիկոսաց և թագաւորաց հայոց, շարադրեցեալ ի Յակոբ

սովյալ շրջանի հայերենի, մանավանդ նրա լատինաբան տարբերակի պատմության ուսումնասիրության համար, ուստի կարող են դառնալ նաև ավելի լայն քննության առարկա, որն անշուշտ ապագայի գործ է:

Հայոց լեզվի պատմության կարևորագույն աղբյուր են նաև հիշյալ դարերում երևան եկած հիշատակարաններն ու ժամանակագրությունները, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ոչ միայն ժամանակի իրադարձությունները, այլև լեզվական վիճակը: Եվ մեզ հետաքրքրող հարցի պարզաբանման նպատակով մանրամասն քննության ենք առել նաև այդ կարգի գրական հուշարձանները¹:

Այսպես, անցյալ դարի երկրորդ կեսին լույս տեսած «Մանր ժամանակագրությունների» հատորներում շատ սակավ, կարելի է ասել աննշան տեղեկություններ կան, որքան վերաբերում են լատինաբանությանը, բնականաբար՝ լատինաբան հայերենին: Միայն գրքի 2-րդ հատորում հանդիպում ենք Ներսես Պալիենցի (իմա՝ Պալիանենցի – Վ. Հ.) «ժամանակագրական հատվածները (XIV դ.)» (էջ 176–189) և «Հայոց թագավորների և իշխանների կարգը (XIV դ.)» (էջ 196–206) աշխատանքներին, որոնք այս կամ այն կերպ առնչվում են լատին քարոզչությանը, իսկ լեզվական առումով գրեթե զերծ են նման «արհեստականությունից»: Կան ժամանակի խոսակցական լեզվի բնորոշ ձևեր, ինչպես նաև որոշ բառեր՝ ինքնուրույն կազմություն կամ փոխառություն, որոնք ինչ-ինչ վերապահումով կարող է առնչվել լատինաբանությանը: Դրանք են՝ *սրբաքերել* (հմմտ. ՄՄՁ, 2038-ում՝ *սրբագրել*) (էջ 173), *լիկատ* (իմա՝ «առաքեաց *լիկատս* և նուիրակս»․ լատ. *legatus* «ղեսպանորդ, օգնական, տեղապահ»․ էջ 176):

Գրեթե նույնն ենք նկատում ձեռագիր հիշատակարանների դեպքում: Լատինաբան ձևեր չեն գործածվում հատկապես 14–15-րդ դդ. հիշատակարաններում, որոնք լեզվական առումով նաև բարեխիղճ և բանասիրորեն ճշգրիտ ներկայացված են հիշյալ սովյալ հատորներում: Եթե հանդիպում է նման բնույթի մեկ-երկու հիշատակարան, ապա դրանցում ևս չկան լատինաբան հայերենին յուրահատուկ միավորներ:

Այսպես, ձեռագիր հիշատակարաններից ընդամենը մի քանիսն են, որ այս կամ այն չափով առնչվում են լատին քարոզչությանը՝ թե՛ բովանդակային և թե՛ ինչ-որ տեղ նաև լեզվական առումով: Դրանցից են, օրինակ, Հիշատակարան 273-

վարդապետ, Վենետիկ, 1713, Մեկնիչ Սրբոյ աւետարանին, շարադրեալ ի Յակոբ վարդապետ, Վենետիկ, 1714:

1 Տես Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. 1–2, Երևան, 1951–1956: ԺԳ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան,

ը («Քարոզգիրք Բարթուղիմեոսի»), 365-ը («Գիրք եօթն առաքինութեանց Պետրոսի Արագոնացոյ»), 390-ը («Բրեվիար. Ժամագիրք»), 422-ը («Մեկնութիւն իմաստասիրական գրոց Պետրոսի Արագոնացոյ»), 430-ը («Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան Ալբերտոսի») և այլն, որոնց լեզուն ոչ մի կերպ չի կարելի դիտել լատինաբան, կամ վերջինիս ազդեցությունն այս կամ այն չափով կրած: Այդուհանդերձ նկատում ենք շատ քիչ, գրեթե աննշան թվով լատինաբան ձևեր, որոնք ավելի շուտ պետք է համարել վրիպում կամ ընդհանուր անուշադրության արդյունք, քան լեզվական այդ տարբերակի «միջամտյալ» կամ միտումնային դրսևորում: Օրինակ՝ թվարկած հիշատակարաններից 4-րդում («Մեկնութիւն իմաստասիրական գրոց Պետրոսի Արագոնացոյ») հանդիպում ենք *գիրք* բառի եզակի թվով ձևի՝ *գիրգ*, որն ակնհայտ լատինաբանություն է. «...Որոտնեցին, և Տաթևացիս զորոմ յոգնապատիկ սերմանեալ է ի մէջ սուրբ *գրգիս*» (ն. տ., էջ 1386)¹:

Ըստ այսմ, մանր ժամանակագրությունների և ձեռագիր հիշատակարանների լեզվական մանրամասն քննությունը, որին ձեռնամուխ ենք լինում մեզ հետաքրքրող հարցի պարզաբանման նպատակով, հնարավորություն է տալիս հաստատելու, որ 14–18-րդ դդ. գրական այդօրինակ հուշարձաններում լատինաբան հայերենի գործածությունը գրեթե լիովին բացակայում է:

3. Հարցի մեկնաբանությունը հայագիտական աշխատություններում

Լատինաբանությունն որոշակիորեն մեկնաբանվել է անցյալի և մեր օրերի հայագիտական աշխատություններում: Սկսած 18-րդ դ. վերջից երևան են գալիս այնպիսի ուսումնասիրություններ, որոնցում տարբեր հայեցակետերից, այս կամ այն չափով շոշափվում են հայ-լատինական հարաբերությունները՝ կապված մեր իրականության հասարակական-քաղաքական կացության, տնտեսական

Երևան, 1950: ԺԵ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններ, մաս 1 (1401–1450 թթ.), մաս 2 (1451–1480 թթ.), մաս 3 (1480–1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, 1958, 1967:

¹ Սույն նախադասության հեղինակը լատին քարոզիչ է, որ անհարիր վերագրում է անում Գրիգոր Տաթևացուն: Ի դեպ՝ նշենք, որ նույնիսկ որոշ լեզվաբաններ անտեղյակ լինելու պատճառով սխալմամբ կարծում են, թե մեր գրավոր աղբյուրներում հանդիպող *գիրգ*, *կեան*, *միտ*, *մեղ* և նման եզակի թիվ նշանակող բազում ձևեր պարզապես տպագրական վրիպակ կարող են լինել և ոչ թե լատինաբան արհեստական կազմություններ:

վիճակի, ինչպես նաև հոգևոր-մշակութային առաջընթացի կարևորագույն խնդիրների պարզաբանման և արժեքավորման հետ: Այդ աշխատություններն իրենց բնույթով առհասարակ պատմական-մշակութաբանական են, իսկ առանձին վերցրած՝ նվիրված են հայ ժողովրդի և նրա գրականության ու տպագրության, փիլիսոփայական մտքի, ինչպես նաև հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրմանը:

Սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ եթե անցյալի հայագետները գտնում էին, թե հայ-լատինական հարաբերությունները, ամբողջովին առնված, բացասական դեր են խաղացել հայ մշակույթի զարգացման գործում, ապա մեր օրերում շատ քչերն են հարում այդ տեսակետին: Դա միակողմանի տեսակետ է եղել: Արդի հայագիտությունն այդ հարաբերություններին հիմնականում և հիմնավորապես հատկացնում է որոշակիորեն դրական դեր: Ամբողջ հարցն այն է, որ հայ-լատինական հարաբերությունները թե՛ պատմականորեն և թե՛ մշակույթի առումով անցյալում քննարկվել են որոշակի վերապահությամբ և կանխակալությամբ: Եվ միայն մեր օրերի հայագիտությունն է, որ հարցին անդրադառնում է ըստ էության, իր ամբողջության մեջ: Ուստի և հայ մշակույթի զարգացման գործում այդ հարաբերություններին տրվում է առաջադիմական դեր և որոշակի կարևորություն:

Լատինաբանության հարցերը փոքրիշատե շոշափող հայագիտական աշխատություններին այստեղ նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ ըստ առանձին բնագավառների, որովհետև այդպիսով ավելի ցայտուն են դառնում ոչ միայն արծարծվող խնդիրները, այլև դրանց մեկնաբանման ու գնահատության շրջանակները:

Նման աշխատություններից առաջին հերթին հարկ է անդրադառնալ հայ ժողովրդի պատմությանը նվիրված ուսումնասիրություններին: Դրանցից առաջինը, կարծում ենք, Միք.Չամչյանի (1738-1823 թթ.) «Պատմություն հայոց» աշխատությունն է¹: Ժամանակի գրավոր աղբյուրներից այն ունի անհամեմատ մեծ արժեք: Աշխատության 3-րդ հատորը, ինչպես գիտենք, ընդգրկում է, 14-րդ դ. վերջերից մինչև 18-րդ դ. վերջերն ընկած ժամանակների իրադարձությունների և ձեռնարկումների ծավալուն նկարագրությունը: Հեղինակն ելնում է իր ժամանակի պատմահայեցողության հնարավորություններից, առաջնորդվում իր գիտական միջավայրի աշխարհայացքային ընձեռումներով:

¹ Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, յօրինեալ ի Միքայէլ Չամչեանց Կոստանդնուպօլսեցոյ, հ. 3, Վենետիկ, 1784:

Մեզ հետաքրքրող շրջանի պատմությունը շարադրված է աշխատության մոտ երկու երրորդում (էջ 304-888): Այստեղ այդ շարադրանքը մեկառմեկ նկատի ունենալը, առավել ևս ներկայացնելն ու գնահատելը, ինչ խոսք, մեզ շատ հեռուն կտաներ: Դրա հարկը չկա, մանվանդ որ հայ պատմագիտությունն այդ շրջանին այս կամ այն չափով հաճախակի է անդրադարձել: Ուստի անհրաժեշտ ենք համարում սեղմ խոսելու միայն այն մասերի ու հատվածների շուրջ, որտեղ ներկայացվում են միարարական շարժման առաջացման և տարածման, ինչպես նաև փոփոխության և վերակազմակերպման, վերջապես՝ վերացման հետ կապված խնդիրները: Վերջիններս, կարծում ենք, ամենակարևորներն են մեզ հետաքրքրող հարցի տեսակետից:

Տվյալ դեպքում առավել ուշագրավ են աշխատության 5-րդ «գրքի» Խ գլխի (էջ 326-332) և 6-րդ «գրքի» Գ գլխի (էջ 444-450) նյութերը: Դրանք գերազանցապես վերաբերում են միարարական շարժման առաջացմանն ու տարածմանը՝ առնված իրենց ներքին հակասականության մեջ և արտաքին ընդհանրականության ձգտման առնչությամբ:

Այդ մասերը Չամչյանը շարադրում է իր ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրների (իմա՝ Մխ. Ապարանեցի, Ժամանակի հիշատակարաններ, մանր պատմություններ և այլն) տվյալների օգտագործմամբ:

Այսպես, խոսվում է Եսայի Նչեցու վերաբերմունքի, Հովհաննես Քոնեցու՝ լատին քարոզիչներին այցելելու և նրանցով հրապուվելու, նրանց միանալու, Բարթոլոմեոսի ծավալած գործի, գիտական ձեռնարկումների, թարգմանությունների և լեզուների ուսուցման մասին և այլն: Չամչյանն առաջին միարարներին անվանում է «սոնթ», «կաթոլիկ» և «դոմինիկյաններ»: Այնուհետև, նկարագրվում են բուն Հայաստանում բնագավառ գտած լատինաբանների և Հռոմի հարաբերությունների, այլև նրանց և հայ եկեղեցականների հակամարտության մասին: Չամչյանը պարսավում է հայ իրականության մեջ միարարական շարժման ծավալումը, այն դիտում է իբրև պառակտիչ երևույթ, որ ոչ մի դրական արդյունք չի տվել մեզանում:

Հասկանալի պատճառներով Չամչյանը հիմնական ուշադրությունը քեռում է հայ-լատինական եկեղեցական հարաբերությունների վերլուծությանն ու գնահատմանը: Այդ պատճառով քիչ է արժարժվում մշակութային առնչությունների հարցը: Վերջինս գնահատվում է բավականին միակողմանիորեն՝ կապված այն հայեցակետի հետ, թե միարարությունը մեզանում լիովին խաղացել է բացասական դեր, նրա ստեղծած գրավոր հուշարձաններն ոչ մի արժեք չունեն հայ մտավոր կյանքի, առավել ևս հայ մշակույթի առաջընթացի համար: Նման

մոտեցումն, ինչ խոսք, ճիշտ չէ: Այն հաղթահարվում է բոլորովին վերջերս, շնորհիվ մեր օրերի պատմագիտության և հայ փիլիսոփայության պատմության մասնագետների գործադրած ջանքերի:

Ստացվում է այնպես, որ շուրջ մեկ հարյուրամյակ տիրապետող դարձած հայացքը հայ-լատինական հարաբերությունների վերաբերյալ հաղթահարվում է միմիայն վերջին շրջանի գիտության կողմից: Միք.Չամչյանի գնահատություններն ու տեսակետներն այսօր ունեն սոսկ պատմական նշանակություն, թեև դրանք ժամանակին, բնականաբար, իրենց որոշակի նպաստն են ունեցել հայագիտության առաջընթացի մեջ, կրթել են հայագետների սերունդների:

Լատինաբանների գործունեությունը, ինչպես գիտենք, սկզբնավորվում է ամենից առաջ պատմական Հայաստանի Երևջակ, Ջահուկ, Նախճավան գավառներում:

Ղևոնդ Ալիշանը (1820-1901 թթ.) իր «Միսական» աշխատության մեջ¹ քննում է նաև միարարների գործունեությունը՝ հենվելով ավանդված գրավոր աղբյուրների գնահատման տվյալների վրա: Ալիշանի վաստակն այդ բնագավառում հազիվ թե հնարավոր լինի գերազնահատել: Նա մանրամասնորեն ներկայացնում է հիշյալ գավառների այն կենտրոններն ու բնակավայրերը, որտեղ մշակութային գործունեություն են ծավալել միարարները՝ ներառելով վերջիններիս երևան գալու, տարածվելու և խաղացած դերի հետ կապված գրեթե բոլոր կարգի հարցերն ու մանրամասները: Մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ Ալիշանի դիտարկումներն ու գնահատումները լիովին օգտագործվում են հետագա հայագիտական հետազոտություններում, և դա վկայում է Ալիշանի արածի մեծ արժեքի և արժանահավատության մասին: Ալիշանի սույն ուսումնասիրությունը չի կորցնում իր կարևորությունը նաև մեր օրերում. նրանում տրված լուծումների մեծագույն մասը (հատկապես մշակութայինը) լիովին կողմնորոշում է հայ-լատինական հարաբերությունների և լատինաբանության հարցերը նորովի քննելու գործում:

Ալիշանը մեզ հետաքրքրող շրջանի (14-18-րդ դդ.) պատմական անցքերին անդրադառնում է նաև իր նշանավոր «Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց» (Վենետիկ, 1901) գրքում (էջ 521-625)¹: Իբրև նյութ օգտագործված են տվյալ ժամանակաշրջանի գրավոր աղբյուրները լրիվ (որքան որ մատչելի են եղել) և ըստ գնահատման տեսակի: Ըստ այդմ Ալիշանը մեզ է ավանդում մի սխտեմատիկ

¹ Միսական. Տեղագրութիւն Միւնեսց աշխարհի, ի Հ.Ղևոնդեայ Մ. Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 382–522:

շարադրանք՝ իր շրջանի պատմագիտական-բանասիրական հայացքների թելադրանքով և դրանց շրջանակում: Այդ դարերի նյութը շարադրելիս Ալիշանն օգտագործել է հիշյալ կարգի 50 աղբյուր (իմա՝ 400-350): Պետք է ասել, որ դրանցից, սակայն, շատ քիչ մասն է, որ վերաբերում է հայ-լատինական հարաբերությունների, ըստ որում միաբարական շարժման, կաթոլիկական պրոպագանդայի և լատինաբան մշակութային գործունեության պատմաբանասիրական վերլուծությանը:

Բավականին ուշագրավ է Ղ. Ալիշանի «Հայ-Վենետ» գիրքը², այն էլ ոչ այնքան մեզ հետաքրքրող հարցերի, որքան առհասարակ հայերի և իտալացիների տարբեր կարգի առնչությունների տեսակետից:

Իսկ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ տվյալներ և նյութեր է պարունակում նաև Ալիշանի «Կամենից» աշխատությունը³: Այստեղ բերվող ժամանակագրական («տարեգրային») նյութն որոշակիորեն ցույց է տալիս լեհահայ գաղութի առնչությունները Հռոմի հոգևոր միաբանության հետ: Այդ «Տարեգիրքը» խիստ արժեքավոր է հայ-լատինական հարաբերությունների ուսումնասիրության համար, մանավանդ աղբյուրագիտական քննարկման տեսակետից:

Կիլիկյան հայկական իշխանության և առհասարակ Կիլիկիայի մասին մանրամասն խոսում է Ալիշանն իր «Միսուան» աշխատության մեջ⁴: Այստեղ անուղղակիորեն կան այնպիսի տվյալներ ու նյութեր, որոնք վերաբերում են հայ-լատինական հարաբերություններին: Դրանց ներմուծումը և վերլուծությունը օժանդակում են մեր օրերում ևս նման հետազոտությունների ձեռնամուխ լինելու համար: Այս իմաստով մեզ համար կարևոր են մեծ բանասերի ոչ միայն սույն, այլև նախորդ աշխատություններն՝ ամենից առաջ իրենց ամբողջականության և մանրամասնության տեսակետից:

Հայ-լատինական հարաբերությունների մասին որոշ դիտողություններ ունի Հ.Գեյցերը⁵: Այդ հարաբերությունների սերտությունը մի դեպքում նա տեսնում է հայ և հռոմեական եկեղեցիների միջև՝ սկսած խաչակիրների երևան գալուց, ըստ

¹ Ալիշանն այս երկում հայոց պատմության սկիզբ է նշում «ն. ք. (= նախքան գ.Քրիստոս) 3000–2600» թվականները (Անդ, էջ 1):

² Ղ. Ալիշան, Հայ-Վենետ կամ Յարրնչութիւնք Հայոց եւ Վենետոց ի ԺԳ–ԺԴ եւ ի ԺԵ–ԺԶ դարս, Վենետիկ, 1896:

³ Ղ. Ալիշան, Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետիկ, 1896:

⁴ Ղ. Ալիշան, Միսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885:

⁵ Հ.Գեյցեր, Համառօտ պատմութիւն (թարգմանեց Գ.Գալեմքյարյան), Վիեննա, 1897, էջ 17–18, այլև՝ 57–66 և այլն :

որում հայոց եկեղեցին և իշխանությունը եկվություն են ապրում հունաց և հռոմեացոց հակադիր դավանանքի միջև, ընդ սմին կիլիկյան թագավորության ստեղծումը կապելով հռոմեական կողմնորոշման հետ:

Այնուհետև, հայ-լատինական մշակութային հարաբերությունները Գեղցերը դնում է ավելի ուշ, երբ «հայոց, թեև մեկ փոքր մասը, այդ և ԺԵ դարուն վերջնականապես միացավ Հռոմայ հետ» (էջ 59): Մյուս դեպքում, զուտ մշակույթի ոլորտում, նշվում է Ոսկանի տպագրած Ս.Գրքի և վերջինիս մեջ տպագրիչի կողմից մտցված նոր մասերի՝ լատիներենից կատարված թարգմանությունների մասին. «Ոսկան, որ և ոչ իսկ հայերենը հիմնավորապես գիտեր, յուր բնագրին ներմուծություններն բազմացուց կամայական կարծեցեալ բարեփոխություններով և լատին բնագրին հավելվածներով» (էջ 18): Գրանք, նշում է Գեղցերը, հետո փոքր-ինչ շտկվելով անցնում են հետագա տպագրություններին (Կ.Պոլիս, 1705 թ., Վենետիկ, 1733 թ.) մեջ:

Արևմուտքի կողմից ձեռնարկված կաթոլիկական շարժմանը, հայ-հռոմեական հարաբերություններին, ինչպես նաև Մխիթարյանների մշակութային գործունեությանը Լեոն (1860-1932 թթ.) անդրադառնում է իր «Հայոց պատմություն» աշխատության 3-րդ հատորի I և II գրքերում («գլուխ VI. Կաթոլիկ պրոպագանդան Հայաստանում» և «գլուխ II. Մխիթարյաններ»)¹:

Հիշյալ հարցերի քննարկումն ընդհանուր առմամբ նորություն չէ: Սակայն այստեղ ուշագրավ են նոր փաստերն ու մանրամասները: Մեծանուն պատմաբանը հենվում է ոչ միայն հայերեն աղբյուրների ու բանասիրական ուսումնասիրությունների, այլև եվրոպական համապատասխան գրականության տվյալների վրա, որով ավելի ամբողջական ու հանգամանալից է դառնում հարցերի պատմական և մշակութաբանական վերլուծությունը: Այդ բաժիններում ուշադրության առարկա են այնպիսի իրողություններ, ինչպիսին են միարարների ներթափանցումը Հայաստան, այդ շարժման երևելի գործիչների դերը, ժամանակի եվրոպական մի քանի տերությունների կանխակալ միջամտությունները, ճիզվիտների նկրտումներն ու ձեռքբերումը, օտար կրոնական բռնացումները՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կաթոլիկական գիտությունը, Մխիթարյանների նվիրական գործունեության մեջ խոհեմ վերաբերմունքը դեպի այդ գիտությունը, այլև առհասարակ հայագիտության զարգացմանը նպաստելը և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ ուշադրության առարկա հարցերի մեկնաբանության մեջ նկատելի է անհամամասնություն, իսկ դրանց

¹ Լեոն, Երկերի ժողովածու, հ. 3 (I գիրք), Երևան, 1969, էջ 316–348, հ. 3 (II գիրք), Երևան, 1973, էջ 471–522:

գնահատությունն երբեմն տրվում է միակողմանիորեն: Ավելին, այստեղ պատմաբանը ոչ միշտ է կարողանում ընդհանուր մշակութային խնդիրների լուծումը տալ դավանաբանական խնդիրներից առանձին, և այդ իսկ պատճառով որոշակիորեն զգացվում է այդ խնդիրների ազդեցությունը ընդհանրապես:

Հայ-լատինական հարաբերությունների մասին խոսում է հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Բրյուսովն (1873-1924 թթ.) իր «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրություն» գրքում (առանձնապես՝ գլ. VIII, մասամբ՝ գլ. IX)¹, որտեղ ընդհանուր ակնարկները հաճախ աչքի են զարնում իրենց դիպուկությամբ, ճշգրտությամբ, այլև դրանք ներկայանում են տեղին բնութագրումներով, արժանանում ստույգ գնահատության:

«Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության մեջ² մեզ հետաքրքրող հարցերը մեծ պատմաբան Հ.Մանանդյանը (1873-1952 թթ.) քննարկում է բավականին սեղմ ձևով: Եթե 11-15-րդ դդ. Հայաստանի պատմության շարադրանքն ուշագրավ է լատինաբան հայերենի պատմության հարցերի արտաքին հանգամանքների տեսակետից առհասարակ, իսկ միարարական շարժման պատմությանն այստեղ շատ քիչ տեղ է հատկացվում (գլուխ 19, § 13-14):

Ուշագրավ է Մանանդյանի հետևյալ դիտողությունը. «Պետք է առանձնապես նշել, որ 14-րդ դարում, երբ քաղաքական ծանր դրության մեջ էին թե՛ բուն Հայաստանը և թե՛ Կիլիկիայի հայկական թագավորությունը, հայ ժողովրդի և եկեղեցու հանդեպ թշնամական ընթացք էին բռնել ոչ միայն մահմեդական ցեղերը, որ ամենուրեք տիրող և գերիշխող էին դառել, այլ նաև պապականությունն ու լատինական եկեղեցին» (էջ 351): Այնուհետև, համառոտակի խոսվում է միարարների տարածման վայրերի (Նախիջևան, Երնջակ, Ջահուկ), ձգտումների («միացնել հայոց եկեղեցին լատինականի հետ»), գործունեության ձևերի («թե բանավոր քարոզություն և թե գրավոր կերպով» սխոլաստիկական գրականության թարգմանում և տարածում և այլն), նրանց հանդեպ եղած ընդդիմությունների (Գլաձորի Աղբերց վանքը, Տաթևի վանքը իրենց առաջավոր գործիչներով՝ Ներսես Մշեցի, Մխիթար Սասնեցի, Եսայի Նչեցի, Հովհաննես Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի և ուրիշներ) մասին: Ուշագրավ է նաև հետևյալը. «...ոչ միայն Կիլիկիայում, այլև բուն Հայաստանում կային տարրեր,

¹ *Валерий Брюсов, Летопись исторических судеб армянского народа*, Ереван, 1940, с. 90-103, 103-115 (I տպ. 1913), այլև՝ *Վալերի Բրյուսով, Տարեգրություն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին* (թարգմ. Յ.վ.Մարգարեան), Վենետիկ, 1931, էջք 186-213 և 214-239:

² *Հ.Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*. Մելջուկյան շրջանից մինչև Մեֆյանների հաստատումը Իրանում. «Երկեր», հ. Գ, Երևան, 1977, էջ 351-355:

որոնք ջերմ կողմնակից էին կաթոլիկ եկեղեցու հետ միացմանը քաղաքական նպատակով: Այս «միարարները» հույս ունեին, որ եկեղեցիների միության միջոցով կարելի կլինի նպաստ և օգնություն ստանալ պապից և Արևմտյան Եվրոպայի թագավորներից: Նրանք դեռևս չէին գիտակցում, որ պապերը ոչ միայն այդ ժամանակ անգոր էին օգնություն հասցնելու, այլև չէին էլ օգնելու իրենց: Խիստ հետաքրքիր է, որ կաթոլիկ եկեղեցուն հարելու հակում են ունեցել ինչպես Կիլիկիայում, նույնպես և բուն Հայաստանում, գլխավորապես ժողովրդի բարձր խավերը» (էջ 353-354):

Մանանդյանը վերջում բերում է երկու վկայություն: Առաջինը վերաբերում է կիլիկյան Ջաքարե ամիրսպասալարի (1255 թ.), իսկ երկրորդը Մակվի բերդի իշխանի (1404 թ.) կեցվածքին, այսինքն՝ իրենց «հայ կաթոլիկ» համարելուն:

Այսպիսով, Հ.Մանանդյանի մեկնաբանությունները, անկախ ուղեգրական փաստերի օգտագործման և հարցը տարբեր կողմերից քննարկելու հանգամանքների առավելությունից, շատ քիչ բանով են նորություն: Դրանք ոչ այնքան նոր բան են ավելացնում եղածին, որքան հստկություն ու ստուգություն են մտցնում մեզ հետաքրքրող հարցերի գնահատության մեջ:

Այնուհետև, լատինաբանությանն անդրադառնում է անվանի պամաբան նաև Ա. Հովհաննիսյանը (1887-1972 թթ.) իր մի առանձին հոդվածում և լայն ճանաչում գտած մենագրության մեջ¹: Սույն ուսումնասիրությունները, մեր կարծիքով, խիստ արժեքավոր են հարցի նոր, մեթոդաբանորեն ճշգրիտ քննության և գնահատության տեսակետից, հիմնարար կարևորություն ունեն երևույթի պատմագիտական հետազոտության հայեցակետից:

Հիշյալ հոդվածում Ա.Հովհաննիսյանը քննում է լատինաբանության հետ կապված ավելի մասնավոր հարցեր, թեև մինչ այդ տրվում է ողջ երևույթի օբյեկտիվ գնահատությանը: Այստեղ ուշադրության առարկա են 17-րդ դ. երկու միարարների՝ Հակոբ Հիսուսի և Մատթեոս Հովհաննիսեցու «պատմական արժեք ունեցող երկու ծանոթ գրությունները» (էջ 1109):

Առավել ուշագրավ են մեզ հետաքրքրող հարցերի առնչությամբ նրա այն դիտողությունները, որոնք արվում են «Դրվագներում»: Այդ անելու համար օգտագործված են ոչ միայն տպագիր, այլև ձեռագիր բազմաթիվ նյութեր: Այստեղ բարձր են գնահատվում Բարդուղիմեոսի այն հայացքները, որոնց համաձայն՝ «...գիտության վառ ճրագը չպիտի դրվի գրվանի տակ, այլ աշտանակի վրա.

¹ Աշ.Հովհաննիսյան, Նոր նյութեր հայ-ունիտորական պատմագրությունից. «Արարատ», 1914, էջ 1108-1114, 1915, էջ 61-69: Նույնը, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմություն, հհ. 1-2, Երևան, 1957-1959:

գիտության լույսը չպիտի թաքցվի վանական խցերում, այլ բաշխվի աշխարհական ժողովրդին: Քարոզը պիտի խոսվի հասկանալի և հստակ լեզվով: Աշխարհականների հետ չպիտի խոսել նույն լեզվով, որ բանեցնում են վարդապետները իրար հետ, գիտնականների կամ գրոց աշակերտների հետ զրուցելիս: Լավ է, որ քարոզողի խոսքը հասկանալի լինի ժողովրդին, քան թե արժանանա սոսկ քերականների և պերճաբանների գովքին...» (էջ 489):

Ա.Հովհաննիսյանը գտնում է, որ Հակոբ Քոնեցու թարգմանություններն արված են «համեմատաբար հստակ ու դյուրըմբռնելի հայերենով», այլև՝ «մի հայտնի չափով դրսևորում են աշխարհաբարին մերձենալու տենդենց» էջ(490): Այս դիտողությունը, թեև ակնարկային, արվում է ընդհանուր տպավորությամբ, սակայն միանգամայն ճիշտ և իրական ձևով:

Նույն կերպ էլ ճիշտ է և ընդունելի Ա. Հովհաննիսյանի հետևյալ մեկնաբանությունը. «Դրանց մեջ (իմնա Քոնեցու թարգմանություններում - Վ.Հ.) դեռ բացակայում է լատիներենի ազդեցությամբ աղավաղված այլանդակ այն հայերենը, որ ծավալ ստացավ հետագա ունիտորների գրական գործերում: Ասեմք, մասամբ հենց այլանդակ այդ հայերենի շնորհիվ է, որ հայ ժողովրդի հոծ մեծամասնությունը ազատ մնաց պապական ունիտորների քարոզած վնասաբեր մտքերի գորեղ ներգործությունից» (էջ 490):

Նա նշում է նաև այն «կայանները», որտեղ գործում էին միարարները («Հովհաննես Անգելոսը նստում էր Թբիլիսիում», Մխիթար Ապարանեցին՝ Մակուի բերդում և այլն):

Հայ-լատինական հարաբերությունների անդրադառնում է նաև մեծանուն պատմաբան-աղբյուրագետ Լ.Խաչիկյանը (1918-1982 թթ.) իր մի շատ ուշագրավ աշխատության մեջ¹, կապված 13-15-րդ դդ. Արտազի հայկական իշխանության գոյացման և վերջինիս նշանավոր կենտրոն Ծործորի դպրոցի մշակութային կյանքի պատմությանը: Այդ պատմությունը շարադրվում է աղբյուրագիտական նոր փաստերի և նյութերի օգտագործմամբ, ինչպես նաև դրանց մանրամասն ու հանգամանալից վերլուծությամբ: Այստեղ հայ իրականության տվյալ հատվածի ողջ պատմության նորովի մեկնաբանման մեջ, հարցի կարևորության տեսակետից, առավել զբաղեցնողը հայ-հռոմեական հարաբերությունների այն կոնկրետ դրվածքն է, որ նկատվում է Արտազի միջավայրում:

¹ Լ.Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը. «Բանբեր Մատենադարանի», հ. 11, Երևան, 1973, էջ 125-210:

Լ.Խաչիկյանի սույն աշխատության 1-ին մասը նվիրված է հայկական Արտագի պատմությանը (էջ 126-167), II-ը՝ Ծործորի վանքի մշակութային գործունեությանը (էջ 168-208): Առաջինում տրվում է ինքնուրունություն ձեռք բերած հայ իշխանության (նրա քաղաքական և հոգևոր ղեկավարների) կուլ գնալը կաթոլիկական էքսպանսիային, որը տեղի է ունենում անընդհատական զիջումների գնով (որով նրանք ակնկալում էին եվրոպական օգնություն ազատագրման հարցերում): Այս կետում բավականին պարզորոշ երևում են հռոմեական դավանանքի խարդավանալից վերաբերմունքը և կաթոլիկական ընդհանրականացման ձգտման եսականությունը: Այդ արտաքին հանգամանքն ազդում է այն բանի վրա, որ հայ իրականության մի որոշակի զանգված «արմատախիլ է» արվում հոգևոր հողից: Սակայն պետք է ասել, որ այսպիսի պայմաններում անգամ, ինչպես նշում է Լ.Խաչիկյանը, նկատելի ձևով ծաղկում է ապրում Ծործորի դպրոցը, հատկապես 14-րդ դ. առաջին հիսնամյակում (էջ 169): Այս իմաստով ակնառու է Հովհ. Ծործորեցու գիտական և կրթական գործունեությունը. նա լատիներենից թարգմանում է Թովմա Աքվինացու «Գիրք խորհրդոց» աշխատությունը (1321 թ.)՝ «անկյունաքարը դնելով հայ ունիթորական գրականության» (էջ 198): Այդ դպրոցի մշակութային գործիչները թարգմանություններ են անում լատին բնագրերից՝ հատկապես կաթոլիկ եկեղեցու գաղափարախոսներ Բունավենտուրայի, Թովմա Աքվինացու, Նիկողայոս Լյուրացու և ուրիշների ինքնուրույն գործերն ու մեկնությունները:

Մեզ հետաքրքրող հարցերի առումով կարևոր է Լ.Խաչիկյանի հետևյալ դիտողությունը. «Հաջորդ տասնամյակի (իմ'ա 1330-ական թթ.-Վ.Հ.) ընթացքում, ինչպես Ծործորի վանքում, այնպես էլ՝ ավելի մեծ ծավալով, Քոնստանդուպոլսի և հայ ունիթորների մյուս կենտրոններում, Հովհան և Հակոբ Քոնեցիների, Բարթողիմեոս Մարաղացու, Պետրոս Արագոնացու և բազմաթիվ այլ հայ ու օտարազգի քարոզիչների ջանքերով ստեղծվում է հայ-կաթոլիկական ինքնատիպ մի գրականություն. ծիսական մատյաններից բացի հայերեն լեզվով շարադրվում կան լատիներենից թարգմանվում են փիլիսոփայական մեկնություններ, քերականություններ, դատանաստագիրք, քարոզգիրք և բազմաթիվ այլ աշխատություններ, որոնց գիտական ուսումնասիրությունը դեռևս չի կատարված» (էջ 198-199)¹:

¹ Մեզ հետաքրքրող շրջանի հայ բնագիտական մտքի պատմությանն է նվիրված Լ.Խաչիկյանի մեկ այլ աշխատությունը, որում որևէ խոսք չկա լատինաբան գրականության գոյության մասին: Տե՛ս *Լ.Խաչիկյան*, Հայ բնագիտական միտքը XIV–XVIII դարերում. ՊԲՀ, 1971, 2, էջ 23–44: Այդ հոդվածը զետեղված է «Հայ ժողովրդի պատմություն. հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում. XIV–XVIII դդ., (հ. IV, Երևան, 1972, էջ 470–491) գրքում:

Հայ-լատինական առնչությունների պատմության ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունի անվանի պատմաբանի մեկ այլ աշխատությունը, որն երևան է եկել իբրև ներածություն Հովհ.Քոնեցու քերականության¹: Այդ ուսումնասիրությամբ մի նոր աստիճանի վրա է դրվում հայ-լատինական հարաբերությունների ուսումնասիրության հարցը: Հեղինակը մեծ ուշադրություն է հրավիրում այդ հարցի նորովի հետազոտման վրա: Քոնեցու քերականության առաջաբան գրելը մի տեսակ լինում է այն պատեհությունը, որպեսզի հմուտ քանասերն առաջադրի այդ հարցի գիտական ու համակողմանի լուծման նոր պայմաններ, մեջտեղ բերվեն նոր կռվաններ և չափանիշներ: Լ.Խաչիկյանն այստեղ առաջինն է տալիս նման քննության օրինակը: Այն փորձ է ոչ միայն քանասիրական և բնագրագիտական, այլև լեզվաբանական հմուտ և հանգամանալից ուսումնասիրության համար: Սեղմ շարադրանքով և լայն հարցադրումներով քննության են առնվում են հայ-լատինական հարաբերությունների առաջացման պայմանները, տվյալ ժամանակաշրջանի հիմնական ուղղվածությունը, հայ կրթական օջախների կացությունը և այլն:

Լույս է տեսել Գ.Գրիգորյանի «Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր)» աշխատությունը², որի 3-րդ գլխի («Սյունիքի կրթամշակութային օջախները և նրանց սկանավոր գործիչները») վերջին (7-րդ) հատվածը (էջ 237-241) նվիրված է Սյունիքում ծավալված հակամիարարական պայքարին («Սյունիքի մտավորականության պայքարը ունիթոռների դեմ»): Այստեղ սեղմ շարադրվում է հայ-լատինական հարաբերությունների սկզբնավորման և Սյունիքի տարածքում դրանց արմատավորման պատմությունը: Նշվում են կաթոլիկական դավանանքը տարածողների, այլև նրանց սկզբունքների, միարարական ձեռնարկումների դեմ Սյունիքի բուն մտավորականության՝ հատկապես Հովհաննես Օրբելի, Ստեփանոս Տարսայիճի, Եսայի Նչեցու և նրա հաջորդ Հովհան Որոտնեցու ծավալած անգիջում պայքարի էական կողմերը: Ընդհանուր գիտելիքների սահմաններում տրվում է երևույթի ճիշտ գնահատությունը: Այն արվում է ավելի շուտ արծարծվող հարցերի մասին եղած պատմագիտական, քանասիրական և այլ կարգի գրականության տվյալների հիման վրա, քան ժամանակի բուն գրավոր աղբյուրների պարունակած տեղեկությունների օգտագործմամբ:

¹ Լ.Խաչիկյան, Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը: Տես *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, էջ 5-51:

² Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII-XV դարեր), Երևան, 1981:

Հայ-լատինական հարաբերություններն որոշակիորեն տեղ են գտել, ինչպես նշել ենք, հայ գրականության և տպագրության պատմությանը նվիրված աշխատություններում:

Անդրադառնանք դրանցից թերևս ամենակարևորներին:

Լատինաբանությունը լայնորեն է մեկնաբանվում Գ.Ջարբհանայանի (1827-1901 թթ.) տարբեր բնույթի աշխատություններում¹: Ընդգրկվող հարցերը քննվում են հայ մշակույթի և հայ գրականության պատմության հայեցակետից, հայոց լեզվի պատմության ընթացքի մեջ: Դրանք շոշափվում են հիշյալ աշխատության «Ընդհանուր տեսությին մեր նոր մատենագրութեան վրայ» (էջ 1-41), «Հայերեն գրաբար լեզու (ԺԴ-ԺԸ դար)» (էջ 45-55) և «Միաբանասիրաց դպրոց» (էջ 194-212) բաժիններում: Նկատենք, որ Ջարբհանայանի մեկնաբանումներն ու դիտողությունները հաճախ լայնորեն օգտագործվում են հետագա բանասերների և լեզվաբանների կողմից: Ուստի հարկ ենք համարում այստեղ դրանց անդրադառնալ ավելի հանգամանալից:

Ըստ Ջարբհանայանի, «չորեքտասներորդ դարուն մէջ որչափ այլ կը սկսի աշխարհիկ լեզուն ծաւալի և ընդհանուր ըլլալ, ու այլ և այլ գաւառաց կամ գաղթականութեանց համեմատ ձև ու կերպարանք առնուլ, սակայն գրաբարի ուսումն ալ դեռ բոլորովին անհետացած չէ» (էջ 7): Նա ուշադրություն է հատկացնում այն բանին, որ կրթականից բացի առաջանում է կրոնական երկվություն՝ կապված Մարաղայում բարթողիմեռսականների բնակավան, հիմնավորման, այլև Հովհաննես Քոնեցու՝ նրանց միանալու հանգամանքի հետ: Միարարները գործունեության վայր են գտնում նաև Նախիջևանում, Սուլտանիայում, Տփլիսում, Գրիմում և այլուր: Նրանք միմյանց սովորեցնում են լատիներեն և հայերեն: Ընդ որում երկու կողմն էլ ինչ-որ չափով թերի է մնում լեզուների համեմատաբար լիակատար տիրապետման գործում:

Ջարբհանայանը գտնում է, որ «...լեզուներու անկմանն առաջին հարուածը տուողն ինքն (իմա՛ Բարդողիմեռսը-Վ.Հ.) եղած է» (էջ 10-11), որովհետև նրանցում նկատվում է՝ «Քերականական սահմանաց տգիտութիւն, լեզուի նուաստութիւն ու աշխարհիկ բարբառի հետ խառնուրդ հաւասարապէս կը նկատուի այս քարոզներուն (իմա՛ Բարթողիմեռսի «Քարոզգրքի»-Վ.Հ.) մէջ. և որք թերևս դիտմամբ այնպիսի ոճ մը ունենան՝ ժողովրդեան հասկանալի ըլլալու համար. բայց լեզուի աղաւաղութեանը մեծապէս պատճառ ըլլալնին անտարակուսելի է» (էջ 11): Աղավաղում է նկատվում նաև Մարտինոս

¹ Գ.Ջարբհանայան, Պատմութիւն հայերէն դպրութեան. Բ.Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878:

Օպավիացու գրքի թարգմանության մեջ (թարգմ.՝ Ներսես Պալիանենց), որտեղ «շատ տեղ հայերենին կը խառնէ նաև լատին բառեր» (էջ 14) և այլն:

Ինչպես ասացինք, Գ.Զարբհանայանն իր աշխատության մեջ անդրադառնում է լատինաբանությանը նաև լատինաբան հայերենի գնահատության տեսակետից (էջ 45-55): Ըստ այդմ՝ «...հայերեն գրաբար լեզուն անոնցմէ շատին գրչին տակ ծանր հարուած մը ու ազդու վերք մը ընդունեցաւ, և զոր դարմանելու համար՝ մեծագոյն դժուարութեանց հարկ եղաւ դիմակայել (էջ 49):

Զարբհանայանը գտնում է, որ այդպիսի «հարվածը» եղել է ոչ թե «կամաց կամաց ու բնական կերպով», այլ «մասնատր արուեստի մը և ջանից հետևանք է» որի հակադիրը դիտվում է 14-18-րդ դդ. բուն գրաբարի վիճակը: Այս առումով Զարբհանայանի ընդհանուր լեզվագիտական մեկնաբանությունն այն է, որ՝ «Այս լեզուին (իմա՝ լատինաբան հայերենի-Վ.Հ.) նկարագիրն կամ յատկութիւնը, եթէ կրնայ ունենալ, երկու իրարմէ տարբեր կերպով սահմանել ուզած են բանասէրք. այսինքն՝ նախ հայերեն ճաշակէ օտարութիւն, եւ երկրորդ՝ լատին լեզուի նմանողութիւն: Տարակոյս չկայ, որ լեզուի այսպիսի տարօրինակ խառնուրդի մը մէջ աւելորդ է հարազատ և ընտիր բարբառոյ ճաշակ, ոճ ու քաղցրութիւն փնտրել. բայց այս առաջին բաժանումն ալ կարևոր է, որպէսզի իմացուի որ չէ թէ հին հայերենի շինուածքին վրայ օտար ճարտարապետ մը աշխատել է, այլ լեզուին աւերակներուն վրայ՝ օտար զարդերով ու նոր ճարտարապետութեամբ շէնքեր կառուցուած են: Անով է, որ առաջին կարգի ընտիր յատկութիւններէ, և միջին դարուց մասնատր ոճերէն ու զարդերէն մերկ ու կողոպուտ լեզու մըն» (էջ 50-51):

Այնուհետև, Գ.Զարբհանայանը թվարկում է լատինաբան խորթ ձևեր, որոնք են՝ ներգոյականի կազմությունը, հոգնակի թվի կազմությունը, ածականի համաձայնությունը, ածականի գերադրական աստիճանի կազմությունը, նախամասնիկների գործածությունը, բայական ժամանակների հավելումը, լատինատիպ բառերի կազմումը, լատինրենից փոխառությունները (էջ 53-54): Ընդ որում բանասերը գտնում է, որ դրանք մեզ համար խորթ ու խոտելի են, իսկ ստեղծողների համար՝ եռանդի ու «հարատև ջանքի» արդյունք՝ ստեղծելու և գործադրելու տեսակետից (էջ 53):

Աշխատության մեջ քննարկվում է նման խորթությունների հետագա ճակատագրի հարցը. «Այս նորութիւնը՝ կամ հայ ենթադրեալ բարեկարգութիւնը, քանի մը դար տևեց: Բայց իրենցմէ քիչ ետքը, կամ թէ նոյնիսկ իրենց ժամանակակցաց մէջ *ուրիշ դաս մը երևցաւ նորասիրաց* (ընդգծումը մերն է - Վ.Հ.): Ասոնք առանց առաջնոց ոճոյն հետևելու կամ նմանող ըլլալու, անոնց

հակառակելով ալ՝ լեզուին խանգարման պատճառ ըլլալուն մէջ կերպով մը միաբանեցան: Եթէ առաջիններին ըրածը՝ արուեստական խանգարումն է լեզուի, ասոնց ըրածն ալ բնական խանգարումնք պէտք է կոչուի: Այս վերջիններս չուզեցին, ինդպէս ըսինք, այդ նորութեանց հետևիլ. մանաւանդ թէ փափաքելով հնուց շաղէն անխտոր երթալ, փոխանակ հին ու դասական օրինակագրաց պարզութեանը և գեղեցիկ ոճոյն մէջ լեզուի ընտրութիւնը փնտռելու, անոնց ժամանակակից յունական ոճ գործածողներուն կարծեցին հետևիլ: Արդէն հին նախնեաց ժամանակ ալ այդ ջանքը ուսումնական հերձուած մը սեպուած էր և հակառակութիւն կրած. բայց չէ թէ միայն բոլորովին չէր անհետացած, այլ նախ դարեդար անցնելով՝ ինչուան մատենագրական անկման ատեն դիմացած: Այս ոճն ալ գտաւ իրեն հետևողքն ու զարմացողքը մեր հիշատակած ԺԳ-ԺԸ դարերուն մէջ. նորասէրք իրենց յատուկ քերականական ուղղութիւնը մը կարծեցին ունենալ. իսկ ասոնք՝ նախնեաց կանոններու հետևիլ կարծած ատեննին, քերականական կանոններն ալ մոռցան» (էջ 54-55):

Դրանից բացի, Չարբհանալյանը հատուկ ուշադրութիւն է դարձնում լատինաբան դպրոցի գործունեությանը՝ սեղմ շարադրելով նրա առաջացման նախադրյալները, ձևավորման եղանակները, այլև որ առավել կարևոր է, խաղացած դերը մեզանում: Նոր ժամանակներում հայերն իրենց հայացքը հառել են Եվրոպա դեռևս Բագրատունիների և Ռուբինյանների սկզբնական շրջանի իշխանության ժամանակ: Այն եղել է ոչ միայն քաղաքական, այլև կրոնական օգնության հարցում: «Ինչպէս Շնորհալոյ և Գրիգոր Տղայի ժամանակ՝ այս օգնականութիւնները (իմա՝ Արևմուտքի օգնութիւնը քրիստոնյա հայութիւնը անհավատներից փրկելու - Վ.Հ.) դիւրացնելու առթիւ եկեղեցական միութեան ալ ջանք եղած էր, ասանկ ալ Ռուբինեանց վերջին ժամանակները լատին եկեղեցւոյ հետ» (էջ 194): Չարբհանալյանը շեշտում է այն պարագան, որ Ռուբինյանները գործնական քայլերի են դիմում (14-րդ դ. սկիզբ) առ Հռոմ՝ դոմինիկյան և ֆրանցիսկյան կրոնավորներ առաքելու Հայաստան (էջ 195): Այդ դիմումը, ինչպէս հայտնի է, ստանում է դրական լուծում:

Եվ, ահա, այդ բանից հետո է միայն, որ լատին քարոզիչները ներթափանցում են հայոց մէջ՝ հատկապէս ստեղծելով նմանատիպ մի միաբանություն. 1316 թ. գալիս է Բարդուղիմէոսը, 1333 թ. Հռոմի կողմից ձեռնադրվում է Մեծ Հայքի արքեպիսկոպոս (էջ 197-198): Այնուհետև, Չարբհանալյանը ներկայացնում է Բարդուղիմէոսի գործունեությունը (քարոզչություն, ուժերի համախմբում, թարգմանական գործի ձեռնարկում և այլն), ինչպէս նաև առաջացող կրոնական ներքին բաժանարարությունը

(սեպարատիզմ) և հակառակությունը: Այդ գործունեության մեջ բանասերը մեծ ուշադրություն է դարձնում կրթականին: «Այս դիտմամբ և նպատակաւ բաւական չեն սեպած լոկ աստուածաբանական ուսմանց գրադիւն և գրադեցնելը, այլ նաև ուրիշ կարևոր հրահանգաց ճաշակէն ալ չգրկել, ոչ միայն ուսուցանելով, այլ նաև գրով աւանդելով» (էջ 206): Եվ աշխատության այդ մասում էլ Չարբհանայանն անդրադառնում է լատինաբան գործիչներին, նրանց արած թարգմանություններին (էջ 206-212): Դրանք մի մասն են այն թվարկումների, որոնք հետագայում համալրվում են մերօրյա հայագետների կողմից (Հ.Աճառյան, Լ.Խաչիկյան, Ս.Արևշատյան և ուրիշներ):

Այսպիսով, Գ.Չարբհանայանի սույն աշխատությամբ ներկայացվում է 14-18-րդ դդ. մեզանում երևան եկած լատինաբան մշակութային շարժման և նրա արդյունքը հանդիսացող լատինաբան հայերենի առաջացման և թողած ազդեցության սեղմ պատմությունը: Այն բավականին հակիրճ է, չի ընդգրկում երևույթն իր ամբողջությամբ և բազմազանությամբ: Այդուհանդերձ, արված դիտողություններն ու գնահատությունները ակնհայտորեն նպաստում են ավելի լայն ուսումնասիրության ձեռնարկելու գործին: Հետագայում բանասիրական, մանավանդ լեզվաբանական աշխատություններում չենք հանդիպում լատինաբանությանը և լատինաբան հայերենին վերաբերող հարցերի արծարծման կամ բնութագրման նման ընդգրկում, ավելին բավականին նեղացվում է այդ հարցերի շրջանակը ոչ միայն ծավալի, այլև ժամանակի առումով:

Հարցին անդրադառնում է նաև Եղիշե Դուրյանը (1860-1930 թթ.)՝ կապված հայ գրականության պատմության ուսումնասիրության հետ¹: Այստեղ խոսվում է Հռոմի Հովհաննես XII պապի կողմից 1316 թ. Բարդուղիմեոս լատին վարդապետի Արևելք ուղարկելու մասին՝ կապված արևելյան ազգերի քաղաքական և կրոնական կացությունը քննելու խնդրի հետ (էջ 67): Վերջինս ձեռնարկում է միարարական գործին՝ ուղղված Հայաստանում եղած կրոնական հավատքի փոփոխմանը: Այդ իրողությունը առաջ է բերում բուռն հակառակություն «ուղղամիտ» հայ եկեղեցականների կողմից: Բարթուղիմեոսը և իր համախոհները ձեռնամուխ են լինում լատինամոլ գիտական-մշակութային գործունեության՝ հորինելով կամ թարգմանելով իրենց կարիքները և ժամանակի պահանջները բավարարող գրականություն, որում մեծ տեղ է հատկացվում լատիններենի կաղապարով «ձևակերպվող» լեզվական իրականություններին (էջ 68):

¹ Եղիշե Դուրյան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ.Պոլիս, 1885:

Հեղինակը հիշատակում է այդ գործին լծված գործիչներին՝ Բարթուղիմեոս Մարաղացի, Պետրոս Արագոնացի, Հակոբ (=Քռնեցի), Սարգիս Վաշենց, Մխիթար Ապարանեցի, Հովհ. Քռնեցի, Ներսես Պալիանենց (= «Պաղոն կամ Պալիենց») և ուրիշներ (էջ 73-74): Նշվում են նաև լատինամուսուկների գործունեության օջախները՝ Նախիջևան (իր տարբեր կենտրոններով), այլև Լեհաստանի և Նոր Զուղայի հայկական գաղութներ, որտեղ «հաստատեալ գաղթականութեանց մէջ գրաբարն (իմա՛ 17-րդ դարում - Վ.Հ.) ուղղակի եւրոպական մատենագրութեան ազդեցութեան ներքև լատինական կաղապարի մը մէջ ձուլեցաւ» (էջ 80), և որի հիմքերը ձգվում են մինչև 16-րդ դ.:

Ե.Դուրյանը գտնում է, որ նման մոտեցում երևան բերվեց այն պատճառով, որ այդ շրջանում գրաբարն իր ընթացքի մեջ հասել էր մի անկյալ վիճակի, և լատինամուսուկներն ուզեցան այն «կարգավորել» լատիններենի հիման վրա: Եվ եթե այդ «կարգավորման» դեմ նախորդ դարերում (հատկապես 15-17-րդ դդ.) ոչինչ չի ձեռնարկվում, այլ ընդհակառակը, գնալով ավելի են խորանում լատիններենի ազդեցությունն ու ընդօրինակման ձգտումը, ապա 18-րդ դ. Մխիթար Սեբաստացու և նրան համախոհ աշակերտների տոկուն ջանքերի շնորհիվ է, որ հաղթահարվում է լատինաբան ամեն կարգի խորթություն (էջ 86-89):

Հայ-լատինական հարաբերությունների մասին սեղմ ակնարկի ենք հանդիպում Աբր. Չամինյանի (1871-1937 թթ.) երկու աշխատություններում¹: Առաջինում հայոց եկեղեցու պատմության ակնարկի մեջ նվազագույն տեղ է հատկացված հիշյալ բնույթի հարաբերություններին, այլև լատինաբան մի քանի գործիչների արածին: Ինչպես ողջ գիրքը, այնպես էլ այդ հատվածները գրված են, ինչպես նշում է նաև հեղինակը, հայերեն որոշ գրավոր աղբյուրների, Միք.Չամինյանի, ավելի հետո եղած գրքերի, ժամանակի մեկ-երկու պարբերականների ընձեռած տվյալների վրա: Երկրորդում Չամինյանն անդրադառնում է լատինաբան հեղինակներին՝ իբրև մի օղակը հայերեն ստեղծված գրականության: Այս դեպքում ևս քիչ բան է ասված:

Մեզ հետաքրքրող հարցերն Աբր.Չամինյանի կողմից մեկնաբանվում են միակողմանիորեն՝ կապված հիշյալ աշխատություններում հետապնդվող կոնկրետ խնդիրների իրականացման հետ:

¹ Ա.Չամինեան, Հայոց եկեղեցու պատմութիւն, մմ. I-II, Նոր Նախիջևան, 1908-1909, էջ 272-286, 91-105 և այլուր: Նույնը, Հայ գրականութեան պատմութիւն, մ.Ա, Նոր Նախիջևան, 1914, էջ 209-210, 232-234: Այս դեպքում հայոց եկեղեցու և հայ գրականության պատմությանը վերաբերող միևնույն հեղինակի տարբեր գործերի մասին խոսում ենք մի տեղում՝ կապված դրանցում մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ շատ քիչ, թռուցիկ ակնարկներ պարունակելու հանգամանքի հետ:

Հարցին անդրադառնում է նաև Մ.Աբեղյանը (1865-1944 թթ.)¹ : Տվյալ դեպքում հետաքրքիր են նրա հետևյալ դիտարկումները: «Հռոմն արևելյան հայ վանականների դիմադրությունը խորտակելու համար մի նոր միջոցի է դիմում. նա պարսկական մոնղոլ հարստության թուլացման սկիզբներում հենց՝ 1319 թ., քարոզիչներ է ուղարկում Արևելք» (էջ 403): Նա միաժամանակ գտնում է, որ «այս ունիթոռական գրականությունը, հարկավ, գրական արժեք չունի» (էջ 404):

Այնուհետև, Աբեղյանը, դուրս չգալով գիտական սովորական վերլուծության սահմանից, տալիս է հետևյալ գնահատությունը. «Ունիթոռների նախանձախնդրությունը լատին եկեղեցու համար այն աստիճանի է հասնում, որ եթե հնար ունենային, հայոց լեզուն կփոխարինեին լատիներենով, բայց որովհետև այդ անել անկարելի էր, ուստի նրանք հայոց գրական լեզուն ձևում են ըստ լատիներենի. կիրառում են նորաստեղծ հոլովական ու խոնարհման ձևեր, նոր տեսակի նախդիրներ, բառերի լատինաձև շարադասություն ու համաձայնություն, լատիներենի հետևողությամբ կազմված նոր բառեր և արտահայտություններ և այլն: Այսպիսով առաջ է գալիս մի «տարօրինակ լեզու», մի լատինաբան հայերեն, որ բացի հայոց լեզուն խանգարելուց ոչ մի բանի և ոչ ոքի պիտանի չի եղել: Այս ունիթոռական աղճատ լեզուն իր գրականությամբ հանդերձ բավական գործունեություն է ունեցել և երկար է տևել, մինչև նույնիսկ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին» (էջ 404):

Դժվար չէ նկատել, որ նման նկարագրությանը և «սովորական» մեկնաբանությանը չի հաջորդում այն իրական, սպասելի գնահատությունը, որը պիտի տրվեր երևույթին ոչ միայն ինքն իր մեջ, առանձին վերցված, այլև ողջ հայ մշակույթի և մասնավորապես հայ գրականության զարգացման տեսակետից: Իսկ դրա պատճառը, կարծում ենք, այդ դարերի այսպես կոչված «ունիթոռական» գրականությանը ժամանակին բավարար չափով տեղյակ չլինելն է:

Ռ.Իշխանյանը մեզ հետաքրքրող հարցերին անդրադառնում է ոչ անմիջականորեն, այլ այն դեպքերում, երբ դրանք այս կամ այն չափով առնչվում են հայ գրքի և հայոց տպագրության պատմությանն առհասարակ: Իսկ դա, ինչ խոսք, առաջ է բերում ոչ պակաս հետաքրքրություն հատկապես ժամանակի ընդհանուր լեզվի և տպագրվող «գրոց» լեզվի առնչության տեսակետից: Այս առումով հարկ է անդրադառնալ Ռ.Իշխանյանի երկու աշխատությանը²:

¹ Մ.Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 403–408: Գ.Չարհանյալյանն այդ ժամանակը նշում է 1316 թվականը: Տե՛ս Գ.Չարհանյալեան, Պատմություն հայերեն դպրութեյան, էջ 9:

² Ռ.Իշխանյան, Հայ գրքի պատմություն, հ.1 (Հայ տպագիր գիրքը 16–17-րդ դարերում), Երևան, 1977: Նույնը, Հայ գիրքը. 1512–1920 թթ., Երևան, 1981:

Առաջինում հեղինակը լատինաբանության և լատինաբան հայերենի հարցերը քննարկում է հատկապես Ռսկան Երևանցու անունով հայտնի տպարանի գործունեության առնչությամբ: Պարզվում է, որ այդ տպարանն աշխատել է այնպիսի պայմաններում, որ տպագրիչներն այս կամ այն կերպ պիտի առնչվեին Հռոմի կաթոլիկական իրավասությանը: Ուստի մի կողմից՝ հայ-լատինական հարաբերությունն իբրև արտաքին հանգամանք, էական դեր է խաղում ռսկանյան տպարանի գործունեության մեջ, իսկ մյուս կողմից՝ ժամանակի լատինաբան հայերենին տուրք տալը սոսկական միջոց է «ռսկանյան» գրքերն անվրեպ լույս ընծայելու ճանապարհին: Այս աշխատության մեջ օբյեկտիվ չափանիշներով է գնահատվում լատինաբանության ազդեցությունը ժամանակի հայ մշակույթի վրա առհասարակ և լատինաբան հայերենի վրա՝ առանձնապես:

Ռ.Իշխանյանի հիշյալ երկրորդ աշխատությունը ծավալով ավելի սեղմ է, և նրանում ընդգրկված հարցերը քննվում են հակիրճ շարադրանքով: Եվ սա նշանակում է, որ մեզ հետաքրքրողը ևս զբաղեցնում է համեմատաբար քիչ տեղ: Դրանք թուուցիկ կերպով արծարծվում են աշխատության այն մասում, որտեղ քննվում է 17-րդ դարում հայկական տպագրության պատմությունը (էջ 44-70): Դրանք հիմնականում վերաբերում են Հռոմի արևելյան քաղաքականությանը, որի հետևանքով հայության որոշ շրջաններ ստիպված բռնում են ուժացման ուղին, ազդվում է ազգային մշակույթը՝ կրելով «եվրոպականացման» կնիքը, լատինաբան հայերենը ենթարկվում է լուրջ փոփոխությունների: Եվ այս ամենը երևան է գալիս հայկական տպագրության գործի աննախադեպ ծավալման պայմաններում: Այս և նման հարցերի քննության ընթացքում Ռ.Իշխանյանը հասնում է բավականին ուժագրավ մեկնաբանումների և ինչ-որ չափով լիարժեք գնահատումների:

Հայ-լատինական հարաբերություններն իրենց մեկնաբանումն են գտել նաև հայ փիլիսոփայական մտքի պատմությանը նվիրված զգալի թվով աշխատություններում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Վ.Չալոյանի (1905-1981) աշխատություններում հայ-լատինական առնչությունների հարցերը չեն դարձել առանձին ուշադրության առարկա: 17-18-րդ դդ. հայ փիլիսոփայության մեջ երևան եկած կաթոլիկական-լատինաբան մտայնությունն իր հեռավոր և թույլ արտացոլումն է գտել Վ.Չալոյանի մի հոդվածում, որն էլ անցել է նրա հետագա աշխատություններին¹: Այստեղ բուն խնդիրը դավանանքի ուղղափառ կողմին հարող հայ փիլիսոփաների (Միմ.

¹ Վ.Չալոյան, XVII–XVIII դարերի հայ փիլիսոփայության ֆեոդալական ուղղության գնահատման հարցի շուրջը.–ՊԲՀ, 1958, 1, էջ 135–153: Տե՛ս նաև՝ В.К.Чалоян, История армянской

Ջուղայեցի, Ստ. Լեհացի և ուրիշներ) հայացքների քննությունն է: Եվ այդ առնչությամբ խոսվում է լատինաբան այն գործիչների մասին, որոնք գաղափարապես հակառակվել են հիշյալ մտածողներին:

Լատինաբանությունը համեմատաբար լայնորեն է մեկնաբանվում Հ.Գաբրիելյանի աշխատություններում¹: Երևույթը քննվում է «Մտավոր բարձր վերելք և ունիթորների պատմական դերը» հատկանշական վերնագրի տակ: Հեղինակը գտնում է, որ դա մշակութային մի շարժում է, որը երևան է գալիս 12-րդ դարից ի վեր, Կիլիկիայում ֆրանցիսկյան, իսկ բուն Հայաստանում դոմինիկյան կրոնական կազմակերպությունների ջանքերի շնորհիվ: «Ուստի 13-14-րդ դարերից սկսած հայերին եվրոպական կուլտուրայի հետ կապող վերոհիշյալ ուժերն օբյեկտիվորեն արդեն դրական գործ էին կատարում, չնայած նրանց հետապնդած քաղաքական նպատակները ռեակցիոն էին, որչափով որ նրանք ձգտում էին հայերին պապի էքսպանսիվ քաղաքականության գործիքը դարձնել» (էջ 117):

Հ.Գաբրիելյանը կաթոլիկ միսիոներների գործունեության մեջ բացասականից զատ տեսնում է նաև դրականը: Այս առումով նա գրում է. «Սակայն, դրա հետ միասին, չպետք է ուրանալ նաև դրանցից ոմանց օբյեկտիվորեն կատարած կուլտուրական դրական գործը, թեկուզ, օրինակ, թարգմանչական գործունեությունը, որն օբյեկտիվորեն նպաստեց հայերին եվրոպական կուլտուրայի հետ ևս ծանոթանալու» (էջ 119-120): Եվ այսպես, հարցին մոտենալով մշակութային արժեքավորման տեսակետից, Հ.Գաբրիելյանը այդ շարժումը վերջիվերջո համեմատում է Մխիթարյանների գործունեության հետ՝ գտնելով, որ կրոնական հավատքի ջատագովները բացասաբար են վերաբերվել թե՛ մեկին, թե՛ մյուսին (էջ 120): Գաբրիելյանը միաժամանակ գտնում է, որ միարարներն, այնուամենայնիվ խթանեցին հայ իրականության մեջ նախկինում դրսևորված հունական մշակույթին իրազեկ լինելուց հետո տեղեկանալու լատինական մշակույթին, այս դեպքում ևս յուրացնելու նրա դրական արդյունքը: Ըստ այդմ էլ նշվում է, որ «Բարունին, Որոտնեցին, այնուհետև Տաթևացին հայ առաջին փիլիսոփաներից եղան, որոնք այդ բանը հասկացան ու կանգնեցին եվրոպական մտքի դրական արդյունքների լայն օգտագործման ուղու վրա» (էջ 121):

философии (древний и средневековой период), Ереван, 1959, էջ 308 – 341: Նույնը՝ Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 459–496:

¹ Հ.Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ.2, Երևան, 1958, էջ 112–121: Տե՛ս նաև՝ Գ.Գաբրիելյան, Очерк истории армянской философской мысли, Ереван, 1962. Օր յե, История армянской философии, Ереван, 1972: Նույնը, Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1976:

Հայ-լատինական առնչությունների հարցերը Ս.Արևշատյանը քննության է առնում իր աշխատություններից մի քանիսում¹, կապված հայ փիլիսոփայական մտքի ընդհանուր պատմության և նրա ականավոր ներկայացուցիչների համապատասխան հայացքների ուսումնասիրության հետ: Ընդհանուր առմամբ նկատելի է, որ այդ հարաբերությունները որոշակի դեր են խաղացել միջնադարի հայ փիլիսոփայության զարգացման գործում: Կոնկրետ դեպքում կարելի է առանձնացնել հետևյալը:

Աշխատություններից առաջինում այդ մասին խոսվում է «Տաթևացու աշխարհայացքի սոցիալ-քաղաքական արմատները» մասում (էջ 35-45): Այստեղ Արևշատյանը քննարկում է XIV դ. Հռոմի ուղարկած «նվիրակների» Հայաստան ներթափանցելու, թարգմանություններով և քարոզներով զբաղվելու իրողությունները, ներկայացնում է այդ հոսանքի դեմ պայքարող մեծ մտածողների, հատկապես Գրիգոր Տաթևացու ձեռնարկած թե՛ կրոնական-եկեղեցական և թե՛ գաղափարաբանական ընդդիմությունները: Ուստի և նշվում է, որ «հատկապես դրա համար 13-14-րդ դդ. հայ փիլիսոփայական միտքը, ծառայելով կաթոլիկական էքսպանսիայի դեմ պայքարի գործնական խնդիրներին, ուներ գործուն բնույթ, ձգտում էր իրեն հակադրել Արևմուտքի փիլիսոփայությանը, որը տարածվում էր Հայաստանում լատինամոլների կողմից» (էջ 44):

Այնուհետև, Ս.Արևշատյանն անդրադառնում է այն իրողությանը, թե կաթոլիկական աստվածաբանության ոգով տոգորված փիլիսոփայական մտքին հակադրվելու համար բուն Հայաստանում և Կիլիկիայում բուռն ջանքեր են գործադրում փիլիսոփայական բազմաթիվ հարցերում, հատկապես գոյաբանության, իմացաբանության և տրամաբանության բնագավառում: Ստացվում է այնպես, որ հայ փիլիսոփայական միտքը յուրացնում է եվրոպականի արժեքավոր կողմը և մերժում խոտելին և դոգմատիկը, սովորականը (էջ 44-45):

Երկրորդ աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է միարարների դեմ ծավալված այն անհաշտ պայքարին, որը մղում էին հայ նոմինալիստները, Հատկապես Եսայի Նշեցին և Հովհան Որոտնեցին, հետագայում Գրիգոր Տաթևացին իրենց ավանդապահ, փորձառու ու խորաթափանց հայացքներով, իրենց դպրոցներով հանդերձ (էջ 82): Այդ պայքարն ոչ միայն կրում էր գիտական և

¹ *С.С.Аревшатыан, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957. Նույնը, Նորմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում.*— «Բանբեր Մատենադարանի», հ. 6, Երևան, 1962, 6, էջ 75–96: *Он же, К истории философских школ Средневековой Армении (XIV в.), Ереван, 1980:*

գաղափարական բնույթ, այլև ելնում էր հայ իրականության և հատկապես վերջինիս գոյապահպան մշակույթի խնդիրներից:

Մեզ հետաքրքրող հարցերի առումով առավել կարևոր է Ս.Արևշատյանի հիշյալ երրորդ աշխատությունը, և դա այն բանի համար, որ ամբողջովին նվիրված է հայոց շրջանում ծավալված միարարական շարժմանը և նախ առաջին պարագլուխ Բարթուղիմեոս Մարաղացու գիտական և ավելի կոնկրետ՝ փիլիսոփայական հայացքների վերլուծությանն ու գնահատությանը: Իսկ դա նշանակում է, որ աշխատության մեջ հայ-լատինական հարաբերությունների սկզբնական խնդիրները քննարկվում են լայնորեն: Այստեղ տրվում է սկզբնավորվող միարարական շարժման գաղափարաբանական վերլուծությունը, այն գնահատվում է հայ փիլիսոփայական մտքի զարգացման մեջ ունեցած կարևորության և խաղացած դերի տեսանկյունից:

17-րդ դ. հայ փիլիսոփայական մտքի պատմության ուսումնասիրության գործում Հ.Միրզոյանը փորձել է որոշակի ուշադրություն հատկացնել հայ-լատինական այն հարաբերություններին, որոնք հանդես են գալիս տվյալ ժամանակաշրջանում և տեղ զբաղեցնում հայ մշակույթի, գիտության տարբեր բնագավառներում առհասարակ: Այս տեսակետից հիշենք նրա երկու աշխատությունը¹: Եթե առաջինը մեկ առանձին հեղինակի հայացքների քննությունն է, ապա երկրորդը ներկայացնում է ողջ դարաշրջանի հասարակական-քաղաքական կացությունը, ներառում է փիլիսոփայական հիմնական հարցի լուծումը, շոշափում ճանաչողության տեսության որոշակի խնդիրներ, անդրադառնում է ժամանակի հայ տրամաբանական մտքի պատմությանը:

Հարցերի և խնդիրների նման շրջանակը, ինչ խոսք, պայմանավորված է համապատասխան նյութի և տվյալների ընդգրկման հանգամանքով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ներկայացվում է հայ իրականության և մշակույթի մեջ ժամանակին գոյություն ունեցած և հակոտնյա գոյակցած գաղափարական-մշակութաբանական երկու հոսանքների՝ ուղղափառ (ոչ կաթոլիկական) և կաթոլիկական աշխարհայեցողությամբ տոգորված գործիչների փոխհարաբերությունը: Նա հպանցիկ ձևով անդրադառնում է նաև Կղեմես Գալանոսի, Հովհաննես (Հոլով) Կոստանդուպոլեացու, Ռսկան Երևանցու և ուրիշների գիտական և մշակութային գործունեության վերագնահատման և արժեքավորման խնդրին, գտնում է, որ 17-րդ դ. հայ փիլիսոփայական մտքի

¹ Հ.Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, Երևան, 1971: Նույնը, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983:

պատմության մեջ այդ գործիչների դերը նույնքան գնահատելի է, որքան մյուս ուղղության ներկայացուցիչներինը: Անկախ դավանանքի և աշխարհայացքի տարբերություններից, հիշյալ գործիչները կարևոր դեր են խաղացել հայ հասարակական մտքի, նոր գրական հայերենի, ինչպես նաև հայ տպագրության պատմության մեջ:

Լատինաբանության հարցերը մասնակիորեն շոշափվում են նաև հայոց եկեղեցու պատմությանը վերաբերող ուսումնասիրություններում: Դրանք թեև ընդհանուր առմամբ աչքի են ընկնում գաղափարաբանական միտումնավորությամբ, կրում են ընդգրկվող նյութի և ժամանակի աշխարհայեցողության ազդեցությունը, այնուհանդերձ դրանցում եղած անհրաժեշտ նյութը ոչ թե պետք է տեսնել, այլ օգտագործել՝ առաջնորդվելով գիտական և տեսական ճիշտ մեթոդաբանությամբ:

Ստորև անդրադառնում ենք դրանցից մեկին, ըստ որում, մեր կարծիքով, համեմատաբար կարևորին: Խոսքը վերաբերում է Վարդան Ըստկարյանի (1843-1886 թթ.) մի աշխատությանը¹: Այստեղ ամփոփ ձևով քննության է առնվում քրիստոնեական հայ եկեղեցու պատմությունը սկզբից մինչև իր օրերը: Նյութի շարադրանքը բավականին սեղմ է, գնահատությունները՝ փոքր-ինչ միակողմանի ու ակնարկային: Մեզ հետաքրքրող հարցերին հեղինակն անդրադառնում է աշխատության զանազան մասերում, ըստ որում ոչ անկախ իր նախորդների հայտնած տեսակետներից ու կարծիքներից, Ըստկարյանը վերլուծում է միարարական շարժման էությունը, հիշատակում է կարևորագույն կենտրոնները, բացատրում առաջացման շարժառիթներն ու պայմանները:

Կաթոլիկական պրոպագանդայի հետևանքով ծավալված այդ շարժումը հեղինակի կողմից գնահատվում է միանգամայն առարկայորեն, առանց որևէ ընդգծված վերաբերմունքի: Իսկ դա գցում է աշխատության մեջ հարցերի գնահատման հստակության աստիճանը: Այստեղ քննության է առնվում միարարական շարժման գաղափարական տարածումը թե՛ մայր հայրենիքի, թե՛ հայկական զանազան գաղթավայրերի հարաբերությամբ: Հայ-լատինական հարաբերությունները նկարագրվում են ընդհանուր եկեղեցական հարաբերությունների ուրվապատկերում, իբրև լայն տարածում գտած երևույթի մի տեղական դրսևորումը և արտացոլումը: Ուստի և՛ Ըստկարյանի աշխատությունը կարելի է հաշվի առնել միմիայն այս տեսակետից:

¹ Եկեղեցական պատմութիւն հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ, գրեց Վարդան Ըստկարեան, Վիեննա, 1872:

Էջմիածնի հոգևոր միջավայրի ներկայացուցիչներից Աբել Մխիթարյանը (1804-1873 թթ.) հանդես է գալիս մի ընդարձակ հոդվածաշարով¹, որտեղ հին ժամանակներից մինչև նոր ժամանակները կրոնական դեպքերի և կաթողիկոսական անցքերի ֆոնի վրա անդրադառնում է ուղղափառ եկեղեցուց շեղվողների գործունեության վերլուծմանն ու մեկնաբանությանը: Մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ խոսվում է հոդվածաշարի երկրորդ մասում (էջ 328-331, 363-370): Այստեղ հեղինակն անդրադառնում է Գրիգոր Անավարզեցու լատինամետ գործունեությանը, նրան հաջորդած Հակոբ Բ Սսեցուն: Հատուկ կերպով նշվում է, որ վերջինիս «ժողով արար ոմանց եպիսկոպոսաց և վարդապետաց, յորս էր Չաքարիա Ծործորեցի և Յովհան Երզնկացի և հաւանութեամբ նոցին գրեաց թուղթ ընդհանրական՝ առ ամենայն Հայս՝ չհալածել զՅովհան Քռնեցին և զընկերս նորա՝ այն է գունիթոռս, այլ լինել ձեռնառու. բայց տեսեալ եթէ ոչինչ լուսաւ այնմ ազգն, այլ առաւել շփոթէ յունիթոռաց անտի. գրէ առ Յովհան Քռնեցի՝ չխրտուցանել զազգն» (էջ 363): Այս տվյալը, իհարկե, նորություն չէ, և եղած փաստերի հիման վրա է, որ հնարավոր է լինում այդ մասին շարադրել ուշադրության բուն առարկայի շրջանակներում: Դրա սքանչելի ապացույցն է այն, որ, օրինակ, Աբ.Մխիթարյանը բաց է թողնում 1350-1380 թթ. եկեղեցական դեպքերի շարադրանքը՝ պատմագրական տեղեկությունների և տվյալների չգոյության պատճառով (օրինակ, տե՛ս Առ. Դավրիժեցի, Չաք. Քանաքեռցի, Միք. Չամչյան և ուրիշներ):

«Արարատ» ամսագրի էջերում տպագրվում է ևս մեկ հոդվածաշար, որն ունի նույն բնույթը, հեղինակն է (համառոտումով) Գ.Ա.Ա.-ն²: Այստեղ ներկայացվում է լեհահայ գաղութի զանգվածային, աստիճանական հավատափոխությունը Նիկոլ եպիսկոպոսի ջանքերի անմիջական վատությամբ: Այդ դավանափոխությունը, որ իրականացվել էր 17-րդ դ. առաջին կեսին, ժամանակին գրավել էր Առաքել Դավրիժեցու ուշադրությունը, ինչպես նաև վերջինիս տվյալների օգտագործմամբ մեկնաբանվել էր Միք. Չամչյանի կողմից: Այս տեսակետից էլ սույն հոդվածը, կարծում ենք, պարզապես վերաշարադրումն է եղած փաստերի և իրադարձությունների, թեև դրանց կողքին կան նոր փաստերի չնչին ներմուծումներ: Բոլոր դեպքերում հարցի լուծումը տրվում է սահմանափակ իմացաբանության լույսի ներքո:

¹ *Ա.Մխիթարեան*, Պատմութիւն հալածչաց, ուրացողաց, հերձուածողաց եւ բաժանելոց յեկեղեցոյն հայոց. «Արարատ», 1875, էջ 5, 44-45, 83-85, 165-171, 206-210, 247-254, 287-294, 323-331, 363-370:

² *Գ.Ա.Ա.*, Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսին. «Արարատ», 1877, էջ 7-11, 45-50, 84-88, 128-130, 167-173, 203-208, 244-254:

Հարցին անդրադառնում է Իս.Սրապյանն իր մի հոդվածում¹: Հանգամանքների բերումով հեղինակը (1909 թ. 25-30, V) աշխատելով Կ.Պոլսի Գալաթիա թաղում գտնվող դոմինիկյան Ս.Պետրոս եկեղեցու դիվանում և այդտեղ էլ ծանոթանալով ֆրանսիացի հեղինակ Ռ.Պ.Մորտիեի «Պատմություն ընդհանուր միաբանողաց կարգի եղբարց քարոզողաց 1324-1400» անունով գրքին (երեք հատոր), վերջինիս երրորդ հատորում տեղեկանում է այն առնչություններին, որ եղել են հայոց և միարար այլազգի գործիչների միջև: Հոդվածագիրը վկայակոչում է այնպիսի փաստեր, որոնք, իր իսկ կարծիքով, նոր լույս են սփռում այդ մարզում եղած հարաբերությունների վրա: Դրանք հիմնականում վերաբերում են լատինամետ կրոնավորների գործունեության արտաքին հանգամանքներին և գրեթե ամբողջովին անծանոթ են հայագիտությանն այլ աղբյուրներից: Հարկ ենք համարում նշելու, որ այդ տվյալները խիստ միակողմանի են և քիչ բանով են նպաստում հայ-լատինական ընդհանուր հարաբերությունների պատմական և մշակութային ամբողջական մեկնաբանմանը: Թերևս միակ նորությունն այն է, որ տեղեկանում ենք ֆրանսիացի հեղինակի նմանօրինակ գրքի գոյության մասին, և որ նրանում տրվում է հայ-միարարկան շարժման կրոնական առնչությունների ինչ-որ չափով հետևողական շարադրանքը:

Լատինաբանությանը թռուցիկ կերպով անդրադառնում է Ն.Անդրիկյանը (1879-1936 թթ.) իր մի հոդվածում²: Այդ մեկնաբանությունը դուրս չի գալիս հայտնի դրույթների և ձևակերպումների սահմաններից: Հիշենք, որ ընդունելի չէ այն միտքը, թե «լատինաբանութիւնը արուեստն է հայերէն ձայներով լատիներէն խօսելու» (էջ 440): Կան հարցերի միակողմանի քննարկման ինչ-ինչ նկրտումներ և այլն:

Նշենք նաև Գ.Ոսկյանի (1894-1949 թթ.) մի հոդվածը³, որտեղ ավելի շուտ արծարծվում են նեղ դավանաբանական հակամարտության և կրոնական գործի հետ կապված հարցեր, քան բուն՝ պատմամշակույթային և լեզվական խնդիրներ:

Հիմնականում նույնպիսին է հարցի մեկնաբանությունը Գ.Պետրովիչի (ծն. 1916 թ.) հոդվածում⁴: Այստեղ, սակայն, ուշադրություն է գրավում այն, որ հեղինակը, հիմնվելով մեզ հասած վավերագրերի տվյալների վրա, հայ-հռոմեական հարաբերությունները դնում է երեք շրջանի մեջ՝ ա) «յարաճուն

¹ *Իս.Սրապյան*, Հայք և ունիթորք. «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1909, էջ 321–327:

² *Ն.Անդրիկյան*, Ուրուագիծ հայ մատենագրութեան. «Բազմավէպ», 1911, էջ 433–443:

³ *Գ.Ոսկյան*, Համառօտ ակնարկ մը քարոզող եւ միաբանող եղբարց պատմութեան Հայաստանի մէջ. «Բազմավէպ», 1922, էջ 19–21, 49–51, 138–139, 229–231, 262–263, այլն՝ 1923, էջ 35–39:

⁴ *Գ.Պետրովիչ*, Միաբանող եղբայրներ եւ հայ եկեղեցին (1330–1360) – «Հանդես ամսօրեայ», 1969, էջ 357–370, 465–486, այլն՝ 1970, էջ 73–74:

զարգացման շրջան» (1074-1198 թթ.), բ) «հաստատ միութեան հաւատոյ եւ սիրոյ շրջան» (1198-1288 թթ.) և գ) երրորդ շրջան (1298-1355 թթ.)¹: Հեղինակը իրավամբ գտնում է, որ «...միաբանող եղբարց արժանիքը պէտք է համարուի մշակութային և գիտական մարզէն ներս, և թէ անոնք գլխաւոր գործիչներ ու ռահվիրաներ եղան արևմտեան գիտութեանց և մտատրական յառաջադիմութեանց Հայաստանի և Կիլիկիոյ մէջ» (էջ 466): Սա նորություն չէ, այլ հիշարժան դիտարկում:

Այնուհետև, հեղինակը, ոչ անկախ Մ.Ա.Ուդենրիյնից², շեշտում է այն հանգամանքը, որ քարոզողների առաջին սերունդը կրթվել է Գլաձորում, երկրորդ սերունդն իր «առաքելությունն ու գործունեությունը» այլ կերպ առաջ տարավ, որովհետև առաջին սերունդը շուտով ցրվում է և վերանում «մեծ ժանտախտի պատճառաւ» (էջ 467): Սա կարևոր է իբրև միաբարական շարժման ավանդույթի փոխակերպման, ձևափոխման մի հանգամանք:

Գրանցից բացի, հանդիպում են լատինաբան այս կամ այն գործչին վերաբերող առանձին հոդվածներ³, որոնցում մեկնաբանվում են այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր են ոչ միայն տվյալ գործչի խաղացած դերի առումով, այլև տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հարցերի տեսակետից:

Հայոց եկեղեցու պատմությանը նվիրված աշխատություններից թերևս առավել ուշագրավը Մ.Օրմանյանի (1841-1918 թթ.) հայտնի ուսումնասիրությունն է⁴, որում հայ-լատինական հարաբերությունների հարցը դրված է ավելի լայն ուղղվածության մեջ, քան պահանջվում է հիմնական խնդիրների շրջանակում: Այդ հարաբերություններն այստեղ վերլուծվում են ոչ միայն հայոց եկեղեցու, այլև հայ պատմամշակութային առաջընթացի, հայ իրականության եկեղեցական-իրավական պատմության հենքի վրա: Մեզ հետաքրքրող հարցերին վերաբերող նյութերի և փաստերի օգտագործումից և առհասարակ շարադրանքից երևում է, որ Օրմանյանը գլխավորապես հենվում է Կղեղես Գ-ալանոսի աշխատության վրա⁵:

¹ Նույն տեղում, էջ 358–362:

² Տե՛ս *Marcus Antonius v.d. Oudenrijn*, *Linguae Haicanae Scriptores*, Bern, 1960, էջ 95–96.

³ Նշենք դրանցից մի քանիսը. *Մ.Սեթեան*, Հայկաբան վարդապետ մի Յիսուսեան. «Բազմավէպ», 1922, էջ 299–303, 326–328, 254–257, այլև՝ 1923, էջ 3–5: Հոդվածը վերաբերում է Հակոբ Վիլյոտին: Ոսկան վարդապետի Նամակամին. «Բազմավէպ», 1966, էջ 293–308, 1967, էջ 130–134: *Ն.Տէր Ներսեսեան*, Ոսկան վարդապետի քերականական ըմբռումները. ն.տ., էջ 310–321: *Գ.Արզարյան*, Սիրաքի գրքի թարգմանության նորագույն հոդվածներ. «Էջմիածին», 1966, էջ 59–70, *Ս.Ճէմճէնեան*, Ոսկանի Մաշտոցը. «Բազմավէպ», 1966, էջ 284–291: *Կ.Ամասունի*, Ոսկան վարդապետ Երևանցի եւ իւր ժամանակը. ն.տ., 1974, էջ 259–277, 1975, էջ 5–51, 245–283, 1976, էջ 14–51, 221–267:

⁴ *Մ.Օրմանեան*, Ազգապատում, հայ ուղղափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութեամբ, հ. Բ, մաս Ա, Բ, Գ, Պէյրութ, 1960:

⁵ *Կղեղես Գ-ալանոս*, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հհ. 1-2, Հռովմ, 1650–1661:

Անդրադառնանք այն կարևորագույն հարցերին, որոնք այս կամ այն կերպ շոշափվում են Օրմանյանի սույն աշխատության մեջ, և որոնք տվյալ դեպքում հետաքրքրում են մեզ:

Օրմանյանն անդրադառնանում է ֆրանցիսկյան միաբանությանը («կրտսեր եղբարք» -minor), հիմնադիրը՝ Փրանկիսկոս Ասիզացի (1182-1226 թթ., իսկ բուն անունը՝ Giovanni Bernardone, Փրանկիսկոս է կոչվել ֆրանսերեն սքանչելիորեն իմանալու համար), այլև նույնի հիմնադրած «աղքատ կլարյանք» միաբանությանը (վերջինս՝ կանանց միաբանություն): Այդ առումով նշվում է հատկապես հետևյալը. «Կիլիկիոյ հայ թագաւորութեան մէջ ալ լատինականութիւն տարածելու մեծ միջնորդը փրանկիսկեան կրոնաւորները եղան, որոնք նոյն ինքն արքունեաց մէջ՝ գործ և պաշտօն ըստանձնեցին, և օգտուելով լատիններու հետ խնամփութիւններէն, հետզհետէ լատինասիրութիւնը աճեցուցին Կիլիկիոյ արքունիքին և ժողովուրդին մէջ, վերջէն ուղղակի հայ եկեղեցիի մէջ մտնելու համար» (էջ 1712):

Այնուհետև, հեղինակը խոսում է դոմինիկյանների (հիմնադիրը՝ Դոմինիկոս Կուզմա-Dominicus Gusman. 1170-1221 թթ., Իսպանիայի Կալազորիա քաղաքում) մասին, որոնք ևս թափանցում են հայության շրջաններում: Սրանք իրենց կոչում են «քարոզիչ եղբայրներ»՝ կենտրոն ունենալով Իտալիայի Բոլոնիա (Bologna) քաղաքը: Այս ուղղության հետևորդն է, ինչպես գիտենք, Բարդուղիմեոսը, որը հիմնվեց Նախիջևանում իր 12 միարար հայ միաբանների հետ (հմմտ. ն.տ., էջ 1845): Օրմանյանը Կիլիկիայում երևան եկած հռոմեադավան նկրտումները բնորոշում է հետևյալ կերպ. «Անոնք տիրապէս հռոմեադաւան չեղան, ինչչափ ալ այժմեան հռոմեադաւանները ջանան անոնք իբրև իրենց նախնիքը ցուցնել, և ոչ ալ զայն հիմնաւորապէս և ամբողջապէս այլևայլել յաջողեցան, լատիններու մօտեցան, անոնց հետ ապրեցան, անոնց գործակցեցան, համաձայնելու ձեռնարկեցին, բայց հայազգի և հայադաւան ըլլալէ չի դադրեցան, հռոմեադաւան հայեր չեղան ու չի կոչուեցան, այլ իրենց անորոշ կացութեան յատկանիշն եղաւ *աղթարմայ* կոչումը» (էջ 1850):

Օրմանյանը ևս, ինչպես Ալիշանը ժամանակին, նկատում է, որ «հայերէնագէտ լատիններուն տկարութիւնը մէկ կողմէն, և լատինագէտ հայերուն բնագիրներու բառ առ բառ հետևելու խղճմտութիւնը միւս կողմէն, տարօրինակ լեզու մը ստեղծած են, որ բաւական ընդարձակութիւն գտած և տարաբախտ ազդեցութիւն ունեցած է դարուս մէջ և առյապա» (էջ 1856-1857):

Բանասերն իրական ձևով է ներկայացնում միարարների գործունեությունը: Նա գտնում է, որ այն առաջ էր գնում ոչ թե անընդհատական

վերելքի, այլ մշտական տարութերումների՝ վերելքի և վայրէջքի ուղիներով: Այս առումով հատկանշական է նրա հետևյալ մեկնաբանությունը. «Մէկ կողմէն միջոցներու նուագութիւնը և միւս կողմէն կերպարանին փոփոխութեան պատճառով ունիթորները չկրցան այս ատենները մեծ գործունեութիւն ունենալ, մինչև որ Իննովկենտիոսի կարգադրութեամբ յաջողեցան նորէն կազմուիլ և զօրանալ, և հայ եկեղեցւոյ դէմ յարձակումներու ձեռնարկել: Իրենց կենտրոնը հաստատուեցաւ Նախիջևան և Ջահուկ և Շահապունիք գաւառներու մէջ, բայց հետզհետէ Ջահուկի մէջ ամփոփուեցան և այս պատճառովը Ջահկեցի կոչուեցան: Անոնք որ Մեծ Հայոց կողմերը հռոմեադաւանութեան կը հետևէին, ալ անձուկ և սահմանափակ կերպով, քանի մը դարեր տևող գոյութիւն ունեցան» (էջ 1918): Ուրեմն պարզվում է, որ ոչ միայն ուղղափառ հայության ընդդիմությունը, այլև իրենց ներքին միջոցները չեն գորել, որ միարարական շարժումը հասնի իր բուն նպատակի լիարժեք իրագործմանը:

Այնուհետև, Օրմանյանը հատուկ ուշադրություն է դարձնում միարարական շարժմանը հակահարված տվող ուղղության («ուղղափառների») գործունեությանը՝ հատկապես այդ գծով իբրև օրինակ առնելով Գրիգոր Տաթևացու, Հովհաննես Որոտնեցու, Հակոբ Դրիմեցու ջանքերը:

Հետագայում, հատկապես 17-րդ դ., Հռոմը էքսպանսիայի նոր այլք է ուղղում դեպի Կ.Պոլիս և վրաց ու հայոց կողմերը: Այս առումով Օրմանյանը ուշադրության է արժանացնում գլխավորապես Կղեմես Գալանոսի ծավալած գործունեությունը, որն այստեղ, ինչ խոսք, վերլուծվում և գնահատվում է բավականին մանրամասն, սակայն առհասարակ միակողմանի ձևով է քննության առնվում նաև 17-րդ դ. այլ գործիչների՝ Բարսեղ Կոստանդնուպոլսեցու, Հովհաննես Կոստանդնուպոլսեցու, Պողոս Փիրոմալու, Վարդան Հունանյանի և այլոց խաղացած դերը միարարական շարժման ընթացքում և հայ մշակույթի զարգացման գործում:

Մաղ. Օրմանյանի աշխատությունը, որը ներառում է առատ փաստեր և վկայակոչումներ, լիովին հիմնված է ոչ միայն ժամանակի գրավոր աղբյուրների, այլև Միք.Չամչյանի և Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրությունների արժանահավատ ընձեռումների վրա: Այդուհանդերձ, նրա պատմական-մշակութաբանական, մասնավորապես եկեղեցական-կրոնագիտական վերլուծությունները բավականին արժեքավոր են մեզ հետաքրքրող հարցերի լայն ուսումնասիրման պատմության համար:

Լատինաբանության արտաքին հանգամանքներն արժարժվում են նաև Գար.Հովսեփյանի (1867-1952 թթ.) հայտնի աշխատության մեջ¹, որտեղ երևույթն առհասարակ քննարկվում է բոլոր կողմերից՝ արժարժելով նաև դրական կողմերը, հիմնական շեշտը դնելով վնասակար հետևանքների վրա: Ըստ Գար.Հովսեփյանի, «...Բարդուղիմեոս եպիսկոպոսին օգնութեան էին եկել և մի խումբ լատին կրոնատորներ, որոնք հաւատափոխութեան քարոզութեան հետ սկսեցին թարգմանութիւններով ևս զբաղուել և լատինական միջնադարեան աստուածաբանական գիտութիւնը, թեպէտ և յոռի ու անպիտան լեզուով, պատուաստել հայոց մէջ» (էջ 288):

Այստեղ ուշադրություն է դարձվում նաև այն հանգամանքին, որ միարարների հակառակորդները (= հայ վարդապետները) քիչ բան չեն արել նրանց դեմն առնելու համար, թեև քիչ էլ բան չեն սովորել միարարներից, իր խոսքերով ասած՝ «կաթոլիկներից ձեռք բերած գեներով պատերազմում էին նրանց դեմ» (ն.տ.):

Վերջապես, Գար.Հովսեփյանը աչքաթող չի անում այն հանգամանքը, որ միարարների դեմ առաջինը դուրս եկածները (Եսայի Նչեցի, Հովհաննես Որոտնեցի և որիշներ) եթե չլինեին, ապա «շատ աւելի վտանգուած կը լինէր հայոց եկեղեցու անկախութեան խնդիրը» (էջ 289):

Ինչպես նկատում ենք, Գար.Հովսեփյանի դիտարկումները դուրս չեն գալիս արդեն հայտնի տվյալների և փաստարկումների սահմաններից, այդուհանդերձ դրանց անդրադառնալը միանգամայն տեղին է, ավելին՝ հարցի պատմության ամբողջացման տեսակետից ոչ պակաս կարևոր:

4. Հարցի գնահատությունը հայերենագիտական աշխատություններում

Հայ - լատինական հարաբերությունների ուսումնասիրման պատմությունը ամբողջական ներկայացնելու համար անհրաժեշտ է առանձին անդրադառնալ նաև հայերենագիտական այն աշխատություններին, որոնցում այս կամ այն չափով շոշափվում են լատինաբանության հետ կապված հարցերը:

Հայերենագետներն այդ հարցերին անդրադարձել են մասնակիորեն, հարակից քննության ձևով: Դրանք առ այսօր չեն եղել առանձին ուսումնասիրության առարկա: Երևույթի գնահատությունը սկիզբ է առնում

¹ Գ.Հովսեփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, II հրատ., Անթիլիաս, 1969, էջ 284-289:

նախանցյալ դարի վերջերից, թեև նկատելի են ավելի վաղ փորձեր՝ կապված հատկապես լատինաբանության հաղթահարման կոնկրետ խնդիրների տեսական մեկնաբանումների հետ:

Լատինաբանությանը փոքրիշատե անդրադառնալն առաջին հերթին բացատրվում է հայ քերականագիտության և հայոց լեզվի պատմության արմատական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մեզանում նման ուսումնասիրություններ երևան են գալիս ժամանակի հայ պարբերական մամուլի էջերում, քերականական աշխատություններում, այլև առանձին մենագրությունների տարբեր մասերում:

Եվ որքան գալիս ենք դեպի մեր ժամանակները, լատինաբանության գնահատությունը դրվում է որոշակի հիմքերի վրա, դառնում է ավելի մասնավոր հարց, արժանանում ավելի լայն ուշադրության: Այդ իրողությունը պատճառաբանվում է նրանով, որ գիտության զարգացման ընթացքում փոխվում, ճշգրտվում են ուսումնասիրությունների մեթոդաբանական հիմունքները, ընդլայնվում է երևույթի գնահատության տեսական-իմացաբանական կողմը:

Նկատի ունենալով հիշյալ հանգամանքները՝ լատինաբանության գնահատությանն անդրադարձած կարևորագույն աշխատություններն այստեղ քննարկում ենք ժամանակագրորեն՝ կապված հարցի պատմության երկու փուլերի հետ (նախանցյալ դարի վերջերից մինչև անցյալ դարի երկրորդ տասնամյակը, այնուհետև վերջինիցս մինչև մեր օրերը), այլև իմացաբանորեն՝ երևույթի գնահատման որակական կողմի առնչությամբ (այս կամ այն հարցին վերաբերող տվյալ գնահատությունը որքանով է առաջ անցնում նախկինում եղածներից):

Լատինաբան հայերենի և լատինատիպ քերականությունների պատմության մեջ շրջադարձային է Միք.Չամչյանի (1729-1823 թթ.) քերականական աշխատությունը¹: Հեղինակը, ինչպես իրավամբ նշում է Գ.Ջահուկյանը, մեզանում հանդիսանում է առաջինը, «որ գրաբարի քերականությունը վերջնականապես ազատեց հունաբանության և լատինաբանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները»²:

¹ Քերականութիւն հայկազեան լեզուի, յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութեան ի Միքայէլ Չամչեանց, Վենետիկ, 1779:

² Գ.Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303:

Չամչյանը լատինաբանության հարցերին տեսականորեն անդրադառնում է իր քերականության «Առաջաբանության» մեջ (էջ Գ-Ժ): Այստեղ համառոտ կերպով նշվում է «հունական ոճով» գրված այն քերականությունները, որոնցում հարկավ տեղ են գտել խոտորումներ բուն հայերենից: Խոսվում է Մխիթար Սեբաստացու քերականության մասին, որտեղ հեղինակը մտադիր է եղել մաքրելու հայերենը խորթություններից, որը մասամբ է կարողացել իրականացնել իր ժամանակին: Շեշտվում է այն մասին, որ Մխիթարը ժամանակին հրահանգ է տվել հետագայում այդ ուղղությամբ ավելի արմատական վերաբերմունք ունենալու, այն է՝ ամբողջապես մաքրել հայերենն ամեն կարգի անհարիր ձևերից և խորթությունից: Վերջինս ըստ էության իրագործվում է Չամչյանի քերականությամբ: Այնուհետև, այստեղ Չամչյանն ավելի մանրամասն է նշում լատինաբան այն խրթին ու անհարիր ձևերի մասին, որոնցով խճողված է եղել հայերենը միառժամանակ: Ուստի և Չամչյանը ոչ միայն քերականական երևույթների շարքում տեղ չի տալիս, այլև ներածականում հատուկ նշում է լատինաբանության վնասների և լատինաբան հայերենի հարուցած լեզվական խճողումների վերաբերյալ:

Գաբրիել Ավետիքյանը (1751-1827 թթ.) որոշակի ավանդ ունի լատինաբանության հաղթահարման գործում, որն արտահայտված է նրա քերականական և բառարանագրական, այլև բանասիրական աշխատանքներում: Նա այս հարցում ավելի շուտ դիմել է գործնական քայլերի: Թերևս տեսական քայլ կարելի է համարել այն, որ իր քերականության մեջ¹, անդրադառնալով հայ և օտար քերականների արածի սեղմ բնութագրմանն ու «զնահատությանը», Ավետիքյանը չի խորշում լատինաբան քերականների աշխատությունները մեկ-երկու խոսքով ներկայացնելուց: Այսպես, «նոր հեղինակներից» նա անդրադառնում է նաև Ֆր.Ռիվոլայի, Կդ.Գալանոսի, Ոսկ.Երևանցու, Հովհ.Հովովի, Խ.Էրզրումեցու, Հակ.Վիլլոտի, Մխ.Սեբաստացու քերականություններին, որոնք ինչպես գիտենք, այս կամ այն չափով տուրք են տալիս ժամանակի լատինաբանությանը, որպիսով ըստ էության հանդիսանում են նմուշ լատինաբան հայերենի՝ առնված տվյալ ժամանակի համար:

Մեսրոպ Տեր-Հարությունյանն իր քերականության¹ առաջաբանում, ինչպես որ արել էր Գ.Ավետիքյանը, տալիս է մի շարք օտար և հայ քերականների աշխատությունների սեղմ պատմությունը, որտեղ հայ քերականներից

¹ Քերականութիւն հայկական, նորոգ քննութեամբ և կարգաւ աշխատասիրեալ Գաբրիէլի Աւետիքեան, Վենետիկ, 1815, էջ 151–162:

ուշադրության են արժանանում հատկապես նրանք, որոնք իրենց քերականագիտական հայացքները ձևակերպել են բուն հայերենի նյութի հիման վրա և կազմել են «հայեցի» քերականություններ: Ըստ այդմ, ի թիվս այլ հեղինակների, ակնարկային գնահատության են արժանանում Ռսկ.Երևանցին («համառօտ քերականութիւնն իմն ըստ լատին ոճոյ տպեաց յԱմստերդամ» - էջ ԻԵ), Յ.Շրյոդերը, Մխիթար Մեքաստացին («շարադրեաց զքերականութիւն իմն ըստ ոճոյ նորոց» - էջ ԻԶ), Միք.Չամչյանը («ըստ ուղիղ հայկաբանութեան անդրացոյց զքերականութիւն իմն», այլև՝ «սորայս քերականութիւնն զերազանցեցաւ զբազմացն առաջնոց»):

Վերջում Տեր-Հարությունյանը նշում է հետևյալ միակողմանի, բայց բավականին ուշագրավ միտքը. «Գտանին յազգի մերում այլևս զանազան հեղինակք արհեստիս քերականութեան, յորոց ոմանք արտաքոյ հայկաբանութեան գոլով իսպառ անօգուտ են, և այլք ոչ այնքան հրատարակեալ գոլով զանց արարաք նշանակել աստանօր» (էջ ԻԶ):

Հայերենագիտական աշխատանքները 19-րդ դ. 20–30-ական թթ. հետո կատարվում են բոլորովին այլ մոտեցմամբ: Հայերենը դառնում է ոչ այնքան բանասիրական-քերականական, որքան լեզվաբանական, մանավանդ համեմատական ուսումնասիրության առարկա: Հատկապես Վենետիկի Մխիթարյանների օգնությամբ հայերենին ծանոթ եղած կամ այն տիրապետելու աստիճան սովորած եվրոպացի լեզվաբանները (Հ. Պետերման, Պ. դը Լագարդ և ուրիշներ) զբաղվում են ոչ միայն հայերեն բնագրերի ուսումնասիրությամբ՝ թարգմանելով և հրատարակելով եվրոպական նոր լեզուներով, այլև համեմատական քերականության հիմքերն են դնում կամ նախապատրաստում՝ նյութ ունենալով հայերենի հնչյունական, բառային և ձևաբանական առանձնահատկությունները:

Հիշենք, որ 1830-ական թթ. լույս էր տեսել «Նոր հայկազյան բառարանը» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837) , որն անսպառ նյութ էր պարունակում հայերենի հին շրջանի բառապաշարի վերաբերյալ, և այն դառնում է համեմատական լեզվաբանությամբ զբաղվող հայերենագետների հետազոտությունների աղբյուրը: Մխիթարյաններն իրենք էին ջանացել բառարանում որոշակի տեղ տալ բառերի ծագման կամ «ստուգաբանության» հարցին՝ բանասիրական վերլուծության սահմաններում, և դա ոչ միայն օգնում էր եվրոպացի հայագետներին գիտական

¹ Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քննութեամբ յօրինեալ Արգրումեցի Տեր Յարութիւնեան Տէր Մեսրոպը, Կ.Պոլիս, 1826:

համեմատական սկզբունքներով մոտենալու հայերենի փաստերին, այլև դրանք համեմատելու այլ լեզուների տվյալների հետ:

Հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության սկզբնավորումը մի տեսակ հետին պլան է մղում այն աշխատանքները, որոնք կարող էին կատարվել նախորդ ժամանակներից եկող սկզբունքներով ու մոտեցումներով: Այս առումով լատինաբան հայերեն դառնում է ոչ կարևոր տարբերակ, իսկ բուն կամ «հայկաբան» լեզուն առաջ է մղվում: Առաջ մղողները մեզանում եղել են Մխիթարյանները՝ իրենց երկու թևերով, որոնց գիտական-բանասիրական ողջ ձեռքբերումը դառնում է համեմատական լեզվաբանության ուշադրության առարկա: Հնդեվրոպական լեզուների ցեղակցության որոշակի խնդիրներ տարբեր կարգի լուծումներ են ստանում թե մյուս լեզուների և թե հայերենի ընձեռած տվյալների օգտագործմամբ: Հայերենը համեմատության եզր է դառնում իր հին գրական՝ գրաբար տարբերակով, այսինքն՝ մյուս տարբերակները, մանավանդ օտար ազդեցության արդյունք հանդիսացողները դուրս են մնում ուշադրությունից:

Եվ բնական է, որ լատինաբան հայերենը պիտի դուրս մնար նման ուսումնասիրությունների շրջանակից: Լատինաբան հայերենի պատմությանն անդրադառնում են ավելի ուշ՝ բանասիրական, քերականագիտական և լեզվի ընդհանուր պատմությանը նվիրված աշխատանքներում (Ն. Ակինյան, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ):

Այդուհանդերձ, 19-րդ դ. առաջին կեսին և հետագայում ևս երևան են գալիս այլ բնույթի աշխատություններ, այսինքն՝ քերականություններ, բանասիրական, լեզվաբանական հոդվածներ և այլն, որոնցում ինչ-ինչ նպատակով և տարբեր չափերով խոսվում է նաև լատինաբան հայերենի մասին:

Լատինաբանության գնահատությանն անդրադառնում է նաև Արսեն Բագրատունին (1841 – 1911 թթ.) իր հոդվածներից երկուսում, այլև հայտնի քերականության վերջաբանում¹: Ամենից առաջ կուզենայինք նշել, որ Բագրատունու հայացքներն առհասարակ կազմում են «բանասիրական ռոմանտիզմի շրջանի»² վառ արտահայտությունը, որն իր դրսևորումն ունի նաև լատինաբանության գնահատության հարցում: Ըստ այդմ Բագրատունին գտնում է, որ 14-18-րդ դարերի գրաբարն իր տարբեր դրսևորումներով ներկայացնում է անկումը «ոսկե» (5-7-րդ դդ.), «արծաթե» (7-12-րդ դդ.) և «պղնձե» (13-րդ դ.)

¹ Ա. Բագրատունի, նորահնար բառերու վրայ. «Բազմավեպ», 1845, էջ 267-271: Նույնը, Հայերեն գրաբար լեզուի յատկութեան վրայ, ն. տ., 1846, էջ 196-204, Նույնը, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 628-632:

² Տե՛ս Էդ. Աղայան, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, 2, էջ 59-60:

հայերեն վիճակների: Բագրատունին հիշյալ երևույթին տալիս է միանման գնահատություն: Դա նկատելի է թե՛ հոդվածներում և թե՛ նշված քերականության վերջաբանի մեջ: Ուստի անդրադառնանք միայն վերջինիս պարունակած նյութին:

Այստեղ նշվում է հետևյալը. «Յաջորդեն դարք երկաթի, խեցի և վատթարագոյն ևս, զորս չէ իսկ արժան հեղինակս և առաջնորդս ասել լեզուիս: Թէպէտ և գտանին ի նոսա ոմանք յոյժ չափատրապէս հետևողք նախնեաց, սակայն ոչ ելանեն ի վեր քան զոճ պղնձի դարուն: Ի չորեքտասան երկաթի դարուն սկսանի ապականութիւն բարբառոյս յանուանեալ Սիարարաց անտի, ի Յովհաննէ Քոնեցոյ, ի Ներսիսէ Պալիենց և ի Յակոբայ քարգմանէ՝ յաշակերտաց Բարթողիմէի քարոզչի: Իսկ յետին թանձր և խոր պղծութիւն հայացի խօսից փոխելոյ ամենևին յոճ լատինական յանճոռնի և յանհեղեղ՝ նորաստեղծ խուժադուժ բայիք և բառիք հանդերձ, եմուտ կալաւ ի մերսն մօտ ի կէս եւթնևտասն դարու: Որոց գլխատր հարք համարելի են Պաւղոս Փիրոմալ՝ քարոզիչ որպէս զԲարթողիմէսն, Ստեփանոս Լեոպօլսեցի կամ Լեհացի և Ոսկան վարդապետ: Ապա և յօրէնս իսկ կարգեցաւ այն ոճ այլատարագ և այլագացի, և քերականութիւն ևս յօրինեցաւ ի Յովհաննէ Յակոբայ Հոլովէ և յազգատեաց և յազգուրաց տէր Բարսղէ յետ կիսոյ եւթնուտասն դարին: Ի սոցանէ վնասակար քան զամենեսեան հաշուելի է Ոսկան վարդապետ, որոյ աղաւաղ տպագրութիւնք Աստուածաշունչ մատենին և եկեղեցական գրեւոյն անցեալ ի բերանս ամենեցուն, և ապա ի Ճաշոցն ևս դրոշմեալ, խանգարեաց և խանգարէ ցարդ ևս զլեզուն ի միտս և ի գրիչս բազմաց, որ սովորութեամբ ի նոյն ընդելեալքն են: Եւ թէպէտ Աստուածաշունչ մատենան տպագրեալ յետոյ ի մենջ ըստ նախնեաց՝ դարման եղև ոչ սակաւ բժշկութեան կաւոր այսր վիրաց, բայց այլոց եկեղեցական գրեանցն ցարդ ևս տևէ ոչ սակաւ եղծումն և տխրեղծութիւն՝ իբրև ի սովորոյթ դարձեալ: Եւ Ճաշոցն ցորչափ ընթեռնու հանապազօր յեկեղեցիս և յատեանս ըստ ոսկանեան աղճատանացն, անհնար է սպառնալու արմատաքի խլել ախտի ապականութեանն» (էջ 632):

Հատվածը, որը բերեցինք ամբողջությամբ, սեղմ ձևով ընդգրկում է միարարական շարժման հատկապես լեզվական բնութագիրը՝ թե ժամանակի և կարևորագույն դեմքերի առումով, թե լեզվական-մշակութային փոփոխության տեսակետից: Ավելի կոնկրետ կարելի է նշել հետևյալը: ա) Բագրատունին ունի միարարական շարժման ավելի իրական ըմբռնում, քան նույնիսկ հետագա հեղինակները. նա իրավամբ այդ շարժման սկիզբ է նշում 14-րդ դ. և տալիս առավել աչքի ընկնող դեմքերի անունը: Ուստի պարզունակ է դառնում այն մոտեցումը, որ լատինաբանությունը մեզանում դիտվում է ոչ վաղ, քան 17-րդ դ.:

բ) Ելնելով գրաբարի «սրբագործման» (իմա՝ մաքրման) մոտեցումից՝ լատինաբան նորամուծությունները դիտվում են «անճոռնի և անհեթեթ»։ դրանք մեծ չափերի են հասնում 17-րդ դ. ավելի «օրթոդոքս» ձևով և ավելի «կատարելագործված»։ գ) Նման աղավաղումներն իրենց ձևակերպումն են ստանում համապատասխան քերականություններում, որոնց հանդեպ քերահավատություն է հանդես բերում Բագրատունին։ դ) Եվ վերջապես, ամենախոցելին, ըստ Բագրատունու, հայոց կրոնական գրականության մեջ նման մոտեցմամբ միջամտություն հանդես բերելն է, որն առավել չափով նկատվում է Աստվածաշնչի և ուրիշ գրքերի (Ճաշոցներ և այլն) հրատարակություններում։ Աստվածաշնչի հետագա տպագրությունն իր իսկ Բագրատունու ձեռքով նման «սրբագրումներից» գերծ պահելու մտադրությունն է նաև եղել։

Ուստի կարելի է նշել, որ լատինաբանության մշակութային և լեզվական սեղմ և հակիրճ գնահատությունը, որ տալիս է Արս. Բագրատունին, իր ժամանակի առումով բավականին արժեքավոր է, որը որոշակի չափով, հավանաբար, հաշվի է առնվել հետագա ուսումնասիրողների կողմից։

Լատինաբանության հարցերը արմատական քննության է առնում Ա.Այտընյանն (1825-1902թթ.) իր ուշագրավ հոդվածներում և հայտնի աշխատությունների առանձին բաժիններում։ Դրանք ունեն կարևոր նշանակություն նման հարցերի նոր վերլուծության և գնահատության համար։

Ամենից առաջ նկատի ունենեք «ԺԴ-ԺԵ դարերու հայերենի վիճակը» հոդվածը¹, որտեղ հեղինակն ըստ էության տալիս է նաև լատինաբան խորթությունների լեզվագիտական վերլուծությունը և գնահատությունը։ Նկատի ունենալով նման երևույթները ևս, Ա. Այտընյանն այդ հոդվածում առանձնացնում է լեզվական «խանգարումների» երկու տեսակ՝ «բնական» և «արուեստական» (իմա՝ արհեստական - Վ.Հ.)։ Եվ ըստ այդմ էլ քննության է առնում նշված դարերի հայերենի լեզվական վիճակը, ընդ որում «արուեստական» է դիտվում լատինաբանությունը։ «Արդեն հիզերորդ դարեն ինչուան տասնուիրեքերորդ դարը գրաբառի սքանչելի վայելչութիւնը քանի գնաց խամրած ցամքած ու արուած ըլլալով՝ աս տասնուչորսերորդին մէջ ուրիշ զարհուրելի հարուած մ'ալ կրեց, որով կրնանք ըսել, թէ արդէն տկարացած լեզուն՝ վերջին հարուածն ընդունեցաւ, այսինքն շունչն ու կեանքը վերացաւ վրայէն» (էջ 16)։ Այդ հարվածը լինում է այն,

¹ Տե՛ս «Երոսպա», 1849, N 4, էջ 16, N 5, էջ 20, N 8, էջ 32: Հոդվածի հեղինակն, անշուշտ, Ա.Այտընյանն է, որովհետև հարցերի տեսական գնահատության նույն դրվածքը նկատում ենք նրա «Քննական քերականության» մեջ։

որ ստեղծված «լատին - հայ միաբանությունը», ժամանակի հայերենի մեջ տեսնելով ինչ-ինչ «պակասություններ», արտաքին միջամտությանը «քերականական փոփոխություններ ըրին ու կանոններ հաստատեցին, և վերջապես հանեցին *լատին-հայ* (ընդգծումը մերն է-Վ.Հ.) լեզու մը, որ թեպետ ըստ արտաքին կերպարանացը հայերեն, բայց լատիներենի կաղապարով ձուլեալ զանգուած մըն էր» (ն.տ.):

Այնուհետև հողվածի հեղինակը նշում է լեզվական այդ տարբերակին բնորոշ այնպիսի առանձնահատկություններ, որոնք վերաբերում են հոլովների, անեզական անունների կազմությանը, ածականի համաձայնությանը, վերջինիս գերադրական աստիճանի ձևավորմանը, հոլովական հարաբերություն արտահայտող մասնիկների ներմուծմանը, բայական խորթ ժամանակաձևերին տեղ տալը, բառերի իմաստային և ձևական պատճենումներին, շարահյուսկան համաձայնության անհարիրությանը, այնուհետև «խժալուր» բառաբարդումներին, ոչ հստակ և արտասովոր տառադարձությանը, լատիներեն ձևերի սխալ քարգմանություններին և այլն:

Հետաքրքիր է այն փաստը, որ լատինաբան հեղինակները նման մոտեցում են հանդես բերում ոչ միայն իրենց երկերը հրատարակելիս, այլև այն դեպքերում, երբ ձեռնարկում էին «հին ու նոր մատենագրություններու տպագրութեանը» (էջ 32):

Այտրընյանը լատինաբան շարժման գնահատության հարցում զուգահեռ է գտնում հունաբան հայերենի օրինակը: Այս առումով նշվում է հետևյալը. «Բայց առանց աս աստիճան ապականութեան ու թիրութեան ըստ մասին օգնական եղած կըրնայ սեպուիլ նախնեաց ժամանակէն եղած առաջին գլխաւոր տեղափոխութիւնը, որն որ Ե դարուն մէջ լեզունիս կրած էր, այսինքն Ս.Մեսրոպայ երկրորդ դասուն աշակերտներէն, որոնք սա վերջիններուն պէս մտածելով, ինչպէս ասոնք լատիներէնի ձեռօք, այնպէս ալ յունարէնով լեզուին կերպարանքը փոխած էին...» (էջ 20):

Շոշափվող հարցերի տեսակետից հիշյալ հողվածին սերտորեն առնչվում է հետագայում լույս տեսածներից հատկապես երկուսը¹:

Լատինաբանությունը շարունակաբար քննարկվում է նաև 1855 թ. տպագրված «Բազմավեպի» էջերում¹, որտեղ բերվում են ոչ միայն երևույթը

¹ [Մ.Այտրընեան], Խորհրդածութիւնք ազգային լեզուի վրայ. «Երոպա», 1852, N6, էջ 23, N12, էջ 47-48, N19, էջ 75-76, N22, էջ 87-88, N25, էջ 98-99 և N30, էջ 118-119: [նույնը], Մատենագրական խորհրդածութիւններ. ն.տ., 1856, N30, էջ 118, N31, էջ 122-123, N37, էջ 146-147:

բնութագրող արտաքին հանգամանքները, այլև նշվում են լեզվական բնորոշ մի քանի հատկություններ: Բերված լեզվական հատկությունները կարելի է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ. ա) շարահյուսական միավորների լրիվ և պարտադիր համաձայնություն, բ) բայերի ներգործական և կրավորական սեռերի արտահայտության պլանի տարբերակում, գ) անեզական և անհոգնական բառերի «հստակեցում» (իմա՝ անեզականին եզականի, իսկ անհոգնականին հոգնականի ձևի հատկացում), դ) բառերի «նյութական թարգմանություն» (հմմտ. *magnopere - մեծիրապես*, փխ. *մեծապես, մեծ մասամբ, manufactio - ձեռքածություն*, փխ. *աղերսումն, աղոթք, abusare - ապավարել*, փխ. *շեղել, աղճատել* և այլն): Հեղինակը իրավամբ նշում է, որ նման աղավաղությունը հետագայում հանդիպում է ընդդիմության, և դա անում է «Մխիթար հանդերձ իւրովքն»: Նշվում է, որ լատինաբանների առաջ բերածը, իբրև արհեստական սովորույթ, կարելի է հաղթահարել: Դրա լավագույն ուղին պետք է լինի, ինչպես Այտընյանն է գրում, «յաճախ ընթերցումն քաջաց մատենագրաց մերոց՝ վեհագոյն վարժապետ լիցի մեծիս այսմիկ և դժուարին կրթութեան» (էջ 24):

Նկատելի է այն, որ հոդվածի հեղինակը սեղմ ձևով ներկայացնում է ոչ միայն լեզվական այդ կարգի խորթությունների բնույթը, այլև դրանց՝ ժամանակին ձեռնարկված հաղթահարման միջոցառումները, տալիս է լրացուցիչ հրահանգ այդպիսի խորթություններով լեզուն այլևս չխճողելու, ինչպես նաև լեզվական նման վիճակից դուրս գալու, իրական և նպատակադիր ուղիով գնալու վերաբերյալ:

Էդ. Հյուրմյուզյանը (1799-1876 թթ.) իր բանասիրական-լեզվագիտական լավագույն հոդվածներից մեկում² լատինաբանությունը դիտում է մեր լեզվի ոչ հայկաբան տարբերկաններից մեկը. հայերենի ներսում նա առանձնացնում է նաև «հունաբանություն», «իտալաբանություն», «գաղղիաբանություն» և «տաճկաբանություն» տարբերակները: Հեղինակը լատինաբանության երևան գալը բացատրում է թարգմանության ընթացքում երևույթի «ճշտությունը պահելու» հանգամանքով, այսինքն՝ թարգմանական ստրկությունը պատճառ է դառնում լեզվական ինքնատիպության զոհաբերման:

Եվ ըստ այդմ Հյուրմյուզյանն իր աշխատանքում նշում է լեզվական մի շարք խորթություններ. բառերի և ոճերի ընդօրինակում, նախդիրների և նախադրությունների, անանցական բառերի և բայերի անտեղի նորաձևացում (հմմտ. *ընտան*, փխ. *ի տան, նինքեան*, փխ. *յինքեան, satisfactio ~*

¹ Տե՛ս «Տեսութիւնք ի լատին բարբառ, և որ ինչ ի վարժից նորին շահ. «Բազմավէպ», 1855, հ. ԺԳ, էջ 21–24: Հոդվածի հեղինակը ստորագրել է մեկ աստղանիշով (*):

² *Եդ. Հյուրմիզեան*, Թարգմանութեան վրայ. «Բազմավէպ», 1873, հ. ԼԱ, էջ 321–333:

բաւարարութիւն, փխ. *հաստուցումն*, *intime* ~ *ներսունասպէս*, փխ. *ի սրտէ*, *maximus* ~ *մեծագունեղ*, փխ. *ամենեւին մեծ, յոյժ մեծ*, *conjectura* ~ *փաղարկութիւն*, փխ. *կարծիք* և այլն), տարօրինակ թվակազմություն, շարահյուսական բաղադրիչների համաձայնություն, իմաստային անճշտություն [(օրինակ՝ *միս – մսոյ* ~ *carnis* (< *corporis*, փխ. *մարմնոյ*)], բայերի կրավորականի սխալ կազմություն, ցոյական հիմքերի անտեղի մեջբերում, ոչ անհրաժեշտ փոխառությունների դիմում (օրինակ՝ *լետեմ* ~ *ledere* և այլն): Այստեղ հեղինակի եզրակացությունը հետևյալն է. «...բերածներէն բաւական կիմացուի, թէ ինչ վիճակի մէջ էր գեղեցիկ գրաբառ լեզունիս, որ բոլորովին նոր լեզու մը դարձեր էր ու երթալով կը տարածուէր այս նորելուկ լեզուն...» (էջ 324):

Ն. Անդրիկյանն (1879-1936 թթ.) իր երկու հոդվածներում¹ շատ թուուցիկ ակնարկ է անում լատինաբան հայերենի վերաբերյալ, արվածն էլ ամբողջովին մնում է մինչ այդ հայտնի իրողությունների և գնահատությունների սահմաններում:

Լատինաբան հայերենը և առհասարակ լատիներենի ու հայերենի առընչությունները Հ.Աճառյանը (1876-1953 թթ.) քննում է իր աշխատություններից երկուսում¹:

Առաջինում հեղինակն անդրադառնում է միարարական շարժման համառոտ պատմությանը, լատինաբան ազդեցության ձևերին, դրանց տարածման բնույթին, այլև հաղթահարմանը: Այստեղ առավելություն է այն, որ Աճառյանը համեմատաբար ավելի լայն ընդգրկումով է քննարկում արծարծվող հարցերը՝ կապված լատինաբանությունը ոչ միարարական շրջաններում տարածվելու երևույթի, այլև լատինաբանության հաղթահարման գործում վեներիկցիների ձեռքբերումներին մշակութային այլ կենտրոններում արձագանքելու հետ և այլն: Ըստ այդմ նկատելի է նոր ժամանակներում հայոց լեզվի պատմության հարցերն ավելի ամբողջական ձևով ներկայացնելու ձգտումը:

«Հայոց լեզվի պատմության» (I մաս) մէջ Աճառյանը առանձնացնում է հատուկ բաժին՝ «Հռոմեական ազդեցությունը հայերենի վրա»: Այդ բաժնի վերջում նշվում է հետևյալը. «Լատիներենի ազդեցությունը հայերենի վրա 329 թվին դադարելուց հետո (հայ-հռոմեական առնչությունն առկա էր մ.թ.ա. 66-ից ի վեր - Վ.Հ.), վերսկսվում է երկրորդ անգամ Կիլիկյան թագավորության ժամանակ՝ ԺԳ և ԺԴ դարերին, Ունիթոռական քարոզիչների ձեռքով: Երկու ազդեցությունները կրում են բոլորովին տարբեր բնույթ, ուստի մենք էլ բաժանում ենք երկուսը իրարից

¹ Ն.Անդրիկյան, Գեղեցիկը լեզուին մէջ. «Բազմավէպ», 1908, հ. ԿԶ, էջ 157–162: Նույնը, Ուրուագիծ հայ մատենագրութեան. ն .տ., 1911, հ. ԿԹ, էջ 301–306, էջ 337–345 և այլն.

և վերջ տալով այստեղ այս գլխին, երկրորդ շրջանի մասին կխոսենք առանձին գլխով՝ «Եվրոպական փոխառությունները հայերենում և լատինաբան հայերեն, վերնագրի տակ (գլուխ ԻԵ)» (էջ 329-330): Հռոմեական հին ու նոր ազդեցությունների բնույթն, իրոք, բավականին տարբեր է եղել, և այդ տարբերությունը, ինչպես դժվար չէ կռահել Աճառյանի ուսումնասիրության ոգուց ևս, կայանում է ժամանակի, լեզվական շփումների ձևերի ու միջոցների, գործառության ոլորտների, հասարական-սոցիալական վերաբերմունքի և այլ առանձնահատկությունների մեջ:

Այսպիսով, հայերենի կրած լատինատիպ ազդեցությունների մասին Հ.Աճառյանը խոսում է իր աշխատության II մասում: Նա հայ-լատինական շփումները դնում է ԺԱ դարից ի վեր: Այդ շփումները, ըստ Հ.Աճառյանի, ավելի են սերտանում խաչակիրների ժամանակ, և աշխատության էջ 296-298-ում ակնարկի կարգով խոսվում է նման շփումների՝ իբրև հարցի արտաքին կողմի մասին:

Այդուհանդերձ, աշխատության այդ մասում, տվյալ դեպքում, առավել հետաքրքիր է այն, որը վերաբերում է լատինաբան հայերենին: Այդ հարցը, ի տարբերություն փոխառությունների, Աճառյանը քննում է այն տեսակետից, թե «ինչ ազդեցություն է գործել Եվրոպան հայերեն լեզվի ներքին կազմության, ոճաբանության և քերականության վրա» (էջ 307):

Այստեղ ևս Աճառյանը, նախ անդրադառնում է լատինաբան հայերենի գոյացման արտաքին հանգամանքներին, մեծապես հենվելով Գ.Ալիշանի և Գ.Զարբհանայանի ուսումնասիրությունների տվյալների վրա: Այնուհետև, բուն խնդրի լուծման՝ երկրորդ դեպքում նկատելի է հետևյալը. Աճառյանը գտնում է, որ լատինաբան հայերենը թեև սկզբնավորվում է ԺԳ դ., սակայն «այս հայերենը շատ կանոնավոր է և լատինաբան կոչվելու ոչ մի պատճառ չունի: Լատինաբան հայերենը հորինված է ավելի ուշ, ԺՁ դարում, Հռոմում» (էջ 310): Այս առումով հարկ ենք համարում նշելու հետևյալը: Նախ, նման տարբերակումն առաջին անգամ չէ, որ կատարվում է, այն հանդիպում ենք նաև նախորդ ուսումնասիրողների մոտ¹, ըստ որում զուտ բանասիրական հետազոտությունների շրջանակում: Երկրորդ, այդպիսի տարբերակումը ելնում է ոչ այնքան լեզվական բուն փաստերի վերլուծությունից, որքան արվում է նախնական և հպանցիկ տպավորության հիման վրա, հատկապես որ այդ առումով չեն բերվում որոշակի փաստեր ու լեզվական համեմատություններ: Երրորդ, կարծում ենք, որ

¹ Հ.Աճառյան, Պատմություն հայոց նոր գրականության, պրակ Ա, Վաղարշապատ, 1906, էջ 12-17: Նույնը, Հայոց լեզվի պատմություն, մմ. I-2, Երևան, 1940-1951, էջ 324-330, 296-323:

լատինաբան հայերենը տարբեր ժամանակներում ամենևին չէր կարող միակերպ ու միատեսակ լինել, ուստի այս պարագայում վճռական դեր ունի ոչ այնքան բացարձակ տարբերությունը, որքան հարաբերական ներակայումը: Կարծում ենք, որ լատինաբան հայերենը կրել է լատիներենի ազդեցությունը սկզբնական շրջանից ի վեր մինչև այդ ազդեցության հաղթահարումը: Տարբերությունը ոչ այնքան քանակական է, որքան որակական:

Հ.Աճառյանի նման մոտեցումը միակողմանի է և արվում է լատինաբան հայերենի 17-րդ դ. լեզվական վիճակի ուրվագծմանն անմիջապես անցնելու գործնական նպատակով: Եվ ըստ այդմ հարցի լուծումը, կարծում ենք, այսօր պետք է դիտել ոչ թե վերջնական, ոչ իբրև վերջակետ, այլ իբրև նոր սկիզբ՝ ելակետ: Լատինաբան հայերենն, իրոք, սկզբնավորվում է 14-րդ դ., և հետագայում փոքր-ինչ թուլանում է նրա զարգացումը, իսկ 16-րդի վերջին և 17-րդ-ում նոր վերելք է ապրում: Եվ ըստ այսմ երևույթի բնութագրման մակերեսայնության պայմաններում, որ նկատելի է Աճառյանի հիշյալ աշխատության մեջ, անտեսվել է սկզբնականն ու հետագան, իսկ ամենավերջում ընդգծվածը («վերածնակավորվածը») դիտվել է իբրև բուն երևույթ:

Այնուհետև, Աճառյանը բերում է համապատասխան բնագրային ընտրովի հատվածներ և անմիջապես անցնում լատինաբան հայերենի «հորինվածության» ուրվագծմանը (էջ 313-323): Այստեղ էլ Աճառյանը, ցավոք, գերազանցապես հենվում է Հովհաննես Հովով Կոստանդնուպոլսեցու հայտնի քերականության (Հռոմ, 1674) նորմայի վրա և ըստ այդմ գծում լատինաբան հայերենի «հորինվածությունը»: Սա երևույթի քննարկման ամենահեշտ և ամենագործնական եղանակն է, սակայն նրա պատկերը ամբողջական և լիովին չներկայացնող եղանակ: Հարկ ենք համարում նշելու, որ այդտեղ բերվում են միայն այն նորամածությունները, որոնք ժամանակին արձանագրված են հիշյալ քերականության մեջ, ուստի հասկանալի է, որ դրանով չի գծվում և ամբողջանում լատինաբան հայերենի ողջ պատկերը:

Հայերենում տեղ գտած լատինաբան նորամածությունները տարբեր չափերով են ներկայանում հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում: Այդ նորամածությունները զանազան չափեր են կրում նույնիսկ միևնույն շրջանի առանձին գրավոր աղբյուրներում, ավելին՝ միևնույն հեղինակի տարբեր երկերում և այլն: Դա նկատելի է գրավոր աղբյուրների մանրամասն ուսումնասիրման դեպքում: Դրանից բացի, այդ իրողությունն իր արտացոլումն է գտել 14-17-րդ դդ.

¹ Տե՛ս, օրինակ, *Ա.Բագրատունի*, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

երևան եկած լատինատիպ քերականություններում: Այնպես որ, կարծում ենք, բավականին միակողմանի է միայն մեկ քերականության տվյալների հիման վրա լատինաբան հայերենի «հորինվածության» ուրվագիծ տալը, որ իրականացնում է Հ. Աճառյանը: Այս ուղղությամբ կարելի է շարունակել աշխատանքը՝ կատարելով, օրինակ, լատինաբանության բազմահատկանիշ դասակարգում, գրական հուշարձանների լեզվական չափանիշներով բնութագրում և այլն (տես ստորև՝ իրենց տեղում):

Ուստի գտնում ենք, որ Հ.Աճառյանը բավականին սեղմ և հակիրճ ձևով է ներկայացնում լատինաբան հայերենի նկարագրությունը, առհասարակ լատինաբանության հաղթահարման թե լեզվական և թե արտալեզվական ողջ գործընթացը:

Լատինաբան հայերենին անուղղակիորեն վերաբերող հարցերի է անդրադառնում նաև Էդ.Աղայանն (1913-1991 թթ.) իր աշխատություններից մի քանիսում, որոնցում տեղ գտածը ոչ թե առանձին քննարկում է, այլ հայոց լեզվի պատմության մյուս հարցերին առնչակից դիտարկումներ են¹:

Առաջինում (էջ 104-110) մեծանուն լեզվաբանն ավելի շատ ակնարկում է հայ-լատինական հարաբերությունների սկզբնավորման մասին՝ կապված կիլիկյան հայության հետ: Ըստ որում այդ հարաբերությունները զարգացել են, նախ, «քաղաքական-դիվանագիտական ճանապարհով» (էջ 104), այնուհետև՝ դրանք «սկսեցին էլ ավելի զարգանալ տնտեսական և կրոնական հողի վրա» (ն.տ.): «Սակայն շատ շուտով այդ քաղաքական-դիվանագիտական ու տնտեսական հարաբերություններին ավելացավ նաև երրորդը՝ կրոնականը» (էջ 105): Ուշադրություն է դարձվում նաև այն բանին, որ հիշյալ երեք հանգամանքները խթանում են հայերին օտար լեզուներ, իսկ օտարներին՝ հայերեն սովորելու (ն.տ.): Միանգամայն ճիշտ է հետևյալ դիտողությունը. «Եթե մինչև տասնյոթերորդ դարը եվրոպական առևելագիտության, հետևաբար և հայագիտության կենտրոնն էր, հիմնականում, Հռոմը, ապա 17-րդ դ. այդպիսի կենտրոն է դառնում նաև Փարիզը՝ կարդինալ Ռիշելիոյի (1624-1642) հիմնադրած (1645 թվին) գիտության ճեմարանի և բազմալեզվյան տպարանի շնորհիվ» (էջ 108):

Այնուհետև, Էդ. Աղայանը համոզիչ կերպով բնութագրում է 17-րդ դ. մշակութային գործիչների արածը լատինաբան հայերենի մշակման գործում: Այս

¹ Էդ.Աղայան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958: Նույնը, Գրաբարի քերականություն, հ. 1. Սինխրոնիա, գիրք Ա. Հնչյունաբանություն, Երևան, 1964: Նույնը, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, N2, էջ 58-81:

տեսակետից հատկանշական է հետևյալը. «Հետևելով լատիներենին, այդ հեղինակները (իմա՝ Գալանոս, Ոսկան, սրանց հետևող՝ Հովհ.Հովով, այլև՝ Խաչ.Էրզրումեցի – Վ.Հ.) հայերենը արհեստականորեն ենթարկում էին լատիներենի կանոններին. այսպես՝ նրանք անխտրաբար, առանց բացառության ածականը համաձայնեցնում էին գոյականին թվով և հոլովով... մեր հին մատենագրության մեջ եղած այն օրինակները, որոնց մեջ համաձայնեցում չկա, վրիպակ են համարում... այս պատճառով է, ահա, որ այդ քերականությունների հեղինակները «խանգարիչք լեզուի» («Corrupteurs de la langue» - Girbied. իմա Շ. Ջրպետյան – Վ.Հ.) անուն են ստացել» (էջ 109-110):

Երկրորդ աշխատության մեջ նա բավականին սեղմ ձևով խոսում է հայ լեզվաբանական մտքի պատմության երկրորդ շրջանի՝ «ինքնուրույն քերականական աշխատությունների շրջանի (17-րդ դարից մինչև մեր օրերը)» առաջին ենթաշրջանի՝ «լատինատիպ քերականությունների (17-18-րդ դարեր)» առանձնահատկությունների մասին՝ տալով երևույթի համեմատաբար իրական և ճիշտ գնահատությունը (էջ 16-20):

Առհասարակ գրաբարի և առանձնապես լատինաբան հայերենի նորովի ուսումնասիրության համար խիստ կարևոր են Էդ.Աղայանի այն դրույթները, որոնք առաջադրված և գիտական համոզիչ նկարագրությամբ լուծված են հիշյալ երրորդ աշխատության մեջ: Ընդամենը մեկ հոդվածի սահմաններում հեղինակին հաջողվել է տալու ոչ միայն գրաբարի ողջ պատմության շրջանաբաժանումը, այլև հող նախապատրաստելու այդ բնագավառում թե՛ համաժամանակյա և թե՛ տարածամանակյա տարբեր կարգի աշխատանքներ ծավալելու: Տվյալ դեպքում մեզ համար շատ մեծ նշանակություն ունեն Էդ.Աղայանի տեսական այն գնահատությունները, որոնք վերաբերում են 14-18-րդ դդ. գրաբարի կառուցվախփին, ինչպես նաև նրա զարգացման ու առաջխաղացման պատմությանը:

Երրորդ աշխատության մեջ Էդ.Աղայանն անդրադառնում է լատինաբան հայերենին՝ Ա.Այտընյանի շրջանաբաժանման գնահատության առիթով: Ուշադրության են արժանանում հետևյալ հանգամանքները. ա)Այտընյանը հատուկ կերպով առանձնացնում է գրաբարի երրորդ շրջանը՝ իբրև «միջին ժամանակներ», որի ընթացքում էլ տեղի է ունենում, ըստ Այտընյանի, «երկրորդ հեղաշրջությունը»: Այն այլ բան չէ, քան, - ինչպես գրում է Էդ.Աղայանը,- «լատինաբան գրաբարի երևան գալը, որի տարրերն ունի Հովհաննես Քոնեցու «Համառօտ հուարումն յաղագս քերականին» աշխատությունը» (էջ 60): ք)Այտընյանը գանազանում է գրաբարի չորրորդ շրջանը՝ իբրև «առաջին

հետաշրջության շրջան (XVIII դարից մինչև XIX-ի կեսերը)»: Այս ընթացքում, ըստ Էդ.Աղայանի ճիշտ բնութագրման, «լատինաբանության տարածումը «մաքրեց» գրաբարը ռամկաբանությունից, բայց ինքը՝ լատինաբանությունը աղճատեց գրաբարը: Այս շրջանում սկսվում է լատինաբանության վերացումը, որ հիմնականում Վենետիկյան Մխիթարյանների հայերենագիտական գործունեության հիմնական խնդիրներից մեկն էր» (էջ 60-61): գ) Այսօրվանի շրջանաբաժանումը համարվում է ճշմարիտ, սակայն որոշ դեպքերում առարկելի. «շրջանաբաժանումը և գրաբարի տարբեր վիճակների ու գրական մշակումներով ստացած դրսևորումների բնութագրումները,-նշում է Էդ.Աղայանը,- հիմնականում ճշմարիտ են, թեև շատ կետերում առարկելի են հեղինակի կողմից տրվող մեկնաբանությունները գրաբարի, իբրև գրական լեզվի, պատմության տարբեր հարցերի մասին: Առանձնապես առարկություն է վերցնում լատինաբանության («երկրորդ հետաշրջություն». այսինքն՝ «հեղաշրջություն»-Վ.Հ.) ընդհանրացումը: Թեև իսկապես լատինաբանությունը մեծ տարածում ստացավ XV-XVII դարերում, բայց ընդհանուր տիրապետության երբեք էլ չհասավ» (էջ 61):

Ինչպես տեսնում ենք, Էդ.Աղայանի դիտարկումները երբեմն բավականին մանրամասն են, իսկ լեզվի պատմության առումով բավականին հիմնավոր և տեսականորեն անխոցելի, ուստի ունեն որոշակի նշանակություն հիշյալ երևույթի հետ կապված հանգուցային հարցերն ավելի ճիշտ ձևով ներկայացնելու գործում: Էդ.Աղայանի սույն շրջանաբաժանումն այս կետում և առհասարակ ամբողջությամբ վերցված հիմք է հանդիսանում հայոց լեզվի գրաբար տարբերակի պատմության ամբողջական ուսումնասիրության համար:

Լատինաբանության և լատինաբան հայերենի հարցերը տարբեր չափերով արծարծված են անվանի լեզվաբան Գ.Ջահուկյանի (1920-2005 թթ.) աշխատություններից մի քանիսում, մանավանդ «Գրաբարի քերականության պատմություն» գրքում¹:

Առաջին աշխատության մեջ հարցի գնահատությունը մասնակիորեն տրված է Հովհաննես Քոնեցու քերականության մասին եղած մատենագիտական մի տեղեկության և պահպանված չնչին հատվածի հիման վրա¹: Ըստ այդմ նշվում է 14-րդ դ. լատինատիպ քերականության սկզբնավորման հնարավորությունը,

¹ Գ.Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V–XV դդ.), Երևան, 1954: Նույնը, Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959: Նույնը, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960: Նույնը, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964: Նույնը, Գրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Երևան, 1974: Он же, Общее и армянское языкознание, Ереван, 1978:

այլև խոսվում է այդ ժամանակ ծավալված միարարական շարժման մասին: Հովհ.Քոնեցու քերականությունը, ձեռքի տակ չունենալով (թեկուզ ձեռագիր վիճակով) որոշակի ենթադրությամբ համարվում է հայ լատինատիպ քերականությունների նախօրինակը: Այլ կերպ ասած՝ այն ժամանակ, երբ Գ.Ջահուկյանը շարադրում էր իր սույն աշխատությունը, այդ քերականության մասին եղած տեղեկությունը բավականին սուղ էր, և նույնիսկ դա չի խանգարում նրան հայտնելու իր նկատառումը՝ դիպուկ և տրամաբանված:

Քոնեցու քերականության գնահատման հետ կապված առավել հետաքրքիր են Գ.Ջահուկյանի հետևյալ ձևակերպումները. ա) այդ քերականությունը ստեղծված է հայ նախորդ քերականությունների և լատիներենի քերականությունների հետևությամբ՝ դառնալով նման քերականությունների առաջնեկը մեզանում: բ) Ուշադրություն է դարձվում քերականության փիլիսոփայական-տրամաբանական նպատակամղվածությանը: Այդ կռահումն արվում է ձեռագրի հիշատակարանի հիման վրա, ըստ այդմ նշելով՝ «հատկանշական է այն հանգամանքը, որ Քոնեցու քերականական երկը գետեղված է փիլիսոփայական բնույթի երկեր պարունակող մի ձեռագրում» (էջ 291): Նման վերագրումն ըստ էության ճիշտ է, թեև արտաքին հանգամանքը կարող է լինել և պատահական:

«Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ մեզ հետաքրքրող հարցերը մասնակիորեն շոշափվում են ներածության բաժնում՝ կապված հայերենի քերականությունների պատմության շրժանաբաժանման խնդրի հետ: Գ.Ջահուկյանն առանձնացնում է «լատինատիպ քերականությունների շրջան (17-րդ դարի սկզբներից մինչև 18-րդ դարի կեսերը)» 14-16-րդ դդ. քերականությունների մասին նախորդ շրջանի ներսում ոչինչ չի նշված: Իսկ այստեղ բերվում են լատինատիպ քերականությունների այն առանձնահատկությունները, որոնք առնչվում են գրաբարի հոլովման համակարգին. դրանք հիմնականում վերաբերում են հոլովների քանակին, արտահայտության պլանի տարբերություններին, կառուցվածքային առանձնահատկություններին, այլև թվի դրսևորմանը, հոլովման տիպերի ձևաբանական դասակարգմանը և այլն: Գ.Ջահուկյանի դիտարկումները բավականին ցայտուն են դարձնում գրաբարի հոլովման համակարգի պատմական առաջընթացը հիշյալ շրջանում: Ավելին, այստեղ առանձնացվող

¹ Տե՛ս Յ.Տաշեան, Յուրակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վիճենա, Վիճենա, 1895:

տարբերությունները կարելի է նկատի ունենալ լատինաբան հայերենի հոլովման համակարգի համապատասխան հատկանիշներն առանձնացնելու ժամանակ:

Գ.Ջահուկյանի հիշյալ երկու աշխատություններում արծարծված հարցերը քննության են առնված այն մոտեցումով, որը գրեթե նույն ժամանակում լայնորեն մշակվում էր հեղինակի մյուս՝ «Լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ: Այստեղ երևույթը դիտարկվում է համաշխարհային լեզվաբանության պատմության կտրվածքով, որտեղ հայերենին վերաբերող հարցերը քննարկվում են ընդհանուր լեզվաբանական-քերականագիտական շարժման առնչությամբ: Այս աշխատության մեջ առհասարակ լատինական ազդեցության և առանձնապես հայ-լատինական առնչության վերաբերյալ դիտողություններ կան այն բաժիններում, որոնցում ներկայացվում է լեզվաբանության պատմությունը «միջին դարեր» (էջ 103-166), այլև «վերածնության շրջան և 17-18-րդ դդ.» (էջ 167-262) ենթաշրջաններում: Ընդ որում, տվյալ դեպքում, մեզ հետաքրքրող հարցը ուշադրության առարկա է «լատինական ազդեցության ոլորտում» գտնված և լատիներենի առնչությամբ երևան եկած ընդհանուր (և հայ) քերականագիտական մտքի զարգացման պատմությանը նվիրված բաժիններում և հատվածներում: Արվում են սիստեմատիկ վերլուծություններ, տրվում պատմամշակութային օբյեկտիվ գնահատություններ, որոնք, ինչ խոսք, խիստ կարևոր են հայկական միջավայրում երևան եկած լատինաբանության և լատինաբան գրաբարի նոր ուսումնասիրությունների համար: Ավելին, Գ.Ջահուկյանի կարևորագույն դիտողությունները, որոնք կապվում են լեզվաբանության պատմության վերհանման հետ, կարող են կողմնորոշիչ դեր խաղալ ոչ միայն լատինաբան հայերենի լեզվաբանական արժեքավորման, այլև համապատասխան լեզվական նյութի համակարգված քննության գործում:

Մեզ հետաքրքրող հարցերի դրվածքի և ժամանակագրական ստույգ բաշխման առումով նկատենք, որ Գ.Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատության մեջ ոչինչ չի ասվում, թեև հատուկ նշում է հետևյալը. «Մենք լեզվի պատմությունը դիտում ենք իբրև տվյալ լեզվի տարատեսակների պատմություն: Առանց սրա, լեզվի պատմության բնագավառը արհեստականորեն նեղացվում է, ճիշտ չի արտացոլվում լեզվի կապը այն կրող ժողովրդի պատմության բոլոր ոլորտների հետ, միակողմանի են պատկերացվում լեզվի մեջ կատարված բոլոր կարգի փոփոխությունների բնույթն ու պատճառները»¹:

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմության փուլերը, Երևան, 1964: Նույնը, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 33:

Տեսականորեն նման ճիշտ սահմանափակումը գործնականում, կապված լատինաբան հայերենի՝ իբրև լեզվական ուրույն տարբերակի հետ, չի իրականացված հեղինակի շրջանաբաժանման մեջ:

Լատինաբան հայերենի պատմության համար առավել հետաքրքիր է Գ.Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն (17-19-րդ դդ.)» աշխատությունը: Այդտեղ հեղինակն իր վերլուծությունները և այս կամ այն հարցի գնահատությունն անում է այդ շրջանի քերականությունների ընձեռած նյութի հիման վրա: Փաստերը ենթադրում են կոնկրետ վերլուծություն և որոշակի գնահատություն: Եվ ըստ այդմ գծվում է լատինատիպ քերականությունների շրջանը (17-րդ դ. 1-ին կես – 18-րդ դ. 3-րդ քառորդ): Այդ շրջանն այդքան ժամանակով սահմանափակելը հետագայում իրավացիորեն արժանանում է առարկության¹, իսկ առհասարակ այն միանգամայն իրապես է արտացոլում 17-18-րդ դդ. լատինատիպ քերականությունների ժամանակային ընդգրկումը, առավել ևս՝ ներքին խմբավորումը, ենթատեսակների գոյությունը: Այսպես, հիշյալ շրջանն, իր հերթին, բաժանվում է չորս ենթափուլի (և դա ներկայացվում է իբրև քերականությունների «տեսակներ»՝ իրենց ժամանակային հաջորդականության մեջ). «լատիներեն տեխնիկական քերականություններ (17-րդ դ. 1-ին կես)», «լատինատիպ ռացիոնալիստական քերականություններ (17-րդ դ. 3-րդ քառորդ)», «հունա-լատինատիպ քերականություններ (17-րդ դ. 30 - 90-ական թթ.)» և «լատինատիպ-բանասիրական քերականություններ (18-րդ դ. սկզբից մինչև 3-րդ քառորդ)»: Ուստի իրենց բնույթով իրարից միանգամայն տարբեր են դիտվում առաջին դեպքում Ֆրանցիսկոս Ռիվոլայի և Կդեմես Գալանոսի, երկրորդ դեպքում՝ Ոսկան Երևանցու և Հովհաննես (Հովյ) Կոստանդնուպոլսեցու, երրորդ դեպքում՝ Սիմեոն Ջուղայեցու, Հովհաննես Ջուղայեցու և Խաչատուր Էրզրումեցու, չորրորդ դեպքում՝ Յոհան Շրյոդերի, Հակոբ Վիլյոտի, Մխիթար Սեբաստացու և Բաղդասար Դարի քերականությունները:

Հիշյալ քերականությունների վերլուծությունն ու գնահատությունը Գ.Ջահուկյանի կողմից արվում են առանձին-առանձին, սակայն աստիճանական զարգացման ձևով, այսինքն՝ հետագա քերականության մեջ նկատվող նորարարությունն ու նորամուծությունն այդպիսին են համարվում իրենց նախորդ(ներ)ի համեմատությամբ: Ըստ այդմ էլ աշխատության մեջ պարզ ու մեկին ուրվագծվում է ժամանակի լատինատիպ քերականություններում արտացոլված լատինաբան հայերենի լեզվական պատկերը:

¹ Տե՛ս *Յովհաննէս Ըննեցի*, Յաղագս քերականին, էջ 6–7:

Եվ վերջապես «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» աշխատության մեջ, կապված վերջինիս բնույթի և ընդգրկման չափերի հետ, հեղինակն անդրադառնում է նաև հայ լեզվաբանական ուսմունքների սեղմ պատմությանը: Այդտեղ քննվում է «լեզվաբանությունը Հայաստանում V-XVIII դդ.» պրոբլեմը: Այն գրված է կոնկրետ պահանջներով և մի տեսակ ամփոփումն է հեղինակի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (5-15-րդ դդ.)» և «Գրաբարի քերականության պատմություն (17-19-դ դդ.)» հայտնի աշխատությունների (տե՛ս էջ 258): Ուրեմն մեզ հետաքրքրող հարցերն իրենց լուծումն ու գնահատությունը գտել են հեղինակի հիշյալ աշխատությունների մեջ, սակայն այստեղ դրանք վերստին արծարծվում են նոր աշխատության հրապարակման բերումով: Այդուհանդերձ նկատելի է մի էական առանձնահատկություն: Դ-ա այն է, որ այդ հարցերն այստեղ ներակայացվում են լայն ուշադրության, քննարկվում են տեսական լեզվաբանության հայեցակետից, արժեքավորում են համաշխարհային լեզվաբանությանը առաջադրվող չափանիշներով:

Դրանք արծարծվում են հատկապես «քերականության վիճակը 14-16-րդ դդ.» (էջ 281-283), «լատինական ազդեցության և լատինատիպ քերականությունների շրջան» (էջ 283-284), «հայերենի առաջին օտար քերականությունները» (էջ 284-296), «Գիոնիսիոս Թրակացու մեկնությունների սկզբունքների զուգակցումը լատինատիպ քերականությունների հետ» (էջ 286-288), «լատինատիպ ռացիոնալիստական քերականություններ» (էջ 288-290) և «հեռացում լատինաբանության դիրքերից» (էջ 290-292) խոսուն վերնագրերի ներքո: Այստեղ նյութը շարադրված է հստակ և հետևողական ձևով, նախկինում երևան եկած և ժամանակին այս կամ այն չափով օգտագործված փաստերի հիման վրա:

Այնուհետև, առանձին հեղինակների լեզվագիտական ըմբռումների վերլուծությանը նվիրված աշխատանքներից հիշարժան է, օրինակ, Ն.Տեր-Ներսեսյանի մի հոդվածը¹: Այստեղ քննվում են Ոսկան Երևանցու հայացքները «լատինաբան հայերեն և Ոսկան», «Ոսկանի քերականությունը» և «Ոսկանի Աստվածաշնչի լեզուն» հարցադրումներով:

Հոդվածումվ ոչ միայն հետաքրքիր են տեսական զանազան հարցադրումները, այլև կոնկրետ լեզվական վերլուծությունները: Այսպես, հեղինակը Հ.Աճառյանի նման տարբերում է «միաբանող եղբայրների»

¹ Հ. Ն.Տեր-Ներսեսյան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռումները . «Բազմավեպ», 1966, էջ 310–321:

լատինաբանությունն ու լատինաբան հայերենը հետագա՝ Հռոմի Ուրբանյան տպարանից դուրս եկած գրքերի լեզվից. 14-18-րդ դդ. լատինաբանության միջին սահմանը դնում է 1650 թ. (հակառակ Աճառյանի նշածի՝ 1584 թ.), միաժամանակ նշելով, որ առաջինը ևս «լատինական է, բայց գերծ է լատինաբան հայերենի օտարախոսք խրթնութենն» (էջ 311):

Մանրամասնորեն վերլուծվում է Ոսկանի քերականությունը, վեր հանվում նրա ունեցած տարբերություններն ու առանձնահատկությունները նախորդ և հետագա քերականությունների համեմատությամբ, որոնք մեծամասամբ բացատրվում են լատիներենի ընդօրինակման հանգամանքով: Առաջ է քաշվում այն տեսակետը, որ լատինաբան «կատարյալ» հեղինակը Ոսկանն է, ոչ թե Հովհաննես Հովրվ Կոստանդնուպոլսեցին (ինչպես դիտում է Աճառյանը, նաև ուրիշներ), որովհետև նա կանխում է սրան «շուրջ 40 տարվա» մի ժամանակով (էջ 316):

Տեր-Ներսեսյանը քննում է Ոսկանի հրատարակած «Աստվածաշնչի» լեզուն, որովհետև այն «գերծ չմնաց լատինաբան ազդեցութենն» (ն.տ.): Ոսկանի վերաթարգմանած գլուխներում բավականին ակնհայտ են լատինաբան խորթությունները: Բերվում են դրանցից հատկանշականները, որոնք զգալիորեն շատ են, միաժամանակ՝ ոչ լրիվն ու ամբողջը: Այնուհետև ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ նման խորթություններ առկա են ոչ միայն այդ առանձին գլուխներում, այլև «ամբողջ Աստուածաշունչը ծայրեծայր ենթարկուած է քերականական գրաքննութեան և ներմուծուած են լատինաբան ասութիւններ, հոլովակերպեր ու բայաձևեր» (էջ 319): Այս դեպքում թվարկվում են «Ծննդոց գրքից» քաղված կարևորագույն խորթությունները:

Հոդվածագիրը գտնում է, որ «Աստվածաշնչի» լեզվի նման «անհարազատ տարազը գոյատևած է նաև հաջորդ տպագրիչներու (Պետրոս Լատինացիի՝ 1705-ին, Մխիթար Աբբահօր՝ 1733-ին) հրատարակություններուն մէջ, մինչև որ Չոհրապ (1805) և հուսկ Բագրատունի (1860), ձեռագրական բաղդատութիւններով՝ հաջողեցան վերակազմել ոսկեդարեան բնագիրը» (էջ 320):

Ըստ այսմ նկատենք, որ Ն.Տեր-Ներսեսյանի հիշյալ հոդվածը խիստ օգտակար է լատինաբան հայերենի լեզվական առանձնահատկությունների նկարագրության և հայ մշակութային գործիչների այդ թևի ներկայացուցիչների վաստակը անկողմնակալ ձևով վերլուծելու և արժեքավորելու տեսակետից:

Լատինաբանության սկզբնական շրջանի հարցերը շոշափվում են նաև հմուտ վիճագրագետ-լեզվաբան Ս.Ավագյանի կողմից՝ Հովհաննես Քոնեցու «Մեկնութիւն քերականիւն» աշխատության բնագրային հրատարակությանը

(Երևան, 1977) կցված ընդարձակ առաջաբանի երկրորդ մասում¹: Հանգամանակից գրված սույն առաջաբանը ձեռք է բերում մեկ առանձին հեղինակի քերականագիտական հայացքների քննությանը նվիրված հատուկ ուսումնասիրության արժեք: Դա մեկն է այն լավագույն օրինակներից, որոնք հավաստում են, թե որքան կարևոր է այս կամ այն քերականի վաստակի գնահատությանը նվիրված առանձին, ամբողջական աշխատանքներ ծավալելը:

Հեղինակը Հովհ. Քոնեցու քերականությունը վերլուծում է ոչ միայն աղբյուրագիտական, այլև բնագրագիտական տեսակետից, վեր է հանում այն առանձնահատկություններն ու տարբերությունները, որոնք նկատվում են աշխատության տարբեր բաժիններում և մասերում: Դրանք արդյունք են ոչ թե դիոնիսիոսյան ավանդույթների շարունակման, այլ նոր՝ լատինական քերականություններում ստեղծված և միարարական կենտրոններում ժառանգված հիմունքների ճանաչման ու գործադրման: Առանձին-առանձին քննության են առնվում Քոնեցու քերականության մեջ նկատելի բոլոր կարգի երևույթները, դրանք արժեքավորվում են հայ քերականագիտության զարգացման դիրքերից: Նյութի քննությունը առաջ է տարվում հավաստի օրինակների և փաստերի մեջբերումով, դասակարգման մատչելի միջոցներով: Ըստ այդմ մեկընդմիջտ պարզ ու հասականակի է դառնում այն ամենը, ինչ հատկանշական է Քոնեցու քերականությանը: Ս.Ավագյանը ուսումնասիրությունը նպաստում է այդ քերականության լեզվական նյութի ճիշտ ու տեղին օգտագործմանը: Դա վերաբերում է հատկապես քերականական տերմիններին:

14-18-րդ դդ. լատինատիպ քերականություններում հայերենի խոսքի մասերի տարբերակման պատմությանն է անդրադառնում Հ.Բարսեղյանն իր հայտնի աշխատության մեջ¹: Այստեղ քննվում է Հովհաննես Քոնեցու, Ֆրանցիսկոս Ռիվոլայի, Կդեմես Գալանոսի, Ոսկան Երևանցու, Հովհաննես (Հոլով) Կոստանդնուպոլսեցու, Մխիթար Սեբաստացու քերականություններում այս կամ այն չափով տեղ գտած համապատասխան նյութը (էջ 42-47, 67-81, 92-103): Աչքաթող է արված Խաչատուր Էրզրումեցու քերականության պարագան (գրված՝ 1696 թ.): Բոլոր դեպքերում Հ.Բարսեղյանը կատարում է ելնում է ոչ միայն ինքնուրույն դիտարկումներ, այլև մեծապես հաշվի է առնում նախորդների (հատկապես Գ. Չախուկյանի) դիտողություններն ու գնահատությունները: Միանգամայն իրական է այն, որ հիշյալ քերականների աշխատությունների

¹ Տե՛ս *Յովհաննես Քոնեցի*, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս.Խաչիկյանը, ներածությունը Լ.Ս.Խաչիկյանի և Ս.Ա.Ավագյանի, Երևան, 1977, էջ 52-153:

կոնկրետ նյութն ուշադրության է արժանանում առանձին մեկ հայեցակետից և ըստ այդմ շոշափվում են լատինաբան ազդեցության հետ կապված մասնավոր հարցեր:

Գրաբարի կրած լատինաբան ազդեցությունն իր արտացոլումն է գտել տարբեր ժամանակներում գրված քերականություններում: Վերջիններիս տվյալների համաձայն որոշակի տեղաշարժեր են կատարվում գրաբարի համակարգում: 17-րդ դ. քերականություններում երևան եկած նման տեղաշարժերի առանձին քննության է նվիրված Վ.Ծառուկյանի թեկնածուական ատենախոսություն²: Հեղինակը հանգամանորեն վերլուծում է այդ դարի քերականությունները և մանրամասնորեն վեր է հանում այն առանձնահատուկ ու նորը, որ առկա են դրանցում: Վ. Ծառուկյանի աշխատանքը բավականին կարևոր է լատինաբան հայերենի կառուցվածքային առանձնահատկությունների առանձին ուսումնասիրման առումով:

Նույն դարի գրաբարին է նվիրված Լ.Հովհաննիսյանի աշխատանքը³, որում առանձին հարց է այդ շրջանի լատինաբան հայերենը: Հեղինակը անդրադառնում է լեզվական այդ տարբերակի գործածության արտաքին կողմին, տալիս է նրա սեղմ բնութագիրը:

Լատինաբան այն նորամածությունները, որոնք գրաբարի համակարգ են թափանցում տարբեր ժամանակներում, հաղթահարվում են 18-րդ դարի սկզբներից մինչև դարի 80-ական թթ.: Այդ խնդրին է նվիրված տողերիս հեղինակի հոդվածներից մեկը, ինչպես նաև այն առանձին ուշադրության առարկա է եղել մեր՝ 18-19-րդ դդ. գրաբարի պատմությանը նվիրված ուսումնասիրության մեջ⁴:

¹ Հ. *Բարսեղյան*, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:

² Վ. *Ծառուկյան*, Գրաբարի կառուցվածքի ուսումնասիրությունը XVII դարի քերականների աշխատություններում, թեկնածուական դիսերտացիա, ձեռագիր, Երևան, 1969:

³ Լ. *Հովհաննիսյան*, XVII դ. գրաբարը. «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1983, էջ 116–196:

⁴ Վ. *Համբարձումյան*, Գրաբարի լատինաբան նորամածությունների հաղթահարումը 18-րդ դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1982, 8, էջ 63–72: Նույնը, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ., Երևան, 1990: V. G. *Hambartsumian*, La periodisation de l'histoire de l'armenien latinise. – “Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics”, McGill University, Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995, “Caravan Books”, Delmar, New York, 1996, էջ. 375-380:

Գլուխ երկրորդ
ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ
ՊԱՏՄՈՒԹԱՆ ՄԵՋ

1. Ներածական դիտողություններ

Լատինաբանությունը հայ իրականության մեջ ուրույն մշակութային երևույթ է: Ինչպես արդեն գիտենք, այն սկիզբ է առնում 14-րդ դ. 20-ական թթ. կեսերից և տևում է մինչև 18-րդ դ. վերջին տասնամյակները: Այս իմաստով 14-րդ դ. հայ մշակույթի և հայոց լեզվի պատմության մեջ նշանավորում է մի նոր, առանձին և յուրօրինակ շրջան: Ստեղծվում են եվրոպական երևույթների հետ հայկականի շփման որոշակի հնարավորություններ: Մեզանում երևան եկած միարարական շարժումը փորձում է թարմացնել, «եվրոպականացնել» հայ մշակույթը: 15-16-րդ դդ. այդ ձեռնարկումը թուլանում է և անկում ապրում: Դա կապվում է տեղական անբարենպաստ պայմանների հետ, որոնք ստեղծվում էին այլացեղ հրոսակների և ընչաքաղց արշավողների անմարդաբարո միջամտությունների հետևանքով: 17-րդ դ. միարար քարոզիչների գործունեությունը աշխուժանում է և վերակազմավորվում: Բուռն միջոցներ են գործադրվում հայ իրականության մեջ հոգևոր նոր մոտեցում մշակելու և մշակութային նոր արժեքներ ստեղծելու համար:

Անկախ դավանանքի հարցերում պառակտողական, կրոնական ջլատող քաղաքականությունից, միարար քարոզիչների կրթական, գիտական-թարգմանական գործունեությունը մեր օրերում պետք է գնահատել դրական: Նման վերաբերմունքը վերջին ժամանակներս արդեն նկատվում է հայ պատմագիտության և փիլիսոփայական մտքի ուսումնասիրության բնագավառներում:

Լատինաբանությունը մեզանում երևան է գալիս հոգևոր-մշակութային ոլորտում, իր արտացոլումն է գտնում ժամանակի գիտության և լեզվական մշակույթի վրա: Մշակույթի առումով հետաքրքիր է լատինաբանության տեղը գրական հայերենի պատմության մեջ: Լատինաբան սզդեցությունն առաջ է բերում գրական լեզվի մի այնպիսի որակ, որը բավականին ինքնատիպ է: Այն կոչվում է լատինաբան հայերեն, ի տարբերություն գրական հայերենի մյուս տարբերակների: Ուստի գրական հայերենի տարբերակ հանդիսացող լատինաբան հայերենն արդյունք է որոշակի ժամանակի ընթացքում ծավալված լատինաբանության:

Այդ խնդրի արժարժման և լուծման տեսակետից ամենից առաջ ուշագրավ են հետևյալ հարցերը:

1) Հայերեն ծավալուն գրականության մեջ առանձնացնել լատինաբան հայերենով գրված աղբյուրները, դրանք ժամանակագրորեն դասակարգել և տեսականորեն բնութագրել: Հարցի լուծումը խստորեն առնչվում է ձեռնարկվելիք մատենագիտական, բանասիրական-բնագրագիտական և աղբյուրագիտական աշխատանքների հետ:

2) Լատինաբան հայերենն ապրել է իր սկզբնավորումը, թուլացումն ու վերակազմավորումը, այնուհետև ունեցել է իր կասեցումն ու հաղթահարումը: Դրանք փուլեր են, որոնցում տեղի է ունեցել լեզվական այդ տարբերակի զարգացումը: Ըստ այդմ որոշակի ուշադրության առարկա կարող է լինել լատինաբան հայերենի պատմության շրջանաբաժանումը: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է հենվել ոչ միայն ներքին՝ բուն լեզվական, այլև արտաքին հանգամանքների ու գործոնների վրա: Լատինաբան հայերենի պատմությունը դիտելով իբրև մեկ ամբողջական շրջան՝ նրանում առանձնանում են որոշակի ենթաշրջաններ, որոնք ներառում են զարգացման հատկանշական վիճակներ (փուլեր):

3) Լատինաբան գրավոր աղբյուրների տեսությունը լիարժեք չի կարող լինել, եթե այն չլրացվի և չհագեցվի այդ աղբյուրների գործառական բնութագրմամբ: Ըստ այդմ զանազանվում են համապատասխան ոլորտներ, որոնք թերևս ոչ այնքան լիովին, որքան էապես բացահայտում են լատինաբան գրավոր աղբյուրների բովանդակային կողմը:

4) Կարևոր խնդիր է լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների առանձնացումը: Այն ոչ միայն հետապնդում է լատինաբան հայերենի պատմության հստակ ուսումնասիրության նպատակ, այլև կարող է առհասարակ հիմք հանդիսանալ հայոց լեզվի պատմության տիպաբանական բնութագրման համար՝ առնված այլ կարգի լեզվական հատկանշական ամբողջության մեջ:

5) Իբրև գրական լեզվի տարբերակ՝ լատինաբան հայերենն իր արհեստականությամբ առաջինը չէ հայոց լեզվի պատմության մեջ: Այդ տեսակետից այն հաջորդում է հունաբան հայերենին, ըստ որում վերջինիս հետ ի հայտ է բերում ոչ միայն մշակութային, այլև գուտ լեզվական առնչության իմաստով ընդհանրություններ:

6) Եվ վերջապես, կարևոր է նաև լատինաբան հայերենի և նրան ժամանակակից հայերենի խոսակցական և գրական տարբերակների

առնչության վերհանումը, հատկապես լեզվի պատմության ամբողջացման տեսակետից:

2. Լատինաբան գրավոր աղբյուրների տեսություն

14-18-րդ դդ. լատինաբան հայերենի ուսումնասիրությունն ամենից առաջ ենթադրում է համապատասխան գրավոր աղբյուրների օգտագործում: Դրանք բավականին շատ են, բնութիւ՛ խիստ տարբեր: Ըստ գրչության հանգամանքի գրավոր աղբյուրները, բնականաբար, բաժանվում են երկու խմբի՝ ձեռագիր և տպագիր: Խմբավորման միջին գիծը հայտնի է՝ 1512 թ., հայոց տպագրության սկիզբը: Մինչև այդ եղած գրավոր աղբյուրները ձեռագիր տվյալներ են պարունակում մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Կան նաև լեզվական չնչին փաստեր, հատկապես նման երևույթի քերականական սահմանումների դեպքում: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ տվյալ գրավոր աղբյուրը լիովին բացահայտելու նպատակով ստիպված ենք եղել լրացուցիչ օգտագործելու հետագա ժամանակի որոշ գրչագրեր: Հաճախ բնագրային համեմատություններ և զուգահեռներ ենք անցկացնում միևնույն երկի (բնագրի) ձեռագիր և տպագիր «տարբերակների» միջև, նույնիսկ (եթե բնագիրը թարգմանական է) համեմատում թարգմանության հետ:

Մեզ ավանդած այն գրավոր աղբյուրները, որոնք գրված են լատինաբան հայերենով կամ պարունակում են նույնպիսի լեզվական իրողություններ, ի հայտ են բերում գրչության կամ տպագրության ժամանակի, վայրի, ինչպես նաև արտաքին այլ հանգամանքների, այլև բովանդակության ու ծավալի, լեզվական նյութի բնութագրականության (հատկանշականության), քանակի (հոծության) ակնհայտ տարբերություններ: Դրանց անդրադառնում ենք ոչ միայն ընդհանուր քննարկմամբ, այլև կոնկրետ բնագրին վերաբերող դիտարկումների դեպքում՝ առանձին-առանձին:

Լինում է ժամանակ, երբ գրավոր աղբյուրներն ի հայտ են գալիս մեծ չափերով, որովհետև դրանք մշակութային զարգացման վերելքի, այսպես կոչված, երանելի ժամանակներ են, քաղաքական տեսակետից՝ խաղաղ և ստեղծարար: Եվ նման դեպքում բավարարվում ենք գրավոր աղբյուրների (նույնիսկ խիստ) ընտրությամբ, այն մտայնությամբ, որ գործի շարունակությունը վերաբերելու է ապագային:

Դրան հակառակ է այն, որ չնչին աղբյուրը և նրանում տեղ գտած վկայաբերումը, երբեմն դույզն-ինչ փաստն ու օրինակն իսկ աշխատել ենք երկար որոնել, փնտրել և անպայման նկատի առնել, որպեսզի ավելի առարկայական ձևով, առավել համոզիչ ու ամբողջական ներկայացնան այն իրադրությունն ու այն ժամանակը, որոնցում ստեղծվել են այդ տվյալները: Այդպիսի շրջանն, ինչ խոսք, մշակույթի առումով ամուլ, մտաթափ է, որովհետև հանդիսանում է հարկադրյալ արդյունքը քաղաքական խառն ու չարագործ ժամանակների՝ օտար կեղեքիչների բռնացումների, նրանց պատուհասած վայրագությունների և այլն: Այս շրջանի գրականության ընդհանուր վիճակի մասին սեղմ, բայց բավականին դիպուկ բնութագիր է տալիս Լեոն. «15-րդ դարը ցույց էր տալիս, որ իր նախկին շքեղ արվեստը մոնղոլական ավերակների տակ վերջնականապես կորցրած հայը կորցնում է իր ազգային ստեղծագործության մեծագույն կոթողը և՛ իր գրականությունը: Ամբողջ այդ դարը մի հատ պատմիչ տվեց՝ Թովմա Մեծուփեցին, որ իր խեղճ ու կրակ ընդունակությամբ կարողացավ մի քանի տասնյակ երեսների վրա նկարագրել Լեոն Թեմուրի արշավանքները: Իսկ 16-րդ դարը իր նախորդից էլ աղքատ էր: Մի երկու-երեք միամիտ արտագրողներ, որոնք իրենց հիշատակարանների մեջ նկարագրել են իրենց ժամանակի թշվառությունները, համարյա միակ գրական գործիչներն են, որոնք աշխատում են շարունակել հին վանական ուղղությունը գրականության մեջ»¹:

Լատինաբան գրավոր աղբյուրները ևս, իբրև հայոց գրավոր մշակույթի մի դրսևորումը, տարբեր դարերում տարբեր չափերի են հասնում: Համեմատաբար բեղուն սկիզբը հետագայում մի տեսակ խաթարվում է ոչ միայն ընդհանուր առմամբ, այլև միարարական շարժման ներքին անհամերաշխության բերումով: Լատին քարոզչության շրջանում ժամանակավորապես ի հայտ է գալիս հակառակություն: Դա բացասաբար է ազդում գրական արտադրանքի վրա: Անկման այդ ժամանակների, հատկապես 16-րդ դ. մեր լեզվի անկյալ վիճակը հավաստի ձևով է նշել Ղևոնդ Ալիշանը: Մեծ բանասերը գտնում է, որ 12-13-րդ դդ. հարուստ և «ընտրելագույն» գրականության ստեղծմանը հաջորդում են անկումն ու չքացումը, ըստ որում (որ շատ կարևոր է) հայերենը ևս վերելք չունի՝ «ոչ անոնց հաւասարող մը կ'երևի, և ոչ հայերէն գրական լեզուի յատակութիւն, և ոչ անոր մշակութիւն գրելով ու կարդալով», և դա դիտվում է արդյունք «աւերմանց և աւարմանց վերոհիշյալ բռնաւորաց»²:

¹ Լեոն, Երկերի ժողովածու, հ.3, Երևան, 1969, էջ 203:

² Յուշիկը հայրենեաց Հայոց ի հ.Ղևոնդ Ալիշան, (II տպ.), հ. 1, Վենետիկ, 1920, էջ 467–468:

Դա ընդհանուր քաղաքական կացության արդյունք էր, թե՛ հայ գաղթավայրերում և թե՛ մանավանդ մայր հայրենիքում ազդում էր հայոց մշակույթի առաջընթացի վրա, ինչ-որ չափով խոչընդոտում այն: Եվ դա երևան էր գալիս ամենուրեք՝ անկախ զարգացման գաղափարաբանական, դավանաբանական նկատելի երկպառակությունից, անկախ նրանում հակոտնյա միտումներ ու մոտեցումներ հանդես բերելու հանգամանքից¹:

Համապատասխան լեզվական նյութի փաստագրման նպատակով օգտագործված գրավոր աղբյուրներն այսօր մեծ մասամբ ունեն պատմական նշանակություն: Իսկ մնացածը, կարելի է ասել, դեռևս չի կորցրել իր արդիական արժեքը և ըստ այդմ կարող է ծառայել մշակութային մերօրյա խնդիրների լուծմանը: Հայագիտական, առավել ևս հայրենագիտական ուսումնասիրությունների համար նման գրավոր աղբյուրներն անխտիր ունեն մեծ կարևորություն: Դրանք անփոխարինելի նյութ են ընձեռնում լատինաբան հայերենի, այլև առհասարակ հայոց լեզվի պատմության համար: Նման աղբյուրների մանրակրկիտ հետազոտությունը նոր և արժանահավատ պատկերացում կարող է տալ հայ բառարանագիտության և պատմական բառագիտության, հայ քերականագիտության, ոճաբանության և այլ գիտելիքների, դրանց զարգացման պատմության վերաբերյալ:

Մեր օրերի հայերենագիտության առաջնահերթ խնդիրը, կարծում ենք, բնագրային փաստերի խորը և մանրամասն ուսումնասիրությունն է, և լատինաբան գրավոր աղբյուրներն այդ տեսակետից մեծ կարևորություն են ստանում:

Մեզ հասած գրավոր աղբյուրները համեմատաբար մեծ թիվ են կազմում լատինաբան հայերենի զարգացման առաջին ենթաշրջանի 1-ին, երկրորդ ենթաշրջանի 2-րդ և երրորդ ենթաշրջանի 1-ին ու 2-րդ փուլերում: Այնուհետև, լատինաբան հայերենն առավել մեծ գործունեություն ունի հայաշատ գաղութներում, հատկապես Իտալիայում և Հռոմի պապի գործության տակ գտնվող այլ վայրերում: Իսկ մայր հայրենիքում այն համեմատաբար լայն կիրառություն էր գտնում կաթոլիկական մշակույթի տարածման կենտրոններում:

14-րդ դ. 1-ին կեսին ավանդված գրավոր աղբյուրներն, ինչպես գիտենք, արդյունք են Բարդուղիմեոս Մարաղացու և նրա աշակերտների գործադրած ջանքերի: Ստեղծվում է մի պատկառելի գրականություն: Այն իր բնույթով հիմնականում թարգմանական է, իսկ բովանդակությամբ՝ մեծ մասամբ

¹ Հմմտ. *Լ.Խաչիկյան*, Հայ բնագիտական միտքը XIV–XVIII դարերում.– «Պատմա-բանասիրական հանդես», 1971, 2, էջ 42:

կրոնադավանաբանական, մասամբ՝ աստվածաբանական-փիլիսոփայական, այլև քերականական-ճարտասանական և այլն: Այդ գրականության վերաբերյալ կան բանասիրական, պատմագիտական և փիլիսոփայական լուրջ վերլուծություններ, որոնք կարող են կողմնորոշել հետագա ուսումնասիրողին շատ երևույթների գնահատության հարցում¹:

Այսպես, գրվում են, թարգմանվում կամ մեկնվում («մեկնաբանվում») են կաթողիկական նվիրաբերման աստվածաբանական հիմնավորման մի շարք գրքեր: Այդ փուլում աչքի ընկնող հեղինակ են հներից՝ Արիստոտելը (5-րդ դ. մ.թ.ա.), նորերից՝ Ալբերտ Մեծը (13-րդ դ., ծն. 1193 թ.), Թովմա Աքվինացին (1125-1274 թթ.), Հովհան Ֆիդանցան (Բոնավենտուրա. 1221-1274), Ջիլբերտուս Պոռետացին (մոտ. 1076-1154 թթ.), ժամանակակիցներից՝ Բարդուղիմեոս Բոլոնիացին (Մարադացի. 14-րդ դ.), Պետրոս Արագոնացին (14-րդ դ.), Նիկոլայոս Լյուրացին (1270-1340 թթ.), Բեդան (քահանա, ծն. մոտ. 675-735 թթ.), Հովհան Անգլիացին (14-րդ դ.), Հովհաննես Քոնեցին (14-րդ դ.) և ուրիշներ: Աչքաթող չեն արվում եկեղեցու արարողությունների առաջնահերթ անհրաժեշտության գրքերի թարգմանումն ու տարածումը՝ Ժամագիրք, Պատարագատույց, Կանոնք, Կացուցմունք («սահմանադրություն քարոզողաց») և այլն:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ լատին հաղինակների հայերեն թարգմանություններն ոչ միայն նպաստում են հայ գիտական մտքի «բարենորոգմանն» ու կատարելագործմանը, այլև երկրորդաբար «փրկում» այդ երկերը ժամանակի մեջ անհետացումից: Հայտնի է, որ Պետրոս Արագոնացու, Հովհան Անգլիացու երկերն այսօր գիտական աշխարհին ծանոթ են լոկ հայերեն թարգմանությունների շնորհիվ: Այնուհետև, այդ թարգմանությունները տարածվում են նաև հայ լուսավորչադավան մշակութային կենտրոններում, օրինակ՝ Տաթևի համասարանում, որտեղ կրթվող հայ մտավորականները, առանձնապես իմաստասեր այրերը (Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի և ուրիշներ) իրագեկ էին դառնում ժամանակի եվրոպական գիտության նվաճումներին, մշակում և սահմանում իրենցը՝ հայկականը ժամանակի մակարդակի սպասելիությամբ, այլև լցվում մտավոր հնարավորությամբ ու կորովով

¹ Տե՛ս, օրինակ, *Գ.Չարսիանյան*, Պատմություն հայերեն դպրոթեան, հ. 2, Վենետիկ, 1878, էջ 206–212: Միսական. Տեղագրություն Սիմեոս աշխարհի ի հ. Ղեկունդեայ Ալիշան, Վենետիկ, 1893, էջ 384–385: Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, Երևան, 1951, էջ 31–33: *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականի, էջ 31–33: *С.С.Аревшатян*, К истории философских школ Средневековой Армении (XIV в.), էջ 20 – 23. *М.А. von den Oudenrijn*, Linguae Haicanae Scriptores, ordines praedicatorum congregatioanes fratrum unitorum, Bern, 1960.

գաղափարապես դիմագրավելու կաթոլիկական-էքսպանսիոնիստական ամեն մի շարաշահման:

14-րդ դ. 1-ին կեսից ավանդված լատինաբան գրավոր աղբյուրները բավականին շատ են, դեանցից ընտրովի նկատի ենք առնում հիմնականում հետևյալները¹:

Ալբերտ Մեծի, Ջիլբերտուս Պոռետացու, Բարդ. Մարաղացու, Պետրոս Արագոնացու, Թովմա Աբվինացու երկերը թարգմանվում են այս ժամանակաշրջանում՝ հիմնականում հայ հոգևորականների ձեռքով: Դրանք լատին քարոզիչների համար գործածելի գրքեր են եղել՝ ձեռագիր, այնուհետև տպագրված վիճակով: Այսպես, Արագոնացու և Բարդ. Մարաղացու միատեղ տպագրված «Խրատականք եւ հոգեշահ քարոզք» գրքի առաջաբանում կարդում ենք. «Հանդիպելով սորայ (իմա՛ Հովհ. Բռնեցուն – Վ.Հ.) ամենաբարի և քաղցրուտյց վարդապետին Բարդուղիմէոսի եպիսկոպոսի, որ այժմս ասի երանեցեալ, և ընդ նմա զամենայն աշխատանս յանձին կալեալ և արիաբար ջան եղեալ զամենիմաստ վարդապետս ժողովելով Հայոց և Լաթինացոց, վասն դարձուցանելոյ ի հայկական բարբառ զԱստուածաբանական և ճշմարտաբան մատենանս լաթինացոց: Որոց վերակացու էր ժրաջան և յոգնահանճար մեծ վարդապետն Պետրոս Արագոնացին: Որք և քաջապէս երջանկաբար ամենայնի ճարտարութեամբ ըստուգապէս թարգմանեցին զայսոսիկ հետևեցեալ գրեանս, այսինքն՝ Ալբերթ, Առաքինութեանց, Մոլութեանց, Վեցօրէից, Բարոզ գիրք բազումք և այլք բազումք աստուածաբանականք և փիլիսոփայականք, որք ի տեղիս բազումս մինչև ցարդ գտանին ի մէջ Հայոց, և մանաւանդ ի գաւառն Նախիջևանու ի Վանս ամենայն սրբոց» (ն. տ., Վենետիկ, 1704, էջ 6-7): Այնուհետև, Ալբերտ Մեծի «Համառօտութիւն աստուածաբանութեան» գիրքը նախնական թարգմանության վրայից տպագրել է Մխ. Սեբաստացին, ընդ որում կցելով «Լուծմունք դժուարիմացից եւ տարակուսանաց բանից Ալպերտին» աշխատանքը, որը ևս լատինաբան հայերենի պատմության տեսանկյունից կարևոր աղբյուր է: Նշվում է հետևյալը. «Թարգմանեցեալ ի վաղնջուց ժամանակաց ի մեծամեծաց վարդապետաց մերոց, ի լաթին լեզուէ ի հայ բարբառ: Եւ նարդենիս ի լոյս ածեցեալ, և սրբագրեցեալ ըստ հնոց օրինակաց և ըստ նախատպին իւրոյ, հոգաբարձութեամբ և աշխատութեամբ Մխիթարայ վարդապետի Սեբաստացոյ» (ն.տ., էջ 3):

Ինչպես կարելի է նկատել, 14-րդ դ. 1-ին կեսից սկսած, այլև հետագայում ևս լատինաբան հայերենով գրվում և թարգմանվում են բազմաթիվ և տարաբնույթ աշխատություններ, որոնք ձեռագիր, այնուհետև տպագիր վիճակով ի սպաս են դրվել հոգևոր-մշակութային որոշակի առաջընթացին ծառայող ուրույն ուղղության պրոպագանդմանն ու տարածմանը: Ըստ այդմ Հռոմի պապական քարոզչությունը ժամանակին խաղացել է իր դերը միջնադարյան Եվրոպայի գիտության և հոգևոր մշակութային իրազեկ դարձնելու գործում: Լեզվի տեսակետից գնահատելին այն է, որ հայերենը հարստանում է համապատասխան հասկացություններ նշանակող տերմիններով և տերմինային անվանումներով:

Տեղի սղության պատճառով հնարավորություն չունենալով մեկ առ մեկ ներկայացնելու ոչ միայն հիշյալ, այլև մյուս հեղինակների (օրինակ՝ Նիկ. Լյուրացու, Բոնավենտուրայի, Թովմա Իտալացու և ուրիշների) այն երկերը, որոնք անկախ բովանդակության (ժանրային) տարբերություններից՝ մեզանում թարգմանվել են այդ նույն ժամանակում, գործածվել ձեռագիր արտագրություններով, հետագայում տպագրվել: Դրանցում տեղ գտած լեզվական փաստերին, օգտագործման հնարավորությունների սահմաններում, անդրադառնում ենք ընտրողաբար՝ հաճախ նյութեր քաղելով միևնույն երկի և՛ ձեռագիր, և՛ տպագիր աղբյուրից¹:

14-րդ դ. գրեթե ողջ ընթացքում ամենամեծ հեղինակը թերևս Բարդ. Մարաղացին է ոչ միայն իր հեղինակած գրքերով («մատյաններով»), այլև գաղափարական և լեզվական քաղաքականություն իրագործելու տեսակետից: Մյուս գործիչները (Հովհաննես Քոնեցի, Հակոբ Քոնեցի) և ուրիշներ առանձնապես աջակցող են իրենց ուսուցչի և առաջնորդի նպատակադիր գործում, որն անշուշտ ակնառու է և գնահատելի այդ ժամանակի համար:

Իսկ հաջորդ երկու դարում լատինաբանության պրոպագանդման, լեզվական քաղաքականության իրականացման մեջ չեղան մնան գործիչներ, երևան չհանվեց նրանց արածին հավասար կամ համարժեք գրականություն, որը ոչ միայն քարոզչական-գաղափարական անկման, այլև արտաքին աննպաստ պայմանների հետևանք էր:

Այդ շրջանի գրավոր աղբյուրները մեզ ավելի շատ նյութ են տրամադրում՝ առհասարակ, և մենք ավելի շատ փաստեր ու տվյալներ ունենք

¹ Դրանց ընդարձակ թվարկումը տես *Յովհաննես Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 31–34: *С.С.Арешатян*, նշվ. աշխ., էջ 20 և այլն:

լատինաբան հայերենի վերլուծության ու նկարագրության համար, քան հնարավոր է ընդգրկել մեր այս աշխատանքում: Քիչ չեն դեպքերը, երբ լեզվական ինչ-ինչ երևույթների (օրինակ՝ լատինաբան ձևերի «սրբագրման», «խմբագրման», այլև մեղմացման կամ առավել խտացման և այլն) պարզաբանման նպատակով համեմատություն ենք անցկացնում նույն գրավոր աղբյուրի (բնագրի) հին՝ ձեռագիր, և նոր՝ տպագիր տարբերակների միջև: Սա ոչ միայն լեզվական, այլև բնագրագիտական աշխատանք է, որն առավել արդյունավետ կարող է լինել, եթե հնարավորություն ստեղծվի քննության առնելու տարբեր ժամանակներում երևան եկած լատինաբան ողջ գրականությունը, տվյալ դեպքում լեզվական առանձնահատկությունների, այսինքն՝ լատինաբան հայերենի պատմության տեսանկյունից:

Հետագա դարերում թուլանում է լատինաբան հայերենով գրականության ստեղծման գործը: Ուստի չունենք այս շրջանից ավանդված քիչ թե շատ աչքի ընկնող որևէ տպագիր գրական հուշարձան, եթե բացառենք մեկ-երկու թարգմանություն: Իսկ ձեռագիր մատյաններում, պետք է կարծել, կան այնպիսիները, որոնք եթե ոչ լիովին, ապա մասամբ առնչվում են լատինաբանությանը, ուստի դրանք նույնպես կարող են լինել առանձին ուսումնասիրության առարկա:

16-րդ դ. վերջերից և հատկապես 17-րդ դ. և հետագայում լատինաբան գրավոր աղբյուրներն անհամեմատ շատ են, որովհետև Հռոմի պապական քարոզչությունն այդ ընթացքում ձեռք է բերում նոր գծեր և ունենում է ավելի անզիջում ձեռնհասություն: Եվ նման ջանքերը հիմնականում պսակվում են հաջողությամբ. գիտական և հոգևոր-դավանաբանական գրականությունը մեզանում շարունակում է խաղալ մտավոր զարգացմանը նպաստող դեր:

Այս շրջանի գրականությունը ստեղծվում է ավելի շատ մայր հայրենիքից դուրս, հիմնականում հայ կրթօջախներում, համեմատաբար հայաշատ վայրերում: Տպագրվող գրքերի հիմնական մասը հովանավորվում է ազգի առևտրական կապիտալի միջոցներով: Հայ մեծատուններն իրենց անունն անմահացնելու նպատակով վճարում են՝ գրքերի հիշատակարաններում և ընծայագրերում տեղ ունենալու համար: Լատինաբան հայերենով ստեղծվում է մի հսկայական գրականություն, որն անշուշտ այսօր պատմական նշանակություն ունի, լեզվի տեսակետից՝ անգերագնահատելի կարևորություն:

¹ Օգտագործված գրավոր աղբյուրները բերվում են սույն աշխատանքի վերջում՝ համապատասխան համառոտագրությամբ, որը նկատելի է նաև ըստ այսմ:

Անհամեմատ մեծ թիվ են կազմում 17-րդ դ. ավանդված լատինաբան գրավոր աղբյուրները: Դրանք թե՛ ձեռագիր են և թե՛ տպագիր: Այս դարում հայոց առավել աչքի ընկնող մշակութային կենտրոններ են հանդիսանում Հռոմը, Ամստերդամը, Վենետիկը, Մարսելը, Նոր Զուղան, Կ.Պոլիսը, Լիվոռնոն, մասամբ՝ Փարիզը, Լայպցիգը, Սիլանը և այլն:

Հռոմում տպագրված գրքերը կամ ինքնուրույն են, կամ թարգմանական: Այստեղ լույս են տեսնում ժամանակի այնպիսի մեծ հեղինակությունների գրքեր, ինչպիսիք են Կղեմես Գալանոսը (1610-1666 թթ.), Հովհաննես (Հոլով) Կոստանդնուպոլսեցին (1635-1691 թթ.), Հակոբ Վիլոտը (1656-1743 թթ.) և ուրիշներ: Թարգմանություններից հիշելի է հատկապես Հովհաննես Պոնայի, Թովմա Գեմբացու երկերի տպագրությունը: Նշանավոր են Ֆրանցիսկոս Ռիվոլայի և Աստվածատուր Ներսեսովիչի (1647-1709 թթ.) բառարանները:

Այսպես, իբրև ժամանակի գրավոր աղբյուր մեծ արժանահավտություն են ունեցել Հովհաննես (Հոլով) Կոստանդնուպոլսեցու «Զտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» (1674), «Քերականութիւն լատինական հայերէն շարագրեցեալ» (1675) և «Puritas haygica seu grammatica armenica» (առաջինի լատիներենը, որոշ տարբերություններով. 1675) գրքերը: Դրանք ունեն տեսական շարադրանքի նույն դրվածքը, մեզանում որոշակի հիմք են հանդիսացել լատինաբան հայերենի երևույթը քերականագիտորեն գնահատելու համար¹:

Լեզվական փաստերի տեսակետից որոշակի երևույթ են Կղեմես Գալանոսի «Քերական[ական] եւ տրամաբանական ներածութիւն» (1645) և Աստվածատուր Ներսեսովիչի «Բառգիրք լատինացոց եւ հայոց» (1695) աշխատությունները: Առաջինը հավելյալ պարունակում է (էջ 1-27) «Բառգիրք ամենայն իմաստասիրական բառից հայոց եւ լատինացոց» մասը, որն այլ բան չէ, քան ժամանակի գիտելիքի երկլեզվյան մեկնաբանողական տերմինացանկ: Երկրորդում ընդգրկված են որոշակի բնագավառի բառեր, որոնք հայերեն բացատրվում են սակավ համարժեքներով. այդուհանդերձ այս գիրքն ուշագրավ է ժամանակի ընդհանուր հայերենի լեզվավիճակի մասին պատկերացում ունենալու, լատինաբան տարբերակի ձևեր պարունակելու տեսակետից (տես էջ 250, 323, 514, 515 և այլն): Սույն քերականական և բառարանագրական աշխատանքներն ունեն երկակի նշանակություն. դրանք ոչ միայն ընձեռում են կարևորագույն լեզվական տվյալներ, այլև պարունակում են կոնկրետ տեղեկություններ ու հավաստումներ այս կամ այն երևույթի գոյության, դրա գործածության վերաբերյալ²:

¹ Հմմտ. Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 313–323:

² Հմմտ. Էդ.Աղայան, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը, էջ 79:

Իբրև գրավոր աղբյուր օգտագործվում են կրոնադավանաբանական մի քանի երկեր: Դրանցից են, օրինակ, Կղեմես Գալանոսի «Միաբանութիւն հայոց Ս. եկեղեցոյն» (հ. Ա, 1650, հ. Բ, մաս Ա, 1658 և հ. Բ մաս Բ, 1661): Միքայել Ֆերուրյանի «Մանաւանդականք առաքինութիւնք» (1681) գրքերը: Օգտագործված են նաև այնպիսի գրքեր, որոնք մատենագիտության մեջ նշվում են առանց հեղինակի (կամ՝ հեղինակն առայժմ մնում է անհայտ) օրինակ՝ «Սպասատրութիւն պատարագին» (1677) գիրքը, ալիգատ՝ «Խորհրդատետր պատարագին» (ն.թ.):

Լեզվական իրականությունների առումով, բնականաբար, որոշակի հետաքրքրություն պիտի ներկայացնեն ժամանակի թարգմանությունները, կամ նախկինում եղածների այդ ժամանակվա տպագրությունները: Այս տեսակետից էլ, ահա, որոշակի ընտրանքով իբրև աղբյուր են ծառայել այսպիսի տպագիր թարգմանություններ, ինչպիսին են Հովհաննես Պոնայի «Ձերբաժութիւն յերկինս» (թարգմ. Վարդան Հունանյան, կրկին տպագրությամբ՝ Հռոմ, 1674, Ամստերդամ, 1705)¹: Այդ երկը հետաքրքիր է ոչ միայն ինքնին վերցված, այլև իր որոշ հատվածների հետագա տպագրության (իմա՝ «Սկզբունք եւ ուսուցմունք կենի քրիստոնէականի», Վենետիկ, 1744) հետ համեմատած²: Խիստ ուշագրավ է Թովմա Գեմբացու «Յաղագս համահետևման» (վեցակի տպագրություն՝ Հռոմ, 1674, Ամստերդամ, 1696, Կ.Պոլիս, 1700, Հռոմ, 1705, Վենետիկ, 1737, 1786) գիրքը³: Այն անմասն փաստեր է մատուցում լատինաբան հայերենի գործածության և շրջանառությունից դուրս գալու վերաբերյալ⁴: Այնուհետև, օգտագործել ենք Հռոմում տպագրված մի քանի այլ թարգմանություն, ըստ որում անհայտ (կամ՝ առայժմ չպարզված) հեղինակների երկեր՝ «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» (Հռոմ, 1630), «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ» (գուգաղիի՝ հայ. և լատ., 1642) և «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» (թարգմ. Հովհ. Կոստանդնուպոլսեցի, Հռոմ, 1675, այլև՝ Վենետիկ, 1685, ն.տ., 1724): Այս վերջին գրքին ալիգատ տպագրված է

¹ Թարգմանիչը կազմել է «Բառարան գրքիս»-ը՝ գետեղված վերջում: Այդ մատենակից բառարանը ընդգրկում է աշխատության հայերեն թարգմանության մեջ հանդիպող նոր, մեծ մասամբ անծանոթ և դժվարիմաց եզրերի (տերմինների) և գիտաբանների բառարանագրական մշակումը:

² Տես Վ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում, էջ 65–72:

³ Նշվում են նաև հետագա թարգմանություններ՝ Վենետիկ, 1853, Վիեննա, 1794. վերջին տվյալը տես Մ. Ղազիկեան, Հայկական մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, Վենետիկ, հ. 1, 1909–1912, էջ 772–776:

⁴ Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 64 և հջ.:

«Ուշիմաբանութիւն փիլիսոփայից»-ը (էջ 201-237. թարգմ. նույնի, թարգմ. ժամանակը՝ 1685. նույնը ալիգատ վերջին տպագրութեանը):

17-րդ դ. 2-րդ կեսին աչքի ընկնող դիրք է բռնում հոլանդահայ գաղութը: Մշակութային բուռն գործունեության ոլորտում որոշակի տեղ ունի տպագրությունը, որի շնորհիվ մեզ են ավանդվում բազմաթիվ գրքեր՝ տարբեր հեղինակությամբ և բովանդակությամբ: Ինչպես գիտենք, դրանք գրվում էին հատուկ նպատակով, ունեին մեթոդական-ուսուցողական ակնառու ուղղվածություն: Ամստերդամի հայկական կրթօջախի գործի մեջ մեծ մասն ունեն առանձնապես Թովմաս Վանանդեցին, Մատթեոս Վանանդեցին (մոտ 1630-40-ական թթ. - մահ. թ. անհայտ), Գուկաս Վանանդեցին (մոտ 1650-ական թթ. - մահ. թ. անհայտ), Ոսկան Երևանցին (1614-1674 թթ.): Նրանք միառժամանակ համերաշխորեն տպագրում են ոչ միայն նախկինում ստեղծված երկեր, այլև իրենց գրած կամ կազմած ախատություններ: Դրանք լույս են տեսնում և՛ սույն դարում, և՛ հաջորդի սկզբներին:

Իբրև ընդհանուր դիտողություն պետք է նշել, որ Ամստերդամում տպագրված երկերի լեզվական նյութը քիչ է ներծծված լատինաբան խորթություններով ու արհեստականությամբ: Դրանք համեմատաբար լատինաբանությունից զերծ գրավոր աղբյուրներ են, երբեմն՝ ամենևին զերծ: Այդուհանդերձ, դրանցից մի քանիսը մեզ համար ունեն գրավոր աղբյուրի արժեք:

Ամենից առաջ հիշելի են Ոսկան Երևանցու հարտարակած գրքերից երեքը՝ «Շարակնոց» (1664), «Աստուածաշունչ» (1666) և «Քերականութիւն» (ն.թ.): Վերջինիս մասին ի մասնավորի կարելի է ասել, որ այն ցայժմ ըմբռնվել է իբրև ոսկանյան քերականություն: Այնինչ, պարզվում է, որ այն Թովմա Իտալացու (17-րդ դ.) քերականության Ոսկանի թարգմանության կարևորագույն դրույթների և դրանց «մեկնությունների» հիման վրա ստեղծված մի յուրօրինակ, ընդարձակ աշխատության տպագիր համառոտումն է¹: Բանասիրության մեջ որոշակիորեն քննության է առնված Ոսկան Երևանցու տպագրած «Աստուածաշունչ»-ն իր խմբագրական նորանուծությունների և հարմարեցումների գնահատության տեսանկյունից: Տեղ են գտել նաև գրքի լեզվական նյութի վերաբերյալ գնահատություններ²:

Լեզվական չնչին տվյալներ են հանդիպում Գուկաս Վանանդեցու «Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց» (1698), «Գ-անձ չափոյ, կշռոյ, թուոց և դրամից» (1699), «Բանալի համատարած աշխարհացուցի» (1696) գրքերը:

¹ Հմմտ. *Յովհաննէս Քոնեցի*, Մեկնութիւն քերականին, էջ 144-145:

² Տե՛ս, օրինակ , Հ. Ն. *Տեր-Ներսեսյան*, նշվ. աշխ., էջ 316-327:

Գրանցից վերջինին ալիգատ է Մատթեոս և Դուկաս Վանանդեցիների «Ոսկեայ դուռն դպրատան»-ը, որում զետեղված են նաև հեղինակների համառոտ «Քերականություն»-ը¹, «Բնաբանություն իմաստասիրական»-ը:

Իբրև գրավոր աղբյուր նկատի ենք առել նաև հետևյալները՝ «Գիրք սրբոյն Մաշտոցի վարդապետի» (1667), «Վարդապետություն քրիստոնեական ըստ հայոց» (ն.թ.) և «Գիրք առասպելաբանութեանց, որ ասի Ադուլտագիրք» (1666):

Առաքել Գավրիժեցին 17-րդ դ. մեր այն երջանիկ պատմիչն է, որի «Պատմություն»-ը լույս է տեսել իր կենդանության օրոք (1669), և դա եղել է Ոսկանի նախաձեռնության շնորհիվ: Գրքում զետեղված է տպագրիչի կենսագրականը հեղինակի ձեռքով, որը խիստ ուշագրավ է նաև լեզվական նյութի առումով²:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Վենետիկում տպագրված գրքերը: Գրանցում շոշոփելիորեն առկա է լատինաբան լեզվական նորամուծությունը: Նման տվյալներ ենք քաղել Հովհ. Կոստանդնուպոլսեցու հեղինակած «Հայելի ճշմարտութեան» (1680), «Պարզաբանություն հոգեմուսակ Սաղմոսացն Դարթի» (1687), թարգմանած «Նորագոյն ծաղիկ զօրութեան» (II հրատ., 1685) և «Թարգմանություն իտալական սրբազանի խորհրդատետրն հայոց» (զուգադիր՝ հայ. և իտալ., 1690) գրքերը: Օգտագործել ենք նաև այլ թարգմանություններ, որոնց մեծ մասի թարգմանիչը անհայտ է (առայծմ)՝ «Թուղթ սիրոյ և միաբանութեան» (այլ կերպ՝ «Դաշանց թուղթ», զուգադիր՝ հայ. և իտալ., 1683. ալիգատ՝ ՄՄՁ 2272, էջ 1-43), «Բուրաստան աղօթից» (թարգմ. Ստեփաննոս Լեհացի, 1685), «Թուղթ սիրոյ և միաբանութեան» (զուգադիր՝ հայ. և իտալ., 1695)³: Նյութեր ենք քաղել նաև այստեղ տպագրված «Խորհրդատետր սրբազան պատարագի» (1686) գրքից:

Այս դարում Վենետիկի հրատարակությունների թիվն այնքան էլ մեծ չէ, այն մեծանում է հետագայում:

Մարտելում տպագրված գրքերը վերաբերում են 17-րդ դ. վերջին երեսնամյակին: Այդ թնթացքում լույս են տեսնում կարևոր գրական հուշարձաններ Ոսկան Երևանցու (գործակցող՝ Թադեոս Համազասպյան, Սողոմոն Լևոնյան) հրատարակչական նախաձեռնությամբ: Հայտնի է, որ այստեղ էր տեղափոխվել

¹ Հմմտ. Գ.Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 172-174:

² Տես նաև Հ.Միրզոյան, Առաքել Գավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին. «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1971, 2, էջ 190-197:

³ Սա նախորդի համեմատությամբ թերևս նոր՝ երկրորդ տպագրությունն է:

Ամստերդամից ոսկանյան տպարանը և վրեանվանվել «Ս.Էջմիածնի և Ս.Սարգսի»:

Տպագրվում են հիմնականում կրոնական և դավանաբանական գրքեր, մասամբ՝ այլ բնույթի: Նյութեր ենք քաղել հետևյալ երկերից՝ «Գիրք ժամանակագրութեան» (1673, ըստ այլոց՝ 1676, 1679 կամ 1680), «Գիրք վայելուչ և հարկատր» (1675), «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի» (1676), «Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Ադուէսագիրք» (1683):

Նկատի ենք առել նաև Հովհ. Կոստանդնուպոլսեցու «Համառօտութիւն ճարտասանականի արուեստի» (1674), նրա թարգմանած «Պարտեզ հոգևոր» (1684), ինչպես նաև Ռսկան Երևանցու «Գիրք այբուբենից և կերպ ուսանելոյ զլեզուն իտալական» (1675) գրքերը:

17-րդ դ. սկզբներին արտաքին անախորժ, «անկիրք թափառական ցեղերի» միջամտության հետևանքով հայության մի հոծ զանգված բռնի տեղահանվում է իր բնօրրանից և ծվարում ոչնչի վրա իր իսկ հիմնած Նոր Ջուղայում՝ անվամբ իբրև վերհուշ նախկին Ջուղայի: Այստեղ շուտով մեծ զարկ է տրվում նաև մշակութային անձանձի գործունեության՝ առ ի պահպանություն ոգու, բարեկրթության: Տպագրվում են նաև գրքեր, գրվում են ձեռագիր մատյաններ: Իբրև մեզ հետաքրքրող նյութ տրամադրող աղբյուրներ փոքրիշատե ուշագրավ են մի քանիսը՝ Խաչատուր Կեսարացու հրատարակած «Խորհրդատետր» (1641), Հովհաննես (Միքուզ) Ջուղայեցու «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան» (1687, այլև՝ 2-րդ տպ.՝ Կ.Պոլիս, 1713) գրքերը¹:

17-րդ դ. վերջին Կ.Պոլսում տպագրվածներից նյութեր ենք քաղել առանձնապես «Գիրք խոստովանութեանց» (1698), Խաչատուր Էրզրումեցու «Համառօտ մեկնութիւն Երգոյն երգոցն» (1700), այլև «Գիրք մեկնութեանն Յայտնութեանն սրբոյ Յօհաննու աւետարանչի» (թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, 1700) գրքերից:

Լիվոռնոյում տպագիր գիրք են լույս տեսնում 17-րդ դ. 70-ական թթ. մինչև դարավերջը: Դրանցից այստեղ օգտագործել են մի քանիսը՝ «Խոռոստովանարան կամ ամբաստանարան» (թարգմ. Հովհ. Կոստանդնուպոլսեցի, 1669), «Պարզաբանութիւն քրիստոնեականի վարդապետութեան» (հրատ. Ռսկան

¹ Հովհաննես (Միքուզ) Ջուղայեցու սույն գրքի տպագրության հետ կապած նկատելի է երկու հակասություն՝ նախ՝ գրքի էջ 3-ում նշվում է «ի թոռց փրկչին Ռ-ՁՃՁԸ (=1688) և հայոց Ռ-ՃԼՁ (1687), երկրորդ՝ ըստ «Հայ հնատիպ գրքի մատենագիտության» ցանկի գիրքն ունեցել է կրկնակի տպագրություն Կ.Պոլսում, նույն 1713 թ., մեկը՝ Աստվածատուր Դպիրի տպարանում, իսկ

Երևանցի, 1670)¹, Խաչատուր Էրզրումցու «Գիրք քերականութեան» (1696) և «Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի» (ն. թ.):

Մեկ-երկու գիրք են լույս ընծայվել այլ քաղաքներում: Օրինակ՝ Ֆրանցիսկոս Ռիվոլայի «Բառգիրք հայոց և լատինացոց» (Փարիզ, 1633, նախապես՝ Միլան, 1621):

Գրավոր աղբյուրների փոխհաջորդման և շաղկապվածության տեսակետից 17-րդ դ. բավականին կից է 18-րդին: Այս դարում տպագրված շատ ու շատ գրքեր 18-րդում վերահրատարակվում են (երբեմն՝ բազմիցս): Այնուհետև, լինում են դեպքեր, երբ նախկինում եղածի կողքին արվում են նոր թարգմանություններ: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ տվյալ գիրքը, անկախ 17-րդ դ. 1-ին անգամ լույս ընծայված լինելուց, վերահրատարակվում է ոչ այնքան օգտագործման պահանջները բավարարելու, որքան լեզվական «սրբագրման» կամ «խմբագրման» առնելու նպատակով: Դրանում, ինչ խոսք, մեծ ներդրում ունեն Մխիթար Սեբաստացին և իր (երեց ու կրտսեր) աշակերտները: Վերջիններս, առհասարակ պատեհություններ ունենալով կամ որսալով նման գրքերի ընթերցողական մեծ պահանջունքը, ձեռնարկում են դրանց վերահրատարակումներին, դրանով իսկ ինչ-որ չափով իրագործում լեզվական բարեշտկման մտադրությունը: Միևնույն գրքի երկու և ավելի տպագրության, ընդ որում բարեփոխված լեզվական քննությունը, մասնավորապես հայերենում երբեմնի տեղ գտած լատինաբան նորամուծությունների հաղթահարման տեսակետից, ինչպես գիտենք, աննման արժեք են ներկայացնում: Դրանք միանգամայն պարզ, ցայտուն կերպով երևան են բերում լեզվաշինական այն «գործը», որին ձեռնամուխ են եղել և որը հաջողությամբ իրականացրել են ժամանակի հայրենագետներից հատկապես Վենետիկի Մխիթարյան դպրոցի ներկայացուցիչները²:

Գրավոր աղբյուրների մեծ մասը երևան է գալիս Վենետիկում, այլև՝ Կ.Պոլսում: Դրանք տպագրվում են նաև Ամստերդամում, Հռոմում, Ս.Պետերբուրգում, Էջմիածնում, Նախիջևանում և այլուր:

Վենետիկը հրապարակ է հանում կրոնական և դավանաբանական, բնագիտական-ինաստասիրական, ճարտասանական, ուսումնական,

մյուսը՝ Գրիգոր Մարգվանեցու, որը թերևս թյուրիմացություն է, մանավանդ որ այդ շրջանում հիշյալ տպագրիչներն իրենց այդ աշխատանքում գործակցում էին միմյանց:

¹ Ռուպերթոս Պելլարմինոսի հիշյալ գրքի հայերեն թարգմանության տարեթիվն է 1669, իսկ տպագրությունը՝ 1670: Ա.Ղազիկյանը թյուրիմացաբար տպագրությունը նշում է 1669: Գիրքը տպագրվել է միայն մեկ անգամ:

² Ավելի մանրամասն տես Վ.Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում, էջ 63–72:

քերականական-բառարանագրական ինքնուրույն և մեկնողական բազում գրքեր՝ գիտական կամ հանրամատչելի շարադրանքով: Հասարակական և մշակութային նոր տրամադրությունների արտացոլումն են հանդիսանում շատ հեղինակներ, համբավ են ձեռք բերում նորերը: Հայտնի են դառնում շատ ու շատ հմուտ և ժամանակի առումով ներհուն թարգմանիչներ:

Իբրև գրավոր աղբյուր նկատի ենք առել Հակոբ Վիլլոտի «Պատմագրութիւն կաթողիկոսաց» (1713), Պետրոս Արագոնացու «Գիրք մոլութեանց», (1720, 2-րդ տպ.՝ 1773), և «Գիրք առաքինութեանց» (1721, 2-րդ տպ.՝ 1772), Հովհաննես Կարմելիտականի «Խթան գղջման» (1727), «Պատմագիրք հոգւոյ հաւատացեալ ննջեցելոց» (1724), «Գաշտիկ ծաղկալի» (1727), Թոմա Աքվինացու «Խոստովանարան» (ն. թ.), Աղեքսանդրոս կրոնավորի «Յարացոյց ապաշխարողաց» (1731), Հովհաննես Պոնայի «Սկզբունք և ուսուցմունք» (1744), Ֆրանչիսկոս Սալեզացու «Ներածումն առ ջերմեռանդ կեանն» (1748), Պողոս Սենեքյանի «Կրթութիւն ապաշխարողի» (1751), Հովհաննես Պոնայի «Կերակուր քահանայից» (1760), «Արիեստ փրկութեան» (1760) գրքերը:

Օգտագործել ենք Մխիթար Սեբաստացու հեղինակած «Կրթութիւն աղօթից» (1718), «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» (1725), «Մեկնութիւն գրոցն Ժողովողին» (1736), «Չայն Քրիստոսի» (1753), «Խոկումն վարուց» (ն.թ.), «Քերականութիւն» (1730), «Հարցումն և պատասխանի գրերականութենէ» (1759) գրքերը, թարգմանած՝ Ալբերտ Մեծի «Գրախոս հոգւոյ» (1729) երկը, ինչպես նաև տպագրած՝ «Աստուածաշունչ»-ը (1733):

Առանձին տեղ ունեն Անտոն Գովղնի «Փիլիսոփայութիւն» (1-ին թարգմ.՝ ՄՄՉ 2053, 2-րդ թարգմ.՝ Ներածական մաս, 1751, հհ. 1-3, 1750), Խաչատուր Էրզրումեցու «Ճարտասանութիւն» (1713), և «Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն» (1733), Ալբերտ Մեծի «Համառօտ աստուածաբանութիւն» (1715. հմմտ. ՄՄՉ 9068) աշխատությունները:

Կ.Պոլսում տպագրված գրքերը հիմնականում գերծ են լատինաբան նորամուծություններից: Դ-ա, սակյան, ամենևին ապացույց չէ այն բանի, թե դրանցից ամենևին գերծ են այդ գրքերը: Մանրամասն քննությունից պարզվում է, որ դրանցում հանդիպում են լատինաբան ինչ-ինչ ձևեր, հավանաբար կիրառված անկանխակալ մոտեցմամբ, պատահաբար: Այդպիսի տվյալներ պարունակում են շատ քիչ թվով գրքեր: Դրանցից նկատի ենք առել մի քանիսը, օրինակ՝ Գալուստ Ամասիացու «Գիրք որ կոչի Լուսաշաւիղ» (1704), «Գիրք մտածական աղօթից» (թարգմ.՝ Պետրոս Թիֆլիսեցի, 1701), Մանուել Սրմաքեշյանի «Գիրք որ կոչի

Լուծիչ տարակուսանաց» (1755) և «Նորագոյն ծաղիկ գորութեանց» (թարգմ.՝ Հովհաննես Կոստանդնուպոլսեցի, 1724) և այլն:

Մշակութային մյուս կենտրոններում տպագրված գրքերից, տվյալ դեպքում, ուշագրավ են հատկապես հետևյալները. Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների «Բնաբանութիւն իմաստասիրական» (Ամստերդամ, 1702), Ղուկաս Վանանդեցու «Պատկերասէր պատկերատեսաց» (ն.տ., 1716), Հակոբ Վիլլոտի «Հայերէն-լատիներէն բառարան» (Հռոմ, 1714), այլն՝ «Մեկնութիւն դաւանութեան» (ն.տ., 711), «Խոսակցութիւն Թեոփիլոսի Յաղագս ճշմարտութեան» (Լիվոռնո, 1701):

Գրավոր աղբյուրների տեսությունն ավարտելուց առաջ հարկ է ուշադրություն հրավիրել մի շատ կարևոր հանգամանքի վրա ևս: Մինչև լատին քարոզիչների գործունեությունը Քոնստանդնուպոլսում, ինչպես նաև Մխիթարյանների ջանքերով լատինաբանության հաղթահարումից հետո արդյո՞ք չեն եղել կամ չեն շարունակվել լինել լատիներենի ոգով աշխատություններ, կամ չեն գրվել, թարգմանվել լատինաբան հայերենի երևույթներ պարունակող երկեր: Պատասխանը մեկն է՝ դրական, այսինքն՝ եղել են և շարունակվել են լինել:

Հայտնի է, որ մինչև Բարդուղիմեոս Մարաղացու հոգևոր-գիտական գործունեության ծավալումը, մեզանում Հռոմի կաթոլիկական խրախուսանքների պայմաններում ձեռնարկվել են լատիներենից թարգմանություններ՝ ի նպաստ նոր գաղափարների սերմանման ու տարածման: Այսպես, օրինակ, Արտազի շրջանի Ս. Թադեոս առաքյալի վանքում և Ծործորի դպրոցում գործել են ժամանակի հայ և լատին (հիմնականում՝ ֆրանցիսկյան) միաբանները, որոնց գործունեության մի մասն էլ եղել է թարգմանությունը¹: Հայերենի են վերածվում բազում գրքեր: Եվ դա արվում է ոչ միայն լատին, այլև հայ ձեռնհաս մարդկանց ջանքերով (օրինակ՝ Ֆրա Պոնցիուս, Իսրայել վարդապետ, Հովհաննես Երզնկացի և ուրիշներ):

Ավելին, ֆրանցիսկյան («կրտսեր եղբայրներ» - fratres minores) ընկերության թարգմանական գործունեությունը նախորդում է և շահագրգռում հաջորդներին: Այն շարժում է Բարդուղիմեոս Մարաղացու և նրա համախոհների եռանդը, որի արդյունքը լինում է դոմինիկյանների լայն թարգմանական գործունեությունը: Հովհաննես Երզնկացին, օրինակ, Թովմա Աքվինացու «Գիրք խորհրդոց»-ի հիշատակարանում գրում է, թե ինչպիսի հորդորով է ինքն այդ գործի թարգմանությանը ձեռնարկել և ինչ ջանք ու եռանդ է վատնել լատին բնագիրը հայերենի ճշտորեն վերածելու համար. «Եւ մեծաւ թախանձանաք թարգմանեցի

¹ Մ.Ա.Ուղեներին, Հայ-դոմինիկեան մատենագիտական ծանօթագրություններ.– «Բազմավէպ», Վենետիկ, 1922, էջ 138–139, 229–231, 262–263 և այլն: Յովհաննէս Քոնեցի, նշվ. աշխ., էջ 18–22:

գաս ի հայ բարբառ հրամանաւ պապին Հռոմայ և ձեռնտուութեամբ արհեպիսկոպոսին տէր Չաքարիայի, սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի և միջնորդութեամբ տէր Բարդուղիմէոսի՝ հեզահոգի ֆրանկ եպիսկոպոսի և յոյժ գիտնականի: Եւ աւանդեցի զսա եկեղեցեացոյ Հայաստանի ընծայ անգին և գանձ պատուական, *աշխատեալ իմովս տկարութեամբ և յղկեալ ըստ կարի զբառս և զբանս*» (ընդգծումը մերն է - Վ.Հ.)¹

Հետաքրքիր է այն փաստը, որը նշում է Մ.Ա.Ուղենրիյնը՝ օգտագործելով Սուրբհաս Սոմայլանի մի տվյալը, այն է՝ Հովհաննես Երզնկացու թարգմանությունների շրջանում (20-ական թթ.) Բարդուղիմէոսը դեռևս «հայերենը չէր սորված, այլ պարսիկ լեզուով կրնար յարմար եզրերը թելադրել»²: Ուստի բուն լատինաբան հատկանիշներով ստեղծված գրավոր աղբյուրները երևան են գալիս հետագայում, իսկ մինչ այդ եղածները կարելի է բնորոշել իբրև լատիներեն բնագրերի լեզվական ազդեցությամբ, թարգմանական ներգործությամբ տեղ գտած երևույթներ: Իսկ դրանք, անշուշտ կան, ինչպես նաև նկատվում են այն քերականություններում, որոնցում լեզվական այս կամ այն երևույթը մեկնաբանելիս նկատի է առնվել լատիներենի առանձնահատկությունը:

Այդ շրջանի (մինչև 1316 թ.) լատին թարգմանություններից և ինքնուրույն գործերից իբրև գրավոր աղբյուր նկատի ենք առնում հատկապես հետևյալները. Հովհաննես Ծործորեցու «Մեկնութիւն քերականութեան» (1322 թ. առաջ)³, Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոց» (թարգմ.՝ Հովհաննես Երզնկացի, ՄՄՉ 2515, 1321 թ.), Նիկողայոս Լյուրացու «Մեկնութիւն Յովհաննու Աւետարանին» (թարգմ.՝ Ֆրա Պոնցիոս, աջակցող՝ Իսրայել հայ վարդապետ, ՄՄՉ 5701, 14-րդ դ.)⁴ նույնի «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի» (թարգմ. Ֆր.Պոնցիոս, 1339 թ.), Հովհան Ֆիդանցայի (Բոնավենտուրայի) «Վասն վարուցն Ս.Ֆրանցիսկոսի» (թարգմ. Ֆրա Պոնցիոս, 1339 թ.) և այլն:

Այնուհետև, թեև լատինաբանությունը հաղթահարվում է 18-րդ դ. 70-ական թթ. վերջին կամ 80-ականի սկզբին (ավելի ստույգ՝ 1779 թ., եթե հաշվի առնենք ավանդաբար նշվող Չամչյանի քերականության տպագրության տարին), ըստ որում շնորհիվ Մխիթարյանների գործադրած ջանքերի, այնուամենայնիվ

¹ Տես ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1950, էջ 173:

² Մ.Ա.Ուղենրիյն, նշվ. աշխ., էջ 229–230:

³ Յովհաննէս Ծործորեցի, Համառօտ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ.Խաչերեանի, Լոս Անջելես, 1984:

⁴ Տես նաև ՄՄՉ (1717 թ), որտեղ ի թիվս այլոց նաև՝ «Ի Յովհաննու մեկնութենէն Նիկ. Լիւրացոյ» գործը:

հետագայում ևս գրավոր աղբյուրներում նկատվում են լատինաբան ձևերի կիրառություններ: Դրանք, կարծում ենք, գործածված են ինքնաբերաբար:

Այսպես, 1779 թ. հետո տպվում են այսպիսի գրքեր, որոնցում այս կամ այն կերպ, այս կամ այն չափով տեղ են գտնում լատինաբան ձևեր: Օրինակ, Էմ. Թեսավրոսի «Իմաստասիրութիւն բարոյական» գրքում (Վենետիկ, 1793, թարգմ. Վրթ.Ասկերյան) հանդիպում են հետևյալ լատինաբան ձևերը. *ստացանի* «ստանում է» (էջ 16), *բառնի* «բարձրացնում է, վեր է հանում, վերացնում է» (էջ 7): Այդպիսին առկա են նաև Ալեքսանդր Ջուղայեցու «Գիրք որ կոչի Ատենի վիճաբանութեան» (Կ.Պոլիս, 1783), Միք. Բեստենի (Պատկանյան) «Բժկականութիւն» (Վենետիկ, 1822), «Պատմութիւն Սուրբ Գրոց» (թարգմ. «ի ռուսաց ի հայ» Հար.Դավթյան, Ս.Պետերբուրգ, 1785), Պետրոս Աղամալյանի «Աղբիւր բացեալ» (Էջմիածին, 1845, հմմտ. ՄՄՁ 3091, էջ 1ա-5բ), Պետրոս Ջուղայեցու «Բժշկարան համառօտ» (Նախիջևան, 1793) գրքերում և այլն:

3. Լատինաբան հայերենի պատմության ենթաշրջանները

14-րդ դ. 10-ական թթ. կեսերից մինչև 18-րդ դ. 80-ական թթ. սկիզբը (ստույգ՝ 460-ից ավելի տարի) հայոց լեզվի պատմության մեջ մի շրջան է, եթե նկատի ունենանք, որ նրանում գործառում է լատինաբան հայերենը: Այդ ընթացքում վերջինս ձևավորվում է, որոշակիորեն զարգանում և ամբողջովին դադարում գոյություն ունենալուց: Այդ ընթացքն, ինչպես վերը նշել ենք, ամենևին չի եղել միագիծ և միանշանակ: Ընդհակառակն, այն աչքի է ընկնում որոշակի տարակերպությամբ, ներկայացնում է լեզվի գործառության (բովանդակային կողմի) ակնհայտ տարբերություններ:

Ամենից առաջ, ընդհանուր ձևով, կարելի է նշել հատկապա:

Լատինաբան հայերենը, նախ՝ ինչպես որ բուռն կերպով սկզբնավորվում է, այնպես էլ արագ թափով թուլանում և գրեթե անկում է ապրում, երկրորդ՝ մշակութային ընդհանուր վերելքի պայմաններում աստիճանաբար հանդես է բերում «վերակենդանացման» ակնհայտ նշաններ և, իրոք, վերածնվելով է, հասնում ինքնատիպության մի նոր աստիճանի, երրորդ՝ մշակութային արտաքին միջամտության հետևանքով հանդիպում է լուրջ դիմադրության և անդառնալիորեն դադարում է գոյություն ունենալուց:

Իր գոյության ավելի քան չորսուկեսդարյա շրջանում լատինաբան հայերենը անցնում է (ընդհանուր ձևակերպումով) սկզբնավորման, զարգացման և հաղթահարման ենթաշրջաններ:

Մինչև այժմ չունենք լատինաբան հայերենի պատմության գիտական որևէ շրջանաբաժանում: Նկատելի են ժամանակային, թերևս նաև գործունեության ուղղվածության տեսակավորման փորձեր: Այսպես, Հ.Աճառյանը լատինաբան հայերենի ներսում դնում է երկու ուղղություն՝ դրանք կոչելով «ունիթոռական» (իմա՝ միարարական) և «կոլեջյան» հայերեն, որն այնքան էլ հիմնավոր և ամբողջական չէ, այլ երևույթի արտաքին հանգամանքներից բխող բնութագիր է¹: Այնինչ, հարկ է շեշտել, որ լատինաբան հայերենի պատմության ընթացքն իրական է ոչ միայն ժամանակագրորեն, այլև իմաստային է լեզվական փաստի գործածության և յուրօրինակացման հանգամանքի տեսակետից:

Ուստի լատինաբան հայերենի պատմությունը, որը, մեր կարծիքով, հայոց լեզվի պատմության ընդհանուր ծիրի մեջ ներկայացնում է մի որոշակի, ուրույն վիճակ, ներառում է երեք ենթաշրջան, ընդ որում դրանք տեղի են ունենում ոչ թե միանգամյա փոխհաջորդումով, այլ ավելի նուրբ անցումներով, այսինքն՝ ենթաշրջանների ներսում և ենթաշրջանից ենթաշրջան երևան եկող փուլերի ձևով:

Ենթաշրջանների նման առանձնացումն, ինչ խոսք, ինքնաբավ չէ, այլ կատարվում է երկու կարգի հիմնադրույթների՝ պատմամշակութային հանգամանքների խաղացած դերի (զարգացման արտաքին գործոնների) և լեզվական իրականությունների ունեցած նշանակության (զարգացման ներքին գործոնների) հաշվառումով²:

Այսպիսով, լատինաբանության գնահատության համար առանցքային, կարևորագույն տեսական հիմունք է լատինաբան հայերենի պատմության հստակ շրջանաբաժանումը, որում կողմնորոշիչ դեր ունեն միմյանց նկատմամբ ստորակարգային այնպիսի հասկացությունների անվանումները, ինչպիսին են *շրջան*, *ենթաշրջան* և *փուլ* տերմինները: Դրանք այստեղ առանձնացվում են երևույթի բացահայտումն ու գնահատությունն ավելի առարկայորեն, հանգամանակից և ամբողջական ձևով ներկայացնելու նպատակով, որովհետև երկրորդելով ասած՝ դրանք արդյունք են զարգացման արտաքին (պատմամշակութային) և ներքին (լեզվական) գործոնների:

¹ Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ 2, էջ 311:

² Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին. «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» 1978, 4, էջ 50-54:

1. *Լատինարան հայերենի սկզբնավորման և թուլացման ենթաշրջան (14-15-րդ դդ.)*. Այս ենթաշրջանն ընդգրկում է երկու դար (ավելի ստույգ՝ 1316-1502 թթ., այսինքն՝ 186 տարի): Այն ենթադրում է պատմամշակութային իրադարձությունների (զարգացման արտաքին հանգամանքների) երկու կարևորագույն փուլ. առաջինը՝ գրեթե 14-րդ դ. (1316-1405 թթ.), երկրորդը՝ 15-րդ դ. (1405-1502 թթ.): Լեզվական առանձնահատկությունների տեսակետից դրանք բավականին աննշան, ոչ այնքան շոշափելիորեն երևան եկող (առաջինը՝ սկզբնավորման, իսկ երկրորդը՝ թուլացման) փուլեր են:

Այդ ընթացքում մեր իրականությանն առնչակից տեղի են ունենում պատմամշակութային կարևոր, վճռորոշ իրադարձություններ՝ իբրև զարգացման արտաքին հանգամանքներ, որոնցից, սովյալ դեպքում, առավել ուշագրավ են հետևյալները:

1) 14-րդ դ. 1-ին կեսին լուծվում է, վերանում հայ-մոնղոլական դաշինքը: Կիլիկիային անհանգստացնող դիրք են գրավում հատկապես Եգիպտոսի մամլուքները: Այստեղի պետական-պաշտոնական, հոգևորական և առևտրական խավերը թափանցում են Եվրոպա: «Արևմտաեվրոպական կողմնորոշմանը ձգտում էին հատկապես Կիլիկիայում բնակություն հաստատած լատինական տարրերը, բարձրաստիճան որոշ հոգևորականներ և արքունիքի առանձին հեղինակավոր ծառայողներ: Վերջիններս հարում էին այսպես կոչված ունիթորական հոսանքին, այսինքն՝ համաձայն էին, որ եկեղեցին ենթարկվեր Հռոմի պապին, մանավանդ Ավինյոն փոխադրված և Ֆրանսիայի թագավորների խաղալիք դարձած Հռոմի պապերը չէին զլանում զինական օգնության սին խոստումներ տալ: Այսուհանդերձ, Կիլիկիայի բնակչության մեծ մասը՝ հոգևորականությունը (մանավանդ նրա ստորին շերտերը), խոշոր հողատերերի զգալի մասը, աշխատավորական զանգվածները դեմ էին ունիային և կազմում էին հակաունիթորական հոսանքը»¹: Իրար ետևից տեղի են ունենում եկեղեցական ժողովներ (Միս, 1307, Ադանա, 1309, 1316 թթ), որոնցում Հռոմի պապի հրահանգ-հորդորով պիտի հաստատվեր ու վավերացվեր Սսի ժողովում առաջ քաշված որոշումը: Այն հաստատվեց, բայց ոչ ողջ հայ ժողովրդի, այլ կիլիկյան հայության վերաբերությամբ:

2) 1316 թ. Ատրպատականի Մարաղա է գալիս Բարդուղիմեոսը կաթոլիկական քարոզչության նպատակով: Շուրջ մեկ 10-ամյակ անց նա վերահաստատվում է Նախիջևանում, այստեղ ձեռնարկելով հոգևոր և գիտական-

¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 3 («Հայաստանը զարգացած Ֆեոդալիզմի դարաշրջանում. IX դ. կեսերից մինչև XIV դ. վերջերը»), Երևան, 1976, էջ 769:

մշակութային հիմնավոր հաստատության ստեղծմանը: «Մի քանի դար տևում է սրանց (իմա՝ Բարդուղիմեոսի և նրա միաբանության անդամների –Վ.Հ.) կրոնական գործունեությունը, հաջողում են իրենց հետնորդների թիվը հասցնել մինչև 20000 ամբողջ Հայաստանում, Ատրպատականում և Վրաստանում, որից հետո հետզհետե պակասելով ոչնչանում են»¹: Այդ միաբանությունը մինչև վերջ գործում է Հայ առաքելական եկեղեցու հետ ունեցած բուռն հակամարտության պայմաններում:

3) Կիլիկյան հայոց թագավորությունը գնում էր դեպի թուլացում: 1337 թ. Եգիպտոսի մամլուքները գրավում են առևտրի կարևորագույն նավահանգիստ Այաս քաղաքը, 1375 թ. Կիլիկիան վերջնականապես անկում է ապրում, որին հետևում են հայերի 1402, 1405 թթ. զանգվածային տեղահանություններն իրենց ակտիվներից, իրենց հայրենիքից: Այդ անցքերը բացասաբար են անդրադառնում հայոց մտավոր առաջընթացի վրա:

4) 1338 թ. Հայաստանում (այլև՝ Իրանում և Ատրպատականում) իր տիրապետությունն է հաստատում Չոբանյան հարստությունը, որի գերիշխանության տարիներին անկման վիճակում են հայտնվում հայ ֆեոդալական զորեղ «տները», հատկապես Չաքարյանները՝ իշխողներ Անիի և Բջնիի: Չոբանյանների վերացյալ (1357 թ.) հարստությանը փոխարինելու է գալիս ուրիշը՝ Ջելաիրյանների (հիմնադիրը՝ Ուվեյս, տևում է շուրջ երկու տասնամյակ):

5) 1377-1378 թթ. տեղի է ունենում ընդհարում Ջելաիրյան սուլթան Հուսեյնի զորքերի և կարակոյունլուների միջև: Վերջիններս 1340-ական թթ. դեռևս կային Հայաստանում (Բագրևանդ, Քաջբերունիք, թերևս նաև՝ Նախիջևան)², իրենց ապրելու կերպին ու կեցության բնույթին համապատասխան ավար ու ավերածություն են անում: Եվ, ահա, սրանք են, որ հետագայում պարտվում են և դառնում կախյալ - հարկատու: 1384 թ. Ոսկե Հորդայի Թողթամիշը վայրագաբար արշավում է Ատրպատական, գրավում է Թավրիզը, կողոպտում այդ շեն մայրաքաղաքը, նրա շրջակայքը, այլև Սյունիքի և Նախիջևանի բարեբեր տարածքը, հրոսակաբար հպատակեցնում է Սյունիքը, Վայոց ձորը: Այդ ավարառուի թալանողները գերեվարում են հազարավոր հայերի՝ պոկելով վերջիններիս իրենց երբեմնի ծաղկուն գավառներից: Դա վատորեն էր անդրադառնալու հայոց ընդհանուր մշակույթի զարգացման վրա:

6) Վրա են հասնում մոնղոլ Լանկ Թամուրի արշավանքները, որոնք ծայրաստիճան վատթար կացության մեջ են դնում Հայաստանի քաղաքական,

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 308–309:

² Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 21:

տնտեսական և մշակութային կյանքը: Մեծ մարդատյացի կազմակերպած պարբերական արշավանքները (1385-1387, 1394, 1399 թթ.) և ավերածություններն ու ավարատությունները հյուծում և գրեթե խորտակման եզրին են հասցնում հայությանը: Փառատենչ այդ տիրակալն իր ելուզակներով հրոսակային բռնություններ է գործադրել հայոց Սյունիքում, Նախիջևանում, Երնջակում, Այրարատում, և մինչև դարավերջ ողջ Անդրկովկասին իր վայրագ մեծագործությունն է պարտադրում, ըստ որում իրեն (հետագայում՝ իր որդուն) ենթարկելով տառապյալ ու անտերունչ, չարքաշ շատ ու շատ ժողովուրդների, ընդ սմին մշակութապես անկոտրում ու տոկուն հայությանը¹: Դա արտաքին անբարենպաստ, ավելին՝ խանգարող հանգամանք էր, որ վնասում էր ոչ միայն առհասարակ ամեն մի առաջընթացի, այլև ի մասնավորի հայոց կաթողիկական քարոզչության հետագա ծավալման, եվրոպական ձևի «նոր» գիտության տարածման ու արդյունավորման գործին:

7) Տեղի է ունենում մի նոր գերիշխանական աղետ, պատուհաս-պարտադրանք. Ատրպատականի, Իրաքի և Հայաստանի վրա հաստատվում է կարակոյունլու թուրքմենների տիրապետությունը (1410-1468 թթ.): Անկախ տեղաբնիկների քաջարի ընդդիմություններից (օրինակ՝ 1421 թ. օգոստոսի 21-ին Բագրևանդի շրջանում տեղի ունեծած մարտը), հայերի ապահով վիճակը հնարավոր չի լինում վերականգնել: Ավելին, երևան են գալիս նոր զրկանքներ ու կորուստներ (1427 թ. վերացվում է Մակվի հայոց իշխանությունը): Այնուհետև, օտար նվաճողները ընդվզում են միմյանց դեմ ոչ այլ ուրեք, քան Հայաստանի տարածքում, որի հետևանքով ևս տուժում են հայերը: Այսպես, Թամուրի հետնորդների կռիվն ու արյունահեղությունը կարակոյունլուների հետ (1428-1429 թթ., 1437 թ) մեծապես վնասում են հայոց կացությանը:

8) Հաստատվում են Ջհանշահի տիրակալությունը (1437-1467 թթ.), այլև թուրքմենական մյուս՝ ակկոյունլու վրանաբնակների դեպի Հայաստան կատարած արշավանքներն ու ավերվածությունները, որոնք էլ ավելի են վատացնում հայերի կացությունը: Վերջիններս ընդգրկում են մի զգալի ժամանակահատված (1468-1502 թթ.), որին հետևում է նոր, առավել դաժան ու դառն շրջան՝ Մեֆյան հարստության հաստատումը Հայաստանում (1502թ.):

9) Լվովը դառնում է (1367թ.) հարավարևելյան Եվրոպայի տարբեր վայրերում սփռված, անապահով կյանքով ապրող հայության եկեղեցական

¹ Ահավասիկ ժամանակագրի մի բնորոշ վկայությունը. «ՊԼԵ (1386 թ.) Թամուն եկաւ ի Դարբէժ և ի Նախսվան և զՎան. կոտորեաց աւելի քան ԳՌ (3000) մարդ» («Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ.», հ. 1, կազմեց Վ.Հակոբյան, Երևան, 1951, էջ 118):

ապավենը: Այդ կենտրոնը գոյապահապան փոքր-ինչ բարենպաստ պայմաններից զատ ստանձնում է նաև հոգևոր-մշակութային միասնականացման, հնարավոր վերընթացի ապահովման պարտականությունը:

10) Երևան են գալիս միարարական նոր կրթական և մշակութային հաստատություններ: Պատմամշակութային կյանքը մեզանում իր դառն օրերն է ապրում հայոց գաղթօջախներում: Այս պարագայում որոշ իմաստով սփոփիչ դեր են ունենում այն մի քանի աշխույժ միջոցառումները, որոնք դրականորեն են նպաստում հայոց մշակույթի և գիտության, առհասարակ հայոց հոգևոր առաջընթացի գործին:

Այսպես, 1390-1446 թթ. աշխուժություն է ապրում, գրեթե անընդմեջ գործում է Մեծոփի վանքի բարձրագույն դպրոցը: Ավելի քան կես դար տևած այդ հաստատությունը հայոց կյանքում խաղում է դրական դեր և որոշակի ավանդ է բերում հայության առաջընթացի գործում: Այդ դպրոցից են դուրս եկել ժամանակի հայտնի մի շարք մտավորականներ և գործիչներ: Բարենպաստ հանգամանք է հայոց լուսավորչական հոգևոր ուժի վերահաստատումը մայր հայրենիքում: 1441 թ. հայ մշակույթի նվիրյալ գործիչների ջանքերի շնորհիվ հայոց կաթողիկոսական աթոռը Սսից բերվում է Էջմիածին: Նույն թվին Մոլդավիայում հաստատվում է հայոց եպիսկոպոսական թեմը: Նույն շրջանում է, որ ոչ միայն հայոց, այլև ողջ համակրոպական իրականության (բյուզանդական հզորության և մշակույթի) մայրամուտի պատուհաս էր կանխատեսում Կ.Պոլսի գրավումը (1453 թ., մայիսի 29), մի խճողման սկիզբ եվրոպականի, այսինքն՝ առաջադիմականի, և ասիականի, այն է՝ հետամնացի ու հետադիմականի միջև:

Այսիսով, չնայած արտաքին նման հանգամանքներին, ընդհուպ կեղեքումներին, ավերածություններին և գերեվարություններին, այդ շրջանում, գրեթե ամեն անգամ, երբ դույզն-ինչ ժամանակ ու դադար է եղել, կարծես ոտքի վրա («հոտնկայս») շարունակվել ու առաջ է մղվել հայոց մշակույթը: Մշակույթի կյանքով ապրելն երևի թե հայոց գոյության լավագույն դրսևորումն է եղել: Դա վառ արտահայտություն է մեզանում քաղաքակրթության ու բարեկրթության, հոգևոր արժեքներին ծառայելու և մեծ նվիրաբերումի: Եվ դա իրականում է պետականության չգոյության, հոգևոր դավանանքի երկպառակության պայմաններում, կրոնական և գաղափարական հոսանքների հակոտնյա գործառության շրջանակներում:

Լատինաբան հայերենի սկզբնավորման և թուլացման ենթաշրջանը բնութագրվում է լեզվական որոշակի առանձնահատկություններով: Դրանցից առավել հատկանշական են հետևյալները, որոնք մասամբ սահմանվում են

նաև քերականություններում (այստեղ, ի միջի այլոց, ամենից առաջ ի նկատի ենք առնում Հովհ. Քոնեցու քերականությունը):

1) Հին գրական հայերենի նորմայից կատարվող շեղումներ՝ ժամանակի խոսակցական («աշխարհիկ») լեզվի ազդեցությամբ, կամ հակառակը՝ գրքային-գրավոր լեզվի ազդեցությամբ պայմանավորված ձևերի գործածություն. *բաղկանա, գրելո, խօսելո, պիտո* (փխ. բառավերջում *յ*-ով. ՅԲԲ, էջ 2ա), *որո* (փխ. *յ*-ով. ՄՄՁ, 69, էջ 276ա), *կու ընթանաի* (փխ. *յ*-ով. ՄՄՁ, 69, էջ 276բ), *գերայկատար* (փխ. առանց *յ*-ի. ՄՄՁ, 69, էջ 276 բ) և այլն: Հմմտ. *Խաչիկյան*, Ներածություն, էջ 44:

2) Երկինչյունների պարզեցում՝ իբրև խոսակցական լեզվի ազդեցության արդյունք. *ղիցազնաբար* (փխ. *իւ*-ով. ՅԲԲ, էջ 98 բ) և այլն:

3) Բաղաձայններից խուլերի ձայնեղացում՝ խոսակցական կամ ժամանակի բարբառի ազդեցության հետևանքով. *անգումն* (փխ. *կ*-ով. ՅԲԲ, էջ 7ա) և այլն: Հմմտ. *Ավագյան*, Ներածություն, էջ 62:

4) Հայերենում գոյություն չունեցող քերականական կարգերի արտահայտության պլանի նշույթավորում՝ լատիներենի օրինակով: Ընդ որում գոյականի սեռի արտահայտման համար արականում *-իք*, իգականում *-էք*, չեզոքում *-օք* (հմմտ. լատ. *hic, haec, hoc* «այս, սա») մասնիկների արհեստական ընդունում (ՅԲԲ, 6ա, 7բ): Հմմտ. *Ավագյան*, Ներածություն, էջ 68-69 և այլն: Ավելացնենք, որ Հովհ. Երզնկացին և Հովհ. Ծործորեցին են, որ մինչև Քոնեցին տեղիք են տվել նման արհեստականության, իրենց բնորոշմամբ՝ այնպիսիների, որոնք «իսկ հռոմայեցոյն ևս յատուկ» են¹:

5) Ներգոյական հոլովի դրսևորում *ըն (ն)*, ինչպես նաև *մակ, ենթ* մասնիկներով (ՅԲԲ, 5բ, 6բ և այլն): Դիշտ է, Քոնեցին քերականական համակարգում այս երևույթը քննում է *առաքական* հոլովի տակ, ընդ որում ոչ այնքան հստակ, սակայն շարադրանքի տարբեր մասերում այդ հոլովով բազմաթիվ ձևեր ենք կիրառված գտնում, որը գործնականում վկայում է այս հարցում լատինաբանության պարզորոշ դրսևորման մասին:

6) Սովորական բառերի, տերմինների ու տերմինային անվանումների, այսպես կոչված, պատճենումային կազմություններ, ինչպես նաև լատինատիպ քերականական ձևերի ընդունում՝ համապատասխան անվանումներով, որոնք ևս խորթ են եղել հայերենին. *անկումն, անանձնական բայ, անձնական բայ*,

¹ *Յովհաննէս Ծործորեցի*, Համառօտ տեսութիւն քերականի, աշխատասիրութեամբ Լ. Խաչերեանի, Լոս Անջելէս, 1984, էջ 108-109:

գոյացականի, ջերունդիական, սուփինական և այլն (ՅԲԲ, 7ա, 10ա, 11ա և այլն): Հմմտ. *Խաչիկյան, Ավագյան, Ներածություն*, էջ 47, 62, 148-149 և այլն:

7) Նախորդ կարգի լատինաբանությանը բավականին մոտ է այն, որ օտարլեզվյան այս կամ այն տերմինը, այլև տերմինային անվանումը գործածվում են նույնական ձևով՝ իբրև փոխառություն. *անփթոզիս, գեօմայ, սելենսիս, սիմֆոզիս* և այլն (ՅԲԲ, էջ 23ա-բ): Հմմտ. *Խաչիկյան, Ներածություն*, էջ 47 և այլն:

8) Լատինաբան հայերենով գրված բնագրերում գործածվում են թե՛ գրաբարյան և թե՛ ժամանակի գրական (իմա՛ միջին հայերեն) ձևեր, որ անշուշտ ցույց է տալիս լեզվական այդ տարբերակի նորմավորված չլինելը, և դա միանգամայն բնական է, որովհետև այն նոր-նոր էր սկիզբ առնում՝ իբրև նոր երևույթ: Ըստ այսմ էլ, օրինակ, բայական որոշակի ժամանակաձևեր արտահայտության պլանում ունենում են միջին գրական հայերենին բնորոշ ձևավորում, հատկապես *կը (կու)* մասնիկով: Այս երևույթը ոչ միայն առկա է, այլև սահմանվում է քերականական աշխատություններում. *կու սիրես, կու սիրես, կու սիրե (ՅԲԲ, 9բ), մակար թե կու սիրեի, մակար թե կու սիրեիր, մակար թե կու սիրեր, յորժամ կու սիրես, յորժամ կու սիրես* և այլն (ն.տ., 10ա), այլն՝ «ես *կու գնես* զձին ի Պետրոսէ», «վարդապետն *կու ուսուցանէ* զիր քերականն» (ն.տ., 10բ) և այլն: Հմմտ. *Խաչիկյան, Ներածություն*, էջ 50:

9) Լատինաբան հայերենը սկզբնավորման փուլում աչքի է ընկնում ոչ միայն հնչյունական, բառային և ձևաբանական առանձնահատկություններով, այլև շարահյուսական-ոճական այնպիսի տարբերություններով, որոնք հետևանք են օտար լեզվին բնորոշ մտածողության: Եվ նման իրողությունները խորթ են հին գրական հայերենին, հատկապես դասական հայերենին, որը լեզվական առանձին որակ էր, քան հետագայում՝ փոփոխված ասորաբան, հունաբան ազդեցությամբ: Լատինաբան ազդեցությունը ևս գալիս էր իր փոփոխությունը մտցնելու: Հովհ. Քոնեցու քերականությունը, ի տարբերություն նախորդ քերականությունների, զգալի տեղ է տալիս շարահյուսական երևույթներին, ուստի դրանցում նկատելի են լեզվական և ոճական տարբերություններ:

2. *Լատինաբան հայերենի անկման և վերականգնման ենթաշրջան (16-17-րդ դդ.)*. - Այս ենթաշրջանը ևս ընդգրկում է երկու դար (ավելի ստույգ՝ 1502-1717 թթ., այսինքն՝ 215 տարի): Այն նույնպես, մեր կարծիքով, ենթադրում է պատմամշակութային իրադարձությունների (զարգացման արտաքին հանգամանքների) երկու կարևորագույն փուլ. առաջինը՝ գրեթե 16-րդ դ. (1502-1584 թթ.), իսկ երկրորդը՝ ավելի քան 17-րդ դ. (1584-1717 թթ.): Լատինաբան

հայերենի գործառնությունների անկման և վերականգնման տեսակետից այդ փուլերը կարելի է կոչել ոչ այլ կերպ, քան էմպիրիկ-տեխնիկական և ռացիոնալիստական մոտեցումների դրսևորման փուլեր:

Ամբողջ հարցն այն է, որ չնայած առաջին փուլում տեղի է ունենում ընդհանուր առաջընթացի անկում, իսկ երկրորդում հանդես է բերվում վերականգնման բուռն ձգտում, այսպես կոչված, «ինքնավստահություն», այդուհանդերձ լատինաբան հայերենի բնույթի, վերակարգավորման, նրա օրինաչափությունների ու առանձնահատկությունների խորացման և վերստին օրինակացման, հաղորդակցական գործառնությունների ընդլայնման առումով հանդես են բերվում զգալի ջանքեր և կուտակվում է ակնառու փորձ: Եվ այդ ամենն արդյունք է տարբեր դարերում երևան եկած լատինաբանության (իբրև ընդհանուր՝ եվրոպական-պապական) սկզբունքների իրագործման: Այդ սկզբունքները, ինչպես գիտենք, ամենից առաջ ի հայտ են գալիս երևույթի նկարագրությանն ու բնութագրմանը վերաբերող էմպիրիկ-տեխնիկական, այնուհետև ռացիոնալիստական որոշակի մոտեցումների ձևով:

Այդ ընթացքում ևս մեր իրականության մեջ, բնականաբար, տեղի են ունենում պատմամշակութային բազմաթիվ տեղաշարժեր, լեզվական զանազան կարգի փոփոխություններ, ընդ որում՝ լատինաբան հայերենին վերաբերող, որոնցից մի քանիսին, իբրև բնութագրիչ հանգամանքների, հարկ ենք համարում անդրադառնալ ստորև՝ առանձին-առանձին:

1) Թուրք-իրանական գերիշխանական ընդհարումները պասկվում են թուրքերի համար հաջողությամբ (1514 թ.), որով ավելի են մեծանում ենթակա ժողովուրդների նոր՝ համապատասխան բնույթի քաղաքական ճնշումն ու կեղեքումը, տնտեսական նվաստացումը, մշակութային ամլացումը: 16-րդ դ. վերջերին ավելի են ամրանում թուրք բռնությունն ու դաժանությունը Հայաստանում՝ կապված Արցախի, Երևանի և Գեղարքունիքի նկատմամբ գերիշխանության, վայրագ առավելության հաստատման հանգամանքի հետ: Այսուհանդերձ, ուշագրավ է այն փաստը, որ իրանցի շահերը չեն վիստվում անհաջողությունից: Այսպես, օրինակ, շահ Թահմազ 1-ինը ընդվզումով գրավում է որոշակի հարակից տարածքներ (1530 թ.) և հնարավորություն է ձեռք բերում հետագայում նոր ավերածություններ կատարելու ոչ միայն այլ տեղերում, այլև Հայաստանում (1551-1553 թթ.):

2) Հայոց ազատատենչ խավերը ընդհառաջ են գնում ժողովրդի լայն զանգվածների ընդհանուր ձգտումներին և մտորում են ազատագրական ձեռնարկումների վերաբերյալ: Այսպես, հայոց հոգևոր առաջնորդները

(Ստեփանոս Սալմաստացի, Միքայել Սեբաստացի, Թադևոս կաթողիկոս և ուրիշներ) հայ ժողովրդի ազատագրության ակնկալիքով ժողով են գումարում (1547, 1562, 1575 թթ.) և դիմում եվրոպական տերություններին (հատկապես Հռոմ, Լվով, Վենետիկ), ընդ որում նաև անմիջական այցելությամբ և պատվիրակության միջոցով (օրինակ՝ Աբգար Թոքատեցու ղեկավարած պատվիրակությունը)¹: Դա մի տեսակ լավատեսական, սակայն սին պատրանք էր, որով իրականում ոչինչ չի լուծվում, որովհետև այն ժամանակ Եվրոպայից գորեղ միջամտությունը սպասելի էր լոկ կաթողիկ եկեղեցուց, որն ինքնին առնված էր դավանաբանական հալածանքի տակ: Ուստի կարելի է ասել, թե հարցի լուծումը խոստումներից այն կողմ չէր անցնում: Դրանից բացի, ազդեցության ոլորտի վերահաստատման տեսակետից ուշագրավ է հռոմեական ազդեցության վերականգման փաստը, որը հաջորդում է քոչվոր վայրագների նվաստացումների փաստին²:

3) Հայաստանի դրությունն ավելի է վատանում Շահ Աբաս 1-ինի բռնությունների տարիներին (1587-1629 թթ.): Տեղում իրականացվող ճնշմանն ու համակեցության նյութական նվաստացմանը սկսում են զուգակցվել գերեվարությունն ու տեղահանությունը (1604 թ.): Դա մի նոր, աննախադեպ, ավելի դաժան միջոցառում է հայության նկատմամբ: Այդ ընթացքում, ըստ որում հակադիր կողմին ժողովրդագրական որևէ հնարավորություն չթողնելու նպատակով, հայության ճնշող մեծամասնությունը տեղահան է արվում և արտրվում անապատային վայրեր: Անասելի և աննախադեպ է հայոց պատմության մեջ հայտնի Ջուղայի գաղթը. հայոց բնաշխարհը գրեթե հայաթափ է արվում: Բռնի հայագուրկ Հայաստանը, վերջինիս անմատչելի վայրերում՝ քարայրներում և լեռնաձերպերում մի կերպ, վախն աչքում և այդպես իր նյութական գոյությունը պահպանող, սակայն մտավոր և հոգևոր տոկունությունը չկորցնող հայ ժողովրդի մի չնչին մասն ասպարեզ է դառնում թուրք նվաճողների, ավար ու ինչք որոնողների, ավեր տարածողների համար: Այսպես, ավերածության են ենթարկվում Երևանը, Շիրակը, Ապարանն իրենց շրջակա գրեթե ամառյալ բնակավայրերով:

4) Այնուհետև, Իրանի գերիշխանությունը ոչ միայն չի թուլանում, այլև հասնում է նոր, անասելի չափերի: Այսպես, նոր շահերը՝ Շահ Սաֆին (1629-1642

¹ Ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, *Լեռ*, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 184–187, 192 և այլն:

² Ուշագրավ է, օրինակ, հետևյալ ժամանակագրական վկայությունը. «Ի թուին Ռ.Դ. (1585 թ.) Ոսման փաշան (իմա՝ Օսման Յուզբեմի – Վ.Հ.) անթիւ հեծելով գնաց ի Թավրեզ, շատ ջարդում եղև և շատ գերի և շատ թալան տարին: Յետոյ ինքն այլ ուռեցաւ և մեռաւ, Ոսման փաշան, և տիրեց Հռոմցին բազում տեղեաց, զի առին զՅերևան, զՆախչուսան, զԿանճա, զՇիրուսան, զՇամախի,

թթ.) և Շահ Աբաս 2-րդը (1642-1666 թթ.) նոր աղետ ու պատուհաս են պատճառում հայ իրականությանը: Եվ կատաղիների ջլատող գործունեության արդյունքը լինում է այն, որ այդ դդ. հակամարտ երկու դիտերիմների միջև երկու անգամ բաժանվում և մասնատվում է Հայաստանը, որով անկայուն ու վտանգներով հարահաս է լինում հայոց կացությունը:

5) 17-րդ դ. 3-րդ քառորդում ևս չի դադարում հայոց քաղաքական անկախության համար նախկինում առաջ քաշված մտահղացումը: Էջմիածնում հրավիրվում է ժողով (1677 թ.), նվիրակի իր գործունեությունն է ծավալում Իսրայել Օրին՝ Եվրոպա (1680թ.), Մոսկվա (1701թ.), Իրան (1708թ.), Աստրախան (1711թ.) ճանապարհորդելով:

6) Այդուհանդերձ, այս ենթաշրջանում ինչ-որ չափով զարկ է տրվում հոգևոր- մշակութային (նույնիսկ՝ առևտրական - տնտեսական) ձեռնարկումներին: Սկիզբ է առնում հայկական տպագրությունը՝ Վենետիկ (1512թ.), Կ.Պոլիս (1567թ.), Նոր Ջուղա (1638թ.), Լիվոռնո (1668թ.), Ամստերդամ (1660թ.), Մարսել (1673թ.) կենտրոններում, այնուհետև հաստատվում է լեհահայոց իրավապահ ինքնությունը լեհական սեյմում՝ հանձինս «Դատաստանագրքի» վավերացման (1519թ.), նույնանուն գաղթօջախում ձեռք են բերվում տնտեսական կյանքի առաջընթացին նպաստող արտոնագրեր (1585թ.), աքսորյալ հայությունը հիմնում է Նոր Ջուղան (1604-1605թթ.), բացվում են հոգևոր-ճգնակեցիկ դպրոցներ (Լիմ անապատ, 1622թ.), վերսկսվում են հները (Էջմիածնի դպրոց, 1637թ.), գործում են նորերը (Ջուղայի դպրոցը՝ 1630-ական թթ. մինչև 18-րդ դ. վերջերը), կառուցվում են նոր վանքեր (Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքը՝ 1664թ.), հիմնվում են հայաբնակ քաղաքներ (Կեռլա՝ 1700թ.) և այլն:

Լատինաբան հայերենի 2-րդ ենթաշրջանում ի հայտ եկած լեզվական առանձնահատկությունները բավականին սուղ են, որովհետև զարգացման այդ շրջանից մեզ հասել են շատ սակավ թվով գրավոր աղբյուրներ, եղածներն էլ հիմնականում գերծ են լեզվական նման ազդեցություններից: Ողջ 16-րդ դ. մշակույթի անհնարին տարիների մի շղթա է, արտաքին անհաջողությամբ պայմանավորված աննախադեպ մի շրջան: Դա նկատելի է նաև լատինական հայերենի պատմության վերաբերմամբ: Այդուհանդերձ, այդ դարը հայ հոգևոր և մշակութային կյանքի մի ժամանակ է, որ փոքրիշատե կապում է անցյալը հետագայի հետ: Այդ ժամանակ ևս երևան են գալիս ինչ-ինչ գրական

գԹավրեզ, գՏամարդուփուն, գԿորի՝ գթախտն Սիմաունին և գԹիֆլիս» (տե՛ս «Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ.», հ. 1, էջ 173):

հուշարձաններ, հատկապես ժամանակագրական բնույթի, որոնք արժանի են մանրամասն քննության, ընդ որում նաև լեզվի պատմության առումով:

Իսկ 17-րդ դ. լինում է որոշակի վերելքի ժամանակ, մանավանդ հայության շրջանում կաթոլիկական պրոպագանդայի տեսակետից, որի հետևանքով էլ երևան են գալիս լեզվական նոր որակ ներկայացնող գրական հուշարձաններ՝ ժամանակի գիտության, այլև հոգևոր-եկեղեցական բնագավառներին վերաբերող:

ա) Լատինաբան հայերենը մշակվում է ժամանակի կաթոլիկական դավանաբանության, եկեղեցական պատմագրության, քերականության, փիլիսոփայության և այլն բնագավառների վերաբերող հարցերի տեսանկյունից: Գրվում են բազմաթիվ գրական հուշարձաններ, որոնք առատ նյութ են պարունակում լատինաբան հայերենի պատմության համար:

բ) Առաջին հերթին լայն ուշադրության առարկա կարող են լինել գրական այդ հուշարձանների բառապաշարի շերտերը, մանավանդ տերմինաբանությունը: Հրապարակ են հանվում մի շարք տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք լինելով պատճենումներ, ընդօրինակումներ կամ հարմարեցումներ՝ ի ցույց են դնում ժամանակի եվրոպական գիտության և հոգևոր-եկեղեցական մտքի արգասիքը: Ըստ այդմ հայերենն ինչ-որ չափով հարստանում էր թե՛ քանակապես (նոր բառեր, տերմիններ և տերմինային անվանումներ և այլն), թե՛ որակապես (նոր իմաստներ, իմաստային նրբերանգներ և այլն):

գ) Լատինաբան հայերենն, իբրև արտաքին միջամտության արդյունք, ընդհանուր հայերենի քերականական կառուցվածքի մեջ մտցնում էր զգալի փոփոխություն: Վերջինս ընդունելի և գործածական էր մտավոր միջավայրում, ուսյալ հոգևորականության և վերջիններիս հարող մտավորականության շրջանում՝ իբրև լեզվական արհեստականության տուրք (կաթոլիկական եկեղեցու նկատմամբ հավատարմության մի չափանիշ):

դ) Այս ենթաշրջանի երկրորդ փուլի լեզվական իրականությունները լավագույնս ձևակերպված ենք գտնում համապատասխան քերականություններում, և պատահական չէ, որ ժամանակին Հ. Աճառյանն իբրև նմուշ և հիմք է վերցրած եղել Հովհ. Կոստանդնուպոլսեցու «Ձտութին հայկաբանութեան, կամ քերականութիւն հայկական» (Հռոմ, 1674)

աշխատությունը՝ պատկերացում տալու ժամանակի լատինաբան հայերենի բնույթի վերաբերյալ¹:

ե) Երկրորդ փուլում երևան եկած գրական հուշարձանների լեզուն պարունակում է նաև ներքին տարբերություններ, այսինքն՝ դրանք տեղ են գտնում տարբեր չափերով, ոչ միանշանակ գործածությամբ: Նկատենք, որ մեկ հարյուրամյակից ավելի ժամանակում, բնական է, որ լատինաբան արհեստականությունը չէր կարող միօրինակ լինել: Առանձին կենտրոններում այդ տարբերակին տիրապետում էին ոչ նույն չափով ու հմտությամբ, լինում են նաև ոչ լիարժեք նվիրվածության դեպքեր:

զ) Լատինաբան հայերենն այս փուլում ի հայտ է բերում ոչ միայն գործառական, այլև անհատական ոճի առանձնահատկություններ:

3. *Լատինաբանության հաղթահարման ենթաշրջան (18-րդ դ.)*. - Այս ենթաշրջանն ընդգրկում է ավելի քան վեց տասնամյակ (1717-1799 թթ.): Այդ ընթացքում լատինաբանությունն իբրև մշակութային երևույթ, արտաքին ընդդիմության պայմաններում, դադարում է բուռն կերպով առաջ գնալուց և լեզվական առումով հաղթահարվում է, այսինքն՝ փոխարինվում է, այսպես կոչված, «հայկաբան» հայերենով (ժամանակի գրաբարով): Այս երևույթին նախկինում չի դարձվել որևէ ուշադրություն՝ ոչ բանասիրական, ոչ էլ հատկապես հայերենագիտական աշխատություններում:

Եթե առաջին երկու ենթաշրջանում պարտադրվող լատինաբանությունը և գործածվող լատինաբան հայերենն արդյունք են և միջոց «լատինասեր» միարարների ջանքերի, ապա երրորդ ենթաշրջանում դրանց կասեցումը, առավել ևս հաղթահարումը հետևանք են Մխիթար Սեբաստացու և նրա ներհուն աշակերտների հետևողական ու անդադրում հակառակության: Մխիթարյանների ձեռնարկումն այս բնագավառում պսակվում է լիակատար հաջողությամբ: Անհրաժեշտ է նկատի առնել, որ այդ գործը իրականանում է երկու փուլով. առաջինը մինչև դարի կեսերը (1717-1749 թթ.՝ իբրև Մխիթարի անմիջական «գործը») և երկրորդը՝ գրեթե մյուս դարի կեսը (1749-1779 թթ.՝ որպես Մխիթարի աշակերտների «գործը»)²:

¹ Տես Հ.Աճառյան, նշվ. աշխ.:

² «Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դարերում» աշխատության մեջ տողերիս հեղինակը լատինաբան հայերենի՝ այստեղ առանձնացվող 2-րդ ենթաշրջանի (16-17-րդ դ. 2-րդ փուլը (իմա՝ 17-րդ դ.) և 3-րդ ենթաշրջանը (18-րդ դ.), ելնելով այդ աշխատության մեջ հետապնդվող կոնկրետ խնդիրների լուծման հետ կապված հանգամանքներից, միասին դիտել է իբրև նոր շրջանի գրաբարի մեկ առանձին ենթաշրջան («գրաբարի լատինատիպ «մշակման» և լատինաբանության հաղթահարման ենթաշրջան. 1601-1779 թթ.):

Ինչպես իրավամբ նշում է Գ.Ջահուկյանը, «XVIII դ. կեսերից, (եթե ոչ 20-ական թթ. - Վ.Հ.), հատկապես Չանչյանի քերականության հրատարակությունից (1779 ը.) լատինաբանությունը դադարում է գոյություն ունենալուց»¹: Այս ենթաշրջանում ծավալվում է պայքար ընդդեմ լատինաբանության, դրվում են գրաբարի լատինաբան նորամուծությունների հաղթահարման հիմքերը՝ ի հաշիվ համապատասխան ձևերի փոքրիշատե կրճատման և նվազեցման, ի նպաստ գրաբարի ինքնուրույն ուսումնասիրման, այլև ինքնակա քերականությունների ստեղծման:

Այս ենթաշրջանի պատմական-մշակութային և լեզվական բնութագիրը գրեթե տրված է տողերիս հեղինակի հիշյալ աշխատության համապատասխան էջերում: Դրանք այստեղ ներկայացնում ենք գրեթե նույնությամբ՝ ենթաշրջանների բնութագրումներն ամբողջացնելու նպատակով:

1) Հայ ազգային ազատագրության հարցում եվրոպական միջամտության սնանկությունը 1701 թ. հանգեցնում է Ռուսաստանում օգնություն փնտրելու գաղափարին: Դրվում են ազգային ազատագրման, տնտեսական և մշակութային առաջընթացի նոր հիմքեր, բացվում են նոր հեռանկարներ: Մինչև 1780 թ. հայ-ռուսական հարաբերությունները գնալով արմատավորվում են: Ռուսաստանում տեղծվում են հայ մշակույթի կենտրոններ, կրթական օջախներ, եկեղեցական և այլ կարգի հաստատություններ:

2) 1717 թ. Մխիթար Սեբաստացու ջանքերով Վենետիկում հիմնվում է հայ մշակույթի կենտրոն, որը խաղալու էր, մեր կարծիքով, գրեթե նույն դերը, ինչ Եվրոպայում մինչ այդ եղած և հետագայում ստեղծված, հատկապես՝ նոր գրական լեզուների առաջացման, կանոնավորման և մշակման հարցերով զբաղվող ակադեմիաները²: Ի տարբերություն հիշյալ հաստատությունների պետականորեն ապահով վիճակի՝ Մխիթարյան միաբանությունը հանդիպում է Հռոմի պապի վերակացության հաճախակի զգացվող խստություններին:

3) 1750-ական թթ. սկսած, ձևավորվում է հայ լուսավորական շարժումը: Այդ գործում ակնառու է Միմեոն կաթողիկոս Երևանցու դերը: Իսկ հնդկահայ գաղութի երևելի մտավորականներ Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը, Շահամիր Շահամիրյանը ձեռնամուխ են լինում ազատագրական պայքարի գաղափարական-քաղաքական հարցերին և յուրովի զարկ են տալիս դրանց լուծման գործնական միջոցներին: Նրանք ստեղծում են որոշակի ավանդույթ

¹ Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 62:

² Հմմտ. Գ.Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ.1, Երևան, 1960, էջ 185-187, 190:

հիշյալ հարցերը հետագայում շարուկաբար արծարծելու, ազգային-ազատագրական պայքար բորբոքելու նպատակով:

4) 18-րդ դ. կեսերից սկիզբ է առնում գրաբարի վերականոնավորման շուրջ ծավալվող պայքարը: Նոր շրջանում գործառող լեզվական տարբերակները, իրարից անկախ կամ միմյանց հարաբերակցված, կրում են արտաքին որոշակի միջամտություն՝ կապված ոչ միայն լատինաբանության հաղթահարման, այլև գրաբարի կանոնավորման նմուշի ընտրության, առհասարակ հին և նոր գրական լեզուների հակադրման հարցերում երևան եկած սկզբունքների հետ:

5) Այս ենթաշրջանի բուռն ժամանակները 50-70-ական թթ. են, երբ ըստ էության հաղթահարվում են լատինաբան նորամուծությունները, տեսականորեն ամփոփվում է լատինաբանության դեմ ծավալված պայքարը: Մասնավորաբար ճիշտ է այն դիտարկումը, որի համաձայն Միքայել Չամչյանը դնում է գրաբարի ինքնուրույն և «տեքստերի իսկական բանասիրական քնննադատական-համեմատական ուսումնասիրության»¹ հիմքերը, հավանաբար, անկախ Ֆ.Ա.Վոլֆից (1759-1824), որն ընդհանուր առմամբ համարվում է գիտական բանասիրական հիմնադիրը լեզվաբանության, ինչպես նաև ընդհանուր բանասիրության պատմության մեջ²:

Այս ենթաշրջանի լատինական հայերենը, կապված հիմնականում լատինաբանության հաղթահարման համանգանքների հետ, բնութագրվում է հետևյալ հատկանիշներով:

1) Տարբեր ժամանակներում արհեստականորեն ներմուծված ածանցների վերացում, ածանցավոր բառի դիմաց պարզ բառի գործածում, ինչպես նաև ածանցավոր խորթ ձևի փոխարեն գրաբարյան բնորոշ ձևի օգտագործում. *ներհեղուլ* (փխ. *հեղուլ*), *ստորանկանիլ* (փխ. *գտանիլ*), *ստորահակիմ* (փխ. *ի ստոր քերիմ*) և այլն:

2) Լատինատիպ կազմությամբ բարդ բառի փոխարինում գրաբարին առհասարակ հարազատ բարդությամբ կամ հարադրությամբ, այլև գրաբարին առավել բնորոշ պարզ բառով կամ բառակապակցությամբ. *ընդդիմամարտիմ* (փխ. *ընդդեմ դառնամ*), *կենցաղավարիլ* (փխ. *կեալ*) և այլն:

3) Գոյականական ձևերի մեջ եղած խորթությունների օտարում, ըստ որում անեզական բառերի *ք*-ի, այլև մյուս մասնիկների վերականգնում, ներգոյական հոլովում *ըն* կամ *ն* մասնիկի անտեսում՝ նպատակ ունենալով

¹ Գ.Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 173:

² Հմմտ. Գ.Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 173-174:

վերականգնելու գրաբարյան համարժեքը, բնականը. *կեան* (փխ. *կեանք*), *ըն սովում* (փխ. *ի քաղց*), *նայամիկ կենցաղում* (փխ. *յաստի կեանս*) և այլն:

4) Ածականների աստիճանակազմության մեջ գրաբարի ավանդական կանոնների վերահաստատում. *մեծագոյն* (փխ. *մեծ*), *լաւագունեղ* (փխ. *լաւագոյն*) և այլն:

5) Բայական ձևերում տեղ գտած խորթությունների վերացում, ընդ որում ավելորդ ցոյականության անտեսում, ստորադասական եղանակի անկատար անցյալի օտարում, *ա, ու* խոնարհման բայերի *-անի* մասնիկով կազմված կրավորականի ձևի շտկում, վերջապես՝ *ե* խոնահրման բայերի սահմանական եղանակի անկատար անցյալի մեջ տեղ գտած խորթության մերժում. *ստեղծեցեալ* (փխ. *ստեղծեալ*), *եղծանիցեէին* (փխ. *եղծցին*), *թողանի* (փխ. *թողու*), *պահանջեէին* (փխ. *պահանջէին*) և այլն:

6) Գրաբարին առհասարակ բնորոշ շարահյուսական երևույթների վերականգնում, ընդ որում լրացումային հարաբերակցության մեջ մտցված գրեթե ամեն դեպքում պարտադիր և «միակերպ» ետադաս բաղադրիչների ազատ, գրաբարի ավանդույթին համապատասխան շարադասության վերահաստատում, նախադասության մերձավոր անդամների պարտադիր համաձայնության փոխարեն գրաբարին առավել հատկանշական անկաշկանդ համաձայնության կանոնների գործադրում. *իրօք երկնայնօք* (փխ. *յերկնատր ինչ*), *ընմարդում ումեք բեկանելում և մահկանացում* (փխ. *ի մարդ տկար և մահկանացու*) և այլն:

7) Բուն շարադասության մեջ հին գրական հայերենի բնորոշ սկզբունքների վերահաստատում՝ կապված նախադասության ընդհանուր կառուցվածքի հետ, ըստ որի անվանական և բայական բառակապակցությունների առումով նկատելի է դառնում պարտադիր, շարադասորեն բուն գրաբարին անհարիր, խորթ կանոնների օտարում. *զքաղցրագունեղ հոգւոյդ քոյ սրբոյ գտցեն մխիթարութիւն* (փխ. *զքաղցր մխիթարութիւն սուրբ հոգւոյն գտցեն*) և այլն:

4. Լատինաբան հայերենի գործառության ոլորտները

Մեզ հասած լատինաբան գրավոր աղբյուրներն այս դեպքում ուշադրության առարկա են իրենց ոչ միայն բովանդակության՝ պատմագիտական, բանասիրական և աղբյուրագիտական և այլն առանձնահատկությունների

առումներով, այլ նաև հատկապես լեզվի գործառական տարբերակվածության տեսակետից: Տվյալ դեպքում հարց է առաջանում, թե գրավոր այդ աղբյուրները հաղորդացական ինչ արժեք և կիրառական ինչպիսի ծանրաբեռնվածություն են ունեցել:

Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ լատինաբան հայերենը որպես այդպիսին արդեն առանձին է հայերենի մյուս տարբերակներից, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն ենթադրում է ներքին տարբերակվածություն՝ կապված հաղորդման նյութի (բովանդակության) առանձնացված (դիֆերենցված) լինելու հետ: Լատինաբան հայերենով գրվում են զանազան բովանդակության աշխատություններ, որոնք երևան են գալիս ոչ միայն տարբեր ժամանակներում, այլև աչքի են ընկնում լատինատիպ ազդեցության հանդեպ ունեցող տարբեր հակվածությամբ: Այս դեպքում ևս նման առանձնացումն ամբողջապես պայմանավորված է հաղորդակցման միջոցի այն բնույթով, որ առհասարակ լեզուն հասարակական երևույթ է և հաղորդակցորեն իրականանում է առանձնհատուկ ու յուրօրինակ ձևով:

Լատինաբան գրավոր աղբյուրները բաշխում ենք ըստ գործառական երեք ոճերի՝ *գրական* (= գեղարվեստական), *գիտական* և *հրապարակային* (= հրապարակախոսական)¹: Անմիջապես նշենք, որ եթե լատինաբան հայերենով գրված գրական երկերը շատ քիչ են հանդիպում (կամ ամենևին չեն հանդիպում)², ապա հրապարակային ոճի մեջ ներկայանում են սակավ թվով աշխատություններ: Ուստի մնում է, իբրև հատկանշական երևույթ, նկատել, որ լատինաբան գրավոր աղբյուրները հիմնականում գիտական ոճի երկեր են:

Կոնկրետ դեպքում անհրաժեշտ է նկատի առնել հետևյալը:

ա) Լատինաբան հայերենով գրվում են ավելի պակաս թվով ինքնուրույն աշխատություններ, քան արվում են թարգմանություններ: Առհասարակ հատկանշական է, որ մեզանում ամեն անգամ մշակութային նոր շարժումն իրագործվում է առավելապես թարգմանական գրականության ստեղծմամբ: Դա հաստատվում է ասորաբան, հունաբան, տվյալ դեպքում՝ լատինաբան

¹ Հայերենում, ինչպես կարելի է նկատել, Գ. Ջահուկյանի, Ս.Աբրահամյանի և հետագա ուսումնասիրողների համապատասխան աշխատություններում գործառական ոճերն առհասարակ բաժանվում են այլ լեզուների նկատմամբ իրականացված դասակարգման օրինակով, ընդ որում անկախ դրանց անվանումների տարբերությունից՝ դրանց քանակը հասցվում է հինգի, ինչպես նաև ոճի սահմանումն առհասարակ հեռու է լեզվի բնույթից բխող հատկանիշների վրա հիմնված լինելուց, այսինքն՝ ավանդույթի ուժով շարունակվում է այն սահմանվել միջնադարյան ճարտասանական (հռետորական) արվեստին բնորոշ բնութագրիչների նկատառումով: Տես Վ. Գ. Համբարձումյան, Լեզու, ոճ, խոսք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1982, 3, էջ 182-191:

² Կա մասնավոր դիտողություն. «Դեռ կտեսնենք գրքերուն մեջ ստեպ տաղեր ու ոտանաւոր երգեր աս լեզուաւ» («Եւրոպա», 1848, 14, էջ 16):

մշակութային շարժմամբ և համապատասխան գրականության ստեղծմամբ: Այսօր հայտնի են միարարական միջավայրի (հատկապես 14-րդ դ.), ինչպես նաև ուշմիջնադարյան (17-րդ, մասամբ՝ 18-րդ դդ.) զգալի թվով թարգմանություններ¹:

բ) Բավականին նեղ է, ինչպես վերը նշվեց, մեզ հասած գրավոր աղբյուրների բովանդակային կողմը (թեմատիկան):

գ) Գործառական նման տարբերակվածության պայմաններում բնական է, որ լատինաբան հայերենը գերազանցապես նպաստում է մեզանում գիտական տերմինաբանության զարգացմանը:

դ) Ստացվում է այնպես, որ գրեթե յուրաքանչյուր «բարձր» ու «սքանչելի» երկ գրվում էր լեզվական այդ տարբերակով, որովհետև վերջինս այդպես էր ներկայացվում սովորական ընթերցողին, հասարակ ժողովրդին, մանավանդ բնասացության և հոգևոր արժեքների վերաբերյալ գրավոր ու բանավոր խորհրդածությունների ժամանակ²:

Քանի որ լեզվի գրեթե յուրաքանչյուր միավոր առհասարակ աչքի է ընկնում հաղորդակցային (այլ կերպ ասած՝ գործառական) որոշակի արժեքով ու ծանրաբեռնվածությամբ³, ուստի անհրաժեշտ ենք գտնում լատինաբան հայերենի գործառական տարբերակվածության քննության դեպքում ևս ելնել այդ հանգամանքից:

Լատինաբան հայերենը մեկընդմիջտ հանդես չի գալիս միօրինակ ու միակերպ: Տարբեր ժամանակներում տարբեր են նրա գործառության չափերը, դրանց արդյունավետությունը: Գ.Չարբհանալյանն, օրինակ, իրավացիորեն գտնում է, որ «այս երկրորդ (իմա՝ «արուեստական» – Վ.Հ.) տեսակ խանգարման արդիւնք կրնայ սեպուիլ գլխաւորապէս հայերէն գրաբար լեզուի վիճակը ԺԳ-ԺԸ դարերու մէջ: Մեր լեզուին վրայ վերիվերոյ քննութիւն մը բաւական է իմացնելու համար թէ կամաց ու բնական կերպով եղած չէ այսպիսի փոփոխութիւն մը և նշանից հետևանք է և արդիւնք»¹:

Լատինաբան հայերենը տարբերություն է տալիս ոչ միայն ժամանակ առ ժամանակ («դարից դար»), այլև գործառական ոճերի ուղղվածության առումով, եթե ոչ՝ նաև հեղինակների միջև, այլև հեղինակից հեղինակ: Այսպես, ժամանակին Ա.Հովհաննիսյանը նկատում է, որ, օրինակ, Հովհաննես Բոնեցու թարգմանությունների մեջ «դեռ բացակայում է լատիներենի ազդեցութամբ

¹ Հմմտ. *Լ.Տեր-Պետրոսյան*, Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, էջ 7, այլև՝ 17-23:

² Հմմտ. «ԺԳ-ԺԸ դարերու հայերէնի վիճակը» հոդվածը («Երոպա», 1848, 14, էջ 16):

³ Հմմտ. *Գ.Չահուկյան*, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 37:

աղավաղված այլանդակ այն հայերենը, որ ծավալ ստացավ հետագա ունիտորների գրական գործերում», այլ «հայ ժողովրդի հոծ մեծամասնությունը ազատ մնաց պապական ունիտորների քարոզած վնասաբեր մտքների զորեղ ներգործություններից»²: Հատկանշական է, որ բոլոր դեպքերում այն գործառույթ է իբրև գրավոր հաղորդակցման միջոց, ուստի որպես այդպիսին հանդես է բերում որոշակի տարբերություններ ոչ միայն մշակութային առանձին կենտրոններում գործածված լինելու, այլև գործածության նպատակամղվածության, ընդգրկվող ոլորտների տարբերության առումով:

Գործառական տարբերակվածության տեսակետից ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ լատինաբան հայերենը հանդես է գալիս իբրև ոչ կենդանի («արհեստական») հաղորդացական միջոց՝ անկախ այն գործածողների հմտության և հանդես բերած ձեռներեցության աստիճանից, այլև նրա հանդես ունեցած «նվիրվածությունից»:

Տեղին է նշել, որ անցյալի հայ բանասիրության մեջ իշխելիս է եղել այն կարծիքը, որ իբր կատարյալ ու կանոնավոր գրաբարը հետագայում որոշակիորեն խճողվել է նաև լատինաբան հայերենի տեսքով: Այս դեպքում, դժվար չէ նկատել, որ մեծացվում է զարգացման արտաքին գործոնի դերը՝ ի դեմս միարարների լեզվական կողմնակալ գործունեության³: Այնուհետև, Ա.Հովհաննիսյանն, օրինակ, ամենևին չի մերժում այդ ուղղության ստեղծածը, այլ ըստ էության դրականորեն է գնահատում նրանց գրական ժառանգությունը, վերջինիս տպագրությունը համարելով ներկայիս համար անհրաժեշտ մի գործ, ինքը տալով դրա օրինակը՝ հրապարակելով 17-րդ դ. երկու հեղինակի երկերը. «հայ ունիտորական գրականությունը, չպետք է մոռանալ այդ, մի մասն է կազմում հայ և օտար գրողներից հեղինակած այն եվրոպական աղբյուրների, որոնք առնչություն ունին հայ ունիտորական շարժման հետ: Եվ որովհետև հենց եվրոպական այդ գրականության մեջ է, որ գունեղ արտահայտություն են գտնում հայոց պատմական կյանքի այլ և այլ կողմերը, անհրաժեշտ է լրացնել ըստ կարելվոյն նաև այդ գրականության բացերը, տպագրության տալով հայ ունիտորական պատմագրության դեռևս անհայտ մնացած նշխարները»⁴:

¹ Գ.Ջարբխանյան, Պատմություն հայ հին դպրութեան, հ. Բ (Նոր մատենագրութիւն), Վենետիկ, 1878, էջ 49:

² Ա.Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1957, էջ 490:

³ Տե՛ս, օրինակ, *Լեռ*, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1969, էջ 306: Ա.Հովհաննիսյան, Նոր նյութեր հայ-ունիտորական պատմագրությունից («Արարատ», 1914, էջ 1108 և հջ.):

⁴ Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ. էջ 1108-1109:

Այնինչ, փաստերի իրացի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման մտայնությունը միակողմանի է, ավելի շատ արդյունք է արտաքին տպավորության: Ընդհակառակն, կարծիք կա, օրինակ, որ լատինաբանությունը հայերենը հեռու է պահում ժամանակի խոսակցական ներթափանցումներից, այսինքն՝ գրական լեզվի մեջ խոսակցականի հնարավոր խախտումներից և անկանոնություններից, թեև հիմք է ստեղծվում լեզվի «արհեստական» գրականացման¹: Այս նկատառումը գալիս է հնից՝ անցյալ դարի վերջերից: Լատինաբան հեղինակները «հորինում են» մի լեզու, որն իրականանում է ոչ թե հին գրական հայերենի, առավել ևս դասական հայերենի, այլ հետագա շրջանի գրաբարի հիման վրա, իրականանում է ոչ թե ինքնաբերաբար, այլ լատիներենի օրինակով, ըստ որում առհասարակ լատիներենի և ոչ թե նրա դասական տարբերակի ընդօրինակումով²: Անհրաժեշտ է նշել, որ լատինաբան հայերենը, թեկուզև արհեստականորեն, կազմում է հայերենի զարգացման մի նոր աստիճանը, և ըստ այդմ ներկայացնում է գործառական տարբերակվածության մի յուրօրինակ շրջանակ:

Հանդես գալով գիտական ոճի ներսում՝ լատինաբան գրավոր աղբյուրները հիմնականում ոչ այլ ինչ են, քան եկեղեցական (լայն առումով՝ դավանաբանական), փիլիսոփայական, պատմագիտական, ճարտասանական, քերականական աշխատություններ: Նման խմբավորումը խիստ անհրաժեշտ է, թեև փոքր-ինչ՝ պայմանական, որովհետև՝ ա) ներառում է գիտության մերձակա ոլորտներ (օրինակ՝ դավանաբանականի ներսում՝ կրոնականը և եկեղեցականը, փիլիսոփայականի մեջ՝ աստվածաբանությունը), բ) ներկայացնում է ավելի մասնավոր բաշխում, քան գոյություն ունի առհասարակ (հմմտ. քերականությունը և բառարանագրությունը, որոնք լայն իմաստով դիտվում են իբրև քերականական): Դրանից բացի, գիտական ոճի մեջ, նախ՝ նկատի ենք առնում ոչ միայն տեսական, այլև գործնական՝ ուսուցողական կողմը, այնուհետև դրանցում ընդգրկվող երկերի նման բաշխումը իրականացվում է մի կողմից գիտության այս կամ այն բնագավառի հարաբերությամբ, իսկ մյուս կողմից վերջինիս հատուկ տերմինաբանության նկատառումով: Այսպես, քերականական և բառարանագրական երկերն առանձնացնելիս հիմնականում հաշվի ենք առնում այդ բնագավառների առանձին գոյությունը, իսկ քերականական և

¹ Հմմտ. *Էդ. Աղայան*, Գրաբարի պատմության շրջանաբաժանումը, 1974, 2, էջ 60:

² Հմմտ. *Գ. Չարքիանայան*, նշվ աշխ. էջ 50-51:

ճարտասանական երկերը՝ ամենից առաջ դրանց հատուկ տերմինաբանական համակարգերի տարբերությունը:

Մեզ հասած գրական հուշարձանները դարից դար, անկախ իրենց գործառական-ոճական տարբերակվածությունից, առհասարակ զանազանվում են իրենց քանակով: Ի թիվս մշակույթի զարգացմանը խանգարող, խոչընդոտող այլևայլ հանգամանքների (օտար բռնացում, սոցիալական նվաստացում, նյութական միջոցների սղություն, գերեվարություն և այլն) կարելի է շեշտել նաև հեղինակների կամ մշակութային կենտրոնների ձեռնպահ մոտեցումը դեպի լատինաբանությունը: Այսպես, 16-րդ դարը, որ մեզանում ի մասնավորի դիտվում է իբրև գրական հուշարձանների և առհասարակ մշակույթի տեղատվության մի շրջան, միաժամանակ երևան է բերում մի այնպիսի վիճակ, որտեղ եղածներն էլ հստակորեն և որոշակի ձևով գերծ են լատինաբանությունից: Օրինակ, այս դարում տպագրվում են որոշակի թվով գրքեր, ըստ որում թարգմանված նաև լատիներենից, սակայն դրանք ամենևին, չասելու՝ գրեթե իսպառ գերծ են լատինաբան հայերենի ազդեցությունից: Դա բացատրվում է ինչպես լատինաբան ազդեցության ոլորտից դուրս մնալու, այնպես էլ հեղինակի կամ թարգմանչի, ընդ որում տպագրիչի՝ այդ նույն ազդեցությանը տուրք չտալու ձգտումով:

Եկեղեցական գրականությունը զբաղեցնում է անհամեմատ մեծ տեղ: Դա գլխավորապես բացատրվում է միարարական շարժման ուղղվածությամբ: Վերջինս մեզանում այլ բան չէ, քան կաթոլիկական էքսպանսիայի ծրագրերով տոգորված գաղափարաբանություն, որը հայ իրականության մեջ հետապնդելիս է եղել լուսավորչական գաղափարաբանությանը հակառակ տիրապետություն ձեռք բերելու նպատակ: Այլ կերպ ասած՝ դա սերտորեն պայմանավորված է ժամանակի կրոնական - եկեղեցական մտածողության տարածվածությամբ, կաթոլիկական եկեղեցու ընդհանրական (= «համամարդկային») դերով, և ըստ այդմ հայերի մեջ ժամանակին հանդես բերած մեծ ակտիվությամբ և լայնորեն տարածվելու նկրտումներով:

Լատինաբան գործիչների նման միտումը բազմիցս նկատվել և զնահատության է արժանացել թե՛ անցյալ դարի, թե՛ մանավանդ մոտիկ անցյալի, այլև ներկայիս պատմաբանների, փիլիսոփաների, բանասերների և բնագրագետների կողմից:

Այսպես, այդ հարցում ուշագրավ են ոչ միայն Ալիշանի, Ջարբհանայանի և ուրիշների դիտարկումները: Մեր դարի սկզբին ևս այդ առումով ճշգրիտ դիտողություններ չկան: Ա.Հովհաննիսյանն, օրինակ, գտնում է, որ լատին հեղինակների գրական ժառանգությունը կրոնական և դավանաբանական

ուղղվածություն ունի, նրանց քարոզած գիտելիքն ու մշակած գիտությունը աստվածաբանական-դավանաբանական շեշտվածություն է ստացել: Ըստ այդմ էլ քարձր է գնահատել, օրինակ, Բարդուղիմեոս Մարաղացու գործունեությունը: Նա «պաշտպանում է այն միտքը, թե գիտության վառ ճրագը չպիտի դրվի գրվանի տակ, այլ աշտանակի վրա. գիտության լույսը չպիտի թաքցվի վանական խուցերում, այլ բաշխվի աշխարհական ժողովրդին: Քարոզը պիտի խոսվի հասկանալի և հստակ լեզվով: Աշխարհականների հետ չպիտի խոսել նույն լեզվով, որ բանեցնում են վարդապետները իրար հետ, գիտնականների կամ գրոց աշակերտների հետ զրուցելիս: Լավ է, որ քարոզչի խոսքը հասկանալի լինի ժողովրդին, քան թե արժանանա սոսկ քերականների և պերճաբանների գովքին»¹:

Լատին գործիչների արածը՝ թե դրական, թե բացասական, չի վրիպում անցյալի բանասիրության ուշադրությունից, մանավանդ եթե նկատի առնենք, որ մշակույթի առնչությամբ դրականը զգալիորեն գերակշռող է: Հիշենք Գար.Հովսեփյանի հետևյալ գնահատությունը. «Միարարական շարժումն ունէր եւ իւր դրական կողմերը: Ինչպէս վերեւ յիշուեցաւ, Բարդուղիմէոս եպիսկոպոսին օգնութեան էին եկել եւ մի խումբ լատին կրօնատրներ, որոնք հաւատափոխութեան քարոզութեան հետ սկսեցին թարգմանութիւններով եւ զբաղուել եւ լատինական միջնադարեան աստուածաբանական գիտութիւնը, թէպէտ եւ յռո՞ի ու անպիտան լեզուով, պատուաստել Հայոց մեջ: Իրաւացի է Բարդուղիմէոս եպիսկոպոսի նկատողութիւնը, որ միարարութեան հակառակորդ հայ վարդապետները կաթոլիկներից ձեռք բերած զէնքերով պատերազմում էին նրանց դէմ»²: Անհրաժեշտ է ընդգծել, որ նման մտածողությունը բոլոր դեպքերում հեռու է կանգնած եղել կյանքի հրատապ խնդիրներից և մի տեսակ փորձում է ստանալ ինքնաբավ լուծումներ, որքան էլ ձգտում է ունենում հանդես բերել մերվելու կյանքին և տոգորվելու կենսունակությամբ³:

Ինչպես անցյալում, միարարական շարժման ժամանակներում ևս առավել մեծ ուշադրություն է դարձվում թարգմանական գրականությանը, որը լիովին կոչված էր բավարարում տալու հայոց (թեկու՞՞ կաթոլիկ) եկեղեցու գաղափարական և արարողական գործունեությանը, ըստ այդմ կրոնական կրթության գործի կազմակերպմանը⁴:

¹ Ա.Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, էջ 489:

² Գար.Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Կ. Բ. Անթիլիաս, 1969, էջ 288:

³ Հմմտ. В. фон Гумбольдт, Язык и философия культуры, М., 1985, էջ 299:

⁴ Լ.Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 8:

Ձեռնարկվում են հիշյալ բնույթի բազմաթիվ թարգմանություններ, գրվում են նույնպիսի նպատակ հետապնդող աշխատություններ, որոնք կամ լույս են տեսնում զուգահեռ լեզուներով (օրինակ՝ լատիներեն և հայերեն), կամ գրվում են որևէ լեզվով և թարգմանվում հայերենի: Ավելին, հիշատակելի է նաև այն, որ որոշ թարգմանություններ հաճախ ենթարկվում են տարբեր կարգի խմբագրումների, շտկումների: Այսպես, օրինակ, Առաքել Նախիջևանցին վերանայել է (1335 թ.) Պետրոս Արագոնացու «Գիրք դատաստանաց» գիրքը (թարգմ.՝ Հակոբ Քոնեցի, 1331 թ.). «Ըստ երևույթին՝ Հակոբ Քոնեցու թարգմանությունը համարվել է անբավարար և այդ պատճառով Պետրոս Արագոնացու իսկ ցանկությամբ Առ.Նախիջևանցու կողմից հիմնովին վերանայման է ենթարկվել, ինչպես պարզվում է երկու թարգմանությունների համեմատությունից»¹:

Եկեղեցական ինքնուրույն և թարգմանական աշխատությունները ստակական վերհիշումն ու թվարկումը, տվյալ դեպքում, մեզ բավականին հեռու կտաներ: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալու միայն դրանց երևան գալու այն հանգամանքներին, որոնք մեծապես հիմք են հանդիսացել լեզվական կողմի դրսևորմանը. ա) լատինաբան հեղինակներն որքանով էին առհասարակ տիրապետում հայերենին և որքանով էին իրավասու և ի գորու նրանում փոփոխություններ ներմուծելու, բ) լատինաբան հեղինակների տեղիք տված ներմուծումներն ու փոփոխություններն ինչպիսին են հատկապես դավանաբանական երկերում, գ) այդ փոփոխություններն որքանով են առնչվում մինչ այդ գոյություն ունեցած համապատասխան տերմինաբանությանը և որքանով են հանդիսանում նորամուծություն, դ) դավանաբանական երկերը և նրանցում տեղ գտած տերմինաբանությունը լատինաբան հայերենի գործառության տարբեր փուլերի մեջ ինչ չափեր են ընդունում և ինչպիսի ընդգրկում ունեն:

Ամենից առաջ անհրաժեշտ է անդրադառնալ եկեղեցական գրականության ներքին՝ բովանդակային դասակարգմանը, այսինքն՝ պարզել, թե դրանք որքանով են լրացնում միջնադարյան հայ եկեղեցուն վերաբերող գրականության ավանդական դասակարգմամբ հայտնի մասերն ու բաժինները, ինչպես նաև այն, թե դրանցից յուրաքանչյուրում ինչպիսի գրքեր են պարունակվում:

Այսպես, մի կողմից՝ մեզ հասած գրականության մանրամասն ուսումնասիրությունն ու լեզվական նյութի քննությունը ցույց են տալիս, որ լատին

¹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 1493-1494:

միարարները կարողանում են ստեղծել մի գրականություն, որն իրոք բավարարում է ժամանակի պահանջմունքները, յուրովի խթանում է հայոց շրջանում բուն դրած կաթոլիկական եկեղեցու գաղափարախոսական և կրթական գործի ձեռնարկմանն ու զարգացմանը¹: Ըստ այդմ կաթոլիկների շրջանում ևս երևան են գալիս Ս.Գրքի առանձին մասերի մեկնություններ՝ արարողական, մեկնողական, հայրաբանական, ջատագովական, ինչպես նաև՝ կաթոլիկ եկեղեցու պատմությանը, կանոններիին, եկեղեցական գործիչներին վերաբերող վարքեր ու վկայություններ հանդիսացող գրքեր²:

Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ ստեղծված նման գրքերը թեկուզ քանակով նույնական չեն, սակայն խստորեն տարբերվում են միմյանցից: Այդպիսին են թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն աշխատությունները, որոնք իբրև մեկ ամբողջություն, մշակութային նույնպիսի արժեք են ներկայացնում, մանավանդ որ դրանք ծառայելիս են եղել նույն նպատակին ու գործին³:

Բավականին մեծ տեղ է զբաղեցնում մեկնողական գրականությունը (հերմենևտիկա), և դա բնական է, որովհետև լատին քարոզիչների թերևս առաջին նպատակն էր մեկնաբանել ու պարզաբանել կաթոլիկական գաղափարաբանությունը, որպիսով հնարավոր էր դառնում հոգևոր «դարձը»: Նման գրքեր հանդիպում են մեզ հետաքրքրող շրջանի գրեթե բոլոր փուլերում, հատկապես՝ միջին ենթաշրջանի 2-րդ փուլում:

Երկրորդ տեղը բռնում է արարողական գրականությունը (լիտուրգիկա): Այստեղ կարևոր են հատկապես այն գրքերը, որոնք հանդիսանում են խորհրդատետր, ժամագիրք, մաշտոց, պատարագամատույց, աղօթագիրք և այլն: Արարողական գրականությունը ևս ստեղծվում էր նույն նպատակով, այն է՝ կաթոլիկական եկեղեցու առանձնահատկությունների պահպանում և տարածում՝ ի հակադրություն լուսավորչադավան հայ եկեղեցու կանոնների ու ծիսակարգի:

Համեմատաբար սակավ է, մեր կողմից էլ լեզվական քննության առումով քիչ է ընդգրկված հայրաբանական (պատրիստակա), ջատագովական (ապոլոգետիկա) գրականությունը: Թերևս դա բացատրելի է այն հանգամանքով, որ լատին հեղինակները որքան էլ ջերմեռանդ են եղել «հավատի տարածման» հարցերում, նույնպիսի ջերմեռանդություն հանդես չեն բերել իրենց իսկ հայրերի՝ հոգևոր առաջնորդների, իրենց իսկ անձի՝ հոգևոր շարունակողների

¹ Հմմտ. *Լ.Տեր-Պետրոսյան*, նշվ. աշխ., էջ 8:

² Տե՛ս նույն տեղում:

³ Ավելորդ ենք համարում բերել կոնկրետ գրքերի անուններ, որը ևս մեզ շատ հեռուն կտաներ: Դրանց, ինչպես նշել ենք վերը՝ այլ առիթով, կարելի է տեղեկանալ մեր աշխատանքի

«մեկնաբանման» ու ջատագովության խնդրում: Ավելին, այդ բնույթի գրքերի միջառ չէ, որ կարելի է հանդիպել. դրանք նկատելի են հատկապես հետագա շրջանում: Այս բնագավառում ունենք մեկ-երկու գրքեր, որոնք թե՛ ինքնուրույն երկեր են և թե՛ թարգմանական աշխատություններ: Հիշենք, օրինակ, Հակոբ Վիլլոտի «Պատմագրութիւն կաթողիկոսաց և թագաւորաց Հայոց» (Վենետիկ, 1713) գիրքը, Թովմա Գեմբացու «Յաղագս համահետևման» գրքի թարգմանությունը, որը (մեր հաշվումով) ունեցել է 7 տպագրություն (սկսած 1674 թ. մինչև 1853 թ.):

Այս շրջանում, հատկապես լատին միրաբարների միջավայրի հովանավորության և միջամտության պայմաններում է, որ մեզանում տպագրվում է «Աստվածաշունչը»: Հայտնի է, որ տպագիրը լրացվում է և հարմարեցվում լատինական տարբերակին (օրինակ՝ Ոսկան Երևանցու տպագրած «Աստվածաշունչը»), նրանում տեղ է թողնվում (իբրև «տուրք») լատինաբան միջամտությունների համար (օրինակ՝ Մխիթար Սեբաստացու տպագրած «Աստվածաշունչը») և այլն:

Հայտնի են նաև Ս.Գրքի տարբեր մասերին ու գլուխներին վերաբերող մեկնաբանություններ (քիբլիկա): Հիշենք, օրինակ, Ալբերտ Մեծի «Համառօտութիւն աստուածաբանութեան» գիրքը (Վենետիկ, 1715), որը բավականին տարածված էր ոչ միայն լատինաբան գործիչների, այլև նրանց դեմ այս կամ այն չափով պայքարողների, հատկապես վենետիկյան գործիչների շրջանում, և պատահական չէ, որ այն տպագրվել է մխիթարյանների ջանքերով:

Լատին հեղինակների գրական գործունեության բնագավառում ուրույն տեղ են զբաղեցնում նաև այն գրքերը, որոնք ըստ էության վերաբերում են եկեղեցու պատմությանը (հիստորիա), նրա կանոններին (կանոնիկա), նրա «այրերի» վարքին ու վկայաբանությանը (հագիոգրաֆիա): Գրանցից հիշենք, օրինակ, Կղ.Գալանոսի «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն» (հհ. Ա-Բ, Հռոմ, 1650-1658, 2-րդ հատորը բաղկացած է երկու մասից՝ տպագրված 1658-1661), «Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» (թարգմ., Հռոմ, 1630), «Մեկնութիւն դաւանութեան ուղղափառ հաւատոյ» (Հռոմ, 1711), «Թուղթ սիրոյ և միաբանութեան» (Վենետիկ, 1695), «Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց» (Ամստերդամ, 1698), «Գիրք սրբոյն Մաշտոցի վարդապետի» (Ամստերդամ, 1667), «Խորհրդատետր սրբազան պատարագի» (Վենետիկ, 1686), «Խորհրդատետր» (Նոր Ջուղա, 1641), «Գիրք խոստովանութեանց» (Կ.Պոլիս, 1698), «Սպասաւորութիւն պատարագի» (Հռոմ, 1677 և այլն:

մատենագիտական ցանկերում, կոնկրետ գրքերին վերաբերող (ընդ որում՝ լեզվական) վերլուծություններում:

Եկեղեցական գրականության մեջ, որպես լեզվական իրողություն, առանձնանում է համապատասխան տերմինաբանությունը: Այն հանդիսանում է նոր ժամանակների մտածողության արտահայտությունը, արտացոլելու ժամանակի համապատասխան հասկացությունները: Թե որքանով է այդ տերմինաբանությունը հարուստ և կատարելագործված, դա էլ պայմանավորված է այդ գրականության բովանդակային կողմով: Վերջինս էլ, իր հերթին, հիմնավորված է միարարական շարժման նոր գաղափարաբանությամբ:

Միարարական շարժման գործիչները դեռևս 14-րդ դարի սկզբներից ձեռնամուխ են եղել որոշակի բնագավառի գրականության ստեղծման՝ հանդես եկած թարգմանության և ինքնուրույն շարադրման ձևով, և այդ մասին փոքրիշատե տեղեկանում ենք ոչ միայն Ալիշանի, այլև Աճառյանի և հետագա ուսումնասիրողների աշխատություններից, որոնցում թվարկվում կամ համառոտ վերլուծվում է դրանց որոշակի մասը¹:

Այսպես, Հ.Աճառյանը «Հայոցլեզվի պատմություն» աշխատության մեջ թվարկում է 25 անուն կրոնական (իմա՝ եկեղեցական-դավանաբանական և աստվածաբանական) գրքեր, որոնք թարգմանվելիս են եղել 14-րդ դ. առաջին կեսի ընթացքում. «Այդ թարգմանությունները կատարվել են մեծ մասամբ լատին Բարդուղիմեոս եպիսկոպոսի, Պետրոս Արագոնացու (սպանիացի) ձեռքով, մի քանիսն էլ Հովհան Բոնեցու, Հակոբ վարդապետի և Հովհաննես Ջահկեցու ձեռքով»¹:

Այդ թարգմանությունների լեզվի վերաբերյալ Հ.Աճառյանը հատկապես բանասիրական մի ճշգրտում է անում, թեև ավելի հետագա շարադրանքում ինքը թույլ է տալիս որոշակի անճշտություն: Նախ, ճշգրտում է հետևյալը. «Մեր մեջ տիրում է այն կարծիքը, թե հիշյալ լատին քարոզիչները հայերեն լավ չիմանալով և կամ դիտմամբ հնարեցին մի նոր տեսակի հայերեն, որ ըստ ամենայնի ձևված էր լատիներեն լեզվի վրա և դրա համար էլ կոչվում է լատինաբան հայերեն: Այս կարծիքը, որի հեղինակը, ինչպես երևում է, Ջարբհանայանն է (անդ, էջ 49) (մինչև Ջարբհանայանն էլ բազմիցս նման կարծիք արտահայտվել է - Վ.Հ.), բոլորովին սխալ է: Լատին քարոզիչները բնավ կարիք չունեին հայերենի համար նորանոր ձևեր հնարելու: Նրանք եթե տգետ էին հայերենի գիտության մեջ, առ առավելն քերականական սխալներ պիտի անեին, և ոչ թե հնարեին նոր նոր ձևեր կամ տալին հայերենին նոր կազմակերպություն, ինչ որ ոչ թե տգետի գործ է, այլ

¹ Տե՛ս *Ղ.Ալիշան*, Միսական: Տեղագրութիւն Միւնեսց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 348-522: Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 209-213: *С.С.Аревшатян*, К истории философских школ Средневековой Армении (XIV в.), Ереван, 1980:

ընդհակառակը պահանջում է ավելի մեծ հմտություն, միայն ի չարը գործադրված»²: Այնուհետև ավելի ճիշտ չէ այն, որ եզրակացվում է, թե «ինչպես երևում է, այս հայերենը շատ կանոնավոր է և լատինաբան կոչվելու ոչ մի պատճառ չունի: Լատինաբան հայերենը հորինված է ավելի ուշ, ԺՁ դարում, Հռոմում»³:

Այս երկրորդ կետում կարելի է առարկել մի քանի նկատառումով՝ հետևյալ կերպ: Նախ՝ լատինաբան գործունեության նոր ակիբը պետք է դնել ոչ թե 16-րդ, այլ 17-րդ դարում: Երկրորդ՝ 14-րդ դ. առաջին կեսին թարգմանված (նաև ինքնուրույն) գրականության լեզուն չի կարելի համարել «շատ կանոնավոր», որովհետև ինչպես ցույց են տալիս նորահայտ աղբյուրների (տպագիր և ձեռագիր՝ նախորդների կողմից քննության չառնված) տվյալները, սկզբնավորման շրջանից ի վեր լատինաբան հայերենն այլ բան չէ, քան տարբեր չափերի և ծավալի հասնող հեռացում տվյալ ժամանակի, այսպես կոչված, բուն կամ «հայկաբան գրաբարից» (առհասարակ հայերենից): Երրորդ՝ Հ.Աճառյանը, նաև իրեն ժամանակակից և մոտիկ անցյալի ուսումնասիրողները լատինաբանության հետ կապված մշակութային շարժումը դնում են մի քանի դար ուշ, քան որ այն եղել է: Լ.Խաչիկյանը, օրինակ, Հովհ. Քոնեցու «Յաղաքս քերականի» երկի քննական բնագրի առաջաբանում, ելնելով բանասիրական և լեզվագիտական տվյալներից, լատինաբան հայերենի և առհասարակ լատինաբանության սկիզբն իրավմամբ համարեց 14-րդ դ. 10-ական թթ., երբ լատին միրարարները մուտք գործեցին Հայաստան և ձեռնամուխ եղան միարարական գործունեության:

Փիլիսոփայական երկերը, ճիշտ է, քանակով սովորական թիվ են կազմում, սակայն բովանդակության առումով ներկայացնում են նոր, ուրույն մակարդակ՝ կապված հայ փիլիսոփայական մտքի զարգացման հետ:

Ուսումնասիրողները, որ ուղղակիորեն կամ որևէ առիթով առնչվել են միարարական շրջանի գրավոր աղբյուրների բովանդակային կողմի (= իմաստաբանական) գնահատությանը, մասնագիտական վերլուծությանը, իսկ դա ակներև է դառնում հատկապես վերջին ժամանակներս, գրեթե միահամուռ կերպով ընդգծում են այն իրողությունը, որ լատինաբանությունը մեզանում, իբրև ընդհանուր մշակութային երևույթ, իբրև ժամանակի եվրոպական գիտության ներմուծում, դրական դեր է խաղացել: Այսպես, միարարական շրջանի փիլիսոփայական միտքը մեզանում հանդիսանում է որոշակի առաջադիմություն

¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 209:

² Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 310:

³ Նույն տեղում:

ընդհանուր զարգացման ճանապարհին¹:

Այս մարզում մեծ է Ս.Արևշատյանի հատկապես հիշյալ աշխատության նշանակությունը: Նրանում հեղինակն առավել մանրամասնությամբ և քննական վերլուծության նոր մոտեցումով արժեքավորում է միարարական շարժման այն կարևոր աշխատանքները, որոնք ժամանակին խաղացել են իրենց դերը կաթոլիկական եկեղեցու աստվածաբանության տարածման գործում: Հայ իրականության մեջ իմաստասիրական նման լուծումներն ունեցել են այն արժեքը, որ ժամանակի եվրոպական գաղափարաբանությունն է մատուցվում արևելքի ժողովուրդներին, այդ թվում նաև հայության մտավոր խավին, նաև հոգևորականությանը: Դավանաբանական հիմնական վեճի մեջ առաջ էին քաշվում նաև փիլիսոփայական չափանիշներ, որոնք հաճախ գործադրվում էին ծայրահեղորեն:

Հայ փիլիսոփայական միտքը բուռն վերելք է ապրում հետագայում: «XVII դարի կաթոլիկական հայերից շատերը թողել են բավականին հարուստ գրական, այդ թվում նաև փիլիսոփայական ժառանգություն, որը հայ մշակույթի հավաքական ամբողջության անկապտելի մի մասն է և պետք է ուսումնասիրվի ու գնահատվի ըստ ամենայնի՝ առանց հաշվի առնելու տվյալ մտածողի կրոնադավանաբանական հավատամքը»²:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև, որ թե՛ միարարական շարժման կողմնակիցները, թե՛ նրանց հակառակորդները այս կամ այն կերպ առանչվում են լատինաբանությանը: Նրանք առերևույթ կամ ըստ էության հարում էին միարարությանը, կամ էլ այն ծառայեցնում սուկ մշակութային հայրենանվեր գործունեության իրագործմանը: Այսպես, օրինակ, XVII դ. «հակամիարարական» շարժման երևելի դեմքերը ինքնաբերաբար տուրք են տալիք լատինաբանությանը, կոնկրետ դեպքում՝ իրենց գրավոր խոսքում գործածում են լատինաբան մտածողության արդյունք հանդիսացող լեզվական ձևեր³:

Ուստի կարելի է հետևել ոչ միայն միարարական, այլև որոշ չափով հակա-միարարական շարժման ներկայացուցիչների փիլիսոփայական երկերի

¹ Հմմտ. *С.С.Аревшатян*, նշվ. աշխ.: Այդ նպաստը մշակույթի տեսակետից հստակորեն և միանշանակ արժեքավորված է *Լ.Խաչիկյանի* կողմից: Տե՛ս *Լ.Խաչիկյան*, Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դպրոցը («Բանբեր Մատենադարանի», 1973, 11, էջ 125-210): Քռնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քռնեցու գիտական գործունեությունը (տե՛ս *Յովհաննէս Քռնեցի*, Յաղագս քերականին, էջ 5-51):

² Հ. *Միրզոյան*, նշվ. աշխ. էջ 59:

³ Հմմտ. նույն տեղում, էջ 71:

¹ Հ. *Միրզոյան*, նշվ. աշխ., էջ 50-51:

³ Նույն տեղում, էջ 71:

տերմինաբանությանը, ավելի կոնկրետ՝ տվյալ բնագավառում լատինաբան հայերենի ունեցած գիտակցական կամ ինքնաբերական կիրառություններին:

Այսպես, նկատենք, որ հայ փիլիսոփայական մտքի պատմությանը նվիրված աշխատություններում շատ հազվադեպ ուշադրություն է դարձվում համապատասխան տերմիններ, որոնք կազմված լինեն այս կամ այն փիլիսոփայի կողմից: Իսկ սա նշանակում է, որ միաբարական շրջանի փիլիսոփաների երկերում նույնպես գործածված տերմիններն ու տերմինային անվանումները, որոնք կարևոր են լատինաբան հայերենի պատմության տեսակետից, հայոց լեզվի բառապաշարի պատմության առումով:

Նման ոչ բոլոր աշխատություններում է, որ հանդիպում ենք նոր տերմինների կամ տերմինային անվանումների, մանավանդ լատինաբանության տեսակետից: Վ. Չալոյանի ռուսերեն գրված աշխատանքներից մեկում, օրինակ, հանդիպում ենք թե նախկինում գործածված (իմա հունաբան), թե նոր ժամանակներում ստեղծված (իմա լատինաբան) կազմությամբ տերմինների, հատկապես Սիմ. Ջուղայեցու հայացքների քննությանը նվիրված շարադրանքում: Դրանցից են, օրինակ, *շարամանություն* («բարդ՝ հյուսված, կապակցված ասություն՝ արտահայտություն»), *շարաբանություն* («մտահանգում, եզրակացություն») և այլն, որոնք գալիս են հնից (տե՛ս «Նոր բառգիրք հայկազյան լեզվի»), ինչպես նաև *պարզասություն* («պարզ ասություն՝ արտահայտություն») և այլն, որ չենք գտնում հիշյալ բառարանում և դիտում ենք հարաբերականորեն նոր տերմին¹:

Այսպես նաև Դավիթ Անհաղթի երկի վերաբերյալ Սիմ. Ջուղայեցու մեկնության մեջ հանդիպող տերմիններից Չալոյանը նշում է՝ *մակածական* («բնորոշող, սահմանող»), *յարացուցական* («հավասարարժեք» և այլն), որոնք գալիս են հին գրական հայերենից, այլև *կարճաբանական* («սիլլոգիզմի կարճ արտահայտություն»), որը կարող է նոր լինել (տե՛ս էջ 317-318):

Նման մոտեցումով ուսումնասիրությունը կարող է մեծացնել լատինաբան հայերենի բառապաշարի, մանավանդ տերմինաբանության պատմության ոլորտը, և դա ապագայի գործ է:

Անհամեմատ քիչ են լատինաբան հեղինակների ձեռքով ստեղծված պատմագիտական («պատմագրական») աշխատությունների քանակը: Եղած գրականությունն էլ երևան է գալիս այն նպատակով, որպեսզի «գրի առնվի» (և որոշ իմաստով՝ գնահատվի) կաթոլիկ եկեղեցու այրերի, վերջիններիս՝ Հռոմի հետ

ունեցած տարբեր կարգի առնչությունների պատմությունը, եթե ոչ՝ տարեգրությունը՝ ի պահ և առ հիշեցումն գալիք, հետագա սերունդների: Այդ գրականությունից հիշելի են, օրինակ, Գրիգոր Անավարզեցու, Մխիթար Ապարանեցու, Ներսես Պալիանենցի, Օգոստիանոսի (Կարնեցու) երկերը:

Այս տեսակետից թերևս ամենանկատելի երկեր են Կղ. Գալանոսի և Հ. Վիլլոտի աշխատությունները, որոնք 17-րդ դ. երկրորդ կեսի և 18-րդ դ. առաջին տասնամյակների ամենախոշոր երևույթն են կաթոլիկական եկեղեցու պրոպագանդան նպատակով հայոց եկեղեցու և հայոց թագավորության պատմությանն անդրադարձած:

1637 թ. Հայաստան եկած, երեք տարվա ընթացքում հայերեն սովորելուց հետո Կ. Պոլիս անցած («իբր միակ քարոզիչ հայոց ազգին») Կղ. Գալանոսը գրում է «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» ծավալուն աշխատությունը, որը տպագրվում է Հռոմում (բաղկացած երկու հատորից, երկրորդը՝ երկու գրքից, լույս տեսած նույն տարում երկու անգամ, վերահրատարակված նաև հետագայում և այլն), կարևորագույն աղբյուր է հայ-լատին եկեղեցական հարաբերությունների, ընդ որում հայոց եկեղեցու պատմության՝ սկզբնական շրջանից մինչև ուշ միջնադար: Հեղինակը, որքան էլ հանդես է բերել առանձնական (սուբյեկտիվ) մոտեցում ուշադրության առարկա հարցերի քննարկման տեսակետից, ի վիճակի է եղել ցուցադրելու գիտական մեծ կարողություններ, առհասարակ քրիստոնեական եկեղեցիների ընդհանուր գծերի և առանձնահատկությունների, անցած և միավորման նպատակով նշելի ուղիների քննարկման մեջ:

Նրա սույն աշխատությունը կարևորագույն աղբյուր է նաև հայերենի, մանավանդ նրա մեկ առանձին տարբերակի ըստ ամենայնի քննարկման ու գնահատության համար: Այդ գրքերի լեզուն ժամանակի գրաբարի սովորովի վիճակն է՝ մի տեսակ խճողված լատիներենի մտածողությամբ պայմանավորված համապատասխան ձևերով (բառերով, կապակցություններով, արտահայտություններով, ոճերով և այլն):

Գալանոսը հարցի քննարկման ժամանակ ելնում է ոչ միայն կաթոլիկական եկեղեցու «օրենսդրությունից», այլև հայ եկեղեցու նվիրյալ վարդապետների, առհասարակ լուսավորչական դավանանքի տվյալներից, ընդ որում միտումնավոր ձևով շատ անգամ թեքելով կամ աղավաղելով այդ տվյալները: Գրքի 1-ին հատորի տպագրության վկայագրում (տրված 1649 թ.

¹ Տե՛ս *В.К. Чалоян, История армянской философии (Древний и средневековой период)*,

մայիսի 17-ին) նշվում է հետևյալը՝ գրված «տեր Գրիգոր Ծործորեցի ի կարգէն քարոզողաց» հրատարակչի ձեռքով. «գործ օգտակարագոյն համարեմ, և հայոց սեռիցն պիտանացու, որով յուղղափառ հաւատս ախորժացեալք յենոյն: Քանզի իրաւի իսմա վերադիտող գործոյս արտասանեալն Կղէմէս վարդապետ, ի հայոց գրոց և պատմագրաց, մանաւանդ ժողովոց որք ի մէջ նոցին կատարեցան, չհաւատոյ ճշմարտութիւն պայծառապէս արտայայտէ, և յաչս նոցին իսկապէս բացատրէ: Որոյ յաղագաւ արժնաւորագոյն համարիմ զգիրքս, զի ըստ հրամանի սուրբ ժողովոյն ի լոյս գայցէ» (տե՛ս հ. 1, Հռոմ, 1650, էջ 15):

Հռոմի եկեղեցուն միանալու նպատակով հայոց եկեղեցու ջլատմանն ուղղված նման նպատակադրումն, ինչ խոսք, ժամանակին ունեցել է իր հաջողությունը, ընդ որում ոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական իմաստով: Քանի որ պատահական չէ, որ այդ ժամանակ, ինչպես նաև հետագայում ևս հայոց մեջ տարածված գաղափարաբանությունը դառնում է միջոց թե հավատափոխության և թե ազգից հեռանալու:

Այդուհանդերձ, հարվածն ուղղված է եղել նաև մշակույթի, մասնավորապես լեզվի բնական զարգացման խաթարմանը՝ իբրև արհեստական, արտաքին միջամտություն: Կղ. Գալանոսի սույն աշխատությունը նախկինում գրված քերականական աշխատությա հետ միասին գրական կարևոր հուշարձան է 17-րդ դ. առաջին կեսի լատինաբան հայերենի պատմության ավելի լայն ուսումնասիրության համար, որովհետև նրանում երևան են եկել լեզվական մի շարք նոր իրողություններ՝ արտահայտելու իր ժամանակի մտածողությունը:

Պատմագրության բնագավառին վերաբերող մյուս կարևորագույն աշխատությունը թերևս Հ. Վիլլոտի «Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թագաւորաց հայոց» (Վենետիկ, 1713) գիրքն է: Որոշ վերապահությամբ այստեղ կարելի է հիշել նաև նույն հեղինակի մեկ այլ՝ Մեկնութիւն դաւանութեան հաւատոյ» (Հռոմ, 1711) աշխատությունը:

Կաթողիկական եկեղեցու մեկ այլ ներկայացուցիչ՝ հիսուսյան կրոնավոր Վիլլոտի այդ գրքերն այնքան էլ ծավալուն չեն, սակայն աչքի են ընկնում խիստ գործնական նպատակադրումով, այն է՝ ներկայացնելու քրիստոնյա Հայաստանի կաթողիկոսների և թագավորների կառավարման ժամանակների պատմությունը, վերաբերմունք արտահայտելու վերջինիս նկատմամբ: Այս դեպքում ևս ելակետը ընդհանրական եկեղեցու դիրքերի

տարածումն է, հայ առաքելական եկեղեցու վերաբերյալ վերապահություն ունենալը՝ առանձնական (սուբյեկտիվ) պատճառներից ելնելով:

Այսուհանդերձ, այդ գրքերն ունեն այն արժեքը, որ որոշակի օրինակներ են տալիս լատինաբան հայերենի պատմության մանրամասն ուսումնասիրության համար:

Նկատենք նաև, որ պատմագիտական բնույթի տեսակետից ուշադրություն կարող են գրավել նաև ձեռագիր մատյաններում այս կամ այն չափով տեղ գտած հիշատակումներն ու անցքերին վերաբերող նկարագրությունները՝ գրված հատկապես լատինաբան միջավայրում:

Մեզ են հասել լատինաբան հայերենով գրված բազմաթիվ քերականական աշխատութաուններ: Դրանք ևս դար առ դար հավասարապես չեն բաշխվում, և դա բնական է:

14-րդ դ. երևան է եկել Հովհ. Քոնեցու նորահայտ քերականությունը: Դրանից հետո, առայժմ, քիչ գործեր են հայտնի այս բնագավառում: Նույնիսկ լինում է ժամանակ (16-րդ դ.), որ նման աշխատություն գրեթե գոյություն չունի: Ավելի ուշ (17-րդ դ.), որ մեծ թափ է առնում քերականական աշխատությունների ստեղծումը, մասամբ՝ թարգմանությունը: Այդ դարից ավանդված են զգալի թվով ինքնուրույն և թարգմանական քերականություններ, որոնք իրենց էությամբ նպատակամղված են դեպի լատինաբանությունը, գրված են հայերենի (գրաբարի) համակարգի նկարագրման նպատակով, սակայն լատիներենի ընդօրինակումով: Այլ կերպ ասած՝ այդ աշխատությունները կազմված են ոչ միայն լատինաբան հայերենով, այլև լատիներենի քերականական կառուցվածքի օրինակով: Ուստի, դրանք ևս, իբրև առանձին գործառական ոճի երկեր, աչքի են ընկնում հատկանշական տերմինաբանությամբ, որն ինքնուրույն երևույթ է, եթե ոչ նոր մակարդակ հայ բազմադարյան քերականագիտական անդաստանում՝ ոչ միայն վաղ անցյալի համեմատությամբ, հետագայում նույալես:

Այստեղ հարկ ենք համարում նշելու, որ լատինաբան հեղինակների քերականական աշխատություններն որոշակիորեն տարբերվում են իրենց նախորդած աշխատություններից թե՛ ընդհանուր տեսությամբ, թե՛ կոնկրետ իրողությունների, լեզվական երևույթների մեկնաբանության հարցում հանդես բերած մոտեցումներով: Նման աշխատություններից առաջինը, անշուշտ, Քոնեցու գիրքն է: «Քերականության իբրև գիտության ըմբռնման ու սահմանման հարցում Քոնեցու հայացքները արմատապես տարբերվում են Դիոնիսիոս Թրակացու էմպիրիկ պատկերացումներից, ըստ որոնց քերականությունը սահմանվում է սոսկ իբրև «հմտություն, որք ի քերթողացն և ի շարագրաց իբրու բազում անգամ

ասացելոց»¹:

Այս հարցում, հարկ է ավելացնել, Քոնեցին հետևում է Թրակացու հայ մեկնիչներից հատկապես Դավթին և Մովսեսին, որոնք մերժելով քերականությունն իբրև սոսկ հմտություն սահմանելու տեսությանը, հանդես էին գալիս «քերականական արվեստի» իբրև առանձին, ինքնուրույն գիտություն, քանական, տրամաբանական հիմունքների պաշտպանությամբ²:

Այս կետում ևս հստակորեն նկատվում է լատինաբան հեղինակների հակվածությունը դեպի ժամանակի ռացիոնալիզմը (գիտության հարցում՝ լոգիցիզմը): Իսկ դա չի խանգարում, որպեսզի Քոնեցու սույն երկն ավելի հագեցած լինի իբրև քերականություն, քան Դիոնիսիոսի դասագիրքը (հմմտ. վերջինս խիստ ուշադրություն է դարձնում վեց բաժիններից երեքին՝ «բանասիրական բաժիններին», այսինքն՝ առոգանությանը, տաղաչափությանը և վերծանությանը, իսկ Քուռնեցին՝ դրանք դիտում է լրացյալ, «հավելվածային»՝ քերականականի համեմատությամբ³): Այնուհետև, Քոնեցու քերականությունը մեզանում առաջինն է, որում քննության է դրվում հայոց լեզվի շարահյուսության հարցերը՝ դրանց հատկացնելով բավականին լայն տեղ: Այդ տեսակետից ևս Քոնեցին «լատինաբան» է, որովհետև միջնադարյան քերականագիտությունը լատին քերականների մատուցած ծառայություններից են շարահյուսության հարցերի մշակումն ու գնահատությունը: Քոնեցին այդ բնագավառում ևս օգտագործում է եղածը և հմտորեն տալիս է «իր ժամանակի հայերենի անհամեմատ ավելի ինքնուրույն նկարագրությունը»⁴:

Ուստի այս ամենով հանդերձ Քոնեցու քերականությունը դառնում է իբրև հայերենի առաջին լատինատիպ քերականությունը՝ «լատինատիպ քերականությունների նախակարապետը»⁵: Վերջինիս քերականագիտական լիարժեք վերլուծությունը միայն մեր օրերում է կատարված, որովհետև նախկինում այդ աշխատանքը համարվում էր կորած, այն փնտրելու և ուսումնասիրելու ջանքեր չեն գործադրվել, որն ամբողջովին հասկանալի է՝ կապված հետազոտողների հետապնդած խնդիրների և գիտական բարեխղճության հետ, այլ այն մեկնաբանվել է երկրորդական աղբյուրի պարունակած թռուցիկ տվյալների հիման վրա: Իսկ այժմ նման քերականությունների սկզբնավորումը և զարգացման

¹ *Н.Азотц, Дионисиус Фракииуский и армянские толкователи*, Петроград, 1915, էջ 1:

² *Յովհաննես Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 54:

³ Հմմտ. նույն տեղում, էջ 55-56:

⁴ Նույն տեղում, էջ 140:

⁵ *Գ. Չառուկյան*, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 291:

⁴ *Յովհաննես Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 141:

պատմությունը բնականորեն տեղափոխվում է երեք դարով հետ՝ 14-րդ դ.¹:

Տեղին է ավելացնել, որ Քոնեցու երկր որոշակի ձեռքբերում է լեզվի, ի մասնավորի՝ հայերենի քերականական կառուցվածքի լիարժեք քննության տեսակետից, որովհետև այն մեզանում առաջինն է, որ, ինչպես նշվեց, տալիս է շարահյուսության ուսումնասիրությունը՝ որոշակի ըմբռնումով և համապատասխան տերմինաբանությամբ: Եվ դա լիովին իրական է ի դեմս նրանում տեղ գտած երկու առանձին բաժինների՝ «Յաղագս գիտութեան բաղադրելոց» և «Յաղագս շարամանութեանց»: Եվ ինչպես ճիշտ է բնութագրում Քոնեցու քերականության հրատարակման առաջաբանի երկրորդ բաժնի հեղինակ Ս.Ավագյանը, «Քոնեցու քերականության այս երկու բաժինները ամբողջովին նվիրված են հայերենի շարահյուսության նկարագրությանը, և այդ առումով նորություն են հայ բազմադարյան քերականության մեջ, քանի որ մինչ այդ հայ քերական մեկնիչների գործերում և սրանց հիմտը կազմող «Քերականական արվեստում» շարահյուսական իրողությունները առանձին չէին քննվում»²:

Այստեղ խիստ կարևոր է նշել, որ Քոնեցու քերականությունն աչքի է ընկնում ինքնօրինակ տրամաբանությամբ, որը պայմանավորված է հեղինակի նոր ըմբռնումներով ու լեզվի նկատմամբ հանդես բերած նոր հարցադրումներով, եղածի վերախմաստավորմամբ և նորովի մոտեցմամբ՝ կապված տերմինակազմության հարցերում նրա ի հայտ բերած անկաշկանդ նորարարության հետ: Մասնավորապես կարելի է նշել հետևյալը, որը միանգամայն ընդունելի պետք է համարել. «Իր քերականության մեջ Քոնեցին պահանջի թելադրանքով ստեղծել է շարահյուսական, մասն ձևաբանական հասկացությունների մի շարք նոր անվանումներ ու տերմիններ, որոնք մեծ մասամբ պատճենված են լատիներենից: Իհարկե, Քոնեցու հորինած քերականական տերմիններից բոլորը չէ, որ մնայուն տեղ են գրավել հայ քերականագիտության մեջ, սակայն եղածներն էլ բավական են հաստատելու «Համառօտ հաւաքման» հեղինակի զգալի ավանդը ինքնուրույն քերականական տերմինաբանություն ստեղծելու գործում»³:

Այնուհետև, հետագա շրջանի լատինատիպ քերականական տերմինաբանությունը զարգանում է ոչ միայն ինքնուրույն ձևով, այլև քարգմանական համատիպ աշխատությունների միջոցով: Ոչ միայն այս, այլև առհասարակ լատինատիպ քերականական տերմինաբանության

¹ Նույն տեղում, էջ 57:

² Նույն տեղում, էջ 148:

ուսումնասիրությունը մի տեսակ անտեսվել է: Դա այսօր թերացում է, որի հետևանքով ոչ միշտ է, որ հստակ կերպով հնարավոր է լինում պատկերացնել հայերեն քերականական տերմինաբանության զարգացման պատմությունը: Այսպես, Ոսկան Երևանցու քերականական աշխատությունը հաջորդում է Թովմա Իտալացու քերականության նրա իսկ թարգմանությանը, որպիսի հանգամանքի շփոթի (և մեզանում, իրոք, տեղիք է տրվել այդ շփոթին) հետևանքով իրար են խառնվել այդ երկու աշխատություններում առաջ քաշված գաղափարների և դրանց հայեցի, թարգմանական համարժեքների առնչությունների հետ կապված շատ կնճռոտ հարցեր: Այնինչ, եթե ժամանակին կատարվեր դրանց ողբյուրագիտական և քերականագիտական ճիշտ վերլուծությունը, ապա չէին լինի վրիպումներ ու սխալներ, ոչ էլ դրանք ավանդույթի ուժ կստանային, այսինքն՝ կդառնային դժվար հաղթահարելի: Ինչևէ, այս և այլ կարգի թերացումները, որոնք կան վերջին տասնամյակների քերականագիտական ուսումնասիրություններում, պիտի հաղթահարվեն, այլև դրանց շտկումների ձևով է հնարավոր քննության առնել հայերենի քերականական տերմինաբանությունը: Վերջինս էլ երևան է հանում քերականական երկերի գործառական առանձնահատկությունները՝ թե՛ բովանդակության, թե՛ ժամանակագրության առումով:

Լատինատիպ քերականություններից թերևս ամենաշատ ուշադրություն է դարձվել մեկին՝ Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցու «Ձտութիւն հայկաբանութեան» գրքին, ամենամեծ հավատը ընծայվել է դրան, որովհետև երկար ժամանակ ոչ ճիշտ ավանդույթի ուժով այդ գիրքն է դիտվել լատինաբան հայերենի «դրության», այսպես կոչված, «օրենսգիրքը»: Դա հստակ ու որոշակի երևում է մոտիկ անցյալի մեր բանասերների և հատկապես Հ.Աճառյանի աշխատություններից¹: Եվ քանի որ դա այդպես է, ուստի նրան էլ հասցեագրվել են հայերենի «աղավաղման» հարցում արված ամեն մի մեղադրանք ու պարսավանք: Այս իրողությունը մեր օրերում, բարեբախտաբար, հիմնավորապես ու փաստացի վկայաբերումներով մասնակիորեն վերանայված է¹:

Լատինաբան քերականական տերմինները բավականին շատ են: Դրանք բազմազան են ոչ միայն իրենց բառակազմությամբ ու ծագմամբ, այլև գործածության կենսունակությամբ: Այստեղ ևս ունենք տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք նոր բառեր են, բառերի նոր իմաստային կիրառություններ,

¹ Հմմտ. Ն.Անդրիկեան, Ուրուագիծ հայ մատենագրութեան, «Բազմավէպ», 1911, էջ 440. Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 313-323:

³ Հմմտ. Ռ.Բշխանյան, Հայ գրքի պատմություն, հ. 1 (Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում), Երևան, 1977, էջ 500-507. Հ.Միրզոյան, XVII դարի փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 72, 116-125 և այլն:

ինչպես նաև բառակապակցություններ, փոխառություններ և այլն:

Նոր տերմինները, լինելով հետագա ժամանակների կազմություններ, գերակշիռ մասով բաղադրյալ են, և համեմատաբար քիչ են հանդիպում պարզ կազմությամբ տերմինները: Նկատի ունենալով, այս հանգամանքը՝ նշենք, որ քերականական տերմինները լինում են չորս տիպի՝ մենաբաղադրիչ, երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ: Անհամեմատ մեծ թիվ են կազմում երկբաղադրիչ կազմությամբ տերմինները:

«Լեզվաբանական բառարանում», օրինակ, բավականին մանրամասն ներկայացվում են լատինաբան հեղինակներից Ֆր.Ռիվոլայի, Ոսկ.Երևանցու, Հովհ.Կոստանդնուպոլսեցու (Հոլովի), ինչպես նաև Սիմ.Ջուղայեցու, Հովհ.Ջուղայեցու (Մրբուզի) և Միս.Սեբաստացու քերականությունների մեջ գործածված տերմիններն ու տերմինային անվանումները, որոնք հավասարապես նշվում են իբրև հին կամ հնացած միավորներ²: Նկատենք նաև, որ հիշյալ հեղինակների քերականությունների այդ կարգի ոչ բոլոր միավորներն են տեղ գտել այդ բառարանում: Ավելին, քանի որ Հովհ. Քոնեցու, Դավ. Չեյքունցու քերականական աշխատությունների քննական բնագրերը նախքան այդ բառարանի տպագրությունը դեռևս կազմված չէին, ուստի դրանցում կիրառված տերմինները դուրս են մնացել հիշյալ բառարանից, ինչպես որ առհասարակ այլ ձեռագիր քերականությունների համապատասխան նյութն է դուրս մնացել:

Քերականական տերմինները ևս ուշադրության առարկա են սույն աշխատանքում, կարծում ենք, որ դրանք կարող են դառնալ նաև լայն ուսումնասիրության նյութ, որովհետև աչքի են ընկնում ոչ միայն բառային-բառակազմական, իմաստային և բառակապակցական, այլև գործառական որոշակի առանձնահատկություններով:

Նկատենք, որ վերոհիշյալ բառարանը մեզ հետաքրքրող նյութի տեսակետից ևս հաջողված է, որովհետև ընդգրկված է լատինաբան քերականների որոշակի մասի տերմիններն ու տերմինային անվանումները. դրանք են Ռիվոլայի, Գալանոսի, Ոսկան Երևանցու, Հովհաննես Հոլով, մասամբ՝ Սիմ. Ջուղայեցու, Հովհ. Ջուղայեցու քերականություններում գործածվածները: Նման աշխատանքի համար աղբյուր են ծառայել ոչ միայն

² Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

հիշյալ հեղինակների համապատասխան երկերը, այլև հավանաբար դրանց ուսումնասիրմանը նվիրված աշխատությունները:

Վերջին կարգի աշխատություններից առավելապես նկատելի է Գ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն» գիրքը, որտեղ բավականին լայն ուշադրություն է դարձվում նաև քերականական տերմինաբանությանը. երբ հետևում ենք դրանց գործածության ժամանակային հերթականությանը, պարզվում է, թե որ հեղինակի երկում է գործածվել այս կամ այն տերմինը, և այն ինքնուրույն կազմությու՞ն է, թե՞ պատճենում կամ ընդօրինակում:

Այսուհանդերձ, հետագայում ևս երևան եկան քերականական մի քանի աշխատությունների քննական բնագրերը, որոնց աշխատասիրողները մեծ նպաստ քերեցին նրանցում տեղ գտած տերմինների և տերմինային անվանումների առանձնացման և գնահատության գործում: Նկատի ունենք հատկապես Հովհ. Քոնեցու, Դավ. Ջեյթունցու, Հովհ. Երզնկացու և Հովհ. Ծործորեցու քերականությունների քննական բնագրերի հրատարակությունը:

Այնուհետև, կարծում ենք, որ հայերենի քերականական տերմինաբանության պատմության մեջ որոշակի դեր է խաղացել լատիներենը ոչ միայն հիշյալ քերականությունների ստեղծման բերումով, այլև նրանց, որոնք մինչև այժմ ուսումնասիրված չեն, կամ մասամբ են դարձել ուսումնասիրության առարկա: Այսպես, 16-րդ դ. քերական Թովմա Իտալացու քերականական աշխատությունը ձեռագիր մի քանի օրինակներով պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի պահոցներում, և այն մինչև այժմ չի արժանացել բանասիրական, մասնավորապես քերականագիտական, լեզվաբանական որևէ քննության: Ինչպես վերն ակնարկեցինք, մեր կարծիքով, այս հեղինակի աշխատության հիման վրա է, որ ժամանակին Ոսկան Երևանցին կազմել է իր համառոտ քերականությունը, որն էլ միայն այդ չափով է ուշադրության առարկա եղել Գ. Ջահուկյանի հիշյալ աշխատության մեջ (էջ 63-88):

Ըստ այսմ գտնում ենք, որ քերականական այդ և նման այլ աշխատանքների հատկապես տերմինաբանության քննությունը հետաքրքիր է ոչ միայն ինքնին, այլև նրանցում լատիներենի ունեցած դերի առումով:

«Լեզվաբանական բառարանում» բերվում են այնպիսի տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք մեզանում կիրառվելիս են եղել ավելի վաղ՝ դեռևս չուսումնասիրված քերականություններում: Այսպես, օրինակ, Հովհ. Քոնեցու քերականության վերջում և Ս. Ավագյանի ներածական շարադրանքի մեջ հանդիպում ենք այնպիսի տերմինների, որոնք ինչ-որ չափով կանխում են

հետագա վկայություններով հայտնի դարձածներին: Այս իրողությունը նկատում ենք նաև մյուս հեղինակների երկերում:

Լատինաբան հայերենի շրջանում երևան եկած քերականությունների տերմինաբանությունը ևս հայերենի բառապաշարի մի մասն է, որի ստեղծման գործում այս կամ այն չափով դեր է ունեցել լատիներենը:

Լատինաբան հայերենով գրված աշխատություններից ինքնուրույն բնագավառ են ներկայացնում բառարանագրական հուշարձանները: Վերջիններս, ընդհանուր դիտվածքով, ամենից առաջ համադասվում են քերականական աշխատություններին, բայց քանի որ դրանք բնորոշվում են առաջին հերթին իրենց տերմինաբանությամբ, իսկ բառարաններն առհասարակ ընդգրկում են լեզվի ողջ բառապաշարը, ուստի այս վերջին հանգամանքը նկատի ունենալով, ինչպես նաև հաշվի առնելով լատինաբան հեղինակների կողմից կազմած ինքնատիպ և արժեքավոր, ծավալուն բառարանները, հարկ ենք համարում դրանց անդրադառնալ առանձին, իբրև (պայմանականորեն) մեկ ուրույն բնագավառի արտահայտություն:

Այդպիսին են, օրինակ, Կդ. Գալանոսի, Հակ. Վիլյոտի, Աստվ. Ներսեսովիչի բառարանները՝ փոքրիշատե առնչվող լատինաբան հայերենին կամ լատինաբանությանն առհասարակ: Կան նաև այլ կարգի բառարաններ, ընդ որում ոչ ծավալուն, որոնք նույնպես պարունակում են լատինաբան հայերենի բառապաշարի տարրեր, ինչպես նաև երևան են գալիս լատին քարոզիչների միջավայրում, կրում են նրանց ազդեցությունը¹:

Ֆր. Ռիվոլայի «Բառգիրք հայոց» (Միլան, 1621) երկը՝ գրված երկլեզվյան (հայերեն-լատիներեն) բառարանագրության սկզբունքով, զիջում է հետագայում երևան եկած բառարաններին թե՛ կառուցվածքի և թե՛ լեզվական ընտրանքի տեսակետից (հանդիպում են ժամանակի խոսակցական բառեր, ձևեր, արտահայտություններ և այլն): Նրանում լատինաբան հայերենի քիչ տվյալներ են բերվում՝ ի հակակշիռ բարբառային և խոսակցական մի շարք բառերի: Այն ավելի նշանակալից է միարարական միջավայրի գործունեության, քան թե լատինաբան հայերենի պատմության տեսակետից:

Ոչ ծավալուն բառարանների մեջ ուշագրավ է Կդ. Գալանոսի քերականական և տրամաբանական աշխատության տերմինների և տերմինային անվանումների հավաքագրմամբ կազմված ձեռագիր

¹ Տե՛ս Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ – XIX դ.), հ. 1, Երևան, 2006:

տերմինաբանը, որտեղ ի թիվս այլ՝ «հայկաբան» կազմությամբ միավորների կան նաև լատինաբան ձևեր¹:

Այնուհետև, հայերեն ձեռագրերում քիչ չեն այն աշխատանքները, որոնք սեղմ, նույնիսկ մի քանի էջեր են պարունակում՝ հիմնականում լատիներեն - հայերեն ցանկեր, որոնք նույնպես ինչ-որ չափով արժեքավոր են մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից:

Այստեղ առանձնակի ուշադրության է արժանի Հակ. Վիլլոտի «Բառգիրք հայկական լեզուի» (Հռոմ, 1714) ծավալուն, երկայուն բառարանը, որտեղ ձախ սյունը լատիներենն է, իսկ աջը՝ հայերենը: Հայ բառարանագրության մեջ այս երկն աչքի ընկնող երևույթ է, հատկապես երկլեզվյան բառարանների շարքում: Այն բնորոշվում է մի քանի տեսակետից: ա) Բառահողմածները գրեթե գերազանցապես քաղված են հին գրական հուշարձաններից, այլև ձեռագիր մատյաններից, բառերի բացատրությունը կատարվում է բավականին «մաքուր» կամ ոչ լատինաբան հայերենով, որը ավելի է մեծացնում բառարանի արժեքը: բ) Արժեքավոր տվյալներ կան հայերեն գրերի («տառերի») հնչյունական արժեքի վերաբերյալ, քանի որ դրանք տառադարձված են ժամանակի հնչականությանը համապատասխան: գ) Բառարանում առանձին բաժիններ են հայոց կաթողիկոսների և թագավորների ցանկերը, ինչպես նաև Ռուբինյան թագավորների հերթակարգությունը. նկատենք, որ այս բաժինը հեղինակը մեկ տարի առաջ տպագրել էր առանձին գրքով և առանձին վերնագրով: դ) Սույն բառարանը մեզանում ժամանակի եվրոպական չափանիշներով կառուցված աշխատություն է, թերևս առաջնեկ, որ բառարանագրական չափանիշներով գերազանցում է ոչ միայն Ֆր. Ռիվոլայի բառարանին, այլև հետագա շատ ուրիշ բառարանների, սակայն նախօրինակ հանդիսանալով Մխ. Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» աննախադեպ երևույթ հանդիսացող երկի համար՝ Երեմիա Մեղրեցու բառարանից հետո: ե) Այս բառարանում շատ քիչ քան է վերաբերում լատինաբան հայերենին, մեծ մասամբ այն «հայկաբան» լեզվի բառարան է:

Մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից ուշադրության է արժանի նաև Աստվ. Ներսեսովիչի «Բառգիրք լատինացուց և հայոց ի վերայ Աստուածաշունչ և Ժամակարգութեան գրոց հայոց եկեղեցոյ» (Հռոմ, 1695) երկը, որը բավականին ծավալուն է (բուն բառարանային մասը՝ 596 էջ): Այս բառարանը ուշադրության առարկա է ամենից առաջ լատիներենին առնչվելու, քան

¹ Տե՛ս *Յակոբ Վիլլոտ*, Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թագաւորաց հայոց, Վենետիկ, 1713:

լատինաբան հայերենի պատմության տեսակետից: Այդուհանդերձ, այն բնութագրելի է հետևյալ հատկանիշներով. ա) բառահոդվածները զուտ թարգմանական են, քան բացատրական, բ) հայերեն թարգմանական ձևերից հատկապես երկրորդը, երրորդը բարբառային բնույթի են, այսինքն՝ հեղինակը ձգտել է լատիներեն ձևը հայերենի վերածել կամ հայերեն թարգմանել ոչ միայն գրական, այլև հասկանալի, խոսակցական (բարբառային) ձևերով, գ) այն գրեթե անմասն է բառապաշարի նորաբանություններից, քանի որ պարունակում է սուրբգրային և ժամակարգությանը վերաբերող բառապաշարը՝ թե՛ մեկ, թե՛ մյուս լեզվում և այլն:

Այդուհանդերձ, բառարանում որոշ կարևորություն ունեն հայոց այբուբենի հնչական կողմի արտացոլման, որոշ լատինաբան ձևերի (օրինակ՝ *տրեմ* բայը, *ըն*, *ն* նախդիրներ, *լատագունեղ* լաւ ածականի գերադրական աստիճանի ձևը և այլն) տեղ հատկացնելու առումով: Սույն գրական հուշարձանի մանրամասն ուսումնասիրությունն ապագային է վերաբերում, իսկ տվյալ դեպքում ուրույն տեղ ունի լատինաբան հայերենի պատմության տեսանկյունից:

5. Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները

Հայերենը, հունարենը և լատիներենը, ինչպես գիտենք, հնդեվրոպական ցեղակցության լեզուներ են: Ծագելով մեկ ընդհանուր աղբյուրից (հնդեվրոպական նախալեզվից՝ հնխ.)՝ իրենց պատմական ինքնուրույն զարգացման և նկատվող շփումների ընթացքում դրանք ձեռք են բերել որոշակի յուրահատկություններ՝ բոլոր դեպքերում պահպանելով հնդեվրոպական ակնհայտ ընդհանրություններ: Յեղակից այդ լեզուները քերականորեն այնքան են միմյանցից հեռացած, որ մի կողմից՝ հունական դպրոցի նորամուծությունները հին գրական գրական հայերենի համար խորթություն են՝ «հունաբանություններ», մյուս կողմից՝ (հետագայում)՝ լատինաբան դպրոցի նորամուծությունները գրաբարի համար ևս որակվում են որպես խորթություն՝ «լատինաբանություններ»: Որքան էլ, օրինակ, հեղինակները փորձում են հայերենը «ձևել» ըստ լատիներենի, դա լրիվ ու լիարժեք չի ստացվում: Այսպես, գոյականների սեռը, որ առկա է լատիներենում, ոչ մի կերպ չի ձևակերպվում հայերենում, որքան էլ փորձերը շատ են լինում, ըստ որում՝ խիստ բազմազան (վկան՝ իգական սեռի ձևացումը *-ուհի* մասնիկով): Քերականական անջրպետն այնքան է մեծացած լինում, որ ցեղակից երկու լեզուների

(լատիներենի և հայերենի) միջև անգամ «ձևական» ընդհանրություն, էլ ուր մնաց նույնական սահմանները դառնում են ոչ ամբողջական, անհամապարփակ:

Տարբերակիչ հատկանիշը լեզվական այն առանձնահատկությունն է, որով բնութագրվում է տվյալ լեզվի (եթե ոչ՝ լեզուների), մեկ լեզվի ներսում՝ բարբառների, ենթաբարբառների և այլն, որևէ իրողություն: Այն կարող է առանձնացվել ոչ միայն լեզվի համաժամանակյա կտրվածքի հարաբերությամբ, այլև նրա պատմության տարբեր փուլերում տեղի ունեցած փոփոխությունների առնչությամբ: Տարբերակիչ հատկանիշներն առհասարակ բնորոշ են լեզվին և կազմում են նրա, այսպես կոչված, առաջատար, պատկերավոր ասած «շարժիչ ուժը»:

Սակայն լեզվի ուսումնասիրությունն ըստ տարբերակիչ հատկանիշների առաջ է քաշվում բավականին ուշ, հիմնականում կառուցվածքային լեզվաբանության մեջ: Այդպիսի ուսումնասիրության է առնված, օրինակ, լեզուների հնչույթային համակարգը՝ ընդհանուր լեզվաբանական հայեցակետից¹:

Այս առումով մեզանում խիստ ուշագրավ է հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգումը, որը ոչ միայն կոնկրետ ձեռքբերում է հայ բարբառագիտական ուսումնասիրության բնագավառում, այլև տեսական նոր հնարավորություն է ստեղծում ըստ այդմ հետազոտելու հայերենն իր տարբեր կողմերով և զարգացման պատմության առանձին փուլերի հարաբերությամբ¹:

Հայոց լեզուն աչքի է ընկնում ոչ միայն գրական և բարբառային (= խոսակցական) տարբերակվածությամբ, այլև գրական լեզվի երկփեղկվածությամբ՝ զարգացման նոր փուլում, ինչպես նաև ներկայացնում է պատմականորեն գոյացած գրական լեզվի առնվազն երեք տարբերակներ (հին, միջին և նոր): Դրանից բացի, գրեթե ամեն մի գրական տարբերակ խստորեն առանձնանում է իր հասարակական-մշակութային տարբերակվածությամբ: Այսպես, հին գրական հայերենի ներսում կարելի է խոսել «հայկաբան», ասորաբան և հունաբան տարբերակների մասին, միջին հայերենի շրջանում՝ միջին (բուն) գրական, միջին շրջանում գործառույց գրաբար և ձևավորվող հունալատինաբան և լատինաբան տարբերակների մասին և այլն:

Ըստ որում միջին հայերենի շրջանում սկզբնավորվող լատինաբան տարբերակը, ինչպես նշել ենք, հասնում է մինչև 18-րդ դ. 1-ին կեսը, որտեղ այն

¹ Հմմտ. *Р.Якобсон, Г.М.Фант и М.Халле, Введение в анализ речи: Различительные признаки и их корреляты. "Новое в лингвистике", т. 2: М., էջ 173-230. М.С.Гурычева, Н.А.Катагоицина. Сравнительно-сопоставительная грамматика романских языков (Галло-романская подгруппа), М., 1964, էջ 22-27: Տե՛ս նաև Լդ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964:*

հետզհետե գիտակցական մոտեցումով կասեցվում է և հաղթահարվում: Ուստի և՛ հայերենում գործառող լատինաբան տարբերակը, որ սկիզբ է առնում 14- րդ դ. սկզբներից, գործառության տարբեր փուլերում ի հայտ է գալիս տարբեր ինտենսիվությամբ և արտաքին միջամտության պայմաններում հաղթահարվում է ու փոխարինվում «հայկաբան» տարբերակով՝ հունի մեջ է դրվում ըստ հայերենի բնականոն վիճակի (= տարբերակի):

Բոլոր այն հայագետները, ըստ որում հայերենագետները, ովքեր այս կամ այն չափով անդրադարձել են լատինաբան հայերենին, փոքրիշատե նշել են լեզվական այդ տարբերակին բնորոշ այս կամ այն կարգի հատկանիշների մասին: Այդ գործում մեծ է հատկապես Հ.Աճառյանի դերը: Հենվելով Հովհ.Կոստանդնուպոլիսցու քերականական աշխատության տվյալների վրա՝ մեծավաստակ հայագետը մեկառմեկ թվարկումով բերում է լատինաբան հայերենի լեզվական առանձնահատկությունները, որոնք, մեր կարծիքով, խիստ էական են, սակայն ամենևին էլ ոչ լրիվ և ամբողջական:

Ստորև մեր կողմից առանձնացվող տարբերակիչ հատկանիշներն ամբողջապես բնութագրում են լատինաբան հայերենի համակարգը՝ ընդգրկելով հնչույթաբանական երևույթները, բառապաշարի իրողությունները, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

Միանգամայն ընդունելի է այն ձևակերպումը, ըստ որի լատինաբան հատկանիշներն ըստ էության այլ բան չեն, քան՝ ա) հեռացում այսպես կոչված «հայկաբան» հայերենից և բ) մոտեցում՝ լատիներենին: Ըստ այդ ձևակերպման ստացվում է այնպես, որ այդ հեռացումը մի կողմից՝ ոչ թե հայերենի ներքին, բնականոն զարգացման «ինքնօտարում» էր, այլ արհեստական հեռացում՝ օտարացում, մյուս կողմից՝ մոտեցումն էլ այլ բան չէր, քան անտարրորոշ լեզվի (որակապես «չտարբերակված լատիներենի», ասենք՝ իբրև ընդօրինակման նմուշ վերջինիս ո՞ր տարբերակն էր ընտրվում՝ դասակա՞նը, հետդասակա՞նը) տարօրինակ ընդօրինակում²: Հետաքրլիր է նաև այն իրողությունը, որ թեև 1-ին ենթաշրջանում լատինաբան գործունեությունն ունենում է բուռն զարգացում, այնուամենայնիվ լատինաբան հայերերը համեմատաբար ավելի քիչ է կրում «խաթարումներ», քան հետագայում: Ի թիվս այլ հանգամանքների՝ դա պայմանավորված է այն բանով, որ սկզբնապես, հատկապես թարգմանությունների հարցում, միարարներից գուգակցում էին լուսավորչադավան կրոնավոր գործիչները: Այսպես, հայտնի է, որ լատիներենից հայերեն

¹ Տե՛ս Գ.Չահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

² Տե՛ս «Երուսա», 1848, 14, էջ 16:

քարգմանություն անելիս Հովհաննես Երզնկացին (Ծործորեցին) օգնում էր, աջակցում էր Բարդուղիմեոսին, օրինակ, Թովմա Աբվինացու «Եօթն խորհրդոց» գրքի դեպքում¹: Նման գործակցումն, ինչ խոսք, բարեպետ էր ազդելու տվյալ փուլում հայերենի անադարտությանը հավատարիմ մնալու, լատինաբան և ժամանակի խոսակցական ձևերից խուսափելու հարցում, որը խախտվում է հետագայում:

Հովհաննես Քռնեցու «Յաղագս քերականին» աշխատության մեջ, որը լատինաբան հայերենի քերականական կառուցվածքի մի յուրօրինակ նկարագրություն է հանդիսանում, քերականական մի շարք երևույթների վերլուծության դեպքում հանդես է բերում ոչ միայն ինքնուրույն մոտեցում, այլև որոշ հանգամանքներում (օրինակ՝ անունների սեռանիշ մասնիկների առանձնացման, դերանվան բնութագրման և դասակարգման, բայի խոնարհման հետ կապված երևույթների բնորոշման հարցերում և այլն) տեղ է տրվում համեմատաբար մոտ կանգնած նախորդ քերականներից, հատկապես Հովհաննես Երզնկացու և Հովհաննես Ծործորեցու այս կամ այն մոտեցմանը²:

Մի քանի խոսք տարբերակիչ հատկանիշների ընտրության մասին:

Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներն առանձնացնում ենք՝ նկատի առնելով 1) նախկինում տարբեր առիթներով հայագետների կողմից նշված առանձնահատկությունները, 2) Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (մ. 2, Երևան, 1951, էջ 313-323) գրքում շարադրանքի ձևով բերվող տարբերությունները, 3) լատինաբան հայերենի հատկություններ պարունակող կարևորագույն քերականությունների համապատասխան տվյալները, 4) լատինաբան հայերենով ավանդված գրավոր աղբյուրների տարբեր կարգի լեզվական երևույթների կիրառությունները, 5) լատինաբան նորամուծությունների հաղթահարումը (ըստ որում՝ օգտագործելով այդ խնդրին նվիրված տողերիս հեղինակի ուսումնասիրությունների արդյունքները):

Լեզվական հատկանիշները, տվյալ դեպքում, լինում են երկու կարգի՝ մենամակարդակային (միայն լեզվի տվյալ մակարդակում ի հայտ եկող) և միջմակարդակային (լեզվի երկու մակարդակներին հավասարապես վերաբերող): Մենամակարդակային են հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական տարբերակիչ հատկանիշները, իսկ միջմակարդակային՝ ձևահնչույթաբանական (*морфофонологические*) և բառակազմական-

¹ Տե՛ս ՄՄՁ 560: Հմմտ. «Բազմավեպ», 1911, էջ 440: *Գար.Յովսէփեան*, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, էջ 248:

² *Յովհաննէս Քռնեցի*, Յաղագս քերականին, էջ 69-72, 79, 85-86 և այլն:

ձևակազմական (*слово-формообразовательные*) հատկանիշները: Այսպես, *սիրող ~ սիրողք* ձևերի դեպքում ունենք *o ~ n* հնչյունական անցումը, որը հանդես է գալիս նաև ձևաբանական արժեքով, կամ՝ *սիրեալ են ~ սիրեալեն* ձևերի դեպքում անջատ կամ կից գրությունն ունի բառակազմական-ձևակազմական արժեք (*սիրեալ են* կազմությունը երկու, *սիրեալեն*-ը մեկ բառ է):

ա) *Հնչյունական հատկանիշներ*. Սրանք համեմատաբար քիչ են, ընդգրկում են սահմանափակ դեպքեր ու փաստեր, երևան են գալիս գործառական ոչ հավասար պայմաններում, գործում են տարբեր ժամանակներում:

1. Ռնգային *ն*-ին նախորդող *ռ*-ի պահպանում նաև մյուս դեպքերում. *ընթեռնում ~ ընթեռցայ, ընթեռցալ, ընթեռցեալ* (ՖՌՔ), *ձեռն ~ ձեռքարածություն* (ՅՊՉ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 20, 23:

2. Հայերեն այբուբենի 34-րդ տառի՝ *ւ*-ի («վյուն, հյուն») հնչյունական արժեքավորում իբրև *ու* (թերևս հին գրականում եղածի վերականգնում) հատկապես *իւ* երկբարբառի կազմում (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 14:

3. Հպաշփական ձայնեղ *դ*-ի դիմաց շնչեղ խուլ *թ*-ի գործածություն՝ իբրև խոսակցականի ազդեցության արդյունք (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 17:

4. Հնչյունական *ոյ ~ ու* հակադրության գործադրում՝ իբրև ձևակազմական տարբերակիչ հատկանիշ, այն է՝ *ոյ*-ով սահմ. եղ. կրավ. անց. անկատ., իսկ *ու*-ն՝ նույնի ներգ. կազմում (ԿԳՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 53:

5. Հոգնակերտ *ք*-ի վերածում *գ*-ի՝ եզակի թվի իմաստի դրսևորման դեպքում հոգնակիակերտ *-իկ* մասնիկի վերածում *իք*- մասնիկի կամ պարզապես *ք*-ի ավելացում *-իկ* մասնիկին. *գիրք ~ գիրգ* (ԳՄԱ 1), այլև՝ *Աղուէսագիրգ* (ԳԱԱ, II, 3), *մարդ ~ մարդիք* (փխ. *մարդիկ*) (ՅԸԸ, 70, ԴԶԸ, 84, այլև *մարդիկք*): Հմմտ. «Բազմավեպ», 1873, 1, էջ 322:

6. Վանկարար նախահավելվածի (*augmentum syllabicum*) միասնականացում՝ *է*-ի գործածության բոլոր դեպքերում (փխ. բաղաձայնից առաջ դրվելու է, իսկ ձայնավորից առաջ՝ *ե*) (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 20:

7. Հայերեն այբուբենի մեջ ներմուծված *օ* և *ֆ* գրերի «օրինականացում» (համապատասխանաբար՝ *ու*-ի և *փ*-ի գոյությունը իբրև «անմտության արդյունք») (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 27:

8. Հայերենի այբուբենի մեջ *ւ*, *ու* գրերի օրինականացում՝ գրերի ընդհանուր քանակը հասցնելով 40-ի. «Տառք հայկազունք են քառասուն, և են այսոքիկ՝ *ւ, ք, գ... ւ, փ, ք, ւ, օ, ֆ, ու*» (ՅՀԸ, 120): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 92:

9. Չուգակցված կամ կրկնակի *դ* - երի պարզեցում. *ընդդեն ~ ընդեն* (ՅՀԸ, 114, ՄՖՄԱ, 1):

10. Չևակագմական փոփոխության մեջ $o \sim n$ հնչյունափոխության հաստատում, o -վ ձևը ուղղականի «հիմքին», իսկ n -ով ձևը մյուս թեք ձևերի «հիմքին» հատկացնելով. *սիրոդ ~ սիրոդի* (ՖՌԶ, ԿԳԶ): Այլև՝ *ուսուցանող* (docens) ~ *ուսուցանողի* (docentis), *ընթերցող* (legens) ~ *ընթերցողի* (legentis) (ՅՀԶ, 8, 114, JGA, 8): Հմմտ. *Աճառյան*, 1951, 312, *Ջահուկյան*, 1974, 28:

11. Օտար բառի հայերեն տառադարձության անհստակություն, մաս անմիակերպություն. «այլ ազգի անուանց գրութեան մէջ ամէնն ալ իրարմէ տարբեր ճամբայ բռներ են. հասարակօրէն գրածնին՝ կէս մը տառադարձութեամբ, կէս մը առանց տառադարձութեան» («Եւրոպա», 1848, 14, էջ 16):

բ) *Բառային հատկանիշներ*. Սրանք գերակշիռ մասով առանձնացվում են համապատասխան գրական հուշարձանների ընձեռած լեզվական տվյալների հիման վրա, քանի որ ինչպես գիտենք, բառապաշարի հարցերը հայերենի բոլոր կարգի քերականություններում ամենանվազ ուշադրության առարկա են եղել: Դրա հետևանքով, բնականաբար, շատ սակավ, գրեթե աննշան է «լատինաբան բառի» բաղադրության (կառուցվածքի) մասին համապատասխան քերականությունների պարունակած տվյալները: Այս դեպքում հատկանիշների առանձնացումը կատարվում է բառակազմության և բառագործածության «տարօրինակության» (լատինաբանության) ընթացիկ սկզբունքների օգնությամբ: Այդ սկզբունքներն այստեղ առանձնացվում են գրավոր աղբյուրների փաստերի հիման վրա: Առհասարակ բառապաշարի հետազոտությունը միայն վերջին ժամանակներս է հանդիսանում առանձին ուշադրության առարկա: Ուստի լատինաբան հայերենի բառային հատկանիշների առանձնացումը հիմնականում կատարվում է ըստ նորագույն ուսումնասիրությունների՝ հատկապես հայերենի բառակազմության և բառային իմաստաբանության առնչությամբ: Ամենից առաջ առանձնացնելի են հետևյալ հատկանիշները:

12. Նախածանցի անտեղի գործածություն. *համախոկումն* (փխ. *խոկումն*) (ԹԳՀՅ, 63): Հմմտ *Համբարձումյան*, 1982, 66:

13. Անհարկի բազմակի նախամասնիկավորում. *ներպարառութին* (փխ. *ընդգրկումն*) (ՄՄՁ 1046, 90բ): Հմմտ. *Աճառյան*, 1951, 145 (այստեղ երևույթը կոչվում է բարդ նախամասնիկների թարգմանություն «հունարեն ոճով»):

14. Ավելորդ նախածածմամբ արտաստվոր բառի կազմում՝ «հարազատ» (հայեցի) բառի գործածության փոխարեն. *ստորանկանել* (ԳԱ, I, էջ II, փխ. *գտանել*, ԳԱ, II, էջ II), *նախասահմանել* (ԽԶ, I, 15, փխ. *լինել*, *եղանել*, ԽԶ, II, 21), *ստորահակիլ* (ԹԳՀՅ, 235, փխ. *ի ստոր բերել*, ԹԳՅՆ, 235): Հմմտ. *Համբարձումյան*, 1982, 67:

15. Անջատական գրությամբ նախամասնիկների անհարկի, խորթ գործածություն. *մակ յաւելիլ* (ՄՄՉ 9068, 14բ, փխ. *յաւելուլ*, ԱՄՀԱ, 46): Հմմտ. «Եւրոպա», 1818, 14, էջ 16, *Չարքհանայլյան*, 1878, 53, *Համբարձումյան*, 1982, 66:

16. Արտասովոր վերջածանցավոր բառի կիրառություն գրաբարին հարազատ ձևի փոխարեն. *մտաւորապէս* (ԹԳՅՀ, 39, փխ. *մտաւոր*, ԹԳՅՆ, 39): Հմմտ. *Համբարձումյան*, 1982, 67:

17. Յուրակական *նա* դերանվան վերածում անձնականի՝ լատիներենի հետևողությամբ [հմմտ. լատ. անձն. դեր.՝ ego - ես, du - դու, 3-րդ դեմք՝ չիք, ցուց. դեր.՝ is, ea, id - *նա* (ար., իգ., չ.), hic, haec, hoc - *նա* (ար., իգ., չ.), ille, illa, illud - *նա* (ար., իգ., չ.)՝ չհաշված այլևայլ նրբությունները] (ՖՌ-Բ): Հմմտ. *Չահուկյան*, 1974, 18-19 (այստեղ նշվում է, որ «անհետևողականություն է հանդես բերվում դերանվան տարբեր տեսակների առանձնացման հարցում», թեև դա արդյունք է ոչ թե անհետևողականության, այլ լատիներենի «կույր հետևողության»):

18. Բայական սուկածանցների օժտում բառի տարբերակման գործառությամբ. *թռչիմ* (լատ. volo < volare) և *թռնիմ* (լատ. salto < saltare) (ՌԵ-Բ): Հմմտ. *Չահուկյան*, 1974, 80:

19. Բառակազմական հիմքերի «միօրինականացման» նպատակով չ սուկածանցն ունեցող որոշ բայերի սահմ. ներկայի ձևավորում այդ նույն չ-ի բացթողում. *ծանիմ* (փխբ. *ճանաչես*), *յարիմ* (փխ. *յարնչիմ*) (ՖՌ-Բ): Հմմտ. *Չահուկյան*, 1974, 22:

20. Բառիմաստային պատճենում («լատինաբան բառաձևեր»՝ իմաստի տեսակետից). *առփորձեցումն* (adprobatio «հասանութին»), *բաւարարութիւն* (satisfactio «հատուցումն»), *ներսունապէս* (intime «ի սրտէ»), *վեհալուստր* (illustris «զերյարգոյ»), *փաղարկութիւն* (conjectura «կարծիք»), *հրապիրակ* (respublica «հանրապետութիւն» - Վ.Հ.), *լրունակ* (summa «լրումն, ծագ»): Հմմտ. «Եւրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավէպ», 1879, 1, էջ 322, *Չարքհանայլյան*, 1878, 53:

21. Բառակապակցական պատճենում (բառակապակցության դիմաց՝ բառակապակցություն). *զգալ չարապէս* (male sentio): Հմմտ. *Չարքհանայլյան*, 1878, 53:

22. Լատիներեն բառի փոխառություն. *լետեն, լետես, լետէ* և այլն (լատ. ledere «վնասեն»): Հմմտ. «Բազմավէպ», 1873, 1, էջ 323, *Չարքհանայլյան*, 1878, 53:

23. Բառաբարդման «հայկական» երևույթի չարաշահում լատիներենում նման երևույթի նվազ գոյության պատճառով («Կար ուրիշ բան մ'ալ, որ լատին լեզուին մէջ չեն գտած ու հայերէնն ուներ, այսինքն՝ բառ բարդել. ուստի այս

ազատութիւնս ալ որ ունեցան, ալ անանկ անշահ բարդութեանց ձեռք զարկին, որ բոլորովին խժալուր բաներ են» («Երոպա», 1848, 14, էջ 16):

24. Բառիմաստի շփոթ՝ իմաստափոխության բաղարկության (կոնտամինացիայի) սկզբունքով. *արդ* (այլև՝ *արդէն*. «հիմա, այժմ, այժմվանից»), փխ. *վաղ իսկ* - լատ. *jam*, ֆրանս. *gia, deja* և այլն): Հմմտ. «Բազմավէպ», 1873, 1, էջ 323:

գ) *Ճևաբանական հատկանիշներ.*- Սրանք համեմատաբար մեծ թիվ են կազմում, որովհետև ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ լատիներենի և հայերենի (իբրև հնդեվրոպական ցեղակցության լեզուների) քերականական կառուցվածքի ամենահատկանշական և բնութագրիչ գծերը հանդես են գալիս ձևաբանության մեջ: Դա այդպես է, ա) որովհետև հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության բնագավառում ամենամեծ չափով ուշադրության է առնված լեզուների ձևաբանական համակարգը, բ) քանի որ տարբեր լեզուների քերականության ամենածավալուն բաժինը ձևաբանությունն է, գ) ուստի և դրանք որոշակիորեն ազդում են լատինաբան հայերենի ձևաբանական ընդօրինակմանը: Լատիներենի և հայերենի ձևաբանական համակարգերը ի հայտ են բերում առավելապես ցեղակցային ընդհանրություններ: Դրանց ավելանում են, ինչ խոսք, հայոց լեզվի կառուցվածքի տեսակետից, տիպաբանական նոր համապատասխանեցումներ:

Լատինաբան հայերենի ձևաբանական հատկանիշները դրսևորվում են մեծ մասամբ գոյականի, ածականի, բայի և մակբայի զանազան կազմությունների դեպքում: Անհամեմատ մեծ է գոյականի և բայի բաժինը: Այստեղ առավել նշելի են հետևյալ հատկանիշները:

25. Գոյականի թվի կարգի լրիվ արտահայտման ձգտումով անեզական բառի (*pluralia tantum*) եզականացում, վերածում եզակիի՝ վերցված ոչ միայն ինքնին, այլև եզ.-հոգն. հակադրությամբ. *նախերգան* (փխ. *նախերգանք*) (ՅՀԶ, 157), *միտք* ~ *միտ* (փխ. *միտք*) (ՅՀԶ, 89, այլև՝ JGA, 2, էջ 6-7), *կեանք* ~ *կեան* (փխ. *կեանք*) (*ն. տ.*): Այլև՝ «Անուանք եզականք, որք եզերին ի մի միայն բաղաձայն, փոխարկին ի յոգնականս առդրութեամբ միոյ քէի, որզոն. *միտ, միտք, մեղ, մեղք, աչ, աչք, հնձան, հնձանք*» (ՅՀԶ, 130)¹. *արտևանուն* (փխ.

¹ Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցին այս երևույթի վերաբերյալ ունի բանավիճային մոտեցում՝ գտնելով, որ այն գալիս է հայերենի հին շրջանից. «Գիտելի է երկրորդ, զի անուանք ոմանք այտորիկ տեսակի որպիսիք են *մեղ, մեղի, շնորհ, շնորհի, փառ, փառի, օրէն, օրինի, կամ, կամի, կեան, կենի*, կարծին յոմանց թէ ոչ իցեն եզականապէս ի կիրարկանելիք, այլ միայն յոգնականապէս, բայց հաւաստի հակառակն, ի գրեանցն հայոց, *մեղ, որզոն. մեղ* ինչ որ գոյր նոցա. Յովհաննու, 15. *շնորհ, որզոն. օգնական և շնորհ* աշխարհի. ի Շարականս, 71. *փառ, որզոն. Կանոնագլխի փառն, Տոնացոյցք, 1. կամ որզոն. կամ* եղև և ինձ. Գուկասու, 1: Իսկ *կեանն* հաւաստի ի բաղադրութեանց, որզոն. *կենակից, կենագործել* և այլք: Բայց սոցին ևս եզական

արտևանում): Հմմտ. «Երոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավեպ», 1873, 1, էջ 322, *Աճառյան*, 1951, 315, *Ջահուկյան*, 1974, 99, *Համբարձումյան*, 1982, 68:

26. Անհոգնական բառի «հոգնակիացում» (նախորդին հակառակ). *կարք* (փխ. *կար* «կարողություն, ունակություն»): օրինակ՝ «*զկարս* քոյնիս, այսինքն՝ *զկար քո*» («Բազմավեպ», 1873, 1, էջ 322):

27. Բառավերջում *ր* կիսաձայնն ունեցող գոյականների հոլովում *ե* հոլովմամբ. *բլուր* ~ *բլեր* (փխ. *բլրոյ*), *ծաղր* ~ *ծաղեր* (փխ. *ծաղու*), *մեղր* ~ *մեղեր* (փխ. *մեղու*)¹:

28. Անունների (հատկապես գոյականի) սեռի առանձնացում ըստ քերականական որոշակի ցուցիչների². ար.՝ *իք* (լատ. *hic*), իգ.՝ *էք* (լատ. *haec*) - չ.՝ *օք* (լատ. *hoc*), «հաւասար»՝ *իքէք* (< լատ. *hichaec*), «մակաւասար»՝ *իքէքօք* (լատ. *hichaeoch*), «երկբայական»՝ *իք* կամ *էք* («ի ներքո միո նշանի»): *աքռաւ*-ը՝ *իք* է, նշանակում է *և՛ արուն*, *և՛ էգը*, *արծիւ* (լատ. *aquila*)՝ *էք*, որ նշանակում է *և՛ արուն*, *և՛ էգը*, որովհետև ընդհանուր սեռով հզական է, իսկ դերանունների մեջ ար.՝ *իք*, իգ.՝ *էք*, չ.՝ *օք*. «հասարակ»՝ *մերոք*, «մակաւասար»՝ *ես*, *դու*, *իւրն* (ՅԲԲ, 168-169, այլև 68-69, 72)³: Հմմտ. ԳԶԲ, 104-108, այլև ՅԲԲ, 68-69, 168-169:

29. Բառի ուղիղ ձևը ոչ ճիշտ պատկերացնելու հետևանքով հայերենին առհասարակ անհարիր ձևի հիման վրա հոլովման տիպի խախտում. *ընկերի* ~ *ընկերուք* (փխ. *ընկեր* ~ *ընկերի*) (ԿԳԲ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 36:

30. Բառի ելակետային ձևը ճշգրիտ չընկալելու պատճառով, ըստ որում երկգրության հիման վրա տարբեր ձևերի հատկացումը տարբեր հոլովումների՝

գործիականն լինի *իւ* ըստ առաջնոյն, որգոն. *մեղիւ*, *շնորհիւ*, *փառիւ*, *կենիւ*, մնայ սակայն *կամն*, ի ներքոյ այտորիկ տեսակի, քանզի ասի *կամաւ*, այլ ոչ *կամիւ*» (ՅԶԲ, էջ 8-9):

¹ Հայերենի համակարգում նկատվող լատինաբան այս «արհեստականությունն» ունի իր հիմքերն ավելի վաղ՝ հատկապես բուն գրաբարյան տարբերակում. հմմտ. *բլուր* > *բլեր* (Տես, օրինակ, *Յովհանն Մամիկոնեան*, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832, Վ. *Համբարձումյան*, Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը». «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 1, Երևան, 1981, էջ 112-211):

² Այս մոտեցումը գալիս է Հովհաննես Երզնկացուց և Հովհաննես Ծործորեցուց: Վերջինս, օրինակ, գանազանում է լատիներենի ածականի համար ար.՝ *մու* (< լատ. *us*), իգ.՝ *ա* (< լատ. *a*) և չ.՝ *մմ* (< լատ. *um*), գոյականի համար՝ ար.՝ *իք*, իգ.՝ *էք*, չ.՝ *օք* (լատ. *hic*, *haec*, *hoc*), տե՛ս *Յովհաննէս Ծործորեցի*, Համառօտ տեսութիւն քերականի, Լոս Անջելես, 1984, էջ 198-199, 395-360:

³ Այստեղ հարկ կա բերելու Ս.Ավագյանի մի խիստ գնահատելի դիտողությունը՝ անունների սեռի նշանակիչ «*իք*, *էք*, *օք*» մասնիկների արժևորման վերաբերյալ. «Համառօտ հաւաքման» մեջ սեռատարբերակիչ մասնիկների մասին հիշյալ տեսությունը, անշուշտ, կարող էր ներթափանցել միջնադարի լատիներենի քերականություններից կամ հայերենի լատինատիպ նկարագրություններից: Եվ իրոք, Հովհաննես Քոնեցու քերականության մեջ, ինչպես նաև սրա հետևությամբ հորինված Հովհաննես Ծործորեցու «Համառօտ տեսութիւն քերականի» երկում *իք*, *էք*, *օք* ներկայացված են իբրև լատիներենում անունների քերականական սեռը տարբերակող մասնիկներ, միաժամանակ հատուկ նշելով, որ դրանք հայերենում չեն դիտվում» (տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, էջ 68-69): Տե՛ս նաև *Յովհաննէս Երզնկացի*, Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս-Անճելես, 1983: *Յովհաննէս Ծործորեցի*, Համառօտ տեսութիւն քերականի, Լոս Անճելես, 1984, էջ 198-199::

իբրև տարբեր բառերի. *լեռ ~ սեռ. լերան (փխ. լեռան ~ լերին) (ԿԳՔ), լեռն ~ սեռ. լերին (փխ. լեռան ~ լերին) (ն. տ.):* Հմմտ. Ջահուկյան, 1974, 36:

31. Անորոշ հայցականի «որոշակիացում» (այն է՝ *q*-ի ավելացում). : Հմմտ. «Ինչուան Սուրբ Գրոց մէջ ալ սկսեր էր Ոսկան վարդապետը ձեռք խառնել՝ լատին քարգմանութեան յարմարեցնելու համար, ու ամէն անորոշ հայցականներուն վրա ալ *q* գիրը եւելցընել» («Բազմավէպ», 1873, 1 էջ 324):

32. Տրական հոլովի գուգահեռ արտահայտությունը «ձևավոր» և նախդրով. *մարդ ~ ի մարդն* և *մարդում* (ՅԲՔ, 171). *բան ~ բանի, ի բան. բանք ~ բանից, ի բանս* (ՅՀՔ, 4, այլև՝ *verbum ~ verbo, ad verbum, verba ~ verbis, ad verba* - JGA, 3-4):

33. Նույն հոլովի բազմաձևություն լատիներենի համապատասխան ձևի բազմիմաստության «ձևավոր» արտահայտման նպատակով. օրինակ՝ տրականի բուն և *g*-ով ձևերը (ՖՈՔ): Ջահուկյան, 1974, 19:

34. Գործիական հոլովի արտահայտությունը բացառականով, այն է՝ *առաքական* (լատ. *ablativus*)¹. *մարդ ~ ի մարդէն* կամ *մարդով* (ՅԲՔ, 178): Այլև՝ *գործիական* (լատ. *ablativus instrumentalis* «գործիքի բացառական») (ՖՈՔ):

35. Ներգոյական հոլովի կազմում *ըն (նի)* կամ *ն* մասնիկով (նախդրով), ըստ որում բաղաձայնից առաջ դրվում է *ըն*, իսկ ձայնավորից առաջ՝ *ն* (կցումով), գուգահեռ *ի* նախդրին. *ըն բանում, նատր, ըն տեսնն, նաստեղ*, այլև *գոյն* (բաղդատականի մասնիկը) ~ *նիգոյն* (ՅԲՔ, 167, ԿԳՔ, ՅՀՔ, 7, 15), այլև՝ *միտ ~ ի մտի // ըն մտում* (լատ. *in mente*), *արին ~ յարեան // նարեան* (լատ. *in sanguina*) (JGA, 18): Այլև՝ ՅԾՔ, 206, 208, 220, ԳԶՔ, 112, ՆԼՀԲ, 250: Հմմտ. «Երոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավէպ», 1873, 1, էջ 321, *Աճառյան*, 1951, 314-315, Ջահուկյան, 1974, 56, *Համբարձումյան*, 1982, 68:

36. Երբեմն գործ. և բաց. հոլովների կազմում *ըն* (*p*-ից առաջ՝ *ըմ*) մասնիկով ձևի գործածություն. *բաղդատութիւն ~ ըմբաղդատութեամբ, բայ ~ ըմբայէ, ոգի ~ նոգոյ, երկու ~ ներկուց, արտաքինք ~ նարտաքնոցն* (ՅԾՔ, 208, 219, ԳԶՔ, 112, 114, 121, 115): Հմմտ. *Համբարձումյան*, 1982, 68:

37. Ներգոյական հոլովի արտահայտությունը բացառականով (իմա՝ լատ. *ablativus loci* «տեղի բացառական») (ՖՈՔ): Հմմտ. Ջահուկյան, 1974, 16:

38. Նախդիրով և աննախդիր հոգն. հայցականի առանձնացում (*q*-ով և առանց դրա). *բան ~ գրան, գրանս, բանս* (ՅՀՔ, 5):

¹ Հայ. *առաքական*-ի առանձնացումն, ի դեպ, գալիս է Գիոնիսիոս Թրակացու մեկնիչներից՝ դրա տակ հասկանալով բացառական և գործիական հոլովների իմաստները, որն էլ ժառանգվում է Հովհաննես Քոնեցու կողմից, ըստ որում առաջնությունը տալով բացառական հոլովին:

39. Ածականի բաղդատական աստիճանի համար *-գոյն* մասնիկով ձևի հատկացում. *մեծագոյն* («ավելի մեծ»), *լաւագոյն* («ավելի լավ»): Հմմտ. *Համբարձումյան*, 1982, 69:

40. Ածականի գերադրական աստիճանի համար «ինքնատիպ» ձևի ստեղծում *-գունեղ* մասնիկով. *լաւ ~ լաւագունեղ* («ամենալավ»), *գերազանց ~ գերազանցագունեղ* («ամենագերազանց»), *մեծ ~ մեծագունեղ* («ամենամեծ»), *փարթամ ~ փարթամագունեղ* («ամենափարթամ»): Հմմտ. «Եւրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավէպ», 1873, 1, 53, *Աճառյան*, 1951, *Ջահուկյան*, 1974, *Համբարձումյան*, 1982, 69:

41. *Նոյն* դերանվան *նորին*, *նմին* և այլն ձևերի հատկացում *նա դերանվանը*, իսկ *նոյն*-ի համար արհեստական *նոյնոյ*, *նոյնում* և այլն ձևերի հորինում (ԿԳՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 40:

42. Որոշ դերանունների համար սեռ. հոլ. արհեստական ձևերի հատկացում. *սա ~ սոքա*, *սայց*, *սոցայց* (փխ. *յացցանէ*) - ՄՄՉ 873, 25ա, ՄՄՉ 1646, 89ա, 366բ: Այլև՝ *նա ~ նոքա*, *նոցայցր* (փխ. *նոցա*), *այս ~ այսք*, *այսցր* (փխ. *այսց*, *այսցիկ*), *ո ~ ոյք*, *ոյցր* (փխ. *ոյց*), *իւր ~ իւրեանք*, *իւրեանցր* (փխ. *իւրեանք*) (ՄՄՉ 1646, 89ե, ՄՄՉ 873, 260ա, ԴԶՔ, 73, ԿԳՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 40:

43. Հայերենում լատիներենի դերանունների սեռի տարբերակվածության ընդօրինակում արհեստական ձևերի հորինումով. *սա ~ ներ սոջա* (փխ. *սոցա*. ՄՄՉ 873, 256բ): Հմմտ. *Աճառյան*, 1951, 148:

44. Գերանվանական հոլովման մեջ գործիականի ձևի անտեսում լատիներենում նմանը չլինելու պատճառով (ՖՌՔ)¹: Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 19:

45. Բայի չորս լծորդությունների վերածում երեքի՝ *-ել*, *-ալ*, *-ուլ*, այսինքն՝ *-իլ* լծորդության հատկացում «կրավորականության» արտահայտմանը. *սիրեմ*, *բառնամ*, *առնում*, բայց *սիրիմ* («սիրվել»), *բառնիմ* («ելնել, բարձրանալ»), *առնանիմ* («առնվել») (ՅՔՔ, 176, ԿԳՔ, ՈԵՔ, 20-21, ՅՀՔ, 37, այլև՝ 63): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 53, 76, 102 և այլն²:

46. *Ու*, *ա* խոնարհման բայերի վերածում բուն և «այլ կարգի խոնարհումների»՝ *ու*, *ա//ե*, *ի* զուգահեռությամբ. *թողում ~ թող(ն)իմ*, նաև *թողանիմ*, *բառնամ ~ բառնիմ*, *զենում ~ զենիմ*, *հեղում ~ հեղեմ*, *յաւելում ~ յաւելեմ*, *առնում ~*

¹ Այնուհանդերձ, Ռիվոյան իր քերականության 4-րդ գլխում, դա է վկայում նաև Գ.Ջահուկյանը, նշում է գործիական հոլովի *ամք*, *մամք*, *թեամք*, *աւ*, *իւ*, *ով* վերջավորությունները՝ համարժեք լատ. in, cum, per նախդիրներին (տես ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 23:

² Առաջին անգամ Հովհաննես Բոնեցին է, որ հայերենի բայի լծորդությունները համարում է քերականական կարգ, «որոշում խոնարհման փոփոխություններում նրանց ունեցած առնչությունները»՝ հիմք ընդունելով սահմանական եղանակի (ինա «ցուցական կերպի») ներկայի եզ. 1-ին դեմքի ձևերում *ա*, *ե*, *ի*, *ու* մասնիկների երևան գալը (հմմտ. ՅՔՔ, 90):

առնիմ, լնում ~ լնիմ և այլն (ՖՌՔ, ԿԳՔ, ՌԵՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 23: Այնուհետև, *ու//(ան)ե* զուգահեռությամբ. *հարցում ~ հարցանեմ* (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, ն.տ.:

47. Ե խոնարհման բայերի սահմանական կրավորաձև անկատարի «գործնական» (պրակտիկ) հիմքի¹ հորինում՝ *ե, ի* ձևույթների գործադրումով. *սիրե-լ > սիրե-* (հմմտ. *սիրեէի* «սիրվեի», *սիրեէիր*, *սիրիւր* և այլն², *սիրե - էաք*, *սիրե - էիք*, *սիրե - էիմ*) (ՅՀՔ, 40): Հմմտ. «Եւրոպա», 1848, 14, էջ 16, *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106, *Համբարձումյան*, 1982, 69-70:

48. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական ներկայի կազմում *ա* խոնարհիչի վերածում *ի* խոնարհիչի. *լուանամ ~ լուանիմ* («վացվում եմ») (ՅՀՔ, 46): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106:

49. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական անկատարի կազմում *ե* խոնարհման բայերի ձևով. *լուանայի ~ լուանէի* («վացվեի») (ՅՀՔ, 46): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106:

50. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական «յարակատարի» կազմում յուրօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ լուանեցեալ եմ* (փխ. *լուացեալ եմ* «վացված եմ»). (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-107:

51. Ա խոնարհման բայերի սահմանական կրավորական «գերակատարի» կազմում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ լուանեցեալ էի* (փխ. *լուացեալ եմ* «վացված էի»). (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-107:

52. Ա խոնարհման բայերի ըղձական (լատ. optativus) եղանակի կրավորական կատարյալի կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ երանի թէ լուանեցեալ իցեմ* (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-108:

53. Ա խոնարհման բայերի ըղձական եղանակի կրավորական «գերակատարի» (նույնը՝ «յարակատարի») կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ երանի թէ լուանեցեալ իցէի* (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-108:

¹ «Գործնական» (պրակտիկ) ենք կոչում, ինչպես ընդունված է լատիներենի ներկայիս քերականություններում, միայն տվյալ ժամանակաձևի կազմությանը ծառայող հիմքը, ի տարբերություն, այսպես կոչված, *ընդհանրական* (ասենք՝ միաժամանակ ներկայի, անկատարի և այլն ժամանակների կազմությանը ծառայող) հիմքերը:

² Հմմտ. *Ա.Սեյե*, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:

54. *U* խոնարհման բայերի ստորադասական («ստորակցական», լատ. *coniunctivus*) եղանակի կրավորական կատարյալի կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ եթէ լուանեցեալ իցեն* (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-108:

55. *U* խոնարհման բայերի ստորադասական ապառնու կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ եթէ լուանեցեալ եղէց* (այլև՝ *եթէ լուանեցեալ լիցիմ*) (ՅՀՔ, 46-48) : Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Ջահուկյան*, 1974, 105-106:

56. *U* խոնարհման բայերի ստորադասական կրավորական «գերակատարի» (նույնը «յարակատարի») կազմում, ըստ որում տարօրինակ ցոյական հիմքով. *լուանամ ~ եթէ լուանեցեալ իցէի* (ՅՀՔ, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, *Ջահուկյան*, 1974, 106-108:

57. *Ու* խոնարհման բայերի ավելորդ սուկածանցի վերածում՝ կրավորականի կազմության նպատակով. *առնում ~ առնանիմ, լնում ~ լնան-, լնանեց-* (փխ. *լն ~ լց*), *կալնում ~ կալանիմ* (այլև՝ *կալանեցայ, կալանեցար* և այլն), ինչպես նաև՝ *-ուի* կրավորական կազմում¹. *թողում ~ թողուիմ* (ԿԳՔ, ՅՀՔ, 52-54, 100): Հմմտ. *Աճառյան*, 1951, 320, 351, *Ջահուկյան*, 1974, 102, 105-107, 108:

58. *Ու* խոնարհման բայերի ըղձական ներգործական անկատարի կազմում, ըստ որում տարօրինակ «գործնական» հիմքով (*լնուլ ~ լնից-*). *լնում ~ երանի թէ լնիցէի* (ՅՀՔ, 51): Հմմտ. *Աճառյան*, 1951, 318, *Ջահուկյան*, 1974, 106:

59. *Ու* խոնարհման բայերի ստորադասական («ստորակցական») ներգործական անկատարի կազմում, ըստ որում տարօրինակ «գործնական» հիմքով (*լնուլ ~ լնից-*). *լնում ~ թէ լնիցէի* (ՅՀՔ, 51): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Ջահուկյան*, 1974, 106:

60. Սահմանական եղանակի ըմբռնում որպես ըղձական (լատ. *optativus*) և ստորադասական («ստորակցական», լատ. *coniunctivus*)՝ վերջիններս զանազանելով մի կողմից՝ *աւշ թէ*, մյուս կողմից՝ *զի, վասն զի, որպէս զի, իբրև, քանզի* եղանակիչներով, իսկ հետագայում դրանք առանձնացվում են՝ մեկի և մյուսի համար կրելով *մակար թէ // յորժամ, մարտան // իբրև, եթէ // երանի թէ*

¹ *Ու* խոնարհման բայերի անց. անկատար ժամանակի դեպքում այդ մասնիկը երբեմն վերածվում է *ոյ* մասնիկի, օրինակ՝ *լնոյի* (փխ. *լնուի*), *գարթնոյի* (փխ. *գարթնուի*) և այլն: Աճառյանը գտնում է, որ դա վերաբերում է նաև ներկա ժամանակին, որն անշուշտ ճիշտ չէ (հմմտ. *Աճառյան*, 1951, 318): Գալանոսը «-ում լծորդության բայերի համար տարբերում է *ում* տիպի կրավորական (բացի *առնում* բայից, որին հատկացնում է *առնանիմ* կրավորականը), ընդ որում անցյալ անկատարը կրավորական ներկայից տարբերելու համար կերտում է անցյալ անկատարի *ընթեռնոյի* (փխ. *ընթեռնուի*), *ընթեռնոյի* և այլ ձևերը» (*Ջահուկյան*, 1974, էջ 53):

կայուն եղանակիչները (ՖՌՔ, ՅՔՔ, 81-83, 87, 177-178, ՅՀՔ, այլև՝ JGA, 8, 60):
Հմնտ. *Աճառյան*, 1951, 316-317, *Չահուկյան*, 1974, 21, 105:

61. Սահմանական եղանակի ներգործական անկատար անցյալի «ձևական» հակադրություն իր կրավորականին *ե ~ է* մասնիկների հակադրության հիմունքով. *գովէի* («գովում էի») ~ *գովեի* («գովում էի. ինձ գովում էին»), այլև՝ *գովեիր, գովիր, գովեսար* և այլն (ԿԳՔ): Հմնտ. *Չահուկյան*, 1974, 21, 53:

62. Սահմանական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում տարօրինակ ցոյական հիմքի օգնությամբ. *սիրեալ եմ ~ սիրեցեալ եմ* («սիրված եմ») (ՅՀՔ, 40-42): Հմնտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 21, 107:

63. Սահմանական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում տարօրինակ ցոյական հիմքի օգնությամբ. *սիրեալ էի ~ սիրեցեալ էի* («սիրված էի»). (ՖՌՔ, ՅՀՔ, 40-42): Հմնտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 24, 107:

64. Ըղձական եղանակի ներկայի և ապառնու նույնականացում. *երանի թէ սիրիցեմ* (լատ. *utiam amem*) (ՅՀՔ, 38, այլև՝ JGA, 65): Հմնտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 24, 105:

65. Ըղձական եղանակի անկատարի և «գերակատարի» առանձնացում արհեստական դիմային վերջավորությունների և օժանդակ բայի նույնպիսի ձևերի միջոցով. *երանի թէ սիրիցեի, երանի թէ սիրեալիցեի* (լատ. *utiam amarum, utiam amavissem*)¹ (ՅՀՔ, 38, 38, այլև՝ JGA, 65): Հմնտ. «Եւրոպա», 1948, 14, 16, *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 105:

66. Ըղձական եղանակի կրավորական անկատարի կազմում բայի «գործնական» (պրակտիկ) հիմքի *իցե* մասնիկի ներմուծումով. *երանի թէ սիրեի ~ երանի թէ սիրիցեի* (ՅՀՔ, 41): Հմնտ. *Աճառյան*, 1951, 320, *Չահուկյան*, 1974, 105:

67. Ըղձական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով, օժանդակ բայի «ապառնի անցյալով». *երանի թէ սիրեալ իցեի ~ երանի թէ սիրեցեալ իցեի* (ՅՀՔ, 40-42): Հմնտ. *Աճառյան*, 1951, *Չահուկյան*, 1974, 104, 107:

68. Ըղձական եղանակի կատարյալի և «յարակատարի» ձևային նույնականացում, ըստ որում եղանակիչը դրվում է առանձին, իսկ բուն բայաձևը՝ կից գրությամբ. *երանի թէ սիրեալիցեի* (լատ. *utiam amaveram*) (ՅՀՔ, 39, այլև՝ JGA, 65): Հմնտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 105:

¹ Ըստ որում լատիներենի հետևողությամբ տեղի է ունենում օժանդակ բայի և դիմային վերջավորությունների նույնականացում, որը գրության մեջ արտահայտվում է կից գրությամբ:

69. Ըղծական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. *երանի թե սիրեալ իցեմ, երանի թե սիրեցեալ իցեմ* («երանի թե սիրված լինեմ») (ՅՀՔ, 40-42): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 104, 107:

70. Ստորադասական («ստորակցական») եղանակի անկատարի և «գերակատարի» առանձնացում արհեստական դիմային վերջավորությունների և օժանդակ բայի նույնպիսի ձևերի միջոցով. *եթե սիրիցէի, եթե սիրեալիցէի* (լատ. *si amarem, si amavissem*. ՅՀՔ, 39, այլև՝ JGA, 66): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 105:

71. Ստորադասական եղանակի կրավորական անկատարի կազմում «գործնական» հիմքի մեջ *ից* մասնիկի ներմուծումով. *եթե սիրէի ~ եթե սիրիցէի* (ՅՀՔ, 41): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 106:

72. Ստորադասական եղանակի կրավորական ապառնու կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. *սիրեալ եղէց* (այլև՝ *սիրեալ լիցեմ*) ~ *սիրեցեալ եղէց*, այլև՝ *սիրեցեալ լիցեմ*. (ՅՀՔ, 40-42): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 104-105, 107:

73. Ստորադասական եղանակի կատարյալի և «յարակատարի» նույնականացում. *եթե սիրեալ իցեմ* (լատ. *si amaverim*) (ՅՀՔ, 394, այլև՝ JGA, 66): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974, 105:

74. Ստորադասական եղանակի կրավորական «յարակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. *եթե սիրեալ իցեմ ~ եթե սիրեցեալ իցեմ* (ՅՀՔ, 40-42): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 104, 107:

75. Ստորադասական եղանակի կրավորական «գերակատարի» կազմում խոնարհվող բայի տարօրինակ ցոյական հիմքով. *եթե սիրեալ իցէի ~ եթե սիրեցեալ իցէի* (ՅՀՔ, 40-42): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, 104, 107:

76. Հրամայական եղանակի ներգործական ապառնիի կազմում ներկայի երկրորդ ձևի հիման վրա՝ «առաջինը վերապահելով միայն ապառնիին». *սիրեսցիր, սիրեսցես* (այլև՝ *սիրեսցու՛ք, սիրեսցի՛ք*) (ՅՀՔ): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Չահուկյան*, 1974:

77. Ու խոնարհման բայերի հրամայականի կրավորական ապառնիի կազմում *ու > ի* փոփոխումով. *լնանիջի՛ր* (այլև՝ *լնանիջի՛ք, մի՛ լնանիցի՛ք* և այլն), *առնանիջի՛ր* (այլև՝ *առնանիջի՛ք* և այլն) (ՅՀՔ): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Չահուկյան*, 1974, :

78. «Ընդունելության» բաշխում երեքի՝ ներկա, կատարյալ (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») և ապառնի. *սիրող, սիրեալ, սիրելոց* (ՅՀԲ, 40): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Ջահուկյան*, 1974, 107:

79. «Ընդունելության» կրավորական ներկայի կազմում ոչ սովորական, տարօրինակ ցոյական հիմքով. *սիրող ~ սիրեցող* («սիրվող»), *լուսնող ~ լուսնեցող* («լվացվող») (ՅՀԲ, 40-42, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Ջահուկյան*, 1974, 107:

80. «Ընդունելության» կրավորական կատարյալի (նաև՝ «յարակատարի» ու «գերակատարի») կազմում ոչ սովորական, տարօրինակ ցոյական հիմքով. *սիրեալ ~ սիրեցեալ գոլ* («սիրված եղած լինել»), *լուսցեալ ~ լուսնեցեալ գոլ* (ՅՀԲ, 40-42, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Ջահուկյան*, 1974, 107:

81. Աներևույթ եղանակի մեջ կատարյալ (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») ժամանակաձևերի առանձնացում. *սիրեմ ~ սիրեալ գոլ*, ըստ որում *ա* խոնարհման բայերինը՝ ցոյական հիմքով՝ *լուսնամ ~ լուսնեցեալ գոլ* (ՅՀԲ, 40, 46-48): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Ջահուկյան*, 1974, 106-107:

82. Աներևույթ եղանակի մեջ կատարյալի (նույնը՝ «յարակատար» ու «գերակատար») կազմում առհասարակ բայի ցոյական հիմքով. *սիրեալ գոլ ~ սիրեցեալ գոլ*, այլև՝ *լուսնեցեալ գոլ* (ՅՀԲ, 40-42): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Ջահուկյան*, 1974, 107:

83. Աներևույթ եղանակի մեջ ապառնի ժամանակաձևի առանձնացում. *սիրեմ ~ սիրելոց գոլ* (ՅՀԲ, 40, այլև՝ JGA, 66): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Ջահուկյան*, 1974, 105:

84. Անորոշ դերբային (բայ)անվան արժեքի հատկացում՝ իբրև համարժեք քարգմանություն լատիներեն բայանվան. *յեստ յառնելոյ իմոյ* (լատ. post resurrectionem meam. ՖՌԲ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 21:

85. Անորոշ դերբայի հոլովված (սեռ., տր., գործ., ներգ.), այլև դրանց «նախդրիվ» ձևերի հատկացում ներգործական լատ. gerundium-ին. *սիրելո, սիրելով, առ ի սիրել, առ ի գործել* (լատ. ad operandum), *գործելով* (լատ. operando), *գործելոյ* (լատ. operandi), այլև՝ *ընդ գործել, ի գործել* (լատ. cum operatur), *կարդալով* (լատ. clamando), *վասն կարդալոյ* (լատ. clamandi causa), *առ ի կարդալոյ* (լատ. ad clamando) և *ի կարդալոյ* (լատ. a clamando) (ԿԳԲ, ՅԲԲ, 83, 178, ՖՌԲ), *սիրելոյ* (լատ. amandi), *ի սիրել* (լատ. amandum), *սիրելով* (լատ. amando), *ըն սիրելն, ի սիրելն* (լատ. nell'amare. ՅՀԲ, 40 այլև 67): Հմմտ. *Աճառյան*, 1951, 317, *Ջահուկյան*, 1974, 21, 42, 107:

86. Անորոշ դերբայի հոլովված (սեռ., տր., գործ., ներգ.), այլև դրանց «նախդրիվ» ձևերի հատկացում կրավորական լատ. *supinum* -ին. ի սիրիլոյ (լատ. *di esse amato, per esse amato*), *ի սիրիլ* (լատ. *ad esse amato*), *սիրիլով* (լատ. *essendo amato*), այլև՝ *ըն սիրիլն* (լատ. *in esse amato*) (ՅՀՔ, 83, 178, այլև՝ JGA, 71): Հմմտ. *Աճառյան*, 1951, 321, *Ջահուկյան*, 1974, 106- 107:

87. Ենթակայական դերբայի (կամ ներկայի՝ *-ող* մասնիկով) հատկացում ներգործական սեռի իմաստի արտահայտմանը¹. *սիրեմ ~ սիրող* (ՖՌՔ): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 20:

88. Անցյալ դերբայի (*-եալ* մասնիկով) հատկացում կրավորական սեռի իմաստի արտահայտմանը². *սիրեմ ~ սիրեալ* (ՖՌՔ): Այլև *-եց* մասնիկի ավելացում կրավորական սեռի իմաստի արտահայտման նպատակով *սիրեմ ~ սիրեցեալ*, ընդ որում *ու* խոնարհման բայերի դեպքում եղած *եց-*, *ուց-* հիմքակազմ տարրերի «արտաքսում»: Հմմտ. «Բազմավեպ» 1873, էջ 323, ն.տ., 1908, էջ 160, այլև *Ջահուկյան*, 1974, 20:

89. Որոշ պակասավոր բայերի «լրացում» ներկայի ձևերում. *ծանհմ, ծանհս, ծանհ* և այլն (խոնարհված և՛ անկատարի, և՛ կատարյալի ձևերով) (ՅՀՔ, 107-108): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 108:

90. *Լինեմ, եղանհմ* պակասավոր բայերի «լրացում» (իբրև ոչ պակասավոր, իրար լրացնող, այլև ինքնուրույն էական բայեր՝ հավասարաբեք *եմ* բային) (ՅՀՔ, 33-37): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 108-109:

91. *Գոմ* բայի «լրացում»՝ իբրև էական բայ, ըստ որում հավասարեցում *եմ, լինեմ, եղանեմ* բայերին. *գոմ ~ գոյի, գոյիր, գոյր, գոյաք, գոյիք, գոյին*, այլև՝ *գուցեմ, գուցես, գուցեմք, գուցեք, գուցեն, այլև՝ գուցեի, գուցեիր, գուցեր, գուցեաք, գուցեիր, գուցեին*, այլև՝ *գոյող, գոլոց, գոլոց գոլ* և այլն (հմմտ. *եմ//գոմ* - sum, *եղանեմ* - fio, *լինիմ* - existo, այլև՝ *գոյի* - eram, *գուցեմ* - utinam, sim, *գուցեի* - utinam essem, *գոյող* - existen//qui sit, *գոլոց* - futuram և այլն) (ՅՀՔ, 33-37, 178, այլև JGA, 55, 58-59): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 104:

92. Անկանոն խոնարհման *առնել* բայի կրավորական կատարյալի հիմքի կազմության տարօրինակ «կանոնավորում»՝ *արարեաց* (փխ. *արար*), ընդ որում *եմ* օժանդակ բայի կից գրություն խոնարհվող բայի հետ. *առնել ~ արարեցեալեմ*,

¹ Լատիներենի հետևողությամբ, ըստ Ռիվոլայի, *-ող*-ով դերբայական ձև է կազմվում նաև չեզոք և չեզոքի իմաստով անցողական բայերից (տե՛ս ՖՌՔ):

² Տե՛ս նախորդ տողատակի ծանոթությունը: Ըստ Ռիվոլայի անցյալ դերբայի *-եալ* մասնիկը եզ. և հոգն. թվով դրված օժանդակ բայի հետ բաղադրվում է նույն ձևով, այսինքն՝ հոգն. թվում *-ք* հոգնակակերտ չի ստանում (հմմտ. *բնակեալ եմ, բնակեալ եմք* և այլն): Հմմտ. *Ջահուկյան*, 1974, 23:

արարեցեալէի, երանի թէ // եթէ արարեցեալիցեմ, արարեցեալ գոլ (ՅՀՔ, 82-83):
Հմմտ. Համբարձումյան, 1982, 69-70:

93. Անկանոն խոնարհման լսել բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»՝ ըստ որում թե՛ ներգործականի և թե՛ կրավորականի ձևերում՝ լսեսց (փխ. լու). լսել ~ լսեցի (փխ. լուայ), լսեցայ, լսեալ եմ, լսեցեալ եմ, լսեալ էի, լսեցեալ էի, երանի թէ // եթէ լսեալ իցեմ, երանի թէ // եթէ լսեցեալ իցեմ, լսեալ գոլ, լսեցեալ գոլ (ՅՀՔ, 83-87)¹: Հմմտ. Աճառյան, 1951, 322, Չահուկյան, 1974, 108:

94. Անկանոն խոնարհման ճանաչեմ բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»՝ ճանաչեսց (փխ. ծանեաց. հմմտ. վերը)¹. ճանաչել ~ ճանաչեցի, ճանաչեալ եմ, ճանաչեալ էի, ճանաչեցից, ճանաչեցայ, ճանաչեցեալ եմ, ճանաչեցեալ էի, ճանաչեցայց և այլն (ՅՀՔ, 88-89): Հմմտ. Աճառյան, 1951, 322, Չահուկյան, 1974, 108:

95. Անկանոն խոնարհման մեղանչեմ բայի կատարյալի հիմքի կազմության «կանոնավորում»՝ մեղանչեսց (փխ. մեղայ). մեղանչել ~ մեղանչեցի, մեղանչեալ եմ, մեղանչեալ էի, ճանաչեցից և այլն (ՅՀՔ, 93-94): Հմմտ. Աճառյան, 1951, 319, Չահուկյան, 1974, 108:

96. Անկանոն խոնարհման ունեմ բայի ներգործական կատարյալի հիմքի ստեղծում՝ ունեսց, որից՝ ունեցայ, ունեալ, ունեալ եմ և այլն, այլև կրավորականի դեպքում՝ ունեցեալ, որից՝ ունեցեալ եմ, ունեցեալ էի և այլն (ՅՀՔ, 103): Հմմտ. Աճառյան, 1951, 322, Չահուկյան, 1974, 108:

97. Անկանոն խոնարհման ուտել բայի սահմանական կրավորական կատարյալի հիմքի կազմության տարօրինակ «կանոնավորում»՝ ուտեց- (փխ. կեր-). ուտել ~ ուտեցայ, ուտեցար, ուտեցաւ, ուտեցեալ եմ, ուտեցեալ էի, երանի թէ // եթէ ուտեցեալիցեմ, ուտեցեալ գոլ և այլն (ՅՀՔ, 79): Հմմտ. Աճառյան, 1951, 322, Չահուկյան, 1974, 108:

98. Անկանոն խոնարհման տալ բային զուգահեռ համարմատ նոր բայի ստեղծում, ըստ որում բայի տարօրինակ կատարյալի հիմքից (տալ, տուր, փխ. ետ). տրեմ, տրէի, տրեցի, տրեալ եմ, տրեցից, երանի թէ // եթէ տրիցեմ, այլև՝ տրիցէի, տրեալ իցեմ, տրեալ իցէի և այլն, տրիմ, տրեէի, տրեցայ, տրեցեալ եմ, տրեցեալ էի, տրեցայց, երանի թէ // եթէ տրիցեմ, այլև՝ տրիցէի, տրեցեալ եմ, տրեցեալիցէի և այլն (ՅՀՔ, 91-92, այլև՝ ՆԼՀԲ 504): Հմմտ. Աճառյան, 1951, 322, Չահուկյան, 1974, 108:

¹ ՅՀՔ-ն երբեմն զուգահեռ բերում է ավանդական ձևեր՝ եթէ լսեալ եղէց (զուգահեռ՝ եթէ լուեալ եղէց), լսեալ (զուգահեռ՝ լուեալ) և այլն (ն.տ., 85):

99. Վերլուծական կազմություն ունեցող որոշ ժամանակաձևերի վերածում համադրականի, այսինքն՝ օժանդակ բայի կից գրություն (սահմանական, ըղձական, ստորադասական եղանակների «յարակատար» և «գերակատար» ժամանակների դեպքը). *սիրեալ եմ ~ սիրեալեմ, սիրեալ էի ~ սիրեալէի, երանի թէ սիրեալիցեմ, եթէ սիրեալիցեմ, այլն՝ սիրեալիցէի* և այլն (ՅՀԲ, 38, այլն՝ JGA, 64):

100. Որոշ նախամասնիկների (բացի *ըն-ից* և *ն-ից*) օգտագործում իբրև նախդիր (համարժեք լատ. *in* և *sub* նախդիրներիին)՝ *ներ, ենթ* և այլն (ՆԼՀԲ, 250, 514):

գ) *Շարահյուսական հատկանիշներ*. Սրանք համեմատաբար քիչ են, քանի որ՝ ա) լեզվի կառուցվածքի մեջ շարահյուսական երևույթները չունեն այն մեծ ընդգրկումը, որն առկայացնում են, օրինակ, ձևաբանական երևույթները, բ) քերականական աշխատություններում մման լեզվական իրակություններին հատկացվել է նվազ ուշադրություն, գ) հայերենի ուսումնասիրման պատմությունն առհասարակ պակաս չափով է անդրադառնում շարահյուսության նկարագրությանը, դ) լատինաբան հայերենի համակարգում ևս շարահյուսական երևույթները շատ քիչ են մատնանշվում:

Այնուհանդերձ, կարելի է առանձնացնել լատինաբան հայերենին հատկանշական շարահյուսական երևույթներ: Դրանք հիոնականում վերաբերում են շարահյուսական միավորների համաձայնությանն ու շարադասությունը, եթե նկատի ենք ունենում հայ քերականագիտության ավանդական դրվածքը: Լատինաբան հեղինակները, հետևելով հռոմեացի քերականների ավանդույթին, հայերենի համակարգում ևս ներմուծում են շարահյուսական ինչ-ինչ երևույթներ: Դրանցից առաջինը Հովհաննես Քոնեցին է, որի քերականության մի առանձին բաժինը շարահյուսությունն է: Վերջինս քննության է առնվում բավականին մանրամասնորեն, ըստ կոնկրետ բաժինների և գրուխների: Ընդ որում ուշադրության առարկա են բառակապակցությունն ու նախադասությունը՝ առնված իրենց տեսակներով, այս կամ այն կարգի կոնկրետ դրսևորումներով: Քոնեցին բավականին հետևողական է շարահյուսական երևույթների՝ ըստ լատիներենի օրինակի վերլուծության և դասակարգման հարցերում:

Այնուհետև, նրա քերականության մեջ ըստ անհրաժեշտության օգտագործված է Բարդ. Մարադացու տրամաբանական-շարահյուսական այն դրույթները, որոնք հիմնականում ունեին տեսական արժեք: Բանն այն է, որ հետագա լատինաբան քերականներն այլևս այդպիսի ընդգրկումով, եթե չասենք

¹ Աճառյանը նկատում է, որ «լատինաբան հայերենի մեջ *ճանաչեմ* և *ծանիմ, ունիմ* և *կալայ* տարբեր տարբեր բայեր են» (տե՛ս *Աճառյան*, 1951, էջ 319):

հետագա խորացումով կամ զարգացմամբ, չանդրադարձան շարահյուսությանը, ուստի այդ բնագավառն այնպես էլ չստացավ այն մանրամասն բնութագրումը, որն առանձնապես հատուկ է ձևաբանությունը:

Ստորև ներկայացնում ենք լատինաբան հայերենի շարահյուսական տարբերակիչ հատկանիշներից հետևյալները:

101. Նոր նախադրությունների («հոլովակերտների») առանձնացում՝ *մակ, ըն, ն* և այլն, ընդ որում ներգոյականը լատիներեն աբլատիվուս հոլովի մի տեսակը դիտելու, բացառականի *ի, յ* նախդիրներից գործառնապես առանձնացնելու և այլն նպատակով (ՖՌՔ, ՅՀՔ, 114 և այլն): Հմմտ. *Աճառյան*, 1951, 314-315, *Ձահուկյան*, 1974, 23, 31, 71-73, 97-98, 148, 172, 258, *Համբարձումյան*, 1982, 68:

102. Նախադասության անդամների պարտադիր համաձայնություն թվով, այն է՝ ածականի (իմա՝ որոշի) և գոյականի (իմա՝ որոշյալի) միջև. *համայնք խորհուրդք և արարմունք* (ԽՔ, I, 13), *իրօք երկրայնօք* (ԹԳՅՀ, 64): Ընդ որում «անտեսելով հայոց լեզվի փաստերը», այլև «որ բոլոր գրուածքին մէջ տիրող եղանակն է, զգուելի դժնդակութիւն մը կուտայ սա դարերու գրութեանց» (ՅՀՔ, 160): Հմմտ. «Եւրոպա», 1848, 14, էջ 16, *Ձարքհանայան*, 1878, 53, «Բազմավէպ», 1873, 1, էջ 321, *Ձահուկյան*, 1951, 114, *Համբարձումյան*, 1982, 70 և այլն:

103. Գերբայների (ածականների նման) թվով պարտադիր համաձայնություն գոյականների հետ (գրեթե բոլոր դեպքերում՝ նախադաս կամ վերջադաս): Հմմտ. «Բազմավէպ», 1873, 1, էջ 323:

104. Բայի (իմա՝ ստորոգյալի) և անվան (գոյականի) պարտադիր համաձայնություն թվով. «ուղղականն ընթ բային պարտի համաձայնիլ ... ի թիւս. *մարդ ընթանա* (փխ. յ-ով, *մարդիք ընթանան*)» (ՅՔՔ, 200): Հմմտ. ՅՀՔ, 158 և այլն:

105. Անհամաձայնություն կամ բակառություն (ըստ Գալանոսի՝ *բացաձայնութիւն*, լատ. discordantio), որ ըստ Հոլովի սահմանման՝ «Եզակի ձևով հոգնակի իմաստ ունեցող որոշ անունների հետ դրվում է հոգնակի թվով «բայ» (ձևակերպումը՝ Գ. Ձահուկյանի – Վ.Հ.): *Ձահուկյան*, 1974, 38, այլև 114:

106. Նախադասությունների պարտադիր համաձայնություն թվով՝ իբրև «յարաբերականի ընդ նախընթացին». «*Փափաքին* հանդիսի կատարման *սոցա, որք* ի մահուան իրեանց կենդանացան» (ՅՀՔ, 162): Հմմտ. ՖՌՔ, *Աճառյան*, 1951, *Ձահուկյան*, 1974, 23, *Համբարձումյան*, 1982, 70 և այլն:

107. Ածականի (իմա՝ որոշչի) և գոյականի պարտադիր համաձյնություն հոլովով (գրեթե բոլոր դիրքերում՝ նախադաս կամ վերջադաս). *ի շարդէն ուղղականէ* (ՅՊՁ, 245). *ըն մարդում բեկանելում և մահկանացում* (ԹԳՅՀ, 128-129): Հմմտ. ՅՀՔ, 160-162, «Եւրոպա», 1848, 14, էջ 16, «Բազմավէպ», 1873, 1, էջ 322-323, *Չարքհանայան*, 1878, 53, *Աճառյան*, 1951, 315, *Չահուկյան*, 1974, 114, *Համբարձումյան*, 1982, 70 և այլն:

108. Ածականի (իմա՝ որոշչի) և գոյականի պարտադիր համաձյնություն սեռով. «Այլ գոյացականքն և մակադրականքն պարտին համաձայնիլ ... ի սերս...: Ի սերս, զի եթէ գոյացականն է ի յարական սեռէն, նաև մակադրականն պարտի լինել ի նոյն սեռէ» (ՅՔՔ, 192. նշվում են հատուկ շեղումներ այս կանոնից. ն.տ., 195-195): Իբրև սեռի նշույթ ոմանք գործածում են *–ուհի* մասնիկը. «... ծննդեամբ *սրբուհոյ* կուսին», «*սրբուհոյ* աստուածածնին» (չի բացառվում սովորական՝ «ի *սրբոյ* կուսէն» համաձայնեցումը) (ՅՀՔ): Տե՛ս նաև ՌԵՔ, 42-43: Հմմտ. *Չահուկյան*, 1974, 84-85, 144, 168 և այլն:

109. Բայի (իմա՝ ստորոգյալի) և անվան (իմա՝ ենթակայի) պարտադիր համաձայնություն դեմքով, ընդ որում գործադրվում է ժամանակի աշխարհաբարյան ձևավորումը. «...ամենայն անձնական բայ խնդրէ գուղղականն յառաջակոյս. հիպէս՝ *ես ընթանամ, դու ընթանաս, նա ընթանա*» (առանց յ-ի) (ՅՔՔ, 200). «*ես կու ուսուցանես* գՊետրոս. *ես կու սիրես* զիս. *դու կու սիրես* զքեզ» (ն.տ. 199, այլև 200-205): Տե՛ս նաև ՅՀՔ, 158 և այլն:

110. Բայի (իմա՝ ստորոգյալի) և անվան (իմա՝ ենթակայի) պարտադիր համաձայնություն դեմքով, ընդ որում գործադրվում է լատինաբան հոգնակիի ձև «*մարդ ընթանա*» (առանց յ-ի), *մարդիք ընթանան* (ՅՔՔ, 200): Տե՛ս նաև ՅՀՔ, 158 և այլն:

111. Շարահյուսական որոշակի կառույցի լրացում անունը (իմա՝ դերանունը) դրված է լինում տրական հոլովով (հմմտ. լատ. mihi «ինձ» , tibi «քեզ» և այլն). «... առընչականք անուանք, որ եղեալ լինին զկնի բառիս *այս է*. որպէս *այս է ինձի* հայր, *այս է ինձի* յորդի, *այս է ինձի* տէր, *այս է ինձի* ծառա (առանց յ-ի) (ՅՔՔ, 196-198) և այլն:

112. Ածականների համեմատության աստիճանների միօրինակացում նաև խնդրառությամբ, այն է՝ բաղդատական աստիճանի ձևի խնդիրը դրվում է հայցական, իսկ գերադրականինը՝ սեռական և ներգոյական հոլովներով. «*պարարտագոյն քան զառիծ, պարարտագունեղ առիծուց*, այլև՝ *ի յառիծս* (ՅՀՔ): Ըստ *Չահուկյանի*՝ «Այս խնդրառությունը տրվում է ավելի շատ

լատիներենի նմանակությամբ, քան հայերենի փաստերի հիման վրա» (*Ջահուկյան*, 1974, 116. տե՛ս նաև ն.տ., 167-168, 203, 216 և այլն):

113. Հարց ու պատասխանի դրսևորում «ոչ միայն հոլովի, այլև յարմարութեամբ իրին»: «Հարց. *Ո՞րք է որդի. Պատասխան. Մարիամո*». (ՅՀԶ, 164):

114. Շարահյուսական բաղադրիչների միջև քերականական (ձևական) կապի պահպանում՝ տեղիք տալով կայուն կապակցությունների, «դարձվածքների» և այլն: «*Ձքաղցրագունեղ հոգւոյդ քոյ սրբոյ* գտցեն զմխիթարութիւն» (ԹԳՅՀ, 245), «*Չամենայն վայելչութիւն մարմնական* ի բաց ընկեցին» (ն.տ.) և այլն: Հմմտ. *Աճառյան*, 1951, 315, *Համբարձումյան*, 1982, 70 և այլն:

115. Նախադասության անդամների հատկանշական (տիպական կամ իդեալական) կառուցվածքի առանձնացում և ըստ այդմ սերում: Հմմտ. «Պօղոս լի նախանձու ճշմարտութեան հաւատոյն քրիստոնէականի, ըստ տուչութեան հոգւոյն սրբոյ միշտ ցանկայր իւրոյ ի Քրիստոս» (ՅՀԶ, 190): «Վարդապետք եկեղեցոյ փարթամբ իմաստութեամբ զկնի առաքելոց սրբոց յոյժ պարզաբար բացայայտեցին մեզ զբանս հաւատոյ ուղիղս» (ՄՍԶ, 448): Տե՛ս նաև *Ջահուկյան*, 1974, 119, 247 և այլն:

116. Շարահասական պատճենում՝ նախադասության անդամների հերթականության (սերման) նույնականությամբ: «Եւ դարձեալ հնարաւոր եղև նամենասուրբ երրորդութեանն» ~ լատ. *Practerea fieri potuit in Trinitate* (ԳՄՀ, IIա, 374) և այլն:

117. Լատիներեն բնագրի աղավաղում և աղճատում, այն է՝ «լատիներեն լեզուի ալ տեղեկութիւն չունենալով շատ քա ծուռ ու սխալ թարգմաներ են, ինչպես Հ. Յակոբ Վիլլոտ Յիսուսեան հայագէտ քահանան ալ կ'անբաստանէ» (տե՛ս «Եւրոպա», 1848, թ. 14, էջ 16):

118. Բայի (նաև բաղադատական աստիճանով դրված ածականի) խնդրի մոտեցում և հարմարեցում (իմա՝ պատճենում) «եւրոպական» լեզուների նման կամ նույնպիսի երևույթին. «Ոչ ուրուք մոլութեան երես զագրագոյն է *ի սմին* (փիս. *քան զսա*)» (տե՛ս «Բազմավէպ», 1873, էջ 323 և այլն):

Այսպիսով, լատինաբան հայերենի լեզվական բնութագրման համար առանձնացվում են այնպիսի հատկանիշներ, որոնք ընկած են եղել համապատասխան գրավոր հուշարձանների մեջ գործածված փաստերի հիմքում, տարբեր ժամանակներում այս կամ այն չափով, մոտեցմամբ և մտայնությամբ սահմանվել են նույնպիսի քերականություններում: Եվ դրանք էլ

հիմք են հանդիսանում լատինաբան հայերենի պատմության ուսումնասիրության, ընդ որում ոչ միայն սույն, այլև հետագա, ավելի մանրամասն, և ավելի ընդգրկուն ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար:

6. Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակները

Լատինաբան հայերենը, ինչպես գիտենք, լեզվական արհեստական երևույթ է: Այն արդյունք է լեզվաշինական արտաքին միջամտության, որ տեղի է ունեցել լեզվի օրինաչափությունների՝ հայերենի գրական նորմայի նկատմամբ: Այլ կերպ ասած՝ լատինաբանությունը մեզանում եղել է «ոտնձգություն» լեզվի բնականոն, օրինավոր ընթացքի հանդեպ: Դա, ըստ էության, անբարյացակամ երևույթ չէ, ընդհակառակն՝ այն ավելի շուտ արդյունք է որոշակի կամեցողության, որ երևան է գալիս ինչ-որ խնդիրների իրականացման բերումով և տեղի է ունենում բուն լեզվական հնարավորությունների հարստացման ու կատարելագործման նպատակով:

Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայերենի պատմության ուսումնասիրության տեսակետից բավականին որոշակի հետաքրքրություն են ներկայացնում լեզվական առնչությունները: Դրանք առաջանում են ոչ միայն էթնիկական շփումների ձևով, այլև երևան են գալիս տարբեր (ցեղակից և ոչ ցեղակից) լեզուների մշակութային (ոչ էթնիկական) փոխազդեցությունների հետևանքով:

Այստեղ մեզ հետաքրքրում է լատիներենի և հունարենի առնչությունը, որը տեղի է ունենում 14-18-րդ դդ.՝ ոչ թե այդ լեզուների կրողների (էթնիկական միավորների) ընկերային շփումներով, այլ այդ երկու լեզուների (իբրև մշակութային երևույթների՝ ձեռքբերումների) առնչակցությամբ: Սա ինքնին խիստ ուշագրավ երևույթ է առհասարակ լեզուների շփումների (կոնտակտների) տեսության առումով: Այն հետաքրքիր է նաև իբրև պատմական հանրալեզվաբանության ուսումնասիրության առարկա: Մեր լեզվի պատմությունը, բնականաբար, նման նյութ ընձեռում է: Սակայն վերջինս մինչև այժմ գրեթե չի արժանացել որևէ ուշադրության՝ ըստ նույնախիսի հայեցակետի:

Լեզուների (մշակութային) առնչությունների լավագույն օրինակներից մեկն էլ, դարձյալ հայերենի հետ կապված, եղել է, այսպես կոչված, հունաբան դպրոցի երևույթը: Վերջինս մեզանում ինչ-որ իմաստով լավ է ուսումնասիրված.

վեր են հանված նրա արժանավոր կողմերը, տրված է դրանց գնահատությունն առհասարակ հայերենի, ինչպես նաև հայոց լեզվի գիտական տերմինաբանության տեսակետից: Ավելին, հունաբան հայերենը մեզանում ուշադրության առարկա է եղել իբրև մշակութային, եթե ոչ նաև գիտական երևույթ: Այս առումով փոքր-ինչ այլ է լատինաբան հայերենի վիճակը: Այն, ինչպես ասացինք, մինչև այժմ չի եղել առանձին ուսումնասիրության առարկա, այլև քննության չի առնվել հայերենի հետ առնչված լեզվական մյուս տարբերակների տեսակետից՝ իբրև տարբեր լեզուների շփումների մի ձև:

Հայոց լեզվի պատմության մեջ երևան եկած այդ երկու երևույթը, անկախ գործառության տեղից և ժամանակից, ընդգրկման չափերի և այլ տարբերակների հետ ունեցած շփումների տարբերություններից, ի հայտ են բերում որոշակի ընդհանուր գծեր, նույնիսկ՝ նույնություն: Այդ իրողությունը կողմնակիորեն նկատվել է դեռևս անցյալում: Նշենք հետևյալը. «Բայց ասոնց (իմա՝ լատինաբանների - Վ.Հ.) այս աստիճան ապականութեան ու թիրութեան ըստ մասին օգնական եղած կրնայ սեպուիլ նախնեաց ժամանակէն եղած առաջին գլխատր յեղափոխութիւնը, որն որ Ե դարուն մէջ լեզունիս կրած էր, այսինքն՝ Ս.Մեսրոպայ երկրորդ դասուն աշակերտներէն, որոնք սա վերջիններուն պէս մտածելով, ինչպես ասոնք լատիններէնի ձեռօք, այնպէս անոնք ալ յունարէնով լեզունի կերպարանքը փոխած էին...»¹:

Ամենից առաջ հարկ ենք համարում նշելու լատինաբան և հունաբան հայերենի միջև եղած արտաքին կարգի ընդհանրություններից հատկապես հետևյալները:

ա) Ինչպես հունաբան, նույնպես և լատինաբան հայերենում նորամուծությունները գլխավորապես բռնում են այդ տարբերակների ողջ բառապաշարը և քերականական համակարգը:

բ) Դրանք ներմուծվում են ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար, ըստ որում տարբեր ժամանակներում հասնելով առանձին չափերի, այլև լեզվի համակարգի մի մասում լինելով ավելի թույլ, իսկ մյուս մասում ավելի ուժեղ արտահայտված: Նկատի առնելով հունաբան հայերենի նորամուծությունները՝ Հ.Աճառյանը գրում է. «Այն բոլոր փոփոխությունները, որ վերևում նկարագրեցինք (բառական, քերականական, համաձայնական) միանգամից անմիջապես տեղի չունեցան, այլ կամաց-կամաց, սկզբում դանդաղ, միայն բառարանական ասպարեզում և այն էլ կարևորագույն բառերի համար, իսկ ավելի հետո

¹ Տե՛ս «Երոսպա», 1848, 5, էջ 20:

ընդարձակվելով բռնեցին ամբողջ բառարանը և քերականությունը»¹: Հայերենի համակարգում հունաբանությունը ոչ թե սոսկ պակասի լրացում էր, պարզունակի ճոխացում, այլ (ժամանակի, հատկապես գրավոր հաղորդակցման կարիքներով պայմանավորված) լեզվի հարստացում և կատարելագործում՝ ըստ հունարենի և հունաբան մշակույթի օրինակի: Սա ոչ թե թերություն է, այլ լրացում: Անկախ այլևայլ նկատառումներից՝ հունաբանությունը հայկականի համար անառարկելիորեն նպաստավոր մի բան է եղել, եթե մի պահ զանց առնենք միտումնավոր մոտեցումը, նաև միակողմանիությունն ու չարաշահումը:

գ) Հայերենի լատինաբան և հունաբան տարբերակներն առնչակից են նաև պատմական բախտի ընդհանրությամբ: Երկուսն էլ, իբրև լեզվի արհեստական հորինվածքի և նեղ հաղորդակցական գործառության կրող, ոչ թե լայն զանգվածների, ասենք՝ տվյալ ժամանակի ողջ հանրության լեզու, հետզհետե թուլանում են և վերանում: Այդ իրողությունն, անշուշտ, ընդհանուր է բոլոր «արհեստական» միջամտություններին՝ կատարված այս կամ այն լեզվի նկատմամբ: Այս իմաստով միանգամայն տեղին է մեջբերել Հ.Աճառյանի տեսական գնահատությունը՝ բաղկացած երկու մասից:

Առաջինը վերաբերում է հունաբան հայերենին՝ իբրև արտաքին միջամտության մի դրսևորման, որ բոլոր դեպքերում իր մեջ վերանալու վտանգ է պարունակում. «Լեզուների ընդհանուր փորձից հայտնի է, որ քերականություն ստեղծել անկարելի է. այդ հողի վրա անհատական ջանքերը արժեք չունեն. նրանք միշտ էլ բախվել են ժողովրդի կամ հանրության ժայռ անտարբերության և ուշ կամ կանուխ ջնջվել են: Այսպես և հունաբան հայերենը: Նույնիսկ այն ժամանակ, երբ հունաբան հայերենը ապրում էր իր ամենափայլուն շրջանը, սովորական լեզուն չի դադարել գործելուց ոչ միայն ժողովրդի մեջ, ուր հունաբան հայերենի ընդունելության մասին խոսք չի կարող լինել, այլև գրագետների շրջանում, որոնք սկսած Ե դարից մինչև ԺԳ դարը շարունակել են հետմետրոպոլիսի հայերենը հունական դպրոցի հետ կողք կողքի: Հունաբան հայերենը մնացել է ուրեմն առանձին մի խմբակի ուսումնական լեզուն՝ լայն խավերի համար օտար, անհասկանալի և անընդունելի»²:

Իսկ երկրորդը վերաբերում է հիշյալ վտանգի հարուցած սպառնալիքին. «Ամեն մի լեզու, որ կեղծ է և անհատական քմահաճույքի արդյունք, ուշ թե շուտ պիտի վերացվի: Այսպես եղավ նաև լատինաբան հայերենը: Նա ապրեց ու գործեց ամբողջ դար. սկիզբ առնելով Հռոմում կոլեջի կաթոլիկների մոտ՝ 1580-ական

¹ Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 155:

² Հ.Աճառյան, նշվ.աշխ., էջ 164,

թվերին, ապրելով իր լավագույն շրջանը ԺԷ դարում, երբ բոլոր հայերի համար էլ դարձավ բարձր գիտնական լեզու, իր մայրամուտն ապրեց Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ԺԸ դարին»¹:

Երկու դեպքում էլ բնորոշն այն է, որ արհեստականությունը, հաղորդակցական սահմանափակվածությունը, դրսից ներմուծված լինելը արմատական և վճռական պատճառ են լեզվական այդ երկու տարբերակների վերացման համար:

Այնուհետև, լատինաբան հայերենը մշակութային առումով զգալիորեն տարբերվում է հունարենից: Ամենից առաջ ուշադրության է արժանի այն փաստը, որ հայերենի այդ երկու «արհեստական» տարբերակներն առաջացել են տարբեր նպատակամղումներով: Լատինաբան հայերենը, ինչպես հայտնի է, երևան է գալիս այն պատճառով, որ լատին քարոզիչները լեզվական հարցերում կանգնած էին որոշակի տարակուսանքի առաջ: Այդ դարում հին գրական հայերենը (գրաբարը) անդառնալիորեն կորցրել էր կենդանի հաղորդակցական միջոց լինելու իր հնարավորությունը, միջին գրական («կիլիկյան») հայերենը «գրականացած չէր» հատկապես կրոնական-եկեղեցական գործառական ոճի առումով, որն, ինչպես տեսանք, միարարական շարժման բուն, ամենակարևոր բնագավառն էր: Ուստի նրանք ձեռնարկում են նաև լեզվական մշակման գործին: Դա այդպես էլ նրանց չի հաջողվում, որովհետև արհեստականությունը, որ հիշեցնում էր նախորդների փորձը, հենվում վերջինիս վրա, իրեն լիովին զգացնել էր տալիս: Այս հանգամանքը նկատել են մեր անցյալի բանասերները, սակայն միայն բանասիրական հայեցակետից են նրանք վերլուծել և գնահատել երևույթը: Այսպես, օրինակ, նշվում է, որ «Իրօք լատինաբանութիւնը այնքան նման է հելլենաբանութեան, որքան յունարէնը հռոմայեցոց լեզուին: Մէկ տարբերություն կայ. հելլենաբանութիւնը գիտութեան պահանջէն յառաջ եկաւ և դեռ կարևորութիւն մ'ունի. լատինաբանութիւնը կրօնական պահանջէ, և արդէն կորսնցուցեր է իր նշանակութիւնը»²:

Էլ չենք խոսում այն մասին, որ այդ գործում նրանք ընկնում են լիակատար ու անափ ծայրահեղության մեջ՝ տեղիք տալով հակառակ թևի գոյությանն ու բացահայտ ընդդիմությանը, որն էլ հզորանալով, տարածվելով հասնում է

¹ Նույն տեղում, էջ 323: Կարծում ենք, որ ճիշտ չէ լատինաբան հայերենի պատմությունը երկու դարի շրջանակում պարփակելը, որով ակներևորեն անտեսվում է (ն.տ., էջ 310) նախորդ՝ 14-15-րդ և 16-րդի սկզբից մինչև 80-ական թթ. շրջանում լատինաբան հայերենի գործառության իրողությունը:

² Ն. Անդրիկեան, Ուրուագիծ հայ մատենագրութեան, «Բազմավէպ», 1911, էջ 440:

կարևորագույն հաջողությունների ոչ միայն զանազան բնագավառների վերաբերող, այլև հայերենի ինքնօրինականության պահպանման հարցերում¹:

Այնուհետև, հայերենում գործառած հունաբան և լատինաբան տարբերակների առնչությունն ավելի խորը ձևով վեր հանելու առումով բավարար չեն եղած տեսակետների ինքնակա մեկնաբանությունն ու առանձնակի գնահատությունը: Անհրաժեշտ է դրանց պատմական արժեքի բացահայտումը, որպեսզի պարզ դառնա մշակույթի այդ բնագավառի դերը մեր ընդհանուր կյանքի առաջընթացի մեջ: Այսպես, լատինաբան հայերենի գնահատության դեպքում բավականին շատ են կրկնությունն ու նախորդ հեղինակների կողմից ձեռքբերածի անհարկի օգտագործումը: Լինում է այնպես, որ միևնույն երևույթը հետագայում արժանանում է գրեթե նույնպիսի գնահատության, որպիսին այն ստացել էր անցյալում:

Բացակայում է հարցի քննության խորացումը: Վերը տեսանք, թե ինչպիսի գնահատության են արժանանում հայերենի լատինաբան և հունաբան տարբերակները Հ.Աճառյանի կողմից: Այդ գնահատությունը հետագայում նույն ձևով, առանց որևէ խորացման կամ վերանայման կրկնվում է ուրիշների կողմից, այսինքն՝ հարցի ուսումնասիրվածությունը մնում է նույն մակարդակի վրա, թեև ստեղծվում է այն տպավորությունը, թե հետագա հեղինակի այս կամ այն աշխատության մեջ լատինաբան հայերենին, օրինակ, հատկացվում է նոր ուշադրություն: Այսպես, խոսելով Բարդուղիմեոս Մարաղացու և նրան աջակցող Հովհաննես Քոնեցու և Հակոբ Քոնեցու գործադրած ջանքերը հայերենի մշակման ու «կատարելագործման» մասին, Գ.Ջահուկյանն իր «Գրաբարի քերականության պատմություն» (Երևան, 1974, էջ 7) աշխատության մեջ գրում է, որ «սրանց լեզուն ժամանակի գործածական գրաբարն է և առնչություն չունի XVII-XVIII դդ. տարածված լատինաբան հայերենի հետ»: Նման գնահատությունը հիմնված է նախորդ ուսումնասիրողների կողմից ասվածի վրա, ավելի կոնկրետ՝ այն գալիս է Հ.Աճառյանից: Մեծանուն հայկաբանն իր «Հայոց լեզվի պատմություն» (մ. 2, Երևան, 1951, էջ 310) գրքում նշում է, որ հենց հիշյալ հեղինակների առաջ բերած շարժման ընթացքում գործառած «հայերենը շատ կանոնավոր է և լատինաբան կոչվելու ոչ մի պատճառ չունի: Լատինաբան հայերենը հորինված է ավելի ուշ, ԺՁ դարում, Հռոմում»: Դժվար չէ նկատել, որ այս ձևակերպումը, որը լիովին հենված է գրավոր աղբյուրների և բանասիրական նյութի ուսումնասիրության վրա, հետագայում հասցված է տրամաբանական, ավելի կուռ սահմանման: Այդ

¹ Հմմտ. Նույն տեղում, էջ 441:

հարցում Աճառյանն առաջինն է, սկիզբ է նշում: Պետք է նաև նկատել այն, որ Աճառյանի մոտեցումը ժամանակին բավարար էր լատինաբան հայերենը բնութագրելիս հենվել սուկ Հովհաննես (Հոլով) Կոստանդնուպոլսեցու քերականության վրա, այսինքն՝ ոչ ամբողջովին տալ լեզվական այդ տարբերակի նկարագիրը: Իսկ հետագայում սպասելի էին եղածի ոչ թե միակողմանի վերահաստատումը, այլ վերանայումը և խորացումը, մանավանդ որ դրա հնարավորությունը կար, և անհրաժեշտությունը լիովին զգացվում էր:

Այս ամենը շեշտում ենք (թեկուզ կոնկրետ մեկ օրինակի հիման վրա) այն նկատառումով, որպեսզի ասենք, թե այսօր որքան պիտի ջանք թափել ըստ հնարավորին վերացնելու բացթողումը, բացահայտելու լեզվական նշված տարբերակների առնչությունը՝ ելնելով հայոց լեզվի պատմության ամբողջական նկարագրության անհրաժեշտությունից: Ուստի երևույթի նոր քննության ընթացքում հարկ է ոչ միայն կապ հաստատել նախկինում արվածի և հետագա անելիքի միջև, այլև երևույթը հետագոտել գրավոր աղբյուրների փաստերի հիման վրա, իսկ նախորդ ուսումնասիրողների տվյալներն օգտագործել միայն որպես լրացուցիչ կամ կողմնակի փաստ:

Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների առնչության հարցի քննարկման ժամանակ նկատի ենք առնում ոչ միայն մի շարք բուն կամ առանցքային հանգամանքներ, այլև հարակից և ուղեկցող պայմաններ, որպիսով ձգտում ենք հարցի քննությունը դարձնել ավելի հիմնավոր և առարկայական:

Գրանցից կարևոր ենք համարում հետևյալները:

ա) Հայերենը, հունարենը և լատիներենը ցեղակից լեզուներ են և ի հայտ են բերում ծագումնային բացահայտ ընդհանրություններ, որոնք ընկած են նրանց հետագա, ինքնուրույն զարգացման հիմքում: Ցեղակցային այս ընդհանրական հատկությունն այդ լեզուների համար արմատական է, կենտրոնական: Նրանց կրած հետագա փոփոխություններն ու այլ լեզուներից ունեցած ազդեցությունը կողմնական են, լրացուցիչ նշանակություն ունեն, ուստի կամ ամենևին չեն փոխում այդ լեզուների բնույթը, կամ ունենում են շատ աննշան հետևանք:

բ) Հայտնի է, որ հունարենը և լատիներենը քերականական կառուցվածքով իրար ավելի մոտ են կանգնած, քան գրաբարը: Այս տեսակետից գրաբարի «մշակումն» ամենից առաջ նշանակում էր նրա կառուցվածքի վերաձևում հիշյալ լեզուների կառուցվածքի օրինակով: Այստեղ տարբերությունը դառնում է առավել աչքի ընկնող, առավել հիմնարար գրաբարի կառուցվածքի «կատարելագործման» առումով: Այդ լեզուների միջև եղած քերականական

կառուցվածքի տարբերության վերացումը նշանակում է այդ լեզուների ընդօրինակում միմյանց, ընդհանրացում իրար միջև: Այդպես կոչված հունարան և լատինարան հայերեն տարբերակներն այլ բան չեն, քան հայերենի՝ հունարենի և լատիներենի նկատմամբ տարբերությունների վերացում, ընդհանրացում: Լեզվական առանձնահատկությունների «միասնականացումը» հանգեցնում է որոշակի փոխզիջման, այլ կերպ ասած՝ դրանց վերաճում ընդհանուր օրինաչափությունների:

զ) Առավել մասնավոր առանձնահատկություններից հետաքրքիր են, օրինակ, բառային մակարդակում ածանցումը և բարդումը: Դրանք հունարենում և լատիներենում զգալիորեն այլ կարգի են, քան հայերենում: Նշենք թեկուզ այն, որ հայերենի նախաձանցումն այքան բազմաշերտ չէ, քան լատիներենինը կամ հունարենինը: Այնուհետև, դա էլ դառնում է այն իրողության պատճառը, որպեսզի հայերենում հունարենի, հետագայում նաև լատիներենի օրինակով ամեն անգամ «կերտվեն» բազմաթիվ և այլազան նախաձանցներ ու նախամասնիկներ, դրանք զուգակցվեն հունարենի և լատիներենի ածանցներին: Արդյունքը, ինչպես գիտենք, լինում է հայերենի հարստացումը զգալի թվով նախաձանցներով, որոնց մեծ մասը, հանդես բերելով որոշակի կենսունակություն, բավականին գործածական է նաև ժամանակակից հայերենում:

դ) Հունարան հայերենը ստեղծվում է հին, արդեն մեռած հունարենի և (իր ժամանակի) կենդանի գրաբարի (հին գրական հայերենի) առնչակցությամբ, իսկ լատինարան հայերենը՝ մեռած լատիներենի և մեռած գրաբարի: Սա շատ կարևոր հանգամանք է գրական հայերենի մեջ արտաքին միջամտության հետևանքով տեղ գտած լեզվական այդ երկու տարբերակների կառուցվածքի ուսումնասիրման, դրանց տիպաբանական բնութագրի տեսակետից: Դա նշանակում է մայրենի լեզվի նկատմամբ հանդես բերած օտար ազդեցությունները գնահատել տարբերակված մոտեցմամբ, որով ավելի է ամբողջանում մեր պատկերացումը հայերենի պատմության վերաբերյալ:

ե) Լատինարան հայերենի գոյացումը ինչ-որ չափով տեղի է ունենում իր նախօրինակի, այսինքն՝ հունարան հայերենի համաբանությամբ, այսինքն՝ վերջինիս որոշ հնարավորությունների օգտագործմամբ: Քերականական կառուցվածքի այս խիստ հեռացումը, որ նկատվում էր հունարան հայերենի ժամանակ՝ կապված հատկապես բայական համակարգի ներսում տեղ գտած սեռի և թվի քերականական կարգերի ձևավորման հետ, լատինարան հայերենում այնքան էլ չի պահպանվում: Այնուհետև, լատինարան հայերենը օգտագործում է հունարանների ավանդած որոշ լեզվական իրողություններ՝ լուծելու ինչ-ինչ

խնդիրներ (օրինակ՝ ներգոյական հոլովի կազմությունը *ըն* կամ *ն* մասնիկների օգնությամբ):

Ստորև անդրադառնում ենք հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների լեզվական քննությանը՝ ելնելով վերը շարադրված դրույթներից:

1) Նոր հասկացությունների անվանում նորակազմ բառերի օգնությամբ, ընդ որում լայն տեղ է տրվում նորակերտ ածանցավոր բառերի լկիրառմանը: Այս դեպքում առավել չափով ընդօրինակվում են հունաբան հայերենի նախաածանցման հնարավորությունները՝ ի հաշիվ վերջինիս ավանդած նախամասնիկների¹: Այն հարցը, թե ինչքանով է հնարավոր պարզել նույն նախամասնիկներով կազմված բառերի պատկանելությունը հունաբան հայերենին կամ լատինաբանին, կարելի է հիմնավորել ամենից առաջ համապատասխան բնագրերի լեզվական-բառակազմական քննությամբ: Գրանից բացի, կարելի է հիմք ընդունել բառարանների տվյալները: Ասենք, եթե տվյալ բառը, որ կազմում է հունաբան նախամասնիկով, սակայն չի վկայված հին հայերենի որևէ բառարանում, այլև հայերեն բառարանագրական մյուս հուշարձաններում, ապա ամենայն հավանականությամբ այն պետք է դիտել իբրև նորակազմություն, ավելի պարզ՝ նոր բառ:

Սա նախորդի լրացումն է, այսինքն՝ տվյալ բառի բնագրային-լեզվական քննության արդյունքները համադրվում են բառարանագրական քննության ընձեռածին, որպիսով ավելի հավանական է դառնում տվյալ բառի նոր լինելը՝ անկախ հունաբան նախամասնիկով կազմված լինելու հանգամանքից: Նման բառերն, անշուշտ, լատինաբան հայերենի բառապաշարին են վերաբերում, կազմված են լատիներենի համարժեքի բառապատճենման, ընդօրինակման կամ «թարգմանության» հետևանքով: Մեր քննությունը ցույց է տալիս, որ լատինաբան հայերենում գործադրվում են, օգտագործվում հունաբան հայերենի գրեթե բոլոր նախամասնիկները՝ անկախ գործածության չափերի տարբերությունից:

Այսպես, Քռնեցին գործածում է *շարայարադրական* տերմինը՝ որպես շաղկապների մի տեսակի անվանումը. «*շարայարադրական* է, որ ստորադասական բանիցն շարադրի, հիզան *եթէ, յորժամ, ընդ*» (ՅԸԸ, 187): Տերմինը կազմված է կրկնական հունաբան նախամասնիկով՝ *յար-* և *շար-*, որպիսով կերտված տերմինը, ելնելով ՆՀԲ-ի տվյալներից, նախկինում գործածված չենք գտնում, այսինքն՝ պայմանականորեն դիտվում է որպես

¹ Հմմտ. Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 142-166. Վ.Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 148-176:

նորաբանություն, որը պիտի կազմված լինի լատինաբան հայերենի փուլում: Այդպիսին են նաև *ենթաշարադրական* (ն.տ., 187) և *ենթատարալուծական* (ն.տ.) տերմինները, որոնք նշում են շաղկապների մյուս երկու տեսակը՝ իբրև տերմին բաղադրված լատինաբան հայերենի շրջանում, ըստ որում՝ հունաբան *ենթ(ա)-*, *շար(ա)-* և *տար(ա)-* նախամասնիկների օգնությամբ: Նման օրինակներ շատ կարելի է բերել, և դրանց հիմնավորումն այս կամ այն տարբերությունից անկախ կարող է լինել նույնը:

Անհրաժեշտ է նկատել, որ հիշյալ երեք լեզուների նախամասնիկների տիպաբանության տեսակետից հետաքրքիր է հետևյալը: Հայերենի տվյալ նախամասնիկը (օրինակ՝ *ապ-*, *առ-*, *բաղ-*, *ենթ-*, *մակ-*, *պար-* և այլն), որ հունաբան հայերենի շրջանում և ըստ այդ տարբերակի օրինակով հետագայում ևս լծակից էր հունարեն համարժեքին (այն է՝ ©օ, այլն՝ ©ք և ©յ, proV, sun, Ծ.pi, peri) արդեն լծակցում է լատիներեն համարժեքին (այն է՝ *ab*, այլն՝ *a*, *ad*, *con*, այլն՝ *cum*, *sub*, *super*, *circum*): Արդյունքում ստացվում է նախամասնիկի տիպաբանական արժեքի բաշխում երկուսի, այլ կերպ ասած՝ բառակազմական արժեքի կրկնական ծանրաբեռնում: Տեղի է ունենում վաղնջական ցեղակցության լեզուների տիպաբանական նոր մերձակցություն, «միասնականացում» բառակազմական, մասնավորապես նախամասնիկավորման շնորհիվ:

Լատինաբան հայերենի դեպքում ևս, ինչպես հունաբանի համար նշում է Աճառյանը¹, նկատելի է նորակազմության գործառական «ստրկությունը», այսինքն՝ լատինաբան հեղինակներն այդ հարցում հասնում են չափազանցության, այն է՝ լատիներեն նախածանցավոր բառերը կույրկուրայն թարգմանելով նույնպիսի հայերեն ձևերով, առանց նախապես տեղեկանալու, թե թարգմանելի բառի համար հայերենում արդյո՞ք չկա այլ կազմությամբ (պարզ, բարդ կամ թեկուզ՝ այլազան ածանցավոր) բառ: Ավելին, անտեսվում է նաև այն հանգամանքը, ինչպես ժամանակին Աճառյանն է նկատում հունաբան տարբերակի համար, թե այդ նորակերտ բառը որքանով է ընդունելի, կենսունակ նոր պայմաններում, «հայ ժողովուրդը կարո՞ղ է արդյոք հասկանալ այդ նորակերտ բառերի իմաստը, թե՞ ոչ»²: Այսպիսի դեպքերում էլ, ահա, իրար շատ են նմանվում հունաբանը և լատինաբանը, այսինքն՝ վերջինս շատ է ընդօրինակում, «հարազատ» մնում հունաբան հայերենին: Դա, բացի նշված հանգամանքներից, որոնք ներքին հանգամանքներ են, պայմանավորված է մեկ այլ՝ արտաքին հանգամանքով, որ է՝ հունարենի և լատիներենի բառակերտման հարցում

¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 443:

² Նույն տեղում, էջ 444:

նախամասնիկավորմանը մեծ տեղ տալու ընդհանրությունը: Այդ երկու լեզուները, ի տարբերություն, ասենք, հայերենի, իրար շատ են մոտենում, բառակազմության հարցում իրար բավականին հարազատ են, այլև մեծապես ընդօրինակում են միմյանց:

Ավելին, ինչպես հունարան հայերենում է եղել, այստեղ ևս չարաշահվում է նախամասնիկավորումը՝ հատկապես մեկից ավելի նախամասնիկների կուտակման ձևով, որով մեծանում է բառակազմական արհեստականությունը, և բացվում է ակնբախ խորթությունը: Հունարան հայերենում, ինչպես գիտենք, նախամասնիկավորման նպատակով գործադրվում են ոչ միայն մեկ, այլև լինում են դեպքեր, երբ միաժամանակ հանդես են գալիս երկու և ավելի նախամասնիկներ (հմմտ. հուն. *prosexergazomai* - *սոստրագործել*, այսինքն՝ «յաւելլով ինչ»), հուն. *emperiexo* - *ներպարունակել*, այսինքն՝ «բովանդակել»)¹: Այս երևույթն անխափան նկատելի է լատինարան հայերենում ևս, սակայն այն տարբերությամբ, որ վերջինիս մեջ դրանք, որքան մեզ հաջողվում է պարզել, այնքան էլ շատ չեն, այսինքն՝ ի տարբերություն հունարանի, դրանք լատինարան հայերենում ունեն պակաս հաճախականություն:

Վերը մենք Քոնեցուց բերեցինք նման մասնիկավորմամբ կազմված բառերի օրինակներ: Այստեղ կարելի է դրանց ավելացնել նաև հետևյալը. *անդրաշրջական* (բան) (ՅԲԲ, 199), *ենթադրեալ* («ենթակա». ն.տ.), *մակադրական* («որոշիչ». ն.տ., 115), *վերբերական շարամանութիւն* (ն.տ., 209), *մակազանազանութիւն* (ն.տ., 218) և այլն: Նշենք, որ սրանք առանձնացնում ենք «Լեզվաբանական բառարանի» տվյալների համեմատությամբ, ինչպես նաև ըստ այնմ, որ Քոնեցու երկի քննական բնագրի հրատարակիչները նշում են իբրև տերմինային նորակազմություն:

Այս նշանակում է, լատինարան հեղինակներն՝ ա) այդ հարցում այնքան էլ հմուտ չեն, ք) քիչ են հետևում հունարան հայերենի օրինակին, գ) լատիներենն առհասարակ այնքան էլ աչքի չի ընկնում նման կրկնական կամ բազմակի նախամասնիկավորմամբ²:

Հունարան նախամասնիկների գործածության հաճախականության վերաբերյալ վիճակագրական հաշվարկ է արել Հ.Աճառյանը՝ ելնելով «Նոր հայկազյան բառարանի» (հհ. 1-2, Վենետիկ, 1936-1837) տվյալների վրա: Ըստ այդմ պարզվում է, որ նման կազմությամբ բառերի թիվը 1793 է, ընդ որում *ներ-*՝ 186, *գեր-*՝ 173, *վեր-* («նորից»)՝ 140, *բաց-*՝ 131, *արտ-*՝ 120, *մակ-*՝ 121, *տար-*՝ 117:

¹ Նույն տեղում, էջ 445:

² Հմմտ. *А.Эрну, Историческая морфология латинского языка, М., 1950:*

Իսկ «ամենափոքր թվերը կազմում են» *փաղ-*՝ 11 և *դեր-*՝ 5: Այս տվյալները բերում ենք, որպեսզի համեմատենք լատինաբան գրավոր աղբյուրներից քաղած մեր տվյալների հետ (ընտրանքային հաճախականությամբ)՝ ցույց տալու, թե դրանք որքանով են հարաբերվում միմյանց հետ հաճախականության առումով: Այսպես, Աճառյանի նշած ածանցները մեր ընտրանքում երևան են գալիս ընդամենը 87 դեպքում (147 ածանցավոր բառի մեջ), ընդ որում՝ *ներ-*՝ 43, *արտ-*՝ 13, *բաց-*՝ 12, *վեր-* և *մակ-*՝ 4 ական, *գեր-*՝ 3, իսկ *դեր-*, *տար-* և *փաղ-*՝ 2-ական: Ավելացնենք, որ մեր ընտրանքում գործածված են նաև *տրամ-*՝ 11, *շար-*՝ 9, *համ(ա)-*՝ 8, *սպ-*՝ 6, *առ-*՝ 5, *ենթ-*՝ 11, *ստոր-*՝ 4, *փոխ-*՝ 8, *պար-*՝ 2, *բաղ-*՝ 2, *հոմ-*՝ 1:

«Նոր հայկազյան բառարանի» հիման վրա կատարվածը, այլև մեր ընտրանքային հաշվարկները տոկոսային հարաբերակցության մեջ բավականին մոտ են, իսկ համապատասխան միավորների դեպքում զգացվում է որոշակի տարբերություն: Այնուհետև, լատինաբան հեղինակներն ունեցել են իրենց նախօրինակը՝ հունաբան կազմությունները, այնինչ հակառակը, բնականաբար, բացառվում է: Իսկ այս կամ այն միավորի գործածության առանձնահատկությունը բացատրվում է ոչ միայն լատիներենի ընդօրինակման ձգտումով, այլև հեղինակների խոսքային հակվածությամբ: Լատինաբան հայերենն այս դեպքում նույնպես ունի որոշակի ավանդույթի հետևորդ լինելու միտում:

Հունաբան նախամասնիկների հետագա՝ լատինաբան գործածությունը, թերևս կարելի է կարծել, տեղի է ունենում ոչ միայն լատիներենի ընդօրինակման, այլև հայերենի հարստացման նպատակով:

2) Լեզվական այդ երկու տարբերակներն իրար առնչակից են նաև բառաբարդման դեպքում: Այսպես, ստեղծվում են միմյանց ներդաշնակ, իրենց նախատիպ կամ բնօրինակ լեզուների հետ միակերպ, բայց բուն՝ ժամանակի հայերենին չպատշաճող բարդ և ածանցավոր բառեր: Հունաբան հայերենի համար, օրինակ, իբրև բառակերտման գործոն, Հ.Աճառյանն առանձնացնում է՝ ա) բառացի թարգմանելու մտայնությունը, բ) «բարդ բառերի ստրկական թարգմանությունը»¹: Գրեթե նույն մոտեցումն է երևան գալիս նաև լատինաբան բառերի կազմության մեջ: Երկու դեպքում էլ ակնհայտ է օտարլեզվյան բարդ բառերի պատճենման այն միօրինակությունը, որը տարբեր ժամանակներում ընդհանուր գծեր է հանդես բերել թե՛ հունաբան և թե՛ լատինաբան հայերենի բառակազմության մեջ: Երկրորդի ընդհանուր ուղղվածությունից բացի դեր է խաղում նաև նախորդին (հունաբանին) ընդօրինակելու ձգտումը:

¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 147:

Անդրադառնալով հունաբան հայերենի բերած բառաբարդման խորթություններին՝ Հ.Աճառյանը հատուկ նշում է, որ նման «բարդությունների կազմությունը հայերենից տարբեր էր: Հայերենը դարձյալ դրանց դեմ ուներ կամ առանձին արմատական բառ և կամ տարբեր ձևով բարդ կամ ածանց (իմա՝ ածանցավոր - Վ.Հ.) ձև»¹: Այսպես, հունարեն Eosforos «Արուսյակ» բառը հայկական ոճով ունենք *արուսեակ, աստղ առաւօտու* («լուսաստղ»), իսկ հունաբան թարգմանությամբ՝ *վաղորդայնագգեցիկ* («վաղ առավոտյան ծագող՝ ի հայտ եկող»):

Նույնպիսի երևույթ առկա է և լատինաբան հայերենի դեպքում, այսինքն՝ հայերենում վաղուց գոյություն ունեցող այս կամ այն ձևի դիմաց, նույնիսկ դրա փոխարեն նոր թարգմանությամբ կամ պատճենումով մեջտեղ է բերվում նորը՝ լատինաբան ձևը: Օրինակ՝ լատ. *manuductio* «ձեռքից բռնած առաջնորդելը» բառը հայերեն սովորաբար թարգմանվում է *ձեռնածուրթին, ձեռնտուրթին, ձեռն օժանդակել* (ՆՀԲ, 2, էջ 154), իսկ լատինաբան թարգմանությամբ՝ *ձեռքածուրթին* (ՅՊԶ, 48, ՎՅԲ, II, 321), այսինքն՝ «ձեռքով առաջնորդելը» (բառի առաջին բաղադրիչը վերցված է գործ. հոլովով, ինչպես որ է լատիններենում. լատ. *manū* < *manus*-ի եզակի գործիական հոլով, հայ. *ձեռք* < *ձեռն*-ի եզակի գործիականը):

Ավելացնենք, որ հետագայում, անկախ հունաբան կամ լատինաբան հայերենին ընդօրինակելու ձգտումից, ստեղծվում է մի ավանդույթ, որով օտարլեզվյան այս կամ այն բառը հայերեն է թարգմանվում բացահայտ պատճենումով. օրինակ՝ հայերեն *շառաիղ* (նաև՝ *շառաւեղ*) բառը համարժեք է հունարեն կամ լատիններեն *semidiametros* կամ *semidiameter* բառի, որն ավելի ուշ թարգմանվում է նաև *կիսատրամագիծ* բառով (տես ՄՊԵրկ., 48) և այլն:

3) Ձևաբանության մեջ ևս բավականին ցայտուն կերպով նկատվում է այն իրողությունը, որ լատինաբան հայերենն առհասարակ առնչվում է հունաբանին, կամ էլ՝ այս վերջինը նախօրինակ է հանդիսացել լատինաբան ձևերի գործածության համար: Այսպես, լատինաբան հեղինակներն որոշակիորեն դիմում են հոլովման և խոնարհման այնպիսի ձևերի, որոնց գործածությունը, ըստ նրանց մտածողության, անհրաժեշտ էր նախ հայերենը լատիններենի կաղապարին մոտեցնելու առումով, այլև մեր լեզվի, այսպես կոչված, «արդիականացման», նրան նոր հնչեղություն հաղորդելու մտահոգությամբ: Նման մոտեցման հետևանքը լինում է այն, որ հայերենը դառնում է ձևաշատ համակարգ ունեցող մի

¹ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 145:

լեզու: Եվ այդ ձևաշատությունը կամ բազմաձևությունը իր հետ բերում է կադապարային մտածողության մի նոր կնիք, ինչպիսին էր լատինաբանությունը:

Այս առումով ուշադրության են արժանի հատկապես հետևյալ իրողությունները:

ա) Լատինաբան հեղինակները ընդօրինակում են հունաբաններին, երբ գոյականի, երբեմն այլ խոսքի մասերի պատկանող բառերի թեք հոլովներից սեռականի համար գործածում են *-ոջ*, *-ոյր*, իսկ տրականի համար՝ *-ում* մասնիկը: Հայտնի է, որ հատկապես *-ոջ* և *-ում* վերջավորությամբ ձևեր (հմմտ. *իմ > իմում*, *մի > միոջ*, *միում* և այլն) գործածված են դեռևս մինչև հունաբան հայերենի երևան գալը: Սակայն նման վերջավորությամբ հոլովաձևերը հունաբան հայերենի ջատագովները մի տեսակ հասցնում են ծայրահեղության, այսինքն՝ գործածում են նաև այն դեպքում, երբ դրա փոխարեն հայերենում առկա էր կանոնավոր և ընդհանուր տարածում գտած ձև. օրինակ՝ *ի քաղաքոջ* (փխ. *ի քաղաքի* «քաղաքում»), *ըն կենցաղում* (փխ. *ի կենցաղի* «կենցաղի մեջ, կենցաղում, առօրյա կյանքում»), *նում* (փխ. *ի նմա* «նրանում») և այլն:

Իսկ լատինաբան հեղինակների երկերում և թարգմանություններում դրանք և այդ կարգի ձևերը ոչ միայն անպակաս են, այլև հասցված են մեծ չափերի: Կարծում ենք, որ հունաբան հայերենից եկող, սակայն լատիներենի օրինակով գործածելի այդ ձևերն անհամեմատ լայն կիրառություն ունեն, քան հունաբան հայերենի մեջ: Օրինակ՝ *ըն իւրաքանչիւրում* (ՄՖՄԱ, 209), *ըն գլխոջ* և *ըն տտոջ* (ՎՀՀ, 104), *ըն գրքոջ* (ՄՊ, 25), *ըն յերկինս* (փխ. առանց յ-ի. ՊԲՎ, 102), *ըն թում* (ՈՇ, 778) և այլն:

Հունաբան հայերենի նմանությամբ կամ ընդօրինակումով լատինաբան հեղինակները, ինչպես բազմիցս նշել ենք, որոշակի տեղ են տալիս ներգոյական հոլովի կազմությանը՝ գործածելով բաղաձայնով սկսվող բառի դեպքում *ըն*, իսկ ձայնավորով սկսվողի դեպքում՝ *ն* մասնիկ-նախդիրները, որոնք թե ծագումով և թե գործառությամբ նույնն են և գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ: Փաստորեն հետազայում ևս՝ լատինաբան հայերենի շրջանում, առաջարկվում է հայերենում ունենալ ներգոյական հոլով՝ իբրև ինքնուրույն միավոր:

Նկատենք նաև, որ նման կազմությամբ ներգոյականը զգալիորեն առկա էր, տարածված էր հունաբան հեղինակների երկերում. հմմտ. «նոյն գերկաքանչիւր իմանամք և խոստովանիմք *ներիս ենթակայութիւնս*» (Տիմոթեոս Կուզ, 1908, էջ 274):

Նման առնչությունը բավականին ակնառու է լեզվական առումով, դրա քանասիրական կողմը, պետք է նկատել, այնքան էլ պարզ չէ: Առաջին դեպքում լատինաբան հեղինակները հայերենի գործածության ժամանակ տեղ են տալիս նաև նախկինում եղածի ընդօրինակմանը, իսկ երկրորդ դեպքում առկա էր մշակութային տարբերությունը՝ հունական և լատինական, ընդ որում տարբեր ժամանակներում երևան եկած և այլն:

Այսուհանդերձ, կարելի է նշել հետևյալը: ա) Լատինաբանության ջատագովներն այնքան էլ հմուտ չեն եղել հայերենի տիրապետման հարցում, որպեսզի կարողանային լատիներենին յուրահատուկ ցանկացած ձև թարգմանել և հնչեցնել հայերենով, ոչ թե պատճենել կամ ընդօրինակել: ք) Թարգմանության մեջ ավելի մեծ տեղ են տալիս ձևական (ձևաբանական), քան իմաստային (իմաստաբանական) կողմին, և ամեն անգամ, երբ հայերենում չէին կարողանում գտնել համարժեք (թերևս կապված առաջին հանգամանքի հետ, որ նշվեց վերը), դիմում էին նոր, ինքնահնար թարգմանության կամ նույնպիսի իմաստային պատճենման: գ) Լինելով որոշ չափով տեղյակ հայերենի անցած ուղուն՝ նրա զարգացման պատմությանը, նրանք փորձում են օգտագործել հատկապես 5-րդ դ. 60-ական թթ. հետո և հաջորդ երկու-երեք դարում երևան եկած հունաբան «արհեստականությունը», հատկապես վերջինիս առավել մատչելի մասը, որին տեղեկանալն ու յուրացումն ավելի հեշտ կարող էին լինել, քան բուն հայերենին ըստ ամենայնի տիրապետելը: դ) Ավելին, տվյալ դեպքում նախօրինակը՝ հունաբանությունը, դառնում է ոչ միայն ընդօրինակման հիմք, այլև մի տեսակ խթան նոր և նման ձեռնարկման համար, և նրանք դիմում են այդ ձեռնարկմանը:

Սա է, թերևս, ընդհանուր գծերով ներկայանալի այն բնութագիրը, թե լատինաբան հեղինակներն ինչպիսի հանգամանքներում և ինչ ձևով են դիմում հունաբան կաղապարին, օգտագործում նրա ստեղծած միջոցներից:

Հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների տիպաբանական առնչակցության տեսակետից, օրինակ, ոչ պակաս հետաքրքիր է կոչական հոլովի երևույթը¹: Հայտնի է, որ լատինաբան հեղինակները կոչական հոլովը դնում են անունների հոլովների շարքում՝ ելնելով լատիներենի օրինակից. ի տարբերություն Ռ-իվոլայի, որ կոչականը դուրս էր թողել հոլովների շարքից, Գալանոսն այն վերստին ներառում է այդ շարքում²: Նման տատանումը բացատրվում է ոչ միայն բուն հայերենին կամ հունաբան հայերենին հետևելու ձգտմամբ, որ նկատում ենք

¹ Տե՛ս է. Մկրտչյան, Կոչական հոլովը հայերենում. «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, 3, էջ 49:

² Հմմտ. Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 15, 31 և այլն:

հիշյալ հեղինակների քերականություններում, այլև նրանով, թե այդ հեղինակները որքանով են հետամուտ այդ հարցում լատիներենին:

Եվ քանի որ այն ժամանակին գործածելիս է եղել նաև հունարան հայերենում, ուստի վարանմունք չկար, թե իրենք՝ լատինարան հեղինակները, ճիշտ չեն վարվել, խաթարել են հայերենի բնիկ համակարգն իր այդ մասով, ճիշտ է, այդ դեպքում ևս տիպաբանորեն մոտենում են օտարլեզվյան համակարգերն իրար, քան թե առնչություն ունենում հայերենի հետ: Իսկ ավելի հին ժամանակներին նայելու դեպքում կարող ենք ասել, թե հայերենը կորցրած է եղել հնդեվրոպական ընդհանրությունից եկող կոչականի իր կազմությունը և նոր ժամանակներում՝ մ.թ. 1-ին և 2-րդ հազարամյակների 500-600-ական թթ. վերստին ձեռք է բերում, սակայն որպես օտարաբանություն՝ հունարենի և լատիներենի երևույթի արտացոլման ձևով: Ուստի կոչականը մեր լեզվում, այսպես կոչված, երկակի տիպաբանական երևույթ է՝ ուղղված մի կողմով դեպի հնդեվրոպական ընդհանրության շրջանը, մյուս կողմով՝ ցեղակից, բայց հետագա շրջանների լեզվական տարբերակները՝ արհեստական միջամտության պայմաններում:

Այնուհետև, հայերենի հունարան և լատինարան տարբերակների փոխհարաբերությունը նկատելի է ոչ միայն ձևաբանական, այլև շարահյուսական մակարդակում: Լատինարան հեղինակներն այս հարցում նույնպես ինչ-որ չափով հետևում են հունարաններին: Դա նկատվում է թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական երկերում, այլև սահմանվում է համապատասխան քերականություններում:

Նշենք դրանցից առավել նկատելի երևույթները:

Հայտնի է, որ հունարենում շարահյուսական որոշակի կառույցներ իրենց արտացոլումն են գտել նաև հայերենի թարգմանական, նույնիսկ ինքնուրույն բնագրերում. 5-րդ դ. երկրորդ կեսից հետո երևան են գալիս նման երկեր, որոնցում գործածված են շարահյուսական այնպիսի երևույթներ, ինչպիսին են, օրինակ, անորոշ դերբայի գործածությունը հայցական, նույնիսկ տրական հոլովների հետ, անցյալ դերբայի գործածությունը սեռական-տրական հոլովի հետ: Այնուհետև, քիչ չեն վերացական գոյականը թանձրացականի փոխարեն գործածությունները, որոնք ոչ միայն հայ, այլև հունական և լատինական քերականական աշխատություններում, նույնիսկ դասագրքերում ձևակերպվում են իբրև շարահյուսական յուրահատուկ կառույցներ:

Լատիներենում ևս շարահյուսական նման կառույցները, որոնք արդյունք են ոչ միայն այդ լեզվում դրանց ինքնուրույն ձեռքբերում կամ ժառանգություն

լինելու, այլև այլ լեզուների, մանավանդ հունարենի հետ ունեցած առնչությունների:

Այս երևույթը նկատում ենք հայերենի դեպքում նույնպես: Հակված ենք կարծելու, որ հայերենում վերը թվարկված և նման տիպի մի շարք կառույցներ, որոնք տեղ են գտել հայերենում՝ թե՛ 5-րդ դ. և թե՛ հետագա ժամանակների գրավոր աղբյուրներում, արդյունք են ոչ միայն հունարենի, վերջինիս ընդօրինակմամբ՝ լատիներենի ազդեցության (ինչպես կարծում է դասական բանասիրությունը), այլև արտացոլում են նախագրային վիճակը, որն էլ ժառանգություն կարող է լինել հնդեվրոպական ընդհանուր վիճակից¹:

Ստացվում է այնպես, որ շարահյուսական նման կառույցները հայերենում, այսպես կոչված, ծագում են տարբեր աղբյուրներից, և դրանց տարբերակված քննությունն անհրաժեշտ է հայոց լեզվի պատմության ավելի իրական (օբյեկտիվ) վերհանման ու գնահատության համար:

Տարբերակման մակերեսային մոտեցում կարող է համարվել այն, թե նման կառույցները ինչ բնութագիր են ստանում, եթե գործածված ենք տեսնում լատինաբան հայերենով գրված երկերում և այլն: Իսկ ավելի խորը և գիտականորեն հիմնավոր կարող է լինել այն մոտեցումը, որի գործադրման դեպքում ընտրվում են երևույթը բնութագրող ստույգ միջոցներ, քան այն, թե ինչ բնույթի կամ ինչպիսի լեզվից կատարված թարգմանություններում են դրանք գործածված:

Լատինաբան հայերենի շարահյուսական համակարգում նման կառույցների գործածությունը, կարծում ենք, արդյունք է ոչ միայն հունաբան հայերենի օրինակով առաջնորդվելու հանգամանքի, այլև այն բանի, որ լատինաբան հեղինակները փորձել են իրապես արտացոլել լատիներենի համապատասխան երևույթը՝ կա՛մ հետևելով հունաբան դպրոցի ստեղծած ավանդույթին, կա՛մ հանդես բերելով ինքնուրույն պատճենման ձգտում:

Ուստի նկատենք, որ լատինաբան հեղինակները մասամբ օգտվել են հայերենի մեջ վաղուց ներմուծված հունաբան ձևերից ու կառույցներից՝ ոչ միայն ուղղակիորեն, այլև ընդօրինակման, համաբանության եղանակով:

¹ Ավելի մանրամասն տես *Հովհաննես Օճնեցի*, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վազգեն Համբարձումյանի, Երևան, 1999, էջ 16-17:

Գլուխ երրորդ
ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Ներածական դիտողություններ

Լատինաբան հայերենն ինքնուրույն քերականական համակարգ չէ: Այն հայերենի ընդհանուր կառուցվածքի մի դրսևորումն է, որը հագեցած է մի կողմից լատիներենի օրինակով կազմված, իսկ մյուս կողմից հայերենի ոչ գրական (խոսակցական, նույնիսկ բարբառային) տարբերակներից եկող երևույթներով:

Իսկ այս նշանակում է, որ լատինաբան հայերենը, իբրև լեզվական յուրօրինակ երևույթ, կարելի է բնութագրել երկու կարգի իրողությունների հիման վրա, որոնք երևան են եկել տարբեր հանգամանքներում, հորինվել կամ գործածության մեջ են դրվել միարարական շարժման գործիչների կամ մասնակիցների ինքնուրույն և թարգմանական երկերում, և դրանք մեզ են հասել ձեռագիր կամ տպագիր վիճակով:

Դրանցից առաջինն այն իրողություններն են, որոնք հայերենի մեջ երևան են եկել լատիներենի ազդեցության (ընդօրինակման, նմանակման կամ պատճենման) հետևանքով, երկրորդը՝ վերցված են ժամանակը հայերենի ոչ գրական (այլ կերպ ասած՝ խոսակցական կամ բարբառային) տարբերակներից: Այդ իրողությունները լիովին ցույց են տալիս, թե որքանով է լեզվական այդ տարբերակը մշակվել, ենթարկվել է գրական կանոնարկման, և վերջինս ինչպիսի չափերի է հասել տարբեր ժամանակներում: Հայտնի է, որ լատինաբան հայերենի գործածությունը ոչ բոլոր ժամանակներում է եղել միակերպ և միատարր: Կարելի է անվարան խոսել լատինաբան հայերենի անմիօրինակության և անհամաչափության մասին, եթե նկատի ենք առնում նրա գործառական բաշխվածությունը:

Այն ունի նաև իր պատմությունը, որն երևան է հանում լեզվական տարբեր կարգի իրողությունների գործածության բնույթի և չափերի ակնհայտ տարբերություններ: Դրանք գրավոր աղբյուրներում չունեն նույն արժեքը, և հիմնականում լինելով արհեստական միջամտության արդյունք՝ հետագայում դուրս են մղվում լեզվի բուն համակարգից, ընդ որում հատկապես գիտակցված միջամտության պայմաններում:

Այդուհանդերձ, այդ իրողությունները նկատվում են լեզվի քերականական կառուցվածքի գրեթե բոլոր մակարդակներում, մանավանդ հնչյունական, բառապաշարի, ձևաբանության և շարահյուսության:

Հնչյունական փոփոխություններից առավել էական են ձայնավորների և բաղաձայնների այն տարբերությունները, որոնք գերակշիռ մասով արտացոլում են ժամանակի խոսակցական հայերենը: Գրավոր հուշարձանների հեղինակներն, անկախ վերջինիս տիրապետելու աստիճանից, տեղիք են տալիս խոսակցականին բնորոշ ձևացումների, քան լատինաբանության: Հնչյունական մակարդակում, եթե բացառենք որոշ հատուկ դեպքեր, օրինակ, *զ*-ի գործածումը եզակի թվի կազմության համար և այլն, այնքան մեծ տեղ չունի լատինաբանությունը, որքան մյուս մակարդակներում: Այդուհանդերձ, լատինաբան հեղինակների ստեղծած գրավոր աղբյուրներում նկատելի գրեթե ամեն կարգի երևույթ պետք է քննարկել իբրև հայոց լեզվի պատմության փաստ՝ հանդիպող լատինաբան հայերենի դեպքում: Այստեղ ուշագրավ են նաև, այսպես կոչված, ձևահնչույթաբանական երևույթները:

Լատինաբան հայերենի բառապաշարը ուշադրության առարկա է բառակազմության (ինքնուրույն և պատճենումային), ինչպես նաև իմաստաբանության տեսակետից: Այստեղ նկատելի է որոշակի տեղաշարժ, ընդ որում երևան են գալիս բառային նորաբանություններ, որոշ դեպքերում հանդիպում են բառիմաստային նոր կիրառություններ, որոնց արձանագրումն ըստ համապատասխան գրական աղբյուրի կարող է ծառայել հայոց լեզվի ընդհանուր բառապաշարի պատմության ստեղծման գործին: Նորաբանությունների առանձնացումը հնարավոր է միայն եղած բառարանների տվյալների համեմատության միջոցով, այսինքն՝ հայերենի նախորդ շրջանի բառապաշարն անփոփոխ բառարաններում այս կամ այն բառն արձանագրվե՞լ է, թե՞ ոչ, և եթե ոչ, ապա այն դիտվում է նորաբանություն՝ հարաբերականորեն, ոչ բացարձակ իմաստով:

Չնաբանական երևույթների քննությունն ավելի որոշակի է, քանի որ դրանց գործածությունը բնագրերում լինելուց բացի ձևակերպված է լինում տարբեր ժամանակներում երևան եկած համապատասխան քերականություններում: Նախկինում երևույթն ուշադրության առարկա է եղել համապատասխան քերականությունների, ոչ այնքան գրավոր հուշարձանների տվյալների հիման վրա: Այնինչ երևույթի պատմությունն ավելի ամբողջական և ընդգրկուն կարող է լինել այն դեպքում, երբ ուսումնասիրությունը կատարված լինի ամենից առաջ գրական հուշարձանների տվյալների հիման վրա: Այս կարգի երևույթների հանդիպում ենք ոչ միայն հոլովման և խոնարհման, այլև մյուս համակարգերի մեջ:

Եվ վերջապես, շարահյուսական որոշակի իրողություններ լատինաբան հայերենի համակարգում, այնուամենայնիվ, ունեն իրենց ուրույն տեղը: Դրանց վերհնումն ու նկարագրությունը լեզվական այդ տարբերակի պատմության համար կարևոր են ոչ միայն այնքանով, որ ամբողջացնում են տվյալ համակարգը, այլև նրանով, որ շարահյուսությանն առհասարակ չի դարձվել այն լայն ուշադրությունը, որ + եղել է մյուս մակարդակների դեպքում:

2. Հնչյունական փոփոխություններ

Եթե լեզվի զարգացումը տեղի է ունենում բնական ձևով, ապա նրանում կատարվող փոփոխությունները տարածվում են ողջ համակարգի վրա, ընդ որում որոշակի համաչափությամբ: Իսկ եթե այն երևան է գալիս արհեստական միջամտության, մեկ այլ լեզվի կամ լեզուների ընդօրինակման պայմաններում, ավելի ևս վերջիններս կրում են տարերային բնույթ, ապա նրանում երևան եկող փոփոխությունները կարող են բնութագրվել որպես այս կամ այն կարգի պայմանականության արդյունք:

Նման երևույթ նկատում ենք նաև հայերենի լատինաբան տարբերակի ոչ միայն հնչյունական, այլև մյուս համակարգերում: Նման փոփոխությունների նկարագրական վերլուծությունը բավականին արդյունավետ կարող է լինել, եթե հաշվի են առնվում լեզվական փոփոխություններին վերաբերող թե՛ համաչափությունը և թե՛ պայմանականությունը:

Հնչյունական մակարդակում երևան եկող, հիմնական օտար՝ լատինաբան, այլև ժամանակի բուն խոսակցական հիմքեր ունեցող փոփոխությունները տարածվում են համակարգի բոլոր բաղադրիչների՝ ձայնավորների, բաղաձայնների և ձայնորդների վրա: Լատինաբան բնագրերում ի հայտ եկող այս կամ այն կարգի փոփոխությունը ևս բնութագրվում է որպես առհասարակ շեղում, տարբերություն ընդհանուր օրինաչափություններից, ընդհանուր գրական հայերենի նորմայից: Այսպես, օրինակ, *ղ* բաղաձայնը որոշ բառերում երևան է գալիս իր շնչեղ խուլ *թ* տարբերակով, որը հատկապես նկատելի է *h*-ից առաջ գտնվող դիրքում. «ի ժողովող *ընթանրականաց*» (փխ. *ընդհանրականաց*. ՄՖՍԱ, 346), «հակառակ *ընթանրական* ժողովոց և միաբանութեանց ոչ ասի ժողով» (ՎՄՁ, էջ մհո, I) և այլն:

Բերված օրինակներում գործ ունենք ոչ թե լատինաբան պատճենման կամ ընդօրինակման հետևանքով, այլ ժամանակի խոսակցական տարբերակից եկող

փոփոխության հետ: Նման փոփոխությունները հանդիպում են հայերենում առհասարակ, իսկ լատինաբան հայերենով ստեղծված գրական հուշարձաններում՝ մասնավորապես, և դրանք ևս պիտի քննության առնվեն լատինաբան հայերենի պատմության ուսումնասիրման ընթացքում:

Հին հայերենի հոգնակի թվի *p* մասնիկի հակադրությամբ հաճախ եզակի թվի համար գործածվում է *q* մասնիկը, որի հետևանքով հետնալեզվային բաղաձայնների ձայնեղ / շնչեղ խուլ հակադրությամբ լատինաբան հեղինակները հասնում են ձևաբանական մակարդակի որոշակի երևույթի հակադրության ստեղծման: Այլ կերպ ասած՝ գրաբարի գրո /*p* հակադրության դիմաց լատինաբան հեղինակների երկերում թվի կարգը դրսևորվում է *q* /*p* հակադրությամբ: Օրինակ՝ «Բայց *qհրգ* սաղմոսացն Դ-աթի միահաղոյն զամենեսեսան պարունակէ յինքեան» (ՅԿՊՍ, 6): «Գիտելի է, զի *qգհրգք* աստուածաշունչք են խորինք և խորհրդատրք և զանազան մեկնութեանց ընդունակք» (ն.տ., 9): «Աստ *ի գրգկան* այսմիկ զննարարի կամ խոստովանարանի» (ՍՊԽ, 25): «Բանալ զեկեղեցին և *qգհրգն* այնմիկ» (ՄՄՁ, 5909, 3բ) և այլն:

Միաժամանակ նշենք, որ հայերենի բանավոր կամ խոսակցական տարբերակներից եկող փոփոխություններն անհամեմատ շատ են, քան լատիներենի օրինակով կազմվածները: Օրինակ՝ Մաքսիմիանոս կայսրի անունը տառադարձվում է միմիայն *u*-ով, որովհետև հեղինակը՝ Կղեմես Գալանոսը, կարծում է, որ քանի որ հայերենում չկա կամ չի կարող լինել *pu* հնչակապակցություն, ուստի այն լրացվում է միայն *u* սուլական բաղաձայնով. «*Մասիմիանոսէ* կայսրէ» (ԳՄՀ, I, 15), այլև *Մասիմիանոս* – Maximianus (ն.տ., 13) և այլն:

Լատինաբան հեղինակների ինքնուրույն կամ թարգմանական երկերում հնչյունական տարբեր կարգի փոփոխությունները բացատրվում են մի քանի հանգամանքով: 1) Լատին քարոզիչներն այնքան էլ լիարժեք չէին տիրապետում հայերենին: 2) Նրանց գործակցող հայ քարոզիչները նույնպես չունեին լեզվական այնպիսի կանոնավոր գիտելիքներ, որպեսզի տեղիք չտային շեղումների, այլ կարգի ձևացումների՝ ժամանակի գրական նորմայից: 3) Հայերենի ոչ բոլոր փուլերում է, որ գործ ունենք նորմավորված լեզվական ստանդարտի հետ, իսկ լատինաբան հեղինակները գործել են ոչ միայն միջին, այլև նոր շրջանի հայերենի (հատկապես վաղ աշխարհաբարի) ժամանակներում: Միջին գրական հայերենի և վաղ աշխարհաբարի ոչ այնքան մշակվածության կամ կանոնարկվածության պայմաններում բնականաբար հնարավոր են դառնում հնչյունական մակարդակի շեղումներ՝ ոչ միայն առհասարակ, այլև լատինաբան հեղինակների գրավոր

խոսքում: 4) Եթե այնուամենայնիվ որոշ հեղինակներ կարող էին հետևել գրական ընդհանուր ավանդույթին, ապա դա գտնվում էր ոչ միևնույն մակարդակի վրա, այսինքն՝ տարբեր հեղինակների երկերում հնչյունական փոփոխությունները կարող են լինել բոլորովին տարբեր որակի և հասնել տարբեր չափերի:

Ըստ այսմ նկատում ենք, որ լատինաբան հայերենի հնչյունական համակարգն ընդհանուր օրինաչափությունների կողքին բնութագրվում է նաև արտաքին որոշակի հանգամանքներով պայմանավորված խոսքային առանձին փոփոխություններով: Այդուհանդերձ, հնարավոր է նկարագրել այդ փոփոխությունները՝ սահմանելով որոշ կարգի անցումներ, ձևակերպելով հնչյունական ինչ-ինչ դրսևորումներ և այլն:

1. Չայնավորների փոփոխությունները նկատելի են գրեթե բոլոր հնչյունների և հնչյունական կապակցությունների դեպքում, և դրանք առաջին հերթին բացատրվում են գրաբարի արհեստական գործածության մեջ բանավոր խոսքի ունեցած ազդեցությամբ:

ա) Չայնավորներից *ա*-ի հետ կապված փոփոխությունները համեմատաբար քիչ են: Դրանք նկատելի են իբրև բացթողում, հավելում, փոխարինում մեկ այլ ձայնավորով: Օրինակ՝ *ազնիլ* (այլև *ազանիլ*, լատ. *indui, vestiri*, ՌՀԼԲ, 2), (ադաթ) *ենել* (փխ. *անել*, ն.տ., 3), *էրեցել* («այրել», ն. տ., 21), *զինատր(ք)* (ԳՄՀ, I, 13), *աթենասացիք* (*Athenienses*, ՌՀԼԲ, 5), *երախայ* (այլև *երեխայ*, ՊԲՎ, 29) և այլն: Օրինակների համեմատական սակավությունը բացատրվում է *ա* ձայնավորի բնույթով, և դրանցից մեկ-երկուսի տարբերակներով հանդես գալը բնորոշ է հայերենին առհասարակ, գործածվում են նաև լատինաբան հեղինակների երկերում, ուստի արժանի են ուշադրության:

բ) Չայնավորներից *է*-ի գործածություն *ե*-ի փոխարեն, և ընդհակառակն, ինչպես նաև բառամիջի տարբեր կարգի դիրքերում *է*-ի գործածություն՝ պայմանավորված բանավոր խոսքի ազդեցությամբ: Օրինակ՝ «Որ միշտ լնուս *զպետս* սպասատրութեան» (ԳՄՀ, II բ, 695): «Ձի ոչ գիտեն, *թե* զինչ ասիցեն» (ԳՄՀ, I, 89): «Որոց մինն էր *երեխայն* Գրիգորիոս» (ԳՄՀ, I, 11) և այլն:

Ունենք նաև հետևյալ օրինակները. *ասարիէլ* (ամսանուն. ՏԳ, 92), *բարեպաշտ* – *boni cultor* (ԿԳՔ, 28-բ-29ա) ~ *բարեպաշտ* – *bonicultor* (ՄՄՁ, 7560, 43ա), *բարեպաշտասէր* – *amator boni cultoris* (ԿԳՔ, 28-բ-29ա) ~ *բարեպաշտասէր* – *amator boni cultoris* (ՄՄՁ, 7560, 43ա), *Բենեդիքտոս* ութերորդ (ԳՄՀ, I, 220), *Դիոնեսիոս* արիսպակացի – *Dionysius Areopagita* (ԳՄՀ, II, 280), *երեխայք*// *երեխայս* (ԳՄՀ, IIբ, 497, 501, 502), *էպիսկոպոսն* Վլաս (ԳՄՀ, I, 14), *էրեք* (անձինս) (ԱՊԲ, 9), *թպետ* (ԳՄՀ, I, 89), *թպետ* (ԳՄՀ, IIա, 76),

խաբէութիւն//խափէութիւն (ՆԾԶ, I, 43, ՆԾԶ, II, 30, ՆԾԶ, III, 34), *կամէցեալ* (ՏԳ, 3), *մեռանել*, այլև *մեղանչել* (ԱՊԲ, 16), *մի թե* - *utrum* (ԳՄՀ, IIա, 5), *Ներսէսի* Աշտարակեցոյ (ՎՄԳ, 22), *չորէքտասաներորդ* (ԳՄՅՅ, 111), *սէրմնաբար* (ՄՄՁ, 3640, 59բ), *քաբէկօրիկայ* (ՄՄՁ, 2275, 129ա) և այլն:

զ) Որոշ դեպքերում նկատելի են *ե* ձայնավորի ավելորդ ընդմիջարկման, *իւ* երկբարբառի փոխարեն պարզ *ե*-ի գործածության, ոչ թե *ւ*-ի, այլ *վ*-ի հետ զուգադրման օրինակներ. «Ոչ առանց *սրբապեղծութեան*» (ԳՄՀ, IIբ, 643), «Զմահուչափ մեղս *սրբապեղծութեան* գործէ» (ԳՄՀ, IIբ, 616), «Հասարակաբար կարեն գտանել *յերաքանչերոք*» (ԳԽ, 2), «Այլ ոչ է հարկ *իւրաքանչեր* յունեքէ հարցանել (ն.տ.), «Իսկ ի վերջն ի ձախ *թելէն* ի յաջ *թելըն* փոխի (ԱՊԲ, 9), ականակապ *երեվայր* – *phaleratus equus* (Ռ-ՀԼԲ, 8) և այլն:

դ) Հանդիպում են *ը* ձայնավորի գրության բազմաթիվ դեպքեր՝ ի բավարարումն բանավորի մեջ դրանց արտասանվելու: Այս կետում լատինաբան հեղինակները փորձել են լիարժեք դարձնել *ը*-ի արտասանության և գրության կապը՝ ի հակադարձություն այն բանի, որ հայերենում առհասարակ շատ քիչ դեպքերում է, որ լավող *ը* ձայնավորը գրության մեջ ունենում է իր արտացոլումը: Տվյալ դեպքում հանդես է բերվել արհեստական համամարթեցում լատինաբան հեղինակների կողմից:

Այդպիսին են նաև հետևյալ օրինակները. *ամսըվան* – *menstruus*, *a* (Ռ-ՀԼԲ, 19) ~ *ամսըվան բան* – *opus menstruum* (ն.տ.), *գրրակազմութիւն* – *literarum formatione* (ԿԳԲ, 1ա) ~ *գրակազմութիւն* – *literarum* (ՄՄՁ, 7560, 41ա), *երրորդութեանըն* (ՄՆՊԼ, 145բ), ատերել *ըզկզբունս* – *distruere principia* (ԿԳՏ, 5բ) ~ ատերել *ըզկզբունք* - *distruere principia* (ՄՄՁ, 7560, 7բ), *ընթեռնըլով* (ԳՄՀ, IIբ, 387), *ըստուգել* (ՏԳ, 3), *թելըն* (ԱՊԲ, 9), *թըվոյ* (ԳՄՀ, I, 5), *ընանի* (ԲԻ, 13), *ընանէին* (ԳԵ, 109), *ընանիլ* (ն.տ., 150), *ըքանի* (ԲԻ, 13. հավանաբար բանաստեղծական հանգի բերումով), *ծնանիլ* – *generare կամ generari* (ԿԳՏ, 12բ) ~ *ծընանիլ* - *generare* (ՄՄՁ, 7560, 18ա), *ծնընդեւէ* (ԱՄՀ, I, 9), *կրրկին* - *iterum* (ԿԳՏ, 13բ) ~ *կրկին* – *iterum* (ՄՄՁ, 7560, 19բ), *միթըզաչափ* (ԿԳԲ, 17բ), *ծնընդօրէն* (ՄՄՁ, 3640, 59բ), *յըղեցին* (ԳՄՀ, I, 69), *ընդ նըմին* (ՏԳ, 3), *ջերմըռանդ* (ԳՄՀ, I, 25. այստեղ ունենք *ե* > *ը* փոփոխություն), *Սըմպատ* (ԳՄՀ, I, 412, IIա, 164) և այլն:

ե) Հայերենում առհասարակ խնդրառու է եղել հետին շարքի միջին և վերին բարձրացման ձայնավորների արտասանական - հնչույթաբանական որակի գնահատության, վերջինս հարցում երևան եկած տարակարծությունների

միավորման կամ խմբավորման տեսությունը: Ավելին, հայերենի առանձին փուլերում որակապես փոխվել են այդ շարքի ձայնավորների բնութագրերը: Եվ պատահական չէ, որ հետին շարքի *n*, *m* (թերևս նաև *u*) ձայնավորների ինքնուրույն և համակցված դրսևորումները ոչ միայն իրար միջև, այլև *j*, *z* ձայնորդների հետ՝ առաջ բերելով երկբարբառներ և եռաբարբառներ, նոր որակի ձայնավորներ (օրինակ՝ լատինագիր *o* տիպի ձայնավոր, երկագիր՝ երկգույթ *m* ձայնավոր), եղել են տարբեր կարգի քննարկումների առարկա:

Այս տեսակետից նայելով լատինաբան գրավոր աղբյուրներում երևան եկած փոփոխություններին՝ նկատում ենք, որ դրանք հիմնականում հետևանք են նման որակի ձայնավորների բավականին անմիակերպ ու հնչյունական որոշակի օրենքներով չսահմանվող դրսևորումների: Եվ եթե ինչ-որ չափով կարելի է սահմանել այս կամ այն կանոնը, ապա վերջինս կարող է թվալ խիստ պայմանական և իրադրական: Այդուհանդերձ, եղած օրինակների հիման վրա կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը:

Բավականին տարածված է գրաբարի *h* ձայնավորով վերջացող բառերի եզակի սեռականի *-in(j, ɟ)* վերջահոլով կազմության փոխարեն *-n(j, ɟ)* կազմության գործածությունը. ավելի պարզ ասած՝ գործ ունենք *-in > n* հնչյունափոխական տարբերակման հետ: Օրինակ՝ «Երգենք ձայնի յաւեժական եկեղեցոյ հաստատութեան» (ԳԱԼ, 155): «Ձի ոչ է ի բացեայ ի տեղոջէ ուրեք» (ՄՄՁ, 3640, 8բ): «Անկաւ խոռվութիւն մեծ ներ քաղաքացոց» (ԹՊ, 93) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *այգոց* (ՌՓ, 4), *ի այգոյ* (ն.տ., 3), *անեցոց* (ԲՃՀ, 94), *ասորոց* (ԳՄՀ, I, 2), *բարոյն* (ՅԲԲ, 221), *եկեղեցոյ* (ՄՄՁ, 3475, 266բ), *երոպացոց* (ՆՅՀՄ, 7), *ի հայելոջն* (ՄՄՁ, 271 բ), *ի հոգոյն* սրբոյ (ԳՄՀ, I, 17), *հոգոյս* (ն.տ., 19), *հոգոյն* (ԳԱԼ, 129), *հոգոյ* (ՌՓ, 75), *հոգոցն* (ԹՊ, 20), *ծերունոյն* (ԹՊ, 67, ԳԱԼ, 149), *կենդանոյ* (ՄՄՁ, 69, 269բ), *կղզոյն/կղզոջ* (ՄՄՁ, 7554), *ոսկոյ* (ՌՓ, 95), *որորոյ* (ՄՄՁ, 3475, 256բ), *տարոյ* (ԳԱԼ, 40), *տեղոջն* (ԴՁԳԱ, 69), *տեղոջ* (ՄՄՁ, 640, 10բ), *ունելովք* (*ունելի* «արքան». ՌՀԼԲ, 2) և այլն:

Չնահնչությային այս փոփոխությունը հետագա շրջանի հայերենում առհասարակ, իսկ լատինաբան գրավոր աղբյուրներում մասնավորապես այլ բան չէ, քան երկհնչյունային արտասանության պարզեցման՝ վերածման մաքուր ձայնավորային արտասանության:

Գրավոր աղբյուրներում հանդիպում են *n* և *o* ձայնավորների միմյանց փոխարեն գործածության օրինակներ, որոնք առանձին վերցված լիովին բացատրելի են, իսկ ընդհանուր կանոնի սահմանման տեսակետից հարուցում են որոշակի դժվարություն՝ կապված օրինակների բազմազանության, հնչյունական

օրենքի չենթարկվելու հետ: Երբեմն *n* հոլովման գոյականների գործիականի ձևում, օտար կամ փոխառյալ բառի գրության մեջ, ձայնավորական ներդաշնակության ստեղծման նպատակով տեղիք են տտրվում այդ ձայնավորների կամայական գործածությունների: «Առնչով զայնոսիկ հակաճառեն ընդդեմ կաթոլիկէ մօր եկեղեցո» (ՎՄՁ, 1663, էջ մհգ, II): «Բարձի հին տօվմարն» (ՏԳ, 10):

Ունենք նաև հետևյալ օրինակները. *գօմշածնոս(ք)* (ՄՄՁ, 5808, 102բ), *զօվանայ* մտօք (ԳՄՅՅ, 207), *ի ժողօսն* (ՎՄՁ, 1663, էջ մհդ, I), *լօճիկայ* (ՄՄՁ, 2275, 108ա), *կաթօլիկ* (ն.տ., էջ մհդ, II), *հասօռօտայգոյն* (ՄՄՁ, 69, 273բ), *մոռանալօվք* (ՎՄՁ, 1663, էջ մհգ, I), *նօվիմք* (ն.տ., էջ մհդ, II), *որօվք* (ն.տ., էջ մհգ, I), *պարզատօմար* (ԳՎՀ, 7), *տօվմարիս* (ՏԳ, 11), *զվանօրայս* (ԳՄՀ, I, 37), *օրանէլ* (իմա *որոնէլ*. ՏԳ, 27) և այլն:

Ինչպես կարելի է նկատել, բերված օրինակների մի որոշակի մասը քաղված է Վիեննայի ձեռ. 1663-ից, որում երևում է գրչի կամ հեղինակի՝ գրության մեջ արտահայտված արտասանական յուրօրինակությունը, ինչպես նաև մյուս օրինակներում ուղղագրական փոփոխություններն ունեն խիստ կամայական բնույթ:

Որոշ դեպքերում նկատում ենք *n* ձայնավորի գործածություն *ni*-ի փոխարեն. *անծոկ* («անձուկ, նեղ». ՌՀԼԲ, 29), *Հեթոմ* (ԳՄՀ, I, 434), *Հեթոմոյ* (ԳՄՀ, IIա, 164, 165), (սգահ և) *անկոշտ* – luico, gule deditus, auidus (ՌՀԼԲ, 2) և այլն:

Ունենք սակավ գործածություններ, որտեղ *n* ձայնավորի փոխարեն տեղ է գտել *nj* երկրաբառը: Օրինակ՝ «Է յամենայն ուրեք ներկայ ոչ երևոյթաբար, այլ *աներևոյթապէս* (ԳՄՀ, IIա, 247): «Կարոյղ է առնել» (ԱՊԲ, 16) և այլն:

զ) Առաջին շարքի վերին բարձրացման *h* ձայնավորի գործածության ենթ հանդիպում այնպիսի արտասանական դիրքերում, որոնցում գրական ստանդարտից դատելով՝ միանգամայն այլ կարգի հնչյուններ էին սպասելի: Նշենք հետևյալ օրինակները. *այիփուբէնիցն* (ՏԳ, 43), *աղուսակ* (ն.տ., 30,31,32,43), *Երինջակ* (իմ'ա գավառանուն. ԳՄՀ, I, 510), *հարուր* (փխ. հարիւր// հարեր. ՏԳ, 9), *մեթիֆիզիքայ* (ՄՄՁ, 69, 272բ), *մանիշակաց* (ՄՄՁ, 614,33ա), *պապուս* (իմ'ա հրամանաւ մեծի *պապուս* հռովմայեցոյ Սեղբեստրոսի) (ԳՄՀ, I, 32), *ֆիլիզոֆոսին* (ՄՄՁ, 2037, 18ա) և այլն:

է) Հին հայերենի ձայնորդ բաղաձայններից *j* և *i* հնչյույթներն ունեին արտասանական այնպիսի տարբերակվածություն, որը գրության մեջ, գրաբարի նորմայի համաձայն, առաջ էր բերում ձևաբանական առանձնացում (իմ'մտ. *մայր*

> *մար, թողուի, թողուիր, թողոյր* և այլն), իսկ գրավոր շրջանի հետագա փուլերում դրանք գործածվում են ոչ միայն որոշակի կանոնների (նորմայի) սահմաններում, այլև երևան են գալիս բավականին մեծ թվով բազմազանությամբ: Հատկապես վերջին կարգի երևույթների ենք հանդիպում լատինաբան գրաբարով ավանդված գրավոր աղբյուրներում:

Այս դեպքում ամենից առաջ ուշադրություն է գրավում *լ* ձայնորդի բացթողումը ոչ միայն *ա* և *ո* ձայնավորներից հետո, այլև բառասկզբի և բառավերջի դիրքերում: Նման ձևակերպումն ինչ-որ չափով բնուրոշում է հիմքում ընկած երևույթը, սակայն դժվար թե հնարավոր լինի ըստ այդմ սպառել տեղի ունեցած փոփոխությունների ամբողջությունը: Օրինակ՝ «Սանձահարել *զանդուզն* զայն վատահուքին» (ՅՊՁ, I, 145): «Յարեաւ *անկարծակի*» (ՎՄԴ, 10): «Բանզի ըստ քերթողաց *ե* խոնարհունը են *բաից*» (ՄՄՁ, 69, 276բ): «Չի անուանը նշանակեն *զգոսցութիւն* հանդերձ որակութեամբ (ՄՄՁ, 3640, 11բ) և այլն:

Ունենք նաև հետևյալ օրինակները. *ադամահն* – Adameus (ՌՀԼԲ, 5), *աճախ* (ԳՄՀ, I, 61), *աճախասպես* (ն.տ., 21), *անկարծակի* (ն.տ., 25), *աջորդաց* (իմա՝ Պետրոսի և *աջորդաց* նորին. ԳՄՀ, IIա, 14բ), *աստուածահն* (ՄՄՁ, 3640, 2ա), *զախտեանս* (ՎՄԴ, 14), *ախտենական* (ն.տ., 50), *ախտենին* (ն.տ., 3), *ափշտակող* (ԳՄՀ, I, 202), *զոսցութիւն* (ՎՄՁ, 1663, 75, ՄՄՁ, 69, 309բ, 271ա), *զոսցուցանել* (ՄՄՁ, 69, 269բ), *դեմանդիման* (ԳՄՀ, I, 14), *ի ենթակատն* (ՄՄՁ, 69, 277բ) , *ենթակահն* (ՄՄՁ, 69, 277ա), *զգաութիւն* (ՄՄՁ, 3640, 10բ), *զգաութիւնն* (ՄՄՁ, 69, 272ա), *զգուշ* (իմա՝ ոչ եղէ *զգուշ*. ՄՊԽ, 47), *(կու) ընթանաի* (ՄՄՁ, 69, 276բ), *ծառաեն* (բայի ներկայի եզ. 3-րդ դ., ՄՄՁ, 3640, 2ա), *համագուակից* (ՎՄՁ, 1663, էջ հդ, JJ), *հատիի* (իմա՝ *զհատիին* ոչ բեկանէ շառաւեղ արեզականն. ՄՄՁ, 3640, 60բ), *հրամատալ* (ՏԳ, 10), Յոհան *Մարագոմեցի* – Ioannes Maracumensis (ԳՄՀ, IIա, 13ա-բ), *մարդկահն* (ՄՄՁ, 69, 274ա), *միան* (իմա՝ ինքն *միան* կարող է ջընջել. ԱՊԲ, 16), *պիտոն է* (ՄՄՁ, 69, 269ա), *յատկանա* (փխ. *յատկանայ*. բայի եզ. թվի 3-րդ դեմք, ՄՄՁ, 3640, 4բ), *վարկենական* (ՎՅԲ, II, 335) և այլն:

Նկատելի է այս կամ այն կերպ դրսևորված, սակայն ընդհանուր՝ *յ*-ի բացթողում սահմանվածին հակառակ երևույթը, այն է՝ *յ* ձայնորդի այսպես կոչված անտեղի (գրական ստանդարտից դուրս) գործածություն:

Ունենք նաև հետևյալ օրինակները. *անյերկբայ* – certus, non dubius (ԿԳՏ, 3ա) ~ *անյերկբայ* - certus (ՄՄՁ, 7560, 4ա), *ատելոյվ* (ԱՊԲ, 16), *բնականայբար* (ՄՄՁ, 69, 270ա), *դիայլէթիկայն* (ՄՄՁ, 69, 266բ), *հաստատայգոյն* (իմա՝ «իսկ այս տեսակս հաւաքաբանութեան *հաստատայգոյն* է, քան զայլսն» (ՄՄՁ, 69, 268ա), *համանգամայն* – simul, eodum tempore (ԿԳՏ, 14բ) ~

համայնգամայն - simul (ՄՄՁ, 7560, 20բ), (ջուր, հուր) *յօղ* (հող) – aqua, ignis, aer, terra (ԿԳԲ, 26ա) ~ (ջուր, հուր) *օղ* (հող) (ՄՄՁ, 7560,38ա), *շարայնանել, ենթայդատել* (ՄՄՁ, 69, 273ա, 274ա), *տքայ* (ԳԺՈԻՀ, 22), *տպայգրել* (ՏԳ, 9) և այլն¹:

ը) Լատինաբան հեղինակներն երբեմն անտեսում են *h* բաղաձայնի գրությունը՝ կապված թերևս նախահունչ արտասանության դժվար հաղթահարելի լինելու հետ: Օրինակ՝ «Տրդատ յոյժ բորբոքեցաւ ի սէր գեղեցկութեան *Ռիփսիմէի*» (ԳՄՀ, I, 16): «Չարչարեցան ի ներքոյ *Ազկերտի* թագաւորին պարսից» (ն.տ., 67): «Ճանաչելով զնա լի *շնօրօք* և իմաստութեամբ» (ԳՎՀ, 132) և այլն:

թ) Բավականին տարածված է երկբարբառի բաղադրիչ *mi* ձայնավորի փոխարեն *վ* շփական ձայնեղ բաղաձայնի գործածությունը՝ հիմնվելով նոր ժամանակներում *ուա, ուի, ուե* տիպի երկբարբառների՝ որպես հնչակապակցություն արտասանվելու հանգամանքի վրա (*ուա > վա, ուի > վի, ուե > վե* և այլն): Օրինակ՝ «Տասն եպիսկոպոսք *ի Դվին* փոխեցին գորինչ օրէն եկեալ էր ի սուրբ Գրիգորէ ի վեր» (ԳՄՀ, I, 86): «Վասն զի այն որ առաւել *թվի* գոլ և ոչ է (ՄՄՁ, 69, 271 բ): «Եւ *նվիրեցաք* ի ձեռն Արղւմսեհի սարկաւազի» (ՄՆՊԼ, 151ա) և այլն:

Ունենք այս կարգի նաև հետևյալ օրինակները. (աշխարհն) *Աղվանից* (ԹՄՄ, 10, 24), *աղվես* (ՅԿՀՃ, 163), (չարածողովն) *Դվնայ* – conciliabulum Theuinense (ԳՄՀ, IIբ, 11ա), *թվով* (իմա՛ կամ էր մի և նոյն *թվով*. ԳՄՀ, IIա, 249), *թվին* (իմա՛ *ի թվին* փրկչին. ԳՄՀ, I, 195, *ի թվին* (իմա՛ *ի թվին* մերում. ՈԵՆ, 303), *չվէր* (իմա՛ *չվէր* առ նոյն թագաւորն. ն.տ., 23), *ի Դվին* (քաղաքին ՎՄԳ, 21, ՀՊՎ, 8), *եղվրնիկ* - columba (ՌՀԼԲ, 10), *ձեռնստութեամբ* (տեսան. ԳՄՀ, I, 508), *տվեալ էր* (ն.տ., 36), *թվոջ* (իմա՛ ի մեծագունի *թվոջ*. ՄՄՁ 119, 39բ), *ի թվականութեան* (ՄՆՊԼ, 151ա) և այլն:

Այստեղ նկատելի է նաև միջձայնավորային դիրքում *i* ձայնորդի փոխարեն շփական *վ* ձայնեղի գործածություն: Օրինակ՝ *գորավիզ* (իմա՛ Տեր լիցի քեզ *գորավիզ*, ո՛րջ լեր (ՈԵՆ, 303), *յավիտենական* (ԱՊԲՎ, 15) և այլն:

Երկբարբառների գրության դեպքում երևան են գալիս նաև *ni*-ի փոխարեն *i*, և հակառակն՝ *i*-ի փոխարեն *ni* գրությամբ բառեր: Օրինակ՝ *անւամբ* (ՄՖՄԱ, 5),

¹ Նշենք, որ Հովհաննես Քոնեցու «Յաղագս քերականին» երկի բնագիրը պատրաստող և ներածության բանասիրական մասի հեղինակ Լ.Խաչիկյանը նման երևույթի վերաբերյալ գրում է հետևյալը. «Ուղղագրական տարբերակների կամ փոփոխությունների խնդիրն ավելի բարդ է: Ձեռագրում (իմա՛ Հովհաննես Քոնեցու – Վ.Հ.) նույն բառի գրության տարբեր ձևերի ենք հանդիպում. հատկապես մեծ տարբերություն է նկատվում *j* կիսաձայնով ավարտվող կամ բառամիջում *j* կիսաձայն ունեցող մի շարք բառերի գրության մեջ... Եվ այս ոչ միայն այստեղ, այլ

լեզվի (ն.տ., 211), *հերձածօղբ* (ն.տ., 113), *մահկանացուս* (ՊԲՎ, 64), *միւմ* (իմա՛ զի նա *ի միւմ* ժամանակի կենդանի էր. ՎՄԳ- 85), *միուս* (իմա՛ և իշխանութիւն ունիմ *միուս* անգամ առնուլ զնա (ՄՄՁ, 6562, 41բ), մինն... և *միուսն* (ՏԳ, 3), *նիքեցելոց* (իմա՛ ի վերայ ընծայիցն *նիքեցելոց* արտաբերին. ՄՖՄԱ, 116) և այլն:

Լինում են նաև դեպքեր, երբ երկբարբառի *ու* բաղադրիչի փոխարեն *վ* շփականից առաջ արտասանվող *ը* ձայնավորն արտահայտվում է գրության մեջ: Օրինակ՝ *ազնրվական* – genere illustrissimus (ՌՂԼԲ, 5), *ազնրվութիւն* – nobilitas, claritas, familie (ն.տ.), *Գրվնայ* (իմա՛ թէ ի չարածողովս *Գրվնայ* և մանազկերտա նգովեցին. կանոնս *Գրվնայ* և մանազկերտի. ԳՄՀ, Իա, 24. երեք օրինակն էլ բնագրի նույն էջից) և այլն:

2. Մինչև այժմ խոսում էինք լատինաբան գրավոր աղբյուրներում տեղ գտած հնչյունական այն փոփոխությունների մասին, որոնք նկատվելիս են եղել ձայնավորների, ինչպես նաև ձայնորդներից երկուսի՝ *յ*-ի և *ւ*-ի առանձնակի կամ զուգակցված կիրառությունների մեջ: Եվ մինչև պայթական և հպաշփական բաղաձայների հետ կապված փոփոխություններին անցնելը հարկ կա անդրադառնալու նաև շփական այն բաղաձայններին (հատկապես՝ *ղ - խ, զ - ս, ռ - ռ* և այլն), որոնց գործածության մեջ նույնպես նկատելի են որոշակի շեղումներ ընդհանուր հայերենի այս կամ այն չափով սահմանված կանոններից, այլ կերպ ասած՝ տեղիք են տրվել գրական լեզվի ստանդարտից այլ կարգի ձևացումների:

ա) Բավականին հազվադեպ, սակայն հանդիպում են սուլական ձայնեղ *զ* բաղաձայնի փոխարեն խուլ *ս*-ի գործածության դեպքեր: Օրինակ՝ *սբաղմունք* (իմա՛ ի մէջ բազում *սբաղմանց*. ՏԳ, 3), *կղսի* (իմա՛ ծարաւոտ *կղսոյն*. ԳՄՀ, Ի, 47), *ի կղսին* (ն.տ.), *սբօսարան* (իմա՛ այլ չոգայ *ի սբօսարանս* և հրճուեցայ ի խրախճանս. ՄՊԽ, 66), *սկիսքն* (ՄՄՁ, 2037, 33ա) և այլն:

բ) Համեմատաբար խառը վիճակ է ներկայացնում *ռ* և *ր* շփական բաղաձայնների փոխնիփոխ, երբեմն պարզ և կրկնակ ձևով, այլև ձայնորդի հետ լծակցման, մասամբ բացթողման երևույթներով բացատրելի գործածությունը:

Այսպես, ունենք *ր*-ի փոխարեն *ռ*, և հակառակը՝ *ռ*-ի փոխարեն *ր* շփականի գործածության հետևյալ օրինակները., *առմատ*, *առմատոյ* – radix (ԿԳՏ, 4բ) ~ *առմատ* – radix (ՄՄՁ, 7560, 6ա), *առմատական* սկիզբն – radicale principium (ն.տ.) ~ *առմատական* սկիզբն – radicale principium (ՄՄՁ, 7560, 6ա), *առբանեակ* (ԳՄՀ, Իա, 61), *զանգռութիւն* (իմա՛ *զանգուր*. ՄՄՁ, 5808, 91ա), *ձեռքածութիւն* (փխ. *ձեքք, ձեռն* բառի եզ. գործ. հոլով, ՅՊՁ, 48), *Կառնոյ* (իմա՛

նաև հայ ունիթոնների միջավայրում ընդօրինակված ուրիշ ձեռագրերի մեջ» (տե՛ս *Յովհաննէս Քոննեցի*, Յաղագս քերականին, էջ 151):

Կարին. ԳՄՀ, IIա, 21), *աթորոյ* (իմա՛ *աթռռ*. ՄՆՊԼ, 144ա), *նողափարութիւն* (ԳՄՀ, I, 90), *քառնանային* (իմա՛ *գարնանային*. ԿԳՔ, 27բ) և այլն:

Ռիվոլայի բառարանում *գրո/ր* տարբերակմամբ ստեղծվել է լատիներեն պարզ և ածանցական բառի իմաստների նշանակման հնարավորություն. հմնտ. *ածիլել, արծիլել* ~ *radere, adradere* (Ռ-ՀԼԲ, 7) : Հանդիպում է նաև *լ* -ի փոխարեն *ր* բաղաձայնի գործածություն. «և էառ զտումարն ի ձեռն *կարտինարացն* իւրոց»(ՄՆՊԼ, 148ա) :

Կան պարզ և կրկնակ *ր*-ի գուգակցման մեջ փոխադարձ գործածության դեպքեր. *երրակի* (փիս. եռակի. ՄՄՁ, 3640, 4բ), *երրեակ* (փիս. եռեակ.ն.տ., 12ա) , *երրեակ* – *tertia* ՎՔՀ, 22-23), *երրկրորդ* (փիս. երկրորդ. ՏԳ, 33), *եօթներրորդ* (փիս. եօթներրորդ. ԳՆՈՒՀ, 14), հինգերրորդ (փիս. հինգերրորդ. ՎՄԴ, 171) և այլն:

զ) Առանձին խումբ են *ղ* և *խ* շփական բաղաձայնների փոխադարձ՝ միմյանց փոխարեն գործածության օրինակները. *ախք* և *աղք* - *fimus, lactamen* (Ռ-ՀԼԲ, 7) , *ախքել* և *աղքել* – *stercorare, fimo impinguare* (ն.տ.), *ախքիւր* (ՄՄՁ, 2037, 74բ) , *ախքիւր* և *ախքուր* - *fons* (Ռ-ՀԼԲ, 7) , *ամօթղածութիւն* (ՅՊՁ, I , 61) , *քաղծումն* (ն.տ., 65), *թուխք* (ՄՄՁ, 2037, 33ա) , *գթուխսս* – *folium* (ՎՔՀ, 71) , *հախթայիարեսցէ* (ՄՄՁ, 672, 75ա), *աղալանք*(ՄՊԽ, 8), *աղխային* (ՎՄՁ, 1663, էջ17), *վաղճան* (ՄՊԽ, 28, 52), *վաղճան/վաղջանական* (ՊՔՎ, 258, նաև 62, ԽԷՀՄ, 8) , *վաղճանել* (ԳՄՀ, I , 68) , ի *վաղճանի* (ՊՔՎ, 61), *վաղճանական* (ԳՄՀ, II բ, 711, 713) և այլն:

դ) Հանդիպում են *ղ/լ* բաղաձայնների միմյանց փոխարեն գործածության, ինչպես նաև *ղ*-ի կրկնակ գրության օրինակներ. *աղ* (փիս. *ալլ*. ՈԵՆ, 295), *խտաղացի* (փիս. *խտալացի*.ԳՄՀ, 428), *լող* (այլն՝ սուկ, պարզ, իբրև հոմանիշներ, փիս.՝ լոկ. ԿԳՔ, 12ա), *անուղական, ուղական* – *indirectus, directus* (ԿԳՔ, 3ա) ~ *անուղական* – *indirectus* և *ուղական* - *et directus* (ՄՄՁ, 7560, 4ա), *ուղագրութիւն* – *orthographia* (ԿԳՔ, 1ա) ~ *ուղագրութիւն* (ՄՄՁ, 7560, 41ա) և այլն:

Մեսրոպյան գրերն, ի տարբերություն այլ լեզուների գրանշանների, պարզագիր նշաններ են, այսինքն՝ չունեն լրացուցիչ տարբերիչ նշաններ (դետերմինատիվներ), այնինչ լատինաբան հեղինակները (Կղ.Գալանոս, Ոսկ.Երևանցի և ուրիշներ), հատկապես ուշ շրջանի իրենց տպագիր գործերում որոշ դեպքերում այս կամ այն գիրն օգտագործելիս փորձում են դրանք «հագեցնել» այս կամ այն կարգի տարբերիչ նշանով (օրինակ՝ փշիկ, շեշտ, ոլորակ և այլն): Օրինակ՝ *աղագաւ* (ԳՀՄ, I, 45), *դաւանութիւն* (ն.տ.), *հարկաւորեցաւ* (ն.տ.), *անուանական հոլով* – *nominativus casus* (ԿԳՏ, 3ա) ~

անուանական հոլով (ՄՄՁ, 7560, 4ա), *Գաբրիել*՝ – Gabriel (ՎԶՀ, 32-33), *Գաղղիա* , *Դաղնատիա* (ԳԱԱ, I, 19, 20), *Եզեկիէղի*, *Դանիէղի*, *Յովեղեայ* (ՈԱ, էջ Թ.), *Սիկիղիա* (ԳԱԱ, I, 22) և այլն:

3. Լատինաբան գրավոր աղբյուրներում նկատելի փոփոխություններ են կատարվել պայթական և հայաշփական բաղաձայնների գրության մեջ՝ ի հայտ եկած ոչ միայն ձեռագիր, այլև տպագիր աղբյուրներում: Նման փոփոխությունները նույնպես հիմնականում կարելի է բացատրել արտաքին հանգամանքների ազդեցությամբ, որոշ դեպքերում տարբեր ժամանակներում հայերեն խոսակցական (եթե չասենք՝ բարբառային) տարբերակների ներգործությամբ:

Շրթնային, առաջնալեզվային և հետնալեզվային բաղաձայնների ոլորտում տեղ գտած փոփոխությունները հնարավոր է բացատրել հնչյունական-արտասանական հայտնի հատկանիշների նկատառումով (օրինակ՝ բաղաձայնի անցում ձայնեղից դեպի խուլ կամ շնչեղ խուլ, որն առհասարակ բնորոշվում է որպես «տեղաշարժ», և հակառակն՝ խուլերի կամ շնչեղ խուլերի ձայնեղացում և այլն), որոնք տվյալ երևույթի բացատրության ավելի խորը հիմքեր կարող են հետապնդել:

Քանի որ լատինաբան գրավոր աղբյուրները համեմատաբար ուշ շրջանում են երևան եկել, քան հայերեն գրավոր հուշարձանները՝ գրված մեսրոպյան գրերով (405 թ. ի վեր) և մեզ հասած ամենավաղը 8-9-րդ դդ. գրչագրերով (չհաշված պատառիկները), ուստի հնչյունական գրեթե բոլոր կարգի փոփոխություններն այս կամ այն չափով համեմատելի են դասական գրաբարի և հետագա շրջանի գրական նորմայի տվյալների հետ: Ինչպես կարելի է նկատել, համեմատության եզրերը դիտարկվում են մեզանում ավանդույթի ուժ ստացած հնչյունաբանական վերլուծությունների տեսակետից՝ առնված բաղաձայնների պատմական փոփոխությունների այն շրջանակում, որն ընդունված է հայոց լեզվի պատմական քերականության, մանավանդ հայերենի դասական և հետագա շրջանի հայերենագիտության մեջ:

ա) Շրթային պայթական *բ*, *պ*, *փ* բաղաձայնները ներկայացնում են տարբեր կարգի փոփոխություններ՝ կապված ոչ միայն խուլ բաղաձայնի ձայնեղացման հետ, կամ ընդհակառակը, այլև շնչեղ խուլ բաղաձայնի ձայնեղացման և այլ կարգի դրսևորումների հետ: Օրինակ՝ *արտակ* (կամ *չափալայ* – colaphus. ՌՀԼԲ, 2), *ըմբելի* (իմա՝ *ըմպել*. ՅՊՁ, I, 49), *ամբեղեն* (երկինք) (այլև՝ *ամբել*, *ամբրվել* – coelum nubium, այլև՝ nubibus obducere, nubibus obduci. ՌՀԼԲ, 16), *Կասբիական ծով* (ԴԹ, 22), *էրիդաֆիա* (իմա՝ *էպիտաֆիա*.

ՄՄՉ 2037, 42բ), *անընայունելի* (ՎՄՉ, 1663, էջ խթ, II), *Սընպատ* (ԳՄՀ, II ա, 164), *բլանել* (իմա՝ փուլ տալ. ՄՄՉ, 2037, 131ա), *ջամբել* (ՅՊՉ, I, 6, այլև ՅՊՉ, II, 25), սեփհական (ԳՄՀ, IIբ, 452, ԳՄՀ, IIա, 210), *փափ* (իմա՝ պապ. *զփափն* գոլ գլուխ եկեղեցուց» ՄՖՄԱ, 109), *Փիուս* (իմա Պիոս. լատ. Pius . իմա *Փիուս* վեհապետ չորրորդ. ՄՊԽ, 147) և այլն:

բ) Առաջնալեզվային պայթականներից *ղ, տ, թ* բաղաձայնները նույնպես ենթարկվել են փոփոխության, ընդ որում երկու կարգի, մի դեպքում՝ ձայնեղի խլացում կամ շնչեղ խլացում, մյուս դեպքում՝ խուլի կամ շնչեղ խուլի վերածում ձայնեղի կամ շնչեղ խուլի. վերջին դեպքում խուլ բաղաձայնն է վերածվում ձայնեղի կամ շնչեղ խուլի, իսկ շնչեղ խուլը հազվադեպ դառնում է ձայնեղ: Օրինակ՝ *Կիրեղ Աղէքսանտրացի* (ԳՄՀ, I, 88), *արգանտի* (խրոյ) (իմա՝ արգանդ. ՊԲՎ, 143), *տուկս* (dux. ՄՄՉ 2037, 107ա), *ընտածին* (իմա՝ «ի *ընտածինն* իր լեզու». «բնիկ լեզվով». ՅՊՉ, I, բ, այլև ՅՊՉ, II, 3), *կենտանի* (իմա՝ «յունկն *կենտանեաց*, և յիշատակն ննջեցելոց». ԳՄՀ, I, 116), *պնտեցեալ* (իմա՝ «պինդ դարձած». «Մինչ զցամաքեցեալ և *զպնտեցեալ* նշխարն, այսինքն՝ զմասնիկն հացին սրբազնագրեցելոյ ճաշակէք. ՄՖՄԱ, 157), *երթումն* (իմա՝ երդումն. ԳՄՀ, I, 48), *թակարթ* (իմա՝ թակարդ. ՅՊՉ, I, 48), *լաթին* (ՄՖՄԱ, 110), *լաթինացի* (ԹՄՄ, 8), *Խոսրովիթուխտ* (ԳՄՀ, I, 17, *Անդիոքայ* (իմա՝ Անտիոք. ԳՄՀ, I, 62), *բանդ, ի բանդին* (իմա՝ բանտ. ն.տ., 23), *ընդրէ* (իմա՝ «Ուստի բարի հրեշտակն միշտ ազատապէս *ընդրէ* զբարին». ՄՄՉ, 3640, 21ա), *ընդրութիւն* (ն.տ.), *ճշմարիդ* (ՄՄՉ, 672, 12), *ի Սանադրկայ* (իմա՝ Սանատրուկ. ՀՎՊ, 4), *Վաղիկանն* (իմա՝ «Եւ զմարմին երանելոյն Պետրոսի եղ *ի Վաղիկանն* կոչեալ տեղի». ՄՄՉ, 207, 23բ, այլև «Թաղեցաւ *ի Վաղիկանն* մերձ մարմնո երանելոյն Պետրոսի ի Թ կալէնդն հոկտեմբերի». ն.տ., 24ա), *փայլաթակեաց* (իմա՝ փայլատակել. ԳՄՀ, 4 15), *մեթայֆիզիքա* (իմա՝ «որ *ի մեթայֆիզիքայն* սահմանէ». ՄՄՉ, 69, 273ա), *թուղղն* (իմա՝ «Ընդ դէմ որոց ասի յառաջին *թուղղն* պատրաստի ի վերջին գլուխն». ՄՄՉ, 3475, 255բ), *թուխղն* (ն.տ., 256ա), *Դարգինոս* (Tarquinus. ՄՄՉ, 2037, 6բ), *Օգդաիանոս* (ն.տ., 13բ), *զարդեալ* (փխ. զարթեալ, զարթնուլ. ՅԲԲ, 221) և այլն:

Ի տարբերություն նախորդի, երբ ունեինք պայթական բաղաձայնների պարզ փոփոխություն, այստեղ կարելի է առանձին նշել այնպիսի օրինակներ, որոնցում այս կամ այն չափով խճողված է պարզ կամ կրկնագիր (օրինակ՝ *ղհ*, եթե նկատի առնենք, որ շնչեղ խուլ *թ*-ն, պարզ ձևակերպմամբ, ունի խուլ և հազագային տարրերի բաղադրություն՝ *տհ*) հնչակապակցումը: Այլ կերպ ասած՝ լատինաբան հեղինակները հստակ մոտեցում չունեն, և դա ոչ միան այդ հարցում, այլև կրկնագիր *ղ*-ի դեպքում: Օրինակ՝ *ընթիանրական* (ՎՄՉ, 1663, էջ մհդ, II – մհե, I,

այլև ՄՖՄԱ, 183, 346, ՏԳ, 6, ԳՄՀ, I, 235), *ընթանրապէս* (ՆԾՁ, I, 12, ն.տ., II, 4, ն.տ., III, 3, ՄՄՁ, 69, 288բ), *ընթանոր* (ԳՄՀ, I, 10, 21, 36, 108, 202, 412, այլև ն.տ., IIա, 116, ՄՖՄԱ, 46, ՅՁԳ-Հ, 1), *ընթանրական* (ՄՄՁ, 69, 275ա), *ընթանրապէս* (ն.տ., 267բ), *ընթանոր* (ԳԹ, 24, ԳՃՈՒՀ, 18, ԹԱՄ, 20, ՄՄՁ, 69, 280բ), *ընդէմ* (իմա՝ «և ըստ որում *ընդէմ* աստուծոյ իցես»։ ՄՎՊՀ, 73), *ընդ դէմ* ասել, *ընդդիմաբանել* – *contradicere* (ԿԳՔ, 10բ) ~ *ընդէմ* ասել կամ *ընդդիմաբանել* – *contradicere* (ՄՄՁ, 7560, 15ա), *ընդէմ* (իմա՝ *ընդէմ* ատելւոյն. ԳԹ, 16) և այլն:

Բերված օրինակներից մեկ-երկուսի դեպքում (*ընդէմ*, փխ. *ընդդէմ*) լատինաբան հեղինակներն անտեսել են բառի բառակազմական կողմը՝ այն հանգեցնելով լատինատիպ *ըն* (ներգոյական հոլովի ձևույթ-մասնիկ) բաղադրիչին, որն էլ դիպուկ օրինակ է՝ վկայելու հայերենին ըստ ամենայնի չտիրապետելու մասին:

գ) Առաջնալեզվային հպաշփականներից *ձ*, *ծ*, *ց* բաղաձայնները համեմատաբար քիչ են ենթարկված փոփոխության, եղածներն էլ երկու-երեք օրինակից գրեթե չեն անցնում: Նկատելի են ձայնեղ բաղաձայնի խլացման կամ շնչեղ խլացման, խուլ բաղաձայնի ձայնեղացման, շնչեղ ձայնեղ բաղաձայնի ձայնեղացման կամ ապաշնչեղացման դեպքեր, եթե չհաշվենք *վարթուն* թվականի ոչ ընդունված ձևով արտահայտված լինելը («Եւ թէ որպէս յետ *վարթուն* ատուրց ետես սուրբն Գրիգոր աչօք բացօք զմիածինն» - ԹՄՄ, 18) և այլն: Օրինակ՝ *խնծոր* (*ը*-ով, այլև առանց *ը*-ի. ՄՄՁ, 614, 32բ-32ա, 33ա, ՅՊՁ, I, 44), *դարցաւ* (իմա՝ «Վասն որոյ պատճառի աշխարհն Ասորոց միւս անգամ *դարցաւ* առ հնազանդութիւնն տաճկաց»։ ԳՄՀ, 428), *գործեցեալ* (իմա՝ *գործես*. ՄՄՁ, 6562, 36ա), *անծոկ* («անձուկ»։ Ռ-ՀԼԲ, 29), *ընծայ* («նվեր»։ ԳՄՀ, I, 428), *հարուծեալ* (փխ. *յարուցեալ*. ՄՄՅ, 17), *երախտամոռած* – *ingratus, qui beneficium obliviscitur* (ԿԳՔ, 9ա) ~ *երախտամոռած* - *ingratus* (ՄՄՁ, 7560, 13ա), *ֆռանձէսք* (իմա՝ «Բռնիֆաչիոս պապն յղեաց առ թագաւորսն *ֆռանձէսաց* և ընկլեզաց զհրեշտակս արքային հայոց»։ ԳՄՀ, I, 425), *գեղապանձութիւն* (ՄՖՄԱ, 319) և այլն¹:

դ) Առաջնալեզվային հպաշփական բաղաձայններից *ջ*, *ճ*, *չ* բաղաձայնները նույնպես քիչ են ենթարկված փոփոխության: Այս դեպքում նկատելի են ձայնեղ բաղաձայնի խլացման և շնչեղ խլացման, և ընդհակառակն՝ խուլ և շնչեղ խուլ բաղաձայնների ձայնեղացման դեպքեր: Ընդ որում ձայնեղ *ջ*-ի շնչեղ խուլ *չ*-ի վերածվելը ընդհանուր հայկական երևույթ է՝ հատուկ դիրքով պայմանավորված: Օրինակ՝ *անանձատարար*, այլև *անանձատելի* (ԿԳՔ, 1ա),

¹ Բերված օրինակներից բացի ունենք *ց*-ի փոխարեն *չ*-ի գործածություն (*Բռնիֆաչիոս*, փխ. *Բռնիֆացիոս*), որը բավականին տարածված երևույթ է, եթե ոչ տարբեր աղբյուրից եկող:

անխոնճ (ԳՄՀ, I, 25), *լանճք* (իմա՝ «Յուլն յագի փոքու իմն արօտիւ *լանճից*»։ ՅՊՁ, I, 46), *աղչիկ* (իմա՝ «առ ի տեսանել զկինս և *զաղչկունս* գեղեցիկս»։ ՄՊԽ, 92, ՄՄՁ, 2037, 32բ), *մշտնջենաւոր* (այլև՝ մշտնջենաւոր. ԳՄՀ, IIա, 16բ, 131ա), այլև *մշտրնջենաւոր* – *sempiternus*, *մշտրնջենաւորապէս* – *sempiternae* (ԿԳՔ, 17բ) ~ *մըշտրնջենաւոր* – *sempiternus*, *մշտրնջենաւորապէս* – *sempiternae* (ՄՄՁ, 7560, 25բ), *չղչիկանի* (ուղիղ ձևը՝ *չղչիկան*. ՄՄՁ, 5808, 98ա), *տանչանք* (ԳՄՀ, IIբ, էջ ժգ), *վախջան* (ՎՄԴ, 2), *ջամբել* («ճանապարհ դնել»։ ՅՊՁ, I, 6, այլև ն.տ., II, 25), *վախջան* (իմա՝ «եթէ *վախջանիցին*»։ ՎՄԴ, 58), *գոջմամբ* (իմա՝ գոչումն. ՅԿՀՃ, 73), *գոքանջ* (ԳՄՀ, IIբ., 723), *հաջիւն*// *հաջումն* (իմա՝ *հաչոց*. ՄՄՁ, 69, 270ա, 270բ), *պատմիջն* (իմա՝ «Չորոցն գրէ Սեղաֆրաստէս *պատմիջն*»։ ԳՄՀ, IIա, 109) և այլն:

ե) Հնչյունափոխական տարբերակների ձևացման տեսակետից *գ*, *կ*, *ք* հետնալեզվային պայթական բաղաձայններն այնքան բազմազան չեն, որքան որ այս կամ այն տարբերակման մեջ հանդես են բերում գործածության մեծ հաճախականություն: Այսպես, օրինակ, ձայնեղ *գ*-ի խլացման՝ *կ*-ի վերածման հետևանքով ունենք սահմնափակ թվով օրինակների վրա տարածվող կիրառության բազմաթիվ դեպքեր: Այդպիսին է վիճակը, շատ քիչ վերապահությամբ, ձայնեղ բաղաձայնի շնչեղ խլացման ձևով հանդես եկող լեզվական փաստերի դեպքում: Ստացվում է այն տպավորությունը, որ հայերենի բաղաձայնական համակարգում հետնալեզվային բաղաձայնների հետ առնչվող փոփոխությունները բավականին տարածված են նաև լատինաբան գրավոր աղբյուրներում:

Հետնալեզվային պայթական բաղաձայնների փոփոխության դեպքերը հիմնականում հետևյալ են՝ ձայնեղ բաղաձայնի խլացում, այլև շնչեղ խլացում, խուլ բաղաձայնի ձայնեղացում, երբեմն նաև շնչեղ խուլի ձայնեղացում կամ ապաշնչեղացում: Սրանցից բացի մեկ - երկու դեպքում ունենք տարօրինակ փոփոխություն՝ *կ*-ի վերածում *հ*-ի, ինչպես նաև *ղ*-ի փոխարեն պայթական խուլ *կ*-ի գործածություն: Հնչյունափոխական այս երևույթները (հատկապես հիմնականները) առհասարակ բնորոշ են հայերենի թե՛ գրական նորմային և թե՛ խոսակցական (բարբառային) տարբերակներին: Ավելին, այդ կարգի փոփոխություններն ավանդական հայերենագիտության համար հիմք են հանդիսացել ոչ միայն պատմական քերականության և բարբառագիտության տեսական սկզբունքների մշակման, այլև հայերենի տիպաբանական բնութագրի մատնանշման առումով: Ավելացնենք, որ լատինաբան գրավոր աղբյուրներում

երևան եկող այդ կարգի փոփոխությունների վերհանումը նույնպես գալիս է լրացնելու այդ բնագավառում եղած ձեռքբերումները:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում հետնալեզվային պայթական ձայնեղ բաղաձայնի խլացման դեպքերը. *անկըղ* (իմա՝ անգղ) – *ansa, vasorum manubrium* (ՌՀԼԲ, 29), *անկոսնեցին* (ԳՄՀ, I, 76), *գանկատ առնել* (ն.տ., 109), *գանկատին* («գանգատվում են», ն.տ., IIա, 34բ, ՄՖՄԱ, 31), *գանկատ(ք)* (ԳՄՀ, , 54), *գանկակ(ն)* (ՄՊԽ, 16, ՄՄՁ, 69, 269բ, ՄՎՊՀ, 125, ՄՄՁ, 2275, 108բ), *գանկակատուն* (ՀՎՊ, 29), *կանկնեցան* (իմա՝ «միս անգամ *կանկնեցան* հայք ի նոցանե»): ԳՄՀ, I, 91), *հինկ(ք)* (ՄՊԽ, 69, ԹՄՄ, 18, ԴԹ, 22), այլև *ի հնգից* (ՆԾՁ, I, 12) ~ *ի հնկից* (ՆԾՁ, II, 4, ՆԾՁ, III, 4), *ի հնկեակեն* (ԹՄՄ, 22), *զհնկեակն* (ն.տ.), *հնկեակն/ի հնկեակեն* (ԴԹ, 26), *հինկերորդ* (ՅԿՀՃ, 26, 68, 122, ՅԿՊՄ, 9, ՅՀԲ, 6), այլև *հինկ երորդ* (իմա՝ «Յամի տեառն հազար վեցհարիւր ութսուն և *հինկ երորդի* ի Վէնէտիկ քաղաքի»): ՍԼԲԱ, 1), *հինկերրորդ* (ՏԳ, 66), *հնկետասաներորդ* (ՅԿՀՃ, 100, նաև *հնգկետասաներորդ*: ԳԱԼ, 27), *Մակդաղենացի* (իմա՝ «Որպէս *Մակդաղենացին* գնաց առ ոտս Քրիստոսի»): ՊԲՎ, 277), *անվտանկ* (ՄՎՊՀ, 132), *վտանկ* (փխ. վտանգ. ԳՄՀ, IIբ, 244) և այլն:

Նախորդի հակառակ երևույթը նույնպես տեղ է գտնում լատինաբան գրավոր աղբյուրներում, սակայն համեմատաբար քիչ դեպքերում: Օրինակ՝ *գայթազղի* (ՄՊԽ, 41), *Գլէմենտոս* (ՎՄԴ, 80, 81), *Գուգ* (իմա՝ «Տիմոթէոս ջահն հաւատոյ, որ *Գուգն* կոչեցաւ» ՄՆՊԼ, 147բ), *եզավանգ, երկավանգ, եռավանգ* – (*dictio*) *monosyllaba, dissyllaba, trisyllaba* (ԿԳՔ, 8բ) ~ *եզավանկ, երկավանկ, եռավանկ* (ՄՄՁ, 7560, 12ա), *միջակետ* – *punctum medium, centrum* (ԿԳՔ, 17բ) ~ *միջագետ* - *punctum medium*, (ՄՄՁ, 7560, 25ա), *վանգ* (իմա՝ «Բայց է զի մի տառ ըստ ինքեան է *վանգ*, և բառ, այլ ոչ է բան»): ՄՄՁ, 2301, 12բ), *վանգաքանակութիւն* – *quantitas syllabarum* (ԿԳՔ, 9բ-10ա) ~ *վանգականակութիւն* - *syllabarum quantitas* (ՄՄՁ, 7560, 41բ) և այլն:

Չգալի թվով բառեր կրել են ձայնեղ բաղաձայնի շնչեղ խլացման բնույթի փոփոխություն: Օրինակ՝ *անհորապէս* (ՄՊԽ, 49,78), *անհորութիւն* (ն.տ., 48), *աւարագոյն* (ԳՄՀ, I, 44), *Գևորքն* (իշխան) (ն.տ., 510), *թարքմանեալ* (ն.տ., 18, ՎՄՁ, 1663, էջ մհգ, II, ԳՃՈԻՀ, 26), այլև *թարքմանեցեալ* (ՄՊԽ, 3, 5), *թարքմանեցին* (ԳՄՀ, I, 63, ն.տ., IIա, 120, 512), *թարքմանիչ* (ն.տ., 518), *թարքմանութիւն* (ՎՄՁ, 1663, էջ մհգ, II), *թորքմացի* (ԴԹ, 12, ԳՄՀ, I, 33), *հեքնել* (իմա՝ հեզնել. ՅՊՁ, I, 17)~*հեքնել* (ՅՊՁ, II, 31), *ի հիքոյս* (իմա՝ «Քախանձանօք խնդրեաց *ի հիքոյս* պարզաբանել զնոյնն»): ՅԿՊՄ, 5), (եզական և) *յոքնական* – (*singularis et*) *pluralis* (ԿԳՔ, 8բ) ~ (եզական), *յոգնական* – (*singularis*), *pluralis*

(ՄՄՁ, 7560, 12ա), այլև *յոքնակի* (ն.տ.) ~ *յոզնակի* (ն.տ.), *հոք* (իմա՝ «Ձի ոչ եմ ունեցեալ գփոյթ և *զհոք* առ ի ուսուցանել»։ ՄՊԽ, 76), *հոքունակ* (իմա՝ *հոգիունակ* «մաքուր հոգի ունեցող, հոգելից. «Ապաշխարողն *հոքունակ*, զկնի ճանաչելոյ զհմուտ ոք բժիշկ հոգույ իւրոյ, գնայցէ առ ի գտանել զնա»։ ՄՊԽ, 12), *հոքունակութիւն* (ն.տ., 52), *մոք* – magus (ԿԳՔ, 18ա) ~ *մոք* – magus (ՄՄՁ, 7560, 26ա), այլև *մոքութիւն* – magia (ն.տ. , իսկ ՄՄՁ 7560- ում զուգակից ձևը չի տրված), *քարուն* - ver (ԿԳՔ, 27բ) ~ *քարուն* – ver (ՄՄՁ, 7560, 40բ), *քառնանային* – vernus (ԿԳՔ, 27բ) ~ *քառնանային* – vernus (ՄՄՁ, 7560, 40բ) և այլն:

Այնուհետև, մեկ-երկու դեպքում հանդիպում է շնչեղ խուլ բաղաձայնի փոխարեն ձայնեղի կամ խուլի գործածություն: Օրինակ՝ *ազցել* (իմա՝ *աքացել*. Ռ-ՀԼԲ, 3), *Ազոիկացի* (ԳՄՀ, IIբ, 74), *թագիցես* (իմա՝ *թաքչիմ*. «Ուր և *թագիցես*, խիղճ մտացո ընդ քեզ է»...ՅՊՁ, I, 289), *թագթագի* (իմա՝ «և որ ինչ յանտասո *թագթագի*»։ ն.տ., I, 47), *ողոզ* (փխ. ոլոք. ՄՄՁ, 5808, 85ա), *սայթագուն* (ՅՊՁ, I, 17), *վանգականակութիւն* (փխ. *վանկաքանակութիւն*. ՄՄՁ, 7560, 41բ) և այլն:

Նույնպիսի սակավությամբ ունենք նաև պայթական հետնալեզվային *կ* բաղաձայնի փոխարեն *հ*-ի, և երբեմն *ղ*-ի փոխարեն *կ*-ի գործածություն: Օրինակ՝ *Բակդաստ* քաղաք (փխ. Բաղդադ. ՀՎՊ, 43), կաթուղիհոս (փխ. կաթողիկոս/կաթուղիկոս. Հայոց պատրիարզն ունիցի զիշխանութիւն ձեռնադրելոյ նոցա *զկաթողիհոսս*»։ ԹՄՄ, 24), *վհայարան* (իմա՝ «Դարձաք ի *վհայարան* սուրբ Առաքելոցն»։ ԳՄՀ, I, 32) և այլն:

2. Բառապաշարի տեղաշարժերը

Հայերենի բառապաշարը պարունակում է լատիներենից փոխառյալ բառեր, որոնք պատկանում են ժամանակային տարբեր շերտերի, քանակապես այնքան էլ աչքի չեն ընկնում՝ կապված լեզվական, ինչպես նաև մշակութային յուրօրինակ շփումների հետ:

ՄԻ դեպքում փոխառությունը, ինչպես վերը նշել ենք, եղել է հնագույն ժամանակներում (մոտ. մ. թ. ա. 66 – մ. թ. 329 թթ), երբ լատիներենը դեռևս կենդանի լեզու էր և գործառում էր ոչ միայն Հռոմեական տերության մեջ, այլև այս կամ այն չափով պարտադրվում էր նրա ազդեցության ոլորտում գտնվող ժողովուրդներին: Այդուհանդերձ, հայերենի և լատիներենի միջև տեղի են ունենում ոչ այնքան սերտ շփումներ, որոնց հետևանքով հայերենին անցնելին զգալի թվով բառեր, կատարվելին բառային պատճենումներ, այլ դիպվածային շփումների

բերումով հայերենի մեջ տեղ են գտնում շատ քիչ թվով փոխառյալ բառեր: Վերջիններիս անդրադարձել են Հ.Հյուբշմանը, Ա.Մեյեն և հետագա ուսումնասիրողներ¹:

Մյուս դեպքում այդ առնչությունն իրականանում է ավելի ուշ (հայտնի ձևակերպմամբ՝ «կիլիկյան թագավորության ժամանակ՝ ԺԳ և ԺԴ դարերին»)²: Այս անգամ լեզվական շփումը տեղի է ունենում մեռած լատիներենի և բանավոր գործածությունից դուրս եկած գրաբարի (եթե ոչ նաև ժամանակի բանավոր կամ խոսակցական հայերենի) միջև, ընդ որում ոչ թե ռազմական կամ քաղաքական բախումների (ինչպիսին էր նախորդ դեպքում), այլ հոգևոր-մշակութային շփումների (հիմքում՝ հատկապես կրոնական-եկեղեցական ուծացման նպատակի իրագործման) պայմաններում: Սակայն հակված ենք կարծելու, որ այդ առնչություններն ավելի վաղ են ի հայտ եկել, թեև չեն ունեցել լայն ընդգրկում և չեն կրել զանգվածային բնույթ, այլ եղել են հայ - վենետիկյան (հատկապես առևտրական-մշակութային) հարաբերությունների տեսքով³:

Հիշենք, օրինակ, 9-րդ դ. երկրորդ կեսին կամ 10-րդ դ. սկզբներին երևան եկած լատիներեն - հայերեն հայտնի բառացանկի գոյությունը, որը խիստ ուշագրավ է հատկապես հայերենի պատմական հնչյունաբանության և պատմական բարբառագիտության տեսակետից⁴:

Երկրորդ դեպքում հայ-լատինական մշակութային առնչությունները համեմատաբար եղել են ավելի տևական և բազմաբնույթ, ուստի նման պայմաններում բնական է, որ պիտի կատարվեին բառային (նաև ձևաբանական և շարահյուսական) մակարդակի երևույթների ներթափանցումներ՝ անմիջապես լատիներենից, այլև ուրիշ լեզուներից՝ լատիներենի միջոցով:

Հայերենի բառապաշարը, թեկուզ ոչ-բնական ազդեցության կամ միջամտության պայմաններում, համալրվում է բազմաթիվ բառերով, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ կամ ուղղակի փոխառություններ, կամ հարմարեցումներ, ընդօրինակումներ և այլն:

Այստեղ լատինաբան հայերենի բառապաշարին անդրադառնում ենք գրեթե նույն սկզբունքներով ու մոտեցումներով, որոնք մշակվել են մեր նախորդ

¹ Տե՛ս *H.Hubschmann*, *Armenische Grammatik*, I Teil, *Etymologie*, Leipzig, 1897, էջ 379, 380, 458: *A.Meillet*, *Hypotheses sur quelques emprunts de l'ancien armenien au latine* "Memoires de la Societe de Linguistique de Paris", t. 18, 1913, էջ 348-350: *Գ.Չահուկյան*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 630-632: *Վ.Համբարձումյան, Հայերը և հռոմեացիները.. լեզվական շփումներ*, «Երկիր» (օրաթերթ), 23-ր նոյեմբերի, 1991.:

² Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, 1951, էջ 329:

³ Տե՛ս *Մ.Գեղեյան*, Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում IX դարի վերջում – X դարի սկզբում, «Պատմա-բանասիրական հանդես», 1984, էջ 21-36:

⁴ *Au. Carriere.*, *Un ancien glossaire latino-armenien*, Paris, 1886:

աշխատանքներից մեկում, մանավանդ որ լատինաբանության հաղթահարման հետ կապված՝ այնտեղ ևս ուշադրության առարկա են բազմաթիվ գրական հոշարձաններ, որոնք գրվելիս են եղել լատինաբան հեղինակների և լատինաբանության հաղթահարմանն իրենց նպաստը բերած գործիչների կողմից¹: Բառապաշարի քննությունը, բնականաբար, ելնում է նորաբանությունների (նորակազմ բառերի և նոր իմաստային կիրառությունների) այն առանձնահատկություններից, որոնք արդյունք են համապատասխան միջոցների և եղանակների գործադրման: Հայոց լեզվի բառապաշարի ընդհանուր պատմության համար նույնպես առաջնային նշանակություն ունեն նորակազմությունների ժամանակային, ձևական և գործառական հատկանիշներով պայմանավորված տարբերությունների վերհանումն ու նկարագրությունը: Նման ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելու համար ամենաիրական միջոցը եղած տվյալների համեմատությունն է հայերենի այս կամ այն փուլի բառապաշարին վերաբերող բառարանների տվյալների հետ:

Լատինաբան հայերենի բառապաշարի նորաբանությունները (նորակազմ բառեր, բառերի նոր իմաստային, ինչպես նաև տերմինային կիրառություններ և այլն) այս աշխատանքում ևս առանձնացնում ենք գրաբարի ամենածավալուն բառացանկի՝ «Նոր հայկազյան բառարանի», որոշ դեպքերում նաև «Առձեռն բառարանի» տվյալների համեմատությամբ, թեև չենք բացառում նաև այլ բնույթի և ծավալի բառարանների լրացուցիչ օգտագործումը²: Դրանք քննության առարկա են բառակազմության, իմաստաբանության և գործառության տեսակետից:

Բառապաշարի տեղաշարժերը գլխավորապես երևան են գալիս բառային նորաբանությունների մեջ: Տվյալ դեպքում նորաբանություն ենք դիտում նաև այն միավորները, որոնք մշակութային նոր շփումների բերումով մուտք են գործել հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ, թեև դրանք բնիկ կազմություն չեն, այլ փոխառություն:

Այսպես, *ֆռանկ* բառը, որ հայտնի է նաև գրչագրական *ֆռանգ ֆրանկ*, *փռանկ* տարբերակներով, փոխառյալ է լատիներեն ձևից և նշանակում է «լատինացի»՝ ընդհանուր իմաստով, գործածված Մագիստրոսի, Շնորհալու, Լամբրոնացու և այլոց կողմից: Այն *վռանգք* ձևով գործածված է նաև Արիստ.

¹ Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1993:

² Տե՛ս Գ. Անետիքյան, Խ. Միրմէլեան, Մ. Ալզերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837: [Մ. Ալզերեան], Առձեռն բառարան հայկազեան լեզուի, 2-րդ տպագր., Վենետիկ, 1865 և այլն:

Լաստիվերոցու երկում. «Հանդիպեցի գունդ մի ի գօրանց Հոռոմոց, որ կոչին *վրանգր*, որք յանգէտս միմեանց ի դիմի հարեալք ճակատեցան»¹:

Հ.Աճառյանը, ոչ անկախ Գ.Ջարբիանայանի աշխատությունից, ի թիվս լատինաբան քերականական և բառային ձևերի նշում է նաև *լետեմ* բառի՝ տարբեր ձևերի մեջ ներկայացող փոխառության մասին. «Նույն իսկ փոխ են առել զուս լատիներեն բառեր. ինչ. (=լատիներեն) ledere «վնասել» բայից *լետեմ, լետես, լետե* (Ջարբ., անդ. էջ 53)»²:

Աճառյանի «Արմատական բառարանում» հանդիպում ենք, ի շարս շատ փոխառությունների, նաև *երթաս* (համանուն *երթալ* բայի ներկայի եզ. 2-րդ ձևի հետ), *մանէս* բառերի, որոնք հայերենին են անցել լատիներենից, ընդ որում միմյանց առնչակից. ըստ Աճառյանի բացատրության «մեռելների աստուածացեալ հոգի» նշանակությամբ՝ վկայակոչելով Պետրոս Արագոնացու «Գիրք մոլութեանց»-ը (Վենետիկ, 1720), նշելով լատ. manes «մեռելի հոգին, դի, դժոխք և այլն» (ֆրանս. manes), որից էլ՝ լատ. diis manibus «հոգուցն աստուածացելոց»³:

Այնուհետև, Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ երոպական փոխառությունների ցանկում տեղ են գտել նաև լատիներենից փոխառյալ համարվող *գումին* «համայնք» (լատ. commune), *մնուր* «քարոզիչ» (լատ. minores), *մորթաղ* «սանդ» (°) (լատ. mortarium), *պրեֆաց* (այլև *պրեֆասիոն, փրեֆացիո*) «պատարագի նախաբան» (լատ. praefatio, սեռական հոլ. praefationis), *սրրեթ* «ծածուկ աղոթք» (լատ. secretus), *ֆրա* «լատին կրոնավոր» (լատ. frater), *սոլ* «կոշիկ» (լատ. solea) բառերը, որոնք համեմատաբար նոր ժամանակների շփումների հետևանքով մուտք են գործել ընդհանուր հայերենի բառապաշարի մեջ:

Այդ ցանկին կարելի է ավելացնել նաև այնպիսի բառեր, որոնք կամ պարզ, սովորական փոխառություն են, կամ պատճենում, հարմարեցում լատիներենի այս կամ այն բառի: Ընդ որում դրանք ոչ միայն լայն գործածության, այլև տերմինային արժեքով հանդես եկող բառեր և բառակապակցություններ են:

¹ Ավելի մանրամասն տե՛ս *Կ.Յուզբաշյան*, Արիստակես Լաստիվերոցու Պատմության մեկ տարբերակի մասին՝ *վրանգր* և ոչ *փրանկր*. «Բանբեր Սատենադարանի», 4, Երևան, 1958, էջ 77-82: *Ս.Տ.Երեմյան*, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках. «Գիտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի», 3, Երևան 1946, էջ 390: Բառը տվյալ դեպքում գործածված է *հոռոմներին* անվանելու իմաստով, և տարբեր ժողովուրդների անվանում հանդիսանալու, այլև հունարեն ծագման բառ լինելու վերաբերյալ արտահայտված կարծիքին մոտենում ենք վերապահությամբ՝ ավելի շատ հակված լինելով բառի ծագումը լատիներենից բխելու հնարավորությանը:

² Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 323:

³ Նույն տեղում:

Օրինակ՝ *ֆրեր*, *քարոզիչ*, *ֆրանցիսկեան(ք)*, *դոմինիկեան(ք)*, *լադինացի*, *միաբանող(ք)*, *եղբարք* (այլև *եղբարց կարգ*), *էֆրատն* (լատ. frater)¹, *ֆրա մնոր* (լատ. frater minor «կրտսեր եղբայր»։ ՄՄՁ, 1736, էջ 14ա), *քրեվիար* «ժամագիրք»², *միաբանող* (լատ. unitor), *մինոր (ք)* «կրտսեր (ներ)» (լատ. minores) և այլն:

1. Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ առանձնանում են բառային և բառակապակցական այն միավորները, որոնք հարաբերական իմաստով գործածված չենք գտնում նախկինում երևան եկած գրական հուշարձաններում և ըստ այդմ չեն հանդիպում հայերենի, մանավանդ հին գրական հայերենի (գրաբարի) հայտնի և ծավալուն բառարաններում: Դրանք հարաբերականորեն ընդունված է կոչել նորաբանություն, ընդ որում բառակազմական, իմաստային և գործառական (գործածության) հատկանիշով:

Նորաբանությունների մեջ պարզ կազմությամբ բառերը համեմատաբար քիչ են: Դա բացատրվում է ոչ միայն այն բանով, որ պարզ կամ արմատական բառերի առաջացումը լեզուների նախնական փուլերին բնորոշ երևույթ է, այլև նրանով, որ լատինաբան հեղինակների մի որոշակի մասը, անկախ գործադրած ջանքերի ծավալից, ոչ լիովին է տիրապետում հայերենին առհասարակ, նրա բառապաշարին առավել ևս, որպեսզի ավելի լայն հնարավորություն ունենար նոր բառեր (տվյալ դեպքում պարզ բառեր կամ բայաձևեր, այլ կարգի բառաձևեր) կերտելու: Ըստ այդմ տվյալ դեպքում կազմությամբ պարզ բառերի ենք հանդիպում մինչ այդ երևան եկած գրական հուշարձաններում: Այնուհետև, իբրև պարզ կազմություն ունեցող բառ պետք է դիտել այն փոխառությունները, որոնք հայերենում բառակազմորեն տարանջատելի չեն, այլ այդպիսին կարող են լինել միայն փախստու լեզվում:

Նոր բառերի մեջ պարզ կազմություն ունեցող պատճենումները ևս, իբրև օտար բառին համարժեք բայական միավորներ, ուշադրության առարկա են, քանի որ կազմված են լատիներենի օրինակով՝ մասամբ իբրև դիպվածային կազմություններ:

Հանդիպում են նաև ժամանակի խոսակցական տարբերակներից (եթե ոչ բարբառներից) լատինաբան գրավոր աղբյուրների մեջ ներթափանցած, կազմությամբ պարզ բառեր, որոնք ևս բնականաբար տեղ չեն գտել գրաբարի ընդարձակ բառարաններում:

¹ *Լ.Խաչիկյան*, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, էջ 61:

² *Լ.Խաչիկյան*, նշվ. աշխ., էջ 317-319:

ա) Պարզ բառերի (կամ բառաձևերի) մի որոշակի մասը բայեր են. *աբեդանալ* (լատ. coenobitarum ordini adscribi, Ռ-ՀԼԲ, 1), *դաշնել* (իմա՝ «Եւ դաշնելն է, որ չափէ և կշռէ և հաւասարէ զաղին և ըզլարն հետ միւս լարին»): ԳՁԲ, 72), *դարակել* (իմա՝ «Ճանաչեմ այնքան նրբագունիւ խուզմամբ և հետազօտմամբ, մինչև մնայ և ոչինչ յենթարկումն ճանաչելոջ, զաղեցեալ յիմոյս ճանաչմանէ»): ՎՅԲ, II, 304, այլև Չի թէ *դարակիցէ* զաղմկայարոյց իմն ախթակաթութիւն յեցեալ ի քեզ» ՅՊԶ, I, 18):

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը. *ազցել* (այլև *ազցոտել*, *ազցոտիլ* // *ազցոտվիլ*, *աբուց*, լատ. calcitrare, calcisictus և այլն. Ռ-ՀԼԲ, 3), *զգօնել* («զգուշացնել՝ զգոն դարձնել»): ԳԱԼ, 33), *թագել* (նաև *թագիլ* «թագ կրել, թագադրել»): ՄՄՁ, 3640, էջ 65բ, նաև ՄՍԼ, 274, ՄՄՁ, 725, 108բ), *լերկել* («լերկ՝ մաշված դարձնել»): ԳՁԲ, 71), *կայսրանալ* (ՄՄՁ, 2037, էջ 106բ), *հալիլ* (հոմանիշ՝ *սկսիլ*, լատ. incipere. ԿԳՏ, 15բ, այլև ՄՄՁ, 7560, 22ա), *սարքել* (ՄՖՄԱ, 338), *սղացուցանել* («կարճել, սուղ դարձնել»): ԳՁԲ, 73), *յատկացուցանել* (ՄՍԲ, 173. հմմտ. «Լեզվաբանական բառարան», էջ 173), *պարոյկել* («շրջապատել, պարույկ կազմել»): «Նոր հայկազման բառարանն» ունի միայն *պարոյկացեալ*: ԳՁԲ, 73), *փորձացուցանել* (փորձի ենթարկվել, փորձարկել»): ՄՖՄԱ, 20, 24) և այլն:

բ) Երբեմն հանդիպում են խոսակցական տարբերակից եկող այնպիսի բառեր, որոնք չեն համապատասխանում գրական լեզվի նորմային. *ազրզնալ* (*ազիզ-անալ*, այլև, *ազգութիւն ազիզ* // *եզիզ* և այլն. Ռ-ՀԼԲ, 4), *աճղն* (լատ. ilia.ն.տ., 15), *ամբոռ* (այլև *ամոր* < *ամու*՞ր. լատ. durus, «ամուր, կարծր»): ն.տ., 17), *ամեղ* (այլև *անմեղ*, innocens, incons, այլև *ամեղութիւն*, լատ., innocenter. ն.տ., 16), *ամչոնալ* (իմա՝ *ամչոցած մարդ*, լատ. vir rubore suffusus. ն.տ., 19), *զէճանալ* (լատ. humecteri. ԿԳՏ, 7ա), *լոկոնել* (իմա՝ «Փափկութիւն մտոյ մեղկ և լայրտուն է, հոսանուտ, և սուտակասպաս, միշտ դեղօք և օձանելեօք *լոկոնեցեալ*, երկնչի՝ զի մի հրապարակիցի»): ՅՊԶ, I, 64), *մոծիր* (փիւ. մոծիլ, եթե ոչ հավասարարժեք տարբերակներ. ՄՄՁ, 2037, 18ա), *ոստղ* (լատ. կլութէն և կլութիւնում. ՅՄՁ, 60, այլև ՎՅԲ, II, 329. վերջին դեպքում գրված ձայնեղ բաղաձայն *զ-ով*), *սղացնել* (ձեռագրական տարբերակ՝ *սղացնել*. «և յուր սուղք են *սղացնել*, յուր սրել զձայն, և յուր բութ՝ ի վայր քաշել»): ԳՁԲ, 71), *սպրծել* (իմա՝ *սպրդել*, սողալով մեղմորեն ներս մտնել»): ՅՊԶ, 65, 66) և այլն:

գ) Մեկ այլ խմբով կարելի է ներկայացնել այն բառերը կամ բառաձևերը, որոնք հայերենում դիտվում են պարզ կազմություն ունեցող փոխառյալ բառեր. *ազասլ* (լատ. innubus. ՄՖՄԱ, 324, Ռ-ՀԼԲ, 4), *աղաթ* (այլև *աղաթ ընել*. mos, iuxta.

Ռ-ՀԼԲ, 3), *աղայ*. (այլև հոգն. ձևով՝ *աղէք*. լատ. insula «կղզի». ն.տ.), *ազաթ* (այլև *ազաթել*, *ազաթել տալ*. լատ. reverentia, honor կամ observatio, ն.տ., 3), *դրիպան*

(«որ թարգմանի աստենակալ». ՄՄՁ, 2037, 7ա), *մաղզմայ* («զակիհն ընդ գինոյ և զմաղզմանն ընդ հացի». լատ. patina. ԳՄՀ, II, 690, այլև «զմաղզմայն մարմնով և արեամբ». ՄՄՁ, 6562, 35բ), *սմարակտոս* (լատ. սմարագրոս. «կանաչագոյն և թափանցիկ իմն ակ». ՎՅԲ, II, 331), *սուպղ* («առանց քաղաքավարութեան և անընդել բարեկրօնութեան». ն.տ., 332), *սուտակա* (սեռ. հոլ. ձևը՝ *սուտակի*, լատ. ֆոկուս. «տեսակ իմն ճանճի, մեծագոյն մարմնով, քան զմեղու». ն.տ., 333) և այլն:

Չեռագրերից մեկում հանդիպում է *ուռունն* («մի տեսակ ձուկ» բառը, որն անշուշտ կազմված պիտի լինի *ուռնում* // *ուռչիմ* բայի *ուռ* արմատից՝ *–ուն* ածանցով, և որպես այդպիսին՝ ձկան տեսակ նշանակելու դեպքում այլևս պետք է դիտել իբրև պարզ բառ. «Արծախայտն, երկնանկատն, ակռազն, ուռունն և շնձուկն ունին զբերանս լայնս » (ՄՄՁ, 5808, 99բ):

2. Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ բացի ժառանգորդաբար անցած բառային միավորներից որոշակի քանակով ի հայտ են գալիս այնպիսի նորաբանություններ, որոնք հիմնականում ունեն սովորական (բուն կամ իսկական), ինչպես նաև կցական և կրկնական բաղադրություն:

Եթե հին գրական հայերենում, երբ այն կենդանի հաղորդակցման միջոց էր, բառաբարդումը տեղի էր ունենում և՛ ձևավոր, և՛ ոչ ձևավոր («մաքուր») հիմքերով, ապա համեմատաբար ուշ շրջանի գրաբարի մեջ այդ երևույթը գրեթե զերազանցապես տեղի է ունենում «մաքուր» (ոչ ձևավոր) հիմքերի գործադրմամբ, քանի որ գրաբարը ոչ միայն առհասարակ մեռած (ոչ կենդանի) լեզու էր, հիմնականում գրավոր խոսքի մեջ գործածվող: Եվ պատահական չէ, որ հայախոս միջավայր թափանցած լատին միարարները սկզբնապես ջանքեր են գործադրում հին գրական հայերենը (գրաբարը) սովորելու: Դա այնքան էլ վերջնական արդյունքի չի հանգեցնում, որովհետև նրանց գործադրած գրաբարը մի տեսակ «թաթախված» է աշխարհաբարյան՝ խոսակցական (եթե ոչ այս կամ այն բարբառից եկող) տարրերով, որն առավել ցայտուն կերպով երևում է բառապաշարի մեջ: Այնուհետև, հիշենք նաև, որ նրանք իրենց գործունեության մեջ գրեթե միշտ զգացել են հայ մտավորականների օգնության կարիքը, մանավանդ սկզբնական շրջանում և առավելապես թարգանություններ կատարելիս:

Բարդ բառերի բառակազմական առանձնահատկությունների, կաղապարային դրսևորումների մասին խոսելիս անհրաժեշտաբար պետք է հաշվի

առնել այս արտաքին հանգամանքները՝ իբրև բառակերտման և գործածության կարևոր նախապայման:

1) Բուն (կամ իսկական) բարոյությունների մեջ, իրենց հերթին, գերակշռում են պարզ բաղադրական հիմքերով կազմությունները, և դրանց բառակազմական բնութագրի մասին խոսելն որևէ դժվարություն չի կարող հարուցել:

Նման կազմություն ունեցող բառային միավորները կարելի է ենթարկել ներքին դասակարգման՝ նկատի ունենալով բաղադրվող և բաղադրող հիմքերի միացումը որևէ (հատկապես՝ ա) հոդակապով կամ առանց հոդակապի, այնուհետև ըստ բովանդակության պլանում ունեցած տարբերակվածության՝ իբրև սովորական կամ տերմինային իմաստով հանդես եկող կազմություններ, ինչպես նաև ելնելով բաղադրվող հիմքի խոսքիմասսային պատկանելությունից (գոյական, ածական, թվական, մակբայ և այլն):

Այս վերջին հատկանիշն էլ, իբրև արտահայտության պլանի երևույթ, կարող է հիմք հանդիսանալ նաև նման բաղադրությամբ բարդ բառերն առանձնացնելու և սեղմ ձևով ներկայացնելու համար:

ա) Համեմատաբար մեծ խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնց բաղադրվող հիմքը գոյական է՝ առնված ուղիղ ձևով, իսկ իբրև երկրորդ բաղադրիչ հանդես են գալիս տարբեր բնույթի միավորներ՝ բառեր, բառարմատներ և այլն, ընդ որում բաղադրվող հիմքը հնչյունափոխված ձևով է մասնակցում բաղադրությանը՝ անկախ շեշտի տեղափոխությունից: Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ այս խմբում կարելի է առանձնացնել մի քանի ենթախումբ՝ հետևյալ կերպ:

Միայն անվանական (հիմնականում գոյականական, մասամբ այլ՝ ածականական և այլն) բաղադրական հիմքերով կազմված նոր բառեր (նորաբանություններ): Օրինակ՝ «և խաւարեցուցանեն *գաստուածայոյս* կտակարանն» (ԴՉԲ, 68): «*Խայտափիտ*. որ ունի զխայտս և զբիծս յոգներանգս, և կամ զփոսորակս մանունս նինքեան սևեռեցեալս» (ՎՅԲ, II, 312-313)¹: Վասն որոյ դժուարագիտն լինելոյ և զհայոց գրող *համարութիւն* առ ընթեր եղաք» (ՈՇ, 775 և այլն):

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *արծախայտն* (ՄՄՁ, 5808, 99բ), *արմատադառն* (ՀՇԳԱ, 281), *բոցաշոյլ* (*ք*) (ն.տ., 85ա), *գայլափստոր* (ՎՅԲ,

¹ Անհավանական չէ բնագրի *խայտափիտ* բառի երկրորդ՝ *փիտ* բաղադրիչի և *բիծ* արմատական բառի տարբերակներ լինելը (տարբերակայնությունը):

II, 316), *եռասանատիպ* (փխ. *բ-ով*. ՀՇԳԱ, 22), *երազատեսիլ* (ԳՄՀ, I, 17)¹, *երակածրծումբ* (փխ. առանց *ը-ի*. ՎԲԻ, 55), *երկաթաքարն* (ն.տ., 50), *թռածատանգ* (ԳՄԳՎ, 68-69), *իշխանաշուք* (ԹԻԲ, էջ Ե), *իրաւափառ* (լատ. թեմիստոլոգիա. ԹԻԲ, 742), *խոզածուկն* (ՄՄՁ, 5808, 99բ), *ծաղրատեղ* (ԳՄՀ, I, 104), *կաղաքոյս* (ՎՅԲ, II, 316), *կամայագործ* (ՀՇԳԱ, 307), *կանանչագոյն* (փխ. առանց առաջին *ն-ի*. ՄՄՁ, 5808, 151բ), *կապարածրծումբ* (փխ. առանց *ը-ի*. ՎԲԻ, 55), *հողմաշատ* (ՎՀՀ, 59), *հրապարակագիր* (ԽԷՃ, 51), *հրապարակամատենան* (ն.տ.), *հրեշտակավարք* (ՀՇԳԱ, 217), *յանգագիր* (ԴԶԲ, 83), *նաւակիտր* (լատ. ռեմորա «փոքր ձկան մի տեսակ». ՎՅԲ, II, 327, այլև ՅՊՁ, 57), *շեշտանշան* (ՄՍԲ), *շիղաղէգ* (ՎՅԲ, II, 328), *նունաքարն* (ՎԲԻ, 50), *պատարագանուէր* (ՎՊԱ, V), *պարոյկանշան* (ՄՍԲ), *սարաքար* (ՎԲԻ, 50), *վերջածիր(ք)* (ՎՈԴ, 13-14), *վերջակէտ* (ԿԳԲ, այլև ՎՈԴ, 14), *վերջահողով* (ՅԿԲ), *փաստաբան* (լատ. ադվոկատու. ՎՅԲ, II, 339), *քարածիրք* (ՎԲԻ, 58, այլև ԲՃԳ, 101) և այլն:

Այնուհետև, գոյականական և այլ խոսքի մասի պատկանող բաղադրիչներով կազմված բառեր, որոնցում իբրև երկրորդ բաղադրիչ ավելի հաճախ հանդես են գալիս բայարմատները (մասամբ՝ բառածները): Օրինակ՝ «և այլք մու մու (իմա մեկ-մեկ. Վ.Հ.) յերկուց *բառակցաց* շարակցեալ են (ԴԶԲ, 83): «Եւ *հրամանահան* հզօր յընդհանուր եկեղեցիս Քրիստոսի» (ԳՄՀ, I , 32) : «Գրիգոր պատրիարք և հայրապետ և *հրամանահան* ի տիեզերական ժողովս» (ԹՄՄ, 24): «*Յորովաիդ* և յոգնատենչ բաղձանօք» (ՈԵՆ, 293) : «Յարաբարդ՝ որզոն վարդապետեմ, *սահմանաբանեմ*»(ԴԶԲ, 132) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *ախտաջեր* (լատ. ֆեպրիս. ՎՅԲ, I, 3, այլև ՎՅԲ, II, 291, ԱԴԲ, 19), *ակնաբաց* (ՆԳԱ, 22), *աղաղակագոջ* (փխ. չ-ով. ԳԱԼ, 122), *արևածին* (ՎԲԻ, 34) *առաքնաշոյտ* (լատ. փռեփոփեռու. ՎՅԲ, I, 16, այլև ՎՅԲ, II, 300), *բանավար* (ՍԼՏ, 36), գանձագիւտ (ԹԻԲ, էջ դ), *գառնագոչում* (ԳԱԼ, 85), *խրամատագած* (ՎՅԲ, II, 314), *հարկակիր* (ԹԻԲ, 27), *հարցախնդիր* (ՅԱ, 1, այլև *հարցախնդրիմ*, որը նույնպես չենք գտնում «Նոր հայկազյան բառարանում»), *հացաճաշակ* (ՀՇԳԱ, 25), *հաւատադրուժ* (ՎՅԲ, II, 320), *հոտարուխ* (ԽԷՄ, 8), *մարդատունկ* (ՄՄՁ, 3475, 255բ), *մղոնածեմ* (ՎԲԻ, 42), *սպասահարկու* (ԹԻԲ, էջ գ), *ստուերախիրտ* (ն.տ., 28-29), 38) , *վերջաղիր* (ԴԶԲ, 80, 83) և այլն:

Սրանց հավելյալ նշենք, որ շատ հազվադեպ, սակայն հանդիպում են գոյականով և բոլորովին այլ խոսքի մասի պատկանող (տվյալ դեպքում՝

¹ «Նոր հայկազյան բառարան» ունի միայն *երազատես, երազատեսութիւն*:

մակբայով) բաղադրված, ընդ որում *ա* հոդակապով միացած բառեր: Օրինակ՝ *ատաննամերձ* (ԹԻԲ, 2), *ճեպամերթ* (լատ. ֆոնետիկա. ՅՊՁ, 48, այլև նույնը բացատրված. «յաճախապէս, բազմիցս». լատ. ֆոնետիկա. ՎՅԲ, II, 321) և այլն:

բ) Բարդ բառերի առանձին խումբ են ներկայացնում ածական բաղադրվող հիմքով և այլ խոսքի մասի պատկանող բաղադրող հիմքով կազմությունները: Ընդ որում այստեղ նոյնպէս հնարավոր է առանձնացնել ենթախմբեր՝ որոշ հատկանիշների նկատառումով:

Նախ, սովորական է ածական և գոյական բաղադրական հիմքերով կազմությունը, որը բավականին տարածված է: Օրինակ՝ «Աչքն *բարձրածիրք*, սեաւք և պսպղունք, քիթն նստուն, վիզն կակուղ» (ՄՄՁ, 5808, էջ 84բ), «և ի պետութեան Կոստանդինի Փողոնատոսի, որ թարգմանի *թաւամօրոս*» (ՎՈԴ, 37): «Այնոցիկ *մատղաշատիոց*, որք դեռ ևս ոչ ժամանեցեալք առ երեսներորդ ամն» (ՍՖՄԱ, 325) և այլն¹:

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *աւաղամարմին* (ԴԶԲ, 121), *գեղակերպագունեղ* (իմա՝ *գեղակերպ* կազմության գերադրական աստիճանը. ՄԲԽԶ, 41), *թաւանշան* (ՍԳԲՎ, 23), *լայնաթիկունք* (ԴԶԲ, 121), *հասարակագիշեր* (ԿԳԲ, էջ 15ա), *հասարակածագ* (ՇՀՆ, 488), *հաստացոք* (ՎՅԲ, II, 320), *հասասարաբարձ(ք)* (ԽԷՀԻ), *մոլախոծ(ք)* (ՅՊՁ, I, 9, այլև ն.տ., II, 25), *յարգոյապատիւ* (ՅՊԿ, XII), *յարմարակզակ* (ՎԲԻ, 36), *յարմարափոյթ* (լատ. փոսմփթոս. ՅՊՁ, 55, այլև ՎՅԲ, II, 325-326), *յարմարաքիթ* (ՎԲԻ, 86), *յոզնատենչ* (ՈԵՆ, 293), *յոլովաիդ* (ՈԵՆ, 293), *Ոսկիաբերան* (իմա՝ Հովհան Ոսկեբերան. ՄՍԼՏ, 88), *չքնաղաբան* (ՎԲԻ, 42), *սակաւակաթն* (ՄՄՁ, 5808, 152ա), *սաննատեսիլ* (ՅՊՁ, 63, այլև ՎՅԲ, II, 330), *սեղանակապոս(ք)* (այլև *սեղանանենգ(ք)*. հմմտ. հուն. վօմոլոխի. ԹԻԲ, 724), *վատահնչող* (ՄՊԽ, 16, *վեհալուստր* (լատ. իլլուսթրիմոս, իմա «յոյժ պայծառափայլ, *լուսատրագունեղ*, գերադրական աստիճան *լուսատր* -ի. ՅՊՁ, 70, այլև ՎՅԲ, II, 335, *փակագիծ* (ԹԻԲ, 607), *փոքրագիր* (ՎՈԴ, 5), *քաղցրագութ* (ՀՇԳԱ, 283), քաղցրադէմ (ՍԽՎ, 18, ՍԳԲՎ, 187), *քաջակռան* (ՎԲԻ, 68), *քաջամակարդ* (ն.տ., 68) և այլն¹:

Այնուհետև, կան նաև հոդակապով բարդ բառեր, որոնց հիմքերից առաջինն ածական է, իսկ երկրորդը՝ բայարմատ (կամ բայածև): Օրինակ, «Եհար և եսպան զվիշապն և զմի եղջերուն և կտրեալ զհասարակն եղջրուն մի եղջերն պարզևեաց ինձ *թիրակէգ* և անդեղեայ *թիրահալած*» (ԹՍՄ, 16 այլև ԴԹ, 20):

¹ *Բարձրածիրք* բառի երկրորդ՝ *ծիրք* բաղադրիչը հավանաբար այլ բան չէ, քան *դիրք*-ի տարբերակ, ուստի առհասարակ կարող ենք գործ ունենալ *ծիրք/դիրք* տարբերակայնության հետ:

«Համատարած և *հարթարդոր* Աշխարացոյց մեր» (ՎԲԱ, 7): «Եւ արդ՝ այս *մեծահզօր* արքայս Հայոց Խոսրով» (ԳՄՀ, I, 10): «Յոլովաիդձ և *յոզնաստենչ* քաղձանօք» (ՌԵՆ, 293) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *անուշախօս* (ՍԳԲՎ, 187), *թիրահակ* (ՅՊՁ, I, 88), *քշուառալից* (ՍՓ, 9), *լիարաց* (ն.տ., I, 150), *խոնարհադէմ* (ԽԷՃ, 105), *խոնարհաստես* (ն.տ., 105), *հպարտամոլ* (ՍԽՎ, 22) և այլն:

զ) Զգալի թվով բառեր բաղադրված են բայարմատով և այս կամ այն խոսքի մասին պատկանող բառերով, որոնք միանում են *ա* հոդակապով: Օրինակ՝ «Եւ մի մասն անուանեցաւ *սպականասպաշտ* (= *alios guidem fecerunt corrupticolos appellari*. ԳՄՀ, I, 89): «Ընդ դէմ *հերձախօս* սուտ աւանդաւորաց» (ՎՄԴ, 90): «Զի առանց դառնութեան բանից, և թարց *մարառավէճ* հակաճառութեան» (ն.տ., 60): «*Տեսալիոխ*. կոչին զանազանութիւնք փոփոխմանց ըն տեսարանում, մինչ իրակին ի դերասանից պողոտէնուագք, կամ քաղէնուագք. լատ. չէնայ, այլև սչէնայ, իմա սցենա «տեսարան, տեսիլ, արարված՝ արար».
ՎՅԲ, II, 336, ՅՊՁ, 71-72) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ բառերը. *աշխատայոյր* (ՎՅԲ, I, 9, այլև ն.տ., II, 294, հետևյալ բացատրությամբ՝ «լի աշխատութեամբ և դժուարութեամբ»), *սպականամերձ* (ՀՇԳԱ, 303), *ատելասէր* (ԳՄՀ, IIա, 24բ), *երախտաստես* (ՀՇԳԱ, 25), *երկաջան* (իմա՝ «ստեղծարար՝ երկնող, ջանք, եռանդ». ԵՄՁ, 789, էջ 148), *զգայագորկ* (ՎՊԱ, 128), *թմրածուկն* ԹԻԲ, 13), *մեկնագիրք* (իմա՝ «մեկնողական գրականություն». ՎՄԴ, էջ Ժա), *յորձապտոյտ* («նշանակէ զըրջաբերմունս և զխոթնածութիւնս բանից», փխ. *բ*-ով. ՎՀԲ, 32), *ներբակոխ(ք)* (իմա՝ *ներբանակոխ*. ՅՊՁ, I, 45), *նախատաղիր* (ՍՄԳԺ, 450), *ողորմածասիրտ* (ՍԳԲՎ, 212), *սպառնաստեսիլ* (ԽԷՃ, 105) և այլն:

դ) Բարդ բառեր, որոնց բաղադրվող հիմքը մակբայ է, իսկ քաղադրող հիմքը՝ որևէ բայարմատ կամ զանազան խոսքիմասային միավոր՝ նախորդի հետ միացած *ա* հոդակապով: Օրինակ՝ «*Յաւտագին*. որ զառաւել ունի զգին, և մեծահաշուեցութիւն քան զայլս» (ՅՊՁ, 56, այլև ՎՅԲ, II, 326): «*Ներսամուծէ* և առբերէ առենթադատումն» (ն.տ., II, 223): «Եւ ի յօժանդակութիւն տհասից և *պակասակրթից*» (ԳԺ, 3) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *առաջատեղեալ* (լատ. փոփոխութիւն. ՎՅԲ, I, 11, այլև II, 296), *իսկաղիր* (իմա՝ «զոր ունի զհաստատ իմն ճշմարտութիւն և ոչ փոփոխի». ՎՅԲ, II, 310), *յառաջագալ* (ՎԲԻ, 22), *նմանակերտ*

¹ Հմմտ. Վ.Գ.Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 139-141:

(ՅՊՁ, 58. «պատկեր ինչ կազմեցեալ ըստ նմանութեան իրի ուրեք». լատ. սիմուլակրում, ՎՅԲ, II, 327), նորակիրթ (ՍԳ-ԲՎ, 8), *նորաշար* (ՆԳԱ, 190) և այլն:

ե) Շատ քիչ դեպքերում կան բարդ բառեր, որոնց բաղադրվող հիմքը դերանուն է, իսկ բաղադրողը՝ բայական այս կամ այն կարգի միավոր: Օրինակ՝ «այդէ. id non est (dictio composita)». Ռ-ՀԼԲ, 19)¹: Այսպէս նաև *խրակամ* (ՎՊԱ, էջ X), քոյածին (ՀՇԳԱ, 327) և այլն:

զ) Նախորդի նման հանդիպում են բարդ բառեր՝ բաղարկված թվականով և այլ խոսքիմասային միավորով: Օրինակ՝ *եռակող(ք)* (ԽԷՀԻ), *եռատառ* (ՍԳ-ԲՎ, 27), *երկատառ* (ն.տ., 19-20) և այլն:

է) Վերջապես, անհնչյունափոխ բաղադրվող հիմքով բարդություններից հանդիպում են *ա* հոդակապով այնպիսի բարդ բառեր, որոնց բաղադրիչներից առաջինը օտար փոխառյալ միավոր է, իսկ երկրորդը՝ այլևայլ խոսքիմասային միավոր: Օրինակ՝ *աթենաբարոյ* (ՍԼՏ, 27), *ասպիզարնթաց* (լատ. թոննէամէնթում. ՎՅԲ, I, 2, այլև ն.տ., II, 297, ԱԳԲ, 61, նաև *ասպիզանթացս* սխալագրությամբ. ՅՊՁ, I, 135), *արիոսադան* (ՌԵՄ, էջ II), *երիքովասարաս* (ՀՇԳԱ, 290), *կայենածին* (ՌԵՆ, էջ II), *փախադատան* (ԳՋԳԱ, 99, ԳՄԳՎ, 17) և այլն:

2) Հոդակապով բաղադրված բարդ բառերի մյուս խումբն, իր հերթին, որոշակի հատկանիշների հիման վրա կարելի է բաժանել մի քանի ենթախմբի: Ի համեմատություն նախորդ՝ չհնչյունափոխված բաղադրվող հիմքերով կազմությունների այս դեպքում գործ ունենք բաղադրվող հնչյունափոխված հիմքերի հետ: Նման բաժանումը պայմանական է՝ կապված հատկապես արտահայտության պլանի հետ, իսկ բովանդակության պլանում ունենք սովորական, ինչպես նաև տերմինային նշանակությամբ նոր բառեր:

ա) Այստեղ ամենից առաջ առանձին խումբ են հանդիսանում գոյականական բաղադրվող և բաղադրող հիմքերով բարդությունները, ընդ որում լատինաբան հայերենի բառապաշարի մեջ դրանք զգալի թիվ են կազմում: Հնչյունափոխական տարբերակներով բաղադրվող հիմքերը դեռևս պահում են հին գրական լեզվի բառակազմական առանձնահատկությունները, այսինքն՝ լատինաբան հեղինակներն այդ հարցում հետևողական են, հարում են հայերենի բառակազմական նման ավանդույթին: Օրինակ՝ «Ջի ի ձեռն *կուսարողքոջ* գինույն, զնախանձ ողջախոհութեան արբիցիմ» (ՍԼԲԱ, 169), «Են օճաբարոյք, կատաղիք և անմիտք... են կլանօքք, անյանգք, աղտեղիք և *գօմշածնօտք*» (ՄՄՁ, 5808, 102բ):

¹ Ռիվոլայի բառարանում բառն, ավելի ճիշտ՝ ստորադասական կառույցը բերվում է իբրև բառային մեկ միավոր՝ տերմինային նշանակությամբ:

«Յամի տեառն ԾԱ. որոմնացան ոմանք, և *կռուանիթ*, որք ի թլփատութենէ անտի էին» (ՎՄԳ, 89) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ կազմությունները. *աղաւանամիտ* (ՌԵՄ, էջ II), *արծաքար* (ՎԲԻ, 50), *գրաքառ* (փխ. *բ*-ով. ՄՍԶ), *գրգատուն* (փխ. *բ*-ով. ՄՍՁ, 7554), *եղնգնան* (ԹԻԲ, էջ թ), *երկրագունտ* (փխ. *դ*-ով. ՎԲԻ, 42), *թղթահամար* («էջ», ՍԼՏ, 25, 79, ՆՏ, 218), *իշարնութ* (փխ. *ոյ*-ով. ԳՄԳՎ, 38, 41, 46, 49), *լուսասարփ* (ՍԿԱ, 197), *լուսատրչակրօն* (ՀՇԳԱ, 491), *խտտացաւ* (լատ. օֆթալիմայ. ՎՅԲ, I, 40, այլև ն.տ., II, 315, նշանակում է «հիւանդութիւն իմն աչաց»), *ծաղկագիր* (իմա՝ զարդագիր. ՄՍԶ), *կարատաղտուկ* (ՎԲԻ, 27-28), *հանգստաջոր* (ՀՇԳԱ, 155), մխատեսակ (ՎԲԻ, 27), *պղնձածրծումք* (փխ. առանց *ը*-ի. ՎԲԻ, 55), *ջրատաղտուկ* (ն.տ., 27), *սնդկածրծումք* (փխ. առանց *ը*-ի. ն.տ., 55), *քթախտտ* (ԹԻԲ, 711) և այլն:

բ) Մեկ այլ խումբ են կազմում այն բարդ բառերը, որոնք բաղադրված են գոյական բաղադրվող և այլ խոսքի մասի պատկանող (հիմնականում՝ բայարմատ) բաղադրող հիմքերով: Այս կարգի բաղադրությունները նույնպես քիչ են: Օրինակ՝ «Եւ ընդէր են այդպէս *քրթաթափք*» (փխ. առաջինը *դ*-ով. ԳԼՀ, 133): «Եւ սրտիւ միշտ *թաղծաղիտի* ըննաւում դեգերեցից» (փխ. *խ*-ով. ՅՊՁ, I, 6, այլև ն.տ., II, 24) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *աղմկափաթոյթ* (ՅՊՁ, 4, այլև ՎՅԲ, II, 292, ԱԴԲ, 23), *ամսագուրկ* (ՄՍՁ, 5808, 152ա), *գլխածիր(ք)* (ՎՈԴ, 13), *գլխակոր* (ՀՇԳԱ, 493), *դեղնաշորթ* (ՎԲԻ, 23), *դրդալուր* (ԳՄԳՎ, 235), *երկնանկատ* («մի տեսակ ձուկ». ՄՍՁ, 5808, 99բ), *ըղձաբորբոք* (ՍՓ, 33), *թիւնախառն* (փխ. *ու*-ով. ՍԼՏ, 79), *լուսագար* (իմա՝ «խանգարեալ ի լուսոյ, կոյր, զաչացու». ՎՅԲ, II, 33), *լուսատրչաղաւան(ք)* (ԳՄԳՎ, 38), *լուսատրչահիմն* (ՀՇԳԱ, 503), *խցակաց* (ԳԱԼ, 24) *հողմաշատ* (ՎՀՀ, 59), *մարգարտամալիճ* (ԹՄՄ, 12)¹, *մարմնագուրկ* (ՀՇԳԱ, 213), *մարմնածիր(ք)* (ՎՈԴ, 13), *միգալից* (ՄԵՀ, 19), *մոխրաշաղ* (ՎԲԻ, 23), *մրահար* (ՍՍԼՏ, 159), *պատժամատն* (ՀՇԳԱ, 29), սաստկատանջ (ն.տ., 321), *վիմահերձ* (ԹԻԲ, 13), *վիրատղջ* (ՀՇԳԱ, 11), *վշտապատ* (ՌԵՆ, 293) և այլն:

գ) Բարդ բառեր, որոնք բաղադրված են ածականական, մեծ մասամբ՝ հնչյունափոխված բաղադրվող և այլ խոսքիմասային (հիմնականում՝ գոյականական) բաղադրող հիմքով: Օրինակ՝ «Խորհանատես և *խղճակերպ* դէմք

¹ Անհասկանալի է մնում սույն բաղադրության երկրորդ բաղադրիչը, ուստի նշում ենք բնագրային գործածությունը. «Եւ մեծամեծք մարգարտովք շրջապատեալք զարդարեցար զիսկահանգոյն հասակ դորա, այլև ծովայնօք ծիրանօք օքունականօք *մարգարտամալճօք*»:

երեսաց, խղճագնաց և խոնարհագնաց քայլք ոտից... և այլք սոյնպիսի տեսիլք» (ԽԷՃ, 105): «Եւ զկնի զմարմնոյ դնէ և ասէ. արագ, ժիր առողջ, *փասփկամարմին*, յաղթանդամ, զօրաւոր...» (ԳՁԲ, 121) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *գեղեցկահեր* (ԳՁԲ, 121), *լրբադէմ* (ՈԵՄ, էջ II), *խղճատեսիլ* (ԽԷՃ, 105), *հասարակագիշեր* (լատ. *aequinoctalis*, ԿԳՔ, 15ա, այլև ՄՄՁ, 7560, 21ա), *ճշմարտամնան* (ն.տ., 12), *նրբագննին* (փխ. մեկ *ն*-ով. ՄՄԳԺ, 23), *քնքշարուրդ* (ՄՄՁ, 5808, 85ա) և այլն:

դ) Բարդ բառեր, որոնք կազմված են մակբայական բաղադրվող և այլ խոսքիմասային միավոր հանդիսացող բաղադրող (գոյական, բայարմատ և այլն) հիմքերով: Օրինակ՝ «*Սկզբնախաղ*. յատկապէս կոչի նախանուագումն այն հանդարտիկ, և համաձայնութիւն աղետաց քնարին և այլոց գործեաց երաժշտականաց. լատ. փռէլուտիում» (ՅՊՁ, 64-65):

Այսպէս ունենք նաև հետևյալ բառերը. *բազմակող(ք)* (ԽԷՀԻ), *միջածիր(ք)* (ՎՈԴ, 13), *յետնամնայ(ք)* (ՄՄԳԺ, 59), *շրջանկատ* (ՆՅՀՄ, 7), *սկզբնագիր* (ԹԻԲ, էջ գ), *սկզբնատոխսն* (ՀՇԳԱ, 3), *սկզբնասերմն* (ՎԲԻ, 10, 32), *վերջնավանկ* (ՍԳՔՎ, 31) և այլն:

ե) Հանդիպում են հնչյունափոխված բաղադրվող հիմքով բարդություններ,, որոնք ներկայացնում են ածականի և բայարմատի բաղադրություն: Օրինակ՝ *զագրամիտ* (ՍԽՎ, 42), *խղճագնաց* (ԽԷՃ, 105) և այլն:

զ) Կան բարդ բառեր, որոնց բաղադրվող հիմքը թվական է կամ բայարմատ,իսկ բաղադրող հիմքը՝ գոյական: Օրինակ՝ «Աշունն հողմաշատ և առողջարար, որք իցեն *բազմախաղող*» (ՎՀՀ, 59): Այսպէս ունենք նաև *ծխախոտ* (ԹԻԲ, 248), *հնգավանկ* (ՍԳՔՎ, 36) և այլն:

է) Մի խումբ բարդ բառեր, որոնք բաղադրված են *ա* հոդակապով, և վերջինս բաղադրվող հիմքի վերջին ձայնավորի հետ ենթարկվել է հնչյունափոխության (*ի - ա > եա* տիպի), հանդես են գալիս գոյական կամ ածական բաղադրող, այլև գոյական կամ բայարմատ բաղադրվող հիմքերով: Նկատենք, որ նման կազմությունները մեկ խումբ են դառնում վերը հիշված հնչյունափոխության հանգամանքի նկատառումով: Օրինակ՝ «Ակնարկիցենք ի *հոգեյորդոր* արտադրութիւն սորին» (ՅԿՊՄ, 6), «*Քաղենուագ*. տեսակ իմն վարժելոյ զտաղս բանաստեղծականս, նորում թագաւորաց և իշխանաց... թշնամութիւն և տառապանք արտացոցանին. լատ. թրաջէտիա» (ՎՅԲ, II, 341):

Այսպէս ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *բարեգարկ* (ՍԿԱ, 39), *բարեսովոր* (ն.տ., 26), *հաշուենուտ* (լատ. փոռուէնթու. ՅՊՁ, 46, այլև ՎՅԲ, II, 320, իմա՝ «պտուղ և շահ տարեկան»), *մահեթոյն* (լատ. թաքսիքայ. ՅՊՁ, 50-51, այլև

ՎՅԲ, II, 322, իմա՝ «մահադեղ իմն, կազմեցեալ ի թունալեաց սաղարթից մահեկանն»), *ոսկեսպիհն* (ԹԻԲ, 21), *սրդոտենուագ* (տեսակ իմն բանաստեղծականի վերաճառութեան, լատ. քօմէտիա, ՅՊՁ, 62-63, այլև լատ. կօմէդիա, ՎՅԲ, II, 330, նաև «ի սրդոտենուագս, ի պարս, յասպիզանթացս (փխ. ք-ով. Վ. Հ.) և ի խաղս տեսարանականս մի հայիցիս բնաւ»), ՅՊՁ, I, 135)¹:

ը) Վերջապես, հանդիպում են բարդ բառեր, որոնք անկախ հոդակապով կամ առանց հոդակապի բաղադրված լինելու հանգամանքից, ներկայանում են տարբեր կարգի թեք հատկապես այս կամ այն հոլովով դրված ձևեր հանդիսացող բաղադրվող հիմքերով: Օրինակ՝ «իսկ միսն՝ որ դաւանէր զանապականութիւն, կոչեցաւ *սռաչօքապաշտ* (լատ. *incorruptibilitatis*), (ԳՄՀ, I, 89): «Կածեն թէ ամենայնք յագեցեալք իցեն խոտիւն *կենաստի* (փխ. *կենաստու*, ավելի ճիշտ՝ *կենաստու* – Վ.Հ.), մեռանին և ծիծաղին (ՅՊՁ, I, 62) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *կենակիր* (լատ. սփիրիթուս. «նախապետական կամ զօրութիւն հոգւոյն». ՎՅԲ, I, 42, այլև ՎՅԲ, II, 317), *համբերողապետ* (ՀՇԳԱ, 4), *մեղսաթող* (ն.տ., 214), *փառագիր* (ՄՍԲ), *փութովաշարժ* (ԽԷՃ, 105), *քոյինասպատուէր* (ՎՊԱ, 5) և այլն:

3. Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ նորակազմ բարդ բառերի մի որոշակի մասը բաղադրված է առանց *ա* հոդակապի, այսինքն՝ գործ ունենք այսպես կոչված անհոդակապ բաղադրությունների հետ՝ իրենց բառակազմական ներքին առանձնահատկություններով հանդերձ:

Նման բաղադրություններն առանձնացնում ենք ամենից առաջ նկատի ունենալով բաղադրվող և բաղադրող հիմքերի խոսքիմասային պատկանելությունը, որն ավելի պարզ միջոց է նորակազմությունների տարածամանակյա (պատմական) ուսումնասիրության համար:

ա) Անհոդակապ բարդ բառեր, որոնք ունեն միայն գոյականական բաղադրող և բաղադրվող հիմք: Օրինակ՝ «Ձի եղեալ են միջնորդ և *բոզաւագ* առ ի ամել գկին» (ՄՊԽ, 90): «Մի թէ դանակն չհատաիէ գիացն եթէ փղոսկր և մարգարիտք ոչ շողշողեցին *ընրռնետողում*» (ՅՊՁ, I, 75, այլև *բռնետղ*. «ետղ, ռամկ. կոթ». ՎՅԲ, II, 302): «Առաքել առ ի *տնտեստունն* երկնային» (ԳՄՀ, I, 12) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը. *ալքրմաղ* (փխ. առանց ք-ի. Ռ-ՀԼԲ, 6), *ալքրտուն* (փխ. առանց ք-ի. ն.տ.), *ակրագն* («մի տեսակ ձուկ» ՄՍՁ, 5808, 99բ), *ամսանել* (լատ. *finis mensis*. ըստ իս՝ *ամսան-ել* «ամսվա ելք՝ ավարտ, վերջ».

¹ Առայժմ անբացատրելի է մնում *սրդոտենուագ* բարդության առաջին բաղադրիչը:

Ռ-ՀԼԲ, 19, հականիշը՝ *ամսամուտ*, լատ. *initium mensis*. ն.տ.), աչարձակ (ՄՊԿ, 15), *խաղենդ* («հրապարակ և տեղի խաղից»։ ՎՅԲ, II, 312), նապաստոտն (իմա՝ «Մասունք աղանոյ *նապաստոտի* և արտակենի. աղանին *նապաստոտն* և արտակեանն ունի գոտս և զկտուցս փետրաւորս», ՄՄՁ, 5808, 99ա), *նոտրգիր* (ԿԳԲ), *շնճուկն* (ՄՄՁ, 5808, 99բ), *ջրարծաթ* (ՎԲԻ, 69) և այլն:

բ) Անհողակապ բարդ բառեր, որոնք կազմված են գոյականական բաղադրվող և բայարմատ բաղադրող հիմքերով: Օրինակ՝ «Ձչար աղանդն և *ասորաւանդ* օտար ուտումն» (ՎՄԴ, 54): «*Մահեկ*. ձառ (փխ. ծ-ով. Վ.Հ.) իմն ըստ նմանութեան գիհոյ, որոյ սաղարթքն ունին յինքեան գթոյն, մանաւանդ Իսպանիայ և յԱրքատիայ. լատ. *թաքսուս*» (ՅՊՁ, 50, այլև ՎՅԲ, II, 322)¹: «Որք վսեմախոհք և *ոգիրնկալք* են» (ՈԱ, էջ գ): «Երիգարն ընկրկոտ և *սանճրնկէց*» (ՅՊՁ, I, 85) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *խկատ(ք)* (ՅՊՁ, I, 2, այլև ն.տ., II, 21)՝ իմա՝ «զուրկ ի ճշմարտութենէ»), *ուռնաս(ք)* (իմա՝ «խրթնացեալ ծիրեաւ *ուռնասիցդ* երիտասարդութեան»։ ՅՊՁ, I, 33), *ծղարձակ* (իմա՝ *ծղարձակք* թռչունք. ն.տ., 85), *կենաստ* (լատ. սառտօնիայ. ՎՅԲ, I, 43, այլև ն.տ., II, 317. իմա՝ «խոտ իմն թունալի, որ բուսանի ըն կղզոջն Սարտիներայ»։ հմմտ. *խկատ* նորակազմութիւնը), *կերարկ* «մաղելու փող. ամեն ինչը ուտելուն տրվող»։ ՎՅԲ, I, 43, այլև ն.տ., II, 318), *հնարանգէտ* (ՄՍԼ, 56), *նշանատ* «ցուցակ ինչ և նշան արհամարանաց, որ լինի ի շարժ առոցելոյ ձեռին, շրջածութեամբ աչաց կամ առոցմամբ այլոց անդամոց» (ՎՅԲ, II, 327), *սերմնարար* (ՄՄՁ, 3640, 59բ) և այլն:

գ) Անհողակապ բարդ բառեր, որոնք կազմված են ածականական բաղադրվող և այլևայլ խոսքի մասի պատկանող բաղադրող հիմքերով: Օրինակ՝ «Հայեաց.. *երբնորակիցն* խորտկաց» (փխ. *փ-ով*. Վ.Հ., ՅՊՁ, I, 47): «Գթալով և սիրով խօսի կակուղ, *թոյլանուշ*, լալագին դիմօք» (ԴՉԲ, 73) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերը. *ազատարհեստ* (իմա՝ բառակապակցությունը վերածված է բարդության. ՎՈԴ, 9), *եզանուն* (ՅԲԲ, 168), *եփներփ* ((թերևս *երփներփն*, որից *եփներփիւք*. ՄՖՄԱ, 176), *ձրիառեք* («անվճար առնելը՝ վերցնելը»։ ԳԱԼ, 12), *չարեպէս* (լատ. մալէ. ՅՊՁ, 61), *չարոտք* (լատ. մալէ, հոմանիշ՝ *չարեպէս-ին*, ն.տ.) և այլն:

դ) Բարդ բառեր, որոնք միացած են առանց հողակապի, բաղադրվող հիմքը թվական անուն է, իսկ բաղադրողը՝ այլևայլ խոսքիմասային միավոր:

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *մահեկի*, որ հղում է *մեհեկի* կամ *մեհեկան* «ամիս հայոց՝ ըստ անշարժ տոմարի համեմատ փետրվարի» (հ. 2, էջ 197, 245), որն ամբողջովին այլ է:

Օրինակ՝ «Միանդր. կոչի ձողաձև նիշն, զոր կառուցանեն նասպարիզում, վասն խաղաց ընթացականաց» (ՎՅՊ, II, 32, այլև լատ. մեթա. ՅՊՁ, 53):

Այսպես ունենք նաև հետևյալ բարդ բառերը. *եռանդամն* (ԽԷՃ, 219), *երկանդամն* (ն.տ.), *երկկերպարան* (ԹԻԲ, 15), *միանդամն* (ԽԷՃ, 219), *քառանդամն* (ն.տ.) և այլն:

ե) Անհողակապ բարդ բառեր, որոնց բաղադրվող հիմքը չթեքվող խոսքիմասային միավոր է (հիմնականում՝ մակբայ), իսկ բաղադրող հիմքը՝ տարբեր խոսքի մասերի պատկանող բառ: Օրինակ՝ «Յամենօր գնայր ի ծածուկ և կտոր մի հաց արւանէր նմա ի գուրն (իմա՝ բառակապակցությունը վերածված է բարդության. ԳՄՀ, I, 17): «Կամ ինքն *անդրանցանիցի* ի յայլ» (ՄՄՄՄ, 242):

Այսպես ունենք նաև հետևյալ կազմությունները. *սպահովարար* (ՍՁԲ, 44), *բազմանուն* («հոգնակի թիվ». ՅԲԲ, 168, «Լեզվաբանական բառարանն» ունի այլ՝ «փաղանուն, հոմանիշ» իմաստով), *երբև* («մակբայ ժամանակական... նշանակէ ևս ուրեք ուրեք, երբեմն». ՎՅԲ, II, 306), *ընդհոծ* (յաճախագոյն և երկարաձիգ. երբեմն նշանակէ խիտ առ խիտ». ն.տ., 308), *կախել* (սեռ.՝ *կախելի*. «բարակագոյն և խիտ մասնիկն այն ամենից պտղոց, յորմէ կախին յոստոյ ծառոյն, զոր ռամկօրէն կոթ անուանեն». ն.տ., 316), *մերձնիթ* (ՎԲԻ, 67), *մերձնկոթ* (ն.տ.), *սակաւեփ* (ն.տ., 68), *սակաւինչ* (ՎՄԴ, 17) և այլն:

զ) Սակավաղեպ հանդիպում են նաև անհողակապ բարդ բառեր, որոնք կազմված են բայարմատ հանդիսացող և այս կամ այն խոսքի մասի պատկանող բաղադրող հիմքերով: Օրինակ՝ *գումարետող* (այն է՝ *ընգումարետողում*. իմա՝ «հավաքատեղի». ՅՊՁ, I, 150, այլև ՎՅԲ, II, 303, ընդ որում՝ «տեղի գումարման մարդկանց, կամ այլոց իրաց» բացատրությամբ), *շարժառիթ* (լատ. մօրթիվուս. իմա՝ «նշանակէ զպատճառն զայն, յորմէ շարժենք, առ ի առնել զայս ինչ կամ զայն». ՅՊՁ, 59) և այլն¹:

4. Լատինաբան հայերենն անհամեմատ հարուստ է ածանցավոր բառերով, որոնք իբրև նորաբանություններ ինչ-որ չափով համալրում են հայերենի ընդհանուր բառապաշարը: Այստեղ առավել ուշադրություն են գրավում նախաձանցավոր բառերը, քան մյուս՝ վերջաձանցավոր կամ այլ կարգի կազմություն ունեցողները:

Նախ, հայերենն առհասարակ հարուստ չէ նախաձանցներով, որպեսզի դրանց միջոցով մեզանում կազմվեին նոր բառեր: Նշենք նաև, որ հին գրական

¹ Նկատենք, որ շատ հազվադեպ, սակայն հանդիպում են նաև այս կամ այն բաղադրիչով միացած կրկնական բարդության օրինակներ. *մերթընդմերթ* (լատ. *սեսպէ*. ՎՅԲ, II,

հայերենի ներսում դեռևս հունաբան դպրոցի ներկայացուցիչների միջոցներով ստեղծվեցին զգալի թվով նախաձանցներ, որոնք բավականին կարևոր նպաստ բերեցին հունարենից կատարվող թարգմանությունների ընթացքում, իսկ հետագայում մեծ մասամբ դարձան մեր լեզվի բառակազմական միջոցների ոչ պակաս կարևոր մաս:

Այնուհետև, միջին գրական հայերենի շրջանում, հատկապես 14-րդ դարից սկսած, զուգահեռաբար գործառող գրաբարի համակարգի մեջ ևս արհեստական միջամտությամբ լայն գործածության արժանացան նախկինում կազմված նախաձանցները: Այս դեպքում գործածությանը զարկ տվողները լատինաբան դպրոցի ներկայացուցիչներն էին, որոնք հետևելով հունաբան դպրոցի ավանդույթին՝ հայերենի մեջ, այս անգամ արդեն, լատիներենի օրինակով, ստեղծեցին բազմաթիվ բառեր, որոնք առավելապես պարունակում էին հունաբան դպրոցի նախաձանցները՝ իբրև արտահայտիչ լատիներենի այս կամ այն ածանցի:

Նկատենք նաև այն, որ հունաբան դպրոցի կազմած նախաձանցներն այս դեպքում մի տեսակ ստանում են նոր իմաստավորում: Եթե նախկինում դրանք արտահայտում էին հունարենի այս կամ այն նախաձանցի իմաստը, ապա համեմատաբար նոր ժամանակներում դառնում են լատիներենի որևէ ածանցի իմաստի արտահայտիչ: Այս նկատառումով թերևս կարող ենք նշել, որ հունաբան հայերենի մեջ ստեղծված նախաձանցները գործածվում են իբրև լատինաբան հայերենի նախաձանցներ՝ ձեռք բերելով լատիներենի այս կամ այն ածանցին համարժեք իմաստ: Առաջանում է ոչ միայն հունարենի և հայերենի, այլև լատիներենի և հայերենի բառակազմության բովանդակության պլանի համարժեքություն: Այսպես, օրինակ, հայ. *սպ(ս)*- մասնիկն իբրև բառակազմական բաղադրիչ համապատասխանում է հուն. *apo, ap, af*, ինչպես նաև լատ. *ab, a* նախաձանցներին, հայ. *արտ(ս)* - մասնիկը՝ հուն. *ex, es*, լատ. *ex* նախաձանցներին, հայ. *դեր(ս)*- մասնիկը՝ հուն. *anti*, լատ. *pro contra, re* նախաձանցներին, հայ. *ենթ(ս)*- մասնիկը՝ հուն. *wpo*, լատ. *sub* նախաձանցներին և այլն: Կարծում ենք, որ ընդհանուր հայերենի բառակազմության պատմության տեսակետից հայերենի միջոցներով կազմված և հունաբան նախաձանցներ անվանումը կրող բաղադրիչները հավասարապես պիտի դիտվեն նաև լատինաբան անվանումով, թեև կազմության

343), *փոյթընդրստ* (լատ. պրօտինուս. ն.տ., 340, նաև ՅՊՁ, 77, լատ. փոթինուս նշումով), *եզանմու* «մեկառմեկ». ՅՊՁ, I, 269, 283) և այլն:

շարունակությունը գտնում ենք լատինաբան հայերենի բառապաշարի համակարգում, եթե ոչ առհասարակ հայերենի բառապաշարի ոլորտում:

Այս մոտեցումն անհրաժեշտ է ոչ միայն ինքնին, այլև հայերենի լեզվական երևույթի պատմական ուսումնասիրության տեսակետից:

1) Լատինաբան հայերենի բառապաշարի, հատկապես վերջինիս նորաբանությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործածված են մոտ երկուսուկես տասնյակ նախածանցներ, ընդ որում հիմնականում այսպես կոչված թեմատիկ (բնակագմ) *ա* բաղադրիչի հետ միասին, և շատ քիչ դեպքերում է, որ հանդիպում են առանց այդ բաղադրիչի կազմություններ:

Եթե մի կողմ թողնենք հայ. *ան-*, *չ-* և *տ-* նախածանցները, ապա լատինաբան հայերենի նորակազմ նախածանցավոր բառերը հիմնականում բաղադրված են հետևյալ նախածանցներով. *ապ(ա)-*, *առ(ա)-*, *արտ(ա)-*, *բաղ(ա)-*, *բաց(ա)-*, *գեր(ա)-*, *դեր(ա)-*, *ենթ(ա)-*, *հակ(ա)-*, *համ(ա)-*, *մակ(ա)-*, *յար(ա)-*, *նախ(ա)-*, *ներ(ա)-*, *շար(ա)-*, *ստոր(ա)-*, *վեր(ա)-*, *տար(ա)-*, *տրամ(ա)-*:

Ստորև անդրադառնում ենք հիշյալ, ինչպես նաև մյուս նախածանցներով բաղադրված նոր բառերին՝ առանձին-առանձին, հարկ եղած դեպքում նշելով նաև լատիներեն այն ձևը, որից պատճենվել կամ որի օրինակով և որի հիման վրա կազմվել է այսինչ կամ այնինչ բառը:

ա) *Ան-*. այս նախածանցը հունաբան դպրոցի կողմից կազմվածը չէ, այլ առհասարակ հայերենին բնորոշ նախածանցական մասնիկ է, որով նոր բառեր են կազմված նաև լատինաբան հեղինակների երկերում, ընդ որում ոչ միայն ժխտական, այլև լատիներենին բնորոշ՝ «դեպի, վրա, մոտ» մասներով: Օրինակ՝ «Եւ վասն մերոյ փրկութեան *անգգեցաւ* (իմա՝ «առավ, ստացավ, ունեցավ» Վ.Հ.) մարմին երանելի սուրբ կուսէն» (ԳՃՈԻՀ, 10): «*Անժուր*. նուազ և անգօր, կամ ոչ պարարտ» ՎՅԲ, II, 292)¹ և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախածանցավոր բառերը. *անլսորթ* (լատ. *audire renuens*. ՌՀԼԲ, 28)², *անկարելոչ* (հոգն. *անկարելչունք* «տեղի ինչ շրջափակեցեալ պատուարաւ և լարաբաժանեցեալ ի ներքս յորձապտտիք ճանապարհօր և համանմանիք». (ՎՅԲ, II, 293), *անպէսպիսարանութիւն* (ԽԵՃ, 278), *անուժեղ* (ԳՁԲ, 112) և այլն:

բ) *Ապ(ա)*. *յապառեմ* (լատ. նեկլիկօ. ՅՊՁ, 56, այլև լատ. նեգլիգօ գրությամբ. ՎՅԲ, II, 326), *ապսուրեմն* (հմմտ. արդուրեմն, ապա՝ լատ. *ergo*,

¹ Հայ. բարբառներում ունենք *անժուր* «անյուղ՝ առանց յուղի պատրաստված (կերակուր)» (Մուշ):

² «Նոր հայկազյան բառարան» ունի *անլորդ*՝ «իբր անլտղ» իմաստով:

igitur. ԿԳՏ, 3բ, այլև ՄՄՁ, 7560, 5ա), *աստերջան* (լատ. ինֆելիքս. ՎՅԲ, I, 10, այլև ն.տ., II, 295) *աստառոգես* (լատ. ռեմունցիո. ՎՅԲ, I, 9-10, այլև ն.տ., II, 295), *աստաշնորհ* (հմմտ. անշնորհ. լատ. privatus gratia. ԿԳՏ, 3բ, այլև ՄՄՁ, 7560, 5ա) և այլն:

զ) *Առ(ա)*-. այս նախածանցով կան համեմատաբար մեծ թվով բառեր: Օրինակ՝ «Բառից կարգ և դասք առ հայս են ինն. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, յօդ, *առանուն*, որ և նախդիր, առբայ կամ մակբայ, շաղկապ և միջարկութիւն» (ՎՈԳ, 15): «Եւ ինծն (փիս. ձ-ով. Վ.Հ.) ընդ ուլոյ *առպատկեսցի* (ՄՖՄԱ, 73-74) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախածանցավոր բառերը. *առագրել* (ԱԳԲ), *առակցել* (ն.տ.), *առատրես* (ՄՄԳԺ, 28), առբայ (ՎՈԳ, 15. իմա՝ վերը բերված օրինակը), *առեզերել* (ՆԳԱ, 192), *առընկալես* (ՄԵԳԱ, 23), *առնանիլ* (ՅՊՁ, I, էջ իգ, այլև ն.տ. II, 17), *առխառնեցեալ* (ՅՊՄ, 24), *առյարիլ* ՅՊՁ, I, 3, այլև ն.տ., II, 21), *առյենուցում* (ն.տ., I, 7, այլև ն.տ., II, 24,) *առնմանիլ* (ՄՖՄԱ, 367), *առպահես* (ԹԽ, 38), *առատանամ* (ՄՄԳԺ, 4) և այլն:

ը) *Արտ(ա)*-. հաճախակի են հանդիպում նաև այս նախածանցով քաղաղրված բառերը: Օրինակ՝ «Եւ *արտաբխեսցես* ինձ զիս քաղցրագունեդս և փրկաւետագունեդս» (ԽԷՀՄ, 205): «Եւ լոյսն ի ճաճանչէն *արտագայեցեալ*... միայնակ փաղառնեն զարեգակն» (ՄՖՄԱ, 90) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախածանցավոր բառերը. *արտաբխեալ* (ՄՄՁ, 672, էջ 5ա, հմմտ. վերը՝ ղ-ով), *արտակայանալ* (ՄՄՁ, 5808, էջ 79ա), *արտակեան* («կյանքից դուրս». ՄՄՁ, 5808, էջ 99ա), *արտահեղեալ* (ԽԷՀՄ, 11, 12), *արտահնչել* (ՄԳԶՎ, 19), *արտասուզեցեալ* (ՅՊՁ, I, 40), *արտավանել* (ՄՖՄԱ, 25), *արտափաստել* (ՊԶՎ, 277), *արտափշել* (իմա՝ արտափշիցէ ի քմաց. ՄՄՁ, 5808, 86ա), *արտաքարշել* (ՈԱ, էջ է այլև ՅՊՁ, 77), *արտաքրատական* (փիս. առանց ք-ի. ԳՄՀ, Իբ, 175), *արտաքրատապէս* (փիս. առանց ք-ի. հմմտ. վերինի հետ. ն.տ., Իբ, 177), *արտելանիցես* (ՅՊՁ, I, 6, այլև ն.տ., II, 24) և այլն:

ե) *Բաղ (ա)*-. այս ածանցով կազմվել են շատ հազվադեպ բառեր: Օրինակ՝ «Որ կարիցէ *բաղազանիլ* ձայնի» (ՅՊՁ, I, 59) և այլն:

զ) *Բաց(ա)*-. հայերենում առհասարակ լայն գործածություն ունեցող նախամասնիկներից է, և լատինաբան հեղինակները նույնպես այն գործածել են բավականին հաճախակի: Օրինակ՝ «Եւ զայլս յոքունս ի նմանէ *ի բացբառնեցեալս*» (ՄՖՄԱ, 30)¹:

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *բացբառնալ* կանոնավոր կազմությունը:

Այսպես ունենք նաև հետևյալ նախածանցավոր բառերը. *բացաբանեմ* (ՄՖՄԱ, 14), *բացառոցել* (ՄՄԳԺ, 28, ՅՊՍ, 28), *բացադնիմ* (ն.տ., 24), *բացաթողանիլ* (ԱՄԴՀ, 24), *բացերևցել* (լատ. *enunciare*, ԿԳՔ, էջ 6բ, այլև ՄՄՁ, 7560, էջ 9ա)¹, *բացահեռանալ* (ՄՍԼ, 56, ԱՄԴՀ, 51), *բացակորզել* (ՅՊՁ I, 11, այլև ն.տ., II, 27), *բացաքարշել* (ՄՄԳԺ, 26) և այլն:

է) *Գեր(ա)*-. այս նախածանցով կազմած բառերն անհամեմատ քիչ են, ունենք մեկ-երկու օրինակ՝ *գերաքարձր* (ՄՆ, 6), *գերապատուեմ* (իմա՝ «գերապատուեմ և վերընդունիմ զժողովս ընդհանրականս». ՎՄԴ, 6) և այլն:

ը) *Դեր(ա)*-. ունենք հետևյալ բառերը. *դերբայ* (ՅԿՔ), *դերածայն* (իմա՝ հայ. յ հնչյունի անվանումը. ԿԳՔ)², *դերյարդեմ* (իմա՝ «զթիրեցեալն և զխանգարեցեալն վերստին ուղղեն և յարդարեն». լատ. *եմենտո*, ՎՅԲ, II, 304) և այլն:

թ) *Ենթ(ա)*-. այս նախածանցով ևս բավականին քիչ թվով բառեր են կազմված լատինաբան հեղինակների կողմից: Օրինակ՝ «Որ յինքեանն և ինքեամբ կատարելապէս *ենթադրյանայ*, և ոչ նայլում ենթակայող, լատ. *non in alio supposito*». ԳՄՀ, II, 373, այլև ն.տ., 250, *ենթադրյանայ* – լատ. *subsistit*. ԳՄՀ, II,բ, 29) և այլն: «Չի ըն բոլորում այսմիկ պանդխտութեան *ենթապահիցէ* զմեզ հացիս հոգեկանաւ և մարմնականաւ» (ՊԲՎ, 122) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախածանցավոր բառերը. *ենթաբերիլ* (ՄՊԽ, 159), *ենթայդատէ* (իմա՝ ենթադատիմ. ՄՄՁ, 69, 273ա), *ենթալնուլ* (ՊԲՎ, 251)), (ՊԲՎ, 251), *ենթալսեմ* (լատ. *subaudio*. ՆԼՀԲ, 514), *ենթալուսնի* (սեռ. հոլ. ենթալուսնոյ, լատ. *sublunaris* ԿԳՏ, 9ա, այլև ՄՄՁ, 7560, 12բ)¹, *ենթակարծեմ* (լատ. *subdubito*, ՆՀԼԲ, 514), *ենթատրեմ* (լատ. *subdo*. ն.տ.), *ենթարկական* (այլև առարկայական, լատ. *subiectivus*, նաև *obiectivus*. ԿԳՏ, 9ա, այլև ՄՄՁ, 7560, 13ա), *ենթարկանելի* (ՅՊՍ, 168) և այլն:

ժ) *Հակ(ա)*-. այս ածանցով հանդիպում են սակավաթիվ, աննշան բառեր. «Կարիցելի *հակարկել* ձեզ զբազումս հերետիկոսութիւնս» (ՄՖՄԱ, 370):

ժա) *Համ(ա)*-. այս ածանցով ունենք հետևյալ նախածանցավոր բառերը. *համազանազանիմ* (այլև *համազանազանեալ*. ՄՄՁ, 672, 38ա), *համաժողովել* (ՄՄԳԺ, 11), *համայրացեալ* (ՊԲՎ, 93), *համահաշուիլ* (իմա՝ «համահաշուիլ ընհետազօտութեան երկնայնոյ և իսկունակի հայրենոյն» ՅՊՁ, I, էջ գ, այլև ն.տ., II, 4), *համակապեալ* (ՀՇԳԱ, 490) և այլն:

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *բացերևել*, *բացերևեցունել* ճիշտ ձևերը:

² Հմմտ. *Գ.Ջահուկյան*, Գրաբարի քերականության պատմություն, էջ 27 :

ժբ) Մակ(ա)-. այս ածանցով ունենք սահմանափակ թվով բառեր. *մակաթուեմ* (իմա՝ «ոչ մակաթուե վիպասան որ». ՊԲՎ, 278), *մակակետ* («կետադրական մի նշան». ԿԳԲ), *մակոզիանալ* (իմա՝ Յիսուս ի Նազարեթե *մակոզեցեալ*». ՄՖՄԱ, 64) և այլն:

ժգ) *Յար(ա)*-. այս ածանցով հանդիպում է հետևյալ կազմությունը. «և մարդիկք *յարաթիրքդ* մտօք» (իմա՝ «միշտ թյուրիմացության մեջ գտնվող» իմաստով. ՄՖՄԱ, 350):

ժդ) *Նախ(ա)*-. այս ածանցով կազմվում են որոշակի թվով բառեր Օրինակ՝ *նախաճանաչեմ* (ՄՄՁ, 5808, 73բ), *նախայդանել* (իմա՝ *նախայդանեցեալ*. ՅՊԱ, 174), *նախավաղվաղ* (ՅԲԲ, 181)¹, *նախատեսանեմ* (ՖՄՆ, էջ IX, ՅՊԱ, 25) և այլն:

ժե) *Ներ(ա)*-. այս ածանցն ունի համեմատաբար լայն գործածություն, և լատինաբան հեղինակների երկերում տեղ են գտել այդ բաղադրիչով կերտված բազմաթիվ բառեր: Այս երևույթը միանգամայն բացատրելի է. *ներ(ա)*- ածանցը թե՛ հունաբան, թե՛ լատինաբան հայերենի մեջ հանդես է գալիս «տեղ, ներակայում, հանգում և այլն» իմաստներով ոչ միայն ձևակազմական, այլև բառակազմական մակարդակում: Եվ պատահական չէ, որ երկու դպրոցի ներկայացուցիչներն էլ այս մասնիկով կազմում էին նաև ներգոյական հոլովը գրաբարում, ի տարբերություն բուն՝ կանոնավոր հայերենի, որում այդ հոլովն արտահայտվում է *ի* (վերջինիս տարբերակ՝ *յ*) նախդրի միջոցով՝ տրական կամ հայցական հոլովներից: Օրինակ՝ «Որոյ աւանդութեամբ *ներբերի* կարգն» (ՄՄՁ, 3475, էջ 274ա, այլև 271ա, 255բ): «Առ ի ունել զփոյթ վերյօրինման, եթէ *ներընթացեալ* իցէ ի բանադրանս» (ՄՊԽ, 24-25) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախաածանցավոր բառերը. *ներագննել* (ՅՊՁ, I, 239, այլև 89, 90 և այլն), *ներագսպեմ* (ն.տ., 82), *ներախառնեմ* (ն.տ., 42), *ներանկատեմ* (ՅՊԱ, 45), *ներգոյանալ* (ն.տ., 24), *ներգտանեմ* (ՄՖՄԱ, 15), *ներընթանալ* (ՅՊԱ, 31, ՄՊԽ, 26), *ներընկալնում* (իմա՝ «ներընկալաւ հոգին». ՆԾՁ, I, 13, հետագայում՝ *ընկալաւ*. ՆԾՁ, II, 5, ՆԾՁ, III, 5), *ներիմանալ* (ՄՄՁ, 672, էջ 10ա, նաև էջ 8բ), *ներմնալ* (ն.տ., էջ 15բ), *ներմտանեմ* (այլև *ներս գնամ*, լատ. subeo, ՆԼՀԲ, 514), *ներմուծանեմ* (ՀՎՊ, 9), *ներպարուրեմ* (ՄՖՄԱ, 22), *ներսպրդել* (ՅՊԱ, 24), *ներվանեմ* (ՄՖՄԱ) և այլն:

ժզ) *Շար(ա)*-. այս ածանցով ունենք զգալի թվով կազմված բառեր: Օրինակ՝ «Անդէն *շարագործեաց* զշնութիւն ըն հոգւոջ իւրում» (ՊԲՎ, 210, այլև

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *ենթայրսնեայ* (լատ. sublunaris, - re) ձևով, այսինքն՝ *-եայ*, ոչ *-ի* մասնիկով, որը բառակազմորեն տարբեր է:

շարագործիցէ, ն.տ., 207, 208 և այլն): «Շարագործեա ընդ միայնաւորութեանն մարմնականի և զներքին միայնաւորութիւնն» (ՅՊԶ, I, 250) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ նախաձանցավոր բառերը. *շարագուգել* (ՅՊԶ, I, 47, 108), *շարալնանիլ* (փխ. *շարալնուլ*, ն. տ. , 6, *շարակցութիւն* (իմա՝ «կապակցություն», հմմտ. ռուս. *сочетаемость*, ՅԲԲ, էջ 16ա, այլև ներածություն, էջ 192)², *շարահիստղ* «հեղինակ» (ՀՇԳԱ, 345), *շարայեռուլ* (ՅՊԶ, I, 60) և այլն:

ժէ) Չ-. այս ածանցը, բնականաբար, բնիկ է, որով կազմվում են թե՛ բառեր և թե՛ բայական ձևեր: Ունենք հետևյալ բառերը, ընդ որում մի դեպքում դերբայն իբրև անվանական միավոր է դիտվել, և նրա հիման վրա կազմվել է գոյականացված բառ (հմմտ. ժամանակակից հայերենում՝ *զնայլը* - *չզնայլը* և այլն): իսկ մեկ այլ դեպքում՝ գոյականի ածանցական ժխտում (հմմտ. հին գրականում ունեինք *չեպիսկոպոս*, *չերեց* և այլն): Օրինակ՝ «Փոքունց կարօտի բնութիւնն *չքաղցիլոյ*, *չծարաիլոյ* և *չպաղիլոյ* կամ *չկիզիլոյ*» (ՅՊԶ, I, 74), «Եւ զիս չաշխատողս *չտէր* Յովհանէս Տերզնցին (ՏԳ, 15) և այլն:

ժը) *Ատոր(ա)* -. այս ածանցով ունենք մեկ-երկու կազմություն: Օրինակ՝ «Որք ի *ստորահեղմանց* աստեղաց նախաճաշէին» (ՄՄԶ, 5808, էջ 79բ)³:

ժթ) *Վեր(ա)*-. այս ածանցը ևս համեմատաբար ունի լայն գործածություն, և դա նկատելի է նաև լատինաբան հեղինակների երկերում: Օրինակ՝ «Ոչ երբէք այսուհետև *վերասահիլ* է նոյն յանցանս» (ՄԼԲԱ, 16): «Այս գրգիկ *վերաքաղեցեալ* և շարադրեցեալ յունեմնէ պատուականէ կրօնաւորէ Մարկեղոս կոչելեցելոյ Փալէրմիթացոց ի կարգէ քարոզողաց» (ՄՊԽ, 3) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ նախաձանցավոր բառերը. *վերագնել* (ՅՊՍ, 167), *վերադիմել* (ԹՊ, 401), *վերաժողովել* (ՄՄԳԺ, 10) *վերախրթնանալ* (ԽԷՃ, 233, 234), *վերակցել* (ԹՊ, 14), *վերահաստատել*

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *նախավաղ*, և ի թիվս այլ վկայակոչումների նշում է նաև Դիոնիսիոս Թրակացու քերականությունը:

² «Նոր հայկազյան բառարանն» ունի միայն բայական ձևը՝ *շարակցել* «ի մի շար կցել, շարալծել, հարակցել» իմաստներով:

³ «Նոր հայկազյան բառարանն» ունի բայը՝ *ստորահեղուլ*, չունի գոյականական ձևը՝ - ումն ածանցով բաղադրված:

(ԱԼՏ, 78), վերահնարել (ԱՍԳՀ, 22), վերամնալ (ՍՄԳԺ, 16), վերանցուցանել (իմա՛ վերանցանել (ՅՊՁ, I, 168)¹, վերաշահել ԱԳԶՎ), վերապաքինել (իմա՛ «վերասին բժշկել», ՎՅԲ, II, 337), վերանրբանալ (ԽԷՃ, 233-234), վերապատուականալ (ն.տ.), վերայօրինումն (ՍՊԽ, 24), վերյօրինումն (ն.տ., 24-25), վերստանալ (իմա՛ վերստանայցէր (ՅԿՀՃ, 14) և այլն:

ի) Տ-. այս ածանցն ունի ժխտական իմաստ, արհեստական ներմուծման արդյունք չէ, այլ կանոնավորապես հանդիպում է հայերենի բոլոր փուլերում: Հանդիպում է այս ածանցով նաև մեկ - երկու օրինակ լատինաբան հեղինակների երկերում, օրինակ՝ *տխորժեմ* (իմա՛ «ոչ ախորժեմ»): ՅՊՁ, 73, այլև ՎՅԲ, II, 337) և այլն: Ածանցման տեսակետից այստեղ հետաքրքիրն այն է, որ հեղինակը մտածել է, թե *տխորժեմ* բայի դրական իմաստն արտահայտում է *տ*-ն, ուստի այն *տ*-ով փոխարինելով կարելի կլինի ստանալ ժխտական իմաստ:

իա) Տար(ա)-. այս ածանցը նույնպես գործածվում է սակավաթիվ բառերում: Օրինակ՝ *տարազոյգ* (ԽԷՃ, 32) *տարահամոզել* (ն.տ., 8), *տարացնդիմ* (ՅՊՍ, 36) և այլն:

իբ) Տրամ(ա)-. այս նախաածանցով նույնպես կազմված ենք գտնում ոչ պակաս թվով նոր բառեր: Օրինակ՝ «Եւ այսպէս ոչ տրամաճանաչիցին, թէ որպիսիք իցեն» (ՄՖՍԱ, 322) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նախաածանցավոր բառերը. *տրամազոյգ* (իմա՛ «անզոյգ. հակազոյգ, անհանգէտ»): ՎՅԲ, II, 335), *տրամախիտ* (իմա՛ «անյաճախ, սակաւագիտ»): լատ. ռարուս. ՎՅԲ, II, 338, այլև լատ. ռառուս. ՅՊՁ, 77), *տրամահեղեալ* (ԽԷՀՄ, 12), *տրամաճանեմ* (իմա՛ «որոնեմ յամենից կողմանց»): լատ. դիսքուիբո, ՎՅԲ, II, 338, այլև լատ. տիսգուիբո. ՅՊՁ, 74), *տրամապահով* (իմա՛ «անզուրկ ի կասկածանց և յերկիւղէ, ոչ անզոյթ»): ՎՅԲ, II, 338), *տրամատեսեմ* (իմա՛ «յայտնապէս և իսկապէս ճանաչեմ»): լատ. դիսչերեո, ՎՅԲ, այլև լատ. տիսչերեո: ՅՊՁ, 75) և այլն :

2) Լատինաբան հայերենի բառապաշարի, հատկապես նորաբանությունների քննությունից երևում է, որ ոչ պակաս տեղ ունեն վերջածանցավոր բառերը: Վերջածանցումն առհասարակ առավել բնորոշ է հայերենի բառակազմական համակարգին, և դրան ապա ցույց է ա յ ն, որ

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի միայն *վերանցեալ*, չունի ելակետային (անորոշ դերբայ կամ սահմ. եղ. ներկայի 1-ին դ.) ձև, առավել ևս չունի պատճառականի հիշյալ ձևը:

տարբեր ժամանակներում մեզանում գործուն դեր են ունեցել բազմաթիվ վերջածանցներ՝ հիմնականում կամ գրեթե գերազանցապես կազմված հայերենի արմատակազմական բազայի վրա:

Լատինաբան հեղինակներն այս հարցում որևէ ակնառու նորարարություն չեն անում, թեև նման իրողություն կարելի է համարել այն, որ երբեմն այս կամ այն ածանցի գործածությունը տեղի է ունենում ոչ այնքան սովորական բաղադրվող հիմքի հետ:

Ուշադրության առարկա բառապաշարի նորակազմ բառերի այս կամ այն կարգի բաղադրվող հիմքերին ավելանում են երկուսուկես տասնյակից ավելի վերջածանցներ՝ իբրև բաղադրող մասեր, առաջ բերելով ոչ միայն սովորական իմաստով գործածվող, այլև տերմինային արժեքով հանդես եկող բառեր:

Դրանք բաղադրվում են հետևյալ ածանցներով. *-աբար, -ակ, -ական, -ակի, -ան, -ապէս, -արան, -ացի, -աւոր, -եան, -եղէն, -ենի, -երէն, -էն, -իկ, -իչ, -իւր, -ոտ, -ութիւն, -ուհի, -ումն, -ուն, -ուտ, -օրէն:*

Բառակազմական հիմքերի առումով պետք է նկատի ունենալ, որ տվյալ դեպքում գործ ունենք բառային բաղադրվող և ածանցական բաղադրող հիմքերի հետ (հմմտ. *միջաբար < մէջ - արար, սերմնաբար < սերմն - արար* և այլն): Սակայն համաժամանակյա կտրվածքում ոչ միշտ է, որ հնարավոր է լինում հստակ առանձնացնել բաղադրող և բաղադրվող հիմքերի փոխադարձ կապը: Նման դեպքերում անհրաժեշտ է դառնում բաղադրության վերլուծությունը նաև տարածանակյա կտրվածքի նկատառումով: Այսպես, *միջաբար* (ՄՄՁ, 3640, 4բ) բաղադրությունը չենք գտնում «Նոր հայկազյան բառարանում»՝ իբրև ածանցավոր կազմություն, այնինչ նշվում են *անմիջաբար*, այլև *անմիջակաբար* ձևերը և ամեն անգամ հղում է տրվում *անընդմիջաբար* բառին: Ըստ այդմ կարելի է մտածել, որ պատմականորեն ունենք վերջին երեք ձևերը, իսկ *միջաբարը*՝ ոչ, թեև բառակազմորեն (համաժամանակյա կտրվածքում) ենթադրելի էր *միջաբար > անմիջաբար* բաղադրությունը: Այնինչ հակառակն է դուրս գալիս, այն է՝ *միջաբար* բառը տեսականորեն այլ բան չէ, քան *ան-* նախածանցն ունեցող ձևերից առաջացած: Նկատենք նաև, որ նույն բառարանում չենք հանդիպում առավել ենթադրելի *անմէջ* ձևի, որպեսզի մտածեինք, թե դրանից են բաղադրված *անմիջաբար, անընդմիջաբար* կամ *անմիջակաբար* ձևերը:

Բառակազմական երևույթների դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բաղադրող և բաղադրվող հիմքերի անմիջական բաղադրության հետ կապված տարբեր կարգի հանգամանքներ, որոնք կարող են լինել ոչ միայն օրինաչափական, այլև խիստ մասնավոր և առանձնահատուկ, գրեթե

յուրաքանչյուր դեպքում սահանելի: Լատինաբան հայերենով երևան եկած բնագրերը, վերաբերելով տարբեր ժամանակների, բառակազմության, տվյալ դեպքում վերջածանցման տեսակետից ի հայտ են բերում ակնհայտ առանձնահատկություններ, որոնք նկատելի են օրինակների մեջ, գրեթե յուրաքանչյուր դեպքում, ուստի տարբերակված մոտեցման կարոտ:

Անդրադառնանք նշված վերջածանցներով կազմություններին՝ առանձին-առանձին:

ա) *-արար*. այս ածանցով կազմվում են զգալի թվով նոր բառեր, որոնց բաղադրվող հիմքը ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ ձև է, այնուհետև բաղադրվող հիմքն ու նի թե՛ պարզ և թե՛ իր հերթին բաղադրյալ կազմություն: Օրինավ՝ «Չոր այժմ ձեզ քարոզեն *հերձիկարար* և *հերետիկոսարար* իբրև կամակատարք» (ՄՖՄԱ, 336): «Բղխե ի հորե *միջարար* և *անընդմիջարար*» (ՄՄՁ, 3640, 4բ) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ վերջածանցավոր բառերը. *բաժանելարար* (լատ. divisibiliter. ԿԳՏ, 5բ, ՄՄՁ, 7560, 9 բ), *խկազունեղարար* (ՄԲԽՁ, 24), *կրկնակարար* (ԱՄԴՋ, 19), *հանգունարար* (ՅՊՁ, 1,67)¹, *մանաուանդարար* (ԳՄԳՎ, 14), *ներելարար* (ՄՊԽ, 29), *սերմնարար* (փխ. ե - ով. ՄՄՁ, 3640, 59բ), *քօնքրէթարար* (ՎՄՁ, 1663, 73) և այլն:

բ) *-ակ*. այս ածանցը հայերենում, ինչպես հայտնի է, բազմիմաստ է. այս դեպքում ունենք նորակազմ բառեր գոյականի արժեքով. Օրինակ՝ *գործակ* («փոքր գործ»). «և գուարթ երեսօք ընկալարուք զայս *գործակ* մեր վայելումն». ՎԲԱ, 3), *լսակ* («սկանջ» իմաստով. ՆԾՁ, I, 12, այլև II, 4, III, 4)², հոտոտակ («քիմք» իմաստով. ն.տ.), *խոցակ* (իմա՛ «կամ շիլ և խացակ», աչքի համար սավող՝ բորբոքված», ՄՄՁ, 5808, 85 բ)³, *չօշափակ* («ձեռք» իմաստով. ՆԾՁ, I, 12, II, 4, III, 4), *փոտրակ* (իմա՛ «փոսունք խիտք և մանունք». ՎՅԲ, II, 340) և այլն:

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *հանգունասպես* (վկայաբերում՝ Նարեկացու), բայց ոչ *-արար* մասնիկով այս կազմությունը:

² Հովհ. Կոստանդնուպոլսեցու թարգմանությամբ լույս տեսած «Նորագոյն ծաղիկ գորութեանց» (տպ.1-ին՝ Հռոմ, 1675, 2-րդ՝ Վենետիկ, 1685, 3-րդ՝ Կ.Պոլիս, 1724) երկում գործածվում են ոչ միայն այս, այլև *հոտոտակ*, *չօշափակ* նորակազմությունները, այլև *տեսակ* («աչք»), *ճաշակ* («բերան») ձևերը՝ նոր իմաստով, ի տարբերություն «Նոր հայկազյան բառարանում» նշվող իմաստների:

³ Եթե *-ակ* բաղադրիչն *ակն* («աչք») բառը չէ, որպիսով կունենանք բարդ բաղադրություն:

գ) *-ական*. այս ածանցն այս դեպքում և.ս ունի լայն գործածություն՝ կազմելով ածականի արժեքով բավականին մեծ թվով նոր բառեր: Օրինակ՝ «Խոնարհի ի հիւսիսոյ ի հարաւ *հինգական* օր», ԴԶԲ, 79): «Կեամ ըստ արժանեաց իմոց *ձերական* սուրբ աղօթիւքն եւ շնորհօք» (ՈԵՆ, 294) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ նոր վերջածանցավոր բառերը. *անցողական* (ՅԲԲ, 199), *առողական* (լատ. ablativus. ԿԳԲ, 29բ - 30ա, այլև բացառական կամ առողական, լատ. նույնը, ՄՄՁ, 7560, 43բ), *արտադրողական* (լատ. productivus. ԿԳՏ, 5ա, այլև 7560, 7ա), *բաղձողական* (ԹԻԲ, 26), *լծորդական* («առնողական-կրողական». իմա՝ ներգործական - կրավորական հակադրություն. ՅԲԲ, բնագիր, էջ 11ա , այլև ԿԳԲ, 30)¹, *կացողական* (լատ. commorativus. ԳԿԲ, 29բ-30ա, այլև ներգոյական կամ կացողական, լատ. նույնը, ՄՄՁ, 7560, 43բ), *կրողական* (հոլով). լատ. accusativus (casus). ԿԳՏ, 14 ա, 29բ - 30ա, նույնը *կրողական* (հոլով). ՄՄՁ, 7560, 19 ա, 43 բ)², *հապաշական* (իմա՝ «որք են՝ լաթինք, յոյնք, հայք... և խփտիք *հապաշականք*». ՄՖՄԱ, 110), *հաստատական* («շաղկապի մի տեսակ». ՅԲԲ, 187), *հեղական* (ԹԻԲ, 29), *հեզմելյական* (ԴԶԲ, 70)³, *ճեմերական(ք)* (լատ. peripathetici. ԿԳՏ, 16բ, այլև ՄՄՁ 7560, 23բ), *մակրդական* («-ոտ մասնիկով ածանցված բառերը». ԿԳԲ), հմմտ. Ա.Մուրադյան, էջ 352, Ջահուկյան, 1974, էջ 30), *մանաւանդական* (ՎԲԻ 74, 75), *մեքենական* (< մեքենայ - ական. ԹԻԲ, 6, 20), *նեղական* (ԴԶԲ, 152), *պահողական* (ՄՄԳԺ, 6), *պիտուական* (իմա՝ «զի ի դէպ ժամու *պիտուական* լինի». ԴԶԲ, 76), *վարկենական* (փխ. –յով. լատ. մօլենտանեում, ՅՊՁ, 69, այլև ՎՅԲ, II, 335, ՅՊՁ, I 64), *պաշտպանական* («-պան մասնիկով ածանցված բառերը». ԿԳԲ, 38), *պատեհական* (ՀՎՄԴ, 114) և այլն:

դ) *-ակի, -ան*. այս վերջածանցներով ունենք բավականին քիչ թվով հանդիպող նորակազմ բառեր: Օրինակ՝ *եզրակի* (լատ. terminative. ԿԳԲ, 8բ, այլև ՄՄՁ, 7560, 12), *համարան* (իմա՝ «մատեան ինչ, նորում փաղանշին բովանդակքն ծախք և մուտք, և ևս հաշիվք առից և տրի» . ՎՅԲ, II, 319), *յարակի* «միշտ, հարատև». «յորոց մինչև *յարակի* խոշտանկիցիս (փխ. գ -ով. Վ.Հ.) և ներվանիցիս». ՄՖՄԱ, 10), *պիտուան(ք)* («պիտույքների՝ աօրյա գործածության

¹ Հմմտ. Ա.Մուրադյան, Հունարան դպրոցը և. նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում. Երևան, 1972, էջ 52: Գ.Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 307:

² Հմմտ. Ա.Մուրադյան, նշվ. աշխ. էջ 352, Գ.Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 31:

³ «Նոր հայկազյան բառարանն» ունի միայն *հեզմական*:

իրերի տուփ» ԹԻԲ, 8), *շնչան* («շնչական՝ շնչով արտաբերվող». «վասն այնորիկ կենդանիք ու *շնչան* ձայն ունին». ՄՄՁ, 69, 269 ք) և այլն:

ե) - *ապէս*. այս ածանցով բաղադրված ենք գտնում որոշակի թվով նորակազմություններ, ընդ որում այն երբեմն դրված է լինում ածականի բաղադրական կամ գերադրական ձևի վրա: Օրինակ՝ «թէ է իղ *առատագունեղապէս* արտահեղեալ» (ԽԷՀՄ, 12) «Ձի այս *յայտնագունապէս* օրինակաւ բացաբանիցի» (ՄՖՄԱ, 14)¹, «առ ի իմանալ (փխ. նախորդի *յ տարբերակի*. Վ.Հ.) *պարզագունապէս*» (ՊԲՎ) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ վերջածանցավոր բառերը. *արտաքսապէս* (ՎՊԱ, VI), *եզրապէս* (լատ. terminative. ԿԳԲ, 8ք, այլև ՄՄՁ, 7560, 12ա), *քանկապէս* (ԳՄԱ, 26), *լուսագունեղապէս* (ՄՖՄԱ, 317), *լիագունեղապէս* ((ԱՄԳ-Հ, 105), *կատարելագունեղապէս* (ԽԷՀՄ, 10), *մանատանդապէս* (ԱՄԳ-Հ, 21), *յայտնագունեղապէս* (ՅՊԱ, 45), *ներքսագունեղապէս* (ԽԷՀՄ, 9), *չարապէս* (բարի բառի նմանաբանությամբ. հմմտ. *բարեպէս*. լատ. մալէ. ՅՊՁ, 61) *պայծառագունեղապէս* (ԽԷՀՄ, 187), *ուշիմապէս* (ՄՄՁ, 5808, 78 ք) և այլն:

զ) -*արան*. այս ածանցով ևս ունենք զգալի թվով նորակազմություններ: Օրինակ՝ *գոհացարան* (ՀՇԳԱ, 498), *եփարան* (լատ. սթօմաքոս. ՎՅԲ, I, 26, ն.տ., II, 306, ՅԼՅ, 16), *խոստովանարան* (ՄՊԽ, 25), *ուսուցարան* (ՍԼՏ, 78), *հայեցարան* (լատ. սփեքթաքուլում, ՅՊՁ, 46, այլև «տեղի, ուր խաղք և պէսպէս հրաճուանք հասարակականք հրապարակին, մերթ ասի և ինքեան հայեցմանն առ խաղս հանդիսականս. լատ. սպէկտակուլում». ՎՅԲ, II, 319) և այլն:

է) -*ացի*. այս ածանցով ունենք քիչ թվով կազմություններ: Օրինակ՝ «փ միջի մերում առաջի կենարարի նշանի սրբոյ խաչին Քրիստոսի, արիականք *լաթինացիքս*, և անյաղթելիք *թորգոմացիքն*» (ԹՄՄ, 8, այլև ԳՄՀ, I, 33): Ի դեպ՝ այս նույն օրինակը գտնում ենք նաև «Դաշանց թղթում», մեկ այլ գործածության մեջ *լատինացի* բառը գրված է ճիշտ գրությամբ՝ *տ-ով*. «որզոն՝ ասորի, վրացի, հայ, տաճիկ, յոյն, *լատինացի*, այսինքն կոչել զմին անհատն բոլոր ազգին անուամբ, այն է ազգական» (ԴՁԲ, 125)¹ :

ը) -*աւոր*. այս ածանցով նույնպես ունենք քիչ թվով կալված բառեր: Օրինակ՝ *ազնաւոր* (լատ. gigas. Ռ-ՀԼԲ, 4), *բեկանաւոր* (ԳՄԱ, 17), *հասարակաւոր* (կամ հասարակագիշեր, լատ. aequator, aequinoctalis. ԿԳԲ,

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *յայտնագոյն* «առավել հայտնի, հայտնապես և այլն» իմաստով. հմմտ. նաև *յայտնագունեղապէս*-ը թվարկման մեջ:

15ա, այլև ՄՄՁ 7560, 21 ա), *նեղատր* (ՀՇԳԱ, 12, 13), *փետրատր* (ՄՄՁ, 5808, 99 ա) և այլն:

թ) Այստեղ առանձնացնում ենք լատինաբան հեղինակների երկերում մեկ-երկու գործածություն ունեցող այն նորակազմությունները, որոնք բաղադրված են *-եան*, *-եղէն*, *-եմի*, *-երէն*, *-էն* ածանցներով, թեև դրանց մի մասն առհասարակ հայերենում ունի լայն գործածություն և բավականին կենսունակ է: Օրինակ՝ «Ելաք ընդ առաջ *Այրարատեան* (բնագրում՝ փոքրատառով - Վ.Հ.) թագաւորութեանն և *Ազգանազան* (բնագրում՝ փոքրատառով , այլև *p*-ով և *-եան* - ով, և ոչ թե սղված *-ան* ածանցով – Վ.Հ.) գնտին (ԳՄՀ, I, 32), *ամիանտեան* (ամիանտ քար. ԹԻԲ, 551), *կորեկեղէն* (ԱՄԴ-Հ, 53), *ցորեղէն* (իմա՛ ցորեմեղէն. «ցորեղէն հացն, թէ բաղարջ լինեցի, կամ թէ խմորեալ, բուն և ճշմարիտ հացն է»։ ՎՍԳ, 52-53), *սրբեմի* (տե՛ս «Ուստի և սկան վերաբերել յերեք *սրբեմին* ամենասուրբ երրորդութեանն գոր խաչեցարն վասն մեր» (ԳՄՀ, II, 119), *լատիներէն* (ԽԷՀՄ, 8, 14, 11, 17 և այլն), *փոքրէն* (բացասական իմաստով մակբայ՝ *ոչ*, *մի*. ՎՅԲ, 340) և այլն:

ժ) *-իկ*. այս ածանցով ունենք հիմնականում՝ փոքրացուցիչ, երբեմն ոչ դրվատական իմաստ արտահայտող բառեր: Օրինակ՝ «ի լոյս արտագայիլ այս *գործիկ*» (ՄՖՄԱ, 5): «ԹԷպԷտ նառաջնում մասին *գործկանս* այսօրիկ» (ն.տ., 10), «Տայք երբեմն կնոջ *զգրիկ*. սպահարզանի» (ն.տ., 375), «Այդպիսի երկու պոռնիկ *ժողովիկ* չարունականձն և պատուիրազանց եպիսկոպոսացն» (ԳՄՀ, IIա, 25): «Չփոքրիկ իմ *մարմնիկ* շնորհեաց քեզ բնութիւնն» (ՅՊՁ, I, 46): «Չայս ուրեմն *տեսրիկ* (իմա՛ «գրքույկ». Վ.Հ.) որ է» (ՎԲԱ, 3), *տոմսիկ* (ՄՊԽ, 90) և այլն:

ժա) Հանդիպում են որոշ վերջածանցավոր նորակազմ բառեր, որոնք բաղադրված են *-իչ*, *-իր*, *-ոտ* ածանցներով: Օրինակ՝ *արտադրիչ* (այլև արտադրողական, լատ., productivus. ԿԳԲ, 5ա, նաև ՄՄՁ, 7560, 7ա), *վարսիչ*, («վարսավիր» իմաստով. ՆԵՁ, I, 123) այլև ն.տ., II, 97, այլև ն.տ. , III, 105), *սհիր* («սհավորություն, սհավոր լինելը». լատ. *terribila, res magni terroris*. Ռ-ՀԼԲ, 10), *ընկրկոտ* («հետ-հետ գնացող». իմա՛ «երիվարն ընկրոտ և սանձընկեց». ՅՊՁ, I 85), *ծարատոտ* (ԳՄՀ, I, 47) և այլն:

ժբ) *-ութիւն*. այս ածանցով ունենք բավականին մեծ թվով նորակազմ բառեր, և դա հասկանալի է: Օրինակ՝ *աճամութիւն* («գյուղացի լինելը». հմմտ. աճամի, լատ. *rusticitas*, այլև *rusticus*. Ռ-ՀԼԲ, 14), *այտութիւն* (ԱԳԲ, 30),

¹ Բնական բնագրի ձեռագրական տարբերակներից մի քանիսում՝ նշվում են նաև *դ*-ով, *թ*-ով ձևեր (տե՛ս նույն տեղում):

աստիճանություն (ԽԷՃ, 236), գանգոթիս (փխ. *p*-ով. ՄՄՁ, 5808, 91 ա), իբրություն (ՄՄԳԺ, 90, 91), լյարտություն (ՎԲԻ, 21), կազմողություն(ք) (մարմնոյ. լատ. *organa corporis*. ԿԳԲ, 12ա, այլև ՄՄՁ, 7560, 18ա), կարություն (ՎԲԻ, 21), խացակություն («խացակոտ աչքեր ունենալը». հմմտ. վերը՝ խացակն. ՄՄՁ, 5808, 91ա), հոտություն (ՎԲԻ, 22), մախմուրություն (ՄՄԳԺ, 51), յարգություն (ԹԻԲ, 18), յուսացողություն (լատ. ֆիդուչիայ, այլև ֆիտուցիայ, ՅՊՁ, 56, 57), շօշափողություն (ԱՄԳՀ, 49), որդեություն (ԴԶԲ, 146), սահեցողություն (ՎԲԻ, 21), սողակություն (ն.տ.), սարդություն (ն.տ.), վճարելություն (ՍԳԲՎ, 247), փխրելություն (ՎԲԻ, 22), փշրելություն (հմմտ. նախորդի հետ, ն.տ.) և այլն:

ժգ) *-ուհի*. այս ածանցով ունենք բավականին քիչ թվով բառեր, օրինակ՝ «Ըն միսում կենի ոչ ևս եղիցի ծնելություն գաւակաց. ոչ ամուսինք և ոչ ամուսնուհիք» (ՊԲՎ, 91): «Կինն թագաորին պարսից անուն Յեղարա, որ թարգմանի *ի կայարուհի*» (ՄՄՁ, 2037, 107 ա): «Թ՛ է ծերք երկու, տռփացեալք ումենն *մանկուհոյ* Շուշան կոչեցելոյ» (ԳՎՀ, 130) և այլն:

ժդ) *-ումն*. այս ածանցը նույնպես գործուն և կենսունակ է լատինաբան հեղինակների երկերում՝ հիմք հանդիսանալով զգալի թվով նորակազմ բառերի: Օրինավ՝ *ածանցումն* (ՄՄԲ), *աղերսումն* (ԽԷՃ, 446), *անիծումն* (ն.տ.), *աքսորումն* (այլև *աքսորեցումն*, ԳՄԱ, 22, 23), *բարդացումն* («բառաբարդում». ՄՄԲ ??), երբումն (փխ. *-եմն*. մասնիկով, լատ. իփօթետիկայ. ՄՄՁ, 2275, էջ 129 ա), *թռչտումն* (թռչտմունք.ՅՊՁ, I, 85), *կայացումն* (ՅԱ, 8), *կացուցումն* (ՄՄՁ, 3640, 59 ա, այլև 1715 թ. տպագրություն, էջ 247, վրանայված՝ *ի լինել*. ՄՄՁ, 724, էջ 95 բ), *յղանեցումն* (ՄՄԳԺ, 71), *տղումն* (լատ. սիպիլուս. ՅՊՁ, 56, այլև ՎՅԲ, II, 332) և այլն:

ժե) *-ուն*. այս ածանցով կազմվում են որոշ չափով նկատելի բառեր: Օրինակ՝ «Ըն ժամանակս վերջինս *խանգարուն* արարիք» (ՄՖՄԱ, 238-239), *ծրարուն* (իմա՝ «ծրարեցեալ և առ միմեանս պատատեցեալ». ՎՅԲ, II, 316), *հառաչուն* (ԱԿՏԱ, 10), *շփոթուն* (իմա՝ «երկրորդն է շփոթուն և անկանոն». ՅՀԲ, 3), *լյարծուն* (լատ.լուպոիքուս. ՎՅԲ, I, 34-35, այլև ն.տ. II, 311-312)¹ և այլն:

ժզ) Եվ վերջապես, լատինաբան հեղինակների գործածած վերջածանցավոր բառերի մեջ ունենք նաև որոշ նորակազմություններ, որոնք բաղադրված են *-ուտ*, *-օրեն* ածանցներով: Օրինակ՝ «Ոչ կարէ ասիլ գումեմնէ

¹ Հ.Աճառյանը *լյիրծ* («սահուն, սահող, դյուրասահ» արմատը, առանձին *լյիրշ* («լիրք, անամոթ, լկտի») նաև *լյիրտ* (բրբռ.) արմատներից համարում է «քնիկ հայ. բառ»՝ առաջացած հ.-ե. *slibr ձևերից, ծ ածականով, որն այնքան էլ համոզիչ չէ (հմմտ. լատ. lubricus ձևը): Ավելացնենք բրբռ. *լյիրծ*, *լյրիկ/լիռիկ* «անկուշտ, վրա տվող՝ ուտելիս» (Մուշ, Ալշ .) ձևերը: Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 305-306:

բաղադրեցելոյ ի յերկուց նիւթոց *հեղանուտից*, թէ իցէ մի *եղանուտն*, կամ միւսն պարզապէս» (ՄՖՄԱ, 197)¹, «Ձակունս պատուականս, գփայտս, գխոտ, *զծղնուտ* (իմա՛ ծղոտ. Վ.Հ.), իւրաքանչիւրոյ ուրուք գործն յայտնի եղիցի» (ՀԿՀՃ, 88): Այսպէս նաև՝ *թարգմանողօրէն* (ԹԳՅՀ, VI, էջ 3)², *մահացողօրէն* (ՄՍԼՏ, 63) և այլն:

3) Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ առանձնանում են նաև այնպիսի նորակազմ բառեր, որոնց բաղադրությունը տարածամանակյա կտրվածքում ներկայանում է ոչ թե պարզ (կամ իբրև այդպիսին դիտվող) բաղադրվող հիմքի և այս կամ այն ածանցի միացմամբ, այլ դրանք ունենում են մեկից ավելի ածանցներ, որոնք նախորդում կամ հաջորդում են տվյալ բաղադրվող հիմքին:

Նման կազմությունները տողերիս հեղինակի աշխատություններից մեկում ընդհանուր առմամբ կոչվել են համաձանցավոր բառեր³, և կոնկրետ դեպքում դրանք կարելի է առանձնացնել ու դասակարգել ըստ ածանցման, այսպէս կոչված, աստիճանականության կամ հաջորդականության, ընդ որում թե՛ համաձանցավոր և թե՛ տարածամանակյա բաղադրելիության հատկանիշների նկատառումով⁴:

Նախ, նկատի ունենալով բաղադրական հիմքի մեկ կամ մեկից ավելի ածանցական կազմություն լինելու հանգամանքը՝ տվյալ դեպքում մույնպէս ածանցավոր բառերը կարող են բաժանվել հետևյալ խմբերի, ընդ սմին որոշակի աստիճանականությամբ: 1) Կարելի է առանձնացնել մենաձանցավոր և բազմաձանցավոր բառերի խմբեր. առաջին խմբում լինում են պարզ բաղադրական հիմքով ածանցավոր բառերը, իսկ երկրորդ խմբում առնվազն մեկ ածանց ունեցող ածանցական բաղադրական հիմքով ածանցավոր բառերը: 2) Բազմաձանցավոր բառերը կարելի է վերախմբավորել ըստ բաղադրության մեջ ածանցական բաղադրիչների երկանդամ հակադրության հարաբերականության հիմունքի. կունենանք մի կողմից՝ համաձանցավոր, իսկ մյուս կողմից՝ հարաձանցավոր բաղադրություններ: Տվյալ դեպքում համաձանցումն առաջնային

¹ «Նոր հայկազյան բառարանը» չունի նաև *եղանուտ*-ը:

² «Նոր հայկազյան բառարանն» ունի միայն *թարգմանողօրէն*:

³ Տե՛ *Վ.Համբարձումյան*, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 160, նաև 205:

⁴ Հմմտ. *Ս.Գալստյան*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

հիմքի հարաբերությամբ երկուստեք ածանց ունենալն է, իսկ հարաձանցումը՝ միակողմանի ունենալը¹:

Երկրորդ, տարաժամանակյա հատկանիշի դրսևորման տեսակետից նման բաղադրությունները աստիճանաբար գոյացած են լինում կամ նախաձանցավոր բաղադրվող հիմքի վերջաձանցումով, կամ հակառակը՝ վերջաձանցավոր բաղադրվող հիմքի նախաձանցումով: Ի դեպ՝ լատինաբան հայերենում նույնպես վերջաձանցումն այս դեպքում գերակշռում է մյուսին, և դա միանգամայն հասկանալի է:

Եվ երրորդ, հայերենում առհասարակ բացառվում են բաղադրության մեջ նախաձանցի և վերջաձանցի միաժամանակյա մասնակցությունը, որը բնորոշ է ուրիշ լեզուների²: Այլ կերպ ասած՝ լատինաբան հայերենի բառապաշարում ևս չեն առանձնանում, այսպես կոչված, «խառը» տիպի կազմությունները, հակառակ դեպքում անտեսվում է կամ խախտվում բառակազմության տարաժամանակությունը:

Աձանցավոր բաղադրվող հիմքերով նորակազմ ածանցով բառերը, ինչպես արդեն նկատել ենք ժամանակին, առաջանում են ոչ միայն բուն լեզվական, այլև արտալեզվական մի շարք հանգամանքների դրսևորման պայմաններում¹: Այստեղ դրանցից առավել ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ լատինաբան հեղինակներն, ինչպես գիտենք, այնպես էլ լիովին չեն տիրապետում հին գրական հայերենին, ուստի ձեռք են զարկում տարբեր կարգի նորամուծությունների, տվյալ դեպքում տեղիք են տալիս կանոնավոր, մեծ մասամբ հայերենին ոչ այնքան հարազատ կազմությամբ աձանցավոր հիմքով բաղադրությունների:

Լատինաբան հեղինակների երկերում գործածված աձանցավոր բառերը, որոնք տարաժամանակյա կտրվածքում առանձնանում են որևէ արմատով (կամ արմատական բառով, այլև բառաձևով) և ունենում են մեկից ավելի աձանցներ, տեսականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի՝ իբրև արդյունք հետևյալ կարգի բաղադրության. ա) նախաձանցավոր բաղադրվող հիմքի վերջաձանցում, բ) նախաձանցավոր բաղադրվող հիմքի նախաձանցում, գ) վերջաձանցավոր բաղադրվող հիմքի նախաձանցում և դ) վերջաձանցավոր բաղադրվող հիմքի վերջաձանցում: Սրանից առաջին երեքը (գործնականում՝ այստեղ բացառելով

¹ Կունենանք հետևյալ բանաձևերը. մի դեպքում՝ $((A + a) + b) + c$ կամ $a + (b + (c + A))$, իսկ մյուս դեպքում՝ $a + (b + (A + c))$ կամ $a + ((A + b) + c)$, որոնցում մեծատառով արտահայտված է բացարձակ բաղադրվող հիմքը, իսկ մյուսներով՝ առաջնային, երկրորդային և երրորդային աձանցիչները (կամ՝ բաղադրողները):

² Տե՛ս *Լ. Հովսեփյան*, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:

երկրորդը) պայմանականորեն կարելի է կոչել համաձայնավոր, վերջինը հարաձայնավոր բաղադրություն, իսկ նման կազմությամբ առաջ եկած միավորները՝ համաձայնավոր և հարաձայնավոր բառեր:

Այնուհետև, նման խմբերով առանձնացվող ածանցավոր բառերի բաղադրիչների հանդիպադրման ինչ-ինչ պայմաններով թելադրված՝ դրանք լինում են քանակապես ոչ հավասարաչափ միավորներ, այսինքն՝ մի խմբում կարող են լինել ավելի մեծ թվով բաղադրություններ, քան մյուս խմբում, և հակառակը: Այստեղ նկատենք նաև, որ անկախ բաղադրվող հիմքի ինչպիսին լինելու հանգամանքից (նախաձայնավոր¹, թե՞ վերջաձայնավոր), վերջաձայնումն ավելի հաճադեպ է, քան նախաձայնումը, և դա նույնպես բացատրվում է հայերենին ընդհանրապես բնորոշ վերջաձայնման երևույթի համեմատաբար տարածված լինելու հանգամանքով:

Նկատի ունենալով այդ կարգի բառերի վերաբերյալ վերն ասվածը՝ ստորև ներկայացնում ենք նման կազմություններն իրենց խմբերով և ենթախմբերով:

ա) Նախաձայնավոր բաղադրվող հիքով և որևէ վերջաձայնով բաղադրությունները համեմատաբար մեծ թիվ են կազմում: Այս դեպքում հանդես են գալիս *-արար*, *-ական*, *-ակի*, *-ապես*, *-աւոր*, *-ել(ի)*, *-ի*, *-ութիւն*, *-ումն*, *-օրէն* վերջաձայնները: Ըստ այդմ նման կազմությունները կարելի է ներկայացնել հետևյալ ենթախմբերով:

1) *-արար*. այս ածանցով ունենք զգալի թվով նորակազմ բառեր. *անարդիւնատրարար* (ՄՍԿԱ, 64), *աներկէտանարար* (ԱՄԳ-Հ, 23, ԱՓ, 41), *անխելարար* (ԳՄՀ, II, 235), *անձնատրարար* (ՆՀՎ, 24, նաև ՄՄՁ, 3640, 4բ), *արդիւնատրարար* (ՅՊՍ, 30), *գերուշիմարար* (ՄՄՁ, 5808, 82բ), *ծագականարար* (ԱՄՀԱ, 249), *ծայրագնարար* (ՄՄՁ, 3475, 254բ), *համակերպարար* (ՄՖՄԱ, 115), *հասանականարար* (ԱՄԳ-Հ, 97), *ներադրարար* (լատ. *implicite*, ԿԳՏ, 19բ), *նիւթականարար* (ՄՄՁ, 3640, 59բ), *շարահետևարար* (ՄՄՁ, 672, 77ա), *պտղատրարար* (ԱՓ, 35, ՍԳՔՎ, 224), սերմնարար (փիւ. *ե*-ով ՄՄՁ, 3640, 59բ), *վերերևութարար* (ՅՊՁ, 67) և այլն:

2) *-ական*. ավելանալով նախաձայնավոր բաղադրվող հիմքին՝ կազմում է ածական. *անհունական* (նաև *անհուն*. լատ. *infinitus*. ԿԳՏ, 2բ, այլև ՄՄՁ, 7560, 3ա), *բացադրական* (լատ. *explicitus*. ն.տ., 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28ա), *երբեմնական* (ՄՄԳԺ, 451), մակբայական (ՅԶԶ, 166, իմա՝ «*Մակբայական* ածանցական է, հիբար ի վաղորդենէ՝ վաղորդեան, ի յերեկոյէ՝ յերեկո», էջ 168),

¹ Ավելի մանրամասն տես Վ.Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 148-149:

մակբաշխական (իմա՝ «*Մակբաշխական* է, որ ներկուց կամ յաւելեաց իմն ունիցի զվերաբերութիւնն, հիկէն երկաքանչիւր, երկու երկու, երեք երեք», ն.տ., էջ 165), *յարակայական* (ՅՊՍ, 10, 41), *ներմուծական* (ՎԲԱ, 1), *ստորակցական* (իմա՝ ստորադասական, լատ. subiunctivus. ՄՄՁ, 7560, 44ա) և այլն:

3) *-ակի*. այս ածանցով ունենք մեկ-երկու բառ. *բազմաւորակի* (ՍՍԼ, 62) և այլն:

4) *-ապէս*. ունենք համեմատաբար մեծ թվով մակբայներ. *անբաժանելապէս* (լատ. indivisibiliter. ԿԳՏ, 1ա, այլև ՄՄՁ, 7560, 2ա), *աներկևանապէս* (ԱՄԴՀ, 42), *անկատարապէս* (ՅՊՍ, 33), *անհրճապէս* (այլև առանց ը-ի. ԳՍԱ, 47, ԱԿՅԱ, 79), *անհորապէս* (փխ. գ-ով. ՄՊԽ, 49), *արտաքստապէս* (իմա՝ *արտաքուստ - ապէս*. ԳՄՀ, IIբ, 174), *բացադրապէս* (լատ. explicite. ԿԳՏ, 19բ, նաև ՄՄՁ, 7560, 28ա), *գերազուանդապէս* (ՄՄՁ, 3640, 10բ-11ա), *ենթակայացապէս* (ՄՖՍԱ, 228), *տարորոշապէս* (ԽԷՃ, 12), *փոխաբերականապէս* (ն.տ., 225) և այլն:

5) *-աւոր*. այս ածանցով ևս ունենք սակավաթիվ բառեր. *անոտանաւոր* (իմա՝ անոտն «ոտք չունեցող») և *-աւոր* բաղադրութեամբ. ՇՀՆ, 277) և այլն:

6) *-ել(ի)*. այստեղ դնում ենք այն բառերը, որոնք գործածված են *-եմ* կամ *-ելի* մասնիկով. *բացաբանեմ* (ՄՖՍԱ, 14), *ներադրելի* (ԿԳՏ, 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28) և այլն:

7) *-ի*. այս դեպքում ևս հանդիպում են սակավ կազմութեան բառեր. *արտատնի* (ԱԴԲ, այլև ՎՅԲ, II, 298. գուգահեռ չի նշվում լատ. որևէ ձև) և այլն:

8) *-ութիւն*. այս ածանցով կազմված են բավականին շատ բառեր, որն անշուշտ բնական է հայերենի համար. *անկայունութիւն* (ՄՄԳԺ, 22), 77), *անուրալանութիւն* (ԽԷՃ, 247), *անպատոյութիւն* (ԳՍԱ, 33), *ապագանութիւն* («գծգունություն». ՄՄՁ, 5808, 91ա), *բացառոցութիւն* (ՅՊՍ, 28), *գերերջանկութիւն* (ՈԵՆ, 296), *ենթակայացութիւն* (ՎՄԴ, 16), *երդմնեցուցչութիւն* (ՄՄՁ, 3475, 274ա), *հակակրութիւն* (լատ. անթիփաթիայ. ՎԲԻ, 26, այլև ՎԲԻ, I, 44-45, ՎԲԻ, II, 319), *համակրութիւն* (լատ. սիմփատիայ. ՎԲԻ, 26, այլև ՎԲԻ, II, 43, ՎԲԻ, II, 319), (ՄՄՁ, 879, 105ա, այլև ՍԲՕ), *համակցութիւն* (ՄՄՁ, 879, 105ա, այլև ՍԲՕ), *համաձայնեցութիւն* (ՅՊՁ, 64-65), *մակասաստութիւն* (ԴՉԲ, 112), *յարակունութիւն* (իմա՝ «երկարածութիւն ամանակի». լատ. տիրութունիթաս. ՅՊՁ, 55, այլև ՎՅԲ, II, 325), *ներադրելութիւն* (լատ. penetrabilitas. ԿԳՏ, 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28ա), *ներադրութիւն* (լատ. penetratio. ԿԳՏ, 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28բ), *ներդաշնակաւորութիւն* (ՅԲԲ, 25բ, նաև 212), *ներշրջականութիւն* (ՄՄՁ, 3640, 21ա), *վերբերականութիւն* (ՅԲԲ, 193, 194), *տարալուծութիւն* (ԽԷՃ, 239),

փաղարկութիւն (լատ. բօնիտքբուա. ՅՊՁ, 76, այլև ՎՅԲ, II, 339), *փոխանուանութիւն* (ն.տ., 225), *փոխարկութիւն* (ՅՊՁ, 77, նաև ՎԲԻ, II, 340) և այլն:

9) *-ումն*. այս ածանցով կան ոչ այնքան շատ բառեր. *համալծումն* (ԽԷՃ, 236), *յարամնացումն* (ՊԲՎ, 55), *ստորահեղումն* (ՄՄՁ, 5808, 79բ), *վերահայեցումն* (ՄՄԳԺ, 77) և այլն:

10) *-օրէն*. այս ածանցով ունենք շատ սահմանափակ թվով բառեր. *նախագաղափարօրէն* (ՄՄՁ, 3640, 4բ) և այլն:

բ) Վերջաձանցավոր բաղադրվող հիմքով և որևէ նախաձանցով բաղադրությունները նույնպես մեծ թիվ են կազմում: Այդ դեպքում հանդես են գալիս (բացառությամբ *ան-* նախաձանցի) հունարան դպրոցի ստեղծած նախամասնիկներն իբրև նախաձանց. *ան-*, *սպ-*, *առ-*, *բաղ-*, *գեր-*, *ենթ-*, *համ-*, *մակ-*, *ներ-*, *շար-*, *ստոր-*, *վեր-*, *տրամ-*: Ըստ այդմ ունենք զգալի թվով նախաձանցավոր բառեր, որոնք պայմանականորեն համարում ենք լատինարան հեղինակների կողմից հայերենի բառապաշարի մեջ ներմուծված բառեր:

1) *Ան-*. այս ածանցով ունենք զգալի թվով սովորական բառեր և տերմիններ. *անանձնականք* (բայք. «անդեմ բայեր». ՅԲԲ, 11ա, նաև 180), *անբողորովին* (ԱԴԲ, 30), *անճաղատութիւն* (ՄՄՁ, 5808, 91ա), *անմիջապէս* (ԱԴԲ, 42), *անյայտապէս* (ՆՀԲ-ն ունի *անյայտ* և *յայտնապէս*, լատ. obscure. ԿԳՏ, 3ա, նաև ՄՄՁ, 7560, 3բ), *անյայտնիչ* (ԱԴԲ), *աններադրելի* (լատ. penetrabilis. ԿԳՏ, 19բ, նաև ՄՄՁ 7560, 28), *աններադրելութիւն* (լատ. impenetrabilitas. ԿԳՏ, 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28ա), *անշարամանել* (ՄՄՁ, 2275, 110բ) և այլն:

2) *Ապ-*. այս մանիկով կազմված են քիչ թվով բառեր. *սպագնի* («որ ոչ է սերեցեալ ազնուականէ տոհմէ. ռամիկ». ՎՅԲ, I, 9, նաև ՎՅԲ, II, 225), *սպառոցել* (ԱԴԲ), *սպօրինատր* (լատ. իլլեճիթիմու. ՎՅԲ, I, 10, նաև իլլեջիթիմու. ՎՅԲ, II, 295) և այլն:

3) *Առ-*. այս ածանցով ունենք հետևյալ բառերը. *առանուանումն* (ԽԷՃ, 242), *առերենմ* (ՅՊՁ, I, 223), *առենթադատումն* (ն.տ.) և այլն:

4) *Բաղ-*. ունենք մեկ-երկու կազմություն. *բաղանշանումն* (ԽԷՃ, 26) և այլն:

5) *Գեր-*. ունենք հետևյալ կազմությունները. *գերարդարութիւն* (ԹԻԲ, 343), *գերզգօնութիւն* (ն.տ., 483) և այլն:

6) *Ենթա-*. կազմվում է զգալի թվով բառեր. *ենթաներհական* (լատ. subcontrarius. ԿԳՏ, 9ա, այլև ՄՄՁ, 7560, 13ա. ՆՀԲ-ն ունի *ներհական* «իբր ներհակական» բաղադրված *հակ-ան*, այնուհետև *ներ-հական* անցմամբ՝ *հակիմ*

բայարմատից), *ենթաներհակապէս* (լատ. *subcontrarie*. ն.տ.), *ենթաշարադրական* («շաղկապի մի տեսակ». *ՅԲԶ*, 187), *ենթատարալուծական* («շաղկապի մի տեսակ». ն.տ.), *ենթատրոհումն* (*ՅՊԶ*, I, 311, այլև լատ. տիսքռէցիօ, *ՎՅԲ*, I, 25, այլև լատ. տիսկրէցիօ, *ՎՅԲ*, II, 305. նկատելի է լատիներենի տառադարձման տարբերությունն բնագրի 1674 և 1705 թթ. տպագրություններում) և այլն:

7) *Համ-*. ունենք հետևյալ բաղադրությունները. *համագրկումն* (*ԽԷՃ*, 236), *համարնթացեալ* (*ՎՄԴ*, 16), *համակերպութիւն* (*ՍՓ*, 73), *համակրկնումն* (*ԽԷՃ*, 236), *համահետևապէս* (*ՄՖՄԱ*, 201), *համառնչական* (*ՄՄՁ*, 672, 15ա), *համառութիւն* (*ԽԷՃ*, 225), *համատիճանութիւն* (ն.տ.), *համարժանի* (*ՅՊՄ*, 31), *համափառատրիմ* (*ՎՄԴ*, 2), *համընթռնումն* (*ԽԷՃ*, 239) և այլն:

8) *Մակ-*. ունենք մեկ-երկու կազմություն. *մակազանազանութիւն* (*ՅԲԶ*, 218) և այլն:

9) *Ներ-*. ունենք հետևյալ բառերը. *ներանկատումն* (*ՈԱ*, 146), 148), *ներխուզական* (*ՄՄՁ*, 3640, 21ա), *ներխուզումն* (*ԹՊ*, 408, *ՄՄՁ*, 3640, 21ա), *ներխոկումն* (*ՊԲՎ*, 358), *ներկրթութիւն* (*ԳՄԱ*, 3,12), *ներմարմնութիւն* (*ԳՊՓ*, 184, *ՅՊԶ*, I, *ՅՊԶ*, II., 1), *ներվանհիմ* (*ՄՖՄԱ*, 10), ներտպական (*ՊԲՎ*, 255), *ներփչումն* (*ՅՊԶ*, I, 240) և այլն:

10) *Շար-*. ունենք հետևյալ բաղադրությունները. *շարաբարդութիւն* (*ՎԲԱ*, 1), *շարայարադրական* («շաղկապի մի տեսակ». *ՅԲԶ*, 187) և այլն:

11) *Ստոր-*. ունենք հետևյալ բառերը. *ստորասեմ* (լատ. *affirmare*. *ԳՄՀ*, *Ոա*, 65), *ստորասումն* (*ԽԷՃ*, 22) և այլն:

12) *Վեր-*. ունենք մեկ-երկու բաղադրություն. *վերապաքինում* (*ՅՊԶ*, I , 20), *վերյօրինումն* (*ՄՊԽ*, 26) և այլն:

13) *Տրամ-*. ունենք շատ քիչ թվով բառեր. *տրամաբաժիսական* (փիս. 2-ով, «փոխարինական» իմաստով. *ԹԻԲ*, 381) և այլն:

գ) Վերջածանցավոր բաղադրվող հիմքով և որևիցե վերջածանցով բաղադրությունները ևս նկատելի չափով գործածվում են լատինաբան հեղինակների երկերում: Այս դեպքում հանդես են գալիս ոչ միայն բայական (ավելի ստույգ՝ դերբայական) վերջավորություններից *-ալ*, *-ել*, *-իլ* մասնիկներն՝ իբրև բայածանցներ (բառակազմական ածանցներ), այլև *-արար*, *-ակ*, *-ական*, *-ակի*, *-ապէս*, *-աւոր*, *-եայ(ք)*, *-եղէն*, *-եցի*, *-ութիւն*, *-ումն*, *-օրէն* ածանցները: Այնուհետև, դրանցով համեմատաբար քիչ թվով բառեր են կազմվում, քան հնարավոր է այլ դեպքերում:

1) Վերը նշված բայածանցներով կազմված ենք գտնում հետևյալ բառերը. *այրէնալ* (փիս. *այրիանալ*. իմա՝ «այրէնալ և այրի լինիլ. լատ. *in viduitatis*

statu constitui. Ռ-ՀԼԲ, 21. հմմտ. *այրութիւն*. ն.տ.), *ազահուտել* (լատ. *ligurite*, *ingurgitare*. ն.տ., 1) , *ալրրուվիլ* (փիս. ալրոուուիլ. Ռ-ՀԼՏ, 6), *բարեգունացուցանել* (ԱԿՅԱ, 67), *գոյացականիլ* (իմա՝ «Կարեն մակադրականք *գոյացականիլ* ի սեռս չէգորականա», ՅԲԲ, 193), *կնկաւորիլ* (ՄՖՄԱ, 345), *կննջոտեմ* (ԳՄԱ, 19), *համայարմարիլ* (ՄՄՁ, 3640, 10բ-11ա), *տնտրիլ* (իմա՝ տնավորվել» ՄՖՄԱ, 345) և այլն:

2) Իսկ *-արար*, *-ակ*, *-ական* և *-ակի* ածանցներով ունենք հետևյալ բառերը. *անձնատրարար* (ՄՄՁ, 3640, 4բ), *նաւարտակ* (լատ. փիռաթայ . ՅՊՁ, 57-58, այլև «աւարառու ծովագնաց». ՎԲՅ, II., 327), *քառասնատրական* (ՄՆ, 7), *քեղնատրակի* (փիս. մ-ով. ՄՖՄԱ, 65) և այլն:

3) *-ապէս*. այս ածանցով ունենք համեմատաբար զգալի թվով բառեր. *արագեղապէս* (ՄԲԽՁ, 16), *ապացուցականապէս* (ԽԷՃ, 12) , *երկարապէս* (ԳՄԱ, 18, ԱԿՅԱ, 78), *կարծիականապէս* (ԽԷՃ, 15) , *կարճառօտապէս* (ՇՀՆ, 324), *հաճոյականապէս* (ՄՄՁ, 5808, 152ա), *յոզնականապէս* (ՅՀԲ, 5) և այլն:

4) *-աւոր*, *-եայ(ք)*, *-եղէն*, *-եցի* ածանցներով ունենք հետևյալ բառերը. *երկայնաւոր* (ՇՀՆ, 349), *երկրորդաւոր* (ՄԵՀ, 39), *երրորդաւոր* (ն.տ.), *չորրորդաւոր* (ն.տ.), *հնոստանեայք* (փիս. դ-ով, ՄՖՄԱ, 367), *երկնեղէն* (ԳՄՀ, IIա, 335. հմմտ. լատ. *celeste*), *Ազդապատեցի* (փիս. *աստապատեցի*. ՄԽԲ, 3) և այլն:

5) *-ութիւն*. այս դեպքում ևս ունենք զգալի թվով բառեր. *գեղջկութիւն* (ԹԻԲ, 297), *եղանակաւորութիւն* (ԽԷՃ, 213), *կայունութիւն* (ՄՄԳԺ, 14), *կարծոտութիւն* («կասկածոտութիւն». ՄԿԱ, 214), *հաճոյականութիւն* (ԹԻԲ, 215, 216), *հայեցողականութիւն* (ՄՄԳԺ, 6), ողբականութիւն (ԽԷՃ, 292), *վեհերոտութիւն* (ԹԻԲ, 301, 314), *վերջաւորութիւն* (ՄՄԲ), *փոփոխականութիւն* (ՄՄԳԺ, 14) և այլն:

6) *-ումն*, *-օրէն* ածանցներով ունենք հետևյալ բառերը. *կարգաւորումն* (ՄՄԳԺ, 44), *ծնրնդօրէն* (փիս. առանց *ը* - ի. ՄՄՁ, 3640, 59բ) և այլն¹:

5. Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ առանձնանում են այն բառերը, որոնք ունեն բարդ ածանցավոր կազմություն: Բաղադրվող հիմքն ինքնին բարդ բառ է, որ ածանցվում է կա՛մ սկզբից, կա՛մ վերջից:

Անհամեմատ մեծ թիվ են կազմում բարդ վերջաածանցավոր բառերը, իսկ բարդ նախածանցավորներն այնքան էլ տարածված չեն: Այս դեպքում ևս գործում են բաղադրության այն սկզբունքները, որոնք ի հայտ են գալիս հայերենում

¹ Այս շրջանից ավանդված որոշ լատինաբան ձեռագրերում հանդիպում են, այսպես կոչված, նախածանցավոր բաղադրվող հիմքի նախածանցմամբ բառեր: Օրինակ՝ *ենթաներիակ(ք)* (ՄՄՁ, 69, 282ա-բ, 252ա, այլև ՄՄՁ, 2275, 121ա)՝ ի հակադրություն *ներիակ(ք)* (ն.տ.) ձևի և այլն:

առհասարակ, թեև չի բացառվում լատիներենի բառակազմության նմանությամբ տեղ գտած այս կամ այն սկզբունքի կիրառումը¹: Ընդ որում հարկ կա հատուկ նշելու, որ առանձնապես հատկանշական է, օրինակ, բաղադրվող հիմքի ձևավոր տարբերակի գործածությունը ածանցման մեջ (ածականի բաղադրական կամ գերադրական աստիճանի ձևը որպես բաղադրվող հիմքի մաս, գոյականի անեզական ձևի փոխարեն եզականը բաղադրվող հիմքի բաղադրիչ ունենալը. հմմտ. *մտադրագունեղապէս, կենսագործեմ* և այլն), բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը ներկայի հիմքի ձևի փոխարեն անցյալի հիմքի ձևով գործադրելը, բացահայտ բառապատճենման դիմելը (օրինակ՝ *թոյլատրութիւն, փխ. թոյլտուութիւն, չափատրապէս*, լատ. *mediocriter, ձեռքածութիւն*, լատ. *manufactio, ջերմարարութիւն*, լատ. *calefactio, ցրտարարութիւն*, լատ. *frigefactio* և այլն):

Այնուհետև, նման կազմությունները բնութագրվում են մի քանի հատկանիշով՝ ըստ բաղադրվող հիմքի պարզ կամ ձևափոխված բաղադրիչ ունենալու, հոդակապով կամ առանց հոդակապի բաղադրված լինելու, հիմքակազմ բաղադրիչի պարզ կամ ածանցական ձևով ներկայանալու և այլն: Բաղադրվող հիմքին ավելացող վերջածանցները, բնականաբար, կերտում են այս կամ այն խոսքի մասին պատկանող բառեր, ընդ որում բավականին շատ են գոյականները և բայերը, իսկ սրանցից՝ գոյականները: Մյուս կարգի միավորները կազմում են եղածի գրեթե մեկ քառորդը:

Եղած օրինակները ցույց են տալիս, որ լատինաբան հայերենի բառապաշարի մեջ պայմանականորեն նորակազմություն հանդիսացող նման բառերը բաղադրվում են *-արար, -ակ, -ական, -ան, -անի, -ապէս, -աւոր, -եայ, -եան, -ել* (նաև *-ալ, -ուլ* և այլն), *-ենի, -երէն, -իկ, -ոյկ, -ոտ, -ու, -ութիւն, -ումն, -ուչ, -օրէն* ածանցներով: Հիշյալ ածանցներով կազմությունների մեջ սովոր մաս են կազմում գոյականակերտ *-ութիւն* և բայակազմ *-ել* (նաև *-ալ, -ուլ* և այլն) ածանցներով բառերը, ընդ որում անհամեմատ շատ են *-ութիւն* ածանցով կազմվածները, որոնք կա՛ն սովորական իմաստով բառեր են, կա՛ն տարբեր ժամանակներում կիրառություն գտած տերմիններ և տերմինային անվանումներ:

ա) *-արար*. այս ածանցով ունենք հետևյալ բառերը. *աստուածասիրարար* (ԹՁԳ, 74), *գարմանագանարար* (ՅՊՁ, I, 370), *իւրաքանչիւրարար* (իմա՝ «մեկամեկ»). լատ. *sigillatim*. ԿԳՏ, 12ա, 17բ, ՍՄՁ, 7560, 17ա, 25ա), *խոհեմտարար* (իմա՝ *խոհեմիտ*, հմմտ. խելամիտ.ՅԸԸ, 181), *սրբազնագանցարար*

¹ Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 160-172:

(ՄՊԽ, 19), *մանրագննարար* (ՅՊՁ, I, 10, այլև ն.տ., II, 26), *մտածականարար* (ԳՄԱ, 107), *չարակրարար* (ԱՄԴ-Հ, 16) և այլն:

բ) *-ակ*. այս ածանցով ունենք հետևյալ բառերը. *անճնայլակ* ՎՅԲ, I, 8, ն.տ., II, 294. իմա՝ «ազանելի ինչ այլանդակ և անսովոր», այլև ԱԴԲ, 40), *գոլորտնակ* (իմա՝ գոլորշի. ՎԲԻ, 31), *դիմայլակ* (լատ. լատուայ «ռամկօրէն մասխարայ կամ սուրաթ վերանուանեն». ՎՅԲ, I, 24, ն.տ., II, 305), *գուգեղևնակ* («տեսակ անօթոյ համագուգակցեալ ի բազմամասնեայց փայտից ի սպաս ջրոյ, զինոյ և այլոց ռոճկացն, զոր ռամկօրէն վառօլ յարանուանեն եւ զի հասարակօրէն յեղեւնոյ յօրինի». ՎՅԲ, II, 308), *կինունակ* («ամուսնացած». ՄՖՄԱ, 249), *համբատունակ (ք)* (ՅՀՔ, 3), *հոգունակ* (< *հոգունակագունեղ*. ՅՄՊ, 10), *չոգունակ* (ՎԲԻ, 31) և այլն:

գ) *-ական*. այս ածանցով կազմված են համեմատաբար մեծ թվով ածականներ. *անդրադարձական* (ԽԷՀԻ), *անդրայշրջական* (փոխ. առանց յ-ի. ՅԲԲ, 199), *անճնառական* (լատ. comissionis. ԿԳՏ, 2բ, ՄՄՁ, 7560, 3բ), *առնատական* (փխ. ր-ով. լատ. radicale. ն.տ., 4բ, ն.տ., 6ա), *առովասական* («որ ասէ հոշականն առասական, այսինքն *առովասական*». ԴՉԲ, 119), աստանդական (ՎՅԲ, II, 297), *արժանապատուական* (< *արժանապատուականագունեղ*. ՊԲՎ, 56), *եզրունական* (ՇՀՆ, 205, *երկրայական* (ՅԲԲ, 6ա), *երկրաչափական* (ՄՄՁ, 2275, 107բ), *լարարածական* (ԽԷՀԻ, 150), *խրատապատժական* (ՇՀՆ, 16, 329), *կէսօրական* (լատ. meridianus. ԿԳՏ, 13բ, ՄՄՁ, 7560, 19բ), *նունաչափական* (ՇՀՆ, 3), *սրբագնութենական* (ԱԿՅԱ, 66), *վաղադասական* (իմա՝ «նախադաս. սկզբնադիր». ՅԲԲ, 159) և այլն:

դ) *-ան*, *-անի*. այս ածանցներով ունենք քիչ թվով բառեր. *մօտեկան* (իմա՝ «մոտակա. մոտը գտնվող». ՏԳ, 45), *դերասան* (լատ. հիսթորիօ. «իրակող առասպելի և ծիծաղունեաց իրաց». ՎՅԲ, I, 23, ն.տ., II, 304), *բոկոտանի* (ԹԴԾ, 39) և այլն:

ե) *-ապէս*. այս ածանցով ունենք հետևյալ բառերը. *արձակագունեղապէս* (եթե *-գունեղ* աստիճանակազմ մասնիկը դիտենք հիմքի երկրորդ բաղադրիչ. ԽԷՀԻ, 203), *հաւատարմագունեղապէս* (հմմտ. *-գունեղ*. ԱՄԴ-Հ, 33), *մեծիրապէս* (լատ. ՅՊՁ, 51. հմմտ. *մեծապէս*, լատ. magnopere. տես «Բազմավէպ», 1855, հ. ԺԳ, էջ 23), *մտադրագունեղապէս* (ԱՄԴ-Հ, 32), *ներսունապէս* (լատ. ինքիմէ. ՅՊՁ, 58, այլև ՎՅԲ, II, 327), *չափատրապէս* (լատ. mediociter. ԿԳՏ, 22ա, այլև ՄՄՁ, 7560, 32բ) և այլն:

զ) *-աւոր*. այս ածանցով ունենք երեք-չորս բառ. *եռանդամաւոր* (ԽԷՃ, 219-220), *երկանդամաւոր* (ն.տ.), *միանդամաւոր* (ն.տ.), *քառանդամաւոր* (ն.տ.) և այլն:

է) *-եայ, -եան*. այս ածանցներով ևս ունենք սահմանափակ թվով բառեր. *այլամասնեայ* (ՎԲԻ, 19), *արամագնեայ* («հայագգի». ԳՊՓ, 184), *հիթանիթեայ* (ՊԲԲ, 2), *նոյակագմեան* (իմա՝ նոյակագմեան տապան. ՅՊՁ, I, 1բ, այլև ն.տ., 3) և այլն:

ը) *-ել* (նաև *-ալ, -ուլ* և այլն բայակազմիչ մասնիկներ). ունենք բավականին սովոր քանակով բառեր (բայաձևեր), որոնք տեղ գտնելով լատինաբան հեղինակների գրավոր խոսքում՝ կա՛ն ինքնուրույն, կա՛ն լատիններենի օրինակով կազմված (պատճենում, հարմարեցում և այլն) բառեր են: Ընդ որում բաղադրվող հիմքերը խոսքիմասային հատկանիշով տարբեր բնույթի են և հիմնականում երկբաղադրիչ (թեև կան նաև եռաբաղադրիչ հիմքեր, օրինակ՝ *ակնաշրջածել*, ԱԴԲ, 21): Ավելացնենք, որ այստեղ նկատի ենք առել բառակերտման վերջին աստիճանը, այսինքն՝ հավասարապես բարդ ածանցավոր ենք համարում և՛ բարդ կազմությամբ բաղադրվող հիմքին *-ել* ածանցի հավելումով, և՛ պարզ կազմությամբ բաղադրվող հիմքին որևէ բայի ավելացումով բաղադրությունները (իմամ. *լիակատար - ել* և *այսր - ա - քարշեն*):

Ունենք հետևյալ ենթախմբերը:

1) Բավականին շատ են *-ել* վերջաբաղադրիչով բառերը. *ակնաշրջածեն* (լատ. չիռքումսփիցիո. ՎՅԲ, I, 4, ն.տ., II, 292), *այսրոստեն* («հետ ցատկել». ՎՅԲ, I, 5, ն.տ., II, 292), *անդրածել* (ՊԲՎ, 20), *անդրանցանել* (ՅՊՍ, 4), *անդրափոխեն* (ԳՍԱ, 4), *անդրաքացեն* (ՎՅԲ, II, 292, ԱԴԲ, 32, ՅՊՁ, I, 20), *աշխատագործեն* (ՅՊՁ, I, 68), *առընթեռլինել* (փխ. *ը-ով*՝ *լ-ից* առաջ, իբրև մեկ բառ. լատ. *adesse*. ԿԳՏ, 6ա, այլև ՄՄՁ, 7560, 8ա), *արդիւնաբերեն* (ԳԱԼ, 7), *աքացահարեն* (ԳՍԱ, 78), *բարձրաբառնեն* (ՄԲԽՁ, 15), *գոյնափոխել* (ԱՄԴՆ, 59), *դիմարմբոստեն* (լատ. իմփետիօ, նույնը նաև *ս-ով*. ՎՅԲ, I, 29, ն.տ., II, 305), *դիցազնաբանել* (ՄՄՁ, 5808, 79ա), *եզրակացուցանեն* (ՄՄԳԺ, 75), *գրօսասիրել* (ԹԻԲ, 216), *ընդադրել* (ՍՓ, 49), *ընդբասրեն* (լատ. *ռեքուսօ*, ՎՅԲ, I, 29, ն.տ., II, 308), *թիկնաստանդեն* (լատ. *թեռնիվեռուօռ*, նաև *ը-ով* և *ջ-ով*. ՎՅԲ, I, 31, ն.տ., II, 309, նաև ՅՊՁ, I, 30), *թոթովախօսել* (ՄԵՆ, 50), *թունայեղեն* (ՅՊՁ, I, 154), *ժառանգատեն* (լատ. *էքսիեռեռօ*, ՎՅԲ, I, 31, ն.տ., II, 310), *լիակատարել* (ՄՖՄԱ, 380), *խրատապատճել* (ՇՆՆ, 7, 90, ՎՅԲ, I, 38-39, լատ. *քասթիլօ*, նաև *քաստիլօ*. ն.տ., II, 314-315), *խրոխատառոցեն* («խրոխտ ձևով սպառնալ». ՎՅԲ, II, 315), *ծոմսպահել* (ՍԳԲՎ, 248, ԱՄԴՆ, 59), *հասակալեն* (իմա՝ *հաս-ա-կալեն* «հասնել ցանկացածին». ՎՅԲ, II, 320), *մեծահռչակեն* (ՄՍԼՏ, 152), *մտածնել* («կռահել, մտքի գալ». ՄՄՁ, 5808, 112բ), *յանդգնադատեն* (ՄՊԽ, 105), *ներսամուծեն* (ՅՊՁ, 223), *նրբաձայնել* (ԳԱԼ, 79), *շարժակցեն* (լատ. *ճեքթիքուլօռ*. ՅՊՁ, 59, այլև լատ.

ջեստիկուլօր. ՎՅԲ, II, 328, «Նոր հայկազյան բառարանն» ունի *շարժակից լինեն*), *շարժառոցեն* (լատ. մօտիվուս. ՎՅԲ, II, 328), *շլանկատեն* («կիսակույր նայել»․ ՎՅԲ, 328, լատ. չէկուցիօ, նաև *p*-ով. ՅՊՁ, 59), *շարառնեն* (ԳՄՀ, I, 193), *մեծարգիցեն* (ՄՖՄԱ, 49-50. «Նոր հայկազյանն» ունի *մեծարգի, մեծարգոյ*), *պէսպիսացուցանեն* (իմա՝ *պէսպիսանամ*. ԹԻԲ, 29), *ջերմենանդացուցանեն* (իմա՝ *ջերմենանդանամ*. ՍՄԳԺ, 114), *տեղակալեն* («բռնությամբ տիրանալ՝ հափշտակել»․ լատ. օքքուփօ, նաև *h*-ով. ՅՊՁ, 32, , ՎՅԲ, II, 336), *ուղակրեն* («հարթել, ուղղել»․ ՅՊՁ, 60, ՎՅԲ, II, 329) և այլն:

2) Մյուս կարգի բայակազմ մասնիկներով ունենք հետևյալ բառերը. *դժուարաբառնալ* (ԹԴԾ, 60), *կրկնատեղանալ* (փոխ. առանց *p*-ի, ԿԳՏ, 13բ, այլև ՄՄՁ, 7560, 19բ), *հարկամիտիմ* (ՎՅԲ, II, 320), *սուտերդնուլ* (ՊԲՎ, 336), *դիրախաբելի* (ՇՀՆ, 3), *վայրընկնելի* (ՅՊՄ, 176), *արտաձգեցեալ* (ՊԲՎ, 264), *կենցաղավարեցեալ* (ՄՊԽ, 9), *սրբազնագրեցեալ* (ՊԲՎ, 77, 206), *վերոասացեալ* (ՍՄԳԺ, 147), *տրտմախտեալ* (ՈԵՆ, 293), *շրջակնած* («ամոթահար՝ շուրջը նայելիս»․ ՅՊՁ, I, 386) և այլն:

թ) *-ենի, -երէն, -իկ, -ոյկ, -ոտ, -ու*. այս ածանցներով ունենք մեկերկուական բառեր. *երկփեղկենի* (ՅՊՁ, I, 150), *այլագգերէն* (ՄԹՃՀ, 69, ԹԻԲ, 711, 248), *շարաժողովիկ* (ԳՄՀ, IIա, 21), *քարասուզիկ* (ՍԳԺ, 22), *ժամագրքոյկ* (իմա՝ *ըն ժամագրքկան* «ժամագրքույկի՝ փոքր ժամագրքի մեջ»․ ՍՊ, 21), *շեկամաղձոտ* (ՄՄՁ, 5808, 93բ), *նանրահնչու* (ՄՄՁ, 5808, 98ա) և այլն:

ժ) *-ութիւն*. այս ածանցն ամենալայն գործածությունն ունի նաև բարդ ածանցավոր բառերի կազմության մեջ՝ անկախ բաղադրվող հիմքի հողակապով կամ առանց հողակապի կազմություն լինելուց, պարզ կամ ածանցավոր բաղադրիչների կազմ ունենալուց, հնչյունափոխված կամ անհնչյունափոխ տեսքով հանդես գալուց և այլն:

Վերջնական բաղադրության մեջ *-ութիւն* ածանցի մասնակցությունը բովանդակության պլանում նույնպես ունի տարբերություն. այն կազմում է ոչ միայն տերմիններ և տերմինային անվանումներ, այլև սովորական բառեր, ընդ որում բաղադրվող հիմքի մեջ, իբրև երկրորդ բաղադրիչ, հաճախ են հանդիպում *-առ, -արար, -արկ, -բան, -բեր, -գր (-գիր), -դր (-դիր), -զնն (-զնին), -խօս* բայարմատները (մեկ դեպքում՝ բայահիմքը):

Նկատի առնելով բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչի նման առանձնացման հիմունքը՝ նախ, այդպիսի բաղադրիչներով բաղադրվող հիմքերով, *-ութիւն* ածանցով կազմությունները ներկայացնում ենք այդ օժանդակ

հատկանիշով, երկրորդ՝ այլ բաղադրիչներով սերված հիմքերով և *-ութիւն* ածանցով կազմություններն այլ հատկանիշի հիման վրա¹:

1) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-առ* բայամատն է. *բաւականառութիւն* (ՍԼԲԱ, 172, այլև *բաւականութիւն*, լատ. սաքիսֆակցիո. ՅՊՁ, I, 26, ՎՅԲ, II, 18-19, ն.տ., II, 301-302), դասառութիւն (ՄՄՁ, 7554), *թափառութիւն* (ՎՅԲ, II, 308), *ծաղրառութիւն* (ԳՍԱ, 33), *հողովառութիւն* (ՅԿԲ. տե՛ս նաև «Լեզվաբանական բառարան», էջ 194), *հոտառողութիւն* (ԱՍԳ-Հ, 49), *շնորհառութիւն* (լատ. պէնէֆիչիում, նաև *բ-ով. ՎԲՅ, ն.տ., II, ՅՊՁ*), *վարձառութիւն* (ՇՀՆ, 51), *փաղառութիւն* (իմա՛ ստուգ պարառութիւն է, այսինքն շուրջառութիւն»։ ԳՁԲ, 85), *փորձառութիւն* (լատ. էքսփերիէնցիա. ՅՊՁ, 78, այլև *պ-ով. ՎՅԲ, II, 340*) և այլն:

2) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-արար* բայահիմքն է. *ջերմարարութիւն* (լատ. calefactio. ԿԳՏ, 23ա, ՄՄՁ, 7560, 34ա), *ցրտարարութիւն* (լատ. frigeffectio. ԿԳՏ, 23ա, ՄՄՁ, 7560, 34ա) և այլն:

3) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-արկ* բայարմատն է. *լրարկութիւն* («չարախոսություն. վատաբանություն». ՎՅԲ, II, 312), *միջարկութիւն* (իմա՛ «ձայնարկություն. ՎՈԴ, 15, այլև ԿԳԲ»²), *վաղարկութիւն* (լատ. տիլացիո. ՅՊՁ, 68, ՎՅԲ, II, 554) և այլն:

4) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-բան* բայարմատն է, ընդ որում կան զգալի թվով տերմիններ և տերմինային անվանումներ. *առաջաբանութիւն* («առաջաբան. ներածություն». ՅԿՊՍ, 5), *աստիճանաբանութիւն* (ԽԷՃ, 64), *աւելորդաբանութիւն* (ՄՊԽ, 29), *բաղդատաբանութիւն* (ԽԷՀԻ, 169), *բառաբանութիւն* (ԽԷՃ, 278), *երկարաբանութիւն* (ն.տ., 277), *երկասյրաբանութիւն* (ն.տ., 63-64), *զարդարաբանութիւն* (ն.տ., 69), *ընդդիմադարձաբանութիւն* (ն.տ., 68), *ժողովաբանութիւն* (ն.տ.), *խոնարհաբանութիւն* (ն.տ., 277, 278), *ծրարաբանութիւն* («ոճ իմն խօսելոյ». ՎՅԲ, II, 315-316), *կարճառօտաբանութիւն* (ԽԷՃ, 4) *հակադրաբանութիւն* (ն.տ., 69), *հակառակորդայաղթաբանութիւն* (ն.տ., 66), *հակառակորդապատճառաբանութիւն* (ն.տ., 68), *հակառակորդապատճառազննաբանութիւն* (ն.տ.), *հակիրճաբանութիւն* (ն.տ., 277), *համառօտաբանութիւն* (ն.տ., 66), *համեմատաբանութիւն* (ն.տ., 169) *հայհոյաբանութիւն* (ՍԼՏ, 6), *հատաբանութիւն* (ԽԷՃ, 277), *յայտաբանութիւն* (ն.տ., 193), *ներհակախնդրալուծաբանութիւն* (ն.տ.), *նսեմաբանութիւն* (ՎՈԴ, 37),

¹ Տե՛ս Վ.Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 161-165:

² Հմմտ. «Լեզվաբանական բառարան», էջ 217:

նուագարանություն (ԽԷՃ, 277-278), *շրջարանություն* (ն.տ., 232, այլև ԷՀԱԲ, 63), *պատճառագննարանություն* (ԽԷՃ, 67), *պատմողարանություն* (ՄՊԽ, 29), *վատթարարանություն* (ԽԷՃ, 278), *վատթարատենչարանություն* (ն.տ., 277), *վերջարանություն* (ԹԻԲ, 790), *քննարանություն* (ԽԷՃ, 68) և այլն:

Հարկ կա հատուկ նշելու, որ այս կետում թվարկված բառերի գերակշիռ մասը քաղված է Խաչ. Էրզրումեցու ճարտասանական երկից, որում դրանք գործածված են իբրև համապատասխան բնագավառի տերմիններ և տերմինային անվանումներ, և այդ երկը գրված է ժամանակի գրաբար հայերենով, որում զգալապես տեղ էր տրված լատինաբան հայերենի հատկություններին¹:

5) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-բեր* բայարմատն է. *առաջբերություն* (ԴՋԲ, 70), *բուսաբերություն* (ՇՀՆ, 223, ԱՏՀ, 18, ԳԱԱ, 7), *ջահաբերություն* (ՄՄՁ, 3475, 274ա) և այլն:

6) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-գիր* (> *-գր*) բայարմատն է. *խորագրություն* (ՈՇ, 778), *ճիղագրություն* (ԹԻԲ, 57, 398), *պատուագրություն* (լատ. տիտուլուս, այլև *թ-ով*. ՅՊՁ, 61, ՎՅԲ, II, 329), *բարտիզագրություն* ԳԱԱ, 112) և այլն:

7) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-դիր* (> *-դր*) բայարմատն է. *ծնրադրություն* (ՄՖՍԱ, 291), *կնքադրություն* (ՊԲՎ, 253), *միջադրություն* (ՈԵԲ)¹ և այլն:

8) Բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-զնին* (> *զնն* -) բայարմատն է. *անուանագնություն* (ԽԷՃ, 26), *աքաղաղագնություն* (ՄՄՁ, 5808, 80ա), *բառագնություն* (ԽԷՃ, 26), *երկրագնություն* (ՄՄՁ, 5808, 79բ-80ա), *ծխագնություն* (ն.տ.), *հաւագնություն* (ն.տ., 81ա), *հրագնություն* (ն.տ., 79-80ա), *ձայնագնություն* (ԽԷՃ, 26), *ձեռնագնություն* (ՄՄՁ, 5808, 80ա), *ջրագնություն* (ն.տ.), *օդագնություն* (ն.տ.) և այլն:

9) Եվ վերջապես բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը *-խօս* բայարմատն է. *անուշախօսություն* (ԽԷՃ, 292), *առանձնախօսություն* (ԱԿՅԱ, 16), *բերկրախօսություն* (ԽԷՃ, 293), *գեղեցկայարմարախօսություն* (ն.տ., 5), *դատարկախօսություն* (ՄՊԽ, 48), *դիրախօսություն* (ԽԷՃ, 292), *երկարախօսություն* (ն.տ.), *զանազանախօսություն* (ն.տ.), *կասկածախօսություն* (ն.տ., 293), *կարծրախօսություն* (իմա «անհաւաստություն և տարակուսական իմն զօրություն բանից». ՎՅԲ, II, 316), *կարկամախօսություն* (ԽԷՃ, 293),

¹ Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ.Համբարձումյան, 18-19-րդ դդ. գրաբարի ճարտասանական երկերի տերմինաբանությունը. «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 2, Երևան, 1985, էջ 257-317:

կետկետախօսութիւն (ն.տ., 292), *հայախօսութիւն* (ՆՅՀՄ, 7), *հանդարտախօսութիւն* (ԽԷՃ, 292), *հաւասարախօսութիւն* (ն.տ.), *հեզախօսութիւն* (ն.տ., 293), *շարունակախօսութիւն* (ն.տ.), *պարզախօսութիւն* (ն.տ., 292), *սաստկախօսութիւն* (ն.տ., 292), *ցասմնախօսութիւն* (ն.տ.) և այլն:

Ինչպես նկատելի է, այստեղ ևս օրինակների մեծ մասն առնված է Խաչ. Էրզրումեցու նույն երկից՝ պայմանավորված *խօսք* բաղադրիչի այն հանգամանքով, որ կազմվում են բազմաթիվ տերմիններ և տերմինային անվանումներ:

Բերված օրինակներով չեն սպառվում բարդ ածանցավոր այն բառերը, որոնք առաջ են եկել բարդ բաղադրվող հիմքով և *-ութիւն* ածանցով: Մնացած մասը ևս կարելի է ներկայացնել որոշակի խմբավորմամբ՝ նկատի ունենալով ոչ միայն հոդակապով կամ առանց հոդակապի բաղադրվող հիմք ունենալը, այլև բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչի խոսքիմասային պատկանելությունը և պարզապես ինչ միավոր (բայարմատ կամ բայահիմք) լինելը:

10) Բարդ բաղադրվող հիմքով և *-ութիւն* ածանցով կազմությունների մեջ առանձնանում են նաև այնպիսիները, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչ են *-բարոյ* (<բարտ-ք), *-գրկ* (<գուրկ), *-ծն* (<ծին), *-կաթ*, *-նման*, *-պղծ* (<պիղծ), *-վանկ*, *-վար* միավորները. *ազատաբարոյութիւն* (ԱԴԲ, 17), *քաղաքաբարոյութիւն* (իմա՝ «քաղաքավարություն», լատ. էտրաֆելիա. ՎՅԲ, II, 341, այլև լատ. էտրաֆելիա. ՅՊՁ, 78), *սիրելագրկութիւն* (ՅՊՁ, 64, ՎՅԲ, II, 331), *վարձագրկութիւն* (ՇՀՆ, 51), *ախթակաթութիւն* (փխ. տ-ով, ՅՊՁ, I, 18) *տրփակաթութիւն* (ն.տ. 61), *խստածնութիւն* (ՄՄՁ, 5808, 91ա), *յամրածնութիւն* (ն.տ.), *անուանմանութիւն* (<անուանանմանութիւն. ԽԷՃ, 242, բառանմանութիւն (ն.տ.), *կուսապղծութիւն* (ՊԲՎ, 206-207, այլև լատ. stuprum. ԿԳՏ, 14ա, ՄՄՁ, 7560, 19բ), *սրբապղծութիւն* (ԳՄՀ, IIբ, 616,643), *հաւասարավանգութիւն* (փխ. կ-ով. ԽԷՃ, 242), *հանգիտավանգութիւն* (փխ. կ-ով. ն.տ.), *բանավարութիւն* (ՄՍԼ, 35, ՎՅԲ, I, 16-17, ՎՅԲ, II, 300), *մարդավարութիւն* (ԹԻԲ, էջ ը, ն.տ., 231, 137, ՓԳԲ, 8) և այլն:

Այնուհետև, բարդ բաղադրվող հիմքով և *-ութիւն* ածանցով որոշ կազմություններում բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը կամ բայական, կամ այլ կարգի (հատկապես անվանական) միավոր է, ուստի ստորև եղած փաստերը ներկայացնում ենք ըստ այդմ:

¹ Հմնտ. «Լեզվաբանական բառարան», էջ 216:

Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը ոչ բայական (այլ կարգի, հատկապես անվանական) միավոր է. *ազգատոհմություն* (ԱԳԲ, 17), *բառալռություն* (ԽԷՃ, 239), *գալլամարդություն* (ՄՄՁ, 5808, 84ա), *երկալեզուություն* (ՅՊՁ, I, 145), *երկակերպություն* (ՍԿԱ, 67), *խորաքնություն* (ՄՄՁ, 5808, 91ա), *ծանրացասմնություն* (ՅԱ, 54), *ծիրանագունություն* (ՄՄՁ, 5808, 90ա), *կիսասարկաուագություն* (ՄՄՁ, 3475, 274ա), *կնկացաություն* (ՎՀՀ, 81), *կնքահայրություն* (ՄՖՍԱ, 345), *հաշուագումարություն* (ՄՄՁ, 3881), *շնամարդություն* (ն.տ., 84ա), *ոտնաչափություն* (ՇՀՆ, 23), *ոտնաշարություն* (ԿԳՔ)¹, *պատուհասականություն* (ՅԱ, 53), *վանկաքանակություն* (ԿԳՔ, այլև *վանգաքանակություն*, փխ. կ-ով լատ. *quantitas syllabarum*. ԿԳՏ, 9բ-10ա, ՄՄՁ, 7560, 41բ)², *փակագծություն* (ԹԻԲ, 607) և այլն :

Բարդ ածանցավոր բառեր, որոնց բաղադրվող հիմքի երկրորդ բաղադրիչը բայական միավոր է. *ատելաշարժություն* (ԽԷՃ, 248), *արժանաչարգություն* (ՄԵՀ, 8), *բաղձաքարշություն* (ՎՅԲ, II, 30), *բանահիսություն* («խոսք, դիմում՝ ուղղված մեկին». ՈԱ, էջ գ), *բարացուցություն* (ԽԷՃ, 293), *գրակազմություն* (ԿԳՔ, տե՛ս «Լեզվաբանական բառարան», էջ 76, այլև ն.տ., 1ա, ՄՄՁ, 7560, 41ա), *գարշաշահություն* (ՅԱ, 56), *դիրակործանություն* (ՅՊՁ, I, 29), *երագարուսություն* (ՄՄՁ, 5808, 90ա), *երթեկցություն* (լատ. *բոնվեռուսցիո*, նաև *բ-ով*. ՎՅԲ, I, 26, ՎՅԲ, II, 306), *երկրաշարժություն* (ԱԿՅԱ, 84, ԲՃԳ, 94), *թերեհատություն* (ՄԽՎ, 27, ՅԹՊՀ, 363), *թոյատրություն* (լատ. *լիչենցիայ*. ՎՅԲ, I, 31. «Նոր հայկազյան բառարանն» ունի *թոյտություն*, այլև *թոյատություն* ձևերով), *ինքնահալանություն* (ՄԽՎ, 22), *լրահնչություն* (ՄՍՔ)³, *խրատապատժություն* (ՇՀՆ, 6), *կտցահարություն* (ՄՄՁ, 5808, 81ա), *հետագայություն* (ՄՄՁ, 672, 11ա), *հրամանակատարություն* (ՎՊԱ, էջ II), *մարդաստեղծություն* (ՎԲԻ, 76, 85), *մարմնանեղություն* (ՇՀՆ, 8), *մեծահաշուեցություն* (ՅՊՁ, 56), *մտածականություն* (ԳՍԱ, 29), *նեղսակրություն* (ՇՀՆ, 200), *նոյնանշանակություն* (ԽԷՃ, 19), *շրջակացություն* (ՎԲԻ, 28), *ջերմեռանդակերտություն* (ԹԽ, 2-3), *սնապաշտություն* (ԹԻԲ, 733), *սրտմտաշարժություն* (ԽԷՃ, 248), *ցուցամոլություն* (լատ. *օստենուսցիո*, նաև *թ-ով*. ՎՅԲ, II, 339, ՅՊՁ, 75), *ուխտակռություն* (ՅՊՁ, I, 2, ՅՊՁ, 21), *քաղցրաբարբառություն* (ԽԷՃ, 292) և այլն.

Լատինաբան հայերենի բառապաշարում կան բարդ բաղադրվող հիմքով և *-ություն* ածանցով կազմություններ, որոնց բաղադրվող հիմքն, իր հերթին,

¹ Տե՛ս *Գ.Ջահուկյան*, Գրաբարի քերականության պատմություն, էջ 23:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս «Լեզվաբանական բառարան», էջ 135:

անհողակապ բարդություն է. *անդրանուանություն* (ԽԷՃ, 225), *առաելնշանակություն* (ն.տ., 246), *արեգդիմություն* (ԹԻԲ, 29), *բաւարարություն* (լատ. satisfactio. ՎՅԲ, I, 18-19, ՎՅԲ, II, 301-302)¹, *գործածություն* (ՍՓ, 9, 73), *խացակություն* (իմա՝ *ակն* «աչք». (ՄՄՁ, 5808, 91ա), *խրամօրինակություն* (ՊԲՎ, 142), *հարսնածություն* (ՄՄՁ, 3475, 267բ-268ա), *հոգունակություն* (փխ. գ-ով. ՄՊԽ, 52), *ձեռքածություն* (լատ. մանուտուրքիօ, նաև դ-վ. և կ-ով. ՅՊՁ, 48, ՎՅԲ, II, 321), *յայտյանդիմանություն* (ԱՄԴ-Հ, 105), *նոյնանունություն* (ԽԷՃ, 19), *շնորհունակություն* (լատ. գրատիտուդօ, նաև կ-ով, ու-ով և թ-ով. ՎՅԲ, II, 328, ՅՊՁ, 59-60)², *պակաստացություն* (ՅԱ, 2), *սակասածություն* (ՄՄՁ, 5808, 91ա), *վատշուէրություն* (լատ. նեքուրիցիա, նաև գ-ով. ՎՅԲ, II, 335, ՅՊՁ, 69-70), *վիճակընկէցություն* (ԹԻԲ, 733)³, *վշտանկմանություն* (ՄՄՁ, 5808, 91ա) և այլն:

ժա) Մինչև այժմ ներկայացնում էինք (*ժ* կետի տակ) այն բաղադրությունները, որոնք վերջին հաշվով կազմված էին *-ություն* ածանցի միջոցով. այսուհետև ունենք նաև այլ ածանցներով կազմված բարդ ածանցավոր բառեր: Այսպես, հանդիպում են բարդ բաղադրվող հիմքով հիմքով և *-ումն* ածանցով բառեր⁴. *անձնաստեղծումն* (ԽԷՃ, 246), *առաջաքայլում* (առանց *ն*-ի ն.տ., 113, 115), *բազմակրկնումն* (ն.տ., 236), *բոցակիզումն* (ԹՊ, 394), *դիմանկատումն* (ՄՄՁ, 5808, 83ա), *դիմարմբոստումն* (ՅՊՁ, I, 12), *գայրեցաշարժումն* (ԽԷՃ, 249), *թաքթաքումն* (ՅՊՁ, I, 21), *իրանկարումն* (ն.տ., 258), *խորհրդահարցումն* (ն.տ., 24), *կանխարմբոնումն* (ն.տ., 253), *հիացաշարժումն* (ն.տ., 249), *միջահատումն* (ն.տ., 246), *յայտյանդիմանակացուցումն* (ԱՄԴ-Հ, 110), *յանդիմանակացուցումն* (ն.տ., 105) և այլն:

ժբ) Եվ վերջապես, *-ուչ*, *-օրէն*. այս ածանցներով ունենք հետևյալ բարդ ածանցավոր բառերը. *արարչավայելուչ* (ՇՀՆ, 320), *հանդիսավեօրէն* (ՍԿԱ, 83), *շեղջակուտօրէն* (ՅՊՍ, 173), *սոնավորձօրէն* (ՅԲԲ, 181) և այլն:

6. Առանձին խումբ են ներկայացնում այն բառերը, որոնք բաղադրված են որևէ բարդ կամ բարդ ածանցավոր հիմքով և այս կամ այն նախածանցով: Իբրև վերջին բաղադրիչ հանդես են գալիս *ան*-, երբեմն *գեր*-, *սպ*- նախածանցները:

ա) *Ան*-. այս նախածանցով, իբրև վերջնաբաղադրիչ, կազմված են հետևյալ բառերը. *անանձրևածին* (ՎԲԻ, 38), *անարժանահամարումն* (ԽԷՃ, 128),

¹ Տե՛ս նաև «Բազմավէպ», 1855, հ.ԺԳ, էջ 23:

² «Նոր հայկազյան բառարանն» ունի *շնորհունակ*՝ նույն նշանակությամբ:

³ «Նոր հայկազյան բառարանն» ունի *վիճակ*, երկու դեպքում էլ լատ.sors-ին համարժեք:

⁴ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, նշվ. աշխ., էջ, 167: Ի դեպ՝ այստեղ բերված բառերի մի մասը նախկինում առանձնացրել էինք նաև իբրև ածանցավոր բառի բարդում (իմա՝ *անձն-ա-ստեղծումն*, *բազմ-ա-կրկնումն* և այլն)՝ չունենալով բնագրային իմաստից բխող բառակազմական

անարժանավարկել (ԹԱԽ, 4), *անընդմիջահատեն* (ԱՄԴ-Հ, 5), *անթուարանություն* (ԽԵՃ, 278), *անկանոնապահություն* (ն.տ., 149), *անկոխատ* (իմա՝ «որ ոչ տայ կոխտոխի ինքեան»։ ՎՅԲ, I, 7-8, ՎՅԲ, II, 294), *անճաղատություն* (ՄՄՁ, 5808, 91ա), *անմոլարագունտ* (ԱԴԲ, 42), *անմտախորհ* (ԹԻԲ, 41), *անյատկարանություն* (ԽԵՃ, 261), *անյարատևողություն* (ԱԴԲ), *անպարկեշտություն* (ԽԵՃ, 278), *անջերմեռանդություն* (ԱԴԲ, 47), *անվանգակերություն* (փխ. կ-ով. ԽԵՃ, 292), *անվնասակարություն* (ԱԴԲ) , *անտրամադրարանություն* (ԽԵՃ, 278) և այլն:

բ) *Ապ-*, *գեր-*. այս ածանցներով ունենք նման կարգի մեկ-երկու բառ. *ապերկմիտ* (ՇՀՆ, 147, 227), *գերանձնիշխանաբար* (ՅՊՁ, I, 313) և այլն¹:

7. Լատինաբան հայերենով ավանդված գրական հուշարձաններում բավականին նկատելի են այլ լեզուներից կատարված փոխառությունները, որոնք գործածվում են կա՛մ ուղղակիորեն, կամ հայերեն (թարգմանական) զուգահեռի հետ միասին: 14-18-րդ դդ. հայերենի բառապաշարն այս տեսակետից ունի որոշակի առանձնահատկություններ: Դրանց լիարժեք բացահայտումը մեծապես կարող է նպաստել հայոց լեզվի պատմության ամբողջական վերհանման գործին:

ա) Նման փոխառությունների աղբյուրն առաջին հերթին, բնականաբար, լատիներենն է, որը միջնադարյան հոգևորականության միջավայրում գործառույն էր իբրև «մեռած» լեզու: Միարարական գործիչները հայերենի մեջ կատարում են նաև այդ կարգի նորամուծություն՝ լատիներենից ուղղակիորեն կատարվող փոխառությունների գործածություն: Կան նաև այնպիսի փոխառյալ բառեր, որոնք առնված են այլ լեզուներից, սակայն ակնաբար լատիներենի միջնորդությամբ: Օրինակ՝ *արսինդիոս* (ԱԴԲ, 13), *ալֆա և օմագո* («առաջին և վերջին. սկիզբ և վերջ»։ ԳՄՅՅ, 9-10, 202), *անթրոփետք* (< *անթրոփիտացն*. իմա՝ «այսինքն՝ մարդատնկացն»)՝ «մարդակերպ»։ ՄՄՁ, 3475, 255բ), *աչետիայ* (իմա՝ «*Աչետիայն* է բառ յունական և նշանակե լքումն, պղերգութիւն, ձանձրութիւն և վիսպ պակաստացութիւն, թուլ պակաստացութիւն և ծուլ պակաստացութիւն»։ ՊԲՎ, 353) և այլն:

Նկատենք նաև, որ փոխառյալ բառերը վերաբերում են որոշակի ոլորտների, լայն իմաստով՝ մշակութային բառեր են: Լատին քարոզիչները հայերենի բառապաշարի մեջ մուծում են գիտական-գիտակարգային և իմացական, պետական-իրավական և պաշտոնեական, հոգևոր-դավանաբանական (հատկապես կաթոլիկական), քերականական-լեզվական

աստիճանականության հաստատման հնարավորություն. հարցն այժմ էլ մնում է բաց, ուստի բերում ենք այս խմբի մեջ՝ իբրև - *միմ* վերջնաբաղադրիչով կազմություններ:

հասկացությունների անվանումներ հանդիսացող բառեր և տերմիններ, ինչպես նաև այլ կարգի բառեր (օրինակ՝ նյութի անվանումներ, ամսանուններ, հին աշխարհի և ուշ միջնադարի երևույթների անվանումներ և այլն:

Նման տարբերակվածությունը տվյալ դեպքում հիմք է հանդիսանում փոխառյալ բառերի խմբավորման և ըստ այդմ ներկայացնելու համար:

1) Գիտական-գիտակարգային, իմացական անվանում հանդիսացող բառեր. *ափսթրաքում* (ՎՄՁ, 1663, 27, այլև *ափսթրաքարար*. ն.տ., 73), *դիալեքիկայ* (ՄՄՁ, 2275, 107ա, այլև *դիալեքիկոսք*. ն.տ., 115ա, *դիալիքիկայ*. «որ է տրամաբանութիւն, կարգեալ և թարգմանեալ ձեռամբ Բարդոյիմէնսի եպիսկոպոսի». ն.տ., 106ա, *դիալեքիկայ*. ՄՄՁ, 69, 266բ), *էրիդաֆիա* («այսինքն՝ վերնագիր յոյն գրով գրեալ». ՄՄՁ, 2037, 42բ), *թօֆիկորում* («և յայսպիսի հաւաքաբանութենէս ուսուցանէ գիրքն *թօֆիկորում*, որ կոչի տեղեաց». տերմինը գործածված է հոգնակի սեռական հոլովով. ՄՄՁ, 2275, 108ա), *լօճիքայ* (ՄՄՁ, 69, 268 բ, այլև *լօճիկայ*. ՄՄՁ, 2275, 108 ա, ՄՄՁ, 69, 268բ), *հռիտոր* (ՅՁԳ-Հ, 4 ա, *մեթաֆիզիքայ*// *մեթաֆիզիկայ*. ՄՄՁ, 69, 272 ա-բ, 273բ, ՄՄՁ, 2275, 106բ, ՎԲԻ, 6-7), *մեղողք* (ՄՄՁ, 2275, 106ա), *սօֆիսթիքայ* (ՄՄՁ, 69, 311բ), *տրակ* (իմա՝ լատ. tractatus «շարադրանք». ՆԾՁ, I, 7, ՍՊԽ, 90, ՅԿՀԳ, 12, ՄՄՁ, 5808, 78ա), *քաթէկօրիկայ* (ՄՄՁ, 2275, 119ա, 129ա, ՄՄՁ, 69, 280ա), *քունքրէթում* (այլև *քօնքրէթարար*. ՎՄՁ, 27, 73), *ֆիզիքայ* (իմա՝ «առաջին գիրքն *ֆիզիքոց*». ՄՄՁ, 2275, 106ա), *ֆիլիզոֆոս* (ՄՄՁ, 2037, 18ա) և այլն:

2) Պետական-իրավական և պաշտոնական անվանում հանդիսացող բառեր. *դուքս* (ՅԿՀԳ, 13, ՄՖՄԱ, 61, 115), *գօնսուլ*//*գօնսուլոս* (ՄՄՁ, 2037, 6ա, 7ա, 14ա), *ինտուլճենցիայ* («որ ներողութիւն թարքմանի ... *ինտուլճենցիայն* ազատականութիւն իմն». ՊԼՎ, 281), *մօնարցիա* (իմա՝ «որ թարգմանի միահեծան կամ համատարած տէրութիւն». ՄՄՁ, 2037, 13բ), *պարոն* (ՄՄՁ, 2037, 133ա. տերմինն օգտագործված է հայոց Արշակունիներին վերադիր, այլև կլիկյան թագավորներին՝ հավասարապես, նաև ՄՖՄԱ, 32, ԳՄՀ, I, 18, *պարոնութիւն*. ՄՄՁ. 2037, 131ա), *սինհոթոս* (ԹՄՄ, 30, ՅԿՀԳ, 33, 118), *տուկ* (իմա՝ լատ. dux, այլև *քրինձք*, *մարգէզք*, *կոմսեր*. ՄՄՁ, 2037, 130ա, այլև *տուկս*. ն.տ. 107ա), *ուրայ* (լատ. urbs «քաղաք. քաղաքի բնակչություն». ն.տ., 14ա), *փալթ* (լատ. appalto «դաշինք. պայմանագիր». ՈԵՆ, 302) և այլն:

3) Հոգևոր-դավանաբանական, հատկապես կաթոլիկական-միարարական միջավայրի անվանում հանդիսացող բառեր. *քրաջուրք* (ՄՄՁ, 2515, 82ա),

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *երկմիտ*, սակայն չունի *գերանձն*, ոչ էլ *գերանձնիշխան* ձևերը:

գլերիկոս (ՏԳ, 10), *իլլութրիճայ* (լատ. -իտալ. la liturgia «պատարագամատույց, խորհրդատետր»։ ՈԵՆ, 302), *լիթանեայ(ք)* (լատ. «դիմում. կոչ»։ ՄՎՊՀ, 102, 106), *լօթերականք* (հմմտ. քավվինականք. ՄՖՄԱ, 101), *լաթինական* (ՍՊԽ, 16), *կաթօլիկոս* (ՄՄՁ, 2037, 134ա), *կալանդր* («որ է տաւնացոյց»։ ՏԳ, 7, 25, այլև *կալանդ. ն.տ.*), *կարդինալ/կարտինար/կարտինալ*. ԳՄՀ, I, 186, ՏԳ, 110, ՄՄՁ, 2037, 34բ, 74բ), *մաճօր* («չորրորդն սրբոյն Մարիամու *մաճօրն* կոչեալ»։ ՄՄՁ, 2037, 34բ), *միսալ* («լատինների և միարարների պատարագամատույց»։ հմմտ. Աճառյան, հ. 3, 324), *պատեր* (լատ. հայր. այստեղ՝ հոգևոր հայր. ԳՄՀ, I, 403), *պաֆֆիսմոս* («ընդէր կոչի *Պաֆֆիսմոս*, որ է մկրտութիւն. անունս այս *Պաֆֆիսմոս* է յունական, որ նշանակէ լուացումն»։ լատ. baptismus. ՊԲՎ, 246), *սուպ* («անքաղաքավարի՝ առանց ընտել լինելու»։ ԳՅԲ, II, 332), *սուփիլիքայ* (լատ. supplica «աղերսագիր, խնդրագիր»։ ՈԵՆ, 302), *փափ* («պապ», հոգևոր հայր՝ գլուխ»։ ՊԲՎ, 70, ՄՖՄԱ, 109,351), *փենթբօքէ* («տօն Հոգևոյն սրբոյ»։ ՊԲՎ, 73), *քավվինականք* («կավվինյան ուղղություն կրողներ»։ ՄՖՄԱ, 101), *ֆռանկ* (ԳՄՀ, I, 1, ԳՄՀ, IIա, 158, ՅՁԳՀ, 4ա, ՎԲԱ, 1 և այլն), *ֆռանկստան* («այսինքն զԵրոպա»։ ՎԲԱ, 8), *ֆրա//ֆրայ* (ՄՄՁ, 2551, 82ա, ՄՄՁ, 69, 293բ), *ֆրեր//ֆրեր* («միաբանող եղբայր»։ ԳԹ, 20, ԳՄՀ, I, 33, ԹՄՄ, 8) և այլն:

4) Քերականական - լեզվագիտական հասկացությունների անվանում հանդիսացող բառեր. *անթիթօզիս* (ՅԲԲ, 206, 209), *ակցենտ* (լատ. accentus. հմմտ. ԼԲ, էջ, 8)¹, *ջերունդիա* (լատ. gerundum. ՈԵԲ, հմմտ. ԼԲ, էջ 264), *ջերունդիական* (ՅԲԲ, 178, 202. ԼԲ-ն չունի), *սինթոզիս* (ՅԲԲ, 206, 209), *սինքաթէ (գրամաթայ)* (իմա՝ «որ է առ նշանակն»։ ՄՄՁ, 69, 278բ), *սուպինայ* (ՅԲԲ, ՈԵԲ. հմմտ. ԼԲ, էջ 281), *սուփինական* (ՅԲԲ, 202. ԼԲ-ն չունի), *փարենթազիս* (ՄՄԲ. հմմտ. ԼԲ, էջ 303) և այլն:

5) Տարբեր կարգի նյութերի անվանում հանդիսացող բառեր. *սալանոս* (իմա՝ եբենոս. ԱԴԲ, 49), *մագնիս* (լատ. մակնէս. ՅՊՁ, 49-50, ՎՅԲ, II, 321), *մետալ* (իմա՝ «այսպիսիք են ևս կենդանիք, տունկք, քարինք և *մետալք* և այլք»։ ՊԲՎ, 21), *մեռինայ* (լատ. աքօնիթում. ՅՊՁ, 51-52, այլև լատ. ակօնիտում «խոտ ինչ թունալի, որ բուսանի ի լերինս անջրդիս, մերկս, քարածեռս...»։ ՎՅԲ, II, 323)²,

¹ Հմմտ. Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարսգյուլյան, Լեզվաբանական բառարան (այսուհետև՝ ԼԲ):

² «Նոր հայկազյան բառարանն» ունի *մեռինես/միռինէս*, որ հղում է *մուռունէս/միռնէնէ* (< հուն. murene) «օձաձկան մի տեսակ՝ ուժեղ և ատամնավոր»:

պլօրեղէն (իմա՛ «լուսինն այլ անուամբ պլօրեղէն», ՄՄՁ, 3640, 17բ), *ցմաքսան* (Դ-ՋԶ, 91)¹, *սմարակտոս* (ՅՊՁ, 64, 155, այլև *սմարագորու*. ՎՅԲ, II, 331) և այլն:

6) Ամիսների անվանումներ. *յանուար* (իմա՛ «Ամիսք տարւոյն. *յանուար*, *ֆեբրուար*, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, *աւգոստոս*, սեպտեմբեր, *հոկտոբեր*, *նովեմբեր*, *դեկեմբեր*». ՎՈԴ, 8)¹, ինչպես նաև *սէմտէմբեր* (ՏԳ, 102-103), *հոկտէբեր*//*հօկտէբեր* (ն.տ., 7) և այլն:

7) Հին աշխարհի և ուշ միջնադարի երևույթների անվանում հանդիսացող տարբար կարգի բառեր. *աշլեքեստական* (լատ. *Aslepiadaeum*. ԿԳ-Բ, 18բ-19ա, ՄՄՁ, 7560, 42ա), *գամէլոնտ* (լատ. *camelus* «ուղտ». ՄՄՁ, 5898, 98ա), *կլիգօնեական* (հատ. *Glyconium*. ԿԳ-Բ, 18բ-19ա, ՄՄՁ, 7560, 42ա), *ջաքռոն* (լատ. *scapulae*. (իմա՛ «սակայն *ջաքռոն* և գլխարկն սեաւ – *cum scapularitamen et capucio nigro*». ԳՄՀ, I, 512), *ջամբռ* (լատ.. *camera*. իմա՛ «և գթուղթն միաբանութեան...եղաք *ի ջամռին* արքունի – *in camera Regina*. ԴԹ, 34-35), *սաֆիգական* (լատ. *Sapphicus* «սապֆոյական». ԿԳ-Բ, 18բ-19ա, ՄՄՁ, 7560, 42ա), *սօլեր* (լատ.>ֆրանս. *soulier* «կոշիկ») . «Եւ *սօլեր* արծաթի և ոսկի ազաներ յոտսն իւր». ՄՄՁ, 2037, 81բ), *քարիսթեայ* (լատ. *caristia* «խարիստիա. փետրվարի 22-ին կատարվող ընտանեկան համերաշխության տոն՝ հին աշխարհում». ՊԲՎ, 257), *օլիմբիական* (ՄՄՁ, 5808, 84ա) և այլն:

Չենք անդրադառնում լատիներենի ազդեցությամբ կազմված հայերեն կամ բուն փոխառյալ այն բառերին, որոնք անձնանունների և տեղանունների, ժամանակի եվրոպական երևույթների, ազգերի և ժողովուրդների անունների տառադարձումներ են՝ ուղղախոսական-արտասանական անմիակերպ, տարբեր կարգի ձևացումներով և նշանակումներով:

բ) Լատինաբան հայերենի բառապաշարում քիչ չեն նաև այլ լեզուներից կատարված փոխառությունները, որոնք ավելի շուտ բանավոր-խոսակցական ճանապարհով են անցել գրավոր խոսքին: Հայտնի է, որ լատին քարոզիչները մեծ մասամբ հայերենին փոքրիշատե տիրապետում են Հայաստան գալուց հետո, ընդ որում շփվելով ոչ թե Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալ հոգևորականների հետ, այլ ուրիշների: Այնուհետև, նրանք հին հայերենին ծանոթանում են ոչ թե բանավոր գործածողների, այլ նրանց գրած գրքերի լեզվի հիման վրա: Սա հարցի հոգեբանական կողմն է, այսինքն՝ լատին քարոզիչները, ծավալելով հակոտնյա գործունեություն, բնականաբար դժվարություն են ունենում հին գրական

¹ «Նոր հայկազյան բառարանն» ունի *ցմախ* թուփ անպտուղ՝ բարակ և նուրբ տերևներով, խիստ դառը,, սպանիչ թռչնոց»:

հայերենին լիովին, թեկուզև իբրև ոչ կենդանի լեզու տիրապետելու հարցում: Ուստի նման փոխառությունները կատարված են ոչ թե առաջին անգամ, այլ դրանք եղել են հայերենում առհասարակ, իսկ լատինաբան հայերենի մեջ են առնվում խոսակցական հայերենին ըստ հնարավորին տիրապետելու և հետևելու ճանապարհով:

Դրանք հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում արաբերենից, պարսկերենից, թուրքերենից, ինչպես նաև հունարենից և ֆրանսերենից կատարված փոխառություններ են, որոնք վերցվել են կամ անմիջաբար, կամ միջնորդավորված ձևով:

1) Արաբերենից փոխառյալ բառեր. *ազապ* (լատ. *innubes* կամ *innuba*, արաբ. *ʿazab*. հմմտ. պրսկ. *azab*, թուրք. *azab*, քրդ. *azab*. «թե իցե կին լաւագոյն առն յիրմէ կողակցէ որբացելում մնա *ազապ*»։ ՄՖՄԱ, 324, այլև *ազապնալ*. լատ. *viro*, կամ *uxore*. Ռ-ՀԼԲ, 4, 6), *աճէպ*, *աճէպ քան*, *աճրրլոս քան*, *աճրրնալ*, *աճրրցուցել* (լատ. *admiratio res mirabilis* և այլն. իմա՝ *աճապ* < արաբ. *ʿajab* «արդյոք». «միթե»), *ամանաթ*, *ամանաթել* (լատ. *depositum, deponere*, արաբ. *amanat* «աւանդ»), *ասրայ* (արաբ. *ʿabra*, հմմտ. քրդ. *abre* «ամանի քաշը. տարա». հմմտ. ֆրանս. *tare*), *բալասամ/պալասամ* («որք ամենեքեան թեպէտ լիք իցեն *պալասամօք*, սակայն նառաւել մեծագունոջ եղիցի աւելի *պալասան*, քան նայլս»։ ՊԲՎ, 139-140, այլև «որ խառնեալ իցէ ի ձիթոյ և *բալասամիւնոյ*, և օրհնեալ իցէ յեպիսկոպոսէ»։ *balsamo admisti*. ԳՄՀ, II ք, 519, արաբ. *balasan* «մի տեսակ թուփ՝ բուժիչ բույրով և յուղով»), *գօհրա* (արաբ. *zuhra* «Արուսյակ»։ ԿԳՏ, 12ա, ՄՄՁ, 7560, 17ա), *դամար* (արաբ. *qamar* «լուսին»։ ԳՄՏ, 12ա, ՄՄՁ, 7560, 17ա), *խարճ* (արաբ. *xarj* «ծախք»։ ՀՎՊ, էջ ք, 1, ՌԵՆ, 294), *մասխարութիւն* (մասխարայ < արաբ. *masxara* «ծաղրածու»։ ԴԶԲ, 76), *մուշթարի* (արաբ. *mustari* «լուսնթագ»։ «իշխօղ տարւոյն լինի *Մուշթարին*»։ ՎՀՀ, 68), *շամս* (արաբ. *sams* «արեգակ»։ ԿԳՏ, 5ա), *շարպաթ* (արաբ. *sarbat* «օշարակ»։ հմմտ. ֆրանս. *sorbet*. իմա՝ «և զարին աղքատին իբրև *զշարպաթ* խմեն»։ ՄՄՁ, 5097, 79ա), *նաղամ* (արաբ. *rayam* «հրամանագիր, հրովարտակ»։ ՎՌԴ, 10) և այլն:

2) Պարսկերենից (նաև պահլավերենից) փոխառյալ բառեր. *ջուխտ* (իմա՝ «օրինակ ջուխտ թոց»։ ՎՌԴ, 33. պրսկ. *juxt* «զույգ»), *նամիք* (փխ. *կ-ով*. «զայս տեսանէին տխմարքն և *նամիքն* և ասէին»։ ՄՄՁ, 2037, 83. պիլ. *ramik* «հասարակ ժողովուրդ»։ հմմտ. հայ. *նամ, երամ*), *տէֆ* («տէֆս հարկանեն ծնծղայքով»։ ԴԶԲ, 77. *դափ* < պիլ. *daf*, պրսկ. *daf* «ձեռքի թմբուկ. դափ»), *ֆերման* («և առեալ ի նմանէ

¹ Այստեղ ընդգծվածները գրությամբ մոտ են լատիներենին, հատկապես միջնադարում գործառույ:

զփերման կաթողիկոսութեան յաշխարհին օսմանցոց»։ ՀՊՎ, 28-29. պրսկ. ferman «հրաման»։ հմմտ. հայ. *հրաման*) և այլն։

3) Արաբերենից պարսկերենի միջոցով կամ հակառակն անցած բառեր. *ադաթ* (*ադաթով* լատ. de more կամ iuxta consuetudinem. Ռ-ՀԼԲ, 3, այլև *ադաթ ենել*, լատ. consuetudinem inducere, ն.տ., *ադաթ//ադաստ* <արաբ. պրսկ. adat «սովորույթ, կարգուկանոն»), *ազիզ//եզիզ* (լատ. probus կամ rectus, այլև *ազրզնալ*, *ազրզութիւն*. Ռ-ՀԼԲ, 4. պրսկ., արաբ. `aziz «սիրելի, հաճելի. թանկագին»), *ֆարդ* (ՎՈՂ, 34. արաբ., պրսկ. fard «կենսո ու զույգ») և այլն։

4) Պարսկերենից, հավանաբար թուրքերենի միջոցով անցած բառեր. *զնճիլ* («եզիտ զգործիս տանջանաց և կտտանաց, այսինք *զզնճիլն*, որն է երկաթքն, զկոճեղն ոտիցն»։ ՄՄՁ, 2037, 6բ. թրք. zenjil > պրսկ. zenjir, zanjir և այլն), *չաւփալայ* (*արտակ*. լատ. colaphus. Ռ-ՀԼԲ, 2) և այլն։

5) Թուրքերենից անցած բառեր. *չոքիլ* («Իւրաքանչիւր ոք ի յընտանեցն *չոքիցի* ի ծունկս և երկիրպագանիցէ»։ ՄՎՊՀ, 71, այլև ն.տ., 72, ԳՄՅ, 117. թրք. cok-mek «ծնրադրել. հմմտ. թրք. cok «ծունկ»), *քիրաճ* («թէ ոչ ի քարէ, ի փայտէ և ի *քիրաճէ*»։ ԱՊԲ, 17. թրք. kirec «կիր. այրած կիր») և այլն։

6) Հունարենից ուղղակիորեն կամ թուրքերենի միջոցով անցած բառեր. *կեփաս* («դու կոչեցես *կեփաս*, որ թարգմանի ասորերէն վէմ և յունարէն գլուխ»։ ՅԿՀՃ, 6. հուն. κεφαλη «գլուխ»), *սինօռ* «Եւ անտի և այսր պահեցաւ այս սահման զի գեղոց և գետոց *սինօռ* դնեն և արձանս կանկնեն» . ՄՄՁ, 2037, 6բ, այլև 13բ, 107ա, ԳՁԲ, 75, թրք. sinor «սահման», հուն. σνορος «հարակից, կից») և այլն։

7) Ուշ շրջանի լատիներենից, հավանաբար ֆրանսերենի միջոցով անցած բառեր. *ալմանակ* (լատ. ephemeris, calendarium. Ռ-ՀԼԲ, 6. հմմտ. հայ. *էֆեմերտի*. ֆրանս. almanach, ուշ լատ. almanachus), *տըֆընդեմ* (իմա՛ «Եւ *տըֆընդող*, այսինքն է պատսպարող ժողովրդեանն»։ ՄՄՁ, 2037, 7ա. լատ. defendere, ֆրանս. defendre «պաշտպանել») և այլն։

8) Առանձին խումբ են այն բառերը, որոնք մեր կարծիքով փոխառյալ կարող են լինել։ Նշենք դրանցից մի քանիսը. *ադայ* («*ադայ* և կղզի»։ հոգն. *ադեք*. լատ. insula. Ռ-ՀԼԲ, 3, հմմտ. *ադեն//ադին*, ասոր. `eden, եբր. `eden, արաբ. adn < ասուր. idinu «դաշտ»), *աիփ* (այբուրենի առաջին տառի անվանումը. լատ. prima littera Armeniorum. հուն. αλφα < սեմ.՝ եբր. alef, ասոր. alaf «այբ»), *տաճիկ* («Ի սորին Կոստանդինիս ատուրքն *տաճկնին* եկեալ ի Սիծիլիա կղզոչն և յաւարի առին զամենայն»։ ՄՄՁ, 2037, 107ա. արաբ. taĉik «արագավազ». միջին պրսկ. taĉik, պրսկ. tazi. հմմտ. հայ. *թազի* «մի տեսակ շուն») և այլն։

9)Եվ վերջապես, նշենք նաև հետևյալ բառերը, որոնք ամենայն հավանականությամբ փոխառյալ են, թեև այս կամ այն դեպքում բնորոշվում են իբրև «անստույգ բառեր», բարբառային, ինչպես նաև բնիկ (հ.-ե. ծագման). *ազաթ*, նաև *ազաթել*, *ազաթել տալ* (լատ. *reverentia*, *honor observentia* և այլն. Ռ-ՀԼԲ, 3)¹, *ակռատ (էնել)* (լատ. *ientare*. ն.տ., 9. ըստ Գ.Ջահուկյանի՝ բարբառային բառ, հարցականով նշված), *աղեկ* (լատ. *bonns*. ն.տ., 11), *ըռզայ* («փական, սողնակ». ՄՄՁ, 2037, 83ա), *թաթ* («կշեռքի թաթ». ՄՄՁ, 3640, 66բ), *խենճ* («Խաղս խացան թաթերով, զանդամսն շարժեն *խենճերով*». Գ-ՋԲ, 77. ըստ իս՝ հմմտ. *կինձ* «աքացի», հավանաբար բնիկ և ոչ թե փոխառյալ), *կոպար* («Կէտ է, որ ոմանք *կոպար* ասեն և ոմանք սինօռ, այսինքն նշան սահմանաց. Գ-ՋԲ, 75), *մաղրզմայ* (իմա՝ «և *զմաղրզմայն* մարմնոյ և արեամբ». ՄՄՁ, 6562, 35բ, լատ. *patina*. ԳՄՀ, IIբ, 690), *չրւան* («Իսկ դատաւորն դատեց զնա *չրւանօք* ձաղել և հանել արտաքս ի քաղաքէն, գոր և արարին իսկ». ՄՄՁ, 2037, 83բ. հմմտ. ըստ իս՝ *ճոպան* «պարան, թոկ») և այլն:

8. Լատինաբան հայերենի բառապաշարն ունի նաև այնպիսի բառային միավորներ՝ բառեր, բառակապակցություններ, արտահայտություններ, ոճեր և այլն, որոնք առաջացել են նոր ժամանակի թելադրանքով, ոչ այնքան նորակազմություն են՝ արտահայտության պլանի նկատառումով, որքան բառային և այլ կարգի պատճենումներ, ընդօրինակումներ, հարմարեցումներ, ինչպես նաև հայերենի ներքին միջոցների օգտագործման արդյունք հանդիսացող երևույթներ:

Հայերեն գրավոր լեզվի այս տարբերակը, որ գործառու է շուրջ երեքուկես հարյուրամյակ (հիշենք՝ 1320-ական թթ. կեսերից մինչև 1780-ական թթ. սկիզբը), արտալեզվական և լեզվական գործոններով ու ազդակներով պայմանավորված, չունի հայերենի մյուս տարբերակներից օգտվելու հետևողականություն: Տարբեր ժամանակներում, առանձին գործիչների և կրթական հաստատությունների ներկայացուցիչների երկերում տեղ են գտնում բառապաշարի այնպիսի երևույթներ, որոնք վերաբերում են ոչ միայն հին և միջին գրական հայերենին, այլև վաղ աշխարհաբարին: Այնուհետև, լատինաբան հեղինակները, հավանաբար ոչ այնքան լիովին տիրապետելով հին գրական հայերենին (գրաբարին), հանդես են բերում վերջինիս բառապաշարի հատկապես իմաստաբանության ոչ բավարար իմացություն, որի հետևանքով նրանց երկերում գործածված շատ բառեր ու բառաձևեր իրենց կազմությամբ կամ գործառությամբ սովորաբար

¹ Նշենք, որ *ազառ* «անզբաղ» բառի հետ կապ չունի:

համապատասխանում են գրաբարին, իսկ իմաստաբանության տեսակետից չունեն այն ծավալայնությունը, որ նկատելի է գրաբարում:

Այսպես, Հովհաննես Քոնեցու «Յաղագս քերականին» աշխատության լեզուն իբրև 14-րդ դ. 1-ին կեսի լատինաբան հայերենի նմուշ, պարունակում է բառապաշարի այնպիսի երևույթներ, որոնք վերաբերում են թե առհասարակ գրաբարին, թե ժամանակի խոսակցական հայերենին: Հանդիպում են ոչ միայն սովորական բառեր, այլև տերմիններ ու տերմինային անվանումներ, որոնք կազմված են լատիներենի օրինակով՝ իբրև պատճենում կամ հարմարեցում¹:

Նման երևույթների հանդիպում ենք նաև 16-րդ դ. 2-րդ կեսի հեղինակ Գավիթ Չեյթունցու «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ: Այստեղ նույնպես գործածվում են բազմաթիվ բառեր և տերմիններ, որոնք կրում են ժամանակի մտածողության կնիքը, ընդ որում կան նաև լատինատիպ կազմություններ՝ ոչ միայն ձևային, այլև իմաստային հարմարեցմամբ²:

Եթե հայ հեղինակների երկերում փոքրիշատե կան նման երևույթներ, ապա դրանք առավել մեծ չափերի են հասնում հայերեն սովորած օտար գործիչների գրավոր խոսքում: Այսպես, 17-րդ դ. հեղինակ Կղեմես Գալանոսի հայտնի քերականական և տրամաբանական աշխատության (1645 թ.) բառապաշարն ունի այնպիսի բառերի և տերմինների գործածություններ, որոնք ներկայացնում են ոչ թե արտահայտության, այլ բովանդակության պլանի առանձնահատկություններ:

Կղ.Գալանոսը կիրառում է մի շարք տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք բառակազմությամբ նոր չեն, գործածվելիս են եղել նախկինում, սակայն իմաստի տեսակետից ի հայտ են բերում որոշակի տարբերություններ: Ասածն ավելի համոզիչ դարձնելու համար հեղինակի երկում գործածված բառային շատ միավորներ համեմատենք դրանց գրաբարյան՝ նախնական գործածությունների հետ (համեմատությունը կատարում ենք «Նոր հայկազյան բառարանի» տվյալների հիման վրա):

Այս առումով հարկ ենք համարում նշելու հետևյալը:

1) Կան բառեր և տերմիններ, որոնք «Նոր հայկազյան բառարանում» նշվում են ավելի մեծ թվով համարժեքներով, քան Կղ.Գալանոսի երկում. *անըսկիզբն*//*անվաղճան* (լատ. *carens principio, carens sine*. ԿԳՏ, 2բ, այլև ՄՄՁ 7560, 2ա), *անհատ* (լատ. *individuum*. ԿԳՏ, 2բ, այլև ՄՄՁ, 7660, 3ա),

¹ Տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ.:

² Տե՛ս *Դավիթ Չեյթունցի*, *Մեկնութիւն քերականի*, Երևան, 1981:

անպակաս/աննուազ (indeficiens. ն.տ., 3բ, այլև ն.հ., 4բ), *կարանալ* (լատ. posse. ն.տ., 13ա, այլև ն.տ.18բ) և այլն:

2) Բառեր կամ տերմիններ, որոնց համար նշվող լատիներեն համարժեքներն այլ են, այսինքն՝ «Նոր հայկազյան բառարանը» տալիս է ուրիշ ձևով, քան Կդ.Գալանոսը. *այլազգաբար//զանազանապէս* (լատ. diversimode. ԿԳՏ, 1բ, այլև ՄՄՁ, 7560), *անանճատելի/անբաժանելի* (լատ. indivisibilis. ն.տ., 1ա, այլև ն.տ., 2ա), *անճնատրական/անճնական* (լատ. personalis. ն. տ., 2բ, այլև ն.տ., 3բ), *կշիռ* (փխ. *n*-ով. լատ. libra. ն.տ., 14ա, այլև ն.տ., 19բ), *համանգամայն/միանգամայն* (լատ. simul, eodem tempore. ն.տ., 14բ, այլև ն.տ., 20բ) և այլն:

3) Բառեր կամ տերմիններ, որոնց համար նշվում են նույնական լատիներեն համարժեքներ. *անթիւ//անհամար* (լատ. innumerabilis. ԿԳՏ, 2բ, այլև ՄՄՁ, 7560, 2ա), *անկատար/թերի* (լատ. imperfectus. ն.տ., 2բ, այլև ն.տ., 3ա), *անփոփոխ/անփոփոխելի* (լատ. immutabilis. ն.տ., 3ա, այլև ն.տ., 4բ), *ընդ դէմ* (կամ *ընդէմ*) *ասել // ընդդիմաբանել* (լատ. contradicere. ն.տ., 10բ, այլև 15ա) և այլն:

4) Կդ.Գալանոսը այս կամ այն բառի, տերմինի համար նշում է լատիներեն համարժեքը, որը չի տալիս «Նոր հայկազյան բառարանը». *անդրադարձ/ուղիղ* (լատ. reflexus, directus. ԿԳՏ, 2ա, այլև ՄՄՁ, 7560, 2բ), *անյերկբայ* (փխ. առանց *յ*-ի. լատ. certus, այլև dubius. ն.տ., 3ա, ն.տ., 4ա), *երախտամոռած* (փխ. *g*-ով. լատ. ingratus. ն.տ., 9ա, այլև ն.տ., 13ա) և այլն:

5) Բառեր, որոնք Կդ. Գալանոսն օգտագործում է ժամանակակից խոսակցական լեզվի որոշակի երանգավորմամբ՝ նշելով դրանց լատիներեն համարժեքները, այնինչ «Նոր հայկազյան բառարանն» առհասարակ չունի նման բառեր՝ անհարազատ գրաբարին. *գոյնատր* (փխ. *m*-ով. լատ. coloritus. ԿԳՏ, 7բ, այլև ՄՄՁ, 7560, 10բ), *լաշ* (իմա՛ *լաշի տեսակ*. լատ. cadaveris forma. ն.տ., 12 ա, այլև ն.տ., 17 ա) և այլն:

Ըստ այսմ պարզ է դառնում, թե ինչ կարևորություն ունի բառի կամ տերմինի գործածության մանրամասն ուսումնասիրությունը ոչ միայն լատինաբան հայերենի, այլև առհասարակ հայոց լեզվի բառապաշարի պատմության համար¹:

Ստորև անդրադառնում ենք լատինաբան հայերենի բառապաշարի այն միավորներին, որոնք իբրև պատճենումներ կամ հարմարեցումներ, ինչպես նաև դիպվածային բառեր, աշխարհաբարյան ձևեր, ոճեր և արտահայտություններ՝

¹ Լատինաբան հայերենով գրված գրական հուշարձանների ավելի մանրամասն ուսումնասիրությունն ապագայի գործ է, ընդ որում հեղինակների լեզվի բառապաշարի քննությունն այդ գործին մեծ նպաստ կարող է բերել:

լրացնում են 14-18-րդ դդ. գործառած լեզվական այդ տարբերակի ողջ բառապաշարը: Ըստ այդմ ամբողջանում է այն, թե լատինաբան հայերենի բառապաշարն ինչ աղբյուրներից է սնվելիս եղել և ինչպիսի գործառական բաշխման մեջ են գտնվել:

ա) Լատինաբան հայերենում զգալի թիվ են կազմում բառային և տերմինային պատճենումները: Դրանք երևան են գալիս թե՛ ուղղակիորեն և թե՛ հարմարեցմամբ, ընդ որում իմաստային ինչ-ինչ մասնակիությամբ: Օրինակ՝ *անբաժանելապէս* (լատ. indivisibiliter. ԿԳՏ, 1ա, այլև ՄՄՁ 7560, 2ա), *անհունական* (լատ. infinitus, ն.տ., 2բ, այլև ն.տ., 3ա), *բացադրական* (լատ. explicitus, ն.տ., 19բ, 28ա), *բացադրապէս* (լատ. explicite, ն.տ., 19բ, այլև ն.տ., 28ա), *հակակրօթին* (լատ. անթիփատիայ. ՎՅԲ, I, 14-15, այլև ՎՅԲ, II, 319), *համակրօթին* (լատ. սիմփատիայ. ն.տ., 43, այլև ն.տ., 319), *յարակ* (լատ. տիու. ՅՊՁ, 53, այլև ն.տ., ՎՅԲ, 325), *յարունակութիւն* (լատ. դիուտուրնիտաս. ն.տ., , այլև ն.տ.), *ներադրաբար* (լատ. implicite. ԿԳՏ, 19բ, այլև ՄՄՁ, 7560, 28ա), *ներադրական* (լատ. implicitus. ն.տ., այլև ն.տ.), *ստորադասական* (լատ. subiunctivus. ն.տ., 55բ-56ա, այլև ն.տ., 44ա), *վաղարկութիւն* (լատ. բօնիէքթուռա. ՅՊՁ, 76, այլև ՎՅԲ, II, 339), *քաղաքավարութիւն* (լատ. ուռպանիթաս. ն.տ., 79), *քաղցկեղ* (լատ. քառչինօնայ, ֆանչէս մօռպուս. ն.տ., 81) և այլն:

Այստեղ ճշգրտման կարգով նշենք, որ այդ ձևերը կան ամբողջովին պատճենումային նորակազմություն են, կան գրաբարի նախորդ փուլերում եղածին զուգահեռ, երկրորդաբար տեղ գտած գործածություն՝ նոր ժամանակներում լատիներենի այս կամ այն իմաստին հարմարեցվող: Ուստի պատահական չէ, որ այս շրջանում գործածվում են այնպիսի տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք բացարձակ պատճենումն են լատիներենի համարժեքի, թեև այն նախկինում գործածվելիս է եղել իբրև սովորական բառ:

Այսպես ունենք նաև բառակապակցական պատճենումներ՝ իբրև մեկ առանձին հասկացության անվանում. *անձնական (բայ)* [լատ. personalia (verba). ՅԶԲ, 180], *անանձնական (բայ)* [լատ. impersonalia (verba). ն.տ.], *այրած գօտի* (լատ. zona torrida. ԿԳՏ, 1բ, այլև ՄՄՁ, 7560, 2ա), *բազում ուրեք* (լատ. multis in locis. ն.տ., 5բ, այլև ն.տ., 7բ), *խաբէական հաւաքաբանութիւն* (լատ. sophisticus syllogismus. ն.տ., 12ա, այլև ն.տ. 17ա), *պէտ ունիլ* (լատ. opus habere. ն.տ., 23ա, այլև ն.տ., 34ա) և այլն:

Բառային պատճենման մի տեսակ է նաև այն, որ օտար բառը բնագրում բերվում է և «թարգմանվում», որն էլ բավականին տարածված է եղել հայ հին մատենագրության մեջ, և այս դեպքում ևս այդ փորձը չի շրջանցվում: Օրինակ՝ «Ի

հայրապետութեան *Քեղեստինոսի*, որ թարգմանի *երկնատոր»* (ՎՄԴ, 13. իմա՛ լատ. caelestis կամ coelistis «երկնային»), «*Զարիսթեայն ...* ևս է անուն յունական և թարքմանի *հաճոյական յիշատակ* կամ *շնորհակալութիւն»* (ՊԲՎ, 257. իմա՛ լատ. caristia կամ charistia «խարիստիա. ընտանեկան սիրո համերաշխութեան տոն՝ կատարվող փետրվարի 22-ին»՝ փոխառյալ հունարենից) և այլն:

բ) Լատինաբան հեղինակներն, անշուշտ, տեղյակ էին նախորդ դարերում ստեղծված գրաբար մատենագրությանը: Միաժամանակ ձեռնամուխ են լինում ստեղծելու այնպիսի գրականություն, որ համահունչ լիներ իրենց արտոնած եկեղեցու դավանաբանությանը: Նրանք աչքի առաջ ունեին նաև այն հանգամանքը, որ հունաբան դպրոցի գործիչները հայերենի բառապաշարի հարցում կատարել էին զգալի նորամուծություններ՝ անկախ վերջիններիս հաջողված և ընդունելի լինելուց, կամ ընդհակառակը: Այս հեղինակները նույնպես փորձում են հայերենի բառապաշարի գործադրման ժամանակ դիմելու անհրաժեշտ նորամուծության:

Լատինաբան գրական հուշարձանների բառապաշարի մանրամասն և հետևողական քննությունից պարզվում է, որ այս դպրոցի հեղինակները մի կողմից ստեղծում էին բառեր ու տերմիններ՝ լատիներենի օրինակով, մյուս կողմից երկրորդաբար օգտագործում էին հունաբան դպրոցի հեղինակների ստեղծածը:

Եթե մշակութային մի զուգահեռ անցկացնելու լինենք, ապա կարելի է ասել, թե ինչպես որ հունական լեզվական մշակույթն է փոխանցվել լատիներենին (կամ հռոմեականին), այսպես նաև հայ գրավոր մշակույթի մեջ հունական դպրոցի տեղծածի որոշ մասը ժառանգեցին լատինաբան դպրոցի ներկայացուցիչները: Այս իրողությունը նկատվում է հատկապես բառապաշարի այն երևույթների գործածության մեջ, որոնք իբրև հայերենի բառապաշարի տարրեր կային նախքան լատինաբան հեղինակների հանդես գալը: Իսկ վերջիններս իրենց երկերում տեղ տվեցին նաև նման տարրերին՝ բառերին, տերմիններին և այլն: Ընդ որում լատինաբան հայերենի մեջ նման իրողությունները գործածվում են կա՛մ նույնական, կա՛մ փոքր-ինչ այլ իմաստով՝ համարժեք լատիներենին, քան որ նախկինում կարող էր համարժեք եղած լինել հունարենին:

Տեսական այս մոտեցումն, անշուշտ, հիմնավորվում է հայոց լեզվի բառապաշարի պատմության տվյալներով, որի համար լավագույն հիմքը թերևս բառարաններում նման բառերի և տերմինների գործածությունն է, ընդ որում հատուկ բառարանային մշակմանը վերաբերող բացատրությամբ ու մեկնաբանությամբ: Այսպես, «Նոր հայկազյան բառարանն» ունի այնպիսի բառեր, որոնք բառակազմությամբ և իմաստաբանությամբ համարժեք են ոչ միայն

հունարենին, այլև լատիներեն ձևերին: Դրանք գործածվելիս են եղել նախորդ դարերում գործունեություն ծավալած հունաբան հեղինակների երկերում, այլև վերջիններիս ազդեցությամբ հետագայում գրված, կամ նման պայմաններում ստեղծված ինքնուրույն գրական երկերում: Ավելի ուշ հանդիպում ենք լատինաբան հեղինակների երկերում, որ նշանակում է, թե գործ ունենք կամ նմանողական, կամ ինքնաբերական համընկման հետ:

Ի մասնավորի կարելի է նշել հետևյալը:

1) Շատ հաճախ սովորական կազմությամբ ձևի փոխարեն, գրեթե նույն իմաստով գործածվում է նախածանցավոր բառ, որն այլ բան չէ, քան լատինաբան (հունաբանին համընկնող) կազմություն. *առբայ* (լատ. adverbium. հմմտ. *մակբայ*. ԿԳՏ, 4ա, այլև ՄՄՁ, 7560, 5բ), *արտատրոհեալ* (փխ. տրոհեալ. ՄՄՁ, 672, 7ա), *արտաքարշեմ* (փխ. քարշեմ. ՅՊՁ, 77), *համագոյակից* (փխ. գոյակից. ԱԶԱՎ, 3), *մակամտածել* (փխ. մտածել, առաւել ևս՝ զմտաւ ածել. ՄՄՁ, 5808, 83ա), *ներանհիթեմ* (փխ. նիթեմ. ՅՊՁ, I, 150), *ներգոմ* (փխ. գոմ «գոյություն ունենալ». ՄՖՄԱ, 14), *ներընդունեմ* (նաև *ներընդունական*, փխ. ընդունեմ, ընդունական. ՄՄՁ, 672, 5ա, 5բ, 6ա և այլն), *ներկուռ* (փխ. կուռ. ՎԲԻ, 4), *ներհմտանամ* (նաև *ներհմտութիւն*, փխ. հմտանամ, հմտություն. ՄՄՁ, 5808, 78բ, այլև ՎԲԻ, 4), *ներսամտեմ* (փխ. մտանեմ. ՅՊՁ, I, 133), *ստորագրեմ* (փխ. գրեմ. ԹԱՄ, 30), *ստորասեմ* (փխ. սսեմ. ՄՖՄԱ, 13), *ստորանկանիմ* (փխ. անկանիմ. ՆԾԶ, I, 27, այլև ՆԾԶ, II, 13, ՆԾԶ, III, 15) և այլն:

2) Բառեր, որոնք թեև գործածվելիս են եղել նախորդ դարերում, սակայն լատինաբան հեղինակներն ընդօրինակելով հանդերձ դրանց հաղորդում են այս կամ այն կարգի երանգներ՝ նրբիմաստներ. դա նկատելի է նաև «Նոր հայկազյան բառարանի» տվյալներով, երբ այս կամ այն բառին կամ տերմինին հատկացվում է լատիներենի այլ համարժեք՝ ի համեմատություն լատինաբան հեղինակների նկատի ունեցածի. *անձն* (լատ. persona. ԿԳՏ, 2բ, այլև ՄՄՁ, 760, 3բ), *արժանիել* (իմա՝ արժանի լինել, լատ. mereri. ն.տ., 5ա, այլև ն.տ., 7ա), *դժուար* (կամ *դժուարին*, լատ. միայն difficilis. ն.տ., 7ա, այլև ն.տ., 11բ), *դիւր* (կամ *դիւրին*, լատ. միայն facillie. ն.տ., 7ա, այլև ն.տ., 11բ), *բառասութիւն* (փխ. ասութիւն, լատ. dictio. ն.տ., 6ա, այլև ն.տ. 6բ), *գիտնական* (նաև *գիտարար*, լատ. scientificus. ն.տ., 7բ, այլև ն.տ. 10բ), *որակութիւն* (փխ. *որակ*. ՎՌԴ, 16), *քանակութիւն* (փխ. *քանակ*, ն.տ.) և այլն:

3) Հունաբան դպրոցի ստեղծածի հետևությամբ բառերի գործածություն, որոշ դեպքերում լրացուցիչ իմաստի հաղորդումով. *ընդօստնեմ* (փխ. *n*-վ, լատ. *n*էսիլօ, ՎՅԲ, I, 29, ՎՅԲ, II, 308), *կենագործեմ* (փխ. զկեանս անցուցանեմ, կեան.

ՄՎՊՀ, 72), *հարթեմ* (լատ. բոռնիկօ, ՅՊՁ 47), *հիբար* (նաև *հիզան*, *հիկէն*, *հիպէս*.
լատ. ut, verbi gratia. ԿԳՏ, 15բ, այլև ՄՄՁ, 22ա), *մեջակետ* (իմա՝ «նշանախեց
միջական, որ ի մէջ բոլորակաձևում գետակոջ և կամ ծրի առարկայանայ».
լատ. չէնթռում. ՅՊՁ, 53-54) և այլն:

4) Բայի ցոյական, այլև անցյալի հիմք դիտված բայական բաղադրիչով
կազմություններ՝ կրավորական սեռի արտահայտման համար, լատիներենի
օրինակով. *պատասխանատրութիւնք* (փխ. պատասխանատուութիւնք, այլև
պատասխանատրեն, պատասխանի տայ. լատ. responditur. ՄՄՁ, 6562, 41ա,
այլև ԳՄՀ, IIա, 258, ԳՄՀ, IIIա, 261), *ընդարձակեցեալ* (ՄՊԽ, 13), *հռչակեցեալ*
(ՄՄՁ, 5808, 79ա) և այլն:

գ) Լատինաբան հայերենի բառապաշարում նկատելի են նաև, այսպես
կոչված, դիպվածային նշանակություն ունեցող, ինչպես նաև բավականին
արհեստական կամ, ինչպես ընդունված ասել, կեղծ գրաբարյան կազմություն
ունեցող բառեր: Քիչ չեն նաև այն բառերն ու բառաձևերը, որոնք ոչ գրաբարյան՝
աշխարհաբարյան կամ ժողովրդական-խոսակցական են, լատինաբան
հեղինակների գրավոր խոսքի մեջ են թափանցել բանավոր հաղորդակցման
հանգամանքներով պայմանավորված:

1) Դիպվածային են այն բառերը, որոնք գործածվելիս են եղել հեղինակի
խոսքի իրադրությամբ թելադրված, այսինքն՝ գրավոր շարադրանքի մեջ այս կամ
այն երևույթը բնութագրելիս հեղինակը երբեմն կամովին թեքում, աղավաղում է
հիմքում ընկած իմաստը կամ բովանդակությունը, և ըստ այդմ առաջ են գալիս նոր
բառեր և բառաձևեր: Այսպես, օրինակ, Կղ.Գալանոսը «Միաբանութիոն հայոց
սուրբ եկեղեցոյ» գրքում Հայ Առաքելական եկեղեցու նվիրյալ որոշ հայրերի
անունները, լուսավորչական հավատքին վերաբերող շատ հասկացությունների
անվանումները միտումնավոր ձևով և բաջաղանոք ենթարկում է փոփոխության՝
դավանաբանական հակառակության շեշտ հաղորդելով իր «միաբանողական»
խոսքին (ավելորդ ենք համարում օրինակներ բերել. տես ԳՄՀ, IIա, էջ 11ա, 13ա-բ,
25, 25: 91, 99, 172, 175 և այլն):

Նման ինքնահնար և մտացածին, գրական լեզվին անհարիր բառերի ու
բառաձևերի հանդիպում ենք լատին (միաբարական գործունեություն ծավալած)
գործիչների երկերում. դրանք հաճախ ոչ այնքան ճիշտ կազմություններ են, թեև
հեղինակները եռանդ են գործադրել գրաբար հայերենի մեջ անթերի լինելու:

2) Աշխարհաբարյան կամ խոսակցական-ժողովրդական տարբերակին
բնորոշ բառերը լատինաբան հեղինակների երկերում ունեն ոչ պակաս
գործածություն: Դա բացատրվում է նրանով, որ հին գրական հայերենն արդեն

դադարել էր կենդանի լեզու լինելուց, իսկ ժամանակի հայախոս մտավորականությունը բանավոր խոսքում հետամուտ չէր գրաբարին այն աստիճան, որ գրավորի մեջ ևս այն ի հայտ գար լիովին, գրական նորմայի շրջանակում: Ուստի ոչ միայն հայ, այլև օտար մշակութայն գործիչները գրաբարի գործածության հարցում հաճախ էին ինքնաբերաբար տեղ տալիս ժամանակի բանավոր խոսքի, հատկապես ժողովրդական-խոսակցական ձևերին:

Այսպես, Ֆր. Ռիվոլան «Բառգիրք հայոց»-ի (1621 թ.) մեջ հին գրական հայերենի և ժամանակի խոսակցական լեզվի մի տեսակ համահարթեցված ձևեր է գործածում՝ իբրև բացատրությանը ծառայող ձևեր, լատիներեն հոմանիշ գույգերի հայերեն համարժեքներ: Օրինակ, հմմտ. *ազարակ, արտ.*, լատ. *ager, campus* (ՌՀԼԲ, 2). սրանցից առաջինը գրաբարյան է, իսկ երկրորդը՝ ընդհանուր գործածական, սովորական: Օրինակ՝ *ազգի//ազուց* (իմա՝ «աբացի» լատ. *calcis ictus*, հմմտ. *ազգել*, լատ. *calcitrare*. ն.տ., 3), *աժսն//եժսն* (փխ. *է-ով*. լատ. *res vilioris pretii*, հմմտ. *աժնութիւն, աժել, աժեցուցանել* և այլն, ն.տ., 5), *ալնենալ, ալնի* (լատ. *salis saporem deperdere*. ն.տ., 6), *ալևոր//հալիվոր* (լատ. *senrx*. ն.տ., 5), *ախմախ* (նաև *ախմախութիւն*, լատ. *stolidus.stupidus*. ն.տ., 7), *աղաւնի//եղվընիկ* (լամ. *columba.*, ն.տ. 10), *աղբեր//եղբայր* (լատ. *frater*. ն.տ., 11), *ամաչել//ամչնալ* (լատ. *puedere, erubescere*. ն.տ., 15), *ամեղ//անմեղ* (լատ. *innocens, insons*, ն.տ., 17), *ամչողաց* (*մարդ*. լատ. *vir rubore, suffusus*. ն.տ., 19), *այգի//եգի* (լատ. *vinea*. ն.տ.), *այրել//երեցել* (լատ. *comburare, incendere*, ն.տ., 21), *ան//այն* (լատ. *is, ille*. ն.տ.), *անծոկ//նեղ* (փխ. *անձով*. լատ. *angustus, arctus, brevis*, ն.տ., 29) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *արատ* («օղի»), (նաև *ողի*. իմա՝ «բազումք ի նոցունց խմեն զգինի և զուղի, այսինքն *զարատ*, իսկ այլքն գեր քան զչափն ըմպեն».) ՄՖՄԱ, 299), *երկր պազանել* (փխ. միասին գրվելու. ՄՄՁ, 614, 30ա), *իրիցունք* (երեց. ՅԿՀՃ, 103), *իրաքանչ իր* (փխ. միասին գրվելու. ՅԿՊՍ, 3,9), *լաղար* (փխ. լղար. ԳԶԲ, 121), *կարմունց* (փխ. կամուրջ. ԳՄՀ, I, էջ 11), *Հայաստուն* (փխ. *ք-ով* կամ *-ստան-ով*. ԳՄՀ, I, 26, ՅԿՀՃ, 170), *ընթ հանրապէս* (փխ. միասին և *դ-ով*. ԳԽ, 5), *Մանած կերտ* (Մանազկերտ. ՀՎՊ, 12, 14), *մանչերն* (ԳԶԲ, 77), *մինակացեալ* (փխ. մենակեաց. ՄՄՁ, 672, 15բ), *մուրուս* (իմա՝ «օժանել զճակատն և զմուրուսն».) ԳՄՀ, II,բ, 641), *յղեղ* («ուղեղ».) ԽԷՀՄ, 11), *պորպրալ* (ԳՄԳՎ, 16), *պօշտօն* (փխ. *ա-ով*. ՄՄՁ, 2037, 89ա), *անդուզն* (թերևս *զ-ի* պատճառով *յ-ն* բաց է թողնված, իմա՝ *զյանդուզն*. ՅՊՁ, I, 145), *վերջի* (փխ. *ն-ով*. ԳՀՈԻԳ, 22) , *տեղայ կանալ* (իմա՝ «լեր աստուծոյ բանին պատմօղ և *տեղայ կացիր* նորին».) ԳՄՀ, I, էջ 111) և այլն:

3) Հանդիպում են նաև տվյալ ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ արտահայտություններ. *ըստէս ըստէս* (իմա՝ «գորս ի մէնջ *ըստէս ըստէս* հարցանեն»). ՄՖՄԱ, 12), *ևևս* (իմա՝ «որ *ևևս* է տալ աղքատաց»). ՊԲՎ, 232), *տուր տալ* («ծեծել, դնգատել». իմա՝ «գի գիրեարս որսային և *տուր տային*»). ՄՄՁ, 2037, 47բ), *տռփալով տռփալ* (խիստ ցանկանալ». իմա՝ «*տռփալով տռփացեալք* ենք լինիլ ընդ քեզ». ԳՎՀ, 131), *աճուճ մաճուճ* (լատ. *gog, magog*. ՌՀԼԲ, 15), *մարդ լինել* (իմա՝ «քաջ և ուժեղ *մարդ եղև*». ԳՄՀ, I, 12), *ցանկալի ցանկալի* (ԹԻԲ, էջ դ), *հեռի ի քեզանէ* (իմա՝ «Քաւ լիցի քեզ, որդի, *հեռի ի քեզանէ*, և գիրկ արկեալ համբուրէ». ԳՉԲ, 73) և այլն:

9. Լատինաբան հայերենի բառապաշարն աչքի է ընկնում նաև բառերի նոր իմաստային կիրառություններով: Նախորդ դարերում ստեղծված գրական հուշարձանների բառապաշարի մի որոշ մասը իմաստաբանորեն դարձել էր անհասկանալի, և նոր ժամանակներում անհրաժեշտ էր լինում դիմելու ոչ միայն նոր բառերի ստեղծման, այլև եղածների որոշ իմաստների անհասկանալիության, թուլացման կամ մթազմման պայմաններում նոր իմաստների գործադրման:

Բառի իմաստային զարգացումն առհասարակ տեղի է ունենում ոչ միայն ժամանակի ընթացքում, այլև տվյալ համակարգի ներսում կատարվող փոփոխությունների հետևանքով: Ընդ որում իրականության մեջ առաջ եկած նոր հասկացություններն իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառապաշարի մեջ: Ստեղծվում են նոր բառեր, ինչպես նաև որոշ բառեր ձեռք են բերում նոր իմաստներ: Բառապաշարի իմաստային հարստացումը նախ և առաջ որակական ձեռքբերում է, որը հիմնականում տեղի է ունենում երկու ճանապարհով՝ սովորական իմաստի ձեռքբերում և տերմինացում:

Լատինաբան հայերենի բառապաշարում ևս իմաստային հարստացումը տեղի է ունեցել հիշյալ երկու ճանապարհով:

Իբրև լեզվական մշակույթի նոր իրողություն՝ լատինաբան հեղինակների երկերը, պատկանելով գործառական տարբեր շերտերի, պարունակում են վերջիններիս համապատասխանող տարբեր կարգի տերմիններ և տերմինային անվանումներ: Հայերենի բառապաշարի պատմության համար մեծ կարևորություն ունի լատինաբան հեղինակների ստեղծած տերմինների առանձին ուսումնասիրությունը¹:

¹ Լատինաբան հայերենով ստեղծված գիտական, եկեղեցական-դավանաբանական և այլ կարգի երկերի տերմինաբանությունը մեկ առանձին ոլորտ է, և վերջինիս ուսումնասիրությունը համարում ենք հետագայի գործ:

Այստեղ մեր ուշադրության առարկան են բառերի ոչ միայն տերմինային, այլև սովորական նոր իմաստային կիրառությունները:

ա) Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք ունեն սովորական կամ ոչ տերմինային գործածություն: Վերջինս համալրում է տվյալ բառի իմաստային ընդգրկումը: Լատինաբան հեղինակների երկերում դրանք առանձնացնում ենք ոչ միայն ինքնին՝ ելնելով բնագրային գործածության ընձեռած հնարավորությունից, այլև համեմատելով «Նոր հայկազյան բառարանի» տվյալների հետ: Բառի սովորական նոր իմաստային կիրառություն ենք համարում այն դեպքերը, երբ հիշյալ երկու պայմաններին բավարարում է տվյալ բնագրային դրսևորումը, ավելին՝ երբ բնագրում (բառարան, ինքնուրույն կամ թարգմանական աշխատություն և այլն) զուգահեռաբար նշվում են լատիներենի այն ձևերը, որոնց օրինակով կամ որոնց հիման վրա տվյալ բառին հաղորդվել է նոր իմաստ:

Այսպես, Ռիվոլայի «Հայերեն-լատիներեն» բառարանում *ամսըվան*, այլև *ամսըվան բան* միավորներն ունեն «օրենք կանանց, կնոջ ամսականը» իմաստը, և դա այդպես է, քանի որ բառարանում դրանց զուգահեռ կամ թարգմանաբար բերվում են լատ. *menstruus* կամ *opu menstruum* ձևերը: Ընդ որում «Նոր հայկազյան բառարանում» *ամսըվան* ձևին տեղեկանում ենք գրաբարյան *ամսական* բառի տակ՝ իբրև ոչ թե բացատրություն (հիշենք, որ այս բառարանը բառերի բացատրությունները տալիս է գրաբար շարադրանքով), այլ աշխարհաբար համարժեքի նշում, այլև հանդիպում ենք լատ. *menstruum* ձևին՝ իբրև *ամսական*-ի թարգմանություն: Ուստի կարելի է կարծել, որ Ռիվոլայի նշած *ամսըվան* բառն ավելի վաղ գործածություն ունի՝ առնված ժամանակի խոսակցական-աշխարհաբարյան տարբերակից և գործածված նոր իմաստով:

Այնուհետև, «Նորագոյն ծաղիկ զօրութեանց» երկը մեզանում հայտնի է Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցու թարգմանությամբ և ունեցել է մի քանի տպագրություն (Հռոմ, 1675, Վենետիկ, 1685, Կ.Պոլիս, 1724): Այստեղ հանդիպում է *անոպայ* բառը, որն ի տարբերություն «Նոր հայկազյան բառարանի» իմաստային նշանակումների գործածված է նոր՝ «ընդ վայր և աւելորդ», «անկիրթ» իմաստներով: Դա նկատելի է ոչ միայն երկի հետագա հրատարակություններից, որոնցում *անոպայ*-ի փոխարեն դրված է *անկիրթ*, այլև Վարդան Հունանյանի կազմած բառացանում, որում բառը բացատրվում է. «ընդ վայր և աւելորդ: Այլև ևս նշանակէ զիրակութիւն ինչ ընդդէմ համեստութեան. և զինքն ևս զիրակոյն» (ՎՅԲ, II, 294): Տե՛ս նաև «և բազումք *յանոպայից* խնդրեցին» (ՆԾՁ, I, 3). «և բազումք *ի յանկրթից* խնդրեցին» (ՆԾՁ, II, 19, նաև ՆԾՁ, III, 22):

Որոշ դեպքերում բառը գործածվում է նախկինում ունեցածին հակառակ իմաստով: Օրինակ՝ «Առաջինն է գաւակս *արտահանել* ի պաշտօնն աստուծոյ» (ՄՄՁ, 3475, 274 բ): «Նոր հայկազյան բառարանում» *արտահանել* նշանակում է «ի բաց հանել՝ հեռացնել», այլև հատկապես «հանել՝ բառնալ ի կենաց. կարճել ի կենաց. սպանանել», իսկ բերված օրինակում բառը կիրառվել է «դնել, ներառել, կոչել՝ պաշտոնի, սպասաւորության, ծառայության»:

Հակոբ Վիլլոտի «Մեկնությունն դասնութեան» երկում (Հռոմ, 1711) *գետնառիծ* բառն օգտագործվել է ոչ միայն այն իմաստով, որը գտնում ենք «Նոր հայկազյան բառարանում». «Կամ նման ես *գետնառիծի*, զոր աշխարհօրէն ասեն դօդօշ» (ՀՎՄԴ, 5): Իսկ բառարանում նշվում է «ազգ մողէզի ... երկայն իբրև եօթն մատնաչափ, և բարձր հինգ մատնաչափ»: Ընդ որում բառարանը նշում է լատ. *chamaeleon* համարժեքը, իսկ Վիլլոտը նշում՝ «զոր աշխարհօրէն ասեն դօդօշ»:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերի սովորական նոր իմաստային կիրառությունները. *գլխատել* «գլուխների բաժանել՝ գլխակարգել». իմա՝ «և ընդ իրեարս համեմատել զբարբառս Հայոց ընդ Դաղմատացոց ստիքսելով և *գլխատելով*». ՈԱ, 2), *գնդակ* («ռամկ. ֆռլադուճ կամ պտտուկ անուանես. լատ. թուրփօ կամ թռօփուս. ՎՅԲ, I, 19, այլև ՎՅԲ, II, 302), *գործակ* («չնչին՝ փոքր գործ» ՎԲԱ, 3), *գումարտակ* («գումար». լատ. *summa*, ՎՅԲ, I, 22, այլև ՎՅԲ, II, 303-304), *գննարան* (իմա՝ «Աստ ի գրգկան այսմիկ *գննարանի* կամ խոստովարանի». ՍՊԽ, 25. «Նոր հայկազյան բառարանն» ունի «տեղի գննութեան կամ քննութեան. դատաստանարան» նշանակումը), *խաղանք* («խաղալիք՝ երեխայի». ՎՅԲ, II, 312. «Նոր հայկազյան բառարանն» ունի «խաղ անել, ծաղրել, ձեռ առնել» իմաստներով), *խանդեմ* (իմա՝ «արժան լինիմ ունիլ զայս կամ զայն իր. վայելեմ զայս ինչ իր. իրացուցանեմ սեպհականապէս». ՎՅԲ, II, 313. «Նոր հայկազյանն» ունի «նեղել, խռովել. չարչրկել» իմաստներով), *խարքալ* (իմա՝ «թիրահոծ և պտտահողով ճանապարհ». ՎՅԲ, II, 313. «Նոր հայկազյանն» ունի «մաղ, մեծ մաղ» իմաստով), *համբոյր* (լատ. *spondaeus*. ԿԳՏ, 15բ-16ա). լատիներենում բառն ունի՝ 1) «ըմպանակ» և 2) «բանաստեղծական ոտք» իմաստները. «Նոր հայկազյանը» դնում է լատ. *osculum* «պագնելը, համբոյր» ձևը), *հոմանի* (իմա՝ «որ ընդ միսում սիրողակցի ընկերանայ, առ ի սիրել զմի և զնոյն սիրուիի, սիրով տոփականաւ». ՎՅԲ, II, 321. լատ. *ռիուլէս*, իսկ «Նոր հայկազյանն» ունի «այր տոփեալ առ կին օտար. սեղեխ իմաստով), *ձեռնածութիւն* (հոմանիչ՝ ձեռքածութիւն, փխ. *ը-ով*. «ըմբռնումն ի ձեռանէ և առաջնորդումն», լատ. մանուդուկցիօ. ՎՅԲ, II, 321. «Նոր հայկազյանն» ունի «դիւթութիւն կամ արհեստ ձեռնածուաց» իմաստով), *ճաշակ* («բերան». ՆԾՁ, I, 12, ն.տ. II, էջ 4), *ստոնորակ*

(«քար իմն պայծառատեսիլ և սպիտակափայլ լատ. քրիստալլուս. ռամկօրէն՝ բլլօր». ՎՅԲ, II, 330. «Նոր հայկազյանն» ունի «սառնանման. սառնաձև, սառնատեսակ՝ սառնորակ» իմաստով) և այլն:

Այս վերջին օրինակն իմաստային տարբերություն ունի նաև խոսքիմաստային պատկանելության առումով. մի դեպքում այն ածական է, իսկ մյուս դեպքում՝ գոյական: Այսպես նաև ունենք *խելացնոր* («մի տեսակ հիվանդություն»): լատ. ֆռէնէզիս, նաև *p*-ով. հուն. phrenesis. ՎՅԲ, I, 37, այլև ՎՅԲ, II, 313-314), որն այստեղ գոյական է, իսկ «Նոր հայկազյանն» ունի ածական նշումով:

Ըստ այսմ, եղած օրինակներն իսկ ցույց են տալիս, որ լատինաբան հեղինակների երկերում կիրառվում են այնպիսի իմաստներով բառեր, որոնց այդ իմաստները կա՛ն առնված են ժամանակի ժողովրդական-խոսակցական լեզվից, կա՛ն էլ լատիներենում եղած այս կամ այն մասնավոր իմաստի հիման վրա առաջ բերած նշանակումից: Մյուս կողմից՝ պարզվում է, թե ինչքան կարևոր է լատինաբան հայերենի բառապաշարի իմաստաբանական առանձին ուսումնասիրությունը¹:

բ) Լատինաբան հայերենի բառապաշարի մեջ բառի նոր իմաստային կիրառություն են հանդիսանում տերմիններն ու տերմինային անվանումները: Վերջիններս հասկացության անվանում են ոչ թե ընդհանուր հաղորդակցական կամ սովորական իմաստով, այլ գիտական ըմբռնումների, տեսական սահմանումների չափանիշով: Դրանք պակաս կարևորություն չեն ունեցել լատինաբան հեղինակների եկեղեցական-դավանաբանական ինքնուրույն և թարգմանական երկերում, քերականական-լեզվագիտական աշխատանքներում :

Ստորև դրանցից անդրադառնում ենք քերականական-լեզվագիտական աշխատանքներում գործածվածներին, ընդ որում թերևս ամենակարևորներին, այն էլ քաղվածաբար, ոչ ըստ ամենայնի:

Այսպես, Կղ.Գալանոսի «Քերական կամ տրամաբանական ներածութիւն» երկում հանդիպում են մի շարք տերմիններ և տերմինային անվանումներ, որոնք իմաստի տեսակետից թարմություն են մտցնում հայ քերականագիտության ըմբռնումների մեջ. հեղինակը գործածում է այնպիսի տերմիններ, որոնք իմաստով նորություն են՝ աստեղծված կա՛ն ինքնուրույն մոտեցմամբ, կա՛ն նախկինում գրված երկերի մեջ դրանց գործածության կողքին նոր իմաստի ներմուծմամբ:

¹ Այս ոլորտը նույնպես ունի որոշակի կարևորություն հայոց լեզվի բառապաշարի լիակատար պատմության համար:

Այս տեսակետից առանձին ուշադրության է արժանի Հովհաննես Քոնեցու «Յաղագս քերականի» աշխատությունը, որի քննական բնագրի կազմողը և առաջաբանի հեղինակները բավականին մանրամասնությամբ անդրադառնում են նաև տերմինաբանությանը՝ հատուկ նշելով նաև թե՛ համապատասխան նորակազմությունները, թե՛ նոր իմաստային կիրառությունները¹: Վերջիններս, ցավոք, չեն ընդգրկվել «Լեզվաբանական բառարանի» մեջ, որով ավելի նպաստավոր կարող էր լինել դրանց քննությունը ժամանակային գործոնի տեսակետից: Թե՛ այդ, թե՛ Դավիթ Չեյթունցու և ուրիշ քերականների երկերի գիտական հրատարակությունը մեծապես անհրաժեշտ է լատինաբան հայերենի բառապաշարի, մասնավորապես տերմինների և տերմինային անվանումների նոր իմաստային կիրառության խնդիրներին անդրադառնալիս:

Այսպես, Քոնեցու քերականության մեջ, ի թիվս մի շարք տերմինների նոր իմաստային կիրառությունների, ունենք, օրինակ, *աներեւոյթական(ք)* ձևը, որն այլ բան չէ, քան բայի անդեմ ձևերի ընդհանուր անվանում. «Եւ անանձնականք բայք են ամենայն *աներեւոյթականք* և ջերունդիականք և սուփինականք» (ՅԸԸ, 180): «Նոր հայկազյան բառարանում» այդ բառը բացատրված է նախ՝ որպես համարժեք *աներևոյթ* բառի՝ «աներևոյթ ձևով» ընդհանուր իմաստով, այնուհետև՝ վերջինս այլ ձևերի հետ, տարբեր կարգի իմաստներով, իսկ Քոնեցին այն գործածել է իբրև քերականական տերմին՝ դերբայական կամ ոչ եղանակային ձև նշանակող:

Իսկ Ոսկան Երևանցու համառոտ քերականության մեջ հանդիպում է *անկարգ* [«անկանոն կամ տարարմատ (բայեր)»] բառը, որը գործածվել է տերմինային իմաստով, այնինչ «Նոր հայկազյան բառարանում» չենք հանդիպում նման իմաստի առանձնացման: Եվ հակված ենք կարծելու, որ այդ և նման շատ տերմիններ Ոսկան Երևանցին գործածել է իր կազմած համառոտ քերականության համար նախօրինակ հանդիսացած՝ լատիներեն գրված կամ հայերեն թարգմանված մեկ այլ քերականության հետևությամբ²:

Մինչև 17-րդ դ., այսինքն՝ այն ժամանակը, որ ավանդական բանասիրությունը, լիովին խորամուխ չլինելով հարցի պատմության մեջ, համարում է լատինաբան հայերենի, առհասարակ լատինաբանության ձևավորման սկիզբ, երևան են եկել տարբեր կարգի, ընդ որում նաև

¹Տե՛ս *Ս.Ավագյան*, Հովհաննես Քոնեցու «Համառոտ հուսարումն յաղագս քերականին» երկի քերականագիտական նշանակությունը. *Յովհաննէս Քոնեցի*, նշվ.աշխ., էջ 52-153, այլև 92-93:

²Հակված ենք ենթադրելու, որ այն պիտի եղած լինի Թովմա Իտալացու քերականությունը՝ թարգմանված հայերեն (ձեռագիր): Վերջինիս ձեռագիր-գրչագրերի հիման վրա քննական բնագրի

քերականական աշխատություններ, որոնք նախ՝ ունեցել են ոչ միայն դարբնական-ուսուցողական, այլև տեսական ուղղվածություն, այնուհետև՝ եվրոպական քերականությունների հետևությամբ արտահայտել են այնպիսի գաղափարներ, որոնք մեզանում նորություն լինելով հանդերձ՝ սահմանվել են ոչ միայն նոր տերմիններով և տերմինային անվանումներով, այլև ինչ-ինչ տերմինների նոր իմաստային կիրառություններով¹:

Դավ.Ջեյթունցին, օրինակ, ունի *կշեռք* (իմա՝ կշիռ. Վ.Հ.) բառը ոչ այլ, քան *կշռույթ* տերմինի իմաստով. «և զվանգ, և զտաղաչափութիւնս և *զկշեռս* և զտասն առոգանութիւնս և զայլ ամենայն» (ԴՋԲ, 65): «Նոր հայկազյան բառարանն» այս իմաստը չի նշում: Այնուհետև, Ջեյթունցին ունի *պատճառական (հոլով)* տերմինը, որն ինչպես երևում է հոլովների թվարկումից և համապատասխան օրինակների մատնանշումից, արտահայտում է *բացառական (հոլով)* տերմինի իմաստ, այն է՝ բնագրում *ի Դաթէ* ձևն ըստ այսմ դրված է բացառական (լատ. ablativus) հոլովով, որ Ջեյթունցին նշանակում է *պատճառական* անվանումով (ԴՋԲ, 104): Ընդ որում նկատենք, որ «Նոր հայկազյան բառարանն» այս դեպքում տալիս է՝ ա) «պատճառաւորն, գործ, արգասիք», բ) «ուր իցէ պատճառանք ինչ» իմաստները, որոնք քերականական չեն: Ավելացնենք, որ *պատճառական* տերմինի (լատ. accusativus «հայցական հոլով» իմաստով) հանդիպում ենք Եսայի Նչեցու քերականության մեջ, որն անշուշտ իմաստային նոր տարբերակում է հանդիսանում²:

Այսպես ունենք նաև հետևյալ բառերի նոր՝ տերմինային իմաստով կիրառությունները, որոնք հիմնականում երևան են գալիս լատիներեն քերականությունների մեջ գործածված տերմինների և տերմինային անվանումների օրինակով. *անկ* («հոլով». ՈԵԲ. հմմտ. ԼԲ, էջ 14), *անգումն* (փխ. *կ*-ով. ՅԲԲ, 171, 186 և այլն)³, *անկանոնք* (բայք. ՅԲԲ, 180 բնագիր, էջ 11ա. «Իսկ *անկանոնք* բայք են որպես այս. *կու լինին*». նկատի է առնվում կրավորական սեռի բայերը), *անկարգ* («անկանոն կամ տարարմատ բայեր». ՈԵԲ, 20-21)⁴, *անձնական* (բայք. լատ. verba personalia, «դիմավոր բայեր». ՅԲԲ, 180, բնագիր, էջ

կազմումը և առանձին ուսումնասիրությունը կարող են մեծ նշանակություն ունենալ հայ քերականագիտության, մասնավոր լատինաբան քերականությունների պատմության համար:

¹ Չնայած մեզանում հայ քերականության մտքի պատմությանն անդրադարձել են շատ ուսումնասիրողներ, այնուհանդերձ դեռևս մնում են բանասիրական և լեզվաբանական քննության կարող ձեռագիր շատ աշխատանքներ, ընդ որում լատինաբանությանը և լատինաբան հայերենին վերաբերող:

² Տես Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ.Գ.Խաչեբեանի, Երևան, 1966:

³ Ս.Ավագյան, նշվ. աշխ., էջ 62:

⁴ Նույն տեղում, էջ 92:

11ա)¹, *անուանական* (լատ. nominativus «ուղղական հոլով». ԿԳՔ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 31, «Բազմավեպ», 1966, էջ 310-321), *անուղղական* (ոչ սովորական տերմին. լատ. indirectus. ԿԳՏ, 3ա, այլև ՄՄՉ, 7560, 4ա), *առաստաղ* («քիմք». «Իսկ բնական գործիքն, որով ձայնն ձևանայ, են այսոքիկ՝ շրթունք, ատամունք, լեզու, *առաստաղ*, մակալեզու». ՄՄՉ, 109բ, այլև ՄՄՉ, 69, 270ա), *առնչական* («հարցական, հարաբերական դերանուններ». ՈԵՔ), *բազմութեան* (նաև՝ *շատ* «հոգնակի թիվ». լատ. pluralis. ՖՈՔ, ընդ որում առնված սեռական հոլովով, որովհետև այն լատիներենում ևս այդ հոլովով է), *բացաձայնութիւն* (ԿԳՔ, հմմտ. ԼԲ, էջ 64), *բացայայտիչ* (ՅԿՔ, հմմտ. ԼԲ. էջ 63), *գլխատր* («քանակական թվական», նաև *զատական* «բաշխական թվական». ԿԳՔ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 30), *դիմադրական* («շաղկապի մի տեսակ». ՅԶՔ, 187), *դուր* (պատիւ «կետադրական մի նշան». ՄՄՔ, հմմտ. ԼԲ, էջ 86), *եղանակ* (ՈԵՔ, հիմքով կազմություններ, ԼԲ, էջ 87), *երկորեակ* («կրճատագրություն՝ համառոտագրության նշան». ՄՄՔ, տե՛ս ԼԲ, էջ 95), *զանազանութիւն* («քերականական անհամաձայնություն». ՅԶՔ, 209, լատ. գէօմայ), *ընդունելական* («ընդունելական է, որ ի յընդունելութենէ ամանցի, որպէս ի գալոցէ՝ գալուստ». ն.տ., 168), *թերի* («անկատար», լատ. imperfectus. ԿԳՏ, 11ա, այլև ՄՄՉ, 7560, 16ա), *կանոնական* («ներգործական բայ». ՅԶՔ, 180), *կարգատր* («կանոնավոր բայ». ՈԵՔ, 20-21), *կերպ* («բայի եղանակ». լատ. modus. ՅԶՔ, 198-199), *ձայն* («խոնարհում». ՈԵՔ, տե՛ս ԼԲ, էջ 198), *միեղինասպէս* («համաձայնութիւն անուանց է նոյնասպէս և *միեղինասպէս* ունենալ զինքեանս ընդ այնոսիկ, ընդ որս համաձայնին». ԽԷՔ, 55), *միութեան* («միաուր եզակի թիվ». լատ. singularis. ՖՈՔ. հմմտ. վերը՝ *բազմութեան*, ն.տ.), *յարաբարդ* («կրկնաբարդ». ԿԳՔ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 30), *յարառոցել* («Վեց են անգումն ըստ այնմ, որ վեց կերպիւ *յարառոցի* [ի] շարամանություն». ՅԶՔ, 172, բնագիր, էջ 7 ա), *յարմարագրութիւն* («ուղղագրություն». ԿԳՔ, տե՛ս ԼԲ, էջ 177), *յատկական* («հատուկ անուն». ԿԳՔ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 30), *նախընթաց* «բաղադրյալ խոսքի բաղադրիչներից առաջինը». ՅԶՔ, 199)², *նշանակութիւն* («ընդունելության սեռ». «զառնելն և կրելն». ՅԶՔ, 183-184), *շարադրական* («շաղկապի մի տեսակ». ն.տ., 187), *շարակարգութիւն* («բանն է պատշաճաւոր *շարակարգութիւն* ասութեանցն». ն.տ., 191, նորագույն տերմինով՝ շարակարգայնություն, ռուս. сущмагмамоуочность), *պատահմունք* («քերականական կարգ՝ կատեգորիա». ն. տ., 192), *պատիւ* («կետադրական մի նշան». հմմտ. դուր. ԿԳՔ, տե՛ս ԼԲ, էջ 256), *սերական* (լատ.

¹ Նույն տեղում:

² ԼԲ-ն ունի այլ իմաստով, որն անշուշտ հետագայի է:

gerundium. ՈՒԵՔ), սերբ («բայի սեր». ՅՔՔ, 76), վերացեալ («վերացական». -ուրիւն անանցով կազմված գոյական. ԿԳԳ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 30), վերբերական («հարաբերական բառ». նաև *վերբերական շարամանություն*. ՅՔՔ, 193-194), *ցուցական* (գործածված երկու իմաստով, 1. «անձնական՝ դերանուն. ես, դա, 2. «սահմանական՝ եղանակ, լատ. indicativus. ն.տ., 173, 177), *ուղղագրություն* («բառի ուղիղ գրելը. ԿԳԳ, տե՛ս ԼԲ, էջ 300) և այլն:

Վերը բերված իմաստային կիրառություն ունեցող բառերը մի չնչին մասն են այս շրջանում գործածվածների: Դրանց մանրամասն և առանձին ուսումնասիրությունն ունի մեծ կարևորություն, որը հետագայի հարց է:

Այնուհետև, նկատենք, որ շատ դեպքերում բառի նոր իմաստային կիրառություններն արդյունք են ներքին փոփոխությունների. քիչ չեն այն դեպքերը, երբ լատինաբան հայերենի բառապաշարի ներսում, ժամանակի ընթացքում այս կամ այն բառը, ինչպես նաև տերմինը գործածվել է մեկից ավելի նոր իմաստով, այսինքն՝ նախկին նոր իմաստային կիրառությանը միանում է մեկ այլ նոր իմաստային կիրառություն: Այսպես, օրինակ, ԼԲ-ում հանդիպում են այնպիսի տերմիններ, որոնք կիրառվել են բոլորովին նոր իմաստով՝ ի տարբերություն, ասենք, հունաբան քերականական ավանդույթի, սակայն ավելի վաղ գրված, բայց բոլորովին վերջերս քննական ուսումնասիրությամբ լույս տեսած աշխատանքներում դրանք արդեն գործածվելիս են եղել, նույնիսկ մեկ այլ իմաստով: Այդպիսի օրինակներ գտնում ենք Հովհաննես Քոնեցու, Դավիթ Ջեյթունցու քերականություններում:

Այսպես, *գոյացական* («-ային, -եայ, -ի, -եղէն, -ցու, -որ անանցներով կազմված». ԿԳԳ, հմմտ. *Ջահուկյան*, 1974, էջ 30, այլև *Մուրադյան*, 1971, էջ 352) քերականական տերմինը նշված իմաստով կիրառվել է ավելի ուշ, քան այն իմաստով («որոշյալ, գոյականական այն անդամը, որին հարում է որոշիչը»), որ գտնում ենք մեկ այլ՝ ավելի վաղ շրջանի լատինաբան հեղինակի աշխատության մեջ (ՅՔՔ, 192, հմմտ. Ներածություն, էջ 115-116): Ավելին, նույն տեղում հանդիպում է *գոյացականիլ* («ածականի գոյականաբար գործածվելը». էջ 193): Ինչպես նկատելի է, բառի տերմինային մեկ գործածությանը հետագայում ավելացել է մեկ ուրիշը՝ տեղիք տալով բազմիմաստության:

Գործակալ տերմինը Կղ.Գալանոսը կիրառել է լատ. gerundium տերմինի իմաստով (ԿԳԳ, հմմտ. ԼԲ, էջ 75), իսկ Բուկ. Վանանդեցին՝ քերականական բաժիններից մեկի իմաստով. «Մասունք *գործակալք* և ուղղաւորիչք քերականութեան են չորք. ուղղագրութիւն, առոգանութիւն, ստուգաբանութիւն և շարադրութիւն» (ՎՈԳ, 11):

Մակադրեալ տերմինը «Լեզվաբանական բառարանում» նշվում է «հատկանիշ ցույց տվող ածական կամ մակբայ» իմաստով՝ վկայակոչելով Միք. Սալլանթյանի քերականությունը, այնինչ այն գտնում ենք ավելի վաղ հեղինակի աշխատության մեջ՝ «ստորոգյալ, ստորոգելի» իմաստով (ՅԲԲ, 198-199) և այլն:

Ըստ ԼԲ-ի *եզաճայն* տերմինը գործածել է Արս. Բագրատունին՝ «ձևով եզակի, իմաստով հոգնակի» (իմա՝ անհոգնական, լատ. *singularia tantum*. տե՛ս էջ 87), այնինչ նույն տերմինը գտնում ենք Յովհ.Քոնեցու երկում՝ գրեթե նույն իմաստով. «*եզաճայն* ի ներքո միո նշանի, այսինքն արականին կամ իզականին նշանակե գերկու սերսն, հիզան *իք - ազուս*, որ արտայայտե գործակն և զմարին, և *էք – արծիս*, պարունակե միով նշանակ գործակն և զմարին» (ՅԲԲ, բնագիր, 169. հմմտ. Ներածութիւն, էջ 68):

Ենթադրեալ տերմինը նույնպես ԼԲ-ն տալիս է «ածանցական լրացում ունեցող գոյական անդամ» իմաստով՝ Միք. Սալլանթյանի քերականության հիման վրա (հմմտ. *մակադրեալ* - ը): Այն ևս գտնում ենք Քոնեցու երկում (ՅԲԲ, 199), ընդ որում այլ՝ «ենթակա» իմաստով:

Ըստ «Նոր հայկազյան բառարանի» *մասնիկ* տերմինը գործածվում է Հովհ. Երզնկացու քերականության մեջ «մաս, բաղադրիչ» իմաստով, իսկ Հովհ. Կոստանդնուպոլսեցու երկում գտնում ենք «շաղկապ» իմաստով գործածված (հմմտ. ԼԲ, էջ 211) և այլն:

Վերջապես, «Նոր հայկազյան բառարանն» ունի «ըստ հունաց ոճոյ» *երկրաչափական* («երկրաչափություն»), *թուական* («թվաբանություն») ածականական ձևերը գոյականականի փոխարեն՝ իբրև տարբեր գիտաճյուղերի անվանում, որի նմանությամբ հետագայում ևս լատինաբան հեղինակների կողմից կազմվում են նույնպիսի ձևով արտահայտվող տերմիններ (ՄՄՁ, 69, 268ա և այլն): Այսպես, օրինակ, Կդ.Գ-ալանոսի «*Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութեանն շահելոյ*» (լատ. “*Grammaticae et logicae institutiones...*”) վերնագրի *քերական*-ը լատինաբանություն է հունարեն ոճի հետևությամբ, որը վերջին ժամանակներս լույս տեսնող համապատասխան աշխատություններում թյուրիմացաբար սրբագրվում է՝ *քերական*-ը փոխարինելով *քերականական* ձևով¹:

¹Տե՛ս, օրինակ, Գ.Բ.Չահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 25-26 և հջ.:

4. Ձևաբանական երևույթներ

Լատինաբան հայերենի ձևաբանական համակարգում ևս նկատվում են որոշակի փոփոխություններ: Վերջիններս առավելապես երևան են գալիս հայերենի ներքին զարգացման, խոսակցական կամ բարբառային ձևերի ներթափանցման, ինչպես նաև օտար, այս դեպքում՝ մեռած լատիներենի ունեցած ազդեցության հետևանքով: Դրանք մեծ մասամբ առկա են անվանական և բայական ձևերում, մասամբ այլ խոսքի մասերի պատկանող բառերի մեջ:

Անվանական ձևերի փոփոխություններն առավելապես վերաբերում են գոյականին, որոշ չափով՝ ածականին, թվականին և դերանվանը: Իսկ բայական ձևերի փոփոխությունները հիմնականում նկատելի են բայական անդեմ ձևերի, խոնարհման տիպերի, եղանակային և ժամանակային ձևերի դրսևորմանում:

Ստորև անդրադառնում ենք այդ կարգի փոփոխություններին:

1. Գոյականական բառաձևերի փոփոխությունները երկու կարգի են՝ իբրև արդյունք լեզվի զարգացման ընթացքում տեղի ունեցած տեղաշարժերի արտացոլման, այլև լատիներենի օրինակով տեղ գտած կազմությունների:

ա) Առաջին կարգի փոփոխությունները կարելի է բնորոշել որպես գրական նորմայից կատարվող շեղումների արդյունք, և այդ շեղումները տեղի են ունենում հոլովման տիպի խախտման, հոլովական վերջավորության մեջ հնչյունական անկման կամ հավելման, ժամանակի խոսակցական լեզվի նկատմամբ հակվածության հետևանքով: Եվ նման շեղումների ենք հանդիպում ոչ միայն սովորական բառերում, այլև հատուկ անուններում:

1) Ունենք *զինի, եկեղեցի, ոսկի, որդի, տարի, քեռի* («մորեղբայր») և այլն բառերի թեք ձևերում $ի > օ$ (զրո) (փխ. $ի > ւ$) հնչյունափոխության), որն շեղում է հին հայերենի գրական նորմայից, արդյունք խոսակցական լեզվի ազդեցության: Օրինակ՝ «Մնաց համաձայնութիւն Հայաստանեայց եկեղեցոյ ընդ մեծի եկեղեցոյ Հռովմայ» (ԳՄՀ, I, 63): «Հինկ մեղուն ի ծխոյ փաղչի և մարդոյս *հոգոյ* մեղքն որպէս ծուխ վնասէ» (ԳԱԼ, 19): «Աստուած ճշմարիտ ընդ հաւր և *ընդ որդոյ*» (ԳՃՈՒՀ, 6) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *զինոյն* (ԳՃՈՒՀ, 22), *եկեղեցո* // *եկեղեցոյ*//*եկեղեցոյն* (ՄՄՁ, 3475, 266բ, ՏԳ, 8, ՄՄՁ, 6532, 35ա, ՄՆՊԼ, 147բ, 150ա, ԳՃՈՒՀ, 22, ԳՄՀ, IIա, 20ա), *հոգոյ*//*հոգոյն*//*հոգոց* (ՄՄՁ, 614, 29 բ, 672, 21բ, 37 բ, ԳՄՀ, I, 83, ՄՆՊԼ, 145ա, 147բ, ԳՃՈՒՀ, 24), *ոսկոյն* (ՄՄՁ, 614, 33 ա), *որդոյ*//*զորդոյ*//*որդոյն*//*զորդոյն*//*յորդոյ* (ՄՄՁ, 672, 37 բ, ՄՄՁ, 614, 29 բ, ԳՃՈՒՀ,

6, ՄՄՁ, 2037, 131 ա, ՄՄՁ, 3640, 59 բ, ԳՄՀ, I, 58, 110, ԵՆԴԻԽ կամ ՄՄՁ, 614, 29 ա), *տարոյ* (ԳՊՓ, 4), *քենոյն* (ԳՄՀ, I, 437, այլև *քենորոյն*, ն.տ. էջ 234) և այլն:

2) Որոշ դեպքերում առկա է հոլովական տիպի խախտում. «Յաուրս Թէոդոսի *փոքեր* ինքնակալի» (ՄՄՁ, 2037, 33ա): «Միտք իմ որպէս *քաղցերք մեղերք*» (ԳՄՅՅ, 87), «Եւ թէ որպէս պատերազմեցաւ ... պագշոտութեամբ ընդ դատերն *քվեր* մօր իմոյ» (ԹԱՄ, 16, այլև ԳԹ, 20), «գորդին Գօղէմիաի [փիս. 7-ով. Վ.Հ.], *քւերն* սրբոյն Մարդինի» (ՄՄՁ, 2037, 33ա) և այլն: Նկատենք, որ «Նոր հայկազյան բառարանը» նման դեպքերում հաճախ գրական կանոնական ձևերից բացի երկրորդաբար բերում է այնպիսիները, որոնք որակվում են որպէս խոսակցական-ժողովրդական (օրինակ՝ *քոյր*-ի դեպքում. «գտանին և հոլովք ինչ ռամկական՝ *քուեր*, *քրուեր* և այլն): Իսկ լատինաբան հեղինակների գրավոր խոսքում էլ նման ձևերին ոչ պակաս տեղ է հատկացվում, որն անշուշտ արժանի է ուշադրության:

Այսպէս նաև *ամ* («տարի»), *աւագ* բառերը հոլովվել են *n* հոլովմամբ (փիս. *ի - ա* խառը հոլովման). «Ձի թուխ գիրն անցեալ *ամոյն* լինի» (ՏԳ, 61), «Առ ժամայն երթեալ պատմեցին *աւագոջն* տաճարին» (ՄՄՁ, 2037, 83): Իսկ *սրբուհի* և *օղ* բառերը թեքվել են ոչ այլ կերպ, քան *ւ, յ* մասնիկներով (*յ*-ն *-ուհի* մասնիկի *ւ*-ի փոխարեն). «և դարձեալ որպէս լոյսն ընդ *օղոյն* միաւորեալ» (ՅՁԳ-Հ, 24), «Անդ կայ և փայտեղէն պատկերն *սրբոյնոյ* աստուածածնին» (ԳԹ, 32):

3) Կան բառեր, որոնք հոլովման բերումով պարունակում են ձայնավորի, : ձայնորդի բացթողում, այլ հնչույթի հավելում և այլն: Օրինակ՝ «Գտցի և գաւորս լուսնին ընդ *հընո* սովորութեան եկեղեցոյն» (ՏԳ, 8): «Որդոյն *աստուծո* տեսուն մերոյ» (ԳՃՈԻՀ, 10): «Թվոջ փրկչին 1696» (ԳՊՓ, 1): *Ականջ > ակնջի* (ԳՃՈԻՀ, 10) և այլն:

4) *Պապ* («եկեղեցու հայր») բառը գործածվել է տարբեր ձևերով՝ *ու, n* հոլովումներով. առավել շեղում է վերջինը. «Թարքմանեաց ի յունաց ի հայ գիր գպատմութիւն սրբոյն Գրիգորի *պապուն* հռովմայեցոց (ԳՄՀ, I, 108-109): «Եւ գոլով ֆրանցիայ *պապոյն*» (ՄՄՁ, 2037, 54 ա) և այլն:

5) Գրական նորմայից կատարվող շեղումներ են նկատվում նաև հետևյալ ձևերում. *Արամագրա* (փիս. 7-ով. ՄՄՁ, 3640, 4 ա), *Հռոմա* (փիս. 7-ով. ՄՄՊԼ, 146 բ, 147բ), *Ատանոյ* (փիս. *ի* հոլովմամբ. իմա՝ «ժողովն *Անատոյ*» ԳՄՀ, II, 12 ա, այլև էջ 21), *Աշտարակեցոյն* (փիս. 1-ով. ն.տ., 91), *Արշակունոյ* (փիս. 1-ով. «*յԱրշակունոյ* զարմէ ծնեալ». ն.տ., 10), *Շիրակավանոյ/Շիրակաւանոյ* (ն.տ., էջ 12 ա, 21) և այլն:

6) Կան բառեր, որոնք թեքված են *ի* հոլովիչով, և դրանք թերևս օրինակ են հայերենում առհասարակ այդ հոլովման տարածում գտնելու: Օրինակ՝

«Քարգմանեալ ձեռամբ *Բարդոյիմէնոսի* ֆռանկ եպիսկոպոսի» (ՄՄՁ, 69, 266 ա), «Ու եղեն համախոհ Նեստորի և ոչ ընդունին զքաղկեդոնիկն: Այս է պատասխանի տանն արեդայ և եկեղեցոյն *արմենի*» (ՄՆՊԼ, 149 ա), «Որգոն. Թաթէի, փոխանակ *Թաթէնոսի*» (ՅՀԶ, 6) և այլն:

7) Խոսակցական լեզվի կամ ոչ կանոնական տարբերակի ազդեցության հետևանք է այն, որ միևնույն բնագրում այս կամ այն բառը թեքված է լինում հոլովական վերջավորության տատանումով. «Որք հալածէին զգրեանսն Թէոդորի *Սօսյստացոյն*» (ԳՄՀ, I,72) // «Չայն գիրսն Թէոդորի *Սօսյստատոյն*» (ն.տ., 69): «Գովեալ էին հաւանութեամբ զթուղթն *Սիւնեցոյն*, որ ներընդունէր զայնչափ զարհուրելի մեղատրութիւնս» (ն.տ., 82) // «Թէ ի *Սիւնեցոյն* թուղթն (ն.տ.) և այլն:

8) Երբեմն հանդիպում են միջին հայերենին առավելապես բնորոշ հոլովված ձևեր: Օրինակ՝ «Սոյն գաւառքս և *երկրնիս* միահամուռ կոչին ճերմանք, որ և ալամանք իսկ» (ՄՄՁ, 2037, 13 բ) և այլն:

բ) Երկրորդ կարգի, այն է՝ լատիներենի օրինակով տեղ գտած փոփոխությունները հիմնականում վերաբերում են հոլովի և թվի կազմությանը:

Ստորև անդրադառնում ենք դրանցից առավել կարևորներին:

1) Բավականին շատ են այն դեպքերը, երբ հին գրական հայերենի անեզական բառերը թեքվում են եզակի թվով՝ իբրև արդյունք լատիներենի համապատասխան երևույթի ընդօրինակման. լատինաբան հեղինակները հոգնակի *p*-ի հակադրությամբ արհեստականորեն դնում են *q* ձևույթը՝ իբրև եզակի թվի ցուցիչ, ինչպես նաև բաց են թողնում այդ *p*-ն (հմմտ. *գիրք* «գրքեր» – *գիրգ* «մեկ գիրք», *միտք* «մտքեր» – *միտ* «մեկ միտք» և այլն):

Համեմատաբար մեծ թիվ են կազմում *գիրք*, *կեանք*, *մեղք* բառերի եզակի թվով գործածությունները: Օրինակ՝ «Բայց *գիրգ* սաղմոսացն Դաւթի միահաղոյն զամենեսեան պարունակի յինքեան» (ՅԿՊՍ, 6): «Չորրորդ *գիրգն* է մարգարեական» (ԳՄՅՅ, 5): «Եւ սուրբ Յոհան Ոսկեբերանն Ձ *գրգոջ* ճառաբանութեան ի վերայ ծննդոց ոգովն տեսոն իմանայ զգորութիւնն Աստուծոյ» (ՄՄՁ, 119, 33 ա): «Աւարտեցաւ *գրգուկս* շահաւտ և օգտակար տպագրեցեալ ի պէտս և ի հրճուանս հայկազունեաց» (ԳՎՀ, 144): «Որպես դնէ զօրինակն նախագաղափար որգոն՝ ես, որ է առաջին *դէմն*, դու՝ երկրորդ, նա՝ երրորդ. տքա եզական են» (ԴԶԶ, 150): «Եւ վճաճեաց զբոլոր *կեանն* իւր անդ ի ծառայութեանն Աստուծոյ» (ն.տ., 136): «Ի վճարել զդառնացեալ *կեանն* իւր».(ՆԾՁ, I, 53, այլև ն.տ., II, 39, ն.տ., II, 43): «Եւ յերանունակ նաւահանգիստ *կենին* մշտնջենականի» (ՅՊՁ, I, էջ ե, այլև ն.տ., II, 5): «Այլև *մեղն* Ադամայ գոլով

ընդդեմ Աստուծոյ է անհուն» (ՄՖՄԱ, 79): «Եւ յօժար առ այնպիսի մեղ» (ՄՊԽ, 139) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ ձևերը. *գիրգ* (ԳՄՅՅ, 5, ԳԱԱ, I, 3, ՅՀԲ, 6, 7), *Աղուէսագիրգ* (ԳԱԱ, II, 1), *գրգոյս* (ՅԿՀՃ, 198, ԳՄՅՅ, 3), *ի գրգկան* (ՄՊԽ, 17), *գրգուկս* (ՅԿՀՃ, էջ է, ՄՎՊՀ, 165), գրգիկ (ՄՊԽ, 4, ՆԾՁ, I, 8), *կեան* (ՅՀԲ, 2, ՄՄՁ, 5808, 75 ա), *կեանն* (ՆԾՁ, I, 166, ն.տ., II, 132, ն.տ. III, 143, ՊԲՎ, 75), *կենի* (ՅՊՁ, I, 14, ն.տ., II, 29), *կենին* (ն.տ., II, 394), *մեղն* (ՊԲՎ, 328, 336) և այլն:

Կան նաև այլ կարգի գոյականների եզակի թվով կիրառություններ. «կողմանք աշխարհի. *արևել, արևմուտ*, հիւսիս, հարաւ» (ՎՈԴ, 10): «Ըստ ուխտադրութեան իմոյ *ի նախերգան* գրոցս մինչև առ մեզ» (ՄՄՁ, 2037, 131): «Աստուած որ *մեղանիս* մերով ցասնու» (ՄՎՊՀ, 121) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալ օրինակները. *կամն* (ՆՁՁ, I, 13. մի քանի անգամ), *կուրծն* (ՄՄՁ, 5808, 98 բ), *միտ* (ՅՀԲ, 7), *շրթուն* (ՆՀԼԲ, 291), *տիեզեր* (ՅՊՁ, 25), *տրակ* (իմա՝ պրակ. լատ. tractatus. ՅԿՀՃ, էջ է, ՄՊԽ, 4), *փառն* (լատ. gloria, «փառք». ՎԲՀ, 63) և այլն:

2) Լատինաբան հեղինակները *մարդ* բառի հոգնակիի համար դիմել են որոշակի «սկզբունքի». *մարդ* ձևից բացի *մարդիկ* ձևը նույնպէս դիտել են իբրև եզակի (հավանաբար *-իկ* մասնիկի մեջ տեսել են բառակազմական, ոչ թե ձևակազմական բաղադրիչ), և այդ հիմունքով երևան է բերվել մի կողմից՝ *-իք*, իսկ մյուս կողմից՝ *-իկք* ձույլ մասնիկով կազմություններ՝ հոգնակի թվի նշանակման նպատակով. բացառիկ դեպքերում կան այլ մոտեցումներ՝ կապված, օրինակ, երկակի թվի նշանակման հետ:

Ըստ այսմ ունենք հետևյալ լատինաբան կազմությունները:

Մարդիք տիպի կազմություն. «Յարիցեն *մարդիք* վատթարք և փծունք» (ՎՀՀ, 62): «Եւ թէ ինչպէս անօրէն *մարդիք* կործանիլ պիտին» (ՅԿՊՄ, 11): Ունենք նաև հետևյալ օրինակները. *մարդիք* (ՄՄՁ, 2037, 84 բ, ՄՄձ, 5808, 112 ա, ՅԿՊՄ, 14), *զմարդիք* (ՆԾՁ, I, 21, այլև ն.տ., II, 12, ն.տ., 13, ՅԿՀՃ, 125) և այլն:

Մարդիկք տիպի կազմություն. «Այլ ծառ որ տնկեալ է յայգոջ և ոչ բերէ պտուղ ոչ կարեն համբերեալ *մարդիկք*» (ՄՄՁ, 5097, 79 ա): «Եթէ մտեալ էին ի մեջ աշխարհիդ ձերոյ չարաչար *մարդիկք* ոմանք» (ԳՄՀ, I, 71): «Մարդիկքդ կորուսեալք և ծնեցեալքդ սաւուակի աղագաւ» (ՄՖՄԱ, 3004): Այսպէս ունենք նաև հետևյալ գործածությունները. *մարդիկք* (ՅՁԳՀ, 19, ԳՄՅՅ, 48, ՈԱ, էջ գ, ՎԲՀ, 24, հմմտ. լատ. homines, ՅՊՁ, I, էջ է, այլև ն.տ., II, 6, ընդ որում՝ մի քանի անգամ, ԳՄՀ, I, 439, ՊԲՎ, 19, 43, 85), *մարդիքդ* (ՄՖՄԱ, 304, ՅԿՊՄ, 17), *մարդիկքն*

(ՅՊՁ, I, 55, ՄՄՁ, 2037, 83 ք), *զմարդիկս* (ՅՊՁ, I, էջ թ, այլև ն.տ., 8), *զմարդիկամբք* (ՆԾՁ, I, 37) և այլն:

Քերականներից Գ-ավ. Չեյթունցին, ի դեպ, լատիներենի օրինակով երկակի թվի համար գտնում է մի ձև՝ *մարդ* բառի հիման վրա. «Ամենայն խօսք կամ եզական է, այսինքն միատրական է, կամ երկական, այսինքն երկուց, կամ յոզնական, ասինքն բազմատրական, որպես դնե՛ գօրինակս եզական Պետրոս, երկական՝ Պետրու, յոզնական՝ Պետրոսք: Սոյնպէս *մարդ*, *մարդու*, *մարդք* կամ *մարդիկք*»(հմմտ. երկակի թիվ՝ *Պետրու*, *մարդու*)¹: Ավելին, այստեղ *մարդ* բառի գրաբարյան *մարդոյ* ձևից առաջ եկած *մարդու* աշխարհաբարյան ձևը դիտվել է որպես քերականական նոր իմաստի կրող ձև, իսկ հոգնակի *մարդք* և *մարդիկ* ձևերը՝ հավասարապես հոգնակի նշանակող, մանավանդ որ երկրորդն ունի լրացուցիչ (լատինաբան մտածողությամբ) հավելյալ հոգնակերտ *ք* ձևույթ:

Լատինաբան հայերենում հոգնակի թվի կազմության համար դիմում են ոչ միայն արհեստական ձևերի, այլև օգտվում են ժամանակի աշխարհիկ «աշխարհաթար» լեզվի հնարավորություններից՝ հատկապես դիմելով *-եր*, *-ունք* մասնիկներին: Օրինակ՝ «Եւ ի սմանե յառաջեսցեն *տօներն* ըստ կարգին որպէս ի կալանդարին, մինչև ի սկիսք առաջի կա (փխ. կից գրությամբ և *յ-ով*) ամինն» (ՏԳ, 14): «Եւ թէպէտ վկայեմ, թէ *կնիկունք* ոմանք աղքատք և գռեհիկք ելանեն ոչ երբեմն ի գեղօից և ի շինից» (ՄՖՄԱ, 317):ն մ Այսպես ունենք նաև հետևյալ օրինակները. *գրեանքս* (ՅՁԳ-Հ, 2 ա), *կարծրունք* (ՅՊՁ, I, էջ իբ, ն.տ., II, 16), *հայերն* (ՎՄՁ, 1663, էջ 252 ք), *պապերն* (ՄՄՁ, 2037, 79 ա), *տօներ* (ՏԳ, 22, 27), *փղերն* (ՄՄՁ, 2037, 9 ա), *փոքրերն* (ն.տ., 23 ք) և այլն:

3) Հոլովման համակարգում թերևս ամենացայտուն խորթությունը նկատելի է ներգոյական հոլովի կազմությանը վերաբերող տարբերություններում: Իբրև հայերենին առհասարակ խորթ ու արհեստական երևույթ՝ այն ունի ոչ միայն արտալեզվական (օտար լեզվի համապատասխան երևույթի պատճենում տարբեր կարգի միջոցներով ու եղանակներով), այլև բուն լեզվական (հին գրական հայերենում առանձին ներգոյական հոլով չկար, այն կազմվում էր վերլուծական եղանակով՝ նախորիվ հոլով) հիմնավորում:

Նախ, նշենք, որ երևույթն ի հայտ է գալիս բուն միարարական շարժման թե՛ սկզբնական և թե՛ հետագա փուլերում՝ լատինաբան հայերենի ձևաբանական մակարդակի առումով: Նախկինում ոչ բոլոր ուսումնասիրողներն էին հանդես

¹ *Գալիթ Չեյթունցի*, նշվ. աշխ., էջ 115-116: Տե՛ս նաև *Հ.Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, Երևան, 1951, էջ 315: Վ.Գ-Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 276-277:

քերում նման մոտեցում: Հ.Աճառյանն, օրինակ, ժամանակին սխալ է համարել այն, որ Գ.Ջարբխանայանը հայերենի մեջ կասարված գրեթե ամեն մի նման նորամուծություն, որ թույլ էին տալիս լատինաբան հեղինակները, բացատրում էր հայերենի ոչ լիակատար իմացությամբ, այլև նորարար լինելու ձգտումով: Ընդ որում գտնում էր, որ դա տեղի է ունեցել 14-րդ դ. առաջին կեսից սկսած: Իսկ Աճառյանը նման մոտեցմանը վերաբերում է ոչ այնքան լեզվական փաստերը ուսումնասիրած լինելու, որքան արտաքին կողմին՝ քարոզչական հոսանքների գործունեության տարբերությանը մեծ տեղ տալու տեսանկյունից: Մեծանուն լեզվաբանն իր առջև խնդիր դրած չի եղել քննելու լեզվական փաստերը՝ սկսած 14-րդ դ. առաջին կեսից, այլ բավարարվում է, ինչպես նշել ենք, 17-րդ դ. քերական Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցու դասագրքի փաստերի թվարկմամբ, և բնական է, որ պիտի հանգեր ոչ ճիշտ և վերջնական տեսակետի¹:

Այս իրողությունը լավագույնս հիմնավորվում է ներգոյական հոլովի, իբրև ձևաբանական ինքնուրույն միավորի, արհեստական կազմության, ինչպես նաև վերջինիս բազմազան և անմիակերպ դրսևորումների տվյալներով:

Իսկ վերջիններս ցույց են տալիս, որ լեզվական այս տարբերակի պատմության ողջ ընթացքում արհեստական միջամտությամբ ներմուծված է եղել ներգոյական հոլովն՝ իբրև առանձին ձևաբանական միավոր: Այն կազմվելիս է եղել հունաբան դպրոցի օրինակով, լատիներենի պատճենումով²:

Ինչպես գոյականների, այնպես էլ այլ խոսքի մասի պատկանող միավորների ներգոյական հոլովը կազմվում է *ըն, ն, ներ* մասնիկների միջոցով, ինչպես նաև գրաբարյան *ի* նախդրի այնպիսի գործածությամբ, որ դրվում է ոչ թե եզակի տրականի կամ հոգնակի հայցականի, այլ *-ում* վերջավորություն ունեցող (ոչ միշտ տրական դիտվող) ձևի վրա: Այս վերջին կարգի կազմությունը թերևս ներքին զարգացման արդյունք է, որ ներգոյականը վերջիվերջո սկսում է կազմվել *-ում* մասնիկի միջոցով, իսկ *ըն, ն, ներ* մասնիկների գործածությամբ, այն էլ վերլուծական կազմությամբ ձևերը մեկընդմիջտ հանդիսանում են լատինաբանության հետևանք: Ընդ որում *ըն* և *ն* մասնիկները համարժեք են լատ. *in* «մեջ» մասնիկին, գործածվում են իբրև դիրքային տարբերակներ (ինչպես որ հայերենի *ի* և *յ* նախդիրները բացառական և այլ կարգի հոլովների կազմության դեպքում), իսկ *ներ* մասնիկը համարժեք է լատ. *sub* «տակ, ընդ, մեջ» մասնիկին: Բավականին հազվադեպ, այնուամենայնիվ հանդիպում ենք նաև *մակ* մասնիկի

¹ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ.:

² «Նոր հայկազյան բառարանն» ունի, օրինակ, *արտաբայեմ* բայից կազմված *նարտաբայե՛* ձևը՝ հունաբան պատճենմամբ (հ. 1, էջ 375, հ. 2, էջ 405):

գործառնությանը (օրինակ՝ *մակ մտածում*. ԳՄՏ, 18, *մակ սաստութիւն*. ԴՋԲ, 112)¹ և այլն:

Այդ մասնիկները գործածվում են ոչ միայն այդ տեսքով, այլև երբեմն շրթնայնացած *ըմ* տարբերակով (շրթնային *բ-ից*, *ս-ից* առաջ), ինչպես նաև նախադրային գործածությամբ: Դավ. Ջեյթունցին, օրինակ, ի թիվս նախադրությունների բերում է նաև *նը, նըն, ներ* ձևերը (ԴՋԲ, 115, 154 և այլն): Օրինակ՝ «և գերադրական է մակսաստութիւն միոյ առ բագումս յարառոցեալ *ըմբադդաստութեամբ*» (ԴՋԲ, 112): «Երկաքանչիւր ստուերած խաւարումն, եթէ Արեգական, և եթէ Լուսնոյն, ոչ հանդիպի եթէ ոչ՝ *ըն* կամ *մերձ* գլխոյ կամ տտոյ վիշապին» (ՎՀՀ, 105): «Ձի՞նչ է, որ ասէ. բայածական է, որ *ըմբայէ* ածանցուցեալ է, հիբար՝ սիրուն, իմաստուն մարթուն... բայածական այն է, որ *ի բայէ* ածանցցի աճուն» (ԴՋԲ, 114): «և են, որ ներկուց *ըմպակասեցելոց*» (ն.տ., 115) և այլն:

Այսպես, *ըն* մասնիկը գործածվում է բաղաձայնով սկսվող հոլովելի բառի հետ, ընդ որում առանձին կամ միասին, ունի համեմատաբար լայն գործածություն. *ըն* (բոլորի) *արքայութեան* (ԴԹ, 10), *ըն բնութեան* (ՄՖՄԱ, 209), *ըն գաւառս* (ն.տ., 313), *ըն գերեզմանում* (ՊԲՎ, 51), *ըն գիրս* (ԳՎՀ, 130, ՄՄՁ, 5808, 84 բ, ՆԾՁ, I, 12, հետագայում՝ *ի գիրս*. ՆԾՁ, I, 4, ՆԾՁ, II, 4 և այլն), *ըն գլխոց* (ՎՀՀ, 104), *ըն գրգկան* (ՆԾՁ, I, 244), *ըն գրոց* (ՄՄՁ, 119, 13 բ), *ըն գրքոց* (ՍՊ, 25, ՅՊՁ, I, 14), *ըն յեկեղեցուցն* (ՄՖՄԱ, 318), *ըն յերկինս* (ՊԲՎ, 102, 103, 116), *ըն թղթում* (ՅՊՁ, I, 395, 396, 397 և այլն), *ըն թղթոց* (ՆՁՁ, I, 117, հետագայում՝ *ի թղթոց*. ն.տ., II, 92, III, 99, ՄՄՁ, 5808, 2ա), *ըն թուաբերութեան* (ՅՊՁ, II), *ըն թում* (ՈՇ, 778), *ըն ժամագրքկան* (ՍՊ, 21), *ըն ժողովս* (ՄՖՄԱ, 237), *ըն խաւարում* (ՅՊՁ, I, 33) *ըն խոկման* (ՆԾՁ, I, 34, հետագայում՝ *ի խոկման*. ն.տ., II, 22, III, 25), *ընծերութեան* (ՈԱ, 153), *ընկացութեան* (ՍՊԽ, 36, 46, ԽԲՎ, 323), *ըն կենում* (ՅՊՁ, I, 187), *ըն կենցաղում* (ՅԿՀԸ, 85), *ըն կերակրի* (ՅԿՊՍ, 3), *ընկերակրում* (ՅՊՁ, I, 240), *ըն կիսագնտում* (ՎԲԱ, 20, 21), *ըն կշռում* (ՎՀՀ, 70), *ըն կշռոց* (ն.տ., 40), *ըն կրծոցն* (ՊԲՎ, 79), *ընհայելոց* (ՅՊՁ, I, 140), *ըն հասակում* (ՄՄՁ, 5808, 161 բ), *ըն հաստոց* (ՄՖՄԱ, 9), *ըն հոգում* (ՅՊՁ, I, էջ է, 11), *ըն հոգոց* (ՆԾՁ, I, 16, հետագայում՝ *ի հոգոց*. ն.տ. II, 7-8, III, 8), *ըն հորովս* (ՎՈԴ, 17), *ըն ճառընտիրս* (ՄՖՄԱ, 237), *ըն ճենարանումն* (ՎԲԻ, 6), *ըն մասունս* (ՊԲՎ, 21), *ըն մարդկութեան* (ՄՖՄԱ, 209), *ըն մարդս* (ՊԲՎ, 72), *ըն մարմնոց* (ՄՄՁ, 5808, 79 բ), *ըն մարմնում* (ՊԲՎ, 21), *ըն մարմնոյ* (ն.տ., 42), *ըն միտում* (ՅՊՁ, I, 170), *ըն մտում*

¹ Բնական բնագրում բերվում է միասին գրությամբ՝ դիտվելով որպես բառակազմական, ոչ թե ձևակազմական երևույթ: Ի դեպ՝ Դավ. Ջեյթունցու քերականության տերմինաբանությունը ևս կարող է դառնալ առանձին ուսումնասիրության առարկա:

(ն.տ., 145), *ըն յուրվս* (ՎՈԴ, 17), *ըն յորդում* (ՄՖՄԱ, 237), *ըննաարկութեան* (ՅՊՁ, I, 6, ն.տ., II, 23), *ըն շարականս* (ՄՖՄԱ, 237), *ըն շարում* (ՅՊՁ, I, 396), *ըն պալատի* (ՆԾՁ, I, 17, հետագայում՝ *ի պալատի*. ն.տ., II, 8, ն.տ., III, 9), *ըն պատեհում* (ՄՄՁ, 5808, 2 ք, ՍՊԽ, 4, 79), *ըն պատմութիւնս* (ՄՄՁ, 5808, 82 ք, ԳՎՀ, 130, 135, 137, 141, ՆԾՁ, I, 46, II, 32, III, 36), *ըն սեղանում* (ՅՊՁ, I, 188), *ըն սրտում* (ն.տ., 162, 176), *ըն վարս* (ԳՎՀ, 125, 138, հետագայում՝ *ի վարս*. ն.տ., 128), *ըն վտանգում* (ՅԿՀՃ, 100), *ըն տաղում* (ն.տ., 25), *ըն տեղոջ* (ՍԽՊ, 22)¹, *ըն տեղոջս* (ՊԲՎ, 18), *ըն տպարանում* ((ՅՊՁ, I), *ըն տտոջ* (ՎՀՀ, 104), *ըն տրակաջ* (ՆԾՁ, I, 14, հետագայում՝ *ի տրակոջն*. ն.տ., II, 5, III, 5), *ըն փոսոջ* (ՄՄՁ, 5808, 152 ա), *ըն քաղաքում* (ՅՊՁ, I, 150) և այլն:

Քիչ չեն դեպքերը, երբ *ըն* մասնիկը և խնդրառու բառն ընդմիջվում են շարահյուսական այլ բաղադրիչով՝ մեկ կամ մեկից ավելի: Օրինակ՝ *ըն երկաքանչիւրում բնութեան* (ՄՖՄԱ, 209), *ըն Կենդանակերպեայ գօտոջ* (ՎՀՀ, 103), *ըն ցրտային գօտիս* (ՎԲԱ, 16), *ըն հարկաւորում դիպուածոջ* (ՅԿՀՃ, 103), *ըն մերս յեկեղեցիս* (ՄՖՄԱ, 51), *ըն կատարեալ ժամանակս* (ՎՈԴ, 18), *ըն բնաս խոկմունս* (ՄՎՊՀ, 86), *ըն բոլոր կենի* (ՄՄՁ, 5808, 4 ա), *ըն հանդերձելում կենոջ* (ՅԿՀՃ, 65), *ըն գնդաձևում կերտակի* (ՅՊՁ, I, 182)², *ըն նոյնում կոնքոջ* (ՄՄՁ, 5808, 80 ա), *ըն հնոջ կտակարանում* (ՄՖՄԱ, 31), *ըն կատարեալ ժամանակս* (ՎՈԴ, 18), *ըն միում մարմնի* (ՅԿՀՃ, 18), *ըն միջի այրեցելոյ* (ՎԲԱ, 16), *ըն յոգնականում թոռոջ* (ՅՀԲ, 6), *ըն պատուականագունոջ պարունակի* (ՊԲՎ, 223), *ըն վերջնում ժամում* (ԳՄՅՅ, 157), *ըն ցուլ կենդանակերպում* (ՎՀՀ, 65) և այլն³:

Այնուհետև, *ըն* մասնիկի դիրքային տարբերակ *ն* մասնիկը, ինչպես գիտենք, գործածվում է ձայնավորով սկսվող բառերի գոյական, դերանուն, ածական և այլն թեք ձևերի հետ, ընդ որում համեմատաբար մեծ թիվ են կազմում *ա* ձայնավորով սկսվող բառերը, որն ունի այլ պատճառաբանություն: Օրինակ՝ *նախորժակում* (ՅՊՁ, I, 134), *նաստուածութեան* (ՄՖՄԱ, 209), *նամենայն* (լատ. in omni. ԳՄՀ, ք, 24 ա, 530), *նամենայնում* (ՆԾՁ, I, 15, ն.տ., II, 6, III, 6), *նամսեանն* (ՈԱ, էջ ա, ՈԵԱ, 1.), *նայլս* (ՄՖՄԱ, 237), *նայլում* (ԳՄՀ, II, ա, 388), *նայսմ* (ՈԱ, 17, ՅՊՁ, I, էջ գ, II, 3, ն.տ., III, 163), *նայսմաւորս* (իմա՝ «Հայսմավորքի մեջ»․ ՄՖՄԱ, 237), *նայսմիկ* (ՊԲՎ, 52, ՄՖՄԱ, 166), *նաշխարհում* (ՄՄՁ, 672, 7 ք, ՈԱ,

¹ Բնագրում *ընդդէմ*-ի *դէմ* բաղադրիչն առանձնացված է՝ մտածելով, որ *ըն* մասնիկով է այն կազմված, ունի մեկ *դ*-ով գրություն. «Գործեալ են գմեղս ընդ կուսի, ընդ ազգականի, ըն տեղոջ սրբազնում, *ըն դէմ* բնականի օրինաց» (ն. տ.):

² *Կերտակ* բառը չունի «Նոր հայկազյան բառարանը», այն թերևս նորակազմություն է՝ բաղադրված *կերտ* և *ակ* բաղադրիչներով, բնագրում ունի «շինվածք» իմաստը:

³ Լրացական կամ միջակա բաղադրիչների շարահյուսական կապին անդրադառնալու ենք հետագայում՝ շարահյուսության բաժնում:

էջ է), *նառաջնում* (ԽԷԲ, 34), նառն («տղամարդու մեջ». ՊԲՎ, 223), *նարծաթում* (ՅՊՁ, I, 15, այլև II, 30), *նարկեղ* (ԳՎՀ, 125), նարտաբնոց (ԳՉԲ, 120), *նոգոյ* (ն.տ., 121), *նարկելս* (ՄՖՄԱ, 9), *նաւարտացելոյ* (ԳՉԲ, 115), *նաւոր* // *նաւորս* (ՊԲՎ, 51, ՄՖՄԱ, 318), *նեղին* (ԳՉԲ, 112), *նեղն* (ն.տ.), *ներկակացն* (իմա՝ բառի արմատն է *երկ* < *երկու*. ըստ այդմ՝ *ն-երկ-ա-կացն*. ն.տ., 152), *ներկրորդում* (ՊԲՎ, 114), *ներկուց* (ԳՉԲ, 126), *նըմպելում* (ՅՊՁ, I, 240), *նընկուզենում* (ՅՊՁ, I, էջ ի), նընձեռման (ԽԷԲ, 23, 30), *նսկզբան* (իմա՝ բառասկզբի *ըս* հնչման դեպքում. (ՅՊՁ, II, 8), *նըսկզբան* (ԽԷԲ, 32), *նիմոյ* (ԳՉԲ, 152), *նիմն* (ն.տ., 110), *նիշխանութեան* (ՅՊՁ, I, 161, 190), *նոգոյ* (ԳՉԲ, 120), *նովր* (ն.տ., 152), *նորովայնի* (լատ. in utero. ԳՄՀ, II ա, 378), *նորում* (ՅՊՁ, II, 14, ՆԾՁ, I, 14, հետագայում՝ *յորում*, ն.տ., II, 6, III, 6, ՄՄՁ, 5808, 161 ք), *նոցն* (իմա՝ դրված *-ոց* մասնիկի վրա. ԳՉԲ, 119), *նուհին* (ն.տ., 110), *նուսում* (ՊԲՎ, 79), *նուրախութեան* (ՅՊՁ, I, 192), *նօրէնսն* (լատ. in veteri. ԳՄՀ, II ք, 373) և այլն:

Բավականին շատ են հանդիպում *ներ* նախդրով հոլովված գոյականները կամ որպես այդպիսին դիտվող բառերը, ընդ որում երբեմն՝ կից գրությամբ, նախասմասնիկի արժեքով: Հիշենք, որ այս նախդրի առաջին գործածողներն եղան հունական դպրոցի ներկայացուցիչները, որ շուրջ մեկ հազարամյակ առաջ հայերենի մեջ տեղիք տվեցին նման նորամուծության՝ ներգոյականի ձևաբանական դրսևորման, և որոնց հետևորդներ եղան 14-րդ դ. 20-30-ական թթ. մինչև 18-րդ դարի վերջերին ընկած ժամանակում լատինաբան դպրոցի գործիչները: Երկու դեպքում էլ գործ ունենք հայերենի նկատմամբ արհեստական միջամտության հետ: Օրինակ՝ *ներ անդամս* (ՊԲՎ, 82), *ներ անձին* // *ներ անձիցն* (ՄՄՁ, 69, 271ք, 2275, 111ա), *ներաշխարհում* (ՄՄՁ, 672, 7ք, ՄՄՁ, 2275, 111ա), *ներ աստուծում* (ՆԾՁ, I 21, հետագայում՝ *ի յաստուծում*. ն.տ., II, 11), *ներ արգանդի* (ՊԲՎ, 8), *ներբանս* (ՈԵՆ, 293), *ներ բացատում* (ՈԱ, 146), *ներգերեզմանում* (ՄՄՁ, 672, 72 ա), *ներ գրոց* (ՈԱ, էջ գ), *ներգրոցս* (ՄՄՁ, 672, 6 ա), *ներթում* (ՈՇ, 778), *ներ խոկմանց* (ՈԱ, 149), *ներկրթմունս* (ՍՊԽ, 48), *ներճանապարհում* (ՈԱ, 153), *ներում* ((ՅՊՁ, I, 180), *ի ներ մարմնութեան* (ՄՄՁ, 6562, 41 ա), *ներ մարմնութին* (ՊԲՎ, 8, 9), *ներ մարմնութեան* (ԽԷՀՄ, 9) *ներ յուսս* (ՊԲՎ, 82), *ներ յօդուածոջս* (ն.տ., 18), *ներ նշանի* (ն.տ., 10), *ներ շարադրութեան* (ՈԱ, 146), *ներ չափում* (ՅՊՁ, I, 187), *ներ պանդխտութեան* (ՈԵՆ, 297), *ներսաղմոսում* (ՄՄՁ, 672, 47 ա), *ներ վերջնումն* (ՄՄՁ, 672, 55 ա), *ներ տեղուջ* (ՈԱ, էջ դ), *ներ տպարանում* (ՈԱ, էջ ա, ՈԵԱ, 1, ԳՊՓ, 1, (ՊԲՎ, 262), *ներ քաղաքացոց* (ԹՊ, 93), *ներ քաղուածում* (ՈՇ, 775) և այլն:

Այս դեպքում ևս ունենք այնպիսի հոլովածներ, որոնք *ներ* մասնիկի և խնդրառու բառի միջև ընկած է լինում որևէ այլ շարահյուսական միավոր. *ներ* ամենեցուն *վկայութեանց* (ՄՄՁ, 672, 79 բ), *ներ* այսմ *մասին* (ն.տ., 46 բ), *ներ* այսպիսում բարձրագունոջ *կայսրութեան* (ՊԲՎ, 22), *ներ* բոլոր *աշխարհում* (ՄՄՁ, 672, 7 ա), *ներ* պարունակեալ *յինքեան* (լատ. in illa. ՎԲՀ, 22-23), *ներ* յառաջման *վարդապետութեան* ((ՊԲՎ, 5), *ներ* ոմանց *զլիսց* (ՄՍԱ, 1271) և այլն:

Ամփոփելով *ըն*, *ներ* մասնիկներով ներգոյական հոլովի մասին ասվածը՝ նկատենք նաև, որ երբեմն դրանք բաղադրված ենք գտնում *ի* (տարբերակ՝ *յ*) նախդիրների հետ: Օրինակ՝ *ըն յեկեղեցոջն* (ՄՖՄԱ, 318), *ի ներ մարմնութեան* (ՄՄՁ, 6562, 41 ա), *ընդ յորդում* (ՄՖՄԱ, 237), *ըն յերկինս* (ՊԲՎ, 103) և այլն: Սա ինչ-որ տեղ հիշեցնում է այն, որ հատկապես հետագա շրջանի գրաբարում քիչ չէին *ի* և *յ* նախդիրների միասին գործածությունները (հմմտ. ի *յերկինս*, *ի յերկիր* և այլն):

Վերն արդեն նշել ենք, որ լատինաբան հեղինակները ներգոյական հոլով են կազմում գրաբար *ի* նախդրի այնպիսի գործածությամբ, երբ տրական հոլովի ձևը դրված է լինում *-ում*, *-ոջ* վերջավորություններով (հմմտ. *միում* > *ի միում*), որոնք հին գրական հայերենում ոչ բոլոր բառերի դեպքում էին հանդես գալիս իբրև տրականի ցուցիչ, ինչպես նաև հոգնակի թվում հայցական հոլովի փոխարեն գործածում ան ուղղականը (հմմտ. *ի զիրքն*): Ըստ այսմ խախտվում է հին գրական հայերենի նորման , այն է՝ ներգոյական հոլովը եզակի թվում կազմել *ի* նախդրով և տրականով, իսկ հոգնակիում՝ նույն նախդրով և հայցականով: Դա հավանաբար բացատրվում է *-ում*, *-ոջ* վերջավորությունների կիրառական ակտիվացմամբ, ինչպես նաև լատինաբան գործիչների այն հակվածությամբ, որ ունեցել են այդպիսի կազմությունների գործածության նկատմամբ:

Նման կազմություններն այստեղ երեք տեսակ են:

Ներգոյականի ձևեր՝ կազմված *ի* նախդիրով և *ում* մասնիկով: Օրինակ՝ «Նոյն Յովհաննէս *ի* նմին *գրումն* ասէ, թէ այլ ոմն Վարդան անուն ուղղափառ վարդապետն գրէ» (ԳՄՀ, IIբ, 244): «Ուխտեալ էր յանձին իւրում տալ շարադրել զնա երբեմն *ի ղիսակում* ժամու ի լրումն ըզձի և ղիտաւորութեան իւրոց» (ՅԿՊՍ, 5 ա): Պատրաստեալ եղև *ի* միջի *մերում* գործարան տպագրութեան» (ՅՁԳՀ , 5 ա): Ունենք նաև հետևյալները. *յանկարելչում* (ՅՊՁ, I, 3), *ի զինում* («զինու մեջ». ՈԱ 153), *յեբարանում* («եփելու տեղում». (ՅՊՁ, I, 148), երեսում (փխ. յերեսում. իմա՝ «եթե քանում *երեսում* գտանել պարտիցէ». ՈՇ, 775), *ի թում* (ՈԱ էջ ա), *ի կենում* (ՅՊՁ, I, 55), *ի ներկայումս* (ՄՄՁ, 119, 6 բ), *ի նոսում* (ԳՄՀ, I, 20), *ի նորում* (իմա՝ *ի նորում* գերեզմանի, լատ. in novo sepulchro. ՎԲՀ, 18-19), *տպարանումս*

(փխ. ի տպարանումս. իմա՛ «աշխատողք տպարանումս զՍարգիս և զԱստուածատուր». ՅՁԳ-Հ, 2) և այլն:

Ներգոյականի ձևեր՝ կազմված ի նախդրով և -ոջ մասնիկով: Օրինակ՝ «Որպէս տեսութիւն ոչ միայն պատկերն, որ ի հայելոջն» (ՄՄՁ, 2275, 110 բ): «Հերոնիմոս ի տրակոջն որ առ Դամասոս վեհապետ ասէ» (ՅԿՀՃ, 60): Այսպէս ունենք նաև հետևյալները. ի գլխոջ (ԽԷՀՄ, 187), ի ձայնոջ (ՈՇ, 777), ի վանկոջն (ՄԳ-ԲՎ, 35) և այլն:

Ներգոյականի ձևեր՝ կազմված ի նախդրով և ուղղական (ոչ հայցական) հոլովով՝ որոշյալ կամ անորոշ առումով: Օրինակ՝ «Որ գրեալ եղև ի գիրքն էակաց» (ԳՄՀ, II, 18 բ): «Ձի ի կեանքն մարմնական մարդն կատարի» (ՄՄՁ 3475, 267 բ): Ունենք նաև հետևյալները. ի գիրքս (ԳՄՀ, I, 2, 3), ի կեան (ՊԲՎ, 53), ի կեանն (ն.տ., 15), ի միտքն (ՄՄՁ, 3460, 4 բ, ՄՄՁ, 5097, 245 բ) և այլն:

2. Ածականի և թվականի փոփոխությունները նկատվում են հոլովման և աստիճանականության (համեմատական աստիճաններ կազմելու) դեպքում, ընդ որում դրանք չունեն այն տարածումն ու հաճախական գործածությունը, որ գոյություն ունի, օրինակ, գոյականի դեպքում:

Լատինաբան հայերենի մեջ ածականի հոլովումը հիմնականում տեղի է ունենում հին գրական հայերենի նորմային համապատասխան, և բավականին քիչ են այն դեպքերը, երբ ունենք շեղում այդ նորմայից: Իսկ համեմատության աստիճանների կազմության մեջ, լատիներենի օրինակով, ներմուծվում է հստակ մոտեցում (օրինակ՝ լաւ – լաւագոյն – լաւագունեղ):

Թվականների մեջ կատարված փոփոխությունները գրեթե աննշան են, ավելի շատ կապվում են բառակազմական-հնչյունական, քան ձևաբանական երևույթների հետ (օրինակ՝ տասններկու // տասներկու, փխ. երկոտասան):

Ստորև, անդրադառնում ենք նախ՝ ածականի, այնուհետև՝ թվականի այն փոփոխություններին, որոնք տեղ են գտել այս շրջանի հեղինակների երկերում և այս կամ այն չափով պայմանավորված են լատինաբանությամբ:

ա) 14-18-րդ դդ. լատինաբան հայերենի մեջ ածականի համեմատության աստիճանների կազմության համար սահմանվում են ավելի խիստ և միօրինակ կանոններ, քան հին գրական հայերենում էր: Ինչպես գիտենք, լատինաբան նորամուծություններից մեկն էլ այն է, որ ածականի բաղդատական

(համեմատական) աստիճանը գրեթե առանց բացառության, պարտադիր կերպով կազմվում է *-գոյն*, իսկ գերադրական աստիճանը՝ *-գունեղ* մասնիկների միջոցով¹:

Նկատենք, որ հին գրական հայերենում *-գոյն* մասնիկը երբեմն գործածվում էր գերադրական աստիճան ցույց տալու համար, իսկ լատինաբան հեղինակներն այն գործածում են միմիայն բաղդատական աստիճանի դեպքում: Ավելացնենք, որ լատիներենի ածականի աստիճանների կազմության մեջ չկա այն խիստ սահմանազատումն ու միօրինակությունը, որ հանդես են բերում լատինաբան հայերենի մեջ այդ կանոնին հետամուտ հեղինակները²:

1) Լատինաբան հայերենի տարբեր փուլերում նկատելի են այնպիսի ածականներ, որոնց բաղդատական աստիճանը կազմված է *-գոյն* մասնիկով, ընդ որում դրանք հակադրական գույգեր են կազմում իրենց իսկ գերադրականի ձևերի հետ, հանդես են գալիս նաև առանձին: Օրինակ՝ «Բաղդատականին գաղափար է *գոյնն*, որգոն. *արիագոյն* (ՄՄՁ, 230, 13բ): Բերված օրինակում հեղինակն ինքն է սահմանում բաղդատականի կազմության երևույթը, և շարունակության մեջ նշվում է, որ գերադրականն էլ, ի տարբերություն *-գունեղ* մասնիկով կազմվելու, կարող է ձևանալ *-եղ*, *-գին* մասնիկների միջոցով՝ ցույց տալով հատկանիշի առավելական, գերադրական լինելը. «Գերադրականացն գաղափարք են երկու *եղ*, և *գին*, որգոն. *ահեղագին*» (ն.տ.): Ավելացնենք, որ նախկինում այս վերջին ածանցով կազմությունները հիմնականում նշվել են որպես բառակազմական, ոչ թե ձևակազմական դրսևորումներ, ուստի համապատասխան քերականություններին նվիրված աշխատանքների մեջ հաճախ դրանք դիտվում են ածանցներ, քան ձևակազմական մասնիկներ:

Այստեղ բերում ենք այն ձևերը, որոնք *-գոյն* մասնիկով բաղդատական աստիճան են ցույց տալիս. «Նշանք *գորեղագոյնք* առնանին ըստ ոմանց յանդամոցն» (ՄՄՁ 5808, 114բ): «Քանզի *բարեգոյնք* են ստինք քո, քան զգինի, հոտաբուխք իղովք *բարեգունեղիք*» (ԽԷՀՄ, 8): «Եւ ապա յայտնեաց *մեծագոյն* և *խոհեմագոյն* զիտնոցն» (ՎՄՁ, 1663, 9): «Կարէր կեցուցանել զնա *ուժգնագունի* զոջմամբ և արտասուանօք» (ՅԿՀՃ, 73): «Բայց սակայն պակասին *ի փոքրագունում*» (ՄՄՁ, 119, 11բ) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *երեցագոյն* (լատ. maior. ԿԳՏ, 10), *լուագոյն* (ԴԶԲ, 69, նաև *լուագոյն*, լատ. melior, ՆՀԼԲ, 323), *խոհեմագոյն* (ՎՄՁ,

¹ Դրվելով ածականի վրա՝ *-գոյն* մասնիկը նախապես ուներ սաստկական իմաստ, իսկ հետագայում՝ ձևաբանական-բառակազմական արժեք, իսկ *-գունեղ* մասնիկն ավելի ուշ է դարձել նման իմաստի կրող:

² Հմմտ. А.Эрну, Историческая морфология латинского языка. М., 1956: Տես նաև Վ. Համբարձումյան, Լատիներենի դասագիրք, Երևան, 2007, էջ 51-70:

1663, 9), *ընծայրագունում* (ՅՊՁ, I, 5, ն.տ., II, 6), *կրրսերագոյն* // *կրտսերագոյն* (լատ. minor. ԿՏԳ, 10բ, ՄՄՁ, 7560, 15ա), *կրթագոյն* (ՈԱ, 146), *համառօտայգոյն* (ՄՄՁ, 69, 273բ), *մանաւանդագոյն* (ԳՄԳՎ, 14, ՄՍԽՎ, 14), *ի մաքրագունէ* (ՄՄՁ, 672, 89ա), *ի մեծագունի* (թվոջ) (ՄՄՁ, 119, 39բ), *պտուտակագոյն* (ՄՄՁ, 2275, 106ա), *պարգագոյն* (ՄՄՁ, 572, 5բ), *վեմագոյն* (ՅՊՁ, I, այլև ՅՊՁ II), ուշիմագոյն (ն.տ., I, 10, II, 26) և այլն:

Որոշ դեպքերում գործածվում է *-գոյն* մասնիկի *-գուն* տարբերակը, որը կապ չունի *ոյ > ու* հնչյունափոխության հետ, որովհետև նման դեպքերում շեշտը չի խաղացել որևէ դեր: Օրինակ՝ «Իսկ դուք առաւել քան գրևս *յամառագունք*, քան գրիս մեռելոց *անգգայագունք*, և քան զապառաժս *կարծրագունք* գոլով, ոչ հաւատացիք նմա» (ՄՖՄԱ, 60-61):

2) Համեմատաբար շատ են գործածվում ածականական այն ձևերը, որոնք կազմված են *-գունեղ* մասնիկով՝ գերադրական աստիճանի արուսահայտման համար: Օրինակ՝ «*Անարգանագունեղ* ծառայ Յոհաննէս վարդապետ Բուզանդեան» (ՄՄՁ, 5606, 78ա): «Այլ վասն *բարեգունեղին* և *բաղցրագունեղին* Աստուծոյ» (ՄՊԽ, 39): «Քանզի տեսցուք ի նմա զիր *գեղեցկագունեղ, բերկրականագունեղ և փառաւորագունեղ*» (ԽԷՀՄ, 188): «*Գերագունեղ, իմաստնագունեղ, բարեգունեղ, արդարագունեղ, ողորմածագունեղ* և ըստ ամենայնի *կատարելագունեղ* (իմա՛ այս ածական բնութագրիչներով է հեղինակը դիմում Տիրոջը. ՄՎՊՀ, 74): «Եւ զի այս ևս ոչ բավականանայ, վասն որոյ պարտիմք կալ ի հնագանդութեան *գերագունեղի* Վեհապետին Հոռմայնոյ, իբրև, փոխանորդի Քրիստոսի» (ՊԹՎ, 76) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *ազնուագունեղ* (ՄՊԽ, 13), *արդարագունեղ* (ՄՎՊՀ, 74), *բարեգունեղ* (ԽԷՀՄ, 8, ՄՎՊՀ, 73, 74), *բարձրագունեղ* (ՊԹՎ, 5, 6, ՆԾՁ, I, 183, ն.տ., II, 148, ն.տ., III, 158), *բերկրագունեղ* // *բերկրանագունեղ* (ԽԷՀՄ, 188), *գեղեցկագունեղ* (ՊԹՎ, 6), *գերագանցագունեղ* (ՅՊՁ, I, էջ ա, ն.տ., II, 2), *գովելագունեղ* (ՄՍԱ, 1273), *դաժանագունեղ* (ՄՖՄԱ, 82), *դառնագունեղ* (ՄՎՊՀ, 93), *դժուարագունեղ* (ՅՊՁ, I, 275), *գտագունեղ* (ՅՊՁ, էջ իթ), *իմաստնագունեղ* (ՄՎՊՀ, 74, ԽԷՀՄ, 3), *խոհեմագունեղ* (ՄՎՊՀ, 102, ՄՄՁ, 5808, 93բ), *խոնարհագունեղ* (ՍԼԲԱ, 161, ՄՄՁ, 5808, 161բ), *խորհրդագունեղ* (ՅՊՁ, I, 55), *ծայրագունեղ* (ՄՖՄԱ, 5, 7, ՅՊՁ, I, 2, ն.տ., II, 20, ՄՍԱ, 1273), *կատարագունեղ* (ՄՄՁ, 119, 29ա), *կատարելագունեղ* (ՄՎՊՀ, 74, ԽԷՀՄ, 12), *համբերագունեղ* (ՅՊՁ, I, 103), *համեստագունեղ* (ՍԼԲԱ, 159), *հզօրագունեղ* (ՄՍԱ, 127, ՊԹՎ, 6), *հնագունեղ* (ՅՊՁ, I, 7, ն.տ. II, 8, ՅԿՀՃ, 7), *հնագանդագունեղ* (ՄՎՊՀ, 99), *ճշմարտագունեղ* (ՍԼԲԱ, 161), *մաքրագունեղ*

(ԽԷՀՄ, 11, ՄՎՊՀ, 102, ՊԲՎ, 29, ՄՖՍԱ, 231), *մեծագույնը* (ՄՍԱ, 1272, ՄՎՊՀ, 93), *յարմարագույնը* (ՄՍԱ, 1273), *յոզնագույնը* (ՅՊՁ, I, էջ ժդ, ն.տ., II, 11-12), *նրբագույնը* (ն.տ., 48), *շահաւէտագույնը* (ԽԷՀՄ, 33), *ողորմածագույնը* (ՄՎՊՀ, 74), *ողջախոհագույնը* (ՄՎՊՀ, 102), *ստուտակասնագույնը* (ԽԷՀՄ, 11, 33, ՊԲՎ, 6, ՄՊԽ, 30, ՈՓ, 71), *պարզագույնը* (ԽԷՀՄ, 11-12), *սեռագույնը* (ՄՖՍԱ, 56), *սիրելագույնը* ((ԽԵՀՄ, 3, 33), *սրբագույնը* (ԽԲՎ, 231), *սրբագնագույնը* (ՄՊԽ, 47, ՄՍՁ, 5808, 3ա), *սիրագույնը* (ՎՅԲ, I, 1), *վատթարագույնը* (ՄՖՍԱ, 82), *վեհագույնը* (ՅԿՀՃ, 20, 54), *ուժեղագույնը* (ՄՍՁ, 5808, 99բ), *ուշիմագույնը* (ՄՍԱ, 1273, ՅԿՀՃ, էջ ը), *փառատրագույնը* (ԽՀԷՄ, 188), *փրկաւէտագույնը* (ն.տ., 205), *քաղցրագույնը* (ՍԼԲԱ, 15, 31, 89, 159, 169, ՄՎՊՀ, 16, 73,99, ՄՊԽ, 39), *քաջագույնը* (ՊԲՎ, 19), *օգտագույնը* (ն.տ., 232), *օգտակարագույնը* (ՄՍՁ, 5808, 9ա) և այլն:

բ) Լատիաբան հեղինակների երկերում թվականների փոփոխությունները նախ՝ չունեն այն տարածվածությունը, որ նկատելի էր, օրինակ, ածականի դեպքում, երկրորդ՝ դրանք շատ քիչ դեպքերում են հանդիսանում լատիներենի օրինակով կազմված, այլ մեծ մասամբ հայերենի խոսակցական տարբերակներից եկող երեկույթներ են, որոնք գործածվում են ինքնաբերաբար, գրական ընդհանուր նորմային չհետևելու կամ հետևելու պակաս կարողություն ունենալու պատճառով:

1)Քանակական թվականների մասնակի փոփոխություններից թերևս նշելի են հետևյալները:

Որոշ թվականներ գործածված են խոսակցական տարբերակից եկող արտասանության արդյունք հանդիսացող ձևերով. «յետ *վաթցուն* ատուրց ետես» (ԳԹ, 26): «որ է ի *եսաթըն* գիրըս» (ՏԳ, 56): «Ներ գլխում *քսան* և *երկոսում* (փխ. ու-ով. ՄՍՁ, 672, 48բ): «Ոչ են տեսեալք *չորս* աստեղք են շուրջ զլուսնթագիս» (ն.տ., 27ա) և այլն:

Մի թվականը գրեթե միշտ դրված է լինում *-ում* վերջավորությամբ տրականով, երբ գործածվում է ներգոյական հոլովի կազմության դեպքում՝ *ըն* կամ *ներ* մասնիկների հետ. «*ըն միում* վայրկենի» (ՊԲՎ, 24): «Որք նկատին *ըն միում* էութեան» (ՅԿՀՃ, 62): «Մի տացես պոռնկութեանց զանձն քո *ներ միում* ումեք» (ՈԱ, 153) և այլն:

Հին գրական հայերենի *երկոտասան* թվականը գործածված ենք գտնում արտասանական խճողմամբ, այլև աշխարհաբարյան ձևով՝, այն է՝ շրջուն շարադասությամբ: Օրինակ՝ «Նստելոց են *երկոտասան* աթոռս. (ԳՄՅՅ, 100): «Յամի Տեանն երեք հարիւր և *տասն* և *վեց*» (ԹԱՄ, 4) և այլն:

Թերևս լատինաբան հակում է նկատվել մի թվականի մու ձևի գործածությունը՝ քերականական ինչ-ինչ իմաստի դրսևորման նպատակով: Օրինակ՝ «Քան զի որոց նիթն կամ տեսակաւ և կամ թուով մու» (ՅՁԳՀ, 20): «Չմու կիսած բաժինն եռապատկեա» (ՎՈԴ, 33) և այլն:

2) Դասական թվականներից մի քանիսը նույնպես նույն կարգի են, ինչ քանականները:

Նշենք դրանցից մեկ-երկուսը:

Առաջին թվականը գործածվում է ոչ միայն այդ, այլև երկրորդաբար հանդես եկող *-երրորդ* ածանցի հետ միասին՝ թերևս իբրև լատիներենի նույնարժեք ածանցի պատճենման հետևանքը: Օրինակ՝ «*Առաջներրորդ* խոսք որ հաստատե գայն, զոր ինչ ասացաք վերոյ» (ՄՄՁ, 672, 52բ): «*Առաջներրորդ* պատգամն ուսուցանէ» (լատ. *primum praeceptum docet*. ՎԶՀ, 36-37) և այլն:

Հինգերրորդ թվականը, թերևս արհեստական համաբանության անալոգիայի հետևանքով, գրված ենք գտնում կրկնակ *ր*-ով (հմմտ. *երրորդ, չորրորդ*): Օրինակ՝ «Որ է *հինգերրորդ* Սինհողոս» (ԴՃՈԻՀ, 12): Այլև *հինգերրորդ* (ընդ որում գրությամբ առանձին. *հինգ երրորդ*. ԳՄՅՅ, 156, 187):

Նույն երևույթը նկատելի է *ութերրորդ* թվականի դեպքում. *ութերրորդ* (ԴՃՈԻՀ, 14, 18): Այլև *իններրորդ* թվականի գրությունը մեկ *ն*-ով՝ *իներրորդ* (ԳՄՀ, IIա, 393):

Այսպես նաև տարածումներ են նկատվում հետևյալ դասական թվականների գործածության մեջ. *երկոյտասներրորդ* (ԳՄՅՅ, 97), *հնկետասներրորդ* (ՅԿՀՃ, 195, ՄՄՁ, 5808, 93բ), *վեցտասներրորդ* (ՅԿՀՃ, 195), *ութևտասներրորդ* (փխ. *ու*-ով. ՊԶՎ, 336), *քսանևեկերրորդ* (փխ. *ե*-ով. ն.տ., 356), *քսանևհինկերրորդ* (ՅԿՀՃ, 174) և այլն:

Լատիներենի պատճենման արդյունք է հետևյալ դասական թվականների կիրառությունը. «Չի *նութերրորդում* և *երեսներրորդում* ամում» (ՈԱ, 146): «Այս Սաղմոս Դ-աթի *հարիւրորդ իներրորդ*» (լատ. *hic Psalmus Davidis centesimus nonus*. ՎԶՀ, 71) և այլն:

3. Ձևաբանական փոփոխությունների մի մասը վերաբերում է դերանուններին: Վերջիններս ենթարկվել են ձևակազմական փոփոխությունների, դրանցից հատկապես, այսպես կոչված, ոչ անձնական դերանունները: Այդ փոփոխությունները մի քանի կարգի են. մի կողմից՝ շարունակում են ի հայտ բերել հին գրական հայերենի մեջ ունեցած տարբերությունները, մյուս կողմից՝ ներթափանցումներ են տարբեր ժամանակի խոսակցական հայերենից, մեկ այլ

կողմից՝ լատիներենի ազդեցությամբ կազմված ձևեր, իբրև պատճանում կամ հարմարեցում:

Այստեղ առավել կարևոր է այն, որ լատինաբան հեղինակները լատիներենի և վերջինիս քերականությունների օրինակով հայերենի մեջ կատարում են մի շարք նորամուծություններ՝ կապված դերանվան հոլովման և սեռի քերականական կարգերի դրսևորման հետ, խախտելով հին գրական հայերենի նորման: Այս դեպքում հանդես են բերում ոչ միայն ձևերի կազմության ինքնուրույն մոտեցում, այլև տեղ են տալիս հունաբան ձևերի գործածությանը: Այսպես, օրինակ, ոչ միայն Ֆր. Ռիվոլայի, Կղ. Գալանոսի, Ոսկ. Երևանցու, Հովհ. (Հոլով) Կոստանդնուպոլսեցու և Խաչ. Էրզրումեցու քերականությունների մեջ ենք հանդիպում նման նորամուծությունների¹, այլև դրանք երևան են գալիս ավելի վաղ շրջանի քերականություններում. վերջինիս լավագույն հավաստում են համեմատաբար ուշ լույս տեսած Հովհ. Քոնեցու, Դավ. Չեյթունցու և ուրիշ քերականների տվյալները²:

Ոչ միայն քերականական աշխատություններում, այլև այլ բնույթի երկերում հանդիպում են դերանվանական այնպիսի ձևեր, որոնք նորամուծության են, հետևանք լատինաբանության: Այն արհեստական միջամտություն է 14-18-րդ դդ. գիտական (եկեղեցական, դավանաբանական, իմացաբանական և այլն) գրականության մեջ:

Ստորև անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Նախ, Դավ. Չեյթունցին, որ համարվում է մեզանում հունալատինական տիպի քերականության հեղինակ, դերանվան սահմանման և բաշխման հարցերում տալիս է այնպիսի բնութագրեր, որոնք ոչ միայն տեսության, այլև լեզվի տեսակետից բավականին անհարիր են հայերենին: Օրինակ՝ «Է՞ր ասէ. թիւք նախագաղափարաց եզական՝ ես, դու, նա, երկուորական՝ *մոնք, դոնք, նոնք*, իսկ բազմաւորական՝ *սոնք, դոյնք, նոքայնք*, և ածանցացն եզական իմ, քո, *նորա*, երկական՝ *իմեն, նովրոն, քովրա*, յոգնական՝ *իմք, քոյք, նորայք*» (ն.տ., 150): Հատկապես ընդգծված ձևերը ցույց են տալիս, թե որքանով է խաթարվում հայերենի, մանավանդ դասական գրաբարի դերանվանական համակարգը, երբ օտարաբանությունը լեզվի արհեստական ձևակերպման և ուսուցման պարտադրման հիմունք է դառնում: Բերենք նաև հետևյալ օրինակը. «Չնախագաղափար տեսակին ասաց, և այժմ գօրինակ ածանցիցն ասէ

¹ Հմմտ. Գ. Չահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 18-20, 37-40, 71-74, 100-101, 168-169 և այլն:

եզականին, որ միայն գստացողն յայտնեն, այս է *յիմոյն, ի քոյոյն, ի նորայոյն*, զի երկդիմիքն ասացան և ի գուգից *նովը ներկու*, իբր թէ՝ *յիմոյն և ի քոյոյն, ի նորայնոյն, ի սորայոյն*, իսկ յոլովիցն *ի մերոցն, ի ձերոցն, ի նոցայոցն, ի սոցայոց, ի նորայոց* և որք սոյնալիսիք» (ն.տ., 152):

ա) Որոշ դեպքերում դերանունը, որ վերջանում է ձայնավորով, ունենում է լրացուցիչ *յ* ձայնորդ տարր. «և կամ արար վնաս մարմնոյ *նորայ*» (ԳԽ, 7): «Աստուած ի վերայ *նոցայ*» (լատ. super eos. ՌՀԼԲ, 7): Այսպես նաև՝ *նայ* (ՄՄՁ, 614, 30բ), *ընդ սայ* (ն.տ.), *զնայ* (ն.տ., 31ա) և այլն:

բ) *Ինքն, իւր* անձնական դերանունները երբեմն ունենում են ներգոյական, այլև գործիական հոլովների կազմությանն անհարիր ձևեր. «Պարունակէ *նինքեան* զերկոտասան մասունս» (ՊԶՎ, 14): «Եւ զյարամնայութիւն *նիրում սրբազանի պաշտաման* ի փառս Տեառն Աստուծոյ օրհնեցելոյ» (ՄՎՊՀ, 97):

Այսպես ունենք նաև՝ *ներ ինքեանց* (ՈԱ, 146), *հանդերձօք իւրովք* (ԳՄՀ, I, 48) և այլն:

գ) Երկրորդ դեմքի *դու* անձնական, այլև *քո* ստացական դերանունների եզակի բացառական հոլովն ունի այլաձև դրսևորում, որն ավելի շուտ խոսակցական լեզվից եկող երևույթ է. ի ներքս *ի քեզէ* (փխ. *ի քէն*. ՅՊՁ, I, 76), *ի տէրութենէդ քումմէ* (փխ. *ի քումմէ*. ԳՄՀ, I, 62) և այլն:

դ) Ցուցականներից *սա* և *նա* դերանունների թեք հոլովներից հատկապես սեռականի, այլև ներգոյականի դեպքում ունենք հետևյալ տարբերությունները. «Այս քան *ըննտում* ապագնութիւն է երանութեանն» (ՅՊՁ, I, 3, այլև ն.տ., II, 21): «Ձի մի ինչ իգացեալ և մեղկուն իցէ *ի նոտում*» (ն.տ., 37): «Ձի *ի նոտում* ոչ էին ամենայն եպիսկոպոսք և վարդապետք հայաստանեայց, այլ մասն ինչ նոցին» (ԳՄՀ, I, 192, այլև ն.տ., I ա, 192, ն.տ. II բ, 556): «Ձի որք ոչ ըստ *սոցայցն* լինին խտրութեանց զքերթողացն արութիւնս տապալէ» (ԴԶԲ, 73): «Ի փոփոխումն *նոցայնոց* գերեաց» (ԳՎՀ, 130) և այլն:

ե) Ցուցականներից *այս* և *այն*, ինչպես նաև *նոյն* դերանունները հատկապես ներգոյականի կազմության դեպքում կրել են թեքման, այլև նախդրի ավելացման հետ կապված փոփոխություններ: Այսպես, *այս* դերանվան *ներ այսմ*, այլև *նայսմիկ*, ինչպես նաև *այն* դերանվան *ենք այնմիկ* ձևերը գործածվել են ներգոյական հոլովի իմաստով. «Մեք վերջացեալ գտանենք *ներ այսմ* ժամանակի ի մարմնատր իշխանութենէ» (ՍՁԹ, 541): «Նայսմիկ ժամանակի սկսանին

² Տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, էջ 172-176: *Դաւիթ Չէթրոնցի*, Մեկնութիւն քերականի, էջ 149-152:

մարդիք ցրտահարիլ» (ՄՄՁ, 5808, 112ա): Այլև *նայամիկ* ձեռնադրութեան (ն. տ., 4բ), *ենթ այնմիկ* տեսակի գինոյն (ՊԲՎ, 261) և այլն¹:

Առավել շատ են *նոյն* դերանվան հոլովման հետ կապված փոփոխությունները, մասնավորաբար սեռական և ներգոյական հոլովների դեպքում. «Այս *նոյնոյ* Յոհաննու ծանոյց և յայտնեաց» (ԳՄՅՅ, 157): «Եւ եղև զի իշխանք ոմանք *նոյնոյ* կայսերն» (ԳՎՀ, 141): «թէ անուն միոյ և *նոյնոյ* անձին ի զանազան տեղիս բազմադիմիք են եղեալք» (ՄՍԱ, 1272): «Որք են ի *նոյնում* կարգի» (ՄՄՁ, 119, 45ա): Այսպես նաև հետևյալները. *նոյնոյ* (ՅԿՀՃ, 59, ՆԾՁ, 25, այլև ն.տ., II, 14, III, 16, ԳՎՀ, 144, ՄՄՁ, 672, 10 ա, ՄՖՄԱ, 8, ԹՊ, 67, ԳՄՀ, IIա, 158 և այլն), ի *նոյնում* (ՅՊՁ, I, էջ ժա), *ներ նմին* (ն.տ., II, 313) և այլն:

զ) Լատինաբանության հաղթահարման տեսակետից նկատելի է այն իրողությունը, որ լատինաբան հայերենով գրված երկերի այս կամ այն վերահրատարակության ժամանակ խորթ և անհարիր ձևերն ինչ-որ չափով փոխարինվել են հայերենի նորմային համապատասխանող ձևերով: Օրինակ՝ *նիրս* («իր մեջ, իրենում». ՆԾՁ, I, 24) ~ *յիրս* (ՆԾՁ, II, 13, այլև ն.տ., III, 15): Տե՛ս նաև *նայամիկ կենցաղում* (ԹԳՅՀ, 570) ~ *յաստի կեանս* (ԹԳՅՆ, 322) և այլն²:

է) Հարցական, ինչպես նաև հարաբերական դերանունների մեջ նկատելի են հետևյալ կարգի փոփոխություններ. «Մի միայն է՝ *նորում* կարես գոլ յամառող» (ՅՊՁ, I, 296): «Եւ մերձ այսմ տաճարիս, որ էջ միածին ասի, կայ պատրիարգարան կաթողիկոսին, և մեծագոյն շինուած, *ներում* բնակէ բազմութիւն ինչ հայոց վարդապետաց» (ԳՄՀ, I, 192): «Անուամբ քաւարանի իմանամք զտեղի ինչ, *ներում* մաքրողական տանջանք բաւին հաւատացելոց հոգիք ոմանք» (ն.տ., II բ, 191): «Յետագոյնութիւն *ներում*, և ժամանակի» (հմմտ. լատ. posterioritas in quo et temporis. ԿԳՏ, 4ա, այլև ՄՄՁ, 7560, 5ա) և այլն:

Այնուհետև, *որ* հարաբերական դերանվան թեքման բազմաթիվ օրինակներ վերաբերում են ներգոյական հոլովի կազմությանը՝ եզակի և հոգնակի թվում, *ներ* կամ *ն* մասնիկների միջոցով: Օրինակ՝ «*Նորում* և զետեղին անդամք բնականք» (ՄՄՁ, 5808, 114 բ): «Տեսեալ բարեկամին զվտանգն *նորում* կայր» (ԳՎՀ, 137): Ունենք նաև հետևյալները. *նորում* (ԳՎՀ, 126, 138, ՅՊՁ, I, 4, այլև ն.տ., II, 22, ՊԲՎ, 22, ՆԾՁ, I, 11, այլև ն.տ., II, 3, ն.տ. III, 3, ՅՀԲ, 2), *ներ որում* (ՄՄՁ, 672, 64 ա), *ներ նորում* (իմա՛ կրկնակի՝ *ներ* և *ն* մասնիկի գործածություն.

¹ Թերևս հարկ կա նշելու, որ *ենթ*, *ն*, *ներ* մասնիկները վերաբերում են գոյական բաղադրիչներին, և դերանունների վրա են դրվել շարահյուսական հատկանիշով:

² Մանրամասն տես Վ.Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում, էջ 66-67:

ՈԱ, էջ է), *ներ որոց* (ՈԱ, 146), *նորս* (իմա՝ «*նորս* ոչ երևին յօրուածք»։ ՄՄՁ, 5808, 113ա) և այլն։ Ավելացնենք, որ այս դեպքում ևս նկատելի է լատինաբան ձևերի վերանայում։ *նորում* (ՆԾՁ, I, 19) ~ *յորում* (ն.տ., II, 10, այլև ն.տ., III, 11) և այլն։

ը) Անորոշ և որոշյալ դերանվանական ձևերը նույնպես այս կամ այն կերպ փոփոխություն են կրում. «Եւ դարձեալ՝ ամուսնութիւն կարէ *նամենայն* դարն երկու կերպիւ իմանիլ» (ԳՄՀ, II ք, 711): «Ոչ կարեն *նամենայնում* ատուր լսել զսրբազանն պատարագ» (ՄՎՊՀ, 66): «Որ և զամենեսեան ներգործէ *նամենեսեան* ըստ կամաց իրոց» (ՈԱ, էջ է): «*Նամենքն* հակառակ է բղջախոհութեանն» (ԲՔ, 75 ք, այլև ՄՄՁ, 5097, 75 ք): «Ոչ է ուղիղ, երբ *նիմիք* բառոջ ներփակի բացասութիւն ուրումն, որոյ հակակայն յարմարի միւսոյն» (ՄՄՁ, 3640, 59ք, այլև 1715 ք. տպագր., էջ 248) և այլն։

4. Լատինաբան հայերենի ձևաբանական փոփոխությունների մի որոշ մասը վերաբերում է մակբայներին։ Այս դեպքում ունենք բառակազմական-ձևակազմական այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել նման բառերի համեմատության աստիճանների կազմության (աստիճանակազմության) մեջ։ Ամբողջ հարցն այն է, որ լատինաբան հեղինակներն այս դեպքում ևս հետևում են լատիներենի նորմային, և ըստ այդմ մակբայակերտ որոշ ածանցներով (*-արար*, *-սպէս*, *-օրէն* և այլն) մակբայներ են կերտում ածականների ոչ միայն ուղիղ (կամ դրական աստիճանի), այլև փոփոխված (կամ բաղդատական և գերադրական աստիճանի) ձևերից (իմաստ. *գեղեցկագունարար*, *գեղեցկագունեղարար* և այլն)։ Նման կազմությունները, բնականաբար, խորթ են եղել հայերենի գրական նորմային, ուստի հետագայում հաղթահարվում են, թեև ավելի ուշ ժամանակներում ինքնաբերաբար շարունակում են ինչ-որ չափով սպրդել գրավոր աղբյուրներում։

Ստորև անդրադառնանք հետևյալներին։

ա) Երբեմն որոշ բառեր գրությանը այն չեն, ինչ ավանդված են ավելի վաղ շրջանի հայերենում։ Այսպես, *ընդդէմ* բառը հին գրական հայերենում իբրև մակբայ կիրառվում էր «հակառակ, փոխանակ» իմաստով, և հետագա հեղինակները, թերևս մտածելով, որ բառն ունի *ըն* և *դէմ* բաղադրիչներով կազմություն (*ըն* բաղադրիչը լատինաբան ընկալմամբ), այն հաճախ գրում են մեկ *դ*-ով, այն է՝ *ընդէմ*։ Օրինակ՝ «Չորս գործեալ էի *ընդէմ* Աստուծոյ, այլ եղէ ծոյլ և անհոք» (ՄՊԽ, 46): «Այլև ընդէմ հոգոյ իմում, և *ընդէմ* մերձատրաց իմոց» (ն.տ., 44): «Ի սաղմոսին *ընդէմ* մասին Տօնաթոսի» (ՅԿՀՃ, 36-37): «Հայցուած *ընդէմ* ծուլութեան» (ՍԼԲԱ, 105):

Որ սա այսպես է, պարզ երևում է որոշ բնագրերի վերահրատարակման ժամանակ կատարված ուղղումներից: Հմմտ. *ընդէմ* (ՆԾՁ, I, 35, ն.տ., II, 23) և *ընդդէմ* (ն.տ., III, 27) և այլն:

Լատինաբան հեղինակներից ոմանք *խրաքանչիւր* բառը գործածում են անջատ գրութայնք՝ մտածելով, որ բարդության առաջին բաղադրիչն է *խրաքանչ*-ը: Այսպես է մտածել, օրինակ, Հովհաննես Հոլովը. «և *խրաքանչ իւրոյ* զգործն զի արդ և իցէ հուրն քաւարանին փորձեսցէ» (ՅԿՀՃ, 89): «Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ *խրաքանչ իւր* աստիճանի» (ՅԿԽՀ, 2): Միաժամանակ նույն բնագրում կարելի է հանդիպել ճիշտ գրութայն: Օրինակ՝ «Նոյնն *ըն յխրաքանչիւրում* ատուր մահուան լնանի» (ՅԿՀՃ, 96) և այլն:

բ) Լատինաբան հեղինակները մակբայ են կերտում ածականներից որոշակի ածանցների միջոցով, ընդ որում վերջիններս, ինչպես նշել ենք, դրվում են ածականի տարբեր աստիճանի ձևերի վրա: Օրինակ՝ «Ձի *իսկագունեղաքար* յետ դարձուսցեն զսիրտ քո ի ճշմարտէ» (ՅԿԽՁ, 24): «Որքան *լաւագունեղապէս*՝ զնոյնն իմանայցեմ (ՊԲՎ, 36), *ծայրագունեղապէս* արգելու» (ԹԱԽ, 93): «Կամի պատժել *ծանրագունեղապէս*» (ՊԲՎ, 161): «Մնացեալ ժամանակաց իշխօղն *հաւասարագունօրէն* գոցի յառաջարկութեամբ» (ՎԲԻ, 76): «Հաւատարմագունեղապէս յանձնելով զինքն» (ԱՄԳ-Հ, 33): «Ձինքն գոլ *մեծեղապէս* ողորմելի» (ԱԿՅԱ, 22): «Մտադրագունեղապէս ջանայ» (ԱՄԳ-Հ, 32) և այլն:

5. Լատինաբան հայերենի ձևաբանական փոփոխությունների մի որոշակի մասը վերաբերում է բային: Չգալի տարբերություններ ու նորամուծություններ կան դերբայների, եղանակների և ժամանակների ձևավորման մեջ:

Հայտնի է, որ հայերենի և լատիներենի բայական համակարգերը, որոնք հիմքում ունեն հնդեվրոպական ընդհանրություն, առանձին զարգացման ընթացքում ենթարկվել են ձևափոխության որոշակի փոփոխությունների՝ տեղիք տալով քերականական կառուցվածքի տարբերությունների:

Այսպես, եթե բայի կրավորաձև խոնարհման կազմության մեջ լատիներենն ունի հստակ և մանրամասն բաշխում՝ ի հակադրություն ներգործաձևի, ապա հայերենը շատ հաճախ հանդես է բերում «ընդհանուր» կամ «հասարակ» սեռային բաշխում (օրինակ՝ *ե* խոնարհման բայերի կրավորաձևն արտահայտվում է *ի-ով՝ գրեմ - գրիմ* և այլն), իսկ *ա, ու* խոնարհման բայերի դեպքում միևնույն ձևն արտահայտում է և՛ ներգործականի, և՛ կրավորականի քերականական իմաստ և այլն:

Լատիներենի բայական համակարգն աչքի է ընկնում արտահայտության պլանի առանձնակիությամբ, իսկ հայերենինը՝ բովանդակության պլանի բազմակիությամբ. մեկում յուրաքանչյուր ձև մեկ առանձին իմաստի, մյուսում՝ մեկից ավելի իմաստների կրող է: Ըստ այդմ կարելի է ասել, որ լատիներենի բայն ունի եղանակի, ժամանակի, բայական սեռի, դերբայների («ամերևութի» և «ընդունելության») ավելի մեծ թվով ձևեր, քան հայերենի բայը: Ուստի լատինաբան հեղինակները, ելնելով այն հանգամանքից, որ լատիներենի բայի համակարգն ունի համեմատաբար մեծ թվով ձևեր, բոլոր ժամանակներում ջանացել են հայերենում ևս հասնելու նույնպիսի վիճակի: Այդ նպատակով գործադրել են երեք կարգի միջոց՝ հին գրական հայերենի մեջ հունաբան դպրոցի ստեղծած ձևերի օգտագործում նոր ժամանակներում, գրաբարի ոչ կանոնական՝ տարբեր կարգի շեղում հանդիսացող ձևերի կանոնավոր գործածում, նոր կամ լրացուցիչ արհեստական ձևերի հորինում:

Այնուհետև, լատինաբան գրավոր աղբյուրների մանրամասն քննությունից պարզվում է, որ բայի մեջ կատարված արհեստական փոփոխությունները, որոնք բավականին խստորեն սահմանվում են քերականական աշխատություններում¹, ոչ բոլոր դեպքերում է, որ համապատասխանում են այդ սահմանումներին՝ ոչ միայն գործածության ծավալի և տարածվածության, այլև ժամանակի առումով: Այսպես, 14-րդ դ. երկրորդ քառորդում նման ձևերն ավելի մեծ չափով են կիրառվում, քան հետագայում, 15-րդ դ. և ավելի ուշ, կապված նաև գրական հուշարձանների համեմատաբար սակավության հետ, դրանք հասնում են նվազագույն չափերի, իսկ 17-րդ դ. սկզբներից մինչև 80-ական թթ. մի տեսակ նոր թափ են ստանում դրանց վերածնունդն ու գործածությունը: Այսուհանդերձ, կարելի է կարծել, որ լատինաբանությունը, իբրև արհեստական միջամտություն, նախ սահմանվել է քերականություններում, այնուհետև պարտադրվել գրավոր խոսքին, և սա երևութի բնութագրման ամենաիրական հիմքն է:

Այն նորամտությունները, որոնք երևան են գալիս բայի մեջ, հիմնականում վերաբերում են նրա խոնարհման տիպերին, հիմքերի կազմությանը, եղանակային և ժամանակային ձևերի մասնավոր դրսևորմանը, ներգործական և կրավորական խոնարհումների «լիակատար» առանձնացմանը, ինչպես նաև անկանոն բայերի մասնակի «կանոնավորմանը» և այլն¹: Այդ

¹ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 313-323: Գ.Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, էջ 7-174:

¹ Տե՛ս նաև Վ.Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամտությունների հաղթահարումը XVIII դարում, էջ 69-70: Նույնը. Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 282-312:

նորամուծությունները հետագայում լիովին հաղթահարվում են հին հայերենի գրական նորմային հետամուտ հայերենագետների ջանքերի շնորհիվ, թեև դրանից հետո ևս որոշ ձևեր տարերայնորեն տեղ են գտնում ոչ լատինաբան գրավոր աղբյուրներում:

ա) Լատինաբան հեղինակները նոր դերբայներ չեն գործածում, այլ եղածների ձևակազմության և կիրառման հարցերում հանդես են բերում որոշակի միտում:

1) Անորոշ դերբայի մեջ կատարվում է այն փոփոխությունը, որ լայնորեն գործածվում են *ե* և *ա* լծորդությամբ ձևերը, իսկ *ի* լծորդությունը հատկացվում է կրավորականի կազմությանը. *m* լծորդությանը գրեթե տեղ չի տրվում: Դա նկատելի է նորակազմ բայերի օրինակով. *վանկանալ* (ՍԳՔՎ, 33), *գովասանել* (ԱԳՓ, I, էջ իդ, այլ լբ), *վերապատուականանալ* (ԽԷՃ, 233-234), *ընդմիմեանքանալ* (ԱԳՓ, I, էջ ժե), *տարահամոզել* (ԽԷՃ, 8, 104, 196) և այլն:

Այնուհետև, լատինաբան հեղինակների երկերում, քերականական աշխատություններում անորոշ դերբայի կրավորական սեռի իմաստով գործածվելու նպատակով հատկապես *ա* և *ու* խոնարհման բայերը վերածվում են *ի* խոնարհման, ընդ սմին բայահիմքի և վերջավորության միջև արհեստականորեն մուծվում է անկատար կերպի իմաստ արտահայտող *-ան-* մասնիկը: Օրինակ՝ *առնանիլ* (փխ. առնուլ. ԹԴԾ, 14, ՊՍԿԱ, 16), *արգելանիլ* (փխ. արգելուլ. ՖՄՆ, 95, ՍՄԳԺ, 95), *բառնիլ* (փխ. բառնալ. ՇՀՆ, 307, ՅՊԱ, 26), *զանցառնիլ* (փխ. ի զանց առնուլ. ՊՍԿԱ, 26), *ընթեռնանիլ* (փխ. ընթեռնուլ. ՍԿԱ, 73), *ընկալնիլ* (փխ. ընկալնուլ. ՊՍԿԱ, էջ XIII), *թողանիլ* (փխ. թողուլ. ՍԼՏ, 23), *անթողանիլ* (փխ. ոչ թողուլ. ԹԱԽ, 27, 213), *բացաթողանիլ* (փխ. ի բաց թողուլ. ԱՄԴՀ, 24), *լնանիլ* (փխ. լնուլ. ԹԴԾ, 38, ՊՍԿԱ, 23), *հեղանիլ* (փխ. հեղուլ. ՍԼՏ, 17, 35): Նկատենք, որ այս հարցում լատինաբանները հետևում են հունաբան դպրոցի ներկայացուցիչներին, իսկ վերջիններս հետամուտ են եղել այդ երևույթի լայն, միտումնավոր գործադրմանը, որը կար ոչ հունաբան հայերենի մեջ, որն էլ հունաբան հեղինակները հասցրին ծայրահեղության: «Նոր հայկազյան բառարանն», օրինակ, տալիս է *արգելանիմ*, *հեղանիլ* և նման ձևեր, որոնք զուգահեռ են *արգելուլ*, *հեղուլ* ձևերին՝ իբրև կրավորական¹:

Նկատենք, որ բերված օրինակներում ավելի շատ փոփոխվում են *m* խոնարհման բայերը, և այդ սկզբունքը տարածվում է անկանոն բայերի վրա.

¹ Հմմտ. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 117: Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Երևան, 1974, էջ 176, Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 2004 և այլն:

այստեղ հարադրավոր բայերը վերածված են համադրականի՝ լատիներենի հետևությամբ:

2) Լատինաբան հեղինակների երկերում ապառնի դերբայի *-ng* և *-h* մասնիկներով կազմությունները գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ, այսինքն՝ առաջինով արտահայտվում է ներգործականի, իսկ երկրորդով կրավորականի իմաստ, և դա իրականացվում է ավելի խիստ չափանիշներով, քան հին գրական հայերենում էր: Օրինակ՝ «Որ է՛ մեղք ընդդեմ հոգւոյն սրբոյ, որ է՛ *անթողանելի*» (ԹԱԽ, 27): «Քանզի մեծագունեղ և գրեթէ անհուն ամբոխն մարդկանց, *անտանելեալ* և յարակայականօք արտասուք *ողբալեալ* յիմարութեամբ ի խաղս անցուցանէ զաւուրս իւր» (ՅՊՍ, 41): Այսպիսին են նաև հետևյալները. *ձևացուցանելիք* (ՅՊՍ, 41), *առաջադրելիք* (ն.տ.), *պատերազմելի* (ն.տ., 172), *վերամնայի* (ՍՄԳԺ, 17) և այլն:

Ավելացնենք, որ նման խորթության վերացումն իսկ ցույց է տալիս, թե ինչպիսին է եղել հաղթահարումը: Օրինակ՝ «Ձի բառս *առնելոց*, մինչև կրատրապէս իմանի, դնելի է *առնիլոց*, որով նշանակէ՝ *ելոց*, կամ *լինելոց*» (ՍՄԳԺ, 25) և այլն:

3) Լատինաբան բնագրերում շարունակաբար անցյալ դերբայի ցույցական տարբերակը ծառայեցվում է կրավորական սեռի արտահայտմանը, որը սահմանվում է նաև նույնատիպ քերականություններում: Օրինակ՝ *առաքեցեալ* (ԱՄՀԱ, 23), *ձիւտրեցեալ* (ԹԳԾ, 68), *թախսանձեցեալ* (ՍԼՏ, 514), *լնանեցեալ* (ՇՀՆ, 180), *յղանեցեալ* (ՍՄԳԺ, 71), *ամբաստանեցեալ* (ԱԿՅԱ, 52), *տպարկեցեալ* (ՅԿԽՁ, 12), *պարունակեցեալ* (ն.տ., 52), *բացադրեցեալ* (ՅՊՍ, 180), *ի լոյս ածեցեալ* (ԱՄՀԱ, 1), *շարադրեցեալ* (ն.տ., 513), *խոստովանեցեալ* (ՊՍԿԱ, 17), *պարունակեցեալ* (ՍԼՏ, 514), *ասացեալ* (ն. տ.), *տպագրեցեալ* (ն.տ.), *որոնեցեալ* (ն.տ., 515) և այլն:

Անցյալ դերբայի նման արհեստականությունը ոչ միայն կանոնավորվում է, այլև եղածը վերանայվում է համապատասխան բնագրերի հետագա հրատարակությունների մեջ: Միսիթար Սեբաստացին տալիս է հետևյալ օրինակը. «Նախնիք մերք ևս՝ թոյլ ետուն, և փոխանակ դնելոյ *որոշեցեալ*, *գոյնաւորեցեալ*, *լնանեցեալ* և այլ նմանք, եղին՝ *որոշեալ*, *գոյնաւորեալ*, *լցեալ*» (ԱՄՀԱ, 3) և այլն:

Հեղինակները հայերենի բայի հիմքակազմության հարցում այնքան հմուտ չեն, որպեսզի անցյալի հիմքը կազմելիս բայարմատը չշփոթեն բայահիմքի հետ (իմա՝ փխ. *ն / g* հերթագայություն): Օրինակ՝ «Մինչև ի խորս անդնդոց *բանեցեալք լինին*» (ՍԿԱ, I, 79. փխ. բացեալք լինին): Այսպես նաև *առնեցեալ* (փխ. արարեալ. ՍԳՎԲ, 104) և այլն:

բ) Գլխավոր ձևերի գործածության մեջ ամենից առաջ ուշադրություն են գրավում խոնարհման տիպերին վերաբերող փոփոխությունները:

Գրանցից են հետևյալները:

1) Լատինաբան գրական հուշարձաններում, ինչպես նշեցինք անորոշ դերբային անդրադառնալիս, բայը խոնարհվում է *ե*, *ա*, մասամբ *ու* խոնարհիչներով, իսկ *ի* խոնարհումը ոչ թե վերացվում, այլ հատկացվում է մյուս խոնարհման բայերի կրավորականի կազմությանը: Այս երևույթը նկատելի է հատկապես *ա* և *ու* խոնարհման բայերի դեպքում, որովհետև *ե* խոնարհման բայերը հին գրական հայերենում դեռևս կրավորաձև խոնարհվելիս վերածվում էին *ի* խոնարհման, և սա նշանակում է, որ հին գրական հայերենի բայի կրավորաձև խոնարհման սկզբունքները վերածվում են կտրուկ կանոնների՝ *ի* խոնարհման՝ կրավորականի իմաստ արտահայտելու հանգամանքի չարաշահումով: Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ բայը գործածված է *ի* խոնարհիչով, անկախ ներգործականում նրա ունեցած խոնարհման ձևից, դրված է լինում կրավորաձև: Այսպես, եթե *գրիմ*, *սիրիմ* և այլն ձևերը կրավորական են հին գրական հայերենի ավանդական *գրեմ*, *սիրեմ* ձևերի, ապա լատինաբան հեղինակների երկերում դրանցից դուրս նորամուծություն են *իմանիմ*, *առնանիմ*, *լնանիմ* և այլն ձևերը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ ներգործական դիտվող *իմանամ* («հասարակ» կամ «ընդհանուր» սեռի), այլ *առնում*, *լնում* բայերի կրավորականներ:

Այնուհետև, նման նորամուծությունը գտնում է լայն կիրառություն: Այսպես, օրինակ, *ա* խոնարհման բայերից *իմանամ*-ը *իմանիմ*, *ու* խոնարհման բայերից *լնում*-ը *լնանիմ* ձևերով ունեն ամենահաճախական գործածությունը՝ դրված հատկապես սահմանական եղանակի ներկայի ժամանակի եզակի 3-րդ դեմքով. «Իմանամք զներմարմնութիւնն զայն, զծնունդն ի կուսէն, նորում *իմանի* որդին առաքեցեալ» (ԱՄՀԱ, 23): «Բայց ե՞րբ ունին *լնանիլ* բանք իւր կանխասաց» (ԳԵ, 150) և այլն:

2) Առավել մեծ փոփոխության են ենթարկված *ու* խոնարհման բայերը՝ կապված այն բանի հետ, որ կրավորականում վերածվում են *ի* խոնարհման: Այսպես, *լնուլ* բայը կրավորաձև գործածվելիս դառնում է *լրնանիլ*, *առնուլ* բայը՝ *առնանիլ*, *ընկալնուլ*-ը՝ *ընկալնանիլ* և այլն. «Ի վերայ *լնանիլ* սիրով բաղձանալ» (ԹԳԾ, 38): «Հանդիսադիր խուռն բազմութեամբ *լրնանէին*» (ԳԵ, 150): «Ոչ *ընկալնանի* արձակումն յատկապէս գործելեաց մեղաց» (ՊՄԿԱ, X) և այլն:

Այս իրողությունը բավականին որոշակի է և «կանոնավոր» այն աստիճան, որ հին գրական հայերենի սովորական *առնուլ* և անկանոն խոնարհման *առնել* բայերի կրավորականի ձևաիմաստային տարբերակման

համար երկրորդական միջոց է դիտվում այն, որ *առնուլ*-ի կրավորականը լինում է *առնանիլ* «առնվել», իսկ *առնել*-ինը՝ *առնիլ* «ստեղծվել», այն է՝ առաջանում է ձևական տարբերակում *-ան* և *օ* (գրո) կերպածանցների միջոցով: Օրինակ՝ «Որք պարտին *առնանիլ* առ մերձատրսն» (իմա՝ առնուլ. ԹԴԾ, 14): «Որք պարտին *առնիլ* յառաջ քան զխորհականութիւն» (իմա՝ առնել. ՄԿԱ, 16) և այլն:

Եվ այս հիմունքով էլ *ու* խոնարհման բայերը ստորադասական եղանակի ապառնիներում հիմնականում խոնարհվում են իբրև *ի* խոնարհման բայեր՝ ի դեմս «պրակտիկ» հիմքակազմ *-ից-* մասնիկի հանդես գալու հանգամանքի: Օրինակ՝ «Որք *ընթեռնանիցին* անդէն» (ՄԿԱ, 73), «ի մատենին յայնմիկ *ընթեռնանիցի* նակ բարին» (ն.տ.): «Եւ եթէ յայնպիսի խոստովանութիւն *թողանիցին* մեղք ոմանք՝ մոռացմամբ, առանց ասելոյ» (ՊՄԿԱ, 18): «Միշտ ինքնեանք *թողանիցին* ի նմանէ մահուամբ» (ն.տ., 40): «Ձի մեղքն իւր *թողանիցին*» (ԹԴԾ, 17): «Ձի սիրելութեան ձերն առ *լնանիցի*» (ՅՊՁ, I, 310): «Ձի ճարպով և պարարտութեամբ *լնանիցի* անձն իմ» (ՍԼԲԱ, 160) և այլն:

Այնուհետև, լատինաբանության մի սևեռուն դրսևորում է այն, որ այդ բնույթի երկերում թույլ է տրվում նաև այնպիսի խորթություն, որի կարիքը բոլորովին չկա, նույնիսկ լատինաբանության դիրքերից: Այսպիսի խճողումները հետագայում, բնականաբար, վերացվում են, փոխարինվում բնական կազմություններով: Այսպես, *հասանել* բայը, որն ըստ «Նոր հայկազյան բառարանի» ուներ *հասանեն* և *հասանիմ* ձևերը (երկրորդը՝ «երբեմն է նոյն ընդ *հասանեն*, ըստ ամենայն առման», էջ 50), լատինաբան հեղինակների կողմից գործածվում է *հասանիմ* ձևով՝ կրավորական սեռի իմաստ արտահայտելու նպատակով, թեև գործածությունից երևում է, որ առկա է ձևական, արհեստական մոտեցումը: Օրինակ՝ «Իսկ արդարք և առաքինիք *հասանիմ* և վախճան իւրեանց» (ԳԱ, I, 18) ~ «Իսկ արդարք և առաքինիք *հասանեն* ի վախճան իւրեանց» (ԳԱ, II, 21) և այլն:

գ) Բայի խոնարհման համակարգի մեջ նկատված փոփոխությունները գերակշիռ մասը վերաբերում է եղանակային և ժամանակային ձևերին: Համեմատաբար քիչ են այն փոփոխությունները, որոնք գալիս են լեզվի ներքին հնարավորություններից՝ խոսակցական կամ ոչ գրական տարբերակներից: Այստեղ դրանց անդրադառնում ենք ոչ այն չափով, որչափով լատիներենի օրինակով, ինչպես նաև հունաբան դպրոցի ստեղծածի հետևությամբ կազմած և գործածված ձևերին:

1) 14-18-րդ դդ. լատինաբան երկերում բայի խոնարհման համակարգում ավանդաբար կիրառվող սովորական հիմքերից բացի նկատելի են այնպիսի

հիմքեր, որոնք բաղադրված են լատիներենի օրինակով, և ըստ այդմ կոչված են եղանակային և ժամանակային ձևերի արատահայտմանը: Այդ նպատակով լատինաբան հեղինակները ոչ միայն դիմում են հին գրական հայերենի հիմքակազմական միջոցներին (օրինակ՝ կերպանիշ *-ան, -են* և այլն մասնիկների օգտագործում, ցոյական և այլ կարգի հիմքերի տարածում և այլն), այլև ստեղծում են նոր, ակնհայտորեն արհեստական միջոցներ:

Գրանցից նշենք հետևյալները:

Ու խոնարհման այն բայերը, որոնք սահմանական եղանակի ներկայի հիմքում ունեն *-ն* մասնիկը, կրավորականը կազմում են այդ մասնիկը *-ան* մասնիկի վերածելով (հմմտ. *առնում - առնանիս*): Օրինակ՝ «*Ընթեռնանի* ընպատմութիւնս կարգի սրբոյն Ջերոնիմոսի» (ԹՊ, 361): «և *լնանիս* բոլորովինք խնդութեամբ» (ն.տ., 416): «Չի մեղքն իւր *թողանիցին*» (ԹԳԾ, 17): «ի վերա (փխ. յ-ով. Վ.Հ.) *լնանիլն* սրբով բաղձանաւ (ն.տ., 38): «սպանանելն *արգելանի* այսու պատուիրանաւ» (ՍԳԲՎ, 191) և այլն:

Հին գրական հայերենի որոշ անկանոն բայերի ներկայի հիմքից բաղադրվող ժամանակների կրավորականի կազմության դեպքում առնվում է անցյալի հիմքը (հմմտ. *տամ - տրիս*): Օրինակ՝ «թէ *տրիցիւր* քեզ, ով որդի ամենասիրելի, միանգամ վերահալիլ ի յարութիւնն այն» (ՅԿԽԶ, 82): «Ի ձեռն բախտից *տրիցին* բարիք և չարիք» (ՆԾԶ, I, 117): «*Տրի* բարի» (իմա՝ բարիք «բարիքներ». ն.տ.) և այլն:

Այնուհետև, բավականին մեծ է ցոյական հիմքի գործածությունը: Բացի անցյալ դերբայում որոշ բայերի արմատական հիմքերի փոխարեն ցոյական հիմքեր գործածելու միտումից, նման հիմքով են հանդես գալիս այնպիսի խոնարհված ձևեր, որոնք նախկինում ունենում էին կամ առանձին, կամ զուգահեռաբար արմատական հիմքեր: Այսպես, *յեղուլ*-ից կազմված *ներյեղուլ* բայի սահմանական անցյալ կատարյալն արդեն ցոյական հիմքով է, որը հետագայում, այսպես կոչված, վերադարձվում է արմատականի: Օրինակ՝ «Բայց յորժամ յանդիմանութեամբ Նաթանայ, աստուած *ներյեղեաց* ի հոգի նորա քշող իմն լուսոյն իւրոյ, յայնժամ ճանաչեաց զինքն» (ՄՄՁ, 6922, 23) ~ «Բայց յորժամ յանդիմանութեամբն Նաթանայ *եհեղ* աստուած ի հոգի նորա զնշոյլ իմն լուսոյ իւրոյ, յայնժամ ճանաչեաց զինքն» (ԱԿՅԱ, 24) և այլն:

Հակառակ լատինաբան հայերենի «սկզբունքի», ըստ որի *ա* խոնարհման սահմանական եղանակի ներկայի կրավորականը կազմվում էր *-իս* կամ *-անիս* մասնիկներով, բնականաբար՝ ներկայի հիմքից, ունենք, օրինակ, *ստանամ* բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևի գործածություն. «Չի որովհետև ոչ

ստացանին սեպիական գորութեամբ, այլ են պատուաստ ի բնէ, ի գուր է ուսուցանել զայն, որ ընդաբոյս է ի մարդ առանց ուսանելոյ» (ԹԻԲ, 16): Նկատենք նաև, որ սա այն դեպքերից է, որ լատինաբան հայերենը ժառանգում է հունարան հայերենի մոտեցումը, հետևում է նրա ավանդույթին¹:

Նկատելի է նաև այն, որ *ե* խոնարհման բայերի սահմանական և ստորադասական եղանակի անկատար ժամանակի կրավորականը կազմվում է բոլորովին նոր հիմունքով. բայական կոնկրետ հիմքի և վերջավորության միջև արհեստականորեն զետեղվում է *-ե-* մասնիկը՝ բաղադրելով հիշյալ ժամանակների կրավորաձև խոնարհման, այսպես կոչված, գործնական (պրակտիկ), այսինքն՝ միայն այդ դեպքում կիրառվող հիմքը (հմմտ. *լինե-*, *լինիցե-*): Օրինակ՝ «Ձի ի նոցունց բագում ինչք յառաջ *ածիցեէին*» (ՄՄՁ, 119, 33ա): «Շարաբարդելն՝ որքան բագմիցս *սխալեէին*, այնքան աշխատանք մեր առ ուղղագրումն բագմապատկեցեալք լինէին» (ԳՄ, I, էջ II): «Որք *պահանջեէին* առ գրումն այնց» (ն.տ., էջ III): «զի *մի եղծանիցեէին* գրեցեալքն» (ն.տ., էջ II): «Արդ եթէ ի հնումն կտակի որ էր օրինակ նորոյս *հոչակեէին* յոբելեան» (ՅԿՀՃ, 53): «Եւ խաւարքն, որք կայանան ի բացակայութեան նորա *կոչիցեէին* գիշերք» (ՄՄՁ, 119, 33ա) և այլն:

2) Առավել մեծ չափով փոփոխություններ երևան են գալիս բայական ժամանակաձևերի կազմության մեջ՝ կապված ոչ միայն հիմքակազմության, այլև կրավորաձև խոնարհման ձևավորման, ստորադաս. եղանակի մեջ նոր ժամանակաձևի առանձնացման հետ և այլն:

Ստորև անդրադառնանք հատկապես հետևյալներին:

Ու խոնարհման բայերի սահմ. եղ. կրավորաձև ներկայի ձևերում նկատվում են որոշակի խորթություններ: Կրավորականի իմաստ արտահայտելու համար *ու* խոնարհման բայերի ներկայի դեպքում տեղ է գտնում հիմքակազմ կերպանիչ *-ան* մասնիկը, *ու-*ի փոխարեն դրվում է *ի*, իսկ *ա* խոնարհման բայերի դեպքում *ա-*ն սուկ փոխարինվում է *ի-*ով: Օրինակ՝ «Ձի ի յառաջին առաջարկութեանն *առնանի* (իմա լատ. sit. Վ.Հ.) միաուրապէս ընդ բանին» (ԳՄՀ, II ա, 209): «Հրամայի պատիւն և *արգելանի* անպատուութիւնն» (ՊԲՎ, 172): «Կամ զերիս տեսարս ասել Կաթողիկէի *արգելանիմք* դաւանութեամբ (հմմտ. լատ. “Aut tres dominos dicere Catholica prohibemur religione”, ՎԲՀ, 65) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *առնանի* (ՅԿՀՃ, 104, ԳՄՀ, IIբ, 239, 267, ՄՄՁ, 2301, 13բ, 78ա, ՖՄՆ, 80, ՄՍԼ, 359, ԱԿՅԱ, 71), *առնանին* (ՄՄՁ, 2301,

¹ «Նոր հայկազյան բառարանը» *ստանամ*-ի կրավորական դիտում է «ստանի կամ ստանուի, և կամ ստացանի» (էջ 742):

14բ, ՄՄՁ, 5808, 114բ, ԳՄՀ, Իա, 191, ԹԽ, 51, 89, ՖՄՆ, 81, այլև *զանցառնանհին*. ՊՍԿԱ, 26. երկիցս), *արգելանիմ* (ԽԷՀՄ, 14), *արգելանի* (ՊԶՎ, 223, ՅԿՀՃ, 138), *արգելանիմք* (ՄՄՁ, 5808, 32բ, ԽԷՀՄ, 14), *արգելանին* (ՈՓ, I, 205, ՊԶՎ, 206), *բառնի* (ԳՄՀ, II բ, 219, ՅՊՁ, I, 61, այլև *ոչ բառնի*. ն.տ.), *բառնին* (ՄՄՁ, 119, 8ա, ՅՊՁ, I, 32), *ընթեռնանի* (ՊԶՎ, 174, 262, ՅԿՀՃ, 106, 183, ԹԱԽ, 62, ԹԳԾ, 37, 75, ԹՊ, 361, 363, 439, 480, ԱՄԴՀ, 27, ՊՍԿԱ, IV, ՄՄՁ, 6922, 13, ԽԷՆ, 43, ՄՖՄԱ, 236, ՄՄՁ, 119, 33ա, այլև *ընթեռանի*. ՊՍԿԱ, 40), *ընթեռնանին* (ԹՊ, 403), *ընկալնանի* (ՄՄՁ, 119, 11ա, ՊՍԿԱ, XVIII, ՖՄՆ, 18), *զենանի* (ՄՄՁ, 3640, 60բ), *թողանիմ* (ՀՎՄԴ), *թողանի* (ԹԱԽ, 123, 128, ՍԿԱ, 17, 71), *թողանին* (ՄՄՁ, 6922, 67, այլև ԱԿՅԱ, 63, այլև ոչ *թողանին*. ԹԱԽ, 89, ՍՄԳԺ, 13, 46, 84, 103), *իմանի* (ՊԶՎ, 21), *լնանի* // *լրնանի* (ԲԻ, 13, ՅՊՁ, I, 186, ԹՊ, 416, ՍԼՏ, 22, ՍԿԱ, 98, այլև *ոչ լնանի*. ՍՄԳԺ, 21), *լքանի* // *լրքանի* (ՄՄՁ, 5808, 84բ, ԲԻ, 13), *հեղանի* (ՊՍԳ, 39, ՍԼԲԱ, 162, ՄՄՁ, 119, 24բ, ՄՄՁ, 5808, 18ա, ԱԳՓ, I, էջ ժէ, ՊՍԿԱ, 12, ՊՍԳ, 56, ԹԽ, 58), *հեղանին* (ՄԵՀ, 29, ՍԿԱ, 211, ՄՄՁ, 119, 24ա, այլև *ներ հեղանի*. ՄՄՁ, 672, 88բ), *մերկանի* (ՅՊՁ, I, 61), *յղանի* (ՄՖՄԱ, 227), *սկսանին* (ՅՊՁ, I, 8, այլև, II, 25), *ստեղծանի* (ՄՄՁ, 672, 88բ) և այլն:

Սահմանական եղանակի անկատար անցյալ ժամանակը *ե* խոնարհման բայերի կրավորականում, ինչպես սահմանվում են նաև քերականություններում¹, հիմքի և դիմային վերջավորության միջև դրվում էր մի ավելորդ *ե* մասնիկ, այսինքն՝ բաղադրվում է կրավորականի գործնական («պրակտիկ») հիմք: Նման կազմության ձևերը հանդիպում են այս շրջանի գրեթե բոլոր փուլերում երևան եկած գրական հուշարձաններում: Օրինակ՝ «Եւ զի բազմիցս թախանձեցեալ լինեէի, այնքան յիմոց աշակերտաց՝ որ քան յայոց ոմանց բանասիրաց» (ՄՍԼ, 414): «Եւ այսոքիկ կոչեէին մարմնաւորք» (ՅՁՊ, 46): «Մինչ զի ոչ միայն ի թշնամեաց կոտորեէին, և ոչ դադարեին ի միմեանս խոցելոյ» (ՆՏ, 39): «Այն կանայք, որք ծնանէին զգաւակ, օրինեցեալ համարեէին» (ՄԳԶՎ, 146): «Արդ եթէ ի հնումն կտակի որ էր օրինակ նորոյս *հոչակեէին* յորելեան» (ՅԿՀՃ, 53): «Քան զի եթէ հոգիք մարդկան *ոչ ստեղծանեէին*» (ն.տ., 80) և այլն:

Իսկ սահմանական եղանակի կրավորաձև անկատարի եզակի 3-րդ դեմքում հանդես է գալիս *-իր* վերջավորությունը: Ի դեպ՝ այդ ձևով կազմությունը նորություն չէ, այն գալիս է բավականին հնից, թեև չի դիտվում ընտիր կամ

¹ Տե՛ս, օրինակ, Չտութին հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, շարադրեցեալ ի Յովհաննիսէ Կոստանդնուպօլսեցոյ, Հոռոմ, 1674: Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 320-321: Հմմտ. Վ. *Համբարձումյան*, Լատիներենի դասագիրք, էջ 105-107:

օրինակելի կազմություն²: Իսկ լատինաբան հեղինակների երկերում այդպիսի կիրառությունը ձեռք է բերում լայն տարածում: Օրինակ՝ «Որպես ի հնումն լինիր» (ԽԷՀՄ, 12): «Եւ ի ձեռն դքսից (կամ գորավարաց) և պաշտօնէից կայսեր այնր ժամանակի կառավարիր» (ՀՊԹ, 18): «Առ Բ կամ երեք վկայիք մեռանիր» (ԹՊ, 411) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *ալեկոծիր* (ԹՊ, 362), *ասրիր* (ն.տ., 431), *արդիւնատրիր* (ն.տ., 413), *թաւալիր* (ԹԳԾ, 71), *թւիր* (ն.տ., 39), *լինիր* (ԱՄԳՀ, 45, ԹԳԾ, 71), *լնանիր* (ՊՍԿԱ, 3, ԹՊ, 419), *կորիր* (ԳՄՀ, Ոս, 182), *հեղանիր* (ԳՄԱ, 78, 99), *նեղիր* (ԹՊ, 439), *պակասիր* (ն.տ., 494), *վարանիր* (ն.տ., 439), *տանիր* (ԳԼ, 36), *տարիր* (ԳՎՀ, 139), *տեսանիր* (ԹԳԾ, 35), *տրիր* (ՅՊԶ, I, 35) և այլն:

Հին գրական հայերենում, ըստ «Նոր հայկազյան բառարանի», ունեինք *բառնամ* (իմա՝ *բարձի*, *բարձ* և այլն), նաև *բառնանիլ* («իբրև բառնիլ»), *բառնիլ* և այլն կազմությունները: Լատինաբան հեղինակներն այդ բայի *բառնիմ* ձևը դիտում են իբրև *բառնամ*-ի կրավորականը և գործածում ըստ այդմ¹: Օրինակ՝ «Որչափ ինչ *բառնի* յառաքինութենէ, այնչափ ինչ *բառնի* յերջանկութենէ» (ԹԻԲ, 7): Նույնը կարելի է ասել նաև *առնեմ*, *լուսանամ*, *իմանամ* և այլն բայերի համար. «Չոր ի հաւատարիմ քրիստոնէիցն վասն նոցին հաւատարմութեամբ *առնի* յարածամ» (ԳՃՈԻՀ, 18): «և վասն այտորիկ ինքեան իսկ կիրակէի, սխալանք *լուսնիմ*» (ԳՄՏ, 199): Այսպես նաև՝ *իմանի* (ՋԳՅ, 15, ՊՍԿԱ, XV, ՎԲԻ, 42, ՄՍԼ, 617, ԱՄՀԱ, 23, ՖՄՆ, 89, ՍՄԳԺ, 13, 46, 84, 102, 103) և այլն:

Լատինաբան հայերենի տվյալների հիման վրա համապատասխան քերականություններում առանձնացվում են ստորադասական և ըղձական եղանակները՝ իրենց համապատասխան հիմնական ժամանակաձևերով: Ընդ որում քերականություններում ընդհանուր դրույթներով սահմանվում է, որ այդ եղանակների բոլոր ձևերում հանդես են գալիս *եթէ* և *երանի թէ* բառերը՝ իբրև եղանակիչ (հմմտ. *եթէ գրիցես*, *երանի թէ գրիցես*), իսկ հին գրական հայերենին անհարիր ժամանակային ձևերի համար առաջ են բերվում արհեստական կազմություններ (հմմտ. *եթէ գրիցէի*, *եթէ գրեալ իցէի*, *երանի թէ գրիցէի*, *երանի թէ գրեալ իցէի* և այլն): Այնուհետև, նկատենք, որ նման «կանոնավորումը», թեև ձևակերպվում է քերականություններում, գրական հուշարձաններում ոչ միշտ է այդքան «կանոնավոր». նկատի ունենք այն հանգամանքը, երբ *եթէ*, *երանի թէ* բառերն, իբրև եղանակիչներ, ոչ բոլոր դեպքերում են գործածվում այս կամ այն

² Տե՛ս Ա. Մելե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:

¹ Հմմտ. Հ. Աճառյան, , նշվ. աշխ., 318-319:

բայաձևի հետ: Այլ կերպ ասած՝ նկատելի է այն, որ ստորադասական և ըղձական եղանակի տարբեր ժամանակաձևեր հաճախ գործածվում են առանց հիշյալ եղանակիչ բառերի, ուստի եղանակային իմաստը «ծանրանում է» բայաձևերի վրա: Օրինակ՝ «Ձի ի նոյն ատուր *յայտնիցէր* զնոր օրէնս, յորում և տուեալ էր զհինն» (ՅՊՁ, 65): «Նախ քան թէ *խնդրիցէին* զներումն» (ԱՄԳՀ, 102): «*Երանի թէ զհտիցէիր և իմանայցէիր և նախատեսանիցէիր* զյետինսն» (ՅԿԽՁ, 24): «Ոհ, *երանի թէ զհտիցէիր*» (ԱԿՅԱ, 68): «Ձի համբերութեամբ և երկայնմտութեամբ *տանիցէիր* զամենայն հալածանս» (ԳՄՅՅ, 34): «Ձի այնոսիկ, որք ենք օրինօքն էին, *վերազնիցէր*» (ԳՎՀ, 6): «Եւ երդուեցոյց զնոսա, զի յորժամ Ազարիտոս պապն *մեռանիցէր*, զորդին իւր զօղալիան յառաջեցուցեն ի պապութիւն» (ՄՄՁ, 2037, 47բ) և այլն:

Այդպէս ունենք նաև հետևյալ ձևերը.. *կարիցէի* (ՄՖՄԱ, 370), *իցէիր* (ԳՄՅՅ, 36, 37), *անարզանիցէր* (ՄՄԱ, 1274), *անցանիցէր* (ՄՄՁ, 2037, 104բ), *ասիցէր* (ԳՄՅՅ, 38), *գայցէր* (ՄՖՄԱ, 68), *զհտիցէր* (ՄՄՁ, 119, 8ա), *զլիսակարգիցէր* (ՄՄԱ, 1271), *գործիցէր* (ՄՄՁ, 119, 6բ), *քռիցէր* (ԳՄՅՅ, 103), *իմանայցէր* (ՄՄՁ, 119, 29բ), *իշխիցէր* (ն.տ., 36ա), *իցէր* (ՄՖՄԱ, 17, ՄՄՁ, 119, 36ա, ԳՄՅՅ, 19, ՄՄԱ, 1273, ՅԿՀՃ, 36), լինիցէր (ՄՖՄԱ, 79, 204), *խոսիցէր* (փխ. օ-ով. ԳՄՅՅ, 5), *կայցէր* (ՄՄՁ, 2037, 47բ), *կարիցէր* (ՄՄՁ, 119, 29բ), *կացուցանիցէր* (ՅԿՀՃ, 32), *կենազործիցէր* (ՄՖՄԱ, 82.), *կլանիցէր* (ԳՄՅՅ, 99), *հատուցանիցէր* (ՄՄՁ, 119, 6բ), *ճանաչիցէր* (ՊԶՎ, 66), *մակամնայցէր* (ՄՖՄԱ, 22), *մատուցէր* (ԳՄՅՅ, 68), *միացուցանիցէր* (ՄՄՁ, 9622, 127), *յառաջագայցէր* (ՄՖՄԱ, 235), *յառաջածիցէր* (ՄՄՁ, 119, 35բ), *յաղթիցէր* (ԳՄՅՅ, 53), *ներիցէր* (ՅԿՀՃ, 50), *շնորհիցէր* (ն.տ.), *պատուիցէր* (ՊԶՎ, 66), *ցուցանիցէր* (ՄՖՄԱ, 204), *ունիցէր* (ՅԿՀՃ, 36), *ուսանիցէր* (ն.տ., 8), *քաշիցէր* (ԳՄԳՎ, 103), *բառնայցէին* (ՄՄՁ, 9622, 128), *բացադրիցէիք* (ՄՖՄԱ, 259), *իցէիք* (ն.տ., 65), *իրաւացուցանիցէին* (ՅՊՁ, I, 40), *իցէին* (ՄՄՁ, 9622, 128, ԳՄՅՅ, 4), *կատարիցէին* (ՅԿՀՃ, 53), *կարիցէին* (ՄՖՄԱ, 214), *կնքիցէին* (ԳՄՅՅ, 64), *հոգայցէին* (ՄՄՁ, 9622, 128), *միատրիցէին* (ՄՖՄԱ, 362), *ներիցէին* (ՅԿՀՃ, 50), *վնասիցէին* (ՄՄՁ, 36ա), *տարանջատիցէին* (ՄՖՄԱ, 333), *տեսանիցէին* (ն.տ., 314), *ունիցէին* (ն.տ., 117, ՅԿՀՃ, 61) և այլն:

Լատինաբան հեղինակները *ու* խոնարհման բայերի դեպքում թեև ստորադասական եղանակի կրավորաձև ներկան կազմում են սովորական ձևով, սակայն անկատարի հիմքում երևան է գալիս *-ան-* մասնիկը՝ իբրև կրավորական իմաստի արտահայտիչ (հմնտ. *լնում - լնանիմ, լնանիցիմ*): Օրինակ՝ «Իսկ եթէ զիտութիւն Աստուծոյ *աննանիցի* ի տեղի բարեհաճութեան, պարզապէս ոչ դնէ

զհարկատրուքին ներ ընդունակութեանց իրաց» (ՄՄՁ, 119, 9բ): «Որ եթէ *արգելանիցի*, մեռանին» (ՄՄԳԺ, 95): «Եւ եթէ յայնպիսի խոստովանութիւնս *թողանիցին* մեղք ոմանք մոռացմամբ՝ առանց ասելոյ» (ՊՄԿԱ, 18): «Զի մեղքն իւրք *թողանիցին*» (ԹԳԾ, 17): Այսպէս նաև հետևյալները. *առնանիցի* (ՄՄՁ, 119, 9բ), *առնանիցին* (ՄՖՄԱ, 34, 319), *արգելանիցին* (ԹՄՄ, 6, ԳԹ, 10), *ընթեռնանիցի* (ՄԿԱ, 73, երկիցս), *իմանիցի* (ՄՄԳԺ, 85), *լնանիցի* (ՍԼԲԱ, 160, ՅՊՁ, I, 310), *հեղանիցի* (ՍԼՏ, 55), *ընթեռնանիցին* (ՄԿԱ, 73), *համալնանիցին* (ՆԾՁ, II, 92, հետագայում՝ վերանայված. *սարգևին*, ն.տ., III, 99), *տրիցին* (ն.տ., I, 117, հետագայում վերանայված. *տրի*, որը ևս լատինաբան ձև է, ն.տ.) և այլն:

Նման դեպքում *ա* խոնարհման պարզ և սուկածանցավոր որոշ բայեր կորցնում են այդ *-ան-* ածանցը, ինչպես նաև հանդես են գալիս մեկ այլ կարգի հիմքով, ասենք՝ անկանոն բայի «կանոնավորմամբ»: Օրինակ՝ «Ի ձեռն բախտից *տրիցին* բարիք և չարիք» (ՆԾՁ, I, 117): «Իսկ *եթէ* բառս յաւիտեան *իմանիցի* նաև զտեսակաց կենդանեաց և բուսոց...» (ՄՄԳԺ, 85) և այլն: Տվյալ դեպքում նկատվում է ձգտում ոչ միայն անկանոնության կանոնավորում, այլև արմատի *-ան* բաղադրիչը ըմբռնվել է իբրև սուկածանց և հարկ չի համարվել այն դեպքում (հմմտ. *իմանամ - իմանիմ*, փխ. *իմանանիմ*՝ ըստ լատինաբանության սկզբունքի):

Այնուհետև, *ե* խոնարհման բայերի դեպքում ստորադասական եղանակի կրավորաձև անկատար ժամանակը կազմվում է գործնական («պրակտիկ» կամ եղանակային) հիմքի ու վերջավորության միջև *ե* մասնիկի հավելումով: Օրինակ՝ «Կերակուրքն ջերմութեամբ սոցին *եփիցեէին*» (ԱՄԴՀ, 58), «Զի *մի եղծանիցեէին* գրեցեալքն» (ԳՄ, I, էջ II): «Քան ողջոյն ազգն այսպիսի տառապեալ թշուառութեամբ ի ծառայութիւն *մատնիցեէրք*» (ՆՏ, 35): «Ոչ տարազ քան թէ Քրիստոս ուրուրեք և *գտանիցեէին* որպէս և ըստ իրի և ըստ գործոյ այժմ առնեն» (ՄՖՄԱ, 283): «և խաւարքն որք կայանան ի բացակայութեան նորա *կոչիցեէին* զիշերք» (ՄՄՁ, 119, 33ա) և այլն:

Իսկ մյուս խոնարհումների բայերի ստորադասական կրավորաձև անկատար ժամանակի եզակի 1-ին դեմքը կազմվում է նույնպիսի գործնական եղանակային հիմքի ավելացնելով միայն *-էի* վերջավորությունը: Օրինակ՝ «*Համբերիցէի*, զի վասն այսքանեաց չարութեանց *ամաչիցէի*» (ԳՄԱ, 15), «Ոհ, *թէ զիտիցէի* կանխաւ վերադիմել առ հայր ոմն հոգևոր» (ԹՊ, 401)¹: «Զի *համարիցէի*

¹ Վերը նշել ենք, որ լատինատիպ քերականություններում սահմանվում է, որ ստորադասականի դեպքում պետք է դնել *թէ*, իսկ ըղծականի դեպքում՝ *երանի թէ* եղանակիչ մասնիկներ, այնինչ լատինաբան բնագրերում երբեմն հանդիպում ենք նաև *թէ* եղանակիչ մասնիկի, ինչպես որ նշված օրինակում, այլև «Նախ քան *թէ խնդրիցէին* գներումն» (ԱՄԴՀ, 102) և այլն:

(փխ. է-ով) խոնարհ, երբ էր հպարտ» (ԹԱԽ, 19): Այսպես նաև հետևյալները. *շտապիցէի* (ՅԿԽՁ, 22), *պարտիցէի* (փխ. է-ով. ԹԱԽ, 92), *ջանայցէի* (ԱԿՅԱ, 35), *սիրիցէի* (ԳՄԱ, 14), *յուսահատիցէի* (ն.տ., 15) և այլն:

Նույն ժամանակաձևի եզակի 2-րդ դեմքը կազմվում է նույն հիմքից *-էիր* վերջավորությամբ: Օրինակ՝ «Բանիցս անգամ արդիւնաւորեցայ թէ զիս կենդանոյն ի դժոխս *գահաւիժիցէիր* վասն մեղացս» (ԳՄԱ, 37): «*Եթէ ոչ ծոմապահիցէիր*» (ԱՄԴՀ, 59): «*Եթէ դու համագործել կամիցէիր* աստուածնոյ շնորհաց» (ՅԿԽՁ, 17): Այսպես ունենք նաև հետևյալները. *բախիցէիր* (ՅԿԽՁ, 21), *դառնայցէիր* (ն.տ., 41, 81), *հաշտիցէիր* (ն.տ.), *վայելիցէիր* (ն.տ., 25) և այլն:

Նույն ժամանակաձևի եզակի 3-րդ դեմքը մեծ մասամբ կազմվում է նույն հիմքին *-էր* վերջավորությամբ: Օրինակ՝ «*Եթէ որ ունիցէր* զաչս այնքան սրատես, որպէս զի *տեսանիցէր* զապագայն» (ԱՄՀԱ, 65): «*Եթէ կատարիցէր* զամենայն ապաշխարան» (ՄՆ, 8): «*Եթէ ի բազում ատուրս, կամ յամս, կամ քառասնորդականս պահիցէր*» (ն.տ., 7): «*Եթէ ոչ ասիցէր* Նաթան ցնա» (ԱԿՅԱ, 79): «*Եթէ կարիցէր* և յայնժամ ոչ է փոքրագոյն մեղադրան» (ԹԱԽ, 20): «*և մինչ եթէ ստեղծանիցէր* զայն նորագոյն աշխարհ իմն» (ՊՄԿԱ, 12): «*Ձինչ լինիցէր* ինձ, եթէ մահն *տիրիցէր* ինձ յայնժամ» (ԳՄԱ, 37) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *ազատիցէր* (ՍԳՔՎ, 215), *աղօթիցէր* (ԹԱԽ, 45), *անցանիցէր* (ՍՇԴԲ, 75), *գերազանցիցէր* (ՅԿԽՁ, 82), *զիտանայցէր* (ն.տ. 29), *զիտիցէր* (ն.տ., երկիցս, ԱՄԴՀ 11), *գործածիցէր* (ԱԿՅԱ, 46), *լինիցէր* (ՖՄՆ, VIII, ՊՄԳ, 46, ԳՄԱ, 37), *կարիցէր* (ՅՊՄ, 171, ՆՏ, 35), *կացուցանիցէր* (ՍՄԳԺ, 12), *համապահիցէր* (ԽԷՆ, 32), *հայրնիցէր* (ԳՄԳՎ, 190), *հեշտանայցէր* (ԱՄԴՀ, 53, *մեռանիցէր* (ՆՏ, 35, ԳՄԱ, 74), *մնայցէր* (ՆՏ, 35), *յայտնիցէր* (ՅՊՁ, 65), *յանձն առնիցէր* (ՆՏ, 35), *շահիցէր* (ԱՄԴՀ, 109), *շօշափիցէր* (ԹԱԽ, 66), *ողորմիցէր* (ԱԿՅԱ, 32), *պահպանիցէր* (ՅԿԽՁ, 33, ԹԱԽ, 79), *պարզկիցէր* (ԹՊ, 364), *ջնջիցէր* (ԱԿՅԱ, 60), *սիրիցէր* (ՅՊՄ, 48, ՅԿԽՁ, 33), *վերահանգուցանիցէր* (ԱՄԴՀ, 38), *վճարիցէր* (ԱԿՅԱ, 90), *քաիցէր* (ՍՄՁ, 6922, 43, այլև ԱԿՅԱ, 43), *քննիցէր* (ԳՄԳՎ, 190) և այլն:

Բայական այս ժամանակաձևի լայն գործածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք մեծապես հանդիպում են նկարագրական, այլև վերլուծական բնույթի աշխատություններում, որոնցում ժամանակային հարաբերությունը դիտարկվում է ապագայի՝ հետագայի տեսանկյունից: Այս

Ուստի կարծում ենք, որ եղանակի դրսևորումն ունի լայն ընդգրկում, քան որ սահմանվել է այս կամ այն քերականության մեջ:

երևույթը նկատելի է նաև նույն ժամանակի մյուս, օրինակ, 3-րդ դեմքի ձևերում (տե՛ս հոգն. 3-րդ դ. համար բերվելիք օրինակները):

Վերը նշված ընդհանուր կանոնից և բերված օրինակներից մի տեսակ «շեղում» է *ե* խոնարհման բայերի կրատրականի եզակի 3-րդ դեմքում *-իր* վերջավորությունն ստանալը. այստեղ ևս օրինակների կամ փաստերի առատությունը պայմանավորված է գրավոր խոսքի գործառական որոշակի պայմանականությամբ: Օրինակ՝ «Առ այն *առաջադրիցիր* գործել զմեզս ինչ մահացու, *եթէ* բռնութիւն ինչ յումեքէ *առքերիցիր* (ԱԿՅԱ, 83): «Որ իրաւի արդիւնատրիւր *թէ քանայցիր* ի ներքոյ անօրէն ոտիցն այն երկիրն» (ԹՊ 413): «Թէ *գտանիցիր* ոք այնքան լիրբ և յանդուզն, որ իշխիցէր շինել զչարածնիկ քաղաքն զայն» (ԱԿՅԱ, 487): «Բան *եթէ ոչ խայթիցիր*» (ԱՄԴ-Հ, 32): «Ձի մարդ *ծնանիցիր*» (ՊՍԿԱ, 1) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *ախորժիցիր* (ԹԱԽ, 77), *ապականիցիր* (ԱՄԴ-Հ, 63), *արբեցուցանիցիր* (ԽԷՆ, 55), *եղանիցիր* (ՍԿԱ, 64), *զգուշանայցիր* (ՄՖՍԱ, 145), *քախանծիցիր* (ԹԱԽ, 79), *լուանիցիր* (ԽԷՆ, 54), *լինիցիր* (ԱՄԴ-Հ, 16, 53, ՄՖՍԱ 17, ԹԱԽ, 81, այլև մի *լինիցիր*. ԹԴԾ, 56) , *կամիցիր* (ԱՄԴ-Հ, 76) *համարձակիցիր* (ԱԿՅԱ, 481), *մաքրիցիր* (ԽԷՆ, 55) *մենանիցիր* (ն.տ., 149), *չարչարիցիր* (ն.տ.), *պարտիցիր* (ՅԿԽՁ, 81), *պղծիցիր* (ԹԱԽ, 77), *սնանիցիր* (ԽԷՆ, 55), *տրիցիր* (ՄՖՍԱ, 116), *ցաւիցիր* (ՍՄԳԺ, 107), *փոխարկիցիր* (ՅՊՍ, 171 և այլն:

Ստորադասական եղանակի նույն ժամանակի հոգնակի 1-ին դեմքը կազմվում է նույնպիսի հիմքով և *-էաք* վերջավորությամբ. հանդիպում են համեմատաբար քիչ թվով գործածություններ: Օրինակ՝ «Իբրև *թէ ասեցէաք*, աստուած մանաւանդապէս և յերկինս» (ՍԳԶՎ, 131): «Չորս բնաւորապէս *ոչ կամիցէաք* թէ այլք առնիցէին» (ն.տ., 169): «Ձի գորս ետ մեզ, զի նոքօք *սիրիցէաք* զնա, և *ծառայիցէաք* նմա» (ԳՍԱ, 57), և այլն:

Իսկ նույնի հոգնակի թվի 3-րդ դեմքը կազմվում է հիշյալ պրակտիկ (եղանակային) հիմքին ավելացնելով *-էին* վերջավորությունը: Օրինակ՝ «Եթէ *զիտիցէին* թուել զաստեղս երկնից» (ՅԿԽՁ, 29): «Նախ քան թէ խնդրիցէին զներումն» (ԱՄԴ-Հ, 102): «Մի՞թէ *կարիցէին* լուանալ զիս առանց քեզ» (ԱԿՅԱ, 74): «*Կամիցէին* փոփոխել, *եթէ կարիցէին*» (ԹԱԽ, 95): «*Եթէ զիտիցէին*» (ԱԿՅԱ, 101) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *անարզիցէին* (ՇՀՆ, 89), *արհամարիցէին* (ՅԿԽՁ, 33), *բազմացուցանիցէին* (ՍՄՁ, 69, 42., այլև ԱԿՅԱ, 42), *բեռնատրիցէին* (ԱՄԴ-Հ, 58), *իմանայցէին* (ՍՄՁ, 6922, 9, ԱԿՅԱ, 12), *լինիցէին*

(ՅԿԽԶ, 29), *խորհիցեի* (ն.տ., 41), *կարիցեի* (ՊՍԿԱ, 22, ՆՏ, 52, ՍՄԳԺ, 11, ԱՄԴՀ, 13), *մի՛ կորուսանիցեի* (ԱԿՅԱ, 41), *հառայիցեի* (ՅԿԽԶ, 33), *հարցանիցեի* (փխ. է-ով. ԹԱԽ, 12), *հաւատայցեի* (ն.տ., 29), *հետկիցեի* (ՄՄՁ, 6922, 10, այլև ԱԿՅԱ, 13), *ճաշակիցեի* (ՅԿԽԶ, 33), *ննջիցեի* (ԹՊ, 402), *ոչընչանայցեի* (ԽԷՆ, 55), *ջանայցեի* (ՆՏ, 52), *ջնջիցեի* (ԱԿՅԱ, 52, ՄՄՁ, 6922, 55), *մի՛ սխալիցեի* (ՆՎՀ, 5), *մի՛ տեսանիցեի* (ՅԿԽԶ, 29), *ուսանիցեի* (ն.տ.) և այլն:

Բավականին շատ են գործածվում բաղադրյալ ժամանակային ձևերը, ընդ որում դրանք բաղադրված են ոչ այն սկզբունքով, որ գոյություն ունեւ հին գրական հայերենում: Այս դեպքում ունենք լատիներենի օրինակով կազմություններ՝ կապված ոչ միայն եղանակիչ մասնիկների, այլև դերբայական ձևերի, օժանդակ բայերի զանգան կարգի գործածության հետ:

Հայտնի է, որ բացի սահմանական և ստորադասական եղանակներից լատինաբան հայերենում առանձնացվում էր նաև ըղձական եղանակ: Եվ այս տեսակետից տեղի էր ունենում որոշակի եղանակային բաշխում՝ *եթէ, թէ* և *երանի թէ* մասնիկներով, ընդ որում *եթէ* և *թէ* մասնիկներով ժամանակաձևերը ծառայեցվում էին բուն ստորադասական (coniunctivus), իսկ *երանի թէ* բաղադրյալ մասնիկով՝ ըղձական (optativus) եղանակների համապատասխան ժամանակաձևերի արտահայտմանը:

Ըստ այսմ ունենք անցյալ և ապառնի դերբայներով, *եմ, գոմ* և *լինեմ* բայերով կազմված երկրորդական ժամանակաձևեր, որոնք հանդես են գալիս ոչ միայն սահմանական, այլև ստորադասական և ըղձական եղանակների մեջ¹:

Ստորև անդրադառնում ենք դրանցից հատկապես հետևյալներին:

ա. Անցյալ դերբայով և *եմ* բայի սահմանական ներկայով կազմություններ: Օրինակ՝ «*Օրհնեցեալ էս դու ըն կանայս և օրհնեցեալ է պտուղ որովայնի քո*» (ՊԹՎ, 134, այլև ՄՎՊՀ, 2): «*Որ լսէ և պահէ զոր ինչ ի սմա գրեցեալ է*» (ԳՄՅՅ, 8): «*Ձի այս ծագեցեալ է ըստ մասին ի գոլոյն յերկուց լեզուաց թարգմանեցեալ*» (ՄՍԱ, 1272) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *առլծեցեալ է* (լատ. adjunctum est. ՎԹՀ, 62-63), *ստեղծեցեալէ* (գրված է միասին. ՅԿՀՃ, 84), *խանգարեցեալ է* (ՄՍԱ,

¹ Հայերենում առհասարակ բավականին անհաջող է *երկրորդական բաղադրյալ ժամանակ* (կամ *ժամանակաձև*) տերմինը, հատկապես իր *երկրորդական* անվանումով, որ ընկալման մեջ մտցնում է հոգեբանական այն կասեցումը, թե քանի որ հիմնական կամ առաջնային չէ, ուստի պետք չէ դրան մեծ ուշադրություն դարձնել (հմմտ. արդի հայերենի դասագրքերում դրանց ուսուցման մեթոդիկան, այլև հատկացված ժամաքանակը և այլն): Այնինչ դրանք հայերենի բայի կարևորագույն, ոճական առումով միանգամայն տեղին և յուրօրինակ ձևեր են:

1272), *պարսաւանդեցեայք են* (ՊԲՎ, 22), *տրեցեայք են* (ՅԿՀՃ, 11), *օրհնեցեալ է* (ՊԲՎ, 134) և այլն:

բ. Անցյալ դերբայով և *են* բայի սահմանական անցյալ անկատարով կազմութիւններ, ընդ որում օժանդակ բայը կարող է լինել դերբային կից (տե՛ս վերը՝ օրինակներից մեկի դեպքում): Օրինակ՝ «*գօտևորեցեալ էր* ոսկեայ գօտեաւ» (ԳՄՅՅ, 12): «Որ յամի Տեառն 1645 *տպագրեցեալ էր* ի Փարեզ քաղաքի» (ՄՄԱ, 1273): «Յառաջ քան թէ *տրեալ էր* օրէնն Մօսէսի» (ՊԲՎ, 208): «Չայն արդարն ուսուցանէ ի մեռանիլն, զոր *ուսուցեալ էր* ի կենդանութեան» (ՅՊՍ, 5) և այլն: Այսպես ունենք նաև՝ *ստեղծեցեալ էր* (ՊԲՎ, 8), *ունեցեալ էր* (ն.տ.) և այլն:

գ. Անցյալ դերբայով և *են* բայի ապառնիով կազմութիւններ: Օրինակ՝ «Երկնչիր թէ մի գուցէ իրաւի և ես *լքեցեալ իցեմ* և մանաւանդ արդէն իսկ զարհուրիմ» (ՍԼԲԱ, 86): «Մի՞ թէ *շահեցեալ իցես* զոմանս յանցանէ» (ՅՊՁ, I, 261): «Իբր թէ հոգի ալլուրեք երբեմն *կենցաղավարեցեալ իցէ*, և յետոյ մարմնոյ ալլամիկ առ *կապեցեալ իցէ*» (ՅԿՀՃ, 84) «*քաղեցեալք իցեն* ի փոսոջ» (ՄՄՁ, 5808, էջ 151բ) և այլն:

Այսպես ունենք նաև՝ *ստեղծեցեալ իցէ* (ՄՖՄԱ, 228), *յափշտակեալ իցէ* (ՅԿՀՃ, 137), *կապեցեալ իցէ* (ն.տ., 84), *արգելեցեալ իցէ* (ՊԲՎ, 223), *փոփոխեցեալ իցէ* (ՄՖՄԱ, 32), *անեցեալք իցեն* (ՅՊՁ, I, էջ Ժդ, այլև ն.տ., II, 11) և այլն¹

դ. Անցյալ դերբայով և *են* բայի անկատար ապառնիով կազմութիւններ՝ իբրև ստորադասական եղանակի «գերակատար» ժամանակ: Օրինակ՝ «Որքան և իցեն քրիստոնեայք թէ կաթուղիկէք և թէ հերետիկոսք, միասիրտ և միահոգիք և միաբանք *եղեալք իցէի՛ն*» (ՄՖՄԱ, 362-363): «Քան *հաւատացեալ իցէի* զբարիս» (ԹԱԽ, 41): «Կամ *արարեալ իցէի* զայսպիսի մեղս» (ն.տ., 11): «Ողջախոհ, հնազանդ և ողորմած *եղեալ իցէիք*» (ԳՄԱ, 28): «Չճառայութիւն *ոչ արարեալ իցէիք*» (ԹԱԽ, 46) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ ձևերը. *լեալ իցէր* (ՄՖՄԱ, 38), *նախանձեցեալք իցէիք* (ն.տ., 65), *պատասխանեալ իցէր* (ն.տ., 87), *ունեցեալ իցէիք* (ԹԱԽ, 83), *ոչ իցէի մեղուցեալ* (ն.տ., 46), *սպանեալ իցէր* (ՄՄՁ, 5808, 84ա), *փարեցեալք իցէաք* (ՄՖՄԱ, 35), *սովորեալ իցէր* (ՅՊՍ, 171) և այլն¹:

ե. Ըստ լատինաբան հեղինակների երկերում տեղ գտած կիրառութիւնների, այլև համապատասխան քերականութիւններում երևան եկած

¹ Տե՛ս նաև Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառնությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 312:

¹ Տե՛ս Նույն տեղում, էջ 308:

սահմանման հայտնի է, որ «աներևույթ» եղանակի ժամանակներից կատարյալ-հարակատար-գերակատար ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և գոյբայով: Նման կազմությունները չունեն այն հաճախական գործածությունը, որն ունեն մյուսները: Օրինակ՝ «*Բազմապատկեցեալ և սփռեցեալ գոյ* ի ընդհանուր աշխարհ» (ՅԿՀՃ, էջ է): «Թէ կարիցէին մեղանչել թարց *դատապարտեցեալ գոյոյ*» (ՖՄՆ, 22) և այլն: Այսպես ունենք նաև՝ *արտադրեալ գոյ* (ԽԷՆ, 42), *գրեցեալ գոյ* (ՄՖՄԱ, 68), *երանեցեալք գոյ* (ՅՊՁ, I, 2, այլև ն.տ., II, 21), *հունատրեցեալ գոյ* (ԽԷՆ, 37), *սփռեցեալ գոյ* (ՅԿՀՃ, էջ է) և այլն:

գ. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև անցյալ դերբայով և *լինիմ* բայի ներկայով: Օրինակ՝ «Վասն զի ոչինչ *սիրեցեալ լինի*» (ՄՄՁ, 672, 42 բ): «Որ *լինի տրեցեալ* Աստուածածնին» (ՊԲՎ, 143): Այսպես նաև՝ *հարմարեցեալ լինի* (ՅՊՁ, I, 123), *արգելեցեալ լինի* (ՊԲՎ, 206), *տրեցեալ լինի* (ՅԿՀՃ, 18) և այլն:

է. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև անցյալ դերբայով և *լինիմ* բայի ապառնիով: Օրինակ՝ «Որոց թողուցուք զմեղս *թողանեցեալ լիցի*, և որոց ունիցիք *կալեցեալ լիցի*» (ՅԿՀՃ, 107): «Օրինեցեալքն ի նմանէ *օրհնեցեալք լիցին* ի մէնջ» (ԹՄՄ, 30): Այսպես նաև՝ *հարմարեցեալ լիցի* (ՅՊՁ, I, 123) և այլն:

ը. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև անցյալ դերբայով և *եղանիմ* բայի այս կամ այն ժամանակաձևով: Օրինակ՝ «Յոլովք ըն իւրաքանչիւրում ժամանակով *բաժանեցեալք եղեն* ի յայլոց» (ՄՖՄԱ, 39): «Չոր և *թարգմանեցեալ եղև* ևս ի լաթին լեզուէ ի հայ բարբառ» (ԳՄՅՅ, 207): Այսպես նաև՝ *արգելեցեալ եղև* (ՄՖՄԱ, 344), *հարցեցեալ եղէ* (ՄՊԽ, 102), *ներադրեցեալ եղև* (ՅՊՁ, I, 184), *շարադրեցեալ եղև* (ԳՄՅՅ, 207, 208), *տպագրեցեալ եղև* (ն.տ., 208), *տրեցեալ եղև* (ՄՖՄԱ, 103) և այլն:

թ. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև ապառնի դերբայով և *եմ* բայի ներկայով: Օրինակ՝ «Հարկատր է հաւատալ, թէ արքն *ելոցք են* արք, և կանայք *ելոցք են* կանայք, քանզի այլապէս ոչ լինիցին նոյնքն մարմինք» (ՊԲՎ, 90): «Այսպէս ևս ուրեմն *ի հարկելոց է* երբեմն և ձերն զատիկ» (ՄՖՄԱ, 143): «Մինչ զերծանիլ *չկարելոցս ես*» (ՅՊՁ, II, 27): Այսպէս նաև՝ *մեռանելոց ես* (ՅՊՁ, I, 50) և այլն:

ժ. Երկրորդական բաղադրյալ ժամանակաձև ապառնի դերբայով և *եմ* բայի ապառնի ներկայով: Օրինակ՝ «Թողելոց *իցէր*» (ՅԿՀՃ, 8): «Եթէ ոչ *իցէր լինելոց* ընդ յաջորդիցն» (ն.տ., 10): «Մի թէ յաջողակօրէն *ունելոցիցես*» (գրված է միասին.- Վ.Հ.) զգօրավիզ և զասպնջական, առ յամենայն իրս» (ՅՊՁ, I, 266) և այլն:

ժա. Երկրորդական բաղադրյալ ժամանակձև *-ելի* վերջավորությամբ ապառնի դերբայով և *ես* բայի ներկայով: Օրինակ՝ «Այսպես *աննելիէ* (գրված է միասին - Վ.Հ.) լեզ և ըն կենի քում» (ՅՊՁ, I, 6, այլև ն.տ., II, 24): «Ձնոյնն *ասելիէ* (գրված է միասին - Վ.Հ.) և յոգոց անմաքրից (ն.տ., I, 8, այլև ն.տ., II, 25): «Որք վերբերին առ հանդիսավեհութիւն նորին *լնանելիք* են ներկրորում նորին գալստեան» (ՄՖՄԱ, 73): «Այսօր *խորշելիէ* քեզ» (ՅՊՁ, I, 22): «Արդ ուրեմն *յառաջադրելիէ*» (ն.տ., I, 10, այլև ն.տ., II, 26) և այլն:

Այնուհետև, բայի եղանակային և ժամանակային ձևերի կրած փոփոխության տեսակետից բավականին հետաքրքրական են հին գրական հայերենի, այսպես կոչված, «անկանոն կամ զարտուղի» խոնարհման բայերի այն «կանոնավորումները», որոնք տրվում են լատինաբան հեղինակների ձեռքով և մասամբ մեկնաբանվում կամ «հիմնավորվում են» համապատասխան քերականություններում:

Դրանցից նշենք հատկապես հետևյալները:

ա. *ճանաչել* բայը հին գրական հայերենում անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում էր *ի* թույլ բաղադրիչ ունեցող բայերի պես, *ճանաչ-* ներկայի հիմքի *ծանի* - տարբերակով¹: Լատինաբան հեղինակներն անկանոն բայի նման խոնարհումը «կանոնավորել են»: Ըստ այդմ սահմանական կատարյալում հանդիպում է *ճանաչեցաւ* (փխ. *ծանեսաւ*) ձևը. «Եւ ի մաքրելն զխիղճ մտաց իւրոց *ճանաչեցաւ* հակատարիմ աղախին» (ԱՓ, 6): Իսկ ստորադասական ապառնի անցյալ ժամանակը ձևավորված էր *ճանաչ* - հիմքով և *-իցէի, -իցէիր, -իցէին* և այլն վերջավորություններով: Օրինակ՝ Ո՛հ, թէ գոնեա *ճանաչիցէի* զաներջանիկ գոլն իմ» (ԱԿՅԱ, 35): «Ձի անհաւատք *ճանաչիցէին* զճշմարիտն աստուած» (ՅՁՊ, 42) և այլն:

բ. *Տալ* բայի միակ «կանոնավորումն» այն է, որ անցյալի հիմքը դարձված է *տր-* (փխ. *ես*): Հանդիպում են նույնպիսի հիմքով անորոշ դերբայի *տրիլ* (ՄԿԱ, 70), այլև նրանից կազմված *առատրիմք* (ՈԱ, էջ գ), *վերատրիլ* (ԱԿՅԱ, 50) և այլն ձևերը, այլև *տրեցաւ, տրիցիր* և այլն ձևերը²: Օրինակ՝ «Թէ ի հօրէ աստուծոյ *տրեցաւ* նմա ամենայն պատիւ» (ՍԳՔՎ, 111): «Եթէ *տրիցիր* քեզ, ով որդի ամենասիրելի, միանգամ վերահայիլ ի յարութիւնն այն» (ՅԿԽՁ, 82): «Ձի *ոչ տրի* մեզ ուտել զհաց մեր» (ՅՊՁ, I, էջ ժը, այլև ն.տ., II, 13) և այլն:

¹ Տե՛ս Վրթ. Չալրիսեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վիեննա, 1827, էջ 99-100:

² Տե՛ս նաև Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 320:

գ. «Կանոնավորված» է նաև *ունել* բայի կատարյալ ժամանակի ձևը՝ *ունեսց* (փխ. *կալա*)³: Օրինակ՝ «*Ունեսց* զայնս առաջի աչաց իւրոց» (ԱԿՅԱ, 93): «Չայսպիսի ողորմութիւն *ունեսց* Յօբ (փխ. *n* -ով. ԱՄԴՀ, 101): «Չի ամենեւինք զմեղս և կամ զարատս մեղաց *նչ ունեսցաւ* և այնպէս լցաւ շնորհօք» (ՍԳԶՎ, 42) և այլն: Այսպէս խորթ են նաև այդ բայի ստորադասական ապառնի անցյալի ձևերը: Օրինակ՝ «Որպէս թէ *ունիցէի* զբազում գործս առնելոյ» (ՖՄՆ, էջ VIII): Այսպէս նաև՝ *ունիցէիր* (ԹԱԽ, 23, 83), *ունիցէր* (ԱՄՀԱ, 65, ՅՊՍ, 171), *ունիցէին* (ՍՄԳԺ, 91, ԹԱԽ, 23, 43) և այլն:

դ. *Առնել* բայը գործածվում է նաև ստորադասական ապառնի անցյալ ժամանակաձևով, որը ևս խորթ է հին գրական հայերենի նորմայի համար, ինչպէս որ նախորդ կետում տրվածը: Օրինակ՝ «Չի նաև կցորդս *առնիցէի* մեծագունի աշխատանաց իմոց» (ՖՄՆ, էջ II): Այսպէս նաև՝ *առնիցէիր* (ՅԿԽԶ, 82), *առնիցէր* (ՆՏ, 35, ԹՊ, 17, 429, ԹԴԾ, 38, ԱՄԴՀ, 100) և այլն:

ե. Լատինաբան հեղինակները ձեռնամուխ են լինում *ես* պակասավոր բայի «լրացմանը»՝ կապված հատկապէս ստորադասական և ըղձական եղանակների անկատար ժամանակների արհեստական ձևերի ներմուծման հետ: Ընդ սմին դրանք մեզ հետաքրքրող շրջանի գրավոր աղբյուրներում գործածվում են ոչ միայն անկախաբար՝ իբրև էական բայի ձևեր, այլև բաղադրյալ ժամանակների կազմության մեջ՝ իբրև օժանդակ բայ, և ինչպէս վերը նշել ենք, *եթէ*, *թէ*, *երանի թէ* եղանակիչներ ստանալով արտահայտում են համապատասխանաբար ստորադասականի և ըղձականի իմաստներ: Օրինակ՝ «*Թէ* ևս *իցէ* կորստեամբ հանդերձ յաւիտենական կենացն» (ԳՄԱ, 19): «Ասէին նոցա, *թէ* այն *իցէր* այնպիսի երկիր իմն, որ կլանէր զբնակիչս» (ՖՄՆ, 5): «Ոհ, *երանի թէ իցէր* այնպիսի բարձր լեռան մի» (ԳՄԱ, 20): «Որ *չիցէր* լի բազմութեամբ բնակչաց մարդկանց» (ՆՏ, 76): «Որ թուիր *թէ* հոգովն *իցէր* ի դրախտին» (ԹԴԾ, 39): «Չի *իցէիք* սուրբք և անարատք առաջին նորա սիրով» (ՅՊՍ, 5): «Բնակիչք *իցէին* այնքան հսկայք և ահարկուք» (ՖՄՆ, 5): «Թուիր նմա *թէ իցէին* դահիճք իր» (ԱԿՅԱ, 98): «*Երանի թէ* վատթարագոյն ինչ *իցէին*» (ՅՊՍ, 17): «*Եթէ ոչ իցէին* առիթք ուրումն ծանու մեղի, կամ մոլորութեան, կամ *իցէին* ըստ ինքեանց ի յումեք սեռի» (ԹԱԽ, 23) և այլն:

զ. *Պարտել* պակասավոր բայը «լրացվում է» ստորադասական եղանակի ապառնի անցյալ ժամանակում *պարտիցէին* (ՅԿԽՅ, 95) է նման ձևերի գործածությամբ:

³ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 319: Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 108 և այլն:

5. Շարահյուսական երևույթներ

Լատինաբան հայերենը կրում է նաև շարահյուսական կառուցվածքի փոփոխություններ: Երևան են գալիս բառերի բաղադրման (բարդում և ածանցում), կապակցման (սովորական, դարձվածային և տերմինային), ինչպես նաև ստորոգման (նախադասություններ, արտահայտություններ և այլն) այնպիսի երևույթներ, որոնք արդյունք են հայոց գրավոր լեզվի նկատմամբ արտաքին միջամտության, ընդ որում այլ լեզվի օրինակով ի հայտ եկող նորամուծության:

Նախ նկատենք, որ այդ փոփոխություններն ոչ այնքան ընդհանուր շարահյուսական «նորաբանություններ» են, որքան հին գրական լեզվին հաջորդած, այսինքն՝ համեմատաբար ուշ ժամանակների գրավոր, գործառնապես առանձին ոլորտ ներկայացնող հաղորդակցական նպատակների ծառայող շարահյուսական իրողություններ: Դրանք ունեն իրենց առանձին հիմքերն ոչ թե ընդհանուր հայերենի, այլ մի կողմից՝ վերջինիս մեկ այլ արհեստական տարբերակի՝ հունաբան հայերենի, իսկ մյուս կողմից՝ հետագա ժամանակների արդեն մեռած լեզու հանդիսացող լատիներենի շարահյուսական կառուցվածքի մեջ:

Այնուհետև, շարահյուսական կառուցվածքում նկատվող լատինաբանությունը մասնավորապես վերաբերում է համապատասխան միավորների (բառերի, կապակցությունների և նախադասությունների բաղադրիչների) շարույթային հարաբերակցման հիմքում ընկած առանցքային երկու երևույթի՝ համաձայնությանը և շարադասությանը: Իսկ խնդրառությանը, մասնավորապես բայարմատի արժույթի հետ կապված՝ երկրորդային (կամ «ձևավոր») հիմքերի մասնակցությանը կա՛մ շատ աննշան տեղ է հատկացվում, կա՛մ որևէ տեղ չի հատկացվում: Իսկ սա նշանակում է, որ արհեստական միջամտության հետևանքով ինչ-որ չափով փոփոխության է ենթարկվում հին գրական հայերենի ավանդական շարահյուսական կառուցվածքը, և դա կրում է ժամանակավոր բնույթ:

Այս առումով ամենից առաջ հարկ ենք համարում նշելու հետևյալը:

1) Այս ոլորտում ևս լատինաբան հեղինակները հասնում են մեկ այլ ծայրահեղության: Դա այն է, որ ստեղծում են շարահյուսական կառուցվածքի քարացած, այլ կերպ ասած՝ սխեմատիկ կանոններ, որոնցում, չնչին քացառությամբ հանդերձ, անտեսվում են հին գրական հայերենի

նախադասության, առհասարակ շարահյուսական կապակցման ամեն մի նրբություն և ճոխություն:

2) Միջին գրական հայերենի շրջանում, ինչպես գիտենք, գրաբարն արդեն ոչ կենդանի՝ սովորովի լեզու էր, սակայն բնական հիմքի վրա: Այնինչ լատինաբան հեղինակներն ավելացնում են մեկ այլ սովորովի վիճակ՝ արհեստական հիմքի վրա: Ըստ էության նման հանգամանքների բերումով է, որ նրանց գործադրած անհամեմատ մեծ ջանքերը չեն ունենում բավարար արդյունք: Եվ հետագա ժամանակներում՝ 18-րդ դ. երկրորդ կեսից սկսած, լեզվամշակման միջոցներ են գործադրվում արհեստական հիմքի վրա ստեղծված խորթության հաղթահարման համար:

3) Հին գրական հայերենի կամ գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը նկատելի է նաև այս հարցում, որն ավելի լայն չափեր է ընդունում, քան բառապաշարի, ձևաբանական համակարգի դեպքում: Եվ ըստ այդմ՝ հին գրական հայերենի բառակապակցության, նախադասության սերման օրինաչափությունների, նույնիսկ առանձնահատկությունների վերականգնման ձգտումով կասեցվում, այնուհետև վերացվում են հատկապես համաձայնությանը և շարահյուսությանը վերաբերող լատինաբան խորթությունն ու միօրինակությունը:

4) Հայոց լեզվի պատմությանը նվիրված աշխատություններում շարահյուսական կառուցվածքի երևույթներին չի դարձվում այնքան լայն ուշադրություն, որքան մյուս դեպքերում: Դա ամենից առաջ բացատրվում է նրանով, որ քերականական աշխատություններում ևս շարահյուսությանը կա՛մ ամենևին տեղ չի տրվում, կա՛մ հատկացվում է առանձնապես սահմանափակ տեղ: Այսպես, օրինակ, Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանության և վերջինիս հետագա մեկնությունների մեջ շարահյուսությանը չի հատկացվում այն չափով տեղ, ինչ չափով գտնում ենք լատինատիպ, նույնիսկ հունալատինատիպ քերականություններում¹: Ըստ այդմ էլ վերջին կարգի քերականությունների պատմությանը նվիրված աշխատանքներում շարահյուսական կառուցվածքի երևույթների նկարագրությանը հատկացվում է համեմատաբար ավելի լայն ուշադրություն²:

Այնինչ լատինաբան հայերենի լեզվական քննությանն անդրադարձած աշխատանքներում բուն ուշադրության առարկա են ձևաբանական կառուցվածքի

¹ Տե՛ս, օրինակ, *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 110-134, 191-211: *Դաւիթ Չէլլունցի*, նշվ. աշխ., էջ 34-36, 96-100:

² Տե՛ս *Գ.Բ. Չահուկյան*, Գրաբարի քերականության պատմություն, էջ 7-299:

երևույթները՝ իբրև տարբերություն հին գրական հայերենից: Այսպես, Հ. Աճառյանն այս հարցին որևէ տեղ չի հատկացնում իր հայտնի աշխատության այն բաժնում, որն առանձնապես վերաբերում է լատինաբան հայերենի թվարկումային բնութագրմանը³: Չի հատկացնում, որովհետև այդ քերականության մեջ, հավանաբար ժամանակի քերականական մտքի ստեղծած ավանդույթի հետ կապված, շարահյուսության հարցերին շատ քիչ տեղ է տրվում, և Աճառյանն այդ քիչն էլ է անտեսում և բավարարվում է միայն մյուս երևույթներին անդրադառնալով:

5) Լատինաբան հայերենով ստեղծված գրական հուշարձանների ավելի մանրամասն և լայն ընդգրկմամբ ուսումնասիրությունը ապագայի գործ է: Այստեղ լեզվական այդ տարբերակի առաջ բերած շարահյուսական փոփոխություններին անդրադառնում ենք գրավոր տարբեր հուշարձաններից քաղված նյութի հիման վրա, ընդ որում երկրորդաբար հաշվի ենք առնում համապատասխան քերականությունների ընձեռած տվյալները:

6) Վերը նշեցինք, որ խնդրառության դեպքում քիչ, գրեթե աննշան փոփոխություններ են նկատվում: Այստեղ ավելացնենք, որ լատինատիպ քերականություններում շարահյուսական այդ երևույթը, բնութագրման մանրամասնություններով հանդերձ, ավելի ավանդական ձևով է ներկայացվում, քան ենթարկված է արհեստական միջամտության: Տարբեր հոլովներով դրված լրացումները շարահյուսվում են խնդրառու բային ավելի հետևողական, հին գրական հայերենից բխող ձևով, այսինքն՝ քերականներն այս հարցում գրեթե տեղ չեն թողնում արհեստականության: Այսպես, Կդ. Գալանոսը, Հովհ. Հոլովը, Սիմ. Ջուղայեցին, մասամբ Ոսկ. Երևանցին, Խաչ. Էրզրումեցին և ուրիշներ, ըստ խնդրառության տալիս են բայերի մանրամասն նկարագրություն՝ որոշակի խմբավորմամբ և վերլուծությամբ, որտեղ համեմատաբար հետևողական են հին գրական հայերենի կանոնականության պահպանման հարցում, քան համաձայնության կամ շարադասության դեպքում¹:

7) Իսկ համաձայնության կամ շարադասության առումով կարևոր ենք համարում շարահյուսական բաղադրիչների շարութային կապի պարզաբանումը՝ հիմնված միապլան (միակի) կամ բազմապլան (բազմակի) առնչության վրա: Այսպես, «հրամանաւ ինքնակալի և մշտայաղթի կայսերն» օրինակում ունենք մի կողմից՝ հատկացուցչային (*հրամանաւ կայսերն*, այլև *հրամանաւ ինքնակալի կայսերն*, *հրամանաւ մշտայաղթի կայսերն*), մյուս կողմից՝ որոշչային (*ինքնակալի*

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 296-323:

¹ Հմմտ. Գ.Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 60-62, 85-86, 115-117, 145-149 և այլն:

կայսերն, մշտայադթի կայսերն, այլև ինքնակալի և մշտայադթի կայսերն) հարաբերակցություն, ընդ որում մի դեպքում նախադաս, իսկ մյուս դեպքում վերջադաս, այլև թեքված (հոլովված) կամ որոշյալ առումով դրված:

Այնուհետև, շարահյուսական բաղադրության մեջ որոշակի դեր ունեն լեզվական ճաշակն ու ինքնարտահայտման մղումը: Լատինաբան հեղինակները հետագա դարերի գրաբարի և ոչ կենդանի լատիներենի գրավոր գործածության հարցում հանդես են բերել ոչ միայն կանխակալ վերաբերմունք, այլև խիստ քերականացված, սխեմատիկ մոտեցում, որոնք իրականացվել են ըստ հնարավորության կամ ըստ իմացության՝ լեզուներին տիրապետելու առումով: Ուստի նման բաղադրություններին անդրադառնալիս պետք է հաշվի առնել հիշյալ հանգամանքը և ըստ այդմ քննարկել նկատելի փոփոխությունները՝ իբրև շարահյուսական երևույթներ:

ա) Նախադաս լրացումները լրացյալների հետ կազմում են մեկ ամբողջություն, որում լրացումները կա՛մ որոշիչներ են, կա՛մ հատկացուցիչներ: Նախադաս լրացումները ցույց են տալիս, թե այս շրջանում որքան է մեծանում հակվածությունը դեպի, այսպես կոչված, աշխարհաբարը, հակառակն ասած՝ որքանով է գրաբարը ազդվել հետագա դարերի խոսակցական կամ բանավոր լեզվից:

1. Նախադաս որոշիչ լրացումներ՝ բաղադրված *-ական, -ային, -եայ, -եան, -եղէն, -ուն* ածանցներով: Օրինակ՝ «Ձի որովհետև *ամբողջականաւ մերով վախճանի* ոչ կարեմք գմայիլ» (ՆԾՁ, I, 8): «Ոչ կարէ գոլ *ֆիսիկային* (փիս. *գ-ով*) *տեսակ* ստեղծուածոյ ուրուք, և ոչ նիւթ նորին» (ԳՄՀ, II ա, 182): «Եւ ամենայն *կճեայ քարիցն* նայև (փիս. առանց *յ-ի*) գետաքարն (ՎԲՆ, 50): «Եւ յազնուաբուրեղ անուշահոտութիւնս պալասամեան, որ ոչ ի *սօքրաթականէն իղարանէ*, այլ ի Սրբազնագունոյ *Բեռնարդեան մեղրարանէ* արտածորեցեալ գոյ, բնաւից հաւատացելոց փրկութեան սակս» (ՅՊՁ, I, էջ գ, այլև ն.տ., II, 3) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ կապակցումները. *անցողական շարամանութիւն* (ՅԲԲ, 199), *արարչական պատճառ* (ՎԲԻ, 48), *բանական հոգի* (ՄՆՊԼ, 146ա), *գրատրական իմաստութիւն* (ՄՄՁ, 2037, 107ա), *ընդհանրական աշխարհորէն* («ընդհանուր աշխարհաբար». ՄՊԻԽ, 15), *թուական արհեստ* կամ *թուականութիւն* (լատ. *arithmetica*, ԿԳՏ, 11բ, այլև ՄՄՁ, 7560, 16ա), *լացիական ծովածոց* (ՅՊՁ, I, էջ բ), *հողովական անուն* (ՄՄՁ, 2275, 114 ա), *ճարտասանական հաւաքաբանութիւն* (ՄՄՁ, 69, 268 ա), *քանոնական զիծ* (ՎՄՁ, 1663, 2), *հողային գոյացութիւն* (ՎԲԻ, 48), *ենթերկրեայ հուր* (ն.տ.), *արևմտեան // արևելեան ազգ*

(ԳԹ, 12), *ազգանագեան գունդ* (ԹՄՄ, 6), *գնայուն աստղ* (ՊՀԱ, 2), *փայտեղէն պատկեր* (ԹՄՄ, 28) և այլն:

2. Նախադաս որոշիչ լրացումներ՝ բաղադրված թվականով: Օրինակ՝ «Եւ ընդ կնոջ հօր եղբօր, կամ մօր եղբօրն, որ է *ներկորդ աստիճանի* խնամութեան կողմնական գծին» (ԳՄՀ, II ք, 726): «Էջ ի դժոխսն, *ներրորդում ատուր* վերյարեալ ի մահուանէ» (ՊՔՎ, 14): «Որ *ներրորդում գրեանն* ընդէմ (փխ. երկու դ-ով) Մաքսիմինոս» (ՅԿՀՃ, 68): «*Ի յերրորդ, և ի յութերրորդ և ի քառասներորդ ատուրն*» (ն.տ., I, 218) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալ կապակցումները՝ *հինկ* (փխ. գ-ով) *զգայութիւնք* (ՅԿՀՃ, 108), *վեցերորդ տարբերութիւն* (ՄՄՁ, 2275, 114ա) և այլն:

3. Նախադաս որոշիչ լրացումներ՝ բաղադրված այլևայլ խոսքի մասի պատկանող բառերով: Օրինակ՝ «Ձարմի ճոխացելոյ ի ներկայում *այսմիկ ժամանակի*» (ՍԼԲԱ, 275): «Որքան փութով կարէ *ըն բարւոջ կայսրութեան*» (ՄՊԽ, 35): «Որ *զեղեցկայարմար հնարի* էստեղծ գտիպ գրոցն հայոց և վրաց ~ լատ. qui cum Armenarum, tum Iberarum quique literacum characteres accuratissime primus expressit» (ԳՄՀ, I, 63): «Որքան *երկարագունիք միջոցիք* հեռացեալ գտանին» (ՅՊՁ, I, էջ դ): «Չմտաւ ածելով *զհասեցեալ վճիռն* միոյ անձին» (ՎՄԴ, 17) և այլն:

Այսպես ունենք նաև հետևյալները. *ներ այսմ ծննդեան* (ՄՄՁ, 119, 23ա), *այսպիսի հաւաքաբանութիւն* (ՄՄՁ, 69, 267 ք), *ապերջանի որկրամոլութիւն* (ՅՊՁ, I 50), *բարի ցորեն* (ԳՄՀ, I, 3), *բաղադրեալ բան* (ՅԲԲ), *զերակատար սէր* (ԳԱԼ, 7), *ենթերկրածին գողոշի* (ՎԲԻ, 35), *երբմնահոս հողմ* (ն.տ.), *գորովալի փարումն* (ՅՊՁ, I, էջ է, այլև ն.տ., II, 5), *զանազան կղզիք* (ՎԲԻ, 43), *զուարթունակ ոգի* (ՅՊՁ, I, էջ իգ, այլև ն.տ., II, 19), *խորին խորհուրդ* (ԹՄՄ, 6), *համարժանի պատուագրութիւն* (ՅՊՁ, I, էջ գ, այլև ն.տ., II, 5), *ըն հարկաւորում և ընյանկարծահասում դիպուածոջ* (ՄՄՁ, 5808, 5ա), *հռչակածաւալ լերինք* (ՅՊՁ, I, էջ գ, այլև ն.տ., II, 3), *ճշմարիտ հաւատ* (ՄՄՁ, 672, 92ա), *մնացեալ ժամանակք* (ՎԲԻ, 76), *յաւէտագոյն զուարճութիւն* (ՅՊՁ, I, էջ է, այլև ն.տ., II, 5), *նորակազմ տապան* (ն.տ., I, էջ ա-բ, այլև ն.տ., II, 2), *սուրբ ժողով* (ՄՆՊԼ, 146 ք), *սուրբ Դօմինիկոս* (ՄՄՁ, 672, 71ա), *վերջին օծումն* (ՅԿՃՀ, 108) և այլն:

4. Հետադաս որոշիչ լրացումներ՝ բաղադրված ածականով, դասական թվականով, դերանունով և այլ խոսքիմասային միավորով, ընդ որում ոչ այնքան լայն գործածությամբ: Օրինակ՝ «հրամայէ անդ և *լեզու հայկական* ուսանիլ» (ՄՄՁ, 2037, 131ք): «Հարկի ութ *իրք մանաւանդականք* պիտանանան մեզ առ ի կերպի իւիք հաւանօրէն *զիրաց տօմարականաց* գուշակութիւն ինչ ելուզեանել» (ՎԲԻ,

74-75): «Մեկնէ ներգլխում քառասներորդում հինգերորդում» (ՄՄՁ, 672, 5բ): «Ներթում հազարերորդում վեցհարիւրորդում քառասներորդում չորրորդում ըստ քուականութեան Տեառն Յիսուսին ներեկեղեցում, զոր կոչեն սրբոյն Դօմինիկոսի ի քաղաքին Սուրանի» (ն.տ., 71ա) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալները. *նատր երրորդում* (ՊԲՎ, 50), *կապան խանգարական* (ՆԾՁ, I, 8), *ըստ կենի բնականի* (ՊԲՎ, 88), *ընդէմ* (փխ. երկու դ-ով) *հերետիկոսաց խատասրտեղից* (ՄՖՄԱ, 7), *մարդ շանագլուխ* (ՄՄՁ, 2037, 14ա), *պարզևս իմ այս* (ՅՊՁ, I, էջ իե, այլև ն.տ., II, 18), *սէր իսկական* (ՆԾՁ, I, 6) և այլն:

Այսուհանդերձ պետք է նկատել, որ լատինաբան հեղինակների երկերում գոյականական անդամի որոշիչ լրացումներն ունեն համեմատաբար ավելի լայն գործածություն, քան հետադասները: Եվ դա բնական է, որովհետև հետագա դարերի գրաբարի մեջ առհասարակ շարահյուսական մման կառույցների շարադասությունն արդեն ուներ միտում դեպի նախադաս դիրքում գտնվելը: Եվ լատինաբան երկերում նույնպես մման միտումը տեղ ունի: Այս առումով ևս որոշակի դեր ունի գործառական-ոճական հակվածությունը, թեև առավելությունը քերականականի կողմն է:

5. Հետադաս հատկացուցիչ լրացումն ունի ավելի լայն գործածություն, այսինքն՝ հին գրական հայերենից եկող շարահյուսական այս առանձնահատկությունը գրեթե պահպանվում է, որը հետևանք է ավելի շուտ սովորովի, քան բնական հակվածության: Հայոց լեզվի պատմության փաստերը ցույց են տալիս, որ հատկացուցչի հետադաս շարադասությունը, գրական լեզվի տեսակետից, զարգացման ընթացքում աստիճանաբար վերածվում է նախադասի¹: Այնինչ լատինաբան հեղինակների երկերում այդ բնական առաջընթացն արհեստականորեն խախտվում է՝ հոգուտ հին գրական հայերենի, որն այնքան էլ չի արդարացվում հենց լատինաբան հայերենի շարահյուսական համակարգում: Օրինակ՝ «Ընկալաւ հայաստանեացս եկեղեցի ի յեկեղեցոյն լատինացոց յերից սուրբ ժողովոյն» (ՄՆՊԼ, 146 բ): «Եւ ֆիլիսոֆայն ասէ խոնարհումն և գղջումն մեղատրին է կերակուր աստուծոյ այսաքանառ» (ԳԱԼ, 6): «Որք կան ներփակեցեալք նանապատս կամ ըն խուցս իրեանց» (ՊԲՎ, 324): «Եւ զգուելի իցէ ընհայրենում քում» (ՅՊՁ, I, 318): «Բանբասանն (փխ. մ-ով. Վ.Հ.) է բառնալ գբարի համբասն մերձատրին» (ՊԲՎ, 219): «Իսկ յետ մահուանն Նինոսի

¹ Ավելի մանրամասն տե՛ս Վ.Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 337-338:

շռայլն Շամիրամ յետ չհնազանդելոն (առանց յ-ի) նորա կամացն իւր, զի ուզէր ... զինքն» (ՄՄՁ, 2037, 131 ք) և այլն:

Այսպէս ունենք նաև հետևյալները. *բաժանումն բոլորին* (ՄՄՁ, 7560, 8ա), *բնատրութիւն գողոյ* (ԿԳՏ, 6բ), *զգայարանք մարմնոյ* (ՄՊԽ, 123), *ընթերցումն // մարգումն տհասից* (ՅՊՁ, I, էջ ժը, այլև ն.տ., II, 14), *կրթութիւն գիտնականաց* (ն.տ.), *լուսատրիչն իւրեանց* (ԳՄՀ, I, 22), *կերակուր աստուծոյ* (ԳԱԼ, 6), *կին Միհրանայ* (ԹՄՄ, 18), *աղախնորդի Արտաշիրայ* (ն.տ.), *հաւանութիւն տեսուն* (ՄՎՊՀ, 166), *նախերգութիւն գրեան* (ՄՄՁ, 5808, 160ա), *զիր առաջնոյ* (ն.տ.), *նշանք մարմնոյ* (ՄՄՁ, 5808, 160ա), *պատրաստութիւն պատշգամաց* (ԹՄՄ, 26), *կուսաստան նորա* (ն.տ.), *պատասխանի թխտոյն* (ՄՆՊԼ, 143, իմա՝ ՄՄՁ, 5657, 143ա), *պատշգամ կուսաստանի* (ԹՄՄ, 26), *պատմագրութիւն հայոց* (ԳՄՀ, I, 3), *ջերմութիւն աստեղաց* (ՎԲԻ, 48), *սասանութիւն երկրի* (ն.տ., 40), *վրեժ արեան* (ԳՎՀ, 126), *տէրութիւն մեծի Թէոդորոսի* (ՎՄՌ, 10), *քաղաքին Սուրիանի* (ՄՄՁ, 672, 71ա) և այլն:

6. Նախադաս հատկացուցիչ լրացումն այստեղ ունի համեմատաբար ոչ այնքան լայն գործածություն: Օրինակ՝ «*Լաթինաց կամ ֆռանկաց ժողովրդականքն, որք ոչ են քահանայք*» (ՄՖՄԱ, 160): «*Ընկալաւ հայաստանեացս եկեղեցի ի յեկեղեցոյն լատինաց յերից սուրբ ժողովոյն*» (ՄՆՊԼ, 146բ): «*Արդ ի մտանել արեգական ուրուրեքիցէ սաստիկ արևածին ջերմութիւնն նրբացուցանէ զծովու ջուրն*» (ՎԲԻ, 34): «*Հայոց լեզուաւ տպագրեալ, աշխարհաբար զայս ծանուցեալ*» (ՅԿՊՄ, 383): «*Վառեցաւ ի նախանձ ընդդէմ Իդալիոյ մեր Հայաստան*» (ՅՊՁ, I, էջ ա, ն.տ., II, 2): «*Բաժնի Յունաց աշխարհ յերիս*» (ԳՏՊ, I, 370) և այլն:

բ) Լատինաբան հայերենի շարահյուսական կառուցվածքում առանձնակի ուշադրություն է գրավում ներգոյական հոլովի կազմությունը՝ իբրև նախդրային խնդրառության մի դեպք: Հայտնի է, որ գրաբարում այն ուներ այլ կարգի նախդիրներով բաղադրություն, այնինչ լատինաբան հեղինակները, հունաբան դպրոցի գործիչների հետևությամբ, այս հարցում ևս հանդես էին բերում արհեստական մոտեցում, այն է՝ հոլովվող բառի սեռականի կամ տրականի, այլև հայցականի հետ բաղադրել ըն կամ ն, ինչպես նաև ներ, մակ, ենթ, մարթան և այլն մասնիկներ¹: Սրանք համարժեք են ոչ միայն հունարենի, այլև լատիներենի համապատասխան նախդիրներին: Փաստորեն հայերենի նկատմամբ տեղի ունեցած հին և նոր միջամտությունը ընդհանուր հայերենի պատմության

¹ Ավելի մանրամասն տես՝ Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 274-276,

տեսակետից առաջ է բերում, այսպես կոչված, բազմիմաստություն (վերջին հաշվով՝ համանունություն)²: Այսպես, *ըն* կամ *ն* մասնիկը հունարան հեղինակների երկերում գործածվում էր իբրև հուն. *ev* նախդրի համարժեք, իսկ հետագայում՝ լատինարան հեղինակների երկերում՝ որպես լատ. *in* նախդիր համարժեք³ : Ավելացնենք, որ դրանք դրվում էին եզակի սեռականում *-ոջ*, *-ոյր*, տրականում *-ում* վերջավորությամբ ձևերի վրա և կազմում հատկապես ներգոյական, այլև բացառական հոլով՝ լայն առումով տեղ, վիճակ և այլն քերականական իմաստ արատահայտելու համար:

Նման կառույցների գործածության հարցում թե՛ հունարան և թե՛ լատինարան հեղինակները գրեթե չեն զիջում միմյանց: Քանի որ լատինարան հայերենով գրված երկերն առհասարակ գերազանցում են հունարանին, ուստի կարելի է մտածել, որ նման կառույցներն ավելի շատ և հաճախակի կիրառվում են լատինարանների գործերում: Օրինակ՝ «Սակայն *ներկրորդում* և *ներրորդում* զգէնս ունիս» (ՄՖՄԱ, 11): «Դնէ *նարմատում* գտապարն» (ՅՊՁ, I, 29): «Լաւագոյն ամենեցունց որք *նարհեստիս* են» (ԴՁԲ, 69): «Բայց *նարդեանս* այսու աղագաւ գրեն» (ՌԵՆ, 297): «*Նառաջումն* ասենք զինչ է Աստուծոյ բան. իսկ *ներկրորդումն* զինչ է Քրիստոս» (ՄՄՁ, 672, 6ա) և այլն:

Ունենք նման կազմությամբ բազմաթիվ այլ օրինակներ. *ներրորդում* (ՅՀԲ, 3), *ի ներքս նաստուածայինս* (ՄՖՄԱ, 6), *ներկրորդում* (ՊԲՎ, 9, ՅՊՁ, I, էջ ժա, այլև ն.տ., II, 10, ՅԿՀՃ, 68, ՅՀԲ, 3), *ներ կայականում* (ՄՊԽ, 132), *ի նաշխարհաժողովութենէն* (ԴՁԲ, 91), *ներում ժամանակի* (ԳՄՀ, I, 235), *նոչ ունել* (իմա՝ «Կայանայ նոչ ունել զիր ինչ յատուկ») . ՊԲՎ, 232) և այլն:

զ) Համեմատաբար ոչ այնքան լայն, սակայն նկատելի գործածություն ունեն այն բառակապակցական միավորները, որոնք կամ արդյունք են լատիներենի համարժեք միավորների ընդօրինակման, կամ առնված են ժամանակի խոսակցական տարբերակից: Նշենք հետևյալները. *ագգ ու տակ* (լատ. generatio, կամ progenies. ՌՀԼԲ, 4), *այրի ծաղիկ* (լատ. pollen, flos farine. ն.տ.,6), *այց արայ (յ-ով) զմեզ* (լատ. visita nos., ն.տ., 21), *յառաջերեր* (կից գրությամբ. ՎԲԻ, 48), *յառաջգալ* (կից գրությամբ. ԱՓ, 35), *առաջեղեալ* (կից գրությամբ. ԹԻԲ, էջ զ), *խաչակնեմ* (ՍԳԲՎ, 12), *կուսական ամբողջութիւն* (լատ. virginalis integritas. ԿԳՏ, 14ա, այլև ՄՄՁ, 7560, 19բ), *վիճավճիռ լինիլ* (ՎՄԴ, 51), *յոքս առաք* (ք-ով. «հոգացիւք». ՏԳ, 42), *ի կիր արկանիլ* (ՎՄԴ, 102), *յիշեալք*

² Հմմտ. Գ.Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 40-45:

լիջիք (ՅԿՊՍ, 7), պէտ առնել (ՄՄՁ, 5097, 80 ք), երես արկանել (իմա՝ «Եւ յետ այսմ բանիցս զերեսս արկանեն նոսից ձերոց և մաղթելով հայցեն»։ ՏԳ, 111), առաջնորդ երկնից (լատ. *manuductio ad coelum*. իմա՝ *ձերբածութիւն երկնից*, ՎՅԲ, 136) և այլն:

Բերված օրինակներից մեկ-երկուսում առկա է հարադրավոր կազմության վերածում համադրականի, որն անշուշտ հին գրական հայերենին ոչ ըստ ամենայնի տիրապետման արդյունք կարելի է դիտել:

դ) Լատինաբան հեղինակները բավականին մեծ տուրք են տալիս լատիներենին, երբ շարահյուսական ինչ-ինչ կառույցներ (կապակցական, ստորոգական և այլն) բաղադրիչ առ բաղադրիչ այլ բան չեն, քան պատճենում: Վերջինս արտահայտվում է և՛ խնդրառությամբ, և՛ համաձայնությամբ ու շարադասությամբ: Այնուհետև, նկատենք, որ շարահյուսական պատճենման որոշ օրինակներ այնպես էլ ներդաշնակ չեն հայերենի համապատասխան կառույցներին, ուստի ակնհայտ են խորթությունն ու արհեստականությունը: Ըստ այսմ գործածված ենք գտնում զգալի թվով բառակապակցական և ստորոգական պատճենումներ:

1. Բառակապակցական պատճենման դեպքում բաղադրիչները կարող են լինել և նախադաս, և հետադաս շարույթային հարաբերության մեջ՝ պայմանավորված նրանով, թե պատճենյալ միավորն ինչպիսին է: Օրինակ՝ *բաժանումն բոլորին ի մասունս* ~ լատ. *divisio totius in partes*» (ԿԳՏ, 5ք, այլև ՄՄՁ, 7560, 8ա), *բնատրութիւն գոլոյ ի բազումս* ~ լատ. *aptitudo essendi in multis*» (ն.տ., 6 ք, այլև ն.տ., 9 ք), *Գռչիկ վանական* ~ լատ. *Chuoseich vanachanus*» (ԳՄՀ, II ք, 117), *եւ ներ այսմիկ երրորդութեան* ~ լատ. *et in hac trinitate*» (ՎԲՀ, 66), *ամենայնք մարդիկք* ~ լատ. *omnes homines*» (ն.տ., 69), *հանդերձ ընկերաւ ֆրա Պետրոս Արագոնացոյ* ~ լատ. *cum fratre Petro Tarraconensi* (ԳՄՀ, I, 510), *Աթանասի Էպիսկոպոսի* ~ լատ. *Athanasii Episcopi*» (ՎԲՀ, 62-63) և այլն:

2. Ստորոգական պատճենման դեպքում ևս բաղադրիչները հանդես են գալիս շարահյուսական այնպիսի հարաբերությամբ, ինչպիսին առկա են պատճենյալ միավորի մեջ: Բազմաբաղադրիչ ստորոգական պատճենում սերելիս լատինաբան հեղինակները խստագույնս հետևել են լատիներեն նախատիպին: Օրինակ՝ «Եւ դարձեալ հնարատր եղև նամենասուրբ երրորդութեան ~ լատ. *Praeterea fieri potuit in trinitate*» (ԳՄՀ, I, 374): «Իջաւ ի դժոխս ներրորդում ատուր ~ լատ. *descendit ad inferos tertia die*» (ՎԲՀ, 69): «Չայնպիսիսն նգովէ կաթուղիկէ և

³ Տե՛ս «Նոր հայկազյան բառարան», հ. 1, էջ 764: Հ. *Աճառյան*, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 148-149:

առաքելական եկեղեցի ~ լատ. *hujus modi anathematisat Catholica et Apostolica Ecclesia*» (ն.տ., 14-15): «Եւ առանց թերութեան յամենայն էութիւնս անկէտ և անսահման ~ լատ. *et absque imperfectione in omnibus essentiis sine fine et termino*» (ն.տ., 6-7): «Նոյնպէս և Գոշիկ վանականն ուսուցանէ ի ճառն յաղագս հոգեկայանաց ~ լատ. *itidemque, Vanachanus intract de locis animarum*» (ԳՄՀ, II ք, 113-114): «Եւ միութիւն ներորոգութեան և երրորդութիւն ըն միութեան մեծարելի է ~ լատ. *et unitas in Trinitate, et Trinitas in unitate venerenda sit*» (ՎԲՀ, 67): «Զի մի Աստուած ներորոգութեան և զերրորդութիւն ըն միութեան մեծարեացոյք ~ լատ. *ut unum Deum in Trinitate et Trinitatem in Unitate veneremur*» (ն.տ., 62-63): «Ենթագոյանայր ոչ յինքեանն և ոչ ինքեամբն, այլ նենթակայութեանն բանին և անճնաւորութեամբ նորին ~ լատ. *subsistebat in ipso verbi suppositio, et per illius personalitatem, seu subsistentiam*» (ԳՄՀ, II ա, 373): «Եւ մարդ է ի գոյացութենէ մօրն ներ յախտենում ծնեալ ~ լատ. *et homo est ex substantia matris in seculo natus*» (ՎԲՀ, 68) և այլն:

ե) Եվ վերջապէս, նկատելի են լատինաբան կաղապարով կազմված նախադասություններ, որոնք ինչ-ինչ հատկանիշներով առանձին են, քան հին գրական հայերենինը: Այստեղ նույնպէս ունենք զգալի տարբերություններ: Այս դեպքում կարելի է արձանագրել, որ լատինաբան շարահյուսական երևույթներն առնչվում են ոչ միայն կոնկրետ նախադասությունների, այլև սրանցով սերված բնագրին (տեքստին):

Այսպէս, 1731 թ. Մխ. Սեբաստացու աշխատասիրությամբ լույս է տեսել Աղեքսանդր կրոնավորի «Յարացոյց ապաշխարողաց» գիրքը Վենետիկում, որը 1719 թ. թարգմանել էր Պետրոս Թիֆլիսեցին, և ձեռագիր բնագրի (ՄՄՁ, 6922) և տպագրի համեմատությունից պարզ է դառնում, թե ինչպիսի տարբերություններ են ի հայտ գալիս լատինաբան և «հայկաբան» նախադասությունների միջև: Իսկ սա երկրորդաբար նշանակում է, թե ինչպիսի լեզվամշակման «աշխատասիրության» է ենթարկվել բնագիրը: Նման ջանքեր գործադրում են մխիթարյանները՝ սկսած 18-րդ դ. առաջին տասնամյակներից, որն ավարտին է հասնում դարի վերջերին (ավելի կոնկրետ՝ 80-ական թթ.)¹: Հմմտ. «Եթէ ըն հնում օրինում գորքան բարիս առնէր հայրն երկնատր նախ քան զգալուստ միածնի որդոյ իւրոյ յաշխարհ. զամենայն առնէր վասն արդեանն որդոյ իւրոյ, որ տակաւին ոչ էր եկեալ այլ զալոց էր» (ՄՄՁ, 6922, էջ 56-57) ~ «Եթէ ի հնում օրինի հայրն երկնատր նախ քան

¹ Ավելի մանրամասն անդրադառնալու ենք ստորև՝ լատինաբանության հաղթահարմանը վերաբերող մասում:

զգալուստ միաժնի որդոյ իւրոյ յաշխարհ, զամենայն առնէր վասն արդեանց նոյնոյ որդոյ իւրոյ, որ տակաւին ոչ էր եկեալ, այլ գալոց էր» (ԱԿՅԱ, 53-54):

Նկատենք, որ համեմատվող նախադասություններից առաջինում նախ՝ եղած *ըն հնում* լատինաբան ներգոյականի ձևը փոխարինված է *ի հնում* «հայկաբան» ձևով, երկրորդ՝ առաջինում չկա *նոյնոյ* լատինաբան ձևը, որ ավելացված է երկրորդում, և դա արվել է թարգմանչի ձեռքով, որը ևս տուրք է լատինաբանության՝ հետագայում, իսկ ավելի ուշ ժամանակներում հաղթահարվում է թե մեկը, թե մյուսը՝ Մխիթարյաննորի կողմից:

Մեկ այլ օրինակ՝ վերցված Թոմա Գեմբացու «Յաղագս համահետեման Քրիստոսի» երկի տարբեր թարգմանություններից, ընդ որում տպագրված շատ անգամ (Հռոս, 1674 թ.՝ թարգմ. Հովհ. Հովով Կ. Պոլսեցի, 2-րդ տպ. Ամստերդամ, 1696 թ., Վենետիկ, 1786 թ.՝ թարգմ. Վրթ. Ասկերյան, 2-րդ տպ. ն.տ., 1853 թ.). «Նկատեա՛ յօրինակս կենդանարարս սրբոց հարց, յորս ճշմարիտ կատարելութիւն և հաւատք պայծառացան. և տեսցես թէ՛ որքան նուազ իմն է, և գոնեա ո՛չ ինչ է գոր մեք առնենք» (ԹԳՅՀ, 1, 49) ~ «Հայեա՛ց ի կենդանի օրինակս սրբոց հարց, յորս փայլեցին ճշմարիտ կատարելութիւն և կրօնաւորութիւն, և տեսցես, որպէս դուզնաքեայ իմն է՝ և չնչին, գոր մեքն առնենք» (ԹԳՅՀ, 4, 46) և այլն:

Իսկ այստեղ ավելացնենք, որ մինչև 18-րդ դ. սկզբները հանդես եկած բավականին թվով թարգմանական երկեր մեզանում թարգմանվել են մի քանի անգամ՝ տարբեր ժամանակներում և տարբեր լեզվամշակման սկզբունքների հետևող գործիչների կողմից, ուստի միանգամայն տեղին կլինեն նման թարգմանությունների լեզվական քննությունը ոչ միայն ինքնին վերցված՝ իբրև զուգադրական-թարգմանական ուսումնասիրություն, այլև հայոց գրական լեզվի պատմության տեսակետից¹:

¹ Նման մի քանի փորձ արված է տողերիս հեղինակի աշտատություններից մեկ-երկուսում: Տես Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, 2, էջ 63-72: Նույնը, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990:

Գլուխ չորրորդ

ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԵՎ ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԳԱ ԳՐՍԵՎՈՐՈՒՄԸ

1. Ներածական դիտողություններ

Լատինաբան հայերենի գոյացումն ու ինքնօրինակ զարգացումը եղել են արդյունք արտաքին միջամտության, ուստի արհեստական նորանուծություն հայերենի նկատմամբ: Դա տեղի է ունեցել ոչ այնքան ծայրահեղ միտումնավորության, որքան կրոնական-դավանաբանական, լայն իմաստով՝ մշակութային շարժման հետևանքով: Եվ բնական է, որ վերջինս պիտի տարածվեր նաև լեզվի վրա՝ ելնելով տվյալ ժամանակում կաթոլիկական եկեղեցու ունեցած գրական հուշարձանների հայերեն թարգմանության և նույնպիսի ոգով ինքնուրույն երկեր ստեղծելու հանգամանքից:

Ավելի ուշ թուլանում է արտաքին ազդեցությունը, ուստի թուլանում կամ իսպառ վերանում է նաև լեզվական անհարկի միջամտությունը, որն արդեն ավանդույթ ուներ, արտացոլում էր այդ ազդեցությունը: Հայոց լեզվի պատմության մեջ տեղի ունեցավ այն, որ բանասիրական, մասամբ նաև լեզվաբանական աշխատանքներում բնորոշվում է իբրև լատինաբանության հաղթահարում:

Այսպես, ժամանակին Գ. Ջարբհանալյանը և ուրիշներ, ավելի ուշ Հ. Աճառյանը այդ երևույթը բնորոշել են հիմնականում արտաքին հանգամանքներից ուշադրություն դարձնելու ձևով: Եվ պատահական չէ, որ կա որոշակի անճշտություն լատինաբան հայերենի առաջացման ժամանակի վերաբերյալ, գոյություն ունի որոշակի տարակարծություն լեզվական այդ տարբերակի գործածության ծավալի, լատինաբան գործիչների գործունեության միջավայրի և այլն հարցերում: Այնինչ շրջանառության մեջ դրվող համեմատաբար նոր աշխատանքների տվյալների, ինչպես նաև լեզվական փաստերի լայն քննարկման համաձայն այն սկիզբ է առել ավելի վաղ, գործածվել է տարբեր կարգի գրական հուշարձաններում և նրա մշակման հարցերում եղել են քարոզիչների տարբեր դպրոցների ներկայացուցիչներ՝ ղեկավարվող Հռոմի կաթոլիկական եկեղեցու կողմից: Շուրջ չորսուկես հարյուրամյակ տևած լատինաբանությունը, մասնավորապես լատինաբան հայերենը դադարում է գոյություն ունենալուց:

Վերջինիս վերաբերյալ եղել են տարբեր բացատրություններ: Հ.Աճառյանը կարծում էր, որ լեզվական այդ տարբերակի գործածությունը եղել է ոչ միայն Հռոմի կաթոլիկ հայրերի, այլև ուրիշ վայրերում, ընդ որում Հայաստանի տարբեր գավառներում հաստատված գործիչների երկերում, նույնիսկ հայ լուսավորչական եկեղեցու ջատագովների աշխատանքներում, «որովհետև պապական իշխանությունը այն ժամանակ իր վրա էր վերցրել ամբողջ Եվրոպայի գրականության ցենզուրան»¹: Գիտականորեն այնքան էլ իրական չէ լատինաբան հայերենի առաջացումը կապել ուշ շրջանի կաթոլիկական գործունեության հետ, պարփակել ընդամենը երկու դարի մեջ, թեև ընդունելի է այն, որ այն «իր մայրամուտն սկսեց Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ԺԸ դարին: Մխիթար աբբան, կրոնի մեջ թեև հետևող Հռոմի, զգաց ու հասկացավ, թե լատինաբան հայերենը նորամուտ և անհասկանալի մի լեզու է (Աճառյանը հենվում է «Հին հայկազյան բառարանում» ասվածի վրա - Վ.Հ.), և թեև ինքն էլ տվեց իր ժամանակի տուրքը, բայց ականա: Նա հորդորում էր իր աշակերտներին հետզհետե հեռանալ այդ լեզվից: Նրանք կատարեցին իր պատվերը»²:

Լատինաբան հայերենի հաղթահարման գործընթացի սկիզբը դրվել է իր իսկ Մխիթարի այն երկերում, որոնք գրվել կամ խմբագրվել են նրա ձեռքով: Իսկ աշակերտներն այդ գործն ավարտին են հասցնում մինչև 18-րդ դ. 80-ական թթ. ընկած ժամանակամիջոցում: Հակված ենք կարծելու, որ հաղթահարումը եղել է որոշակի ջանքերի ներդրումով, և հայոց լեզվի պատմության առումով այն կարելի է դիտել իբրև «գրապայքարի» մի յուրօրինակ դրսևորում³:

Այդ ընթացքում էլ Մխիթարյաններն առաջ են քաշում, այսպես կոչված, «հայկաբան» հայերենի գաղափարը, այն է՝ մաքրել հին գրական լեզուն հետագա ժամանակներում ամեն կարգի ազդեցության հետևանքով առաջ եկած խորթություններից: Եվ իրենք իսկ ձեռնամուխ են լինում այդ գաղափարի իրագործմանը, որը տալիս է իր դրական արդյունքը: Լեզվի գրեթե բոլոր մակարդակներում երևան եկած տարբեր կարգի խորթությունները նախ կասեցվում են և մեղմացվում, այնուհետև վերացվում և դուրս են մղվում: Լատինաբանության կասեցումը և վերացումը, իբրև լեզվամշակման մի նոր գործընթաց, ունենում է իր դրական հետևանքը հայերենի հետագա զարգացման առումով: Գրական հուշարձանների բնագրային մանրամասն քննությունը լիովին

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 323:

² Նույն տեղում:

³ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., էջ 106-112:

հիմք է հանդիսանում այդ գործընթացի պատմությունը ճիշտ և հիմնավոր ձևով ներկայացնելու համար:

Այդուհանդերձ, ավելի ուշ երևան եկած գրական հուշարձանների մեջ նկատելի են լատինաբան հայերենի ձևեր՝ բառեր, ձևեր ու արտահայտություններ, որոնք հավանաբար հետևանք են ինքնաբերական գործածության: Նման կիրառությունները նույնպես առանձին ուշադրության առարկա են, որպիսով ավելի է ամբողջանում լատինաբան հայերենի գործառության ընդգրկումը:

Լատինաբանության հաղթահարումը նոր շրջանի գրաբարի՝ նոր գրական լեզու դարձնելու նպատակով մշակման և կանոնավորման առաջին քայլերից է, որում ակնառու է հատկապես Վենետիկի Մխիթարյանների գործունեությունը: Իսկ վերջինս պատկերվել է հաջողությամբ, այսինքն՝ 18-րդ դ. վերջերին գրավոր լեզուն միանգամայն ձեռքագատված էր լատինատիպ նորամուծություններից:

2. «Հայկարան» հայերենի գաղափարի առաջաշումը

Հայ բանասիրության և քերականագիտության մեջ լատինաբանությունը, ինչպես արդեն նշել ենք, անկախ որոշ դեպքերում նկատվող պարսավական կամ դրվատական գնահատություններից, այլև գրավոր աղբյուրների ոչ ամբողջական ընդգրկումից, եղածի սահմաններում ուսումնասիրված է ըստ հնարավորին և արժեքավորված՝ ըստ այդմ¹: Սակայն նոր շրջանի գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարման երևույթի բացահայտումը և գիտահատությունը, հիմնված լեզվական նյութի քննության վրա, մինչև այժմ չեն արժանացել որևէ ուշադրության:

Լեզվական նյութի ընձեռած հնարավորություններից ելնող չափանիշներով գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը բացահայտելու նպատակով ընտրել ենք լեզվական տարբեր վիճակներ ներկայացնող զգալի թվով գրավոր աղբյուրներ, որոնք հիմնականում թարգմանական երկեր են, շարադրված են լատինատիպ հայերենով և հանդես են գալիս կա՛մ 14-րդ դ. սկսած, կա՛մ 17-18-րդ դդ.: Նախկինում հայտնի

¹ Տե՛ս Գ. Ջարբխանյան, Պատմություն հայերեն դպրութեան, Բ մաս, էջ 45-55 194-212: Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 307-323: Յովհաննէս Էռնեցի, Յաղագս քերականին, Երևան, 1977: Գ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974: Վ. Ծառուկյան, Գրաբարի կառուցվածքի ուսումնասիրությունը XVII դարի քերականների աշխատություններում, Երևան,

թարգմանական երկերն այս դեպքում օգտագործվում են այնքանով, որքանով դրանք, անկախ մինչև 18-րդ դ. ունեցած գրչագրությունից կամ տպագրությունից, թարգմանվում են նորից, վերահրատարակվում «սրբագրված կամ խմբագրված» վիճակով:

Այդ կարգի թարգմանական երկերի լեզվական նյութի համեմատական-բնագրային քննությունն ավելի ակնառու է դարձնում ոչ միայն հայերենի լատինատիպ ձևերի կիրառությունների բնույթն ու չափերը, այլև այդ նույն ձևերի կասեցման ու հաղթահարման ուղղությամբ ծավալված աշխատանքը: Ընդ որում միևնույն երկի ձեռագրի և տպագրի, հին և նոր թարգմանությունների, ինչպես նաև հայտնի և նոր տպագրությունների լեզվական համեմատությունը, ելնելով մեր այս աշխատանքի ծավալի սահմանափակ լինելու հանգամանքի, տալիս ենք ոչ թե ամբողջությամբ, այլ որոշակի, առավել բնութագրական գլուխների և հատվածների ընտրությամբ՝ ավելիին ձեռնամուխ լինելը համարելով ապագայի գործ:

Լատինաբանությունը մեզանում հաղթահարվել է մշակութային համընդհանուր դիմադրության պայմաններում, լեզվաշինական երկարատև ու տևողու, այլև աստիճանական պայքարի ուղիով: Այն նկատվում է նախ՝ Մխ. Սեբաստացու կողմից՝ նախորդ դարերում հայտնի ձեռագիր կամ տպագիր երկերի սրբագրման, խմբագրման և հրատարակման ընթացքում լատինատիպ ձևերն այս կամ այն չափով կրճատելու կամ նվազեցնելու, երկրորդ՝ Վրթ. Ասկերյանի կողմից նորովի թարգմանվող երկերն ըստ հնարավորին լատինաբանությունից զերծ պահելու, այսինքն՝ լատինատիպ արհեստականության դիմաց գրաբարի բնականությանը ձգտելու, երրորդ՝ Մխիթարի հետագա աշակերտների կողմից նախկինում տպագրված երկերը վերահրատարակելիս լատինաբանության թուլացումն ու վերացումն իր ավարտին հասցնելու աշխատանքներում:

Նկատի ունենալով Մխիթարյանների լեզվամշակման նման հետևողական գործունեությունը լատինաբանության հաղթահարման գործում՝ գտնում ենք, որ այն տեղի է ունեցել երեք փուլով: Եվ այդ ընթացքում Մխիթարյաններն առաջ են քաշում նոր ժամանակներում հին գրական լեզվի՝ այսպես կոչված «հայկաբան» հայերենի գաղափարը, որը հետագայում առաջ է բերում նոր խնդիրներ և վերջիններիս լուծման ուղիների և ձևերի տարբերություններ:

ա) Մխ. Սեբաստացու գիտական գործունեության մեջ ուրույն տեղ ունի հայերենագիտությունը, որը նոր ժամանակներում սկզբնավորելու և առաջ

1969 (թեկն. ատենախոս., ձեռագիր): *Լ. Հովհաննիսյան*, Գրաբարի երկու դրսևորում XVII դարում. «Պատմա-բանասիրական հանդես» 1980., 4, էջ 172-183 և այլն:

տանելու գործում ամենից առաջ անհրաժեշտ է լինում մաքրելու լեզուն ամեն կարգի, ընդ որում լատիներենի օրինակով առաջացող խորթություններից և անտեղի նորամուծություններից: Այսպես, դեռևս 1715 թ. Վենետիկում տպագրված Ալբերտ Մեծի «Համառոտութիւն աստուածաբանութեան» թարգմանական երկի «Բան առ ընթերցողս» առաջաբանում Մխ. Սեբաստացին ի թիվս այլ մտահոգությունների երկու կարգի դիտարկում ունի, մեկը վերաբերում է երկի բովանդակության կարևորությանը, մյուսը՝ լեզվական «սրբագրման» անհրաժեշտությանը,

Առաջին դեպքում նշվում է հետևյալը. «Ուստի յատ տեսեալ զայս՝ մերայնոց բանասիրաց վերապատուեցելոց վարդապետաց, յոգոց հանէին, և բաղձալին, զի գոնեա յումեննէ բանասիրէ աշխատասիրեալ սրբագրիցի, ըստ հնոց օրինակաց, և ըստ նախատիպին իրոյ, և այնպէս տպագրիցի, որով և առ համայնս տարածիցի: ... Ուստի զկնի բազմանցից ժամանակաց, և ի հանդիպման կարելութեանց, ստիպեցեալ ի սիրոյ, յանձն առի աշխատիլ առ սրբագրութիւն սորին, հանդերձ աշակերտաւ իմով՝ Ովհանիսի վարդապետի Սեբաստենի» (ն.տ., էջ 4): Այստեղ լեզվի վերաբերյալ մտահոգությունն ընդհանուր կարգի է, նույնիսկ նկատելի է լատինաբան ձևերի գործածություն (հմմտ. *ստիպեցեալ*, շարունակության մեջ՝ ի *լոյս ամեցեալ* և այլն):

Լեզվական «սրբագրման» մասին Սեբաստացին խոսում է առաջաբանում՝ մեկ այլ դեպքում. «Բայց զի մի քամահօղբ բեղմնաւորաց աշխատութեանց թարգմանչաց սորին գտանիցիմք, զանցս արարաք զայնոքիք ոմամքք, որ ոչ ըստ նորոյ քերականութեանց են եղեալք, ի վերացմունս բայից և կամ ի յայլս, զի այնոքիք զօրութիւն բանից ոչ վնասին, այլ մանաւանդ քաղցրաբանութիւնք պատճառին, առ յոր վախճան նախնիք մերք ևս թոյլ ետուն, և փոխանակ դնելոյ *որոշեցեալ*, *գոյնատրեցեալ*, *լնանեցեալ* և այլք նմանք, եղին՝ *որոշեալ*, *գոյնատրեալ*, *լցեալ*: Եւ փոխանակ դնելոյ *սրբոց գրոց*, *բարեաց արանց*, եղին՝ *սուրբ գրոց*, *բարի արանց* և այլք նմանք: Վասն որոյ աղաչեմք զընթերցողս վարդապետս, զի նուաստութիւն մեր, որ քան առ յայնս անբասիրս արասցեն, զի ոչ թէ ոչ ճանաչելոյ զայնպիսիսն զանց արարաք, այլ զի մի ամբարտաւանք գտանիցիմք զվաստակս նախնեաց խախտելով, քան զոր չիք յանդգնագոյն, թոյլ թողաք մնալ և մանաւանդ մինչև գոյացութեան բանին զոչ իմն վնաս բերէին» (ն.տ., էջ 2. ընդգծումները մերն են - Վ.Հ.):

Այս դիտողությունը լատինաբանության արտաքին՝ հոգևոր-մշակութային անհարկի ազդեցությունը թոթափելու, և ներքին՝ լեզվական համապատասխան նորամուծություններից ձերբազատվելու ուղղությամբ ծավալված

աշխատանքների առումով որքան հետաքրքրական, նույնքան և հիմնարար նշանակություն պիտի ունեցած լինի: Հայերենի մշակումը նախորդ դարերի օրինակով դառնում է ելակետ Սեբաստացու և նրա դպրոցի գործիչների համար, ուստի առաջին քայլը պիտի լիներ հետագա դարերում երևան եկած անհարկավոր և անճիշտ ձևերից և կառույցներից ազատվելը: Վերջիններս տեղ էին գտել այն ժամանակից ի վեր, երբ հին գրական հայերենն արդեն ոչ կենդանի, միջին գրական հայերենին իր դիրքերը զիջած լեզու էր: Եվ քանի որ Մխիթարյաններն այս պայմաններում իսկ մտածում էին հին գրական լեզուն վերականգնելու ուղղությամբ, ուստի առաջին քայլը լինում է լատինաբանության հարցի լուծումը:

Այնուհետև, 1730 թ. լույս է տեսնում Մխ. Սեբաստացու «Զերականութիւն գրաբառի լեզուի հայկազան սեռի» երկը¹, որի «Բան առ բարեմիտ ընթերցողս» առաջաբանում մեզ հետաքրքրող խնդրի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Ստիպումն հարկատրութեան, և թախանձումն բազմաց, և մանաւանդ պիտոյութիւնն *մեծագունեղ* առ ի դիրացուցանել զուսումն քերականութեան նորավարժից աշակերտաց մերոյս դասատան՝ արարին զմեզ ձեռնամուխ: Եւ զի (որպէս յայտ է ամենից) յազգի մերում առ ներկայս ոչ գոյր *տպագրեցեալ* լիակատար բառարան՝ յորում բնաւք բառք մերոյս լեզուի՝ ոչ միայն ըստ յատկականաց նշանակութեանց իրեանց, այլ նաև ըստ սեփական հոլովմանց *բացատրեցեալք* առաջի աջաց *համբակազունից դնիցեէին*, հարկ եղև մեզ՝ զի զբազմութիւն անուանց, և բայից *համակուտիցեալք* ի սմին առ ի նպաստել տկարութեան նորավարժից. և բարեպէս զարգացուցանել զնոսին ի յուսումն քերթողութեան, և ի հմտացուցումն հայկաբանութեան: Եւ եթէ հաճեսցի տէր շնորհել մերոյս լեզուի (որ ունի զմեծ փարթամութիւն բառից) նաև զօրինաւոր և զլիակատար բառարան *տպագրեցեալ*, յայնժամ առաւելագոյն դիրանայ ամենից ուսումն գրաբառի լեզուի մերոյ, և ընտանի հասկացումն գրոց սրբոց, և գրուածոց արտաքնոց» (ն.տ., էջ 3. ընդգծումները մերն են - Վ.Հ.): Ընդարձակ մեջբերման մեջ նախ՝ դժվար չէ նկատել հայերենի ուսուցման գործում այն մտահոգությունը, որը վերաբերում է նախկինում կենդանի լեզվին հետևելու, այդ լեզվով կրթվելու խնդրին, երկրորդ՝ այն իրագործելու համար կտրուկ քայլերի չի ձեռնարկում հեղինակը, այլ ինքը ևս իր շարադրանքում դեռևս գործածում է լատինաբան ձևեր (օրինակ՝ ընդգծված ձևերը), երրորդ՝ դրանք տեղ են գտնում նվազագույն չափով, ընդ որում հակառակությունը մեղմելու կամ չխրտնեցնելու նպատակով:

¹ Գրքի երկրորդ տպագրության մեջ է, որ *հայկազան*-ը փոխարինված է *հայկազեան*-ով:

բ) Մխիթար Սեբաստացու պատվիրանը և գործնական մոտեցումը շարունակվում է նրա անմիջական աշակերտների կողմից: Մխիթարի աշակերտներից այս հարցում մեծ գործ է կատարում, օրինակ, Վրթ. Ասկերյանն իր թարգմանություններով: Ինչպես արդեն նշել ենք, Թոմա Գեմբացու «Յաղագս նմանօղ լինելոյ» երկը թարգմանել է նախ Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցին, այնուհետև՝ Ասկերյանը, ընդ որում առաջին թարգմանությունը ժամանակին վերահրատարակվել էր Մխ. Սեբաստացու ձեռքով: Ուստի երկի երեք տարբերակների, այն են՝ երկու թարգմանության և Մխիթարի ձեռքով առաջին թարգմանության խմբագրվածի լեզվական համեմատությունից պարզվում են մի շարք ուշագրավ իրողություններ՝ կապված լատինաբան ձևերի թուլացման և նվազեցման, այլև իսպառ հաղթահարման կամ վերացման հետ:

Այնուհետև, Դոմինիկոս Բոհուրսյանի «Խոկմունք քրիստոնեականք» գրքի երկու թարգմանությունները (առաջինը՝ Վենետիկ, 1687, այլև 1719, 1732, թարգմ.՝ Հովհաննես Հովով Կ. Պոլսեցի, և երկրորդը՝ Վենետիկ, 1771, թարգմ.՝ Վրթ. Ասկերյան) բացահայտ և անառարկելի տվյալներ են պարունակում հայերենի՝ ժամանակի գրական կանոնարկման չափանիշներին համապատասխան «մաքրման» աշխատանքների մասին, որ կատարել են Մխիթարյանները: Առաջին թարգմանությունը զգալապես զիջում է երկրորդին ոչ միայն գրաբարի կանոնական ձևերին հետամուտ չլինելու, ըստ այդմ բառակազմորեն և քերականորեն ոչ ճիշտ թարգմանելու, այլև թարգմանության ընդհանուր ճաշակի զիջման տեսակետից: Ասկերյանն իր այս թարգմանության առաջաբանում գրում է հետևյալը. «Թէպէտ գրքոյկս այս արարեալ ի հօրէն դոմինիկոսէ բոհուրսեանց յարգոյ երիցուէ յիսուսեան կարգին, կայր ի վաղուց թարգմանեալ և տպագրեալ ի հայ լեզու, սակայն յոգունք մորմոքէին ի պատճառս թերութեանց ինչ նկատելոց ի նմա, որով բազում ճշմարտութիւնք օգտակարք ծածկեալ մնացին յընթերցասիրէն: Քանզի չզիտենք որպէս, առաջին թարգմանիչն զբազում բանս այսր մատենի փոփոխեալ էր, և զբոլոր բանն ոչ եթէ թարգմանեալ, այլ իբր նորոգ շարադրեալ ...: Բուռն հարաք նորոգ թարգմանել, զգուշանալով ի պակասութեանց սպրդելոյ յառաջին նուագին, որպէս կարեն քաջ տեսանել, որք զսա և զնա համաբաղդատ ընթեռնուցուն. գտեալ զսա միանգամայն ի բազում տեղիս ոչ միայն տարբերիչ, այլև երկիլ իբր այլ գրոց՝ զայլմէ նիւթոյ ճառաբան: Եւ սակայն համեմատելով զսա ընդ իտալականին տեսցեն, թէ ո՞րպէս ընդ նմա համաբան լծորդի» (ն.տ., էջ 3-4):

Ոչ միայն ընդարձակ մեջբերումից, այլև նախորդ թարգմանության հետ բուն թարգմանության համեմատությունից միանգամայն նկատելի է դառնում այն, թե ինչ առավելություններ ունի Ասկերյանի թարգմանությունը, այլև լեզվական առումով որքան անբասիր է և «հայկաբան»: Ավելացնենք, որ Ասկերյանը առաջաբանում որևէ միտք չի հայտնում լատինաբան խորթությունների հաղթահարման վերաբերյալ, սակայն գործնականում այն իրականացված է. երբ երկու թարգմանությունը «համաբաղդատ ընթերցում ենք», նկատում ենք, թե Մխիթարյան վարդապետը որքան նվիրված է եղել իր ուսուցչի պատգամին՝ օտար ձևերից ու կառույցներից զերծ, հայեցի լեզվով թարգմանություն կատարելու առումով:

Լատինաբան նորամուծությունների հաղթահարման ուղղությամբ որոշ չափով աշխատանքներ են ծավալվում նաև կրթական այլ հաստատությունների գործիչների կողմից:

Այսպես, Պողոս Սենեբյանի «Կրթութիւն ապաշխարողի» (Վենետիկ, 1751 թ.) գրքի առաջաբանում նշվում է՝ «նորապէս թարգմանեցեալ յիտալական բարբառոյ ի հայոց լեզու ի Սարգսէ վարդապետէ և արքեպիսկոպոսէ Կոստանդնուպոլսեցոյ», որ նշանակում է, թե նախկինում եղել է այդ երկի մեկ այլ նթարգմանություն: Եվ իրոք, այլ աղբյուրներից իմանում ենք, որ այդ նախկին թարգմանությունը կատարվել է Դուկաս Խարբերոցու ձեռքով¹: Ուստի այդ երկը մեզ է հասել ձեռագիր (հմմտ. ՄՄՁ, 4047) և տպագիր տարբերակներով: Այս երկուսի լեզվական-բնագրային մանրամասն համեմատությունը ևս երևան է հանում այնպիսի փաստեր, որոնք վկայում են այն մասին, թե տվյալ շրջանում ինչպիսի ջանքեր են գործադրված եղել նոր ժամանակների հայերենը հին գրական լեզվի (գրաբարի) օրինակով մաքրելու և կանոնավորելու ուղղությամբ:

գ) Մխիթար Սեբաստացու աշակերտների, այսպես կոչված, երրորդ սերունդը ձեռնամուխ է լինում լատինաբան ազդեցության իսպառ վերացմանը՝ ոչ միայն մշակութային, այլև հատկապես լեզվական առումով: Նրանք օգտագործում են թե իրենց անմիջական նախորդների, կրթական այլ օջախների գործիչների և թե իրենց ուսուցչապետի կողմից կուտակված փորձը:

Այսպես, Պետրոս Արագոնացու «Գիրք առաքինութեանց» և «Գիրք մոլութեանց» աշխատությունները ժամանակին թարգմանվել էին Հակոբ Քոնեցու կողմից (1339-1340 թթ.)¹: Աստվածաբանական-իմաստասիրական այդ երկերն ավելի ուշ նախ տպագրվում են Մխիթար Սեբաստացու անմիջական

¹ Հմմտ. *Յովհաննէս Քոնեցի*, նշվ. աշխ., էջ 32:

նախաձեռնությամբ, այնուհետև նրա աշակերտների վերահրատարակությամբ (տես Վենետիկ, 1721, 1772, այլև 1720, 1773): Դրանց հրատարակմանը և վերահրատարակմանը կցված առաջաբաններում նշվում են նաև այն մասին, թե լեզվական մշակման ինչպիսի ջանքեր են գործադրվել ոչ միայն Մխիթար Սեբաստացու, այլև նրա աշակերտների կողմից: Այդ իրողությունը նկատելի է նաև այդ երկերի բուն շարադրանքի լեզվական բարելավումների մեջ:

Ավելացնենք, որ Սեբաստացին իր հրատարակած այդ գրքերին կցել է առաջաբան՝ «Բան առ ընթերցողս», իսկ վերջում դրել «Ոտանաւոր առ գովութիւն մատենիս»: «Գիրք առաքինութեանց»-ի առաջաբանում լեզվական պայքարի առաջին փուլում մեծ դիմադրություն չառաջացնելու նկատառումով նա երբեմն գործածել է լատինաբան ձևեր, ինչ-ինչ կազմություններ՝ հրատարակության գրաքննությունը հաջող իրականացնելու համար: Որ դա այդպես է, երևում է այն բանից, որ դրանք երկրորդ տպագրության ժամանակ, նրա աշակերտների ձեռքով իսպառ սրբագրված են, փոխարինված համեմատաբար կանոնական ձևերով:

Այնուհետև, Հովհաննես Պոնայի «Ձերբաժութիւն յերկինս», այլև «Սկզբունք և ուսուցմունք կենի քրիստոնէականի» երկերը թարգմանված են ժամանակի գրաբար հայերենով (Հռոմ, 1671, Վենետիկ, 1744): Երկրորդ գրքի հրատարակումն իրականացված է Մխիթար Սեբաստացու «հրամանով և սրբագրությամբ», սակայն ավելի ուշ՝ երկրորդ սերնդի ժամանակներում: «Սկզբունք և ուսուցմունքի» վերջում (էջ 335-347) «Ձերբաժութիւն»-ից առնված մի հատված կա, որը տարբեր թարգմանությունների մեջ իրականացել է տարբեր կերպ. միևնույն հատվածի տարբեր թարգմանությունների լեզվի համեմատությունից մի կողմից՝ պարզվում են լեզվական-սրբագրական աշխատանքի հետաքրքրական կողմեր, որոնք անշուշտ լատինաբանության թուլացման ուղղությամբ Մխիթար Սեբաստացու ծավալած աշխատանքի վկայություն են, իսկ մյուս կողմից՝ երևան են գալիս գրաբարին ընդհանուր առմամբ խորթ, լատիներենի կառուցվածքով բացատրվող շարահյուսական ակնհայտ տարբերություններ: Դրանք ավելի բնորոշ են «Ձերբաժութիւն յերկինս» երկի առաջին թարգմանությանը և մեղմացվում կամ անտեսվում են երկրորդ թարգմանության մեջ:

Մխ. Սեբաստացու վաղ շրջանի ինքնուրույն երկերից մեկը՝ «Կրթութիւն աղօթից», լույս է տեսել երկու անգամ, մեկն իր կենդանության ժամանակ (Վենետիկ, 1718), իսկ մյուսը՝ հետագայում (ն.տ., 1772): Դրանց լեզվական, այլև բնագրային համեմատությունից նկատելի են դառնում բառերի և բառաձևերի, շարահյուսական կառույցների և ոճերի գործածության այնպիսի իրողություններ,

որոնք ցույց են տալիս, թե լեզվամշակման, տվյալ դեպքում՝ «սրբագրական, խմբագրական» ինչպիսի անդուլ աշխատանք են ծավալել այդ դպրոցի ներկայացուցիչները: Այսպես, գիրքն ունի «Յիշատակարան», որ դրված է թե՛ մեկ և թե՛ մյուս հրատարակության վերջում (էջ 268, 352), որոնցում նույնպես կատարվում են սրբագրումներ ու խմբագրումներ՝ հոգուտ «հայկաբան» լեզվի, որ ըստ մխիթարյանների առհասարակ պիտի դառնար նոր ժամանակների գրական լեզու:

Այսպիսով, լատինաբան հայերենով տարբեր ժամանակներում թարգմանված, տպագրված և մեկից ավելի անգամ հաճախ վերահրատարակված մի շարք երկեր, որոնք հայերեն գրավոր մշակույթի անկապտելի մասն են, պարունակում են լեզվական այնպիսի իրողություններ, որոնք տարբերություններ են ընդհանուր գրական հայերենի համեմատությամբ, որովհետև ինչ-ինչ պայմաններում հայերենի մեջ են ներմուծվել մեկ այլ լեզվի՝ լատիներենի օրինակով: Դրանց ուսումնասիրությունից պարզվում է նման ազդեցության հաղթահարման ուղղությամբ տարված գործնական աշխատանքների պատմությունը՝ հաղթահարման տարբեր փուլերում երևան եկող տարբեր ձևերով ու առանձին չափերով: Լատինատիպ ազդեցության հաղթահարումն առաջին հերթին հետապնդում է հին գրական լեզվին մոտենալու նպատակ: Այս մտքին զալիս են հատկապես Մխիթարյան դպրոցի ներհուն գործիչները, նրանք են առաջ քաշում օտարաբան և ինչ-որ չափով տկարացած լեզուն հայեցի դարձնելու գաղափարը, որը հայոց լեզվի պատմության համար ունենում է շրջադարձային նշանակություն: Երկար ժամանակ հայոց լեզվի մշակումն ու կատարելագործումն ընթանում էր նրանց նախանշած ճանապարհով, մինչև որ վիեննական դպրոցի ներկայացուցիչները ձեռնհասու եղան այն առաջ մղելու նոր չափանիշներով ու սկզբունքներով:

3. Լատինաբանության կասեցումը և վերացումը

Այստեղ մեր ուշադրության առարկան է լատինաբան հայերենով ավանդված գրական հուշարձանների պարունակած զանգվածային նյութի ընտրանքային քննությունը՝ առաջնորդվելով տվյալ երկի տարբեր թարգմանությունների, միևնույն թարգմանության առանձին տպագրությունների, ինչպես նաև ինքնուրույն երկի մեկից ավելի հրատարակությունների ընձեռած լեզվական առանձնահատկությունների համեմատության եղանակով:

Նման գրական հուշարձաններն այս շրջանում բավականին շատ են, և դրանց մանրամասն ուսումնասիրությունը մեծապես կարող է բացահայտել այն գործընթացը, որ տեղի է ունեցել հայոց լեզվի միջին շրջանում՝ կապված լատինաբանության հետ:

ա) Լատինատիպ նորամուծություններն ամենից առաջ հայերենի, ավելի կոնկրետ՝ գրաբարի բառապաշարի խորդ և արհեստական կազմություններ են: Դրանք ակնառու են հատկապես բառերի ածանցման և բարդման դեպքում: Առավել լայն աշխատանք է ծավալվելիս եղել բառերի ածանցման ժամանակ, ինչպես ձևակերպում է նաև լատինատիպ քերականություններում: Լատինաբան հեղինակները հիմնականում օգտվում են հունաբան հայերենի ստեղծած նախաձևանցներից, որոնց կիրառությունն այս դեպքում հասնում է մեծ չափերի և ընդունում տարբեր եղանակներ: Այստեղ արտասովորն այն է, որ ածանցումը տեղի է ունենում նախաձևանցների և վերջաձևանցների բռնագրոսիկ զուգորդումով, բառի կազմում մեկ և ավելի ածանցների՝ մասամբ անհարկի ներմուծումով, նախաձևանցների նախդրային գործածությամբ և այլն:

Ըստ այդմ, արհեստականորեն ներմուծված ածանցները (հիմնականում՝ նախաձևանցներ) հաղթահարվում են հետևյալ կերպ:

1. Անհարկի կիրառությամբ ածանցների վերացում: Օրինակ՝ յաղագս մեծի քաղցրութեան *համախոկմանն* (ԹԳՅՀ, 63) ~ առ մեծի քաղցրութեան *խոկման* (ԹԳՅՆ, 39), *ներհեղուս* ի նոսա (ԹԳՅՀ, 528) ~ *հեղուս* ի նոսա (ԹԳՅՆ, 299), *ենթասուզեսցի* (ԹԳՅՀ, 235) ~ *սուզեսցի* (ԹԳՅՆ, 142), *առքերելոց* ի հեղինակէ գրոյն (ԳՄ, I, էջ II) ~ *քերելոց* ի հեղինակէ գրոյն (ԳՄ, II, էջ 14), ոչ ինչ *մակ յաւելիլ* կամ պակասիլ կարէ (ՄՄՁ, 9068, 14 բ) ~ ոչինչ *յաւելուլ* կամ պակասիլ կարէ (ՄՄՀԱ, 46), *վերամնամ* (ԳԱ, I, էջ III) ~ մնամբ (ԳԱ, II, էջ III), և նորով *յարալնանիմ* խնդութեամբ (ԹԳՅՀ, 167) ~ և նոր խնդութիւն *զգենում* (ԹԳՅՆ, 168), և միւսն է յաւիտենական *նախասահմանութեան* (ՄՄՁ, 9068, 20 բ) ~ և միւսն՝ յաւիտենական *սահմանութեան* (ԱՄՀԱ, 65), ինով ծանրութեամբ *ստորհակիմ* (ԹԳՅՀ, 168) ~ ինովս ծանրութեամբ միշտ *ի ստոր քերիմ* (ԹԳՅՆ, 168) և այլն:

2. Ածանցավոր բառի դիմաց մեկ այլ պարզ բառի օգտագործում: Օրինակ՝ *ստորանկեալ* միշտ այլոց կարելոյ լուսագունեղի (ԳԱ, I, էջ II) ~ *գտանի* միշտ այլ կարելի լուսագոյն (ԳԱ, II, էջ II), վասն որոյ ենք *նախասահմանեցեալք* (ԽՔ, I, 15) ~ ոյր վասն *եղեալն* ենք (ԽՔ, II, 21), այլ այն յորում *արդիւնատրապէս* կենցաղավարիմք (ԽՔ, I, 118-119) ~ այլ այն, յոր առաւել գանձեցեր *արդիւնս* (ԽՔ, II, 70), ոչ միայն վասն շնորհացն *վերընդունեցելոյ* (ԽՔ, I, 111) ~ ոչ միայն

վասն շնորհացն, գոր *ընկալաք* (ԽՔ, II, 74) և այլն:

3. Ածանցավոր բառի փոխարեն գրաբարին հարազատ և կանոնական ձևի կիրառում, որն անշուշտ հավաստումն է հեղինակի լեզվական իմացության: Օրինակ՝ *յաղօթելոյ մտատրապէս* ոչ դադարէին (ԹԳՅՀ, 39) ~ *ի մտատր աղօթից* ոչ դադարէին (ԹԳՅՆ, 39), *ստորհակիմ* (ԹԳՅՀ, 235) ~ *ի ստոր բերիմ* (ԹԳՅՆ, 142), նորով *յարալնանիմ խնդութեամբ* (ԹԳՅՀ, 235) ~ նոր *խնդութիւն զգենում* (ԹԳՅՆ, 142), *նահատակք* արեամբք իւրեանց *վերաստացեալք են*, գոր այնքան *հրաշք և սքանչելիք համահաստատեալք են* (ԽՔ, I, 5-6) ~ այնչափ *վկայից* արեամբ *ստորագրեալ*, բազում *սքանչելեօք հաստատեալ* (ԽՔ, II, 15), տիւն այն ոչ է տիւ *պտղունակապէս* ծախեցեալ, յորում *շահաւետապէս* յառաջանամք ի յիւրակութիւնս կենցաղականս (ԽՔ, I, 118-119) ~ օր *բարեբաստիկ* ոչ է այն, յոր *առաւել* յաջողեացն կենցաղական իրակութիւնք քո (ԽՔ, II, 70) և այլն:

Բերված օրինակներում նկատելի են պարտադիր համաձայնության անտեսման, ածանցավոր բայի փոխարեն հարադիր բայի գործածության, դարձվածային միավորի կիրառություն ոչ այդպիսին եղող կապակցության դիմաց (հմմտ. *յարալնանիմ խնդութեամբ* ~ *խնդութիւն զգենում*), ճիշտ բառագործածության (հմմտ. *նահատակ – վկայ*) և այլնի հետ կապված տարբեր կարգի առանձնահատկությունների դրսևորումներ:

բ) Լատինաբան գրաբարով շարադրված երկերում զգալի տեղ է հատկացվում անսովոր և անհարկի կազմություն ունեցող բարդ բառերին: Դրանք թեև հնարավոր է, որ այս կամ այն չափով օգտագործված լինեն դեռևս հին գրական հայերենի շրջանում, սակայն նոր ժամանակներում հիմնականում ի հայտ են գալիս արհեստական կիրառություններով: Այդ արհեստականությունը պայմանավորված է լատիներենի բառակազմական նմանատիպ եղանակների բացարձակ հետևությամբ: Լատինատիպ կազմությամբ բարդ բառերը հետագայում աստիճանաբար փոխարինվում են գրաբարի բառակազմությանը բնորոշ, առավել համահունչ բարդություններով, տվյալ բարդությանը պատշաճող բաղադրիչների զուգակցումով, այլև սովորական կամ պարզ բառերով և այլն:

Այս դեպքում լեզվական արհեստականությունը հաղթահարվում է հետևյալ կերպ:

1. Բարդ բառի փոխարինում մեկ այլ, առավել սովորական բարդությամբ հանդես եկող բառով կամ հարադրությամբ: Օրինակ՝ եւ զի զարմանք են, թէ որպէս փութանակի *բարձրամտիցիմ* (ԹԳՅՀ, 235) ~ եւ զարմանք այն մեծ են, զի այսպէս յանկարծ *վերբերիմ* (ԹԳՅՆ, 142), որում ոչ կարեմ *ընդդիմարանալ* (ԹԳՅՀ, 234) ~ և չունիմ *տալ պատասխանի* (ԹԳՅՆ, 142), ահա դու *ընդդիմամարտիս* ընդ իս

(ԹԳՅՀ, 234) ~ ահա *ընդդէմ դառնաս* դու ինձ (ԹԳՅՆ, 141-142), զբարեկամս իր *ի հրճուակցութիւն* ինքեան (ԳԱ, I, էջ II) ~ զբարեկամս իր *ի խնդակցութիւն* ինքեան (ԳԱ, II, էջ II), *հրճուակից* (ն. տ.) ~ *խնդակից* (ն. տ.) և այլն:

Այս դեպքում ևս ունենք օրինակներ, որոնցում որոշակի է հին գրական հայերենի նորմային հետևելը՝ ի հաշիվ արհեստական ձևով կազմվածների կասեցման և վերացման, ընդ որում դա տեղի է ունենում բավականին հետևողական ձևով (հմմտ. մի կողմից՝ *հրճուակից – խնդակից*, մյուս կողմից՝ *հրճուակցութիւն – խնդակցութիւն*) և այլն, որոնցից երկրորդների նախընտրելի լինելը ոճական մակարդակի վրա է սահմանված:

2. Բարդ բառի փոխարինում պարզ բառով կամ սովորական բառակապակցությամբ: Օրինակ՝ և այնպիսիք *նեղասրտին*, և *յարածամ* տրտնջեն (ԹԳՅՀ, 29) ~ եւ այսպիսիք *տանջին* և *ընդ դոյզն* իրաց տրտնջին (ԹԳՅՆ, 20), նկատեա՛ յօրինակս *կենդանարարս* սրբոց հարց (ԹԳՅՀ, 61) ~ հայեա՛ց *ի կենդանի* օրինակս սրբոց հարց (ԹԳՅՆ, 38. այլն՝ նկատեա *ի կենդանի օրինակս* սրբոց հարց. ՄՄՏ, 47), իսկ եթէ *ակնարկիցիս* առ իս (ԹԳՅՀ, 235) ~ ապա թէ յիս *հայիս* (ԹԳՅՆ, 142), քանզի որպէս և *կարգադրիցեմ* զխաղաղութիւն իմ (ԹԳՅՀ, 250) ~ զի որպէս և *յարդարեցից* զիմ խաղաղութիւն (ԹԳՅՆ, 150), զոր այժմ *ջերմեռանդապէս* բաղձամ վերընդունիլ (ԹԳՅՀ, 568) ~ զոր այդ *եռանդեամբ* ընդունիլ ցանկամ (ԹԳՅՆ, 336), *կենցաղաւարիլ* (փխ. վ -ով. ԽՔ, I, 9) ~ *կեալ* (ԽՔ, II, 17), իհարկէ *պարտ է մեզ կենցաղաւարիլն* կամ ի ներքոյ հրամանաց բարեգործութեան նորա, և կամ ի ներքոյ հրամանաց արդարութեան (ԽՔ, I, 11-12) – հարկ է թէ *իցեմք* ի ներքոյ հրամանաց բարութեան նորա, կամ արդարութեան նորա (ԽՔ, II, 20) և այլն:

գ) Հայերենի ձևաբանական համակարգը նույնպես կրում է լատինաբանության ազդեցությունը, ընդ որում այն ունի տարածված բնույթ, իսկ քերականություններում սահմանվում են այդ ազդեցության դրսևորումները բավականին մանրամասնորեն: Դրանք ի հայտ են գալիս հատկապես անվանական և բայական միավորների կազմություններում: Անվանական կազմություններում նկատվող լատինատիպ նորանուծություններն արտալեզվական միջամտությամբ պայմանավորված խախտումներ են հին գրական հայերենի մեջ: Այդպես նաև բայական համակարգի դեպքում, որում նկատելի են բազմապիսի և բազմաթիվ նորանուծություններ: Այս ուղղությամբ ևս մեծ ջանքեր են գործադրվում՝ տարբեր կարգի զիջումների և «սրբագրումների» ձևով ոչ միայն կասեցնելու, այլև հաղթահարելու այդ բնույթի անհարկիությունները:

Նախ պետք է նկատի ունենալ, որ լատինաբանության կասեցումն ու հաղթահարումը չեն եղել դյուրին և լեզվամշակման գործունեության իրականացման տեսակետից անխափան: Հայտնի է, որ միարարական գործիչների կողմից, գերակա կարգադրության պայմաններով թելադրված, իրականացվում էր խիստ վերահսկում, և ամեն մի երկի «թողարկում» պիտի լիներ ժամանակի գրաքննությանը ենթարկված: Նման պայմաններում Մխիթարյանները հաճախ ստիպված են լինում սկզբնական շրջանում զիջումներ անել կամ «տուրք տալ»: Դա նկատելի է ոչ միայն նրանց հրատարակած և վերահրատարակած գրքերի լեզվի համեմատությունից, այլև այդ գրքերից մի քանիսի առաջաբաններում հատուկ նշումներից: Այսպես, Արագոնացու «Գիրք մոլութեանց» երկի «Բան առ ընթերցողս»-ում Մխ. Սեբաստացին հետևյալն է նշում. «Եւ գիրքս այս ի լաթին լեզուէ գոլով թարգամեցեալ, ըստ այնմ շարադրութեան գրեցել է և վկայութիւնքն, որ ի մերումս՝ ուրեք ուրեք են այլապէս: Եւ զի ոչ է ըստ իւրեանց՝ այլայլելն զշարադրութիւնս վկայութեանց առբերեցելոց ի հեղինակէ գրոյն, ըստ որոյ շարադրութեան կարգեալ է և զիւր բան. վասն որոյ թողաք այնպէս: Նմանապէս նաև որ քան առ այնս՝ որք ըստ նորոց քերթողաբանից էին ընդդէմ արհեստի քերթողութեան, և նշանակութեան բանից զոչ իմն վնաս առ բերէին, ոչ եղաք ձեռնամուխ, առ ի այլայլել, քան զի անդուստ վնասք ինչ ոչ հետևին, այլ մանաւանդ քաղցրաբանութիւնք, և դիւրիմացութիւնք բանից պատճառին»¹:

Այնուհետև, նույն հեղինակի «Գիրք առաքինութեանց» երկի՝ նախկինում կատարված թարգմանության (տե՛ս ՄՄՁ, 46) և հետագա երկու տպագրության (Վենետիկ, 1721 և 1772 թթ.) լեզվական համեմատությունից երևում է, թե ինչպիսի զիջումներ ու «շտկումներ» են եղել: Այսպես, հանդիպում ենք մի շարք գոյականական, բայական, թվականական և այլ կարգի ձևերի, որոնք ձեռագիր օրինակում ավելի կանոնավոր են, այսինքն՝ հին գրական հայերենի նորմային համապատասխանող, քան հետագա երկու տպագրություններում: Հմմտ. «Յաշխարհս այս իբրև ի ստաղիոն պատերազմ *եղեալ ենք*, ուր մեռաւ Քրիստոս» (ՄՄՁ, 46, 25բ) ~ «Յաշխարհս այս իբրև ի ստաղիոն պատերազմ *եղեալք են*, ուր մեռաւ Քրիստոս» (ԳԱ, I, 48) // «Յաշխարհս այս իբրև ի ստաղիոն պատերազմ *եղեալ ենք*, ուր մեռաւ Քրիստոս» (ԳԱ, II, 51): Այսպես նաև հետևյալները. *յաղթիմք* (ՄՄՁ, 46, 25բ) ~ *յաղթիցիմք* (ԳԱ, I, 48) // *յաղթիմք* (ԳԱ, II, 51), *զերկին և զերկիր* (ՄՄՁ, 46, 27բ) ~ *զերկինս և զերկիր* (ԳԱ, I, 51, այլև ԳԱ, II, 55), *ոչ պարունակեալ*

¹ Պետրոս Արագոնացի, Գիրք մոլութեանց, Վենետիկ, 1720, էջ 4 - 5:

(ՄՄՁ, 46, 27բ) ~ ոչ պարունակեցեալ (ԳԱ, I, 51, այլև ԳԱ, II, 55), արգելիլ (ՄՄՁ, 46, 28բ) ~ արգելանիլ (ԳԱ, I, 53, այլև ԳԱ, II, 56), անաջին (ՄՄՁ, 46, 14բ) ~ անաջներորդ (ԳԱ, I, 27, այլև ԳԱ, II, 30), հեղու (ՄՄՁ, 46, 29բ) ~ հեղանի (ԳԱ, I, 55, այլև ԳԱ, II, 59) և այլն:

Բերված օրինակներից պարզ է դառնում ոչ միայն Մխիթարյանների ջանքերի գործադրումը հայերեն գրավոր լեզվի բարելավման ուղղությամբ, այլև Քննեցու թույլ տված լատինաբանությունը, ինչպես նաև հին գրական հայերենի նորմային հետևելու ձգտումը:

1. Չևաբանական համակարգում կատարված փոփոխությունների կասեցման և հաղթահարման գործընթացն ամենից առաջ վերաբերում է գոյական և ածական խոսքիմասային միավորների ավանդական օրինաչափությունների վերահաստատմանը, այսինքն՝ այս դեպքում ևս տեղ գտած լատինաբան նորանուծությունները փոխարինել հինգրական հայերենի ավանդական ձևերով:

Գոյականական ձևերի մեջ կատարված նորանուծություններն այլ բան չեն եղել, քան թվի, հոլովման և առանձին հոլովների ձևավորման դեպքում խախտումներ՝ ի վնաս հին գրական հայերենի համապատասխան օրինաչափությունների: Լատինատիպ նորանուծությունների հաղթահարումն այստեղ նույնպես ընթանում է այդ մասնակի փոփոխությունների վերացման՝ դասական գրաբարին համապատասխանող իրականությունների վերականգնման և գործադրման ճանապարհով:

Անդրադառնանք նման երևույթներից հատկապես հետևյալներին:

2. Գոյական անունների թվի կազմության մեջ նկատվող անհարմարությունները վերանայվում են: Անեզական և անհոգնական գոյականների, լատիներենի ազդեցությամբ պայմանավորված, անկանոնությունը հարմարեցվում է գրաբարի ավանդական կանոններին: Այսպես, անեզական բառերի *ք* մասնիկը վերականգնվում է, իսկ հոգնակիի ձևով կիրառվող անհոգնականները, ընդհակառակը, հանդես են գալիս իրենց նախկին ձևով: Այստեղ նկատելի է այն երևույթը, երբ անեզական բառը, դրված լինելով արհեստական ձևով կազմված եզակիով, վերանայվում է նաև այդ նորանուծությունը (հմմտ. *գիրք – գիրգ*. երկրորդն իբրև առաջինի եզակի ձև): Օրինակ՝ զի ջանայցեր բառնալ *զկեանն* նորա (ՄՄՁ, 6922, 28) ~ զի ջանայցեր բառնալ *զկեանս* նորա (ԱԿՅԱ, 28), ոչ կարէ գոլ թարց փորձութեան և ցաոց *կեանն* իմ (ԹԳՅՀ, 250) ~ անհնար է *կենաց* իմոց լինել անվիշտ և անպատերազմ (ԹԳՅՆ, 150), լինէին *մարդիք* այլոց քաղաքի քաղաքակիցք (ԳԱ, I, 21) ~ լինէին *մարդիկ* այլոց քաղաքի քաղաքակիցք (ԳԱ, II, 23) և այլն:

3. Գոյականների հոլովման ժամանակ, լատիներենի հետևությամբ, ներգոյական հոլովում հանդես եկող *ըն (ն)* նախամասնիկը վերանում է, ընդ որում վերջինս կա՛մ դուրս է գցվում ընդհանրապես, կա՛մ էլ փոխարինվում է գրաբարի սովորական *ի* նախորդով: Օրինակ՝ Սուրբք և բարեկամք Քրիստոսի ծառայեցին տեառն *ըն սովում* և *ըն ծարատում*, *ըն ցրտութեան* և *ըն մերկութեան*, ի յաշխատանս և ի վաստակս, *ըն տքնութեան* և *ըն ծոմում* (ԹԳՅՀ, 61) ~ Սուրբք և բարեկամք Քրիստոսի ծառայեցին տեառն *ի քաղց* և *ի ծարաւ*, *ի ցուրտ* և *ի մերկութեան*, ի վաստակս և յաշխատութիւնս, *ի խոկմունս*¹ և *ի պահս* (ԹԳՅՆ, 38), *ըն ճշմարտում խոնարհութեան* կային, *ընգտում հնազանդութեան* ապրէին, *ըն սիրոյ* և *ըն համբերութեան* շրջէին (ԹԳՅՀ, 64) ~ *ի ճշմարիտ խոնարհութեան* կային, միամիտ հնազանդութեամբ վարէին, սիրով և համբերութեամբ գնային (ԹԳՅՆ, 40), եթէ *ըն հնում օրինում* գորքան բարիս առնէր հայրն երկնաւոր (ՄՄՁ, 6922, 56) ~ եթէ *ի հնում օրինի* հայրն երկնաւոր (ԱԿՅԱ, 53), *ըն յսկզբան* աշխարհիս պատժեաց զիրեշտակս (ՄՄՁ, 6922, 91) ~ *ի սկզբան* աշխարհիս պատժեաց զիրեշտակս (ԱԿՅԱ, 84), քանզի եթէ *նիրում իմիր* խնդրիցես (ԹԳՅՀ, 238) ~ զի եթէ զանձն *յիմիր* խնդրես (ԹԳՅՆ, 143) և այլն:

4. Նույն երևույթը նկատվում է նաև գոյականի լրացում հանդիսացող դերանունների մեջ այն դեպքում, երբ իբրև որոշիչ գործածվող դերանուն իր վրա է վերցնում գոյականի վրա դրվելիք նախամասնիկը. այս երևույթը, ի դեպ, շարահյուսական ձգողության բնույթի է և կար նաև հին գրական հայերենում, սակայն *զ, ի, ց* նախդիրների դեպքում էր տեղի ունենում: Այդուհանդերձ, այս դեպքում ևս հաղթահարվում է *ըն (ն)* մասնիկի կիրառությունը. Օրինակ՝ երկու են, զորս զգամ յաւետ հարկաւորս գոլ ինձ *նայամիկ կենցաղում* (ԹԳՅՀ, 570) ~ զի երկու ինչ ինձ յոյժ կարևոր տեսնեմ *յաստի կեանս* (ԹԳՅՆ, 322), և թէ *նորքանս չարիս* յորսայսիցիմ (ԹԳՅՀ, 584) ~ *յորչափ չարիս* և *ի մոլութիւնս* անկեալ դնիմ (ԹԳՅՆ, 336) և այլն:

Այստեղ, ինչպես կարելի է նկատել, ներգոյական հոլովի կազմության մեջ հաղթահարվում է ոչ միայն հիշյալ նախամասնիկի անհարիր կիրառությունը, այլև վերականգնվում է ներգոյականի, այսպես կոչված, հայցականաձև կազմության ավանդույթը՝ իբրև կանոն. բերված օրինակներում *սովում, ծարատում, ծոմում, կենցաղում* ձևերը փոխարինված են, համապատասխանաբար՝ *քաղց, ծարաւ, պահս, կեանս*՝ ձևերով:

5. Ածական անունների համեմատության աստիճանների կազմությունը

¹ Վրթ. Ասկերյանի թարգմանության առաջին տպագրության մեջ նշված է *ի հսկմունս* ձևով, որը սրբագրված է հետագա՝ երկրորդ տպագրության ժամանակ:

հասցվում էր մեկ ընդհանուր, քարացած վիճակի, մի բան, որ նույնիսկ լատիներենի ածականի համար այդքան խիստ չէր դրված: Ըստ այդմ բաղդատական աստիճանը կազմվում էր –*գոյն*, իսկ գերադրականը՝ – *գունեղ* մասնիկների օգնությամբ: Գրանք ևս փոխարինվում են հին գրական հայերենին հարազատ կազմությամբ: Օրինակ՝ որպես թե *ի վեհագոյնէ* բարոյ իցեն յառաջածեցեալք (ԹԳՅՀ, 238) ~ որպես *գերակայ* բարոյն բղխմունս (ԹԳՅՆ, 144), բայց *մեծագոյն* իմն անմտութիւն է (ԽՔ, I, 6) ~ բայց *մեծ* ևս անմտութիւն է (ԽՔ, II, 15), որքան *մեծագունեղ* իմն իցէ խնդութիւն (ԳԱ, I, էջ II) ~ որքան *մեծ* իցէ խնդութիւն (ԳԱ, II, էջ II), զի ո՛ր և իցէ ստեղծեցեալ բարի և լաւագոյն՝ ստորանկեալ է միշտ այլոց կարելոյ *լաւագունեղի* (ԳԱ, I, էջ II) ~ զի քան ո՛ր և իցէ ստեղծեցեալ բարի, գտանի միշտ այլ կարելի *լաւագոյն* (ԳԱ, II, էջ II), վասն զի *բաւականագունեղ* բարի էր մաքրիլն (ԳԱ, I, էջ III) ~ վասն զի *բաւական* բարի էր մաքրիլն (ԳԱ, II, էջ III) և այլն:

6. Մեզ հետաքրքրող շրջանի գրական հուշարձաններում լատինատիպ ձևերն անհամեմատ մեծ խճողումներ են առաջ բերում հայերենի բայի համակարգում՝ պայմանավորված այդ խոսքի մասի կարգային (կատեգորիալ) լայն հնարավորություններով, ինչպես նաև դրանց նկատմամբ լատինաբան հեղինակների հանդես բերած առավել միտումնավորությամբ և հետևողականությամբ: Եվ նման խճողումները, իբրև ժամանակի լատինաբան նորամուծություններ, վերաբերում են բայի խոնարհման տիպերին, հիմքերի կազմությանը, եղանակային և ժամանակային ձևերի, ներգործական և կրավորական խոնարհումների դրսևորմանը, անկանոն բայերի մասնակի «կանոնավորմանը» և այլն: Գրանցից ամենակարևորներին անգամ համառոտակի անդրադառնալիս պարզվում է, որ հին գրական հայերենի օրինակով նոր կամ հետագա դարերի գրաբարի «վերածնման», այսինքն՝ նոր գրական լեզու դարձնելու ճանապարհին այդ կարգի նորամուծությունները իսպառ վերանում են:

Լատինաբան գրավոր աղբյուրներում, ինչպես տեսանք նաև Մխ. Սեբաստացու՝ վերը բերված դիտողության մեջ, բայի կատարյալի հիմքը հաճախ կազմվում է, այսպես կոչված, ավելորդ գոյականությամբ: Վերջինս հետագայում փոխարինվում է արմատական կազմությամբ: Օրինակ՝ *ստեղծեցեալք իցենք* աստուծոյ (ԽՔ, I, 11) ~ *ստեղծեալ ենք* միայն վասն աստուծոյ (ԽՔ, I, 20), այլայլելն զշարադրութիւնս վկայութեանց *առքերեցելոց* ի հեղինակէ գրոյն (ԳԱ, I, էջ II) ~ այլայլել զշարադրութիւնս վկայութեանց *բերելոց* ի հեղինակէ գրոյն (ԳԱ, I, էջ 14), *ներհեղեաց* ի հոգի նորա (ՄՄՁ, 6922, 23) ~ *եհեղ* ի հոգի նորա (ԱԿՅԱ, 24), *ընթացի՛ր* այսր և անդր (ԹԳՅՀ, 29) ~ *ընթա՛* յայսկոյս և յայնկոյս (ԹԳՅՆ, 332)

20), *ի լոյս ածեցեալ* տպագրութեամբ և *մաքրեցմամբ* սխալմանց գրչաց (ԳԱ, I, էջ II) ~ ի սխալմանց գրչաց *մաքրեալ* և տպագրութեամբ *ի լոյս ածեալ* (ԳԱ, II, էջ II) և այլն:

7. Բացի նրանից, որ լատինաբան հայերենում առհասարակ տարբերվում են ըղձական և ստորադասական եղանակները՝ ի տարբերություն հին գրական հայերենի նորմայի, ստորադասականի մեջ ներմուծվում են նոր՝ անկատար, ապառնի և գերակատար ժամանակային ձևեր: Այստեղ առավել հետաքրքրական է այն, որ հունաբան հայերենի հետևությամբ կազմված անկատար ժամանակի նորամուտ ձևերը աստիճանաբար թուլացման ճանապարհով իսպառ հաղթահարվում են: Օրինակ՝ զի *մի եղծանիցեէին* գրեցեալքն (ԳԱ, I, էջ II) ~ զի *մի եղծցին* գրեալքն (ԳԱ, II, էջ II) և այլն:

Լատինաբան հեղինակները բավականին հետևողական մոտեցմամբ փորձել են կանոնավորել բայի կրավորաձև խոնարհման համակարգը՝ ի հակադրություն ներգործաձև խոնարհման: Այս պարագայում նրանք տեղիք են տալիս մի շարք խորթ կազմությունների, հատկապես *ա* և *ու* խոնարհման բայերի առումով՝ միաժամանակ խախտումներ մտցնելով նաև հիմքերի կազմության մեջ: Այդ նպատակով ներմուծվում է *–անիմ* բաղադրիչը հիշյալ խոնարհումների բայերի կրավորականի համար (հմմտ. *իմանամ* ~ *իմանիմ* կամ *իմանանիմ*, *առնում* ~ *առնանիմ*, *լնում* ~ *լնանիմ* և այլն): Վերացվում են ոչ միայն այդ, այլև *ե* խոնարհման բայերի սահմանական եղանակի անցյալ անկատարում եղած խորթությունը (հմմտ. *գրեէի*, փխ. *գրէի*, *թուեէի*, փխ. *թուէի* և այլն): Օրինակ՝ սովորութիւն հնացեալ դժուարապէս *թողանի* (ԹԳՅՀ, 51) ~ սովորութիւն հնացեալ ոչ վաղվաղակի *լինի* (ԹԳՅՆ, 32), որք *պահանջեէին* առ գրումն այնց (ԳԱ, I, էջ II) ~ որք *պահանջէին* առ գրումն այնց (ԳՄ, II, էջ II), որք բազմիցս *ելանեէին* (ԳԱ, I, էջ III) ~ որք բազմիցս *ելանէին* (ԳԱ, II, էջ III), որքան բազմիցս *սխալեէին* (ԳԱ, I, էջ II) ~ որքան բազմիցս *սխալէին* (ԳԱ, II, էջ II), արիք *անուանեէին* (ԳԱ, I, 1) ~ արիք *անուանէին* (ԳԱ, II, 3), կարճաճօտք *թուեէին* (ԹԳՅՀ, 63) ~ *թուէր* նոցա սուղ (ԹԳՅՆ, 39), ինքեանք ինքեանց ոչ ինչ *թուեէին* (ԹԳՅՀ, 64) ~ յաչս անձանց *թուէին* ոչինչ (ԹԳՅՆ, 40), օր ըստ օրէ հոգով *արդիւնատրեէին* (ԹԳՅՀ, 64) ~ օր ըստ օրէ հոգով *գարգանային* (ԹԳՅՆ, 40) և այլն:

դ) Հայերենի շարահյուսական համակարգում նկատվող լատինաբանությունը հատկապես վերաբերում է նման միավորների համաձայնությանը և շարադասությանը: Այս հարցում լատինաբան հեղինակները հասնում են որոշակի ծայրահեղության, ստեղծում են քարացած, սխեմատիկ կանոններ, որոնցում,

չնչին բացառությամբ հանդերձ, անտեսվում են հին գրական հայերենի նախադասության կառուցվածքի ամեն մի նրբություն և ճոխություն: Լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը նկատելի է նաև այս հարցում: Հին գրական հայերենի բառակապակցության, նախադասության կառուցվածքային օրինաչափությունների և կոնկրետ առանձնահատկությունների հետևությամբ վերացվում են համաձայնության և շարադասության մեջ եղած լատինաբան խորթությունները:

1. Շարահյուսական միավորների անխտիր և պարտադիր համաձայնությունը, որն երևան է գալիս լատինաբան հեղինակների երկերում և ձևակերպվում նույնատիպ քերականություններում, աստիճանաբար հաղթահարվում է, փոխարինվում հին գրական հայերենի շարահյուսական կառուցվածքին բնորոշ կազմություններով: Այդ իրողությունն ակնառու է մասնավորապես նախադասության անվանական և բայական լրացումների խմբերի փոխհարաբերության մեջ: Լատինաբան հեղինակների խոսքում բառակապակցության բաղադրիչ տարրերը, անկախ իրենց խոսքամասային պատկանելությունից և կապակցման բնույթից, գտնվում են քերականական համաձայնության մեջ: Այնինչ, գրաբարի կողմնակիցներն այդ հարցում ավելի շատ հետևում են հին գրական հայերենի համապատասխան իրականություններին՝ առաջնորդվելով կապակցվող միավորների ոչ պարտադիր, նախադասության մեջ լրացումների և լրացյալների կոնկրետ շարադասությամբ պայմանավորվող համաձայնության սկզբունքներով: Օրինակ՝ ոչ է պարտ դնել գոյս մեծ *ընմարդում ումեր բեկանելում և մահկանացում* (ԹԳՅՀ, 128-129) ~ մի՛ կարի իմն ապալինիր *ի մարդ տկար և մահկանացու* (ԹԳՅՆ, 78), *համայնք խորհուրդք և արարմունք մեր ուղղեցեալք իցեն միայն ի փառս աստուծոյ* (ԽՔ, I, 13-14) ~ *ամենայն խորհուրդք և գործք իմ իցե՞ն ուղղեալ առ նա* (ԽՔ, II, 21), էին աղքատք *իրօք երկրայնօք* (ԹԳՅՀ, 64) ~ աղքատք էին *յերկրատր ինչ* (ԹԳՅՆ, 39), եղիցի ինձ այցելուք *քոյք շնորհք* (ԹԳՅՀ, 235) ~ խնայեսցեն յիս *շնորհք քո* (ԹԳՅՆ, 132), ոչ երբէք արտուղի *ի շաղէն ուղղականէ* (ՅՊՁ, 245) ~ ոչ երբէք *ի յուղիղ շաղէն* արտուղի (ՅՊՍ, 343) և այլն:

Բերված օրինակներում վերացված է բառակապակցության անդամների միջև լատիներենի հետևությամբ ստեղծված անհարկի հոլովական, թվային համաձայնությունը՝ ի հաշիվ գրաբարին բնորոշ հոլովառության և ազատ շարադասության սկզբունքների գործադրման:

2. Ինչպես նշում է նաև Հ. Աճառյանը, հենվելով Հովհաննես (Հովով) Կոստանդնուպոլսեցու հայտնի քերականության ընձեռած լեզվական նյութի վրա,

լատիներենի ազդեցության արդյունք են նաև գրաբար հայերենով շարադրված երկերում հաճախակի հանդիպող, գրեթե պատրաստի շարահյուսական միավորի արժեքով հանդես եկող որոշ բառակապակցությունների կազմումն ու գործածությունը¹: Այդպիսի կապակցություններն աչքի են ընկնում ոչ միայն անդամ առ անդամ համաձայնությամբ, այլև շարադասության ընդգծված կայունությամբ: Ընդ որում այստեղ ուշագրավն այն է, որ այդ կարգի բառակապակցությունները հնարավորության սահմաններում հետագայում անտեսվում են և մերժվում: Օրինակ՝ *զբաղցրագունեղ հոգւոյն քոյ սրբոյ գտցեն զմխիթարութիւն*, որք վասն սիրոյ քոյ *զամենայն վայելչութիւն մարմնական* ի բաց ընկեցին (ԹԳՅՀ, 245) ~ *զբաղցր մխիթարութիւն սուրբ հոգւոյն գտցեն*, որք վասն սիրոյ քո՝ *յամենայն մարմնական բերկրութեանց* ի բաց կացցեն (ԹԳՅՆ, 147), *ջերմեռանդապէս բաղձամ վերընդունիլ* (ԹԳՅՀ, 513) ~ *եռանդեամբ ընդունել ըղձանամ* (ԹԳՅՆ, 349), գտանես *զժամանակ ուսանելոյ զմտածութիւնս*, զի արդ ոչ գտանես *զպարսպորդութիւն քրիստոնէաբար կենցաղավարելոյ* (ԽՔ, I, 121) ~ գտանես *պարսպ՝ իմաստասիրելոյ*, և ոչ գտանես *պարսպ՝ քրիստոնէաբար վարելոյ* (ԽՔ, II, 71-72) և այլն:

3. Նախադասության անվանական և բայական լրացումների խմբերի շարադասական փոխհարաբերության հարցում եղած լատինատիպ նորամուծությունները պայմանավորված են մի կողմից՝ լատիներենի շարահյուսական կանոնների անվերապահ ընդօրինակմամբ, իսկ մյուս կողմից՝ գրաբարի շարադասության ոչ բոլոր հմտություններին խորապես տիրապետելու և հետևելու հանգամանքներով:

Այս դեպքում առավել ուշադրության են արժանի հետևյալները:

Լատինաբան հեղինակների երկերում նախադասության անվանական լրացումներն իրենց լրացյալների հարաբերությամբ ավելի հաճախ ստանում են հետադաս կիրառություն, որը գրաբարի կողմնակիցների գործերում, լատինատիպ թարգմանությունների նորովի թարգմանության, այլև դրանց վերահրատարակման մեջ կարգավորվում է և տեղ-տեղ փոխարինվում ազատ շարադասությամբ, ինչպես նաև լրացումների առաջադաս կիրառությամբ՝ բոլոր դեպքերում հետևելով հին գրական լեզվի շարադասության սկզբունքներին: Օրինակ՝ *նկատե՛ա յօրինակս կենդանարարս* սրբոց հարց (ԹԳՅՀ, 61) ~ *հայե՛աց ի կենդանի օրինակս* սրբոց հարց (ԹԳՅՆ, 38), ի գտանելն իմ զգիրս զայս առաքինութեանց, յաջողութեամբ տեառն *ի լոյս ածեցեալ տպագրութեամբ*, և *մարբեցեալ ի սխալմանց գրչաց* (ԳԱ, I,

¹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 315:

էջ II) ~ ի գտանելն իմ զգիրս զայ առաքինութեանց, յաջողութեամբ տեսոն *ի սխալմանց գրչաց մաքրեցեալ*, և *տպագրութեամբ ի լոյս ածեալ* (ԳԱ, II, էջ II), անմտութիւն է հաւատալն *ճշմարտի այսմիկ օրինադրութեանս քրիստոնէականի* (ԽԶ, I, 6) ~ անմտութիւն է հաւատալ, թէ *այս վարդապետութիւն իցէ ճշմարիտ* (ԽԶ, II, 14-15) և այլն:

Լատինաբան գրավոր աղբյուրներում նախադասության բայական լրացումների շարադասական փոխհարաբերությունն ավելի քան անմիօրինակ է ու մի տեսակ անմիակերպ. ստորոգյալն իր լրացումների հարաբերությամբ հաճախ հանդես է գալիս հետադաս կիրառությամբ՝ ընդհուպ դրվելով ամբողջ նախադասության վերջում: Գրաբարի կողմնակիցների ջանքերի շնորհիվ, որն ակներև է հատկապես միևնույն երկի հետագա թարգմանության մեջ, բայական լրացումների շարադասությունը համապատասխանեցվում է գրաբարի նորմային: Եվ քանի որ գրաբարն ինքնին արդեն կենդանի հաղորդակցման միջոց չէր, այս դեպքում նույնպես այդ համապատասխանությունը ոչ միշտ է իրականանում բնական հատկությամբ: Օրինակ՝ արդ՝ դիրապէս *քամահեսցես զամենայն*, եթէ *յարժամ մտածեսցես՝ գոլ քո, մահկանացու* (ՅՊՁ, 78-79) ~ դիրապէս *զամենայն ինչ քամահեսցես՝ եթէ զմահկանացու գոլդ զմտաւ ածիցես* (ՅՊՄ, 338), և այնպիսիք *նեղասրտին*, և *յարժամ տրտնջեն*, և զազատութիւն մտաց *ոչ գտանեն*, մինչև բոլորով սրտի վասն աստուծոյ *հպատակիցին* (ԹԳՅՆ, 29) ~ եւ այսպիսիք *տանջին*, և ընդ դոյզն իրաց *տրտնջին* : Եւ *չստանան* զազատութիւն մտաց, թէ ոչ ի բոլոր սրտէ վասն աստուծոյ *հնազանդեն* զանձինս (ԹԳՅՆ, 20) և այլն:

4. Լատինաբան ձևերի հետագա դրսևորումները

Լատինաբան հայերենը, որքան էլ արդյունք էր գրավոր լեզվի նկատմամբ արտաքին միջամտության, ժամանակի ընթացքում ստեղծել էր իր ավանդույթը: Մշակութային մի շարք կենտրոններում ինչ-որ չափով սովորական էր դարձել գրավոր խոսքում լեզվական այդ տարբերակին յուրահատուկ բառերի և ձևերի գործածությունը: Վերջինս երբեք չի ունեցել միևնույն տարածվածությունը (ինտենսիվությունը), որովհետև մշտապես անհարիր է եղել հին գրական հայերենի նորմային: Ուստի այդ նորմային հետամուտ գործիչների ջանքերի շնորհիվ է, որ լատինաբանությունը դադարում է գոյություն ունենալուց:

Այդուհանդերձ, լատինաբան որոշակի ձևեր հետազայում ևս գործածվում են: Այս երևույթին անդրադառնալը նույնպես կարևոր է հայոց լեզվի պատմության ամբողջական ուսումնասիրության տեսակետից: Նկատենք, որ հայոց լեզվի պատմությանը նվիրված տարբեր կարգի աշխատանքներում հեղինակները գտնում են, որ 18-րդ դ. 80-ական թթ. հետո լատինաբան հայերենի գործածությունը իսպառ վերանում է: Հ. Աճառյանը, օրինակ, նշում է, որ Վրթ. Ասկերյանի և Միք. Չամչյանի թարգմանական-բանասիրական, քերականական աշխատությունները գալիս են ազդարարելու այդ վերացումը: Նման տեսակետ հայտնել են ոչ միայն Աճառյանին նախորդած ուսումնասիրողները, այլև Աճառյանից հետո:

Այնինչ, 18-րդ դ. 80-ական և հետագա տարիներին երևան եկած մի շարք գրական աղբյուրների լեզվական մանրամասն քննությունից պարզվում է, որ լատինաբան հայերենը միանգամից չի վերանում, այլ շարունակվում է գործածվել, սակայն ոչ այն տարածվածությամբ և հետևողականությամբ: Այսպես, 1780–1790-ական թթ. տպագրված շուրջ ինը տասնյակ գրքերի մեջ (հմմտ. տիտղոսաթերթեր, առաջաբաններ, հիշատակարաններ և այլն) հանդիպում են լատինաբան հայերենին բնորոշ բառեր, բառաձևեր և քերականական կառույցներ: Այդ գործածությունն արդեն այն չէ, ինչ նկատվում էր նախորդ տասնամյակներում, նախկինում՝ առհասարակ:

Լեզվական այդ տարբերակը, թեև ոչ նախկին տարածվածությամբ, ավանդույթի ուժով շարունակում է գործածվել մշակութային այն կենտրոններում, որտեղ ծավալվելիս են եղել գիտական, կրթական, հրատարակչական լայն ձեռնարկումներ: Դատելով լույս տեսած գրականության ծավալից՝ այդ կենտրոններից առավել ակտիվ են եղել Կ. Պոլիսը, Նոր Նախիջևանը, Մաղրասը, Պետերբուրգը, Աստրախանը, Էջմիածինը, Վենետիկը և այլն: Այստեղ 1780–1790-ական թթ. տպագրված գրքերի լեզուն ինչ-ինչ հատկանիշներով շարունակում է տեղ տալ լատինաբանությանը:

Այդպիսի կիրառություններն, իբրև ինքնաբերական դրսևորումներ, հիմնականում մի քանի տեսակ են: Անդրադառնանք դրանցից հատկապես հետևյալներին:

ա) Լատինաբան հայերենին բնորոշ ձևերին տեղ են տրվում նաև այլ կրթական հաստատություններում լույս տեսնող գրքերում, այնպես որ տեղին չէ կարծել, թե միայն կաթոլիկական միջավայրում է գործածվել լատինաբան հայերենը¹:

¹ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 323:

Այսպես, Միսենոն Երևանցին 1750-ական թթ. ուսանել է Կ. Պոլսում, և նրա երկերում հանդիպում ենք լատինաբան մի շարք ձևերի: Օրինակ՝ ամենահայտնի երկում՝ «Ջամբո» աշխատության մեջ հեղինակն օգտագործել է բազմաթիվ դերանվանական, գոյականական և բայական ձևեր, որոնք լատինաբան կազմություններ են (հմմտ. *սոյնոյ, նոյնոյ, ներ ինքեան, ենթ անուան, իցէին, նարդեանս, նոյնով, գտանեցեայ, լինիցէր* և այլն)¹: Լատինաբան մման ձևեր կան նույն հեղինակի ձեռագիր «Քարոզգրքում»:

Այնուհետև, Մադրասում լույս տեսնող «Ազդարար» պարբերականի էջերում նույնպես հանդիպում ենք մման խորթությունների, որոնք ինքաբերական գործածություններ են (հմմտ. *ընթեռնանին, ճարտարագունեղ, նոյնոյ արարեցելոյ* և այլն)²:

բ) Լատինաբան ձևեր, որոնք տեղ են գտնում նախկինում լույս տեսած այս կամ այն աշխատության հետագա նույնական տպագրության բերումով: Այսպես, Բարսեղ (Հովով) Կոստանդնուպոլսեցու «Խորհրդատետր պատարագին Հայոց» երկում (1-ին տպ.՝ Հռոմ, 1677, հետագայում՝ Վենետիկ, 1741, 1809, 1827, 1874 և այլն) կիրառվելիս են եղել մման մի շարք ձևեր, որոնք անփոփոխ կերպով կան նաև հետագայում: Ավելին, Հ. Գաթրոճյանն իր «Հանգանակ հաւատոյ» (Վիեննա, 1891, էջ 43–47) գրքում առաջ է քաշում և հիմնավորում իր նախորդների կողմից լեզվական «ուղղումների», ինչպես նաև կատարվածի, այսպես կոչված, վերաուղղման «անհրաժեշտությունը»³:

գ) Փոխանցումներ, որոնք ներմուծվում են հայ հին գրավոր աղբյուրների մեջ՝ հատկապես դրանց այն տպագրության ժամանակ, երբ դրանց ձեռնամուխ են եղել լատինաբան գործիչները, և այդ ձևով լատինաբան շատ ձևեր անցել են հետագա տպագրություններին: Նկատված է, որ լատինաբանությունը երևան է գալիս ոչ միայն իր տեղում ու ժամանակին, այլև ազդում է նախկինից մեզ ավանդված գրական հուշարձանների լեզվի վրա՝ փոփոխություններ մտցնելով նրանցում, ըստ որում իբրև աղավաղություն հին՝ «հայկաբան» լեզվի: Այսպես, լատինաբան հեղինակներն «իրենց գրուածքը վնասելէն ի գատ՝ նաև հին ու նոր մատենագրութիւններու տպագրութեան մէջ իրենց ախորժանացը համաձայն

2 Ավելի մանրամասն տե՛ս *Միսենոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները* Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղալյանի, Երևան, 2003, էջ ԻԵ:

² «Ազդարար», թ. 1, էջ 42, թ. 8, էջ 162, թ. 9, էջ 222, թ. 18, էջ 67 և այլն:

³ Տե՛ս նաև Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 2, Երևան, 1976, էջ 1409: Ի դեպ, նախանցյալ դարի վերջին հայ բանասիրությունն այս հարցում ունեցել է ճիշտ մոտեցում՝ հիմնված գրավոր աղբյուրների վրա, որն այդպես էլ հետագայում անտեսվել է:

փոփոխություններ ընելովնին՝ ըսել կ'ըլլար որ չէ թէ ԺԳ–ԺԸ դարերու մինակ, հապա բոլորովին ազգային մատենագրությունը կ'աղաւաղէր»⁴:

Այսպես նաև Պորփյուրի «Ներածութիւն»-ը (թարգմ. Գավիթ Անհաղթ) տպագրվում է նաև Մադրասում (1793 թ.), և այդ տպագրության բնագրի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ այն լույս է ընծայված մի այնպիսի օրինակից, որում ակնհայտորեն տեղ են տրված լատինաբան (ոչ հունաբան, լատինաբանին անցած) ձևեր (հմմտ. *տպագրեցեալ, սրբագրեցեալ, իցէր* և այլն):

Այնուհետև, հարցի ճիշտ գնահատության տեսակետից կարևոր է նաև այն, թե ի՞նչ ճանապարհով էին նման ձևերը տեղ գտնում հին գրական հայերենով գրված կամ թարգմանված երկերում, ինչո՞վ է հիմնավորվում դրանց լատինաբան (ոչ թե՛ հունաբան) լինելը: Այս իրողության վրա լույս է սփռում, օրինակ, Մեսրոպ Ճանաչյանի նկատումն առ այն, որ Հակոբ Մծբնացու «Զգօն»-ից Ստ. Ռոշքան, այլև «Նոր հայկազյան բառարանը» առել են *լատրատել* (< լատ. *latrare* «հաչալ») բառը¹: «Հայկազյան բառարանի» առաջաբանում Մ. Ավգերյանը ժամանակին գրել է, որ «Զգօնի» այն հատվածը, որն ունի այդ բառը, հետագա հավելում պիտի եղած լինի²: Ուստի այդ հարցի վերջնական լուծումը կարող է լինել Մծբնացու երկի տվյալ հատվածի (գլուխ ԺԳ) մեկառմեկ ստուգումը և համեմատությունը մեզանում գոյություն ունեցող ձեռագրերի հիման վրա՝ ժամանակային հաջորդականության խստագույն պահպանումով:

դ) Հայտնի է, որ Ոսկ. Երևանցին տպագրել է «Աստվածաշունչ»-ը, կազմել է Թովմա Իտալացու քերականության թարգմանության հիման վրա մի համառոտ քերականություն³: Պարզվում է, որ Ոսկանը զգալի փոփոխություններ է կատարել Ս. Գրքի հայերեն բնագրի կառուցվածքի մեջ՝ համապատասխան Վուլգատայի⁴: Ավելին, բանասիրության մեջ նշվում է, որ այդ կարգի փոփոխություններն անցնում են հայերեն բնագրի հետագա մի քանի տպագրություններին (օրինակ՝ Պետրոս Լատինացու, տպ. Կ. Պոլիս, 1705–1707, Մխ. Սեբաստացու, տպ. Վենետիկ, 1733 և այլն), մինչև որ Զոհրապյանը և ավելի ուշ՝ Ա. Բագրատունին

⁴ «Երոպա», 1848, 8, էջ 32 և այլն:

¹ Տե՛ս Մ. *Ճանաչեան*, Ստեփանոս Ռոշքեանի բառարանը (քննական տեսութիւն մը). «Բազմավէպ», 1955, 8–9, էջ 190:

² Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»:

³ Հայ քերականության պատմության մեջ հարցի այս կողմին որևէ ուշադրություն չի դարձվել:

⁴ Տես Կ. *Ամասունի*, Ոսկան վարդապետ Երևանցին եւ իւր ժամանակը. «Բազմավէպ», 1974–1976 թթ. համարները: Մ. *Քոլանջյան*. Հեթում Բ-ի Աստվածաշունչը և Ոսկանյան հրատարակությունը. «Արարատ», 1966, 11–12, Զ. *Կորկոտյան*, Ն. *Ոսկանյան*, Հայերեն Աստվածաշունչի առաջին տպագրությունը և նրա տարբերակը. «Արարատ», 1966, 11–12:

(1805 և 1860 թթ.) «ձեռագրական բաղդատութիւններով յաջողեցան վերակազմել ոսկեդարեան բնագիրը»¹:

Ոսկանը միայն այդ գրքերում չէ, որ «նորամուծութիւններ» էր արել. կան նաև գրքեր, որոնք գերծ չեն մնացել, այլ ազդված են լատինաբան հայերենից. «Ոսկանի տպագրութեան այն անճշտութիւններն անցած են մեր ծիսական մատեաններէն Ճաշոցին ու Մաշտոցին մէջ, և այսպէս՝ աղաւաղ գրաբար մը ազդուած է Պատարագի եւ Ժամերգութեան ընթերցուածներուն մէջ, թէ Հին Կտակարանէն եւ թէ Նորէն, որոնք մինչև այսօր ալ կը շարունակեն մնալ այդ շատ տկար գրաբարով, ու շատ մը եկեղեցիներու բեմէն կարդացուիլ, հակառակ որ Աստուածաշունչի հարազատ բնագիրը՝ հարիւր եւ աւելի տարիներէ ի վեր հրատարակուած է» (ընդգծումներն մերն են – Վ. Հ.)²: Ավելացնենք նաև, որ ձեռագրական նոր հայտնաբերումներն ու ճշգրտումները նոր լույս են սփռում նման բնագրերի բնագրագիտական-լեզվագիտական խնդիրների վրա, առաջ քաշում դրանց լուծման նոր ուղիներ³:

ե) Լատինաբան ձևերի ինքնաբերական կիրառության մի տեսակն այն է, որ հետագա հեղինակներն իրենց բանասիրական աշխատանքներում տարբեր առիթներով (կրօնական-եկեղեցական խնդիրներ, դավանաբանական վեճեր, գիտական-լեզվական հարցեր և այլն) հարկադրված են լինում դիմելու լատինաբան հայերենով գրված բնագրերին, նույնիսկ մեջբերումներ անել դրանցից: Այսպէս, Հ. Գաթրոճյանը, խոսելով հայոց կաթողիկէ և առաքելական եկեղեցիների առնչությունների շուրջ, անդրադառնում է նաև Բարսեղ (Հոլով) Կոստանդնուպոլսեցուն և մեջբերում կատարում նրանից, որում և կիրառված են լատինաբան ձևեր (հմմտ. *համասերումն*, փխ. *ծաւալումն*, *ն'ամենայնում*, փխ. *յամենայնի*, *համագոյակից*, փխ. *էակից*, *գոյակից* կամ *բնակից* և այլն)⁴:

Այնուհետև, նույնալիսի ձևերի մասին Գաթրոճյանը խոսում է նաև «Պատարագամատույց»-ին անդրադառնալիս՝ նշելով, որ նրանում նույնպէս տեղ են գտել լատինաբան խորթություններ. հմմտ. *ծնեցեալ*, փխ. *ծնեալ*, *չարչարեցեալ*, փխ. *չարչարեալ*, *խաչեցեալ*, փխ. *խաչեալ*, *թաղեցեալ*, փխ. *թաղեալ*, *երանեցեալ*, փխ. *երանեալ*, *ոգի*, փխ. *հոգի* (իմա *հոգի* ~ լատ. anima, իսկ *ոգի* ~ լատ. spiritus) և

¹ Հ. Ն. Տէր-Ներսէսեան, Ոսկան վարդապետի քերականական ըմբռումները, «Բազմավէպ», 1966, էջ 320:

² Նույն տեղում, էջ 321:

³ Տես Գ. Արգարյան, Սիրաքի գրքի թարգմանության նորահայտ հատվածներ. «Էջմիածին» 1966, 11–12, էջ 59–70: Ս. Ճեմճեմեան, Ոսկանի Մաշտոցը. «Բազմավէպ», 1966, էջ 284–291:

⁴ Յովս. Գաթրոճեան, Հանգանակ հաւատոյ, Վիեննա, 1891, էջ 44:

այլն¹: Գաթրրճյանի դիտարկումը, որ վերաբերում է Բարսեղ Հովովին, ավելի է կոնկրետանում հետևյալ շարադրանքի մեջ. «այս ամենուն ներքե ծածուկ սխալ կամ մոլորութեան գոնէ նշոյլ մը տեսնել կարծած կամ կասկածած է Բարսեղ՝ յաճախ հայերէնը պարզապէս չհասկընալով: Եւ այսպիսի անձ մ'եղած է դժբախտաբար սրբագրիչ մեր եկեղեցական գրքերուն ամենէն կարեւորին»²:

Արիստ. Վարդանյանն իր «Բառաքնական դիտողութիւններ» գրքում խոսում է հայկական բնագրերում (օրինակ՝ Բարսեղ Կեսարացի, Բուզանդ, Կիրեղ Աղեքսանդրացի, հատկապէս՝ Հակոբ Մծբնացու «Զգօն» և այլն) բացի ստորադասական եղանակի անցյալ անկատարի (հմմտ. *գրիցէի, գրիցէիր, գրիցէր* և այլն) ձևերից «յետսամուտ» մի շարք այլ ձևերի մասին: Ընդ որում անհամեմատ շատ են «Զգօն»-ի բնագրում եղածները, որոնց վրա ժամանակին «զարմացած էր» Ա. Այտընյանը, այլև դրանք ժամանակին ուղղել է Նորայր Բյուզանդացին (օրինակ՝ Բարսեղ Կեսարացու բնագրի մեջ)³: Արիստ. Վարդանյանը գրում է հետևյալը. «Յունաբանութեան ազդեցութեամբ՝ Նիսացոյ, Կիրեղ Աղեքսանդրացոյ, Իսիքոսի և այլն գործոց մէջ գործածուած է տեղ տեղ բայիս այս եղանակը (Բագրատունի, Չարգ. Քերակ., էջ 195, եւ Նորայր, Բառաքնութիւն, էջ 62–63) առանց սակայն տեսական արմատ ձգելու: Զգօնի աղաւաղումները կը պարտինք ըստ իս ունիտորական հոսանքին հայ լեզուի վրայ բանեցուած ազդեցութեան»⁴:

Այս դիտողությունը ճիշտ է և ընդունելի, որովհետև՝ ա) այն հունաբանությունն չէ, քանի որ հունարենի ազդեցությամբ հնում չունեինք ստորադասականի մեջ առանձնացվող հատուկ ձևեր, բ) բայական այդ ժամանակը չէր բաղադրվում հիշյալ ձևերով (իմա՝ *գրիցէի* և այլն), գ) դա զուտ լատինաբան քերականական երևույթ է, որ բաղադրված է բայի ստորադասական եղանակի գործնական (պրակտիկ) հիմքից (այն է՝ *գր-ից-* և այլն), այսինքն՝ վերջին ժամանակների կազմություն է:

Նկատենք, որ լատիներենի օրինակով կազմված ձևերի տարբեր գործածությունների մասին որոշակի դիտողություններ ունեն նաև հետագա ուսումնասիրողները¹:

¹ Յովս., *Գաթրրճեան*, Սրբազան Պատարագամատոյց Հայոց, Վիեննա, 1897, էջ 608–609:

² Նույն տեղում, էջ 609: Հմմտ. Sulle Correzione fatte ai libri ecclesiastici Armeni nell'anno 1677. Opera postuma del P. Gabriele Dott. Avedichian, Venezia, 1868, էջ . 52–118, 263–424:

³ Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի. Նախաշաղիղ, էջ 100:

⁴ Ա. Վարդանեան, Բառաքնական դիտողութիւններ, Վիեննա, 1913, էջ 44–47:

¹ Հմմտ. Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 194: Ն. Բիւզանդացի, Հայկական բառաքնութիւն: Ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց, Կ. Պոլիս, 1880, էջ 62–63:

Ըստ այսմ ստորև անդրադառնալու ենք լեզվական այն ձևերին, որոնք գործածվել են 1780-ական թթ. հետո և ավելի ուշ լույս տեսած գրական հուշարձաններում՝ հետևյալ կետերի մեջ:

1. Գոյականի կամ այլ խոսքի մասի պատկանող բառերի թվի և հոլովման հետ կապված փոփոխությունների շարունակական գործածություն, ընդ որում թվի քերականական կարգի արտահայտմանը վերաբերող այնպիսի երևույթներ, ինչպիսին են անեզական բառերի եզականացումը, անեզական բառի դիտելը որպես սովորական գոյական՝ գործածված եզակի թվի իմաստով (հմմտ. *գիրք* «գրքեր» և *գիրք* «մեկ գիրք»): Հաճախ հանդիպում են անեզական բառերի հոլովումը եզականաձև (հմմտ. *գրքոյ, գրքոյն*), այլև անեզականի կամ հիմքով կազմված ածանցավոր բառ (հմմտ. *գրքուկ*) և այլն:

Օրինակ՝ «Եւ արտահանեցեալ ի Գանձ Արամեան կոչեցեալ *գրքոյն*» (ԴՎԵՀ, 2): «Աղերսենք յիշել գտպագրող սուրբ *գրքոյս*» (Ժամ., 2): «Որ ըստ խնդրոյ մերոյ զգաղափարն *գրգուկիս* այսորիկ ուղղեալ ի սխալմանց» (ՀՎՄԴ, 176): «Ի հանդիպիլն ձեր սոյնոյ *գրքկանս*՝ յիշեսջիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս» (ՊԿՓ, 328) և այլն:

2. Ներգոյական հոլովի կազմության դեպքում ևս երևան եկած լատինաբան ձևերը շարունակվում են գործածվել հետագայում, ընդ որում ոչ միայն *ըն* (*ն*) նախդիրների և նախդրառու ձևի *-ում*, *-ոջ* վերջավորություն ունենալը, այլ նաև *ներ*, *ենք* նախդիրների հետ գործածված լինելը: Ավելին, երբեմն նման կազմությունները երկրորդաբար ստանում են նաև *ի* նախդիր (հմմտ. *ի նարդենիս, ի նորում* «որ դերանվան ներգոյականը»):

Օրինակ՝ «Զի մնասցէ այն միշտ *ներ տպարանիս*՝ իբրև մայր առաջին» (Ժամ., 577, այլև Սաղմ., 380): «Տպեալ... *ի ներ* մայր *դպրատանս* Հայոց» (ՊԿՅՔ, 1): «Որ է հայոցս՝ *ի ներ թուին* քսան և չորք յոբելինին» (ՅԹԵ, 4): «Ներ յարեթագնեայցս *թուականում* ՌՄԽԳ» (ՍՁՏ, 276): «Բայց *նարդենիս* միայն զՄատրասու և զՍուրաթու մեծահարուստ ժողովրդան զբարեհոշակ անուանսն առ ձեռն ունելով» (ՖՊԹ, 368): «Յամի *ներմարմնութեան Տեսուն* 1794 և մերոյ ՌՄԽԳ» (ԳԳՆ, 1) և այլն:

3. Դերանվան լատինատիպ ձևերի շարունակական գործածություն, հատկապես թեք հոլովով դրված. բավականին շատ են նոյն դերանվան սեռական-տրականի ձևերը (հմմտ. *նոյնոյ*, փխ. *նորին* կամ *նմին*):

Օրինակ՝ «Ծայրաքաղ անցքն *նոյնոյ* ամսոյ, եթէ ի զանազան կազեթաց, եթէ զանազան քարտիզաց» (Ազդ., 1): «Տկարացաւ ջանն իմ՝ ի գտանել զիսկական անուն՝ *նոյնոյ* լատինական բառին ի մեր կամ յայլ լեզու, և պարզապէս

բացայայտել զընդ *նոյնով* անուամբ եղեալ զիրին» (ՊԶԲ, 86): «Ի հանդիպիլն ձեր *սոյնոյ* գրքկանս՝ յիշեսջիք ի Քրիստոս» (ՊԿՓ, 328, այլև ՊՊԲ, 222): «և զառաջնահնար բազմաշխատ տգնութեամբ առձեռն բերօղն *սոյնոյ* տպարանիս» (ՆՇԸ, 324, 325): «Ի հանդիպիլն ձեր *սոյնոյ* գրքկանս յիշեսջիք ի Քրիստոս յոյսն մեր բնաւիցս» (ԳԱ, 476): «Արարեալ *նոյնոյ* Իսահակայ մեծի հայոց հայրապետի» (Ժամ., 2) և այլն:

Նման միօրինակ ձևերի գործածությունը, հավանաբար, սովորովի լեզվի մի յուրահատկություն է, երբ գրական աղբյուրների տևական ընթերցանությունն ու յուրացումն իրենց կնիքն են դնում, և արդյունքում՝ ունենում ենք նման պատրաստի ձևերի ինքնաբերական դրսևորում՝ հետագա ուսյալների գրավոր խոսքում:

4. Քիչ չեն դեպքերը, որոնցում ածականի գերադրական աստիճանի ձևն է գործածվում՝ իբրև պատրաստի միավոր ավելի ընդգծված հատկանիշ ցույց տալու համար: Դրանք բաղադրված են ոչ միայն *–գունեղ* ածանցով, այլև ածականի կրկնությամբ՝ իբրև առավելականի արտահայտիչ: Օրինակ՝ «Արարեալ *սրբազնասուրբ* հայրապետին մերոյ՝ Տեառն Ներսեսի Շնորհալոյ» (ՆՇԸ, 1): «Տեառն Դուկասու երիցս երանեալ *սրբազնասուրբ* կաթողիկոսն ամենայն Հայոց» (ն. տ.): «Տպագրեցեալ հրամանաւ սանահնեցի Երկայնաբազուկ Արդութեանց՝ իշխանագնեայ տեառն Յովսեփայ *սրբազնագունեղ* արքեպիսկոպոսի» (ն. տ. 2) և այլն:

5. Բայի անցյալ դերբայի կազմության ժամանակ ավելորդ գոյականության դրսևորումը տարածված էր թե լատինաբանության տարբեր փուլերում և թե հետագայում, երբ լատինաբանությունը լիովին հաղթահարված էր: Հետագա գրական հուշարձաններում ևս *–եցեալ* տիպի բաղադրիչով կազմությունները գործածվում են մեծ հաճախականությամբ:

Օրինակ՝ «Շարադրեցեալ հաւաքմամբ ի թուականի մերոյ ՌՃԴԹ: Եւ *տպագրեցեալ* ի վեհապետութեան տեառն Սիմեօնի սրբազնակատար կաթողիկոսի և ինքնակալ քահանայապետի ամենայն Հայոց» (ՄՍԳԿ, 2): «Նորապէս *թարգանեցեալ* հոգաբարձութեամբ ի Ճամճի որդի տիրացոյ Յակոբէ» (ԳՅ, 1): «Յիշատակարան տպագրչիս, սակս ձրի *բաշխեցեալ* սուրբ մատենիս» (ՅԱՄ, 215): «ըստ որում մի առ մի հետևին ընդ այսու առ *նշանեցեալ* կարգաւ» (ԱԿՊ, 3): «Որ միշտ անձնաձիր տքնութեամբ որոնեն գտանել զգիրս հնագոյնս արարեցեալս ի նախնի հարցն մերոց» (Ժամ., 577), «Յօրինեցեալ և *կարգադրեցեալ* հանդերձ րոպքն քաղուածովք՝ ըստ պատշաճի ատուրն» (Շար., 2) և այլն:

Այսպիսի կազմությամբ ձևերն այնքան տարածված են, որ մեկընդմիջա կարելի է սահմանել, որ հետագա շրջանի տպագրված գրքերի առաջաբաններում, հիշատակարաններում և բովանդակության ցանկերում գրեթե անխտիր գործածվում են նման բայաձևերը¹:

6. Հանդիպում են ստորադասական եղանակի ապառնի անցյալ ժամանակի ձևեր, որոնք ակնհայտորեն կազմված են լատիներենի նույն ժամանակաձևի նմանությամբ (հմմտ. *բերիցէի, գնայցէր*):

Օրինակ՝ «Վասն որոյ զամենայն զբարութիւնս զայսոսիկ տեսեալ իմ ոչ խնայեցի զվշտակրութիւնս. ուստի նախապէս հարկաւորեցայ օրինակաց, զի *իցէր* յըստակ (փխ. առանց *ը* -ի. Վ. Հ.) գտեալ և զատեալ յամենայն սխալանաց» (ՊՆ, 404): «Ձի փորագրեալ *տայցէր* ինձ գտառս հայկականս» (Ժամ., 572): «Եւ ի միջի յազգին մերոյ ոչ որ գտաք, զի *ունիցէր* զշնոր (փխ. *h* –ով. Վ. Հ.) շարայարելոյ և տպելոյ զգրքոյկս զայս» (ՀՊՎ, 180) և այլն:

7. Քիչ չեն դեպքերը, երբ *ե* խոնարհման բայերի կրավորաձև եզակի երրորդ դեմքում –*հւր* վերջավորություն ունեցողները շարունակաբար երևան են գալիս նաև հետագա գրավոր աղբյուրներում (հմմտ. *գրէի, գրէիր, գրիւր*, այլև *գրիցէի, գրիցէիր, գրիցիւր*)¹:

Օրինակ՝ «բայց երկարութեամբ միջոցին որպէս թէ էր անհետացեալ, որոց զմին չեղաւ իսկ տեսանել, թէ և ի տեսողաց *լինիւր* լսել» (ԱԶԱՎ, 4): «Մանաւանդ Նորոյն Զուղայու, մեծի մասին՝ ի հնդիկս պանդխտութեամբ ժամանելոցն ի միջի և սոյն անձնս երանելի՝ *գտանիւր*» (ՆՇԸ, 32) և այլն:

8. Լատինաբանության հաղթահարումից հետո ևս շարունակվում են մի շարք նոր բառեր կազմվել, որոնց բաղադրական հիմքերն ունեն լատինատիպ ձևավորում՝ կապված նախածանցման (հմմտ. *ներտրամադրեալ, նախագրեցեալ, արտահանեցեալ* և այլն), թերևս նաև բառաբարդման (հմմտ. *մրազարկութիւն, սրբագրեցեալ, տպագրարան* և այլն), վերջածանցման (հմմտ. *նորայօրէն*) հետ:

Նման կազմություններն ավելի ուշ երևան եկած գրավոր աղբյուրներում իսպառ վերանում են, ուստի պետք է մտածել, որ լատինատիպ ազդեցությունը բուռն հաղթահարումից հետո երբեմն տեղ է գտնում մեկ-երկու տասնամյակի ընթացքում և նոր դարաշրջանի սկզբներին այն այլևս գոյություն չունի:

¹ Տե՛ս Ն. Ոսկանյան, Զ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Հայ գիրքը 1512–1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988, էջ 518–795:

¹ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 320:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

1. Համառոտագրություններ

- ԱԳՓ, I - Անտոն Գովդին, Փիլիսոփայություն, հ. Ա, Վենետիկ, 1750:
- ԱԴԲ - Արսէն Դպիր, Գիրք սահմանաց, Կ. Պոլիս, 1749:
- Ազդ. - «Ազդարար» (ամսագիր), Մադրաս, 1795:
- ԱԿՅԱ - Աղեքսանդրոս Կրօնատուր, Յարացոյց ապաշխարողաց, թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Վենետիկ, 1731:
- ԱՄԴ-Հ - Գիրք Ալպերտի որ կոչի Գրախտ հոգոյ, թարգմ. Մխիթարայ Սեբաստացոյ և Յոհանիսի՝ իւրոյ քաղաքացոյ, Վենետիկ, 1729:
- ԱՄՀԱ - Համառոտություն աստուածաբանութեան Մեծի Ալպերտի, ի լոյս ածեալ Մխիթարայ Սեբաստացոյ Վենետիկ, 1715:
- ԱՊԶ - տե՛ս ԱՊԶՎ:
- ԱՊԶՎ - Առաւել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան Հռոմ, 1630:
- ԱԶԱՎ - Աղեքսանդր Զուղայեցի, Գիրք որ կոչի Ատենական վիճաբանութիւն, Կ. Պոլիս, 1783:
- ԱՏՀ - Տեղագիր Հայոց Մեծաց, Ղեւոնդ Ալիշանեան, Վենետիկ, 1855:
- ԱՓ - Արիեստ փրկութեան, Վենետիկ, 1760:
- ԲԻ - Մատթէոս Վանանդեցի եւ Դուկաս Վանանդեցի, Բնաբանութիւն իմաստասիրական, հհ. 1-2, Ամստերդամ, 1702:
- ԲՃԳ - Ճեմարան գիտելեաց, ի Մինաս Բժշկեան, Վենետիկ, 1815:
- ԲՃՀ - Բարսեղ վարդապետ (Ճոն), «Յառաջարան» «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին» գրքի (1825 թ.):
- ԲԶ - Բարդուղիմէոս Մարաղացի, Քարոզգիրք: Տե՛ս ՄՄՁ, 5097 (Ժող., 14-րդ դ.):
- ԳԱ - Գործք առաքելոց, Կ. Պոլիս, 1788:
- ԳԱ, I - Պետրոս Արագոնացի, Գիրք առաքիւնութեանց, Վենետիկ, 1721:
- ԳԱ, II - Պետրոս Արագոնացի, Գիրք առաքիւնութեանց, Վենետիկ, 1772:
- ԳԱԱ - տե՛ս ԳԱԱ, II:
- ԳԱԱ, I - Գիրք առասպելաբանութեանց, որ ասի Ադուէսագիրք, Ամստերդամ, 1668 (վերահրատ., Մարսել, 1683):
- ԳԱԱ, II - Գիրք աշխարհաց եւ առասպելաբանութեանց, որ է Ադուէսագիրք, Մարսել, 1683:

- ԳԱԼ - Գալուստ Ամասիացի, Գիրք որ կոչի Լուսաշալիղ, Կ. Պոլիս, 1704:
- ԳԳՆ - Գրքոյկ որ կոչի նուագարան, արտահանեցեալ ի կեսարացի
Գապասաքալեան Գրիգոր դպրէ, Կ. Պոլիս, 1794:
- ԳԵ - Բասին Յովհաննէս, Գոթողիա եղերերգութիւն, թարգմանեաց ի գաղ-
ղիականէ Սարգիս Տիգրանեան Նախիջևանցի, Մոսկուայ, 1834:
- ԳԺ - Գիրք ժամակարգութեան որ կոչի Ատենի: Կարգաւորութիւն հասա-
րակաց աղօթից եկեղեցեաց Հայաստանեայց, Մարսել, 1673:
- ԳԼՀ - Փոխանակ՝ ԳՎՀ - Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց հայկազու-
նեաց բարեսիրաց, Մարսել, 1675:
- ԳԽ - Գիրք խոստովանութեան, Կ. Պոլիս, 1698:
- ԳՄ - տե՛ս ԳՄ, I կամ ԳՄ, II:
- ԳՄ, I - Պետրոս Արագոնացի, Գիրք մոլութեանց, Վենետիկ, 1720:
- ԳՄ, II - Պետրոս Արագոնացի, Գիրք մոլութեանց, Վենետիկ, 1773:
- ԳՄԱ - Գիրք մտածական աղօթից, թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Կ. Պոլիս,
1701:
- ԳՄԱ, I - Գիրք մտածական աղօթից, թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի,
Մարսել, 1708:
- ԳՄԳՎ - Գեորգ Միլայիմ, Գիրք վիճաբանութեան, Կ. Պոլիս, 1734:
- ԳՄՀ - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ
մեծի սուրբ եկեղեցոյն Հռոմայ, հհ. 1-2, Հռոմ, 1650-1658:
- ԳՄՀ, I - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ
մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հ. 1, Հռոմ, 1650:
- ԳՄՀ, II - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ
մեծի սուրբ եկեղեցոյն Հռոմայ, հ. 2, Հռոմ, 1658:
- ԳՄՀ, IIա - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ
մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հ. 2, մաս Ա, Հռոմ, 1658:
- ԳՄՀ, IIբ - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ
մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, հ. 2, մաս Բ, Հռոմ, 1661:
- ԳՄՅՅ - Գիրք մեկնութեան յայտնութեան սրբոյ Յօհաննու Աւետարանչի,
թարգմ. Պետր. Թիֆլիսեցի, Կ. Պոլիս, 1700-1701:
- ԳՄՏ - Գրիգոր Մարգվանեցի, Տետրակ որ կոչի Պտուղ զրաջանութեան,
Կ. Պոլիս, 1733:
- ԳՊՓ - Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի, և կնոջն և որդոյն
Գիոկղետիանոսի և յեթեանց իմաստասիրաց, Յալիկօռնայ, 1696:
- ԳՎՀ - Գիրք վայելուչ եւ հարկաւոր հանուրց հայկազունեաց բարեսիրաց,

- Մարտել, 1675:
- ԳՏՊ, I - Տիեզերական պատմություն, աշխատ. Յովսեփայ Գաթրրճեան, հ. Բ, Վիեննա, 1849:
- ԳԶԶ - Դաւիթ Զէյթունցի, Մեկնութիւն քերականի, աշխատասիրությամբ Ե. Կ. Մելքոնյանի, Երևան, 1981:
- ԳԹ - Թուղթ սիրոյ եւ միաբանութեան (իմա՛ Դաշանց թուղթ), Վենետիկ, 1683:
- ԳՀԵՀ - Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց (հայ և լատ. լ եզ.), Լոնդոն, 1780:
- ԳՀՈՒՃ - Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ (հայ. և լատ. լեզ.), Հռոմ, 1642:
- ԵՄՁ, 789 - Երուսաղեմի Մատենադարանի ձեռագիր:
- ԵՆԴԽ - Դաւանութիւն եւ խոստովանութիւն ի Սուրբ երրորդութիւն, ասացեալ Եսայի վարդապետի (ՄՄՁ, 614, էջ 29ա - 33ա):
- ԷՀԱԲ - Էդուարդ Հիրմիւզեան, Առձեռն բանաստեղծութիւն, Վենետիկ, 1838:
- ԹԱԽ - Թոմա Ակոլինացի, Խոստովանարան, թարգմ. Պետրոս Մուհուպեան, Վենետիկ, 1727:
- ԹԳՅՀ - Գիրք Թօմայի Գեմբացոյ Յաղագս համահետևանն, Հռոմ, 1674: (5-րդ տպագր. Մխ. Մեքաստացու. իմա՛ ՄՍՏ):
- ԹԳՅՀ, VI - Թոմա Գեմբացի, Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի, թարգմ. Վրթ. Ասկեարան, Վենետիկ, 1786:
- ԹԳՅՆ - Թոմա Գեմբացի, Յաղագս նմանող լինելոյ Քրիստոսի: Տե՛ս ԹԳՅՀ, VI:
- ԹԴԾ - Դաշտիկ ծաղկալի, թարգմ. և կազմ. Յովնան Թոխաթեցի, Վենետիկ, 1727:
- ԹԻԲ - Էմմանուել Թեսաւրոս, Իմաստասիրութիւն բարոյական, թարգմ. Վրթ. Ասկերեան, Վեն. 1793:
- ԹԽ - Խօսակցութիւն Թեոփիլոսի յաղագս ճշմարտութեան, Լիվոռնո, 1701:
- ԹՊ - Պատմագիրք հոգւոյ հաւատացեալ, թարգմ. Յովհ. Թոխաթեցի, Վենետիկ, 1724:
- ԹՄՄ - Թուղթ սիրոյ եւ միաբանութեան (իմա՛ Դաշանց թուղթ), Վենետիկ, 1695:
- Ժամ. - Ժամագիրք, Կ. Պոլիս, 1786, Մաղրաս, 1791 և այլն:
- ԽԷՀԻ - Խաչատուր Էրզրումեցի, Համառօտական իմաստասիրութիւն, հհ. Ա-Բ, Վենետիկ, 1711:

- ԽԷՀՄ - Խաչատուր Էրզրումեցի, Համառօտ մեկնութիւն երգոյն երգոցն, Կ. Պոլիս, 1700:
- ԽԷՃ - Խաչատուր Էրզրումեցի, Ճարտասանութիւն, Վենետիկ, 1712:
- ԽԷՄ - Տե՛ս ԽԷՀՄ:
- ԽԷՆ - Խաչատուր Էրզրումեցի, Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն, թարգմ. Մարիամ Գարագաշեան, Վենետիկ, 1733:
- ԽԷՔ - Խաչատուր Էրզրումեցի, Գիրք քերականութեան, Լիվոռնո, 1696:
- ԽՔ, I - Դոմինիկոս Բահուրսեան, Խոկմունք քրիստոնէականք, Կ. Պոլիս, 1687:
- ԽՔ, II - Դոմինիկոս Բոհուրսեան, Խոկմունք քրիստոնէականք, Վենետիկ, 1771:
- ԿԳԲ - Կղեմես Գալանոսի բառարան: Տե՛ս ԿԳՔ:
- ԿԳՔ - Կղեմես Գալանոս, Քերական եւ տրամաբանական ներածութիւն, Հռոմ, 1645:
- ԿԳՏ - Տե՛ս ԿԳՔ:
- ՀԿՀՃ - Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Համառօտութիւն ճարտասանականի արհեստի, Մարսիլիա, 1674:
- ՀՇԳԱ - Գիրք աղօթից որ կոչի Հաց նեղելոց, շարադրեցեալ ի Յակոբայ Շամախեցոյ, Կ. Պոլիս, 1760:
- ՀՊԹ - Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն հ. Սկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1842:
- ՀՊՎ - Հանուէ. Պատմագրութիւն վարուցն եւ գործոց Նադրը Շահ թագաւորին Պարսից, Մադրաս, 1780-1783:
- ՀՎՄԴ - Յակոբ Վիլլոտ, Մեկնութիւն դասանութեան հաւատոյ, Հռոմ, 1711:
- ՀՎՊ - Յակոբ Վիլլոտ, Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թագաւորաց հայոց, Վենետիկ, 1713:
- ՂԱԱ - Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, տեղագր. Ղեւոնդ Ալիշան, Վենետիկ, 1890:
- ՂՋԳԱ - Տե՛ս ՋԳՅ:
- ՄԵՀ - Հիւսակ բարեբանութեանց, ի Մատթէոսէ Եւրոկիացոյ, Վենետիկ, 1775:
- ՄԹՃՀ - Ճանապարհորդութիւն Մետրովբայ Թադիադեանց ի Հայս, հ. 1, Կակկաթա, 1847:
- ՄԽՎ - Տե՛ս ՄԽՎ:
- ՄՄՁ, 46 - Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց (թարգմ. Յովհ.

Քոնեցի, 1339 թ.):

- ՄՄՁ, 69 - Բարթողիմեոս Մարաղացի, Համառոտ հաւարումն ... ի ղիալէթիկէն (Ժողովածու, Ճահուկ, 1401 թ.):
- ՄՄՁ, 119 - Նիկողայոս Լիւրացի, Յաղագս սրբոյ երրորդութեան (Ժողովածու, Էջմիածին, 1744 թ., էջ 76ա-83բ):
- ՄՄՁ, 207 - Աստուծաշունչ, Վարագ-Աղթամար, 1421-1422 թթ.:
- ՄՄՁ, 230 - Մասունք Աստուածաշնչի, այլև Բանք իմաստնոց (Ժողովածու, ԺԴ դ.):
- ՄՄՁ, 274 - Աւետարան (ԺԵ դ., Կ, Պօլի^օս):
- ՄՄՁ, 614 - Եսայի Նչեցոյ Դաւանութիւն եւ խոստովանութիւն (էջ 29ա-33ա): Տե՛ս նաև ԵՆԴԽ:
- ՄՄՁ, 672 - Պօղոս Նախիջեանցի, Առ Շահապաս Պարսից թագաւորն (1667 թ., էջ 5ա - 92ա. հմմտ. ՄՄՁ, 8377, այլև 9992):
- ՄՄՁ, 724 - Ժողովածու (1736 թ., Երուսաղեմ):
- ՄՄՁ, 725 - Ալբերտ Մեծ, Համառոտ հաւարումն աստուածաբանական ճշմարտութեան, թարգմ. Պետր. Արագոնացի և Հակ. Քոնեցի (Ժող., 14-րդ դ.):
- ՄՄՁ, 873 - Ջիլբերթոսի Պօռետացոյ Վեցից սկզբանց գիրք, թարգմ. Ոսկան Երևանցի (Ժող. 1792 թ. էջ 255ա-270բ):
- ՄՄՁ, 879 - Միսիթար Սեբաստացի, Ճարտասանութիւն (Ժող., 1760-1761 թթ., Հաշտարխան):
- ՄՄՁ, 1046 - Մաշտոց (ԺԵ, ԺԷ դդ.):
- ՄՄՁ, 1646 - Ջիլբերթոս Պօռետացի, Վեցից սկզբանց գիրք, թարգմ. Պետրոս Արագոնացի և Հակ. Քոնեցի (Ժող., 14-րդ դ., էջ 87ա - 95ա):
- ՄՄՁ, 2037 - Բեդա քահանա, Գիրք կայծականց, հաւաքեալ ի զանազան պատմութեանց, թարգմ. Թովմ. Ջահկեցի, 1356 - 1358 թթ.:
- ՄՄՁ, 2274 - Քերականութիւն Թովմայի Իտալացոյ (Ժող., 1658 - 1662 թթ.):
- ՄՄՁ, 2275 - Թումա Իտալացի, Քերականութիւն (Ժող., 17-րդ դ.): Բարթողիմեոս Մարաղացի, Համառոտ հաւարումն ... ի ղիալէթիկէն, որ Տրամաբանութիւն:
- ՄՄՁ, 2301 - Սիմէոն Ջուղայեցի, Քերականութիւն (Ժող., 1699 թ., Համատան):
- ՄՄՁ, 3475 - Թովմա Աբուինացի, Հաւարումն աստուածաբանութեան. Նույնի՝ Յաղագս զօղուածոց (Ժող., 1625 թ.):
- ՄՄՁ, 3640 - Ալբերտ Մեծ, Համառոտ հաւարումն աստուածաբանական ճշմարտութեան. Բարթողիմեոս Մարաղացի, Գիրք ի վերայ երկուց բնու-

- թեանց (Ժող., 14-րդ դ., գրիչ Ֆրա Մատթեոս):
- ՄՄՁ, 3881 - Ժողովածու (1886 - 1888 թթ., Գտչայ վանք):
- ՄՄՁ, 5097 - Բարթուղիմէոս Մարաղացի, Գիրք դժիխոց (նաև Քարոզգիրք. քարզմ. Յովհ. Քոնեցի, 1329 թ.):
- ՄՄՁ, 5657 - Տե՛ս ՄՆՊԼ:
- ՄՄՁ, 5808 - Վ. Յունանեան, Յաղագս կարգաց եւ աստիճանաց եկեղեցոյ, էջ 1ա - 13բ. Նույնի՝ Վասն պէս պէս իրաց եւ գիտութեան. էջ 14ա - 61բ և այլն :
- ՄՄՁ, 5898 - Սիմէոն Երևանցի, Քարոզգիրք (1779 թ., Հրեշտակապետաց վանք):
- ՄՄՁ, 5909 - Մաշտոց (1626, այլև 1651 - 1652 թթ., Չամօսցայ քաղաք):
- ՄՄՁ, 6562 - Վ. Յունանեան, Յաղագս կարգաց, էջ 35ա-41ա. Յովհաննէս Հոյով, Պատասխանատրութիւնք թղթոց, էջ 41ա-42բ. Նույնի՝ Քարոզ, էջ 42բ-45բ և այլն:
- ՄՄՁ, 6922 - Աղէքսանդրոս, Հեծումն տառապեալ սրտի (ԺԸ դ.):
- ՄՄՁ, 7554 - Պատմութիւն անապատին Սևանայ (1830, այլև 1862, 1870 թթ., Սևան):
- ՄՄՁ, 7560 - Բառգիրք հայերէն-լատիներէն, Մաղրաս, 1756:
- ՄՄՁ, 9068 - Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան Ալբերտի Մեծի:
- ՄՄՁ, 9622 - Սահմանադրութիւն Ատանոյ ժողովոյն, էջ 126 - 130 (Ժող., 1858 թ., Երուսաղէմ):
- ՄՄՅ - Յիշատակարան Լազարեան տոհմի, շարագր. ի Մսերայ Մսերեանց, Մոսկուայ, 1856:
- ՄՆ - Մեկնութիւն ներողութեանց, Ալիկօռնայ, 1701:
- ՄՆՊԼ - Պատասխանի լատինացոց թխտոյն ի Սկրտիչ Նկարագրէ. տե՛ս ՄՄՁ, 5657 (Ժող., 15-րդ դ., էջ 143ա - 151ա):
- ՄՀԽ - Մարկեղոս Պալերմացի, Խոստովանարան կամ ամբաստանարան, Լիվոռնո, 1669:
- ՄՊԿ - Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, գրեալ ի Մսերայ Մսերեանց, Մոսկուայ, 1876:
- ՄՍԱ - Աստուածաշունչ գիրք Հնոց եւ Նորոց Կտակարանաց, հրատ. Մխ. Մեքաստացի, Վենետիկ, 1733 (տպագր. ավարտ՝ 1735):
- ՄՍԳԿ - Մանուէլ Սրմաքէշ Կեսարեան, Գաւազան կրկնագօր, Կ. Պօլիս, 1780:
- ՄՍԼ - Լուծմունք բանից Ալպերտին, շարադր. ի Մխ. Մեքաստացոյ,

Վենետիկ, 1715:

- ՄՍԼՏ - Գիրք որ կոչի Լուծիչ տարակուսանաց, շարադր. ի Սրմաբէշ Մանուէլէ Կոստանդնուպօլսեցոյ, Կ. Պոլիս, 1755:
- ՄՍԿԱ - Մխիթար Սեբաստացի, Կրթութիւն աղօթից, Վենետիկ, 1718:
- ՄՍՏ - Մխիթար Սեբաստացի, Տօմար կարճառօտ, Վենետիկ, 1786:
- ՄՍՔ - Մխիթար Սեբաստացի, Քերականութիւն գրաբառի լեզուի հայկազան սեռի, Վենետիկ, 1730:
- ՄՎՊՀ - Պարտեզ հոգեւոր, թարգմ. Յովհ. Կոստանդնուպօլսեցոյ, տպագր. Մատթեոսի Վանանդեցոյ, Մարսիլիա, 1683-1684 թթ.:
- ՄՔԽԶ - Յովհաննէս Քարմելիտական, Խթան զղջման, թարգմ. Պետրոս Մուհուպեան, Վենետիկ, 1727: Նույնն է՝ Մարիամ Քարմելիտական:
- ՄՖՄԱ - Միքայէլ Ֆերուրեան, Մանաւանդականք առաքինութիւնք, Հռոմ, 1681:
- ՅԱ - Թովմաս Վանանդեցի, Յոգնադիմի աստուածաբանական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց սահմանք, Ամստերդամ, 1704:
- ՅԱՄ - Յովհաննէս Արճիշեցի, Մեկնութիւն Սուրբ Պատարագին, Կ. Պոլիս, 1799:
- JGA - Puritas haygica seu grammatica armenica, a Joanne Agop sagerdote armeno, Roma, 1675:
- ՅԹԲ - Գրքոյկ երկրաչափական, արարեալ և շարադրեալ ի Յակոբայ Յարութիւնեան Թաղեանի Չողայեցոյ, Մադրաս, 1792:
- ՅԼՅ - Յիշատակարան Յովհաննու Յովակիմեան Լազարեաց, Մոսկուայ, 1859:
- ՅԾՔ - Յովհաննէս Ծործորեցի, Համառօտ տեսութիւն քերականի, աշխատ. Լ. Խաչերեանի, Լոս-Անճելես, 1984:
- ՅԿԽԶ - Յովհաննէս Կարմելիտական Բոքիկ, Խթան Չղջման, թարգմ. Պետր. Մուհուպեան, Վենետիկ, 1727:
- ՅԿԽՀ - Թարգմանութիւն իտալական սրբազանի խորհրդատետերն հայոց, շարադրեցեալ ի Յոհ. Կոստանդնուպօլսեցոյ, Վենետիկ, 1690:
- ՅԿՀՃ - Յովհաննէս Կոստանդնուպօլսեցի, Հայելի ճշմարտութեան, Վենետիկ, 1680:
- ՅԿՊՍ - Յովհաննէս Կոստանդնուպօլսեցի, Պարզաբանութիւն հոգեւնուագ Սաղմոսացն, Վենետիկ, 1687:

- ՅՀԲ - Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Չտութիւն հայկաբանութեան, կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674: Տե՛ս նաև ՅԿԹ:
- ՅՊԿ - Յովհաննէս Պոնա, Կերակոյր քահանայից, թարգմ. Աստուածատուր Ջուղայեցի, Վենետիկ, 1760:
- ՅՊՁ - Յովհաննէս Պոնա, Ձեռքածութիւն յերկինս, թարգմ. Վարդ. Յունանեան, Հռոմ, 1674: Տե՛ս Բառարան գրքիս, էջ 3-81 (առանձին): Նույնը ՅՊՁ, I:
- ՅՊՁ, I - Յովհաննէս Պոնա, Ձեռքածութիւն յերկինս, թարգմ. Վ. Յունանեան, Հռոմ, 1674:
- ՅՊՁ, II - Յովհաննէս Պոնա, Ձեռքածութիւն յերկինս, թարգմ. Վ. Յունանեան, Ամստերդամ, 1705:
- ՅՊՅ - Յովսէպոս Փլարիոս, Պատմութիւնք յաղագս պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս, թարգմ. Ստ. Լեհացի, Էջմիածին, 1787:
- ՅՊՄ - Յովհաննէս Պոնա, Սկզբունք եւ ուսուցմունք, Վենետիկ, 1744:
- ՅՁԳՀ - Յովհաննէս Ջուղայեցի, Գիրք համառօտ վասն իսկապէս եւ ճշմարիտ հաւատոյ, Նոր Ջուղա, 1688:
- ՅՁՊ - Պատմութիւն Սուրբ գրոց, թարգմ. Յարութիւնէ Դաւթեան Ջուղայեցոյ, Ս. Պետերբուրգ, 1785: Տե՛ս նաև ՊՄԳ:
- ՅԸԸ - Յովհաննէս Քոնցեցի, Յաղագս քերականին. բնագիրը հրատարակութեան պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, ներածութիւնը Լ.Ս. Խաչիկյանի և Ս.Ա. Ավագյանի, Երևան, 1977:
- ՆԳԱ - Յակոբ Նալեան, Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1760:
- ՆԼՀԲ - Աստուածատուր Ներսէսովիչ, Բառգիրք լատինացոց և հայոց, Հռոմ, 1695:
- ՆԾՁ, I - Նորագոյն ծաղիկ զօրութեանց, թարգմ. Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Հռոմ, 1675:
- ՆԾՁ, II - Նորագոյն ծաղիկ զօրութեանց, թարգմ. Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Վենետիկ, 1685:
- ՆԾՁ, III - Նորագոյն ծաղիկ զօրութեանց, թարգմ. Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Կ. Պոլիս, 1724:
- ՆՀԲ - Գաբրիէլ Աւետիքեան, Խաչատուր Սիրմէլեան, Սկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
- ՆՅՀՄ - Միքայէլ Նալբանդեան, Յաղագս հայկական մատենագրութեան ճան: Տես Միքայէլ Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1947, էջ 9-60:

- ՆՇԸ - Գիրք որ կոչի Ընդհանրական, արարեալ Ներսէսի Շնորհալոյ, Ս. Պետերբուրգ, 1788:
- ՆՎՀ - Յակոբ Նալեան, Գիրք կոչեցեալ Վէմ հաւատոյ, Կ. Պոլիս, 1733:
- ՆՏ - Նոր տետրակ որ կոչի Յորդորակ, աշխատութեամբ Մովսիսի Բաղրամեան, Մաղրաս, 1772 (տպագր. ավարտ` 1773):
- Շար. - Շարակնոց. Երաժշտական երգեցմունք հոգևորականք, Կ. Պոլիս, 1784, Էջմիածին, 1789, Կ. Պոլիս, 1794: Տես նաև ՈՇ:
- ՇՀՆ - Յակոբ Շամախեցի, Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1760:
- ՈԱ - Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, տպագր. Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1666:
- ՈԵԱ - Տե՛ս ՈԱ:
- ՈԵՄ - Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի, տպագր. Ոսկան Երևանցի, Մարսել, 1676:
- ՈԵՆ - Ոսկան Երևանցու նամականիին, պատրաստեց Պողոս Անանեան. Տե՛ս «Բազմավէպ», 1966, թ. 11-12, էջ 293-308: Հմմտ. ՄՄՁ 180:
- ՈԵԲ - Քերականութեան գիրք համառօտիւք ծայրաքաղ արարեալ, հեղ. Ոսկան Երևանցի, Ամստերդամ, 1666:
- ՈՇ - Շարակնոց. Երաժշտական երգեցմունք հոգևորականք, տպագր. Կար. Անդրիանացու և Ոսկ. Երևանցու, Ամստերդամ, 1664:
- ՈՓ - Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց Նոր Ջուղայեցոյ, Մաղրաս, 1773:
- ՊԲԲ - Բովանդակութիւն բովանդակութեան, կամ Համառօտութիւն աստուածաբանութեան Կ.Հ. Պիլլուարտի, թարգմ. ի լատ. բարբառոյ, Թրիեստ, 1810:
- ՊԿՅԸ - Պօղոս Կաղզուանցի, Յուպ քահանայից, Կ. Պոլիս, 1792:
- ՊԿՓ - Գիրք պատմութեան կայսերն Փոնցիանոսի և կնոջն Թագուհոյ... և Եօթանց իմաստասիրաց, Կ. Պոլիս, 1792: Տե՛ս նաև ԳՊՓ:
- ՊՆ - Գիրք Պորփիրի որ կոչի Ներածութիւն, Մաղրաս, 1793:
- ՊՊԸ - Գիրք պատմութեան որ կոչի Պղնձե քաղաք, և բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ, Կ. Պոլիս, 1792:
- ՊՍԳ - Տե՛ս ՅՁՊ:
- ՊՍԿԱ - Պօղոս Սեներեան, Կրթութիւն ապաշխարողի, թարգմ. Սարգիս Սարաֆեան, Վենետիկ, 1751:
- ՊԸԲ - Պետրոս Բալանթարեան, Բժշկարան համառօտ (ալիգատ` Բառարան), Նոր Նախիջեան, 1793:

- ՊԶՎ - Ռոբերտոս Բելարմինոս, Վարդապետութիւն քրիստոնէական, թարգմ. Բարս. Կոստանդնուպոլսեցի, Լիվոռնո, 1670:
- ՋԴՅ - Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ Ղազարու Ջահկեցոյ, Կ. Պոլիս, 1735:
- ՌՀԼԲ - Ֆրանչիսկոս Ռիվոլա, Բառագիրք հայոց (հայ. և լատին. լեզ.), Միլան, 1621 (2-րդ տպ., Փարիզ, 1633):
- Սաղմ. - Սաղմոսարան, Կ. Պոլիս, 1780, 1782, Էջմիածին, 1787, Նոր Նախիջեվան, 1791 և այլն:
- ՍԳԶՎ - Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, շարադր. Միս. Սեբաստացոյ, Վենետիկ, 1725:
- ՍԵԳԱ - Գիրք աղօթից որ կոչի Ջբօսարան հոգեւոր, արարեալ ի Սիմէօնէ վշտակիր կաթողիկոսէ ամենայն հայոց, Էջմիածին, 1772:
- ՍԼԲԱ - Ստեփանոս Լեհացի, Բուրաստան աղօթից, Վենետիկ, 1683:
- ՍԼՏ - Գիրք որ կոչի Լուծիչ տարակուսանաց, շարադր. ի Սրմաքէշ Մանուելէ Կոստանդնուպոլսեցոյ, Կ. Պոլիս, 1755:
- ՍԽՎ - Մխիթար Սեբաստացի, Խոկումն վարուց, Վենետիկ, 1753:
- ՍԿԱ, I - Մխիթար Սեբաստացի, Կրթութիւն աղօթից, Վենետիկ, 1718:
- ՍԿԱ, II - Մխիթար Սեբաստացի, Կրթութիւն աղօթից, Վենետիկ, 1772:
- ՍՄԳԺ - Մխիթար Սեբաստացի, Մեկնութիւն Գրոցն Ժողովողի, Վենետիկ, 1736:
- ՍՇԳԲ - Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, Վաղարշապատ, 1871:
- ՍՊ - Խորհրդատետր. Սպասատրութիւն պատարագի, Հռոմ, 1677:
- ՍՊԽ - Տե՛ս ՍՊ:
- ՍՊԵրկ. - Երկրաչափութիւն, յօրին. ի Սահակ Պրոնեան, Վենետիկ, 1794:
- ՍՋԹ - Աղեքսանդր Ջուղայեցի, Թուղթ առ Կղէմէս ԺԱ պապ:
- ՍՋՏ - Գիրք տրամաբանութեան Սիմէօնի Ջուղայեցոյ արարեալ, Կ. Պոլիս, 1794:
- ՍՋԶ - Գիրք որ կոչի քերականութիւն, արարեալ և շարադրեալ ի Սիմէօնէ վարդապետի Ջուղայեցոյ, Կ. Պոլիս, 1725:
- ՎԲԱ - Գուկաս Վանանդեցի, Բանալի համատարած աշխարացուցին, Ամստերդամ, 1696:
- ՎԲԻ - Տե՛ս ԲԻ:
- ՎԲԻ, I - Մատթեոս Վանանդեցի եւ Գուկաս Վանանդեցի, Բնաբանութիւն իմաստասիրական, հ. 1, Ամստերդամ, 1702: Տե՛ս ԲԻ:
- ՎԲԻ, II - Մատթեոս Վանանդեցի և Գուկաս Վանանդեցի, Բնաբանութիւն

- իմաստասիրական, հ. 2, Ամստերդամ, 1702: Տե՛ս ԲԻ:
- ՎՀՀ - Գուկաս Վանանդեցի, Համաձայնութիւն հնգետեսակ ամսոց, Ամստերդամ, 1698:
- ՎՄԴ - Տե՛ս ՀՎՄԴ:
- ՎՍՁ, 1663 (դժ 1132) - Գիրք ուղղափառաց ըստ կաթօլիկէ սուրբ եկեղեցո, եւ ընդդէմ հերձուածողաց: Տե՛ս Վենետիկի Մատենադարանի ձեռագիր (դրսի ժապավեն), էջ 1ա - 368բ:
- ՎՅԲ - Վարդան Հունանյանի բառարան: Տե՛ս ՎՅԲ, I, այլև ՎՅԲ, II:
- ՎՅԲ, I - Վարդան Հունանյանի բառարան: Տե՛ս Յովհաննէս Պոնա, Ձեռքածութիւն յերկինս, թարգմ. Վարդան Յունանեան, Հռոմ, 1674, էջ 3 - 81:
- ՎՅԲ, II - Տե՛ս նախորդը: 2-րդ տպագր., Ամստերդամ, 1705, էջ 344 - 346:
- ՎՈԴ - Մատթէոս եւ Գուկաս Վանանդեցիներ, Ոսկեայ դուռն դպրատան վասն նորեկ դեռակիրք եւ խակավարժ մանկանց, Ամստերդամ, 1699:
- ՎՊԱ - Պաշտաւն աստուածային, թարգմ. Գուկ. Վանանդեցի, Ամստերդամ, 1704:
- ՎՔՀ - Վարդապետութիւն քրիստոնէական ըստ հայոց (հայ. և լատ. լեզ.), Ամստերդամ, 1667:
- ՏԳ - Տօմար Գրիգորեան, տպագր. Յովհաննէս Տերզնցի, Հռոմ, 1584:
- ՈԻՓ, I - Ուշիմաբանութիւնք փիլիսոփայից, թարգմանեցեալք ի Յոհաննիս վարդապետէ Կոստանդինուպօլսեցոյ: Տե՛ս ՆԾՁ, II (ալիգատ, էջ 201 - 237):
- ՓԳՔ - Գիրք քաղաքավարութեան, արար. Իզնատիոս Փափազեան, Վենետիկ, 1806:
- ՖՈՔ - Ֆրանչիսկոս Ռիվոլա, Grammaticae Armenae, libri quattuor (լատին. եւ հայ. լեզ.), Սիլան, 1624:
- ՖՄՆ - Ֆրանչիսկոս Սալեզացի, Ներածումն առ ջերմեռանդ կեանն, թարգմ. Գուկ. Խարբերոցի, Վենետիկ, 1748:
- ՖՊԹ - Պատմութիւն Թէլամաքի որդոյ Յուլիսի, արարեալ և շարադրեալ ի Ֆրանչէսքօ Ֆէնէլօնէ, հհ. 1 - 2, թարգմ. Մարգար Երևանցի, Նոր Նախիջևան, 1793:

2. Օգտագործված գրականության ցանկ

Արզարյան Գ., Սիրաքի գրքի թարգմանության նորագույն հատվածներ. «Էջմիածին», 1966, 11-12, էջ 59-70:

Արեղյան Մ., Երկեր, հ. Գ, Երևան, 1970:

Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964:

«Ազդարար», թ. 1, էջ 42, թ. 8, էջ 162, թ. 9, էջ 222, թ. 18, էջ 67:

Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885:

Ալիշան Ղ., Հայ - Վենետ կամ Յարընչութիւնք Հայոց եւ Վենետացոց ի ԺԳ-ԺԴ եւ ի ԺԵ-ԺԶ դարս, Վենետիկ, 1896:

Ալիշան Ղ., Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, Վենետիկ, 1896:

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:

Աղայան Է., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958:

Աղայան Է., Գրաբարի քերականություն, հ. 1. Սինխրոնիա, գիրք Ա. Հնչյունաբանություն, Երևան, 1964:

Աղայան Է., Գրաբարի պատմության շրջանաբաժանումը. «Բանբեր Երևանի համալսարանի», 1974, 2, էջ 58-81:

Աճառեան Հ., Պատմութիւն հայոց նոր գրականութեան, պրակ Ա, Վաղարշապատ, 1906:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մ. 1, Երևան, 1940, մ. 2, Երևան, 1951:

Ամատունի Ա., Ոսկան վարդապետ Երևանցի եւ իւր ժամանակը. «Բազմավեպ», 1974, էջ 259-277, 1975, էջ 5-51, 245-283, 1976, էջ 14-51, 221-267:

[*Այտընեան Ա.*], Խորհրդածութիւնք ազգային լեզուի վրայ. «Եւրոպա», 1852, թ. 6, էջ 23, թ. 12, էջ 47-48, թ. 19, էջ 75-76, թ. 22, էջ 87-88, թ. 25, էջ 98-99 և թ. 30, էջ 118-119 :

[*Այտընեան Ա.*], Մատենագրական խորհրդածութիւններ. «Եւրոպա», 1856, թ. 30, էջ 118, թ. 31, էջ 122-123, թ. 37 և էջ 146-147:

Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866:

Անանիա Նարեկացի, Գիրք խոստովանութեան, Վաղարշապատ, 1892:

Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, հ. Բ, Երևան, 1976:

Անդրիկեան Ն., Գեղեցիկը լեզուի մէջ. «Բազմավէպ», 1908, հ. ԿԶ, էջ 157-162:

Անդրիկեան Ն., Ուրուագիծ հայ մատենագրութեան, «Բազմավէպ», 1911, հ. ԿԹ, էջ 301-306, 307-345 և այլն:

Անթարյան Փ., Վարդան Արևելցի. «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V-XVIII)», Երևան, 1976, էջ 323-324:

Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ Լ.Ա.Խանլարեանի, Երևան, 1990:

Աստուածատուր Ներսէսովիչ, Բառգիրք լատինացոց եւ հայոց, Հռոմ, 1695:

«Արարատ», 1878, էջ 895, 1892, էջ 6-18:

Արևշատյան Ս., Նոմինալիզմի առաջացումն ու զարգացումը միջնադարյան Հայաստանում. «Բանբեր Մատենադարանի», հ. 6, Երևան, 1962, էջ 75-96:

[*Ալզերեան Ս.*], Առձեռն բառարան հայկազեան լեզուի (2-րդ տպ.), Վենետիկ, 1865:

Ալետիքեան Գ., Սիրմէլեան Խ., Ալզերեան Ս., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

Բագրատունի Ա., Նորահնար բառերու վրայ. «Բազմավէպ», 1845, էջ 267-271:

Բագրատունի Ա., Հայերէն գրաբառ լեզուի յատկութեան վրայ. «Բազմավէպ», 1846, էջ 196-204:

Բագրատունի Ա., Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852:

«Բազմավէպ», 1966, թ. 11-12, էջ 293-302:

Բարսեղյան Հ., Հայերէնի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:

Բիզանդացի Ն., Հայկական բառաքնութիւն: Ուղղութիւնք ընթերցուածոց մատենագրութեանց նախնեաց, Կ.Պոլիս, 1880:

Բրիտով Վ., Տարեգրութիւն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին, Վենետիկ, 1931:

Գ.Ա.Ա., Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսութիւն. «Արարատ», 1877, էջ 7-11, 45-50, 84-88, 128-130, 167-173, 203-208, 244-254:

Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958:

Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1976:

Գաբրըճեան Յ., Հանգանակ հաւատոյ, Վիէննա, 1891:

Գաբրըճեան Յ., Սրբազան Պատարագամատոյց Հայոց, Վիէննա, 1897:

Գալստյան Ս., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978:

Գալստյան Ս., «Խառը» («նախածանցավերջածանցավոր» և «բարդածանց»), բաղադրությունները հայերենում. «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, 3, էջ 72-76:

Գելցեր Հ., Համառոտ պատմութիւն (թարգմանեց Գրիգոր Գալէմբերեան), Վենետիկ, 1897:

Գիրք առաքինութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ: Տես ՄՄՁ, 46:

Գիրք դժոխաց: Տես ՄՄՁ, 5097, էջ 196ա-213բ.:

Գիրք ի վերայ երկուց բնութեանց: Տես ՄՄՁ, 3640, էջ 121-150ա, ՄՄՁ, 842, էջ 1ա-142ա:

Գիրք համառոտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ և դաւանութեան, արարեալ ի Սրբուգէ Յովհաննէս վարդապետէ Ջուղայեցոյ, Նոր Ջուղա, 1688:

Գիրք հարցմանց Գրիգորի Տաթևացոյն, Կ. Պոլիս, 1729:

Գիրք մոլութեանց, անդրածեցեալ ի լաթինականէն ի հայ բարբառ: Տես ՄՄՁ, 66 (տպ.՝ Վենետիկ, 1720):

Գիրք յաղագս ծննդեան Տեառն մերոյ: Տես ՄՄՁ, 2184, էջ 255ա-267ա, ՄՄՁ, 3654, էջ 268ա-278ա:

Գիրք որ կոչի ատենական վիճաբանութիւն, արարեալ Աղեքսանդրու Ջուղայեցոյ, Կ. Պոլիս, 1783 (I տպ. Նոր Ջուղա, 1687):

Գիրք պատմութեանց, շարադրեալ յԱռաքելոյ Գարեթացոյ, Ամստերդամ, 1669:

Գիրք ուղղափառաց ըստ կաթօլիկէ սուրբ եկեղեցոյ, եւ ընդդէմ հերձուածողաց: ՎՄՁ 1662 (նույնը ՄՄՁ, դժ 1132, էջ 1ա - 368բ):

Գիրք քարոզութեան, որ կոչի Չմերան հատոր, արարեալ Գրիգորի Տաթևացոյն, Կ. Պոլիս, 1740:

Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, արարեալ Գրիգորի Տաթևացոյն, Կ. Պոլիս, 1741:

Գրիգոր Անաւարդեցի, Դրուատ գովեստի ամենայն սրբոցն տօնի: Տես ՄՄՁ, 9622:

Գրիգորի աշակերտի Յօհաննու Որոտնեցոյ Լուծումն պարապմանց Սրբոյն Կուրդի. «Գիրք պարապմանց», Կ. Պոլիս, 1717, էջ 529 - 800:

Գրիգորի Երեցի Շարահարութիւն ժամանակագրութեան Մատթէոսի Ուռհայեցոյ. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 369 - 429: Այլև՝ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 248-293:

Գրիգորի սարկաւագապետի Խօսք ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ. «Սովերք հայկականք», հ. Դ, Վենետիկ, 1853, էջ 129-157:

Գրիգոր Սկևռացոյ Ներբողեան ի Ս. Ներսէս Լամբրոնացի. «Սովերք հայկականք», հ. ԺԵ, Վենետիկ, 1854:

Գրիգորյան Գ., Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII - XV դարեր), Երևան, 1981:

Դաստիարակութիւն եկեղեցականաց: Տես ՄՄՁ, 6562:

Դաւիթ Ձէթունցի, Մեկնութիւն քերականի, աշխատասիրութեամբ Ե. Կ. Մելքոնեանի, Երևան, 1981:

Դեղեյան Ժ., Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում IX դարի վերջում և X դարի սկզբում. «Պատմա-բանասիրական հանդես», 1984, 3, էջ 21-36:

Դուրեան Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885:

Եկեղեցական պատմութիւն հանդերձ ազգային եկեղեցական պատմութեամբ, գրեց Վ. Ըստկարեան, Վիէննա, 1872:

Եսայեայ Նչեցոյ Պատասխանի թղթոյն կաթողիկոսին և թագաւորին: Տես ՄՄՁ, 9622, էջ 734 - 753:

Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրութեամբ Լ.Գ.Խաչերեանի, Երևան, 1966:

«Երոպա», 1848, թ. 5, էջ 14, 20, թ. 14, էջ 16, 1849, թ. 4, էջ 16, թ. 5, էջ 20, թ. 8, էջ 32:

Չարքհանալեան Գ., Պատմութիւն հայերէն դպրութեան, հ. Բ, Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1875:

Չարքհանալեան Գ., Պատմութիւն հայ հին դպրութեան. Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878:

Չամիկեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, մաս I, Նոր Նախիջևան, 1908, մաս II, Նոր Նախիջևան, 1909:

Չամիկեան Ա., Հայ գրականության պատմություն, մաս Ա., Նոր Նախիջևան, 1914:

Չաքարիա Ծործորեցի, Թուրք Յովհաննու Օրբելոյ: ՄՄՁ, 2080, 8245:

Թուրք առ Կլեմենտ ԺԱ պապ: «Հանդես ամսօրեայ», 1914, էջ 539-552:

Թուրք Գազկայ Վասպուրականի հայոց թագաւորի առ կայսրն Յունաց Ռոմանոս Վասն հաւատոյ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 295-301:

Թուրք Եսայեայ վարդապետի Պտասխանի ընդդէմ պարոն Հեթում Կիրիկեցոյն. ՄՄՁ, 9622, էջ 716-734:

Թովմա Մեծովեցու Յիշատակարանը, հրատ. Կարապետ Կոստանեանց, Թիֆլիզ, 1892:

ԺԳ-ԺԸ դարերու հայերէնի վիճակը. «Երոպա», 1848, թ. 14, թջ 16:

ԺԳ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ. Լ. Խաչիկյան, Երևան, 1950:

ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 1 (1401-1450 թթ.), կազմեց Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1955:

ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 2 (1451-1480 թթ.), կազմեց Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1958:

ԺԵ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, մաս 3 (1480-1500 թթ.), կազմեց Լ.Ս.Խաչիկյան, Երևան, 1967:

Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հ. 1 (Հայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում), Երևան, 1977:

Իշխանյան Ռ., Հայ գիրքը. 1512-1920 թթ., Երևան, 1981:

Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք I, Երևան, 1969, հ. 3. գիրք II, Երևան, 1973:

Խաչիկյան Լ., Հայ բնագիտական միտքը XIV-XVIII դարերում, «Պատմա - բանասիրական հանդես», 1972, 2, էջ 23-44: Նույնը՝ «Հայ ժողովրդի պատմություն. Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում. XIV-XVIII դդ., հ. 4, Երևան, 1972, էջ 470-491:

Խաչիկյան Լ., Արտագի հայկական իշխանությունը և Ծործորի դարոցը, «Բանբեր Սատենադարանի», հ. 11, Երևան, 1973, էջ 125-210:

Խաչիկյան Լ., Քոնսյի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը. «Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին», Երևան, 1977:

Խորհրդատետր պատարագին հայոց, Հռոմ, 1677:

Ծառուկյան Վ., Գրաբարի կառուցվածքի ուսումնասիրությունը XVII դարի քերականների աշխատություններում (թեկն. դիս., ձեռագիր), Երևան, 1969:

Կերպ խոստովանութեան: Տես ՄՄՁ, 5808, էջ 62բ - 73բ:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961:

Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երևան, 1982:

Կղեմէս Գալանոս, Քերական և տրամաբանական ներածութիւն, Հռոմ, 1645:

Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, հհ. 1-2, Հռոմ, 1650-1661:

Կորկոտյան Զ., Ոսկանյան Ն., Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը և նրա տպագրիչը, «Արարատ», 1966, 11-12:

Համառօտ հաւարումն ի դիալեքիկէն, որ է Տրամաբանութիւն: Տես ՄՄՁ, 69, էջ 266ա - 346բ, ՄՄՁ, 3909, էջ 190բ -247ա:

Համբարձումյան Վ., Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին. «Հայոց լեզուն և գրականությունը դայրոցում», 1978, 4, էջ 50-54:

Համբարձումյան Վ., Լեզու, ոճ, խոսք, «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, 3, էջ 182 - 191:

Համբարձումյան Վ., Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, 2, էջ 63 - 72:

Համբարձումյան Վ., 18-19-րդ դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը. «Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 2, Երևան, 1985, էջ 257-317:

Համբարձումյան Վ., Գրաբարի գործառությունը որպէս գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990:

Համբարձումյան Վ., Հայերը և հռոմեացիները. լեզվական շփումներ, «Երկիր» (օրաթերթ), 13-ը նոյեմբերի, 1991:

Համբարձումյան Վ., Գրաբարի ինքնուսույց, Երևան, 1999:

Համբարձումյան Վ., Հայերեն աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Երևան, 2002:

Համբարձումյան Վ., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 2004:

Համբարձումյան Վ., Ակնարկներ հայ բառարանագրության պատմության (XVII դ. վերջ - XIX դ.), Երևան, 2006:

Համբարձումյան Վ., Լատիներենի դասագիրք, Երևան, 2007:

Հայելի ճշմարտության, շարագրեցեալ ի Յոհաննիսէ Կոստանդինուպօլսեոյ, Վենետիկ, 1680:

Հայ ժողովրդի պատմություն, հ. 3 («Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում. IX դ. կեսերից մինչև XIV դ. վերջերը»), Երևան, 1976:

Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972:

Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցանկ, Երևան, 1975:

Հայ մշակույթի նշանավոր գործիչներ (V-XVIII դդ.), Երևան, 1976:

Հարցումն պատրիարքին և պատասխանի Ներսիսի: Տես ՄՄՁ, 9622, էջ 16 - 28:

Հարությունյան Է., Մխիթար Այրիվանեցի (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1985:

Հիրսիզեան Էդ., Թարգմանութեան վրայ. «Բազմավէպ», 1873, հ. ԼԱ, էջ 321 - 333:

Հովհաննես Օճնեցի, Երկեր, գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Համբարձումյանի, Երևան, 1999:

Հովհաննիսյան Ա., Նոր նյութեր հայ - ունիտորական պատմագրության. «Արարատ», 1914, էջ 108-114, 1915, էջ 61-69:

Հովհաննիսյան Ա., Գրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, Երևան, 1957, գիրք 2, Երևան, 1959:

Հովհաննիսյան Լ., XVII դ. գրաբարը, «Լեզվի և ոճի հարցեր», հ. VIII, Երևան, 1983, էջ 116-196:

Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:

Ղազիկեան Ա., Հայկական մատենագիտություն և հանրագիտարան հայ կեանքի, հ. 1, Վենետիկ, 1909 - 1912:

Ղազիկեան Ա., Հայկական նոր մատենագիտություն, Վենետիկ, 1912:

Ճառք և խոստովանությունք հաւատոյ Գրիգորի Նարեկացոյ և Վահրամայ վարդապետի, Երուսաղեմ, 1856, էջ 115 - 175, 176 - 216:

Ճանաչեան Մ., Ստեփանոս Ռոշքեանի բառարանը (քննական տեսություն մը), «Բազմավէպ», 1955, 8-9:

Ճէմճէմեան Մ., Ոսկանի Մաշտոցը. «Բազմավէպ», 1966, էջ 283 - 291:

Մաթևոսյան Ա., Գրիգոր Տաթևացին և Մեծուփավանքի դպրոցի հիմնադրումը. «Պատմա-բանասիրական հանդես», 1969, 2, էջ 146-154:

Մանանդյան Հ., Երկեր, հհ. Գ - Դ, Երևան, 1977 - 1981:

Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Մելջուկյան շրջանից մինչև Մեֆյանների հաստատումը Իրանում: Տես Երկեր, հ. Գ, Երևան, 1977:

Մանր ժամանակագրություններ (XIII-XVI դդ.), կազմ. Վ. Հակոբյան, հ. 1, Երևան, 1951:

Մանր ժամանակագրություններ (XVII-XVIII դդ.), կազմ. Վ. Հակոբյան, հ. 2, Երևան, 1956:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, քարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Երևան, 1973:

Մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861:

Մեկնիչ Սրբոյ Աւետարանին, շարադրեալ ի Յակոբ Վարդապետէ, Հռոմ, 1714:

Մեկնութիւն դաւանութեան ուղղափառի հաւատոյ, շարադրեալ ի Յակոբ վարդապետէ, Հռոմ, 1711:

Մեկնութիւն Եօթանց թղթոց կաթողիկէայց, արարեալ Սարգսի շնորհալի վարդապետի, Կ. Պոլիս, 1826-1828:

Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ Խոսրովու Անճևացեաց եպիսկոպոսի, Կ. Պոլիս, 1840:

Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին Ղուկասու, արարեալ Իգնատիոսի վարդապետի, Կ. Պոլիս, 1824:

Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արարեալ ի Ներսիսէ Շնորհալոյ, Կ. Պոլիս, 1825:

Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, արարեալ երանելոյն Բարսղի շնորհալի վարդապետի ճոն կոչեցեալ, հ. II, Կ. Պոլիս, 1826:

Մէյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:

Միաբնութիւն հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ, շարադրեալ ի Կղեմէս վարդապետէ, հ. 1, Հռոմ, 1650, հ.2, մ. 1, Հռոմ, 1658, հ. 2, մ. 2, Հռոմ, 1661:

Միջին դարերի պատմություն, հ. 1, Երևան, 1975:

Միրզոյան Հ., Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին. «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, 2, էջ 190-197:

Միրզոյան Հ., Միմեոն Ջուղայեցի, Երևան, 1971:

Միրզոյան Հ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983:

Միքայել Ֆերուրեան, Մանաուանդականք առաքինութիւնք, Հռոմ, 1681:

Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսութեանց, Երևան, աշխատասիրությամբ Հ.Գ. Մարգարյանի, 1983:

Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1860:

Մխիթարեան Ա., Պատմութիւն հալածչաց, ուրացողաց, հերձուածողաց եւ բաժանելոց յեկեղեցոյն հայոց. «Արարատ», 1875, 5, էջ 44 - 45, 83 - 85, 165-171, 206 - 210, 247 - 254, 287- 294, 323 - 331, 363 - 370:

Սկրտչյան Է., Կոչական հոլովը հայերենում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, 2:

Մովսիսի Երզնկացոյ Ընդդիմաբանութիւն սակս ջրոյ խառնման: ՄՄՁ, 6302:

Մուրադյան Ա., Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1972:

Յաղագս իմաստասիրութեան անվարժ տղայոց ուսման, արարեալ Թովմա վարժապետի: ՄՄՁ, 7117, էջ 106ա - 152ա:

Յաղագս կարգաց և աստիճանաց եկեղեցոյ և եկեղեցականաց: Տես ՄՄՁ, 6562, էջ 35ա - 41ա, ՄՄՁ, 5808, էջ 1ա - 13բ:

Յաղագս հնգից ընդհանրաց: Տես ՄՄՁ, 2276:

Յաղագս վեցօրէից գործոց արարչութեան: Տես ՄՄՁ, 1656:

Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Չտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674:

Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, Քերականութիւն լաթինական, Հռոմ, 1675:

Յովհաննէս Ծործորեցի, Համառօտ տեսութիւն քերականի, աշխատասիրությամբ Լ. Խաչերեանի, Լոս Անջելես, 1984:

Յովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս. Խաչիկյանը, ներածությունը Լ.Ս. Խաչիկյանի և Ս.Ա.Ավագյանի, Երևան, 1977:

Յովհաննէս Պոնա, Չերքածութիւն յերկինս, Հռոմ, 1674, Ամստերդամ, 1705:

Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832:

Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891:

Յովհաննու Սարկաազ վարդապետի Ներբողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորիչն. «Սոփերք հայկականք», հ. Ե., Վենետիկ, 1853, էջ 5-36:

Յովսէփեան Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, 2-րդ հրատ., Անթիլիաս, 1969:

Յովսէփեան Գ., Թովմա Մեծփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով), Վաղարշապատ, 1814:

Յուզբաշյան Կ., Արիստակես Լաստիվերցու Պատմութեան մեկ տարընթերցվածի մասին՝ *վռանգք* և ոչ *վռանկք*. «Բանբեր Մատենադարանի», հ. 4, 1958, էջ 77-82:

Յուշիկք հայրենեաց Հայոց ի Ղետնդէ Ալիշան (2-րդ տպ.), հ. 1, Վենետիկ, 1920:

Յօհաննու Արճիշեցոյ Մեկնութիւն աստուր խորհրդոյ, Էջմիածին, 1860:

Ոսկանյան Ն., Կորկոտյան Բ., Սավայյան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Երևան, 1988:

Ոսկան վարդապետի Նամականին, հրատարակեց Պօղոս Անանեան, «Բազմավէպ», 1966, էջ 293 - 308, 1967, էջ 130 - 134:

Ոսկեան Գ., Համառօտ ակնարկ մը քարոզող եւ միաբանող եղբարց պատմութեան Հայաստանի մէջ. «Բազմավէպ», 1922, էջ 19 - 21, 49 - 51, 138 - 139, 229 - 231, 262 - 263, 1923, էջ 35 - 39:

Չալոյյան Վ., XVII - XVIII դարերի հայ փիլիսոփայութեան ֆեոդալական ուղղութեան գնահատման հարցի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդէս», 1958, 1, էջ 135-138:

Չալոյյան Վ., Հայոց փիլիսոփայութեան պատմություն, Երևան, 1975:

Պատասխանատրութիւնք թղթոցն, Վենետիկ, 1687:

Պատասխանի լատինացոց թխտոյն ի Սկրտիչ Նկարագրէ, հրամանաւ կաթողիկոսին հայոց և մեծ րաբունապետին Թումայի: ՄՍՁ, 5657, էջ 143ա - 151ա:

Պատասխանի Մխիթարայ Սկևռացոյ Յաղագս համապատուութեան, Երուսաղէմ, 1865:

Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թագաւորաց հայոց, շարադրեցեալ ի Յակօբ վարդապետ, Վենետիկ, 1713:

Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրաց, արարեալ Թովմա վարդապետի Սեծորեցոյ, Փարիզ, 1860:

Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, յօրինեալ ի Սիքայէլ Չամչեանց, հ. 3, Վենետիկ, 1784:

Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան, հհ. Ա-Բ, Փարիզ, 1859: Նույնը, Թիֆլիս, 1910:

Պատմութիւն վարուց Ներսիսի Լամբրոնացոյ: Տես Սամուել Անեցի, էջ 224-243, այլև «Արարատ», 1878:

Պատմութիւն վարուց Ս. Յովհան Ոսկեբերան հայրապետին, թարգմ. ի Գրիգոր վկայասէր կոչեցելոյ, Վենետիկ, 1751:

Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազոյլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

Պետրովիչ Գր., Միաբանող եղբայրներ և եկեղեցին (1330-1360). «Հանդէս ամսօրեայ», 1969, էջ 35 - 370, 465 - 486, 1970, էջ 73 - 74:

Պօղոսի վարդապետի և արքեպիսկոպոսի Նախիջևանցոյ առ Շահաբաս պարսից թագաւորն Պատասխանի յաղագս հաւատոյ: ՄՄՁ, 672, էջ 5ա - 92ա:

Չահուկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Երևան, 1954:

Չահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959:

Չահուկյան Գ., Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960:

Չահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964:

Չահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:

Չահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

Չահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն (XVI-XIXդդ.), Երևան, 1974:

Չահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

Չահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, 1989:

Մեթեան Մ., Հայկաբան վարդապետ մը Յիսուսեան. «Բագմավեպ», 1922, էջ 299 - 303, 326 - 328, 354 - 357, 1923, էջ 3 - 5:

Միմենոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները Գ. Մ. Բաղալյանի, Երևան, 2003:

Միսական. Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, ի Հ. Ղեւոնդեայ Մ.Ալիշան, Վենետիկ, 1893:

Սմբատ Գունդստապլի Դատաստանագիրք, Ստրասբուրգ, 1905:

Սմբատ Գունդստապլի Դատաստանագիրք, Էջմիածին, 1918:

Սմբատայ Սպարապետի Հայոց պատմութիւն, Մոսկվա, 1856:

Սպասատրութիւն պատարագի, Հռոմ, 1677:

Սրապեան Իս., Հայք և ունիթորք. «Հանդէս ամսօրեայ», 1909, էջ 321-327:

Սրբոյն Ներսիսի Շնորհալոյն Պատմութիւն վարուց. «Սոփերք հայկականք», հ. ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 1- 87:

Սուրբ Գրիգոր Լուսատրիչ, Յաճախապատում Ճառեր, թարգմանութիւնը, առաջաբանը, ծանօթագրութիւնները Վ. Գ. Համբարձումեանի, Թեհրան, 2003:

Վալերի Բրիտով, Տարեգրութիւն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին (թարգմ. Յ.Վ.Մարգարեան), Վենետիկ, 1931:

Վահրամայ Բաբունոյ Ոտանաւոր պատմութիւն Ռուբինեանց, Փարիզ, 1839, էջ 181-248 (տպակից՝ Սմբատ Սպարապետի «Տարեգրքին»):

Վասն պէս պէս իրաց և գիտութեան: Տես ՄՄՁ, 5808, էջ 14ա - 61բ:

Վարդանեան Ա., Բառաքնական դիտողութիւններ, Վիէննա, 1913:

Վարդանյան Յ. Հ., Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին. «Պատմա-բանասիրական հանդէս», 1980, 3, էջ 189 - 202:

Վիլլոտ Յակօբ, Պատմագրութիւն կաթողիկոսաց եւ թագաւորաց հայոց, Վենետիկ, 1713:

Վկայութիւն Աթանասի Ընդդէմ երկաբնակացն: ՄՄՁ, 1836:

Տաշեան Յ., Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիէննա, Վիէննա, 1895:

Տարեգիրք, արարեալ Սմբատայ Սպարապետի հայոց, Փարիզ, 1859:

Տեառն Ստեփաննոսի Մինեաց նախագահ արհիեպիսկոպոսի Հակա-
ճառութիւն ընդդէմ երկաբնակաց, Կ. Պոլիս, 1756:

Տեսութիւնք ի լատին բարբառ, և որ ինչ ի վարժից նորին շահ. «Բազմա-
վէպ», 1855, հ. ԺԳ, էջ 21-24:

Տէր-Ներսէսեան Ն., Ոսկան վարդապետի քերականական
ըմբռնումները. «Բազմավէպ», 1966, 1-3, էջ 310-321:

Տէր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան,
1984:

Տօն մեր սուրբ թարգմանիչների. Ճառ Աստծու ճշմարիտ վկաների
մասին, շարադրությամբ մեր նախնիների գրքից, որ կոչվում է «Յասմաուրք»,
թարգմանությունը Վ. Գ. Համբարձումյանի, Ս. Էջմիածին, 1997:

Ուղենրիյն Մ. Ա., Հայ-դոմինիկյան մատենագրական ծանօթա-
գրութիւններ. «Բազմավէպ», 1922, էջ 138 - 139, 229 - 231, 262 -263:

Քերականութիւն հայկազեան լեզուի, յօրինեալ ըստ նախնի ուղղա-
խօսութեան ի Միքայէլ Չամչեանց, Վենետիկ, 1779:

Քերականութիւն հայկական, նորոգ քննութեամբ և կարգաւ
աշխատասիրեալ Գաբրիէլ Աւետիքեան, Վենետիկ, 1815:

Քերականութիւն հայոց լեզուի, նորոգ քննութեամբ յօրինեալ Արզրումցի
Տէր Յարութիւնեան Տէր Մեսրոպը, Կ. Պոլիս, 1826:

Քերականութիւն հայկազեան լեզուի, աշխատասիրեաց Հ. Վրթանէս վ.
Չալրիսեան, Վիեննա, 1827:

Քոլանջյան Ս., Հեթում Բ-ի Աստվածաշունչը և Ոսկանյան
հրատարակությունը, «Արարատ», 1966, 11-12:

Օրբելյան Ստեփանոս, Սյունիքի պատմություն, թարգմանությունը,
ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1986:

Օրմանեան Մ., Ազգապատում. հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը
սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ.
Բ, մ. Ա-Գ, Պէյրութ, 1960:

Ֆրա Մարտինոսի Գիրք պատմութեանց:Տես ՄՄՉ, 2037, էջ2038 և հջ.:

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград,
1915:

Аревшатын С.С., Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957:

Аревшатын С.С., К истории философских школ Средневековой Армении
(XIV в.), Ереван, 1980:

Арутюнова Н.Д., Булыгина Т.В., Морфология. В кн.: “Общее языкознание: Внутренняя структура языка”, М., 1972, сс. 210-258:

Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940 (I изд., М., 1913):

Габриелян Г., Очерк истории армянской философской мысли, Ереван, 1962:

Габриелян Г., История армянской философии, Ереван, 1972:

Гумбольдт В. фон, Язык и философия культуры, М., 1985:

Гурычева М.С., Катагонщина Н.А., Сравнительно-сопоставительная грамматика романских языков (галло-романская подгруппа), М., 1964:

Джаукян Г.Б., Общее и армянское языкознание, Ереван, 1978:

Еремян С.Т., Юрий Боголюбский в армянских и грузинских источниках. «Գրական աշխատություններ Երևանի պետական համալսարանի», 3, Երևան, 1946:

Чалоян В.К., История армянской философии (древний и средневековой период), Ереван, 1959:

Эрну А., Историческая морфология латинского языка, М., 1950:

Яковсон Р., Фант Г.М. и Халле М., Введение в анализ речи: Различительные признаки и их корреляты. “Новое в лингвистике”, вып. 2, М., 1962, сс. 170-230:

Assises d’Antioche, reproduits en francais et publiees ... de Sempad Le Conne’table, Venis, 1876:

Carrier Au., Un ancien glossaire latino-armenien, Paris, 1886:

Hambartsumian V. G., La periodisation de l’histoire de l’armenien latinise.- “Proceedings of the Fifth International Conference on Armenian Linguistics”, McGill University, Montreal, Quebec, Canada, May 1-5, 1995, “Caravan Books”, Delmar, New York, 1996, pp. 375-380:

Hubschmann H., Armenische Grammatik, I Teil: Etymologie, Leipzig, 1897:

Meillet A., Hypotheses sur quelques emprunte de l’armenian au latine, “Memoire de la Societe’ de linguistique de Paris”, t. 18, 1913, pp. 348-350:

Oudenrijn M. A. v.d., Linguae haicanae scriptores, Bern, 1960:

Puritas haygica seu grammatica armenica, a Joanne Agop Sagerdote armeno composita, Romae, 1675:

Sulle Correzione fatte ai libri ecclesiastici Armeni nell’anno 1677. Opera postuma del P. Gabriele Dott. Avedichian, Venezia, 1868:

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ¹

Ա ն ձ ն ա ն ու ն ն ք

- Արգար Դ-պիր 27
 Արգար Թորատեցի 112
 Արգարյան Գ. 60, 341
 Արդմանեհ 190
 Արեղյան Մ. 51
 Արրահամյան Ա. Ա. 19, 289
 Արրահամյան Ս. 119,
 Ագուինացի 198
 Ագաբիտոս պապ 296
 Ազկերտ 190
 Ադամ 270,
 Ազգանազան 226
 Աթանաս 20, 314
 Ալբերտ Մեծ 100, 321
 Անտոն Գովդն 100
 Ալբերտոս 35
 Ակինյան Ն. 67
 Աղամալյան Պ. 103
 Աղայան Էդ. 67, 75, 76, 77, 94, 122,
 143
 Աղեքսանդր Ջուղայեցի 28, 103
 Աղեքսանդրոս կրոնավոր 100
 Աճառյան Հ. 9. 49, 67, 72, 73, 74, 75,
 82, 90, 94, 103, 106, 113, 128,
 129, 137, 144, 145, 147, 150,
 152, 153, 154, 155, 156, 157,
 158, 159, 160, 161, 162, 163,
 166, 168, 169, 171, 172, 173,
 174, 175, 199, 201, 271, 272,
 287, 295, 296, 304, 307, 312,
 317, 318, 319, 335, 336, 338,
 345
 Ամատունի Կ. 60, 341
 Այտընյան Ա. 69, 70, 71, 76, 77, 342
 Անանիա Նարեկացի 13
 Անասյան Հ. 28, 125, 339
 Անդրիկյան Ն. 59, 72, 137, 168
 Առաքելյան Վ. 18
 Առաքել Դավրիժեցի 32, 97,
 Առաքել Նախիջևանցի 125,
 Ասկերյան Վրթ. 103, 320, 323, 332
 338,
 Աստուածատուր 277
 Ավագյան Ս. 9, 83, 109, 110, 136, 139
 151, 262, 263
 Ավետիքյան Գ. 65, 200
 Աւգերեան Մ. 200, 340
 Արդութեանց Ե. 344
 Արևշատյան Ս. 20, 21, 22, 49, 54, 55,
 130
 Արիստոտել 90
 Արշակունի (ներ) 245, 268
 Արտաշիր 311
 Ալբերտ Մեծ 90, 91
 Ալեքսանդր Ջուղայեցի 27, 28
 Ալիշան Ղ. 26, 32, 38, 39, 40, 61, 62,
 73, 88, 90, 123, 128
 Ասկերյան Վրթ. 315, 323, 324
 Աստվածատուր Դ-պիր 29, 98
 Աստվածատուր Ներսեսովիչ 94
 Արամազդ 268
 Բագրատունի Ա. 67, 69, 73, 82, 266,
 341, 342, 343
 Բագրատունիներ 13, 49
 Բաղայան Գ. 339
 Բաղդասար Դ-պիր 80
 Բաղրամյան Մ. 116
 Բանասեր 61
 Բարդուղիմեոս Մարաղացի 21, 22,
 23, 33, 45, 50, 55, 89, 90, 91, 92,
 101, 124, 144, 161
 Բարդուղիմեոս 35, 37, 43, 47, 50, 61,
 68, 102, 105, 106
 Բարդուղիմեոս Էպիսկոպոս 128, 269
 Բարթիկյան Հր. 14
 Բարսեղ Կեսարացի 342
 Կոստանդնուպոլսեցի 62, 68, 339, 42
 Բարսեղ (Ճոն) Վարդապետ 20
 Բարսեղյան Հ. 83
 Բեդան (քահ.) 90
 Բեռնարդեան 309
 Բենեդիքտոս 8-րդ 185
 Բիզանդացի Ն. 343
 Բոնավենտուրա 92
 Բոնոնիացի, Բոլոնիացի 21
 Բոնիֆաչիոս (Բոնիֆացիոս) պապ

¹ Ցանկը կազմել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտաշխատող Սոնա Միքայելյանը:

195
 Բրյուսով Վ. 41
 Բրեվիար 35
 Բուզանդ 342
 Բունավենատուրա 45
 Գաբրիելյան Հ. 53, 54
 Գաբրիել 193
 Գաթրըրճյան Հ. 339, 341, 342,
 Գալանոս Կղ. 76, 282, 308
 Գալստյան Ս. 138, 228, 246
 Գալուստ Ամասիացի 100
 Գաղղիա 193
 Գելցեր Հ. 40
 Գեորք 197
 Գլխմենտոս 197
 Գոշիկ վան. 314
 Գ. Գրիգոր 190, 195
 Գրիգոր Նորեկացի 16
 Գագիկ՝ Վասպուրականի հայոց
 քազավոր 13
 Գրիգոր Երեց 14
 Գրիգոր Անավարզեցի 15, 17, 21, 57,
 132
 Գրիգոր Լուսավորիչ 15
 Գրիգոր Ծործորեցի 133
 Գրիգոր Մարզվանեցի 29, 98
 Գրիգոր Սկրռացի Ներբողյան 15
 Գրիգոր Տաթևացի 20, 21, 25, 35, 42,
 54, 55, 62, 90
 Գրիգոր տղա 49
 Գրիգոր աշակերտ 20
 Գրիգոր պատրիարք 206
 Գրիգոր պապ 268
 Գրիգորիոս 185
 Գրիգորյան Գ. 46
 Գուգ 197
 Գոդեմիա 268
 Գաղմատիա 193
 Դամասոս 277
 Դանիել 193
 Դավիթ 184, 282
 Դավիթ Անհաղթ 131, 340
 Դավիթ Չեյթունցի 138, 139, 251, 262,
 263, 265, 271, 273, 282, 283,
 307
 Դավթյան Հար. 103
 Դավրիժեցի Առ. 58
 Դարգինոս 194
 Դեղեյան Ժ. 12, 199
 Դիոնիսիոս Թրակացի 81, 151, 307

Դիոնիսիոս Արիսպակացի 185
 Դոմինիկոս Կուզմա 61
 Ս. Դոմինիկոս 310
 Դոմինիկոս Բոհուրսյան 323
 Դուրյան Եղիշե 50
 Եզեկիելի 193
 Եսայի Նչեցի 15, 17, 42, 46, 55, 63,
 263
 Եսայի վարդապետ 17
 Երեմիա Մեղրեցի 141
 Ջամինյան Աբր. 51
 Ջարբհանալյան Գ. 46, 47, 48, 49,
 51, 73, 90, 120, 122, 123, 128,
 148, 161, 160, 162, 201, 272,
 317, 319
 Ջաքարիա Ծործորեցի 21, 57
 Ջաքարիա արիեպ. 102
 Ջաքարե ամիրսպասալար 42
 Ջաքարյաններ 106
 Չոհրապ 82
 Չոհրապյան 341
 Էրզրումեցի Խ. 65, 76, 80, 83, 241
 Ըստկարյան Վ. 56, 57
 Թադեոս առաք. 102
 Թադեոս կաթող. 112
 Թաթե (Թաթեոս) 269
 Թամուն 107
 Թահմազ 1-ին 111
 Թեսալոնոս Էմ. 103
 Թեոդոս 268
 Թեոդոր Սոպսոստացի 269
 Թեոդորոս 311
 Թողթամիշ 106,
 Թովմա Աքվինացի 45, 90, 91, 100,
 101, 102, 144
 Թովմա Գեմբացի 94, 95, 127, 315,
 323
 Թովմա Իտալացի 92, 96, 137, 139,
 262
 Թովմա Մեծոփեցի 24, 25, 88
 Թովմա Վարդապետ 25
 Թովմաս Վանանդեցի 95
 Թումա 20
 Իգնատիոս վարդապետ 15
 Իննովկենտիոս 62
 Իշխանյան Ռ. 52, 53, 137
 Իսահակ հայրապետ 344
 Իսրայել վրդ. 101, 102
 Իսրայել Օրի 113
 Իսիքոս 342

Լազարդ Պ. դր 66
 Լամբրոնացի 201
 Լանկ Թամուր 25, 107
 Լաստիվերսոցի Ա. 201
 Լեհացի Ստ. 32, 53
 Լեո 40, 88, 112
 Լևոնյան Սողոմոն 97
 Խաղբակյանք 145
 Խանլարյան Լ. Ա. 32
 Խաչատուր Էրզրումեցի 98, 100, 282, 308
 Խաչատուր Կեսարացի 98
 Խաչիկյան Լ. 9, 12, 22, 23, 26, 34, 44, 45, 49, 89, 102, 109, 110, 129, 130, 190, 202
 Խոսրով արքա 208,
 Ծառուկյան Վ. 84, 319
 Կարապետ Շահնազարեանց 25
 Կղեմես վրդ. 24
 Կիրակոս Գանձակեցի 18
 Կիվրդի 20
 Կղեմես Գալանոս 33, 34, 56, 60, 65, 80, 83, 93, 94, 127, 132, 133, 138, 140, 162, 178, 184, 192, 251, 252, 256, 261, 266
 Կիրեղ Աղեքսանտրացի 194, 342
 Կոստանդին Փողոնատոս 207
 Կոստանդնուպոլսեցի արքեպ. 324
 Կոստանդին 249
 Կորկոտյան Բ. 341, 345
 Հակոբ Հիսուսի 43
 Հակոբյան Վ. 17, 34, 107
 Հակոբ Մեղապարտ 27,
 Հակոբ Մծբնացի 340, 342,
 Հակոբ Բ. Սսեցի 57,
 Հակոբ Ղրիմեցի 62,
 Հակոբ Վիլլոտ 33, 34, 60, 65, 80, 94, 100, 101, 127, 132, 133, 140, 164, 260
 Հակոբ վրդ. 128
 Հակոբ Քոնեցի 43, 50, 92, 125, 169
 Համազասպյան Թադեոս 97,
 Համբարձումյան Վ. 9, 84, 95, 99, 103, 119, 140, 147, 148, 150, 152, 159, 161, 162, 163, 171, 177, 179, 199, 200, 208, 228, 229, 234, 238, 240, 243, 271, 278, 284, 288, 289, 295, 302, 311, 312, 318, 339
 Հեթում 188
 Հեթում Բ 341

Հերոնիմոս 277
 Հյուբշման Հ. 199
 Հյուրմյուզյան Էդ. 71
 Հովհան Ոսկեբերան (Ոսկիաբերան) 207
 Հովհան Ֆիդանցա (Բոնավենտուրա) 102
 Հովհաննես 150
 Հովհաննես Անգելոս 44,
 Հովհաննես ավետարանիչ 98, 102
 Հովհան Անգլիացի 90
 Հովհաննես Դարդել 44
 Հովհաննես Երզնկացի 57, 101, 102, 109, 139, 144, 145, 150, 151, 266
 Հովհաննես Ծործորեցի 44, 102, 109, 139, 145, 150, 151
 Հովհաննես Կարմելիտական 100
 Հովհաննես Կոստանդնուպոլսցի 31, 62, 94, 97, 98, 100, 114, 144, 223, 295
 Հովհաննես Հոլով
 Կոստանդնուպոլսեցի 31, 32, 56, 65, 8, 74, 76, 80, 82, 83, 94, 95, 137, 138, 150, 169, 259, 266, 272, 282, 286, 308, 315, 323, 335
 Հովհաննես Պոնա 94, 95, 100, 325,
 Հովհաննես Ջուղայեցի 27, 29, 80, 128, 138
 Հովհաննես (Միքուզ) Ջուղայեցի 98,
 Հովհաննես Քոնեցի 9, 23, 24, 26, 33, 37, 45, 47, 50, 57, 68, 76, 78, 80, 83, 90, 91, 92, 96, 101, 109, 110, 120, 128, 129, 130, 136, 138, 139, 145, 151, 153, 161, 169, 172, 174, 190, 251, 261, 262, 265, 266, 282, 307, 319, 325, 331
 Հովհաննես Տերզնցի 27
 Հովհաննես Օձնեցի 179
 Հովհաննիսյան Ա. 43, 120, 121, 123, 124,
 Հովհաննիսյան Լ. 84, 319
 Հովհաննես Օրբելի 21, 46
 Հովսեփյան Գ. 25, 124, 145
 Հովսեփյան Լ. 229
 Հովսեփ Էմին 116
 Հովհան Ֆիդանցան (Բոնավենտուրա) 90
 Հովհան Որոտնեցի 20, 35, 46, 90

Հովհաննես Որոտնեցի 42, 62, 63
 Հովհան XXII պապ 22
 Հովհաննես XII պապ 50
 Հարությունյան Է. 17
 Հեթում Կյուրիկեցի 17
 Հովսեփյան Գար. 62, 63
 Հունանյան Վ. 30, 31, 62, 95, 259
 Հուսեյն սուլթ. 106
 Դազիկյան Ա. 28, 95, 98
 Դարագյուլյան Թ. 138, 246
 Դուկաս Ավետարանիչ 15, 150
 Դուկաս Խարբերողի 324
 Դուկաս կաթ. 344
 Դուկաս Վանանդեցի 96, 101, 266
 Ճանաչյան Մ. 340
 Դեմճեմեան Ս. 60, 341
 Մազդադենացի 197
 Մազիստրոս 201
 Մաթեոս Հովհաննիսեցի 43
 Մաթևոսյան Ա. Ս. 25
 Մարգարյան Հ. 16
 Մարդին 268
 Մարկոս 20
 Մաթեոս Ավետարանիչ 15
 Մաթեոս Վանանդեցի 96, 101
 Մաթեոս Ուռհայեցի 12, 14, 15
 Մամիկոնյան Հ. 150
 Ս. Մարիամ 246
 Մարկեդոս 220
 Մարտինոս Օպավիացի 17, 47
 Մարտինոս Լեհացի 17
 Մանանդյան Հ. 10, 24, 41, 42
 Մաքսիմիանոս կայսր 184
 Մեղաֆրաստես պատմիչ 196,
 Մեսրոպ Մաշտոց 70, 97, 98, 165
 Մեյե Ա. 199, 295
 Միրզոյան Հ. 27, 56, 97, 130, 137
 Միհրան 311
 Մկրտիչ Էմին 17
 Մկրտչյան Է. 178
 Մկրտիչ Նադաշ 20
 Մկրտիչ Նկարագրե 20
 Մելիք – Օհանջանյան Կ. Ա. 18
 Մեյե Ա. 9, 153
 Միքայել Սեբաստացի 112
 Միսիթար արքա 318
 Միսիթար Ապարաներցի 25, 26, 37
 44, 50, 132
 Միսիթար Անեցի 15, 16
 Միսիթար Այրիվանեցի 17
 Միսիթար Սասնեցի 42
 Միսիթար Սեբաստացի 51, 52, 64,
 65, 66, 80, 82, 83, 91, 99, 100,
 115, 116, 127, 138, 140, 290,
 315, 320, 321, 322, 323, 324,
 325, 326, 330, 333
 Միսիթար Սկևռացի 16
 Միսիթարյան Աբել 57, 58
 Միսիթարյաններ 40, 41, 54, 66, 77,
 101, 103, 115, 127, 167, 315, 318,
 319, 320, 322, 323, 326, 330,
 331
 Մովսես Երզնկացի 20
 Մորտիե Ռ. Պ. 58
 Մուրադյան Ա. 224, 265
 Մրքուզե 29
 Մուհա 301
 Յակոբ վարդապետ 33
 Յիսուս 219, 310
 Յոհան Մարագոմեցի 189
 Յոհան 284
 Յովհան Ոսկեբերան 15, 269
 Յովեղեսյ 193
 Յոհան Որոտնեցի 20, 54, 55
 Յովհաննես 277
 Յոհաննես վարդապետ 279
 Յովսեփ արքեպ. 344
 Յուզբաշյան Կ. 201
 Նաթան 293
 Նեստոր 269
 Ներսես Աշտարակեցի 186
 Ներսես Լամբրոնացի 13, 15, 16
 Ներսես Պալիանենց 15, 17, 34, 47,
 50, 68, 132
 Ներսես Շնորհալի 15, 16, 49, 344
 Ներսես Մշեցի 42
 Ներսեսովիչ Աստվ. 140, 141
 Նիկոլ եպիսկ. 58
 Նիկոլ Թորոսովիչ 32
 Նիկողայոս Լյուրացի 45, 90, 92, 102
 Նինոս 311
 Նիսացի 342
 Նորայր Բյուզանդացի 342
 Շահ Աբաս 1-ին 112
 Շահ Աբաս 2-րդ 113
 Շահ Սաֆին 113
 Շահամիրյան Շ. 116
 Շամիրամ 311
 Շարաբխանյան Պ. 289

Շնորհալի 201
 Շրյոդեր Յ. 66,80
 Շուշան 227
 Ոսկան Երևանցի 28, 30, 40, 52, 56,
 60, 65, 66, 68, 76, 80, 81, 82,
 83, 96, 97, 98, 127, 137, 138,
 139, 192, 262, 282, 308, 340,
 341
 Ոսկյան Գ. 59
 Ոսկանյան Ն. 341, 345
 Ովհանիս վարդապետ 321
 Ոսման փաշա (Օսման Յուզղեմի)
 112
 Չալքիսեան Վրթ. 304
 Չարյան Վ. 53, 131
 Չամչյան Միք. 37, 38, 51, 58, 62, 64,
 65, 66, 102, 115, 117, 338
 Չոբանյան 106
 Պաֆթիսմոս 246
 Պետերման Հ. 66
 Պետրոս 189, 194, 271
 Պետրոս Արագոնացի, 35, 45, 50, 90,
 91, 100, 125, 128, 201, 314,
 325, 330
 Պետրոս Լատինացի, 82, 341
 Պետրոս Թիֆլիսեցի 98, 100, 315
 Պետրոս Ջուղայեցի 103
 Պետրոսյան Հ. 138, 246
 Պետրովիչ Գր. 59
 Պորփյուր 340
 Պոդոս Անանեան 28, 30
 Պոդոս Պիրոնալի 29, 62, 68
 Պոռչյանք 145
 Ջահկեցի Ղ. 21
 Ջահուկյան Գ. 9, 64, 67, 77, 78, 79,
 80, 81, 83, 96, 115, 116, 117,
 119, 120, 139, 143, 146, 148,
 150, 151, 152, 153, 154, 155,
 156, 157, 158, 159, 160, 161,
 162, 163, 169, 178, 199, 218,
 224, 242, 264, 265, 266, 282,
 287, 307, 308, 312, 319
 Ջելախյաններ 106
 Ս. Ջերոնիմոս 292
 Ջիլբերտոս Պոռետացի 90, 91
 Ջհանջահ 107
 Ջրպետյան Շ. 76
 Ռիվոլա Ֆր. 65, 80, 83, 94, 99, 138,
 140, 140, 153, 158, 178, 192,
 209, 257, 259, 282
 Ռիշելիո կարդինալ 75
 ՌոշքաՍտ. 340
 Ռուբինյանց 18, 49
 Ռուբինյաններ 49, 141
 Ռուպերթոս Պելլարմինոս 98
 Ռիփսիմէ 190
 Սալլանթյան Մ. 266
 Սանադրուկ (Սանատրուկ) 194
 Սավալյան Ա. 345
 Սարգիս 277
 Սարգիս վրդ. 13, 15, 324
 Սարգիս Վաչենց 50
 Սեդրեստրոս 188
 Սենեբյան Պ. 100, 324
 Սիմեոն Երևանցի 116, 339
 Սիմեոն Ջուղայեցի 27, 28, 53, 56,80,
 131, 138, 308
 Սիմէոն կաթողիկոս 345
 Սիմեոն Լեհացի 32
 Սմբատ 186
 Սմբատ Սպարապետ 15, 18
 Սամուել Անեցի 16
 Սեթեան Մ. 60
 Սեֆյաններ 41, 108
 Սիկիդիա 193
 Սիմավոն 112
 Սիրմէլեան Խ. 200,
 Սմբատ Գունդստապլ 16
 Սյունեցի 269
 Սմպատ 194
 Ստեփանոս Օրբելյան 19
 Ստեփանոս Սյունեցի 19
 Ստեփանոս Տարսայիճ 46
 Ստեփանոս Լեոպոլսեցի (կամ
 Լեհացի) 68, 97
 Սրապյան Իս. 58
 Սրմաքեշյան Մ. 100
 Սոմալյան Ս. 102
 Վարդան 277
 Վարդան Բարձրաբերդի 18
 Վարդանյան Յ. 17
 Վարդանյան Արիստ. 342, 343
 Վահրամ Բարունի 16,18, 54
 Վլաս 185
 Վոլֆից Ֆ. 117
 Տաշյան Հ. 78
 Տեր - Պետրոսյան Լ. 12, 120, 124, 126
 Տեր -Ներսեսյան Կ. Ն. 30, 60, 81, 82,
 96, 341
 Տեր – Հարությունյան Մ. 65, 66

Տիմոթեոս Կուր 177
 Տրդատ 190
 Տիմոթեոս 197
 Տօնաբոս 286,
 Բեստեն Միք. (Պատկանյան) 103
 Ուդենրիյն Մ. Ա. 59, 101, 102
 Ուվեյս 106
 Ցեզարա 227
 Փիոս (Պիոս) 194
 Փոնցիանոս կայսր 99
 Փրանկիկոս Ասիզացի 61
 Փրկիչ 18
 Քանաքեռցի Չար. 58
 Քեղէստիոնոս 253,
 Քոլանջյան Ս. 341
 Քրիստոս 31, 163, 197, 206, 225, 298
 313, 315, 330, 332, 343, 344
 Օգոստիանոս Կառնեցի 132
 Օգրաւիանոս 194
 Օրբելյաններ 46
 Օրմանյան Մ. 60, 61, 62
 Ֆերուրյան Մ. 94
 Ֆրա Մարտինոս 17
 Ֆրանչիսկոս Սալեզացի 100
 Ֆրա Պոնցիոս 101, 102
 Аревшатын С. С. 90, 91, 128

Боголюбовский Ю. 201
 Гурычева М. С. 143
 Еремян С.Т. 201
 Эрну А. 278
 Катагонщина Н. А. 143
 Якобсон Р. 143
 Халле М. 143
 Фант Г. М. 143
 Эрну А. 174
 Athanasi Episcopi 314
 Carriere Au. 199
 Chuoseich van. 314
 David 282
 Dominicus Gusman 61
 Giovanni Bernardone 61
 Girbied 76
 Ioannes Maracumensis 189
 Hambartsumian V. G. 84
 Marcus Antonius v. d. Oudenrijn 59
 Meillet A. 199
 Oudenrijin M. A. 26, 90
 Petro Tarraconensi 314
 Фон Гумбольдт В. 124
 Pius 194
 Tarquinius 194
 Hubschmann H. 199

Տ ե ղ ա ն ու ն ն ե ր

Ադանա 105
 Ամստերդամ 66, 93, 95, 96, 97, 99,
 113, 315
 Այրարատ 107
 Այրարատեան թագաւորութիւն 226
 Անի 106
 Անդրկովկաս 107
 Ապարան 113
 Ասորոց աշխարհ 195
 Ասորախան 113, 338
 Աղվանք 190
 Ավինիոն 105
 Ատրպատական 22, 105, 106, 107
 Ատանա 268
 Արտազ 21, 44, 101, 130
 Արցախ 111
 Արքատիայ 213
 Արևելք 9, 50, 51

Արևմուտք 55
 Արևմտյան Եվրոպա 12, 42
 Արևելյան Հայաստան 19
 Բարզևանդ 106, 107
 Բյուզանդիա 12, 14, 279
 Բջնի 106
 Բոնոնիա 61
 Գաղղիա 193
 Գեղարքունիք 111
 Գլաձոր 59
 Գլաձորի Աղբերց վանք 42
 Դաղմատիա 193
 Դավրեժ 107
 Դվին 190, 191
 Եգիպտոս 105, 106
 Եվրոպա 12, 22, 23, 49, 73, 92, 105
 108, 112, 113, 246, 318
 Երնջակ 24, 38, 42, 107, 188

Երևան 111, 112, 113, 153
 Էբիդաֆիա – 194
 Էջմիածին 29, 57, 99, 108, 113, 338
 Թավրիզ 106, 112
 Թիֆլիս 19, 112
 Թբիլիսի 19, 44
 Իրան 41, 106, 113
 Իրաք 107
 Իսպանիա 61, 213
 Իտալիա 61, 89, 312
 Լայպցիգ 93
 Լեհաստան 32, 39, 50
 Լիմ անապատ 113
 Լիվոռնո 93, 98, 113
 Լվով 108, 112,
 Ծործոր 44, 45, 101, 130,
 Կանճա 112
 Կալագորիա 61
 Կամենից 39
 Կասբիական ծով 194
 Կարին 192
 Կիլիկիա 9, 13, 18, 40, 42, 54, 55, 59,
 61, 72, 103, 105, 106
 Կիլիկյան Հայաստան 16, 19, 24
 Կորի 112
 Կ. Պոլիս 19, 28, 29, 58, 62, 93, 95, 98,
 99, 100, 108, 113, 132, 259,
 338, 339
 Հայաստան 10, 21, 23, 24, 25, 38, 42,
 54, 55, 59, 81, 102, 105, 106,
 107, 108, 111, 112, 132, 267
 Հայաստուն 257, 312,
 Հայոց Աղվանք 17
 Հռոմ 12, 18, 19, 22, 23, 28, 29, 30,
 31, 32, 38, 40, 51, 52, 55, 62, 73,
 75, 82, 89, 92, 93, 95, 99, 101,
 102, 105, 112, 116, 127, 129,
 132, 133, 259, 267, 268, 317,
 318
 Հռոմեական տերություն 199
 Ղալաթիա թաղ. 58
 Ղրիմ 47
 Մադրաս 338, 339, 340, 344
 Մակու 42, 44
 Մարաղա 22, 47, 105
 Մարսել 93, 113
 Մեծ Հայք 49, 62
 Մեծոփ 25, 108
 Միլան 93
 Մոլդավիա 108
 Մոսկվա 113
 Մուշ 216
 Նազարեթ 219
 Նախճավան 21, 38, 42, 112,
 Նախիջևան 47, 61, 62, 91, 99, 105,
 106, 107
 Նոր Նախիջևան 51, 338
 Նոր Ջուղա 27, 29, 50, 92, 98, 113, 346
 Շահաբաս 29
 Շահապունիք 62
 Շամախի 112
 Շիրվան 112
 Շիրակ 113
 Ոսկե Հորդա 106
 Ջահուկ 21, 38, 42, 62
 Ջուղա 98, 112, 113
 Ռուսաստան 10, 116
 Ռումինիա 32, 39
 Ս. Պետերբուրգ 24, 99, 103, 338
 Աարդինեայ 213
 Սյունիք 19, 46, 106, 107
 Սիծիլիա 249
 Սիկիդիա 193
 Սիս 25, 105, 108
 Սիսական 19, 38, 90, 128
 Սիսուան 40
 Սիւնեաց աշխարհ 38, 90
 Սուլտանիա 47
 Սուրաթ 344
 Սուրան 310
 Սուրիան 311
 Մերձավոր Արևելք 12
 Վադիկան 194,
 Վաղարշապատ 25
 Վայոց ձոր 106,
 Վան 91, 107,
 Վենետիկ 21, 26, 28, 31, 38, 39, 66,
 93, 95, 97, 99, 112, 113, 116,
 167, 197, 259, 315, 318, 321,
 323, 338
 Վիեննա 188
 Վրաստան 17, 106
 Տաթև 42, 90
 Տամարդուփուն 112
 Տարոն 150
 Տիֆլիս 47
 Փարիզ, 75, 93, 301
 Քաջբերունիք 106
 Քոնս 25, 45, 101, 130

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

**ԳԼՈՒԽ 1. ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

- 1. Ներածական դիտողություններ 8
- 2. Հարցի արժարժույթը ժամանակի գրավոր աղբյուրներում 10
- 3. Հարցի մեկնաբանությունը հայագիտական աշխատություններում. . . 34
- 4. Հարցի գնահատությունը հայերենագիտական աշխատություններում . 60

**ԳԼՈՒԽ 2. ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ԳՐԱԿԱՆ
ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

- 1. Ներածական դիտողություններ 82
- 2. Լատինաբան գրավոր աղբյուրների տեսություն 84
- 3. Լատինաբան հայերենի պատմության ենթաշրջանները. 100
- 4. Լատինաբան հայերենի գործառույթյան ոլորտները 115
- 5. Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները 139
- 6. Գրական հայերենի հունաբան և լատինաբան
տարբերակները 160

ԳԼՈՒԽ 3. ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- 1. Ներածական դիտողություններ 177
- 2. Հնչյունական փոփոխություններ 179
- 3. Բառապաշարի տեղաշարժերը 194
- 4. Ձևաբանական երևույթներ 263
- 5. Շարահյուսական երևույթներ 301

**ԳԼՈՒԽ 4. ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ ԵՎ
ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏԱԳԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ**

- 1. Ներածական դիտողություններ 312
- 2. «Հայկաբան» հայերենի գաղափարի առաջաշումը 314
- 3. Լատինաբանության կասեցումը և վերացումը 321
- 4. Լատինաբան ձևերի հետագա դրսևորումները 332

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ

- 1. Համառոտագրություններ 341
- 2. Օգտագործված գրականություն 352

ՎԱԶԳԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(14-18-րդ դդ.)

Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Ն. Կ. Ղազարյան
Համակարգչային փևավորումը՝ Օ. Ղ. Թերզյանի

Պատվեր՝ 16; Տպաքանակ՝ 200

Գինը՝ պայմանագրային:

<<Նաիրի>> հրատարակչություն>> ՓԲԸ

Երևան-9, Տերյան 91